Գ. Ա. ՂԱՓԱՆՑՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԾՐԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. А. КАПАНЦЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

(ДРЕВНИЙ ПЕРИОД)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Ա. ԳԱՓԱՆՑՅԱՆ

Կզ1.99-53

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՇՐՋԱՆ)

A 94911

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1961



Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Համբարձումյան-Բրաուարակյանական խորհրդի որոշմամբ

Ներկա աշխատությունն ավարտված և անտիպ մնացած մի մեծ գործն է, որի վրա հեղինակն աշխատում էր մինչև իր կյանքի վերջին օրերը: Աշխատությունը պատմական և տեսական խոշոր արժեք ունի հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագումը պարզելու գործում: Հեղինակը հենվելով պատմական, գիցարանական, լեզվական և ազգագրական հարուստ փաստերի վրա, քննության է ենթարկում հայոց լեզվի ազիրսը՝ խեթերենի, ուրարտերենի, շումերերենի, խուռիտերենի, լատո-մեգրելերենի հետ: Երկրորդ մասում հանգամանորեն քննված է հայոց լեզվի հնդեվրոպական բազիսությունը՝ քերականական կառուցվածքը, հնչյունաբանությունը և բառային հիմնական ֆոնդը: Մի շարք քերականական ձևեր և բառաստեղծական երևույթներ մեկնաբանված են նոր տեսանկյունով:

Պատ. խմբագիր՝
Հ. Հ. ԿՈՍՏԻԿՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանի «Հայոց լեզվի պատմության հին շրջանը» նրկա աշխատությունը նվիրված է հայոց լեզվի պատմության հին շրջանի մի շարք կարևոր հարցերի պարզաբանմանը: Հեղինակը պատմական, լեզվական ազգագրական և հնագիտական բազմաթիվ փաստերի հիման վրա փորձում է պարզել հայերենի դոլացման և հետագա զարգացման հարցերը, նկատի ունենալով փոքրասիական մնացած և հայերի հարևան ժողովուրդների լեզուների ավյալները: Աշխատությունն առաջին բաժնի նյութերի գրալի մասն առանձին գրքուկնեով լույս է տանել հեղինակի կենդանության օրոք: Հեղինակն այդ նյութերն ամբողջականացրել, որոշ մշակման է ենթարկել այս գրքում: Երկրորդ բաժինն առաջին անգամ է հրատարակվում ընթերցողներին:

Այս աշխատությունն արժեքավոր է հին և մնացած լեզուների վերաբերյալ իր հարուստ փաստերով, անսպառ նյութով ու նոր մոտեցմամբ: Հայոց լեզվի պատմության հին շրջանը հեղինակը շարադրել է բազմաթիվ հարցադնների և իր ուսումնասիրությունների փաստական նյութի տեղին օգտագործմամբ, նրա հարուստ և նոր վերլուծությամբ: Ինչպես ճիշտ նկատել է ինքը՝ հեղինակը «Նրկա աշխատությունը հայերենի ուսումնասիրության մի նոր փորձ է... իր բնական մոտեցմամբ»:

Ղափանցյանը հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման մասին նոր մոտեցում է հանդես բերում հատկապես 1930-ական թվականներից սկսած, երբ հայագիտական հարցերի ավելի լայն ընդգրկման և պարզաբանման համար ուսումնասիրում է փոքրասիական մի շարք մնացած լեզուներ, ինչպես օրինակ՝ խեթերենը, ուրար-

տերենն, խուռիտներեն, բալալներեն և այլն: Այդ լեզուները պատմության ընթացքում անհետացել են մինչև նոր դարաշրջանը՝ գիտական աշխարհին թողնելով լեզվական հարուստ փաստեր: Հնդիկները հարկական և փոքրաթիվ լեզվական մի շարք ընդհանրություններ է հայտնաբերել, որոնք փոխառություններ չեն, այլ գալիս են վաղեմի ժամանակներից, ինչպես հայ ժողովրդի կազմավորման շրջանից:

Աշխատության մեջ շարադրված է այն տոհմերի և ցեղերի դերը, որոնք մասնակցել են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին: Հնդիկը հայոց լեզվի ազգակցության հարցը պարզելիս առավել կարևոր է համարել հայերենի և հարևան հին լեզուների փոխազդեցության և լեզվական ընդհանրությունների փաստերի խորն ուսումնասիրությունը: Դիտական մեծ արժեք են ներկայացնում այն մասերը, որոնց մեջ քննության են առնված մի շարք անուններ, ցեղանուններ ու տոհմանուններ: Հնդիկն իրեն հատուկ բծախնդրությամբ, հնէաբանական և դիցաբանական հարուստ փաստերի հիման վրա հանգում է արժեքավոր եզրակացությունների. բնորոշելով հայ ժողովրդի և նրա լեզվի առաջացման գործոնները, պարզաբանում է հայերենի և հարևան ժողովուրդների լեզուների ընդհանրությունները, նրանց էությունն ու կարևորությունը համաբրական կյանքի տարբեր պայմաններում, բացահայտում այդ ընդհանրությունների որակն ու աստիճանը:

Ղափանցյանը ենթադրում է, որ Հայաստա-Ազգի ցեղն ունեցել է իր հատուկ լեզուն, որն ազգակից է եղել խեթական, բալալական, վրացական, հատկապես նրա արեմտյան ենթակայացիչների՝ մոզրելական և ճանուկան (զանական) լեզուներին: Այդ դիր չունեցած և մեզ չհասած հայաստական լեզուն արտացոլված է մխալն աստվածների, ցեղանուններ և անուանունների մեջ: Հայաստական լեզուն, որը մինչև այժմ հայտնաբերված գրավոր հուշարձաններում չի պահպանված, ըստ Ղափանցյանի, հետզհետե խաչավորվել է մի կողմից հնդեվրոպական (սլավոնական-սկյութական և հունական) և մյուս կողմից՝ Արևմուտ-Շումերիա երկրի խուռիտական (աստրատական) լեզվի հետ, որով և նա փորձում է բացատրել հայկական և խուռո-ուրարտական լեզուների միջև եղած մի քանի քերականական ընդհանրությունների առկայությունը:

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին մասնակցած ցեղերի և նրանց լեզուների խաչավորման ընթացքում Ղափանցյանը հայթայթում է հիմնականում մեկ ցեղին և նրա լեզվին,

ավելի դնալբում Հայաստա ցեղին ու նրա լեզվին: Նա այն կարծիքին չէ, որ խաչավորման հետևանքով իբր թե առաջանում է ինչ-որ մի նոր լեզու: Ընդհակառակն, նա քննադատում է Ն. Յա Մառի այն տեսակետը, թե հայերենը խառնածին լեզու է՝ կազմված հարևթա-արթիական համազոր լեզվաշերտից: Սակայն Ղափանցյանը, չժխտելով հայերենի հնդեվրոպական հնաոճաբերը, գտնում է, որ հայոց լեզուն միատարբ, միածուլ չէ, այլ խառն լեզու է (смешанный язык): Իհարկե, հայերենի մասին այս տեսակետը թեև իր ժամանակին դիտական որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում, սակայն հետագայում հիմնավորում չգտավ:

Ներքական, ուրարտական, խուռիտական և այլ փոքրասիական կամ այսպես կոչված ասիանիկ լեզուների ու հայերենի միջև եղած լեզվական ընդհանրությունները հիմք էին տալիս Ղափանցյանին կարծելու, որ հայոց լեզուն իր ծագմամբ ասիանիկ լեզու է: Այդ տեսակետը նա պաշտպանում է նաև ներկա աշխատության մեջ: «Իմ կարծիքով,—գրում է հեղինակը,—հայերենի նախամամբ ծագումնաբանական (գենետիկական) հետևությունն անելը հօգուտ հնդեվրոպականի թերևս միակողմանի է... Լեզվական տեղային (ասիանիկ) փաստերը, ինչպես նաև հայ էթնիկայի, կուլտուրայի, կրոնի և նյութական կուլտուրայի տվյալները խոսում են հօգուտ հայերենի փոքրասիական կուլտուրական ծագման, հօգուտ այս ասիանիկ բնօրրանի»:

Գիտության մեջ այս տեսակետն արտահայտվել է դեռևս անցյալ դարի 60-ական թվականներից սկսած: Մի շարք գիտնականներ որոշակի խոսել են փոքրասիական հին լեզուների մասին և այն կարծիքն են հայտնել, որ այդ լեզուները ազգակից են հայերենին: Այդ գիտնականներից են Լասսեն, Բլոսեան, Գոշենն և ուրիշներ: Հայագետ Ֆրեդրիխ Գաուկանդեան այն միտքն է հայտնել, թե «Մինչև այժմ եղած խուզարկությունների նպատակությունները հետևյալի մեջ են ամփոփվում. հայկական լեզուն իրանյան և սլավո-լիթվականյան խմբերի մեջտեղը բռնելով հնդեվրոպական անհայտացած (գուցե փոքրասիական) խմբի անկախ ներկայացուցիչն է»[1]:

Ճիշտ է, որ հայոց լեզուն բազմաթիվ լեզվական ընդհանրություններ ունի հին փոքրասիական (ասիանիկ) լեզուների հետ, որոնք ամփոփված են Գ. Ղափանցյանի կողմից ներկա աշխատու-

[1] Տե՛ս «Փորձ» ժամագիրը, 1880:

թյան մեջ, սակայն հայերենը փորրասիական կամ ասիանիկ լեզու համարելն ընդհանուր ճանաչում և ընդունելություն չգտավ, քանի որ հայերենի քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի հնդեվրոպական բնույթը հաստատվեց գիտության մեջ բազմաթիվ անհերքելի, հիմնավոր փաստերով: Ղափանցյանը ևս, իհարկե, չի ժխտում հայերենի հնդեվրոպական շերտը: Այդ մասին նա պրում է.- «Հայերենի ձևակերպված պատմական կացութիւնը (5-րդ դարից) լեզվափիսութիւնի ընդունված չափանիշների տեսակետից մեզ թույլ է տալիս հարցադրել «հնդեվրոպականը», բայց... այսպես շատ բան ոչ միայն թվացող բնույթ է կրում... այլև նա կասկի ենթատրամադրված, որովհետև հայերենի հարուստ դասնը (դրարարում և բարբառներում) իր ուսումնասիրութիւնի մեջ դեռ շատ հնուռ է վերջացած լինելուց...»:

Ակադ. Ղափանցյանը գտնում է, որ «Հայերենի հնդեվրոպական նատվածքը... ունի մոտ չորս հարյուր արմատներ և բառահարաբերական (քերականական) դրսի փոփոխութիւններ» (էջ 275): Նախ՝ հայերենի հնդեվրոպականութիւնը ոչ թե նատվածք է, ինչպես պնդում է հեղինակը, այլ նրա բնույթն է և ապա՝ հայերենն ունի ոչ թե չորս հարյուր հնդեվրոպական արմատներ, այլ՝ 8—9 հարյուր, որոնք անառարկելի փաստերով ապացուցված են Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Հ. Աճառյանի և ուրիշների կողմից: Իսկ ինչ վերաբերում է հայերենի քերականութիւնը, ապա նրա ողջ կառուցվածքը հիմնականում հնդեվրոպական բնույթի է:

Հարկ է նշել նաև, որ վերջին ատենաբանական հետազոտութիւնները վերջնականապես պարզեցին մի քանի փորրասիական մնատ լեզուների (խեթերեն, բալա, լուվիերեն և այլն) հնդեվրոպական բնույթը:

Հայերենի քերականական որոշ ձևերի և կառուցվածքների մեջ կան մասնակի, առանձին տարբերութիւններ հնդեվրոպական լեզուների համեմատութիւամբ, սակայն, հայոց լեզուն հնչյունական և ձևաբանական որոշ հատկութիւններով մասամբ հեռացել է հընդեվրոպական լեզուներից: Սակայն այդ տարբերութիւնները պետք է դիտել ոչ իրրև այլ ընտանիքին պատկանող լեզուների խառնվորման արդյունք, ինչպես պնդում է Ղափանցյանը, այլ հայերենի ներքին զարգացման օրինաչափութիւններ, անփոփոխ առանձնահատկութիւններ: Բացի բառերից, անշուշտ, կան նաև բառաստեղծական մասնիկներ, որոնք ընդհանուր են մի կողմից հայոց և փորրասիական և մյուս կողմից՝ հայոց և կովկասյան լեզուների

մեջ: Այդ ընդհանրությունները ո՛չ պատահական են, ո՛չ էլ սոսկ զուգադիպություններ: Դրանք չի կարելի համարել նաև փոխառություններ: Աշխատության մեջ նշված լեզվական այդ ընդհանրությունները գալիս են հայ էթնոսի կազմավորման ժամանակից և նույնիսկ ավելի առաջ: Սակայն նման ընդհանրություններ մենք չենք տեսնում բառատարրերական (հոլովման և խոնարհման) ձևերի և քերականական հիմքերի մեջ: Այդ են ապացուցում նաև այս գրքում եղած փաստերը:

Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որևէ կոնկրետ լեզվի կազմավորման և զարգացման հին փուլերի ուսումնասիրության համար, երբ մանավանդ բացակայում են նրա գրավոր վկայությունները, միակ հնարավոր այդպիսի ուսումնասիրության աղբյուրներ, թերևս և ամենաուժեղ, կարող են հանդիսանալ այդ լեզվի հին հարևան և ազգակից լեզուները, որոնք գրավոր հիշատակարաններ ունեն։ Այդ հանգամանքը ամենանպատակահարմարն է, իսկ ազգակից լինելը պարմանավորված չէ անմիջական հարևանությամբ, քանի որ ցեղերը կարող են տեղահվել և իրենց հատվածները զարգել շատ հեռուն։

Ցեղային ու լեզվական սկզբնական ակունքները մոտավորապես միևնույն կարող են ընդգծվել. իսկ դրանք պատմականորեն ազերուակցվում են իրար հետ։ Հայագետի անբիտորիայի հնագույն ցեղերի մասին մենք որոշ տեղեկություն ենք քաղում աստղաբական, խեթական և ուրարտական բնիկ ազգանունների, որ շատ կարևոր է հայերի սկզբնական պատմության համար, սկսած Հայաստան-Աղզի կոչված ցեղային դաշնակցությունից վերին Եփրատի վրա (Փոքր և Բարձր Հայք), մեր էրայից դեռևս 14—13 դարեր առաջ։ Բայց հայոց լեզուն իրեն դառնում է նույնպես պատմական բյան ազգ, և համեմատական-պատմական մեթոդով նրա ուսումնասիրությունը այլ լեզուների հետ (մանավանդ հնդեվրոպականը) հավատում է հայերի ազգակցությունը և այդ հնդեվրոպական որոշ ցեղերի հետ, որ հավանորեն իրականացվել է դեկավորապես սկզբնաժամանակների միջոցով մեր էրայից յոթ դար առաջ (համեմատել մեր «առաջին թագավոր» Պարույր Սկայ-որդուն, որ սկսել է մեր «առաջին թագավորը» Պարույր Սկայ-որդուն, որ սկսել է թագավորել մեր էրայից 1000 տարի առաջ)։ Հայերենը ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նաև է անդրկան՝ փոքրասիական

(ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաչասերված նոր լեզու:

Հայերենը հետաքրքրական է ոչ միայն այդ երկու հիմնապես կոմպոնենտների դիմելիության, որ առանձին անգ է պրավում լեզուների պատմության մեջ, այլև հարևան վրաց, ուրարտա-խուռիտական և սեմական լեզուների ազդեցությամբ, թեպետ այստեղ ևս չի բացառվում այդ որոշ տարրերի «հարատևած լինելը: Մենք իր տեղում կանդրադառնանք այդ բոլոր ֆակտորների լեզվական և պատմական նշանակությունը, որը կրկին է բերվում համեմատական-պատմական մեթոդով, և մեծ ծառայություններ է մատուցում թե՛ ընդհանուր լեզվաբանությանը և թե՛ մասնավոր (կոնկրետ) լեզուների դիմելիության ու զարգացման պատմությանը:

Իմ «Հայոց լեզվի ծագման շուրջը» գրքույկում[1] ես այդ մասին գրել եմ. «Ծնվյալ լեզվի նախապրայիին կազմությունների (կամ կազմության) ուսումնասիրության համեմատական մեթոդը թեպետև ամենաճշտակ է և անկասելի, այնուամենայնիվ նա տալիս է որոշ ձևերբերումներ, որոնք միանգամայն ունակ են և հաճախ հետազոտում արդարանում են նորանոր դյուտերով, և հետևապես միանգամայն իրեն արդարացնում է և իր կիրառման մեջ տակավին միակն է: Հարկավ այդպիսի համեմատությունը ի կատար է ածվում հնչյունափոխական խիստ օրինաչափությունների հիման վրա, այլ ոչ թե կանխակալ և բռնազրոսիկ կերպով, երբ անտես են առնում ժամանակը, պատմական հնարավոր ազդեցությունը և լեզվական իրակությունները ուսումնասիրվող լեզուների կատարյալքում, ճնշումների ենթարկելով անգամ այժմյան հնչյունական դրությունը, մտահղացողաբար բաժանելով լեզուն էլեմենտների, ստազիաների և այլն, լեզուների համընդհանուր պատճառով չտեսնելով տվյալ լեզվի կոնկրետ կյանքը իր պատմական կեցության, շրջապատի, պայմանների և այլնի մեջ»: Ելատեղ ևս նկատի եմ ունեցել Ն. Մառի չարաբաստիկ «Լեզվի նոր ուսմունքը», թեպետ անունը չեմ տվել: Նման նկատառումով գրել եմ.

«Հարկավ անգամ արդարացի էր Ֆր. Էնգելսը, երբ սրտմտում էր ուշադրությունը լեզուների կոնկրետ-պատմական զարգացման (իսկ «պատմականությանն համար նա մինչև իսկ գրում էր հնդեվրոպական լեզվաբաններին) և իր «Անտի-Դյուրինգ»-ում ասում էր.

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1946, № 7, էջ 3—4:

«Մասնավորապես և ձևը հարաբերաբար լեզվին միայն այն ժամանակ են հատկանշական դառնում, երբ հնարաբերում են նրա ծագումը և առաջին անհրաժեշտական զարգացումը, իսկ սա անհնար է, եթե թողնել առանց ուշադրության նախ՝ իրենց սեփական մնացած ձևերը, և երկրորդ՝ ազգակից կենդանի և մնացած լեզուներըե[1]:

Կ. Մարքսը և Ֆր. Էնգելսը իրենց գրքերում հաճախ են դործածում լեզուների նկատմամբ ազգակցություն (родство) բառը, ինչպես և համեմատական մեթոդի դրական արժեքը: Ֆր. Էնգելսը նման մոտեցմամբ հատուկ աշխատանք է գրել գերմանական ֆրանկների բարբառի մասին:

Ըստ էության, առհասարակ հասարակարգում, երբ մոտավոր քանակի և կուլտուրայի ցեղեր են խաչավորվում և դրանց տարբեր լեզուները իրենց ընդհանուր կառուցվածքով շատ էլ չեն հակասում իրար, թեպետ և ազգակից չեն, կարող է տեղի ունենալ այդ ցեղային տարբեր լեզուների խաչավորում իրենց թե՛ բառամթերքով և թե՛ քերականական տարրերով: Հայոց լեզվի կազմութլունը գրալի կերպով հենց այդպիսի պրոցեսի (կամ պրոցեսների) հետևանք է, քանի որ այն արտացոլել է հայ էթնիկալի ներսի) հետևանք է, քանի որ այն արտացոլել է հայ էթնիկալի ցեղային շրջանի մոտ հազարամյա պատմությունը՝ սկսած հայասալի «հայ» ցեղերի պատմական ժամանակից (1400—1500 տարի առաջ) և վերջացնելով Արտաշես և Զարեհ թագավորների (երրորդ դարի վերջը կամ երկրորդ դարի սկիզբը) ժամանակաշրջանը, երբ արդեն Մեծ Հայքի (մոտավորապես նախկին Ուրարտուի) տարածութլան վրա կազմվել էր մի նոր տիպի հայկական, որը բոլորին հասկանալի էր, ինչպես այդ շեշտում է հույն հռչակավոր աշխարհագետ Ստրաբոնը:

Հասարակական-տնտեսական, էթնիկական և քաղաքական հանգամանքներն իրենց ամբողջության մեջ վերցրած, իրրև տվյալ ժողովրդի ապրած պատմական անցյալ, իրենց որոշակի կնիքն են դնում նաև նրա լեզվական որակի վրա: Եվ այդ լեզվի բարդ պատմությունը պետք է որ իր մեջ արտացոլի տվյալ ժողովրդի պատմությունը, որ մի դեպքում կարող է լինել պարզ և ոչ բազմամութլունը, որ մի դեպքում կարող է լինել պարզ և ոչ բազմատարբ, իսկ մյուս դեպքերում՝ այլազան, այլաբնույթ և շատ բարդ տարբ, իսկ մյուս դեպքերում՝ այլազան, այլաբնույթ և շատ բարդ տարրերով, կառուցվածքով և կոմպոնենտներով: Հնդեվրոպական տարրերով, կառուցվածքով և կոմպոնենտներով: Հնդեվրոպական ողջ լեզվաբանութլունը ուսումնասիրել է լեզուները, և հատկապես այդ արել է հայերենի նկատմամբ՝ կատված տվյալ լեզուն պետք այդ արել է հայերենի նկատմամբ՝ կատված տվյալ լեզուն

[1] Տե՛ս Ֆր. Էնգելս, Անթի-Դյուրինգ, 6-րդ հրատ., Մոսկվա, էջ 233:

իրեն կրողի էթնիկական ձևավորման պատմական բարդ պրոցեսից, երբևիցե իրեն հակընթաց և տարամետ ուղղություններով կամ կողմերով: Ընդամենը այդ ուսումնասիրությունը դրված է պատմական հողի վրա, բայց լեզվի ունակ զարգացումը իր անցյալի բոլոր մանրամասնություններով անհասկանալի է և մեծ մասամբ այդ կրում է ֆորմալ և մեխանիստական բնույթ: Օրինակ, վերլուծվում է հայոց ուր (где, куда) բառաձևը. դրա համար բավական է, որ կա նման իմաստ լուսավանների (լուսիական) kur դերանվանական ձևը, և հնաոճատիպ կարելի են դարձնում դրանք հանել մի ընդհանուր ազգակցական բնօրրանից՝ հնդեվրոպական նախալեզվից, որի գոյությունը և անդադրությունը չի որոշվում (շատ բան չի փոխվում «լեզու-հիմք» նոր հորջորջմամբ): Նախ, այլ մի քանի օրինակով ցույց չի արվում, որ հնդեվրոպական արմատի բառասկզբի k^w անհնաոանում է (k^wo «ո, ոմն», k^wi—«ինչ, ո-ինչ»), երկրորդ, այդ q (ու-ր, ku-r) ածանցը հայոց լեզուն ասևծնել է նաև այսր, այդր, այնր... դերանունների ասեական հոլովում և երբորդ՝ չկա մի երրորդ լեզու, որ գործ ածեր նման դերանվանական մասնիկ: Ուրեմն լեզվաբաններին մնում է դիմել նախալեզվի օգնության, անտես առնելով այդ երկու լեզուների այլ հնարավոր այդպիսի ընդհանուր լեզվահանգիստները, թեպետ ընդունում է, որ երկու լեզուների նման լեզվական (այն էլ՝ կասկածելի) տարրերի «նմանությունը» դեռ շատ քիչ է:

Նախալեզվյան նման «իրկարարը» կանգնապղեային են դիմել, երբ հայկական արիւն (արիգ), երգ, իմն („бapc"), ձի, մարմին և սուրբ բառերը առուգաբանում են հնդկական ravi, arkà (rg), siha, hàya, màrman և çubhra նմանհնաոան բառերով, բայց դրանք միասին հանելով նախալեզվից: Արդյո՞ք տարօրինակ չէ, որ ուրիշ լեզուներում դրանք չկան, իսկ մերձավոր արևելքում այդ լեզուների շնորհիվ հնարավոր կարելի էր համարել և հայերենում նպատակները՝ փոխառություն: Եվ, իսկապես, պատմական նոր տվյալները ցույց են տալիս, որ մեր էրայից մոտ մեկուկես հազարամյակ առաջ հյուսիսային Սյուրիայում և Միտաննի երկրում (Հայաստանի հարավային սահմաններին կից) ապրել են հին հնդկական ցեղեր, որոնց ազդեցությունը եղել է այդ ժողովուրդների հասուկ անձնանունների, ինչպես և կարգի, իմպականների, զորամասերի և մանավանդ բարձր դասերի (ազնվականության և այլն) կազմած գինվորական հասուկ գնդի (martani) կազմության վրա: Հնչաու-

թյամբ կարելի է ապրակացնել, որ այդ ընդհանուր բառերը հինդկերներից անցել են Հայաստանի անդրածիններին (դիցուք խուռիտներին և մասամբ խեթերին՝ Մոսիքում) և հետո մտել են հայոց նոր լեզվի մեջ, մանավանդ որ հնդեվրոպական նախալեզվում, ինչ գնահատվում է Եվրոպայում, մեր էրալից երկար տարի առաջ չպիտի լինեին ձի (որպիսի բառը կա և Դադաստանի լեռներում), ինձ, վագր (այդ բառը ևս ugagra ձևով հնդկական է) բառերը։ Ինչպես տեսանում ենք, այս առաջաբանությունների մեջ ևս պատմական նեղլուծությունը անտեսվել է հանուն չկղյալ նախալեզվի։

Կամ վերցնենք նման մի դրություն՝ հայոց արտ բառը (< ցանվող, մշակվող հող), որը Ա. Մեյեն ուզում է հանել** արծ<*ածր հին ձևից և կապել հնդեվրոպական նախալեզվական *ag'ros նույնիմաստ բառի հետ։ Այդ արմատը կա հունա-լատինական ('αγρος, ager), գերմանական (գոթ. akrs, հբգ. ackar, գերմ. Ackr, հիսլ. akr) և սանս. (ajra) ձևերի մեջ. իսկ նույն արմատից ագարակ և ածանցավոր հալ (և վրաց) ձևը բերբրատիական հնդեվրոպական մի լեզվից փոխառություն է» (Հ. Աճառյան, Արմատական բառարան, I, 745—747)։ Իմ կարծիքով հայոց արտ բառը կապ չունի ag'er կամ ag'r արմատի հետ (թեև կապակցվի, ինչպես նշվել է ուրիշների կողմից, սեմական arḍ, arz—ստրատ և նմաններին հետ), իսկ հունա-լատինական, գերմանական և հնդկական ձևերը առաջացել են ոչ թե հնդեվրոպական նախալեզվյան *ag'ro-ից, այլ պարզ փոխառություն են Միջագետքից, ուր շումերները ունեին agar կամ akar նույն իմաստով բառը։ Բայց քանի որ այդ շումերները ունեին և համանիշ ar ստրատ բառը, պետք է ենթադրել, որ agar-ը նրանց մոտ նշանակել է որոշ մեծության մշակովի հողամաս և հետագայում որպես տարկատիրական անանուսության մի տերմին տարածվել է նաև Միջագետքից դուրս, օրինակ գեղի Փոքր Ասիա (Հայաստան), Միջերկրական ծովի շուրջ (Հունաստան—Իտալիա և այդանդից գերմանացիներին)։ Մտավորապես չափի տեսակետից նման բովանդակություն ու տարածում տացել է հնկատար կամ մու (որոշ հողամաս) եգիպտացիների (հնկատար) և ֆիննո-մոնղոլական ժողովուրդների մոտ (mu)։ Հայերը սեմիտների և խեթերի (կամ Հայաստանի անդրածինների) միջոցով, բայց այդ ապարակից (agar որպես դնանդրմինատիվ գործ է ածվում և խնթական բնեռագիր գրաֆիկայում), ունեն մի քանի ևս ածվում և խնթական բնեռագիր գրաֆիկայում), ունեն մի քանի և այլ փոխառություններ, ինչպես սում. udu «ոչխար»—հայոց օդի, սում. arik-gilim «երկար ոտով (թռչուն)»—հ. արագիլ, zag «սահ-

մանի ակիզբը, ծագումը»=հ. ծագ («սկիզբը»), ծագել, mezu *«հնձելը»—աստեղչիների և մշեցիների՝ մնգել (նույն նշանակությամբ),* egal *«դղյակ»: Անգղ հատուկ անուններին, որ նշանակել է «բերդ» և առացվել է* Agil *ձևից (համեմատել ակիկադական* ekallu *նույն իմաստով) և այլն: Իակ որ օտար ոչ հնդեվրոպական բառը կարող է ընկնել հայերին (արևմտյանում) և հնդիկներին (արևելքում), այդ ցույց են տալիս հուն. παλεκος և սանսկր.* Paraça *բառերը, որոնք նշանակում են «կացին» և հնդեվրոպական տեսք չունեն, ինչպես ասում է Ա. Մեյեն: Երևի «հնդեվրոպական նախալեզվի» շատ բառեր որոշակի այլ ծագում ունեն:*

Վերջապես աստղաբանական (էտիմոլոգիական) հետազոտություններ են կատարել որոշ գիտնականներ, ովքեր դևպքում հայտնաբերեցին, բնավ ծանոթ չլինելով բառի (արմատի) պատմությանը՝ իրեն կոնկրետ լեզվի զարգացման հոդի վրա: Օրինակ, հայոց լեզվում գործել է ներքին զարգացման մի օրինաչափություն, որով ավելի բառասեռը կարող է նոր լինել, առացված լեքսիկան առանձնահատկությամբ մի հին՝ իրեն գոյակից ձևից, այնինչ այդ վերացված ձևին տեղյակ չլինելով վերցնում, համեմատում են հնդեվրոպական արմատների հետ, ելնելով հնչյունաբանական նախ ավելորդներից, այլ հիմքից: Օրինակ, հայերենում դիտվում է հետադեմ ժամանակից, որ արմատը իր որակը կամ քանակը ժամանակից համար կարող է կրկնվել, հետո կոմպոնենտներից մեկը իր որակ հնչյունով տարբերակվել և ի վերջո այդ տարաձայն տեսակը կարող է և անջատվել, դառնալ առանձին բառարմատ, երբեմն առանալով հարակից նոր իմաստ: Այդ անջատ ձևը կարող է առացվել և առանց ձևական կրկնողության (через отпочкование): Մեծ համառոտ կրկնվող տեսակի մեջ առաջին բաղաձայնը ընկնում է կամ փոխվում ի բաղաձայնի, ինչպես—առոր-փառոր (առրով-փառրով), աճիճ-պաճիճ, Ախս-Մախս, խճճել-մճճել, փշրել-մշրել, լուռ-մուռ, ոլոր-մոլոր և այլն[1]: Տարաձևի անմիջական անջատման ունենք օրինակ երդնակալի բարբառի արիր բառի մեջ, որ նշանակում է տարիք (рост, возраст), Մալաթիայի մասո «մեծ, հասած բառի մեջ (համմ. գրաբարի հասատամեսս), մարանդի կամ մարանդու Արաբատյան և Վանի բարբառներում, «խոշոր և կլոր

---

[1] *Տե՛ս իմ «О внутренних закономерностях армянского языка», Ереван, 1952, стр. 25—30.*

մանգաղ առացված «գնդանգի» (коса) բառից, խորհուրդ Աբեղյանի բարբառում նշանակում է էջերի մեջ դրած կնճռոտ նիվոզ ձավարը, որի վրա կանգում է վերևից խորհուրդ (ոչխարի կամ այծի) լաղը», հնարավոր առացվել է խորհուրդ հիմնական ձևից: Ես այդպիսի կարգավորում եմ տեսնում նաև ուսար (—արդի) բառի մեջ. առաջացած հին դուսար բառից (համմտ. նաև մեր աշխարհաբարներին՝ «Ես ծնար Աբրահամեանց ուսանեցս և դասեցս բազում՝ յորոց անդրանիկին Աբրահամիս, և ծնար Աբրահամիս ուսանեցս և դասեցս բազում»: Այդ ուսար բառը սակայն կերպով ճգնում են հասկանալ հնդեվրոպականից նախալեզվից և չեն գտնում: Այդպես է նաև ձևաբերում առացել և մուխ (дым) բառը հին ծուխ բառից, որը բառ-ին կապակցվում է հնդեվրոպ tuhhuis նույնարմատ և նույնիմաստ բառից և ոչ մի հնդեվր. smuqh արմատից, որ ծագել է հատնական, կնքատական և գնդմանական լեզուներով «մխել, ծուխ, այրել» իմաստներով: Լազարյան և Մկրեան՝ հայոց մուխ բառի այդ առաջաբանությունը չէր ընդունում Հյուբշմանը (անդ Հր. Աճառյան, Արմատական բառարան, IV հ., էջ 1140—1141): Կարելի է նման բացատրություն տալ և հայոց առն «արու վարազ» բառին, որին մոտ են (փոխառյալ?) վրաց. arni «վարազ ոչխար» և սանսկրտյան arnā «վնասան այծ», ծագեցնելով *war(e)n>garn (գառն) հնդեվր. հիմնական բառարմատից և ոչ մի կապակցել իրենց հնդեվրոպական «ընդհանուր» արմատից, որ կա և հունարեն arnejós «խոյ» (баран) բառի մեջ, այնինչ այդ վերջինի բուն իմաստն է «գառ»:

Այս վերահիշյալ մեթոդաբանական դիտողություններին ևս կավելացնեի և մեկը, որը լեզվի խաչավորման բնույթի անսահմանից անշուշտ որոշ դեր խաղացել է: Այդ կոնտամինացիան է: Օրինակ, հնդեվրոպական *ego(m) «ես» հայոց լեզվի հնչյունարանական օրինաչափություններով պետք է լիներ հաներնեում *ես կամ *էգ և ոչ մի կերպ չի կարելի հասկանալ վերջին «ժ» կամ «գ» հնչյունների փոխարինումը «ս» բաղաձայնով: Իմ կարծիքով հնդեվրոպական մեր լեզվաշերտում գոյն ակզում հենց այդպես էլ հնչվել է՝ *ես> *եժ, բայց քանի որ հայերեն վերջնական շրջանում նրա հետ միասին են նաև ուրարտա-խաուխաական լեզվական միացորդները, որոնց «ես» (я) հնչվել է շատ մոտ բառաձևերով— ուրարտերեն iese, իսկ խաուխաներեն՝ isa, ապա հնչառությամբ կարող էր ձևակերպվել վերջնական ես հնչեղաձևը, որպես այդ լեզուների նման բառերի մի հնդեսամինացիա: Իհարկե այդպիսի

A 9401

146—2

դեպքեր շատ կլինեն և պետք է դրանք բոլորը ի հայտ բերել, բացահայտել:

Ներկա աշխատասիրությունը հայերենի ուսումնասիրության մի նոր փորձ է իր վերջը նշված մեթոդոլոգիական նոր քննական մոտեցմամբ, լեզվական նոր նյութերի լրիվ գործածությամբ, հայ լեզվի բարդ (խաչաձևորյալ) լինելու անհակասից, որ պահանջ է հայերի դեռ ուսմասցնդատորական շրջանից հաստատում, վերջացնելով հայ լեզվի վերջնական կազմավորմամբ՝ երբորդ դարում մեր էրայից առաջ նախկին Ուրարտուի տերիտորիայում: Եթե հիշում է, որ հայ լեզուն իր վերջնական կազմավորումը ստացել է երկու-երեք էթնոլեզվական մեծ կոմպոնենտներից ցեղատերիտորիան շրջանում, ապա բացի այդ բոլորը բացահայտելուց, օգտագործելով ցարժ նյութ նյութերը և ուսումնասիրությունները, մենք պետք է նշենք այդ նորորակ լեզվի հիմնական օրինաչափությունները, զարգացման միտումները՝ առնչվելով: Պետք է հիշենք, որ հին հայերենի կազմությանա-ստատիկ վիճակը մեզ պիտի հնարավորություն տա իրրև այդ պատմալեզվական պրոցեսների և օրինաչափությունների մի դրսեւորում և արդյունք:

Համառոտակս կանգնենք պատմական հոդի վրա պիտի դնել ապագա կոչված փոխառությունները կամ ազդեցությունները թե՛ դրադարձյան և թե՛ մանավանդ նախագրադարձյան շրջաններում, կապված հայ ժողովրդի գոյացման պատմական պրոցեսի և շրջապատի հետ: Հարկավ որոնով թերևս չի բացատրում այդ փոխառությունների և ազդեցությունների առկայությունը նաև մեր լեզվի ակզբնական շրջանում, իր ցեղային էթնոսակեքների կազմավորման և մերման ժամանակ, էլ ակզբանէ անտես:

Հայերենի հին շրջանի ուսումնասիրության ասելով, մենք ընդգրկում ենք իմաստին թե՛ նախագրային փուլը և թե՛ հետագա ընթացքը, թեպետ այդ նախագրային ուսումնասիրությունը մրցանում է ավելի կոչված համեմատական քերականության մեջ, իսկ հագրային շրջանի ուսումնասիրությունը՝ պատմական քերականության մեջ: Մենք այդ բոլորը մտցնում ենք մի պիտկլինի մեջ, որը ընդգրկում է հայոց լեզվի պատմությունը իր հին շրջանում: Ակա չի նշանակում ասելը, որ մեր ողջ հայերենի, այսինքն և բարբառների իրականությունները (ֆակտաները) թե՛ որպես բառաձևեր և թե՛ որպես արմատներ, չեն մտնում այս ուսումնասիրության մեջ: Օրինակ, մեզ համար գոնեպես են wi (ուլ) մասնիկը ասելի, ձևավի, ընդլի...), w (ի) կրավորականի մասնիկը, որով նոր սխսում է

առնչվել մեր բարբառներում (ուտել-ուտվել, կարդալ-կարդացվել...) ի հակադրություն գրաբարի, ուր խոնարհման ենթատիպ սխեմաների (գրեմ-գրիմ, կարդամ «կարդացվում եմ» և կարդացվիմ եմ»), կա || կը || կ նեղանակիչ և ժամանակ ցույց տվող մասնիկի երևան գալը, ծագումը և պատճառը, անձնական (մարդկային) անուն առաջացումը բարբառներում (անուս մի ուսանող, բայց՝ անուս իմ ուսանողին), ժամանակ ցույց տվող դերբայականների անուր բարբառներում (ամառա-ամառվանից, աղրիա-աղրիվանից...), որոնց ուղղականը կարող է վերջանալ ամենն անսպասելի բաղաձայնով: Մենք էլ չենք խոսում այն մասին, որ մեր հայկական այդ տարբեր լեզվամիավորներում (գրաբար, բարբառներ) առնչվել են նաև տարբեր շարահյուսական-ձևաբանական սխեմաներ, որոնցից կատեգորիաներին մի սխեմանը հատուկ է ենթադասական ու սինթետիկ անալիտիկին (գրաբարը), իսկ մյուսը՝ կցական և անալիտիկ անալիտիկին (բարբառները և ապահովից՝ մեր գրական լեզուն):

Հայերենի հին գրային շրջանի (գրաբարի) բառային ֆակտորան կարևորագույն նշանակություն ունի մեր համեմատական ուսումնասիրության մեջ, մանավանդ այն փոխառյալները, որոնց դեռ ձևերը: Բայց նման արժանի են առանձնակի և բարբառային հարաբերական հայկական բառերն ու ձևերը, որոնք իրենց ծագումով նույնպես հին բառեր են: Որքանով կշռանդ հայագիտությունը, երբ մեր այդ հին և իսկական բարբառային բառարմատները հավաքված լինեին և ստուգված, ունենայինք իրենց հնարավոր առաջարանությունը և բացատրություններ: Այդ բառարմատական, ինչպես և հնչյունափոխական ու ձևաբանական (քերականական և բառակազմական) ողջ ֆակտորան իրոք պետք է կազմեին հայ լեզվի (լեզվաճյուղի) գանձը՝ ասկի ֆոնդը, որն իր պատմական և բազմաձև ու բազմադարյան դրսևորումներով (էացմամբ) դառնում է լուրով ապացույց հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի մի գործոր առանձնահատկությունը, նրա հասարակական-քաղաքական ամենամեծ նվաճումը:

Եվ հայերենը իր նախնական լեզվաակունքներով առաջացել է որևէ որոշ ցեղախմբի (Հայասացի) լեզու, իրեն բարդ կոմպոնենտներով հանդերձ, ապա նա ապրել է որոշ տարածաֆորմացիոն պատմականության ու դասակարգային հասարակության պայմաններում հատկապես զարգացման է կրթված դասերի միջոցով (քրմեր, թարգմանիչներ, գրողներ, դպրապետներ...) և դառնում է արդեն ազգային-գրական և համաժողովրդական լեզու, ապա այդ ընդհանուր լեզվի կողքին շարունակել են ապրել նաև բարբառները որպես տե-

զական-գյուղատնտեսական խոսվածքներ, ուսումնասիրել իրենց առանձնահատկություններն, որոնք բնավ չեն կազմում «աղճատումներ», պրարարի հանդեպ։ Հասարակական, կուլտուրական և քաղաքական պայմանները տարբեր հնարավորություններ են առաջացրել թե՛ ընդհանրության համար և թե՛ մասնավոր կերպով գրաբարագրության տեսակետից։ Ընդհանուր լեզվական կուլտուրայի մեջ մեր հին համաժողովրդական (միասնական) և գրական գործածական լեզուն (գրաբարը) հարկավ գործել է իր մշակմամբ առաջինը, լուծագնելով հարստացրեն և շատ բարերարչին բաներ ու ձևեր։

Բայց և այնպես գաղափարական այդ բարերարները չկարողացան գրական ընդհանուր լեզվի կազմից, որպեսի երևույթ անկի է անցնում միայն այժմ միասնության, ուժեղ կուլտուրայի և պետականության պայմաններում։ Այդպես եղել է և այլուր, սկսած դեռ հին հունական բարբառների վիճակից, որոնք ձուլվեցին և մտան մի ընդհանուր «կոյնե» կոչված պետական լեզվի մեջ, ինչպես նման երևույթ եղել է և անգլուսաքսոնական նման բարբառների համախմբումների (կոնցենտրացիայի) մեջ այժմյան անգլերենում։ Սովորաբար գնրիշնում է մի սկզբնական բարբառ, որ մշակվում, վեր է ածվում պետական ընդհանուր մի լեզվի, ինչպես այդ անկի է անցնել իտալերենին (Ֆլորենցիայի բարբառ), ֆրանսերենը (Իլդն ֆրանսի բարբառ), սաւսերենը (Սաքսոն-Օրլովի բարբառ) և այլ գրական-պետական նոր լեզուներում։ Երբ գրաբարը VII—IX դարերից կորցրեց իր կրողները, հայ ժողովրդի և կրթված դասերի պաշտպանությունը, կոնսոլիդացիան, ապրեց արտաքին և ներքին անկումներ, ինչպես և անհատական քայքայիչ պայմաններ, կորցրեց իր ֆեոդալների քաղաքական ներքին և արտաքին դիմադրության ուժը, ժողովուրդը, ինչպես և ֆեոդալները, դադիկեցին մեր երկրից, ենթարկվեցին անդամ կորցրեց մեր գրաբարի նկատմամբ իր լեզվական կոնսոլիդացիայի ազդեցությունը և այդ պատճառով գրաբարը վտանգվեց դադարել գործածվել որպես կենդանի լեզու։ Այնուհետև գրաբարը միայն իբրև եկեղեցու և պաշտոնական գրագրության մի մեռյալ լեզու՝ նման միջնադարյան լատիներենին։ Առանձնահատկությունները և ինտելիգենցիայի ներկայացուցիչները սկսեցին ավելի կերպով գործածել և հարստացնել սակ իրենց բարբառներին, խոսվածքով մեծ մասամբ գրաբարյան մնացած ձևերի ու բառերի հետ։ Միայն ասա ժողովրդի քաղաքական և կուլտուրական հզոր պայմանները նպաստացին հայ ժողովրդի գիտության եղած բնավոր հասկացողների հավաքական կոնսոլիդացիային, գրողներ (Հայա-

բյան, Ներսիսյան) ստեղծելուն, դիր ու գրականության զարգացնելուն և այլն, որի հիմքում ընկած էր կենդանի և հասկանալի ժողովրդական լեզուն, այն է՝ Արևելյան Հայաստանի հիմնական և կենտրոնական Աբարատյան բարբառը, որը մշակվելով վեր է աճվել իր արտահայտման նոր վիճակի՝ գրական և համաժողովրդական, իսկ ներկա հայության քաղաքական կացության անհամեմատ՝ նաև ամբողջ հայության լեզվի: Այդ մեր նոր լեզուն, մշակվելով գրաբարյան, բարբառային (արարատյան), օտար լեզուների և մանավանդ հզոր ռուսերենի ազդեցությամբ, կարողացավ հասնել այժմյան գիտությունների աստիճանին, մեծապես հարստացնելով մեր հին պատմականության և կուլտուրայի լեզուն՝ գրաբարը:

2. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառը սկսվել և մեծ մասամբ առնչակցվել է մեր դասական լեզվի (գրաբարի) ուսուցման, իրականության, հատկապես պատմա-համեմատական նոր լեզվաբանության անսահմանից: Գրաբարյան ստորոգը, որպես հայ լեզվի հնագույն մաս, համեմատվում էին այլևայլ լեզվախումբերի և նրանց այս կամ այն ներկայացուցիչների նման ստորոգների հետ, լինեին դրանք հնչյունական, ձևաբանական, բառային: Այս առանձնով մեր լեզուն շատ լուրջ աշադրության արժանացավ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրողների կողմից, քանի որ մեր գրաբարը, այդ առաջին օրինակը, միանգամայն անկասկած և հնչող կերպով ընձեռնում այդ հնարավորությունը:

XVIII դարի առաջին քառորդում, մինչև հնդեվրոպական լեզվաբանության սկսվելը դարը, հայերենին (գրաբարին և «նոր» հայերենին) առաջին լուրջ ուսումնասիրությունը եվրոպական լեզվով եղել է Շրոդերինը[1], որտեղ մինչև իսկ բերված են մի քանի ճիշտ ստուգաբանություններ:

Դեռևս 1833 թ. հնդեվրոպական գրերի հիմնադիր Ֆրանց Բոպը իր համեմատական քերականության մեջ է մտցնում նաև հայերենը, որպես այդ լեզվախմբի լեզու: Այդ դեռ սկզբնական ճիշտ դիտողություններ էր, և բնական է, որ այդ ուղղությամբ դիտական հետաքրքրասիրությունը քանի գնաց ավելի պահանջեց, կանկրետ դրսևորումներ առաներ և ավելի գիտական ճամաումներ տար:

---

[1] *Schröder*, Thesaurum linguae armeniacae, antiquae et hodiernae. Amsterdam, 1711.

Առաջին ձեռնարկած անուշյանը այդ ուղղությամբ այն էր, որ հայկաբանը մանում է հնդեվրոպական լեզվաբանական իրանական հյուղի մեջ։ Այս հաստատել և մանրամասնել անուշյան առիթ տվին այն բազմաթիվ իրանական բառերը, որ մտել են հայոց լեզվի մեջ, բայց ենթարկվել են որպես սեփական բառատեսակներ իրաներեն ընդհանուր բառապաշարանում։ Այդ անուանկոչը արժանացել են Պետերմանը, Վինդիշմանը, Գոշեն, Բյուտները, Ֆր. Մյուլլերը և մանավանդ Դե-Լագարդը իրենց մի շարք աշխատությունների մեջ[1]։ Վերջինին թվում էր, թե իրանական ցեղերը հնուց ողողած են եղել Փոքր Ասիան, որ իրանական հայերի այդ հնագույն շերտի վրա ավելացել է մի նոր շերտ ևս, որը պաղեստինների շնորհիվ հասել է Արտաշատյան դաշտը և կերպարանափոխել նախկին հիմնականը՝ ընդհանրին ազդակիցը։ Հետազոտում, որ պարթևները գրավում են Հայաստանը, ներմուծվում են արդեն նոր բառեր, որոնք տարբեր են սասանյան շրջանի իրանական բառերից (սրանք բոլորն էլ ասիա են և նոր պարսկերենում)։ Հայոց հին իրանական շերտը նա կոչում էր «Հայկապղանդ (Haikanische), երկրորդը՝ պահլավի, իսկ երրորդը՝ սասանյան։ Վերջին երկուսը փոխառությունների մեջ են մտնում։

Հայոնի հայագիտ և իրանագետ Հ. Հյուբշմանը քննադատեց և հերքեց հայոց լեզվի այս իրանյան ծագման կոնցեպցիան։ Նա դեռևս 1875 թ. Kuhns Zeitschrift (№ 23, էջեր 5—42) հայոնի

---

[1] *Petermann*, Grammatica linguae Armeniacae, 1837.

Windischmann, Die Grundlagen des Armenischen im arischen Sprachstamme (Abhandlungen der bayerischen Akad., IV, 2), 1846.

Sosche, De Ariana linguae gentisque Armeniacae indole prolegomena, 1847

P. Boetticher, Vergleichung der armenischen Consonanten mit denen des Sanskrit (Zeitschr. d. Deutschen Morgenländischen Geselschaft [կրճատ ZDMG], IV, էջ 347 և հետևյալները: Arica, 1851; Zur Urgeschichte der Armenier, 1854.

Fr. Müller, Abhandlungen zur armenischen Grammatik (Sitzungsberichte der Wiener Akademie der Wissenschaften [կրճատ SWAW], Wien 1861—1865; Armeniaca I, SWAW, 1865; Armeniaca II, 1870; Armeniaca, III, 1871; Armeniaca IV, 1874; Armeniaca V, SWAW, 1878.

De Lagarde, Gesammelte Abhandlungen, 1866; Beiträge zur baktrischen Lexicographie 1868; Armenische Studien Göttingenen, 1877.

Այս իրանական կոնցեպցիայով գրել է նաև հայ գիտնական Գևորգ Չամչյանը—Ulben die Bildung der armenischen sprache տե՛ս journal asiatique, XVI, St.—Petersburg, 1870).

լեզվաբանական հանդեսում Ueber die Stellung der Armenischen im Kreise der indogermanischen Sprache վերնագիրը կրող նշանավոր հոդվածում հերքից իշխող այդ տեսակետը, ասելով. «Յունաքանչյուր հարկական բառ, որը միանգամայն համապատասխան է պարսկերենին, պիտի ընդունել որպես փոխառություն» (էջ 8)։ Ի միջի այլոց նույն վերնագրով մի հոդված ունի և Ֆր. Մյուլլերը (SWAW, 1877), որը կարծես պատասխան էր Հյուբշմանին։ Վերջինս իր Armenische Studien գրքում, որը լույս է տեսել Լայպցիգում 1883 թ. նորից ժխտելով Մյուլլերի և Լագարդի մեզ հայտնի տեսակետները (էջեր 5—7), բերում է մինչ այդ տված 232 հայ արմատների (կամ բառերի) ճիշտ առուգաբանություններ, որոնք ապացույց են հնդեվրոպական այլ լեզուների արմատներին, որով և ճիշտ ու կարելի է ասել վերջնականապես ամրանում է հայերենի այդ մասի պատմա-համեմատական հնչյունաբանության նորմաները (օրենքները)։ Կցելով այդ գրքում նաև համառոտ ձևաբանությունը, նա վերջին անգամ քննարկում է այն հարցը, թե հայերենը պիտի մոտենալ հնդեվրոպական լեզուների իրանական ճյուղի մեջ, թե համարել ինքնուրույն հնդեվրոպական մի լեզու (էջեր 80—83)։ Եվ պատասխանում է, որ հայերենը իր հնդեվրոպական մասով կազմում է առանձին լեզվաճյուղ, անկախ իրանականից կամ հնդիրանականից, և իրրև ինքնուրույն հնդեվրոպական լեզու նա (հայերենը) բռնում է բալթիկ-սլավոնականի և իրանականի միջին տեղը։

Հյուբշմանի այս ճիշտ ուղին այնուհետև գործով ընդհանուր։ Հետագայում լույս տեսան շատ աշխատություններ, նվիրված հայոց լեզվի թե՛ բառերի առուգաբանության, թե՛ քերականության և թե՛ մասամբ շարահյուսության։ Դրանցից են.

Քրիստիան Բարթոլոմեի *ուսումնասիրությունները հասկապես հնչյունաբանության տեսակետից* (BB, X, *1886*, BB, XVII, *1891*)։

Ֆրիդրիխ Մյուլլերը *իր* Armeniaca *6-րդ պրակով* (SWAW, *1890*) *և հոդվածներով, որոնք տպված են* WZKM (V—X) *1891—96 թվականներին*։

Սոֆուս Բուգգեն *իր* Beiträge zur etymologischen Erläterung der armenische Sprache, I, Christiania 1889, II, KZ XXXII *(էջեր 1—87)*, 1893; III Indog. Forsch. *(էջեր 437—459) 1892*։

Անտուան Մեյեի *աշխատությունները հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության վերաբերյալ, տպված* Mémoire de la Société Linguistique de Paris (MSL), *պարբերական հան-*

պետում VIII—IX *1894—1896*), Indog. Forsch. (YZQ. T. V), էջեր 329 և շար. *1895*։

Հ. Հյուբշմանի աշխատությունը հայերենի անմահան բառերի մասին տպված Zeitschrift der deutschen morgenländischen Geselschaft-ում (ZDMG) № *46, 1892*։

Բրուկնիլմանի հոդվածը հայերենի հուն փոխառությունների մասին (Die Griechischen Fremd Wörter im Armenischen տպված ZDMT-ում, № *47, 1893*) և այլն։

Մանրն XIX դարի բոլոր հայագիտական ու լեզվաբանական այս մեծագրանակ աշխատությունների պատշճանական ու գիտական ամփոփումը հանդիսացավ այդ դարի վերջում (*1897*) լայպցիգում հրատարակած Հյուբշմանի նշանավոր «Հայկական քերականություն» (Armenische Grammatik) գիրքը, որը 575 էջերում տալիս է հայոց բառերի առաջաբանություն։ Գրքի ներածական դրված է գլ մաս. Հայկական առաջաբանություն, որից պիտի ներքագրել, որ հեղինակը նպատակ է ունեցել տալ և ձևաբանություն և թեևս այլ բաժիններ, բայց մահը (*1908*) խանգարել է։

Ա. բառնդ (Arm. Gr.-ում) հաջորդաբար բերվում են I դրվագում՝ պարսկական հատուկ անուններ (*217* հատ) և հատարակ բառեր (*686* հ.), որոնք փոխ են առնված հայերի կողմից, որոնց հետ նաև փոխառյալ նոր պարսկական և արարական բառեր (*171* հատ). II դրվագում բերվում են ասորիներից (սուրիացիներից) փոխ առած հատուկ (*53*) և հատարակ բառերը (*133*). III դրվագում՝ հայերենի հունական փոխառությունների անուններն և հատարակ բառերը (*512*)։ Տրված են նաև փոքրաթիվ բառեր, որոնք մտել են հայ լեզվի կիլիկիայի մեր պետության շրջանում (էջեր *389—391*), ինչպես նաև կասկածելի ծագումով փոխառություններ, որոնք կազմում են IV դրվագը։ Վերջապես V դրվագում (էջեր *399—504*) բերվում են իսկական հայ բառեր (Echtarmenische Wörter), ընդհերիկով *438* քննարկելի բառեր, որոնք իրր թե հնդեվրոպական ծագում ունեն։ Այս բառերի հնդեվրոպական առաջաբանությունը ստուգաբանված է եղել նախորդ լեզվաբանների կողմից, ինչպես և Հյուբշմանի, բայց վերջինս խիստ գիտական քննարկման է ենթարկում և պրանցից հաստատ համարում (իմ հաշվով) երկու հարյուր իննսունհինգը, թողնելով մոտ *300* հնդեվրոպական ծագումով հայ բառեր (ստուգաբանելի)։ Ըստ իս, հետագայում կարող էին հայտնաբերվել ևս մի հիսուն կամ շատ-շատ հարյուր բառաբանություններ։ Այդ կարծիքին է և Ա. Մեյեն (*տես* չորս հարյուրյակ, տե՛ս նրա Esqisse d'une

Grammaire comparée de l'arménien classique, Vienne, *1936 թիւին)* Գրաւ. Հ. Աճառեանի «Համեմատական քերականութեան-ում, ինչպես և նրա «Հայոց լեզուի պատմութեան» (I պրակ, 1940 թ.) դրքերում այդ «իսկական» հայ բառերի թիվը հասցրած է մինչև 713, որն իմ կարծիքով անընդունելի է, ինչպես կանանենք իր տեղում:

Հյուբշմանը իր կապիտալ „Armenische Grammatik" դրքի մասին գրել է նաև մի կարևոր գրախոսական (տե՛ս Indogermanische Forschungen, Anzeiger, X, էջ 41 շար.): Մեյեն իր Esquisse-ում (էջ 15) այդ դրքի մասին գրում է. «Այդ Ճանդն է Հյուբշմանի կողմից ընդունված տեսակետների համար, որ գնում են (առհասարակ են) սկզբունքային հնչյունական օրենքները և հետևապես այն ուսմունքները (doctrines), որոնք դրսևորված են նրա աշխատութեան մեջ: Բողնելով Դե-Լագարդի („Armenische Studien", Goetingue, *1879*), «Նորլինգայի դիտական Սոֆուս Բուգեի աշխատութիւնները (Beiträge zur etymologischen Erlatung der armenischen Sprahe, Christiania, 1889, հոդվածները Կուհնի Zeitschrift-ում, XXXII 1—87, Indogermanische Forschungen, III, *437—459*), որոնց հիպոթեզները քաո Մեյեի կամ ուղիղ չեն և կամ կասկածելի, մենք կարևոր ենք համարում նշել մի քանի տարակարծութիւնները, որ ունեցել են Մեյեն և Պեդերսենը. Հյուբշմանի մի քանի տեսակետները դեմ (տե՛ս Մեյեի հոդվածները Memoires de la Société de lingusitique de Paris, Vol., VII, շար., «Բանասիրութ-ում, որ հրատարակից Բասմաճյանը) և Holger Pedersen-ի աշխատութիւններում—Կուհնի անվան հայտնի Zeitschrift-ի (K—Z) հետևյալ համարներում: Bd. XXXVIII (1902) Zur armenischen Sprachge schichte էջեր *194—240* և Armenisch und die Nachbarsprachn. Bd. XXXIX *(1904) 334—210* էջերում: Պիտի հիշել նաև E. Hiden, Armenische Studien *(տպիս է տեսակարանութիւններ, տպված է 1906 թ.)*, A. Meillet, Recherches sur la syntaxe comparée de l'arménien (M. S. H., X, XI, XII, XIV):

Finck-ի կողմից հիմնադրվող Zeitschrif für armenisch Filologie հանդեսը, որի առաջին համարը լույս տեսավ Մարբուրգում *1901 թ.*, կարևոր դեր խաղաց լեզվաբանութեան մեջ: Revue des études arménienne, որը լույս էր տեսնում Փարիզում *1920 թվականից* ծանոթացնում էր այն ամենին, ինչ որ տիպի հետաքրքիր հայ լեզվաբանութեան, ազնիական հոդվածներ: G. Deeters-ը գրաղվեց կովկասյան լեզուների ազդեցութեամբ հայերենի վրա (տե՛ս նրա Armenisch und Südkaukasisch, Leipzig, 1927):

Բացի բազմաթիվ հոդվածներից, որ տպված են «Հանդես ամսօրեայում», մանավանդ Հ. Աֆառյանի հոդվածը այդտեղ հայոց կրկնութիւնների մասին (ibid., 1899 թ., էջ 202 և շար.), պիտի նշել Այտընյանի «Ինտենսիան քերականութիւն արդի հայերէն լեզվի» (Վիեննա, 1866), Karst-ի „Historische Grammatik der Kilikisch-Armenischen (Strasburg, 1901), Мсерянц-ի „Этюды по армянской диалектологии" (Москва, 1897 և 1901), Հ. Աֆառյանի բարբառագիտական շատ աշխատութիւնները Ղարաբաղի, Նոր-Նախիջևանի, Մարտալեզի, Ագուլիսի և այլ բարբառների, որոնք, բացի առաջինից, տպված են Բազմավէպում։ Հատուկ ուշադրութիւն է արժանի A. Meillet-ի Altarmenisches Elementarbuch, Heidelberg (1913) և Հ. Աֆառյանի յոբհատորանոց «Հայերենի արմատական բառարան»-ը, որի 1-ին հատորը լույս տեսավ 1926 թ., իսկ վերջինը՝ 1935 թ. (Նկատելիք, ինչպես և լրացում)։

Հայ արմատների առեղծվածային աշխատութիւնները տվել են և շատ ուրիշները, ինչպես Շնֆոնլոֆիցը, Պատրուբանին, Կարոլիդեսը, Ինճիճյանը և այլն, որոնք նպատակ են եղած հինհնդեվրոպական գործի հաջողութիւնը։ Մեծ նշանակութիւն այդ գործի կարևորութեան և հիմնական ելակետներ էին Հյուբշմանն ու Մեյեն, ապա մեզ մոտ այդ ընթացքի բնորոշիչ շարունակողն էր պրոֆ. Հր. Աֆառյանը։

Ի վերջո նշենք, որ հնդեվրոպական լեզվաբանութիւնը հայ լեզվի ուսումնասիրութեան ու զարգացման համար շատ մեծ նշանակութիւն ունեցավ, դրական մեծ արդյունք, և վերջ տրվեց նախորդ սխալ անութիւններին, մանավանդ հայ-իրանական կոնցեպցիայի բնագավառում։ Ի միջի այլոց սկսեց առաջարկում էին հայոց լեզվի հնդեվրոպական ճյուղավորութեանը միացնել նաև Քրակիական-փռյուգիական լեզուները, որչափ որ շատ հնչյն արտյուբների (Հնդոդատաս, Եվդոքսոս և այլն) դրութիւն է ունեցել այդ երիս ժողովուրդների մեջ էթնիկական և լեզվական որոշ տարրեր։ Բայց նկատի ունենալով Քրակիական և փռյուգիական լեզուներից մեզ հասած նյութը (բառեր, ձևեր), այդ տարրակցութիւնը չի ճշտվում և արդարանում, այն մերժվում է Գաբրագեշյանի, Տաշյանի, Մարկվարտի, Աֆառյանի և ուրիշների կողմից (տե՛ս Հ. Աճառյան, Մարկվարտ, Աֆառյանի և ուրիշների կողմից (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, հ. 1, Երևան, 1940, էջեր 131—133)։ Անտարակույսելի է նաև Պիտի ազդակցական կապը հայերենի հինդեվրոպական մասի և հնագույն Իլլիրիական լեզուների միջև, որոնք դրած են ածվել Բալկանյան թերակղզում, որովհետև Մարկվարտի

բնության երկու բառերի (մանր և խլ. manu, սուխի և խլ. sibyna) նմանությունը գեռ բավական չէ, մանավանդ վերջինը (սուխին) իր համապատասխան բառաձևերը ունենա նաև անմական և իրանական լեզուներում:

Հին հայերենի բուն հնդեվրոպական տարրերն, այնուամենայնիվ, իրենց քանակով գերիշխող չեն, մանավանդ բառապաշարների տեսակետից (մոտ 350—400), և մեզ են հասել գրաբարյան չորս հազարից ավելի ոչ փոխառյալ բառեր կամ արմատներ: Ավելի լավ է վիճակը, ինչպես կտեսնենք ձևերի (մասնիկների), մանավանդ քերականական ձևերի (ծնքերի) տեսակետից: Հնչյունական բազդատական վիճակը հիշեցնում է մասամբ կովկասյան կամ անմական լեզուների բազդ տեսակետը: Նման պիտանականներ տեսնելու քննական վերաբերմունք դուրս տալ գեպի ոչ հայերենի հնդեվրոպական գիտնականների պարզությունը: Առաջինը այս քննադատանքից հայտնվեց Ն. Մառն էր, որ առաջարկեց հայերենի այդ գիտնական հասկանալ որպես երկրնտրիք («տարբեռհարնիական»), բառեր ևլ կային որ հայերենում տակա են որոշ քանակի վրացականման տարրեր, մանավանդ բառեր, իսկ վրաց լեզվաքերականը կովկասյան լեզուների հետ նա համարում էր «հարնիական», ազգակից անմական լեզուներին, ուստի Ն. Մառը հիշատակությամբ գրում, որ հայերենն էլ արտաբերելին հետ պիտի մացնել այդ հարնիական լեզվաընտրի մեջ: Այս տեսնման հիշեցնում է արտաքուստ հնդեվրոպագետների նախապատմի ծառը, քանի որ Ն. Մառը առաջարկում էր «նոյան» նախալեզուն, որի դուստր ճյուղատարածքներն են նաև հարնիականը և հետո՝ անմականն և քամական լեզուները: Հարնիական լեզուների քանակը հետզհետե ավելացնում էր միանգամայն տարբեր լեզուներով (վերջինները, էլամիտների, բասկերի և այլն), և վերջում, Ն. Մառը, հրաժարվելով լեզուների ծագաբանությունական - ազգակցական կոնցեպցիայից, քանակական թվականներից անցավ առարկայի և չորս չարաբաստիկ էլեմենտների լեզվատեսչական բնորոշման կոնցեպցիային, որը հակասական էր և մերժվեց:

Բայց լեզվի հնդեվրոպական բնույթի ազնաստ լինելը փաստ է և արձանագրված մնում է իսկ A. Meillet-ի կողմից իր նշանավոր Esquisse-ում (II հրատ., էջ 111, I հրատ., էջ 111), ուր կարդում ենք. «Բայց, ամբողջությամբ վերցրած, հայոց լեզվի հնչյունական և ձևաբանական սիստեմը խորապես տարբեր է հնդեվրոպական նման սիստեմից»[1]:

[1] "Mais dans l'ensemble, le système phonique et morphologique de l'arménien est profondement distinct de celui de l'indoeuropéen".

Իմ կարծիքով հայ լեզվի ուսումնասիրության ավելի առաջադեմ, ճիշտ գիտական և բնականաբար այս վերջին փուլը, որը կարելի է կոչել «հնդեվրոպագիտական», չի սպառում հայ լեզվի ծագման ու ձևավորման խնդիրները, լինելով սահմանափակված նյութի և քննական միջոցների մեջ։ Վերջին 30—40 տարիների պատումները Միջագետք Արևելքում շատ բան փոխեցին նյութական և հոգևոր կուլտուրաների ուսումնասիրության բնագավառում, մանավանդ մի շարք նոր լեզուների և էպիգրաֆիկ նյութի հայտնաբերման հետևանքով։ Ասիլացան խեթերենը և ուրարտերենը լեզվով գրած բնևադիր արձանագրությունները, իսկ որ ամենից գլխավորն է, Փոքր Ասիայում հայտնաբերվեցին նոր լեզուներ և պետություններ։ Այս վերջիններից մեջ են խեթական կոնֆեդերացիայի իր երկու բնևադիր լեզուներով՝ նեսթերենով («խաթթյան») և խեթերեն, որոնցից շատ պրոֆեսորներ են ճանաչել միայն վերջինը (խեթական, հետիտական) ձևով, որն ավելի նոր է։ Մենք չենք խոսում «հնդեվրոպական» խեթերենի մասին։ Հայտնաբերվել են խեթական բնևադիր լեզուների հետ նաև լուվի և պալա լեզուները, որոնց գլխ Բողազ քյոյի, խեթական այդ մայրաքաղաքի (Hattusa) արխիվում գտած սեպագրական և խուռիտական լեզուներով գրած արձանագրությունները։ Ամենահետաքրքրականն է հայերի և հայ լեզվի առաջնակարգ Hajasa-Azzi կամ Hajasa ցեղատոհմական մի միավորում երկրի գոյությունը (1400—1200 թթ.) բուն խեթական արձանագրությունների, որը ըստ Պաուլ Կրեչմերի 1932 թ. հայտնած կարծիքի, համընկնում է «հայ» անվան հետ։ Այս գեղագրությունն («թագավորության») մասին տե՛ս իմ „Хайаса—колыбель армян" ուսումնասիրությունը (Երևան, 1947)։ Այդ նոր փոքրասիական լեզուների, ինչպես և նախկինում հայտնի լուվիական, լիկիական, էտրուսկական, խուռիտական, ուրարտական լեզուների մեջ կան որոշ, թեպետ ոչ շատ, ընդհանուր տարրեր, թե՛ կատեգորիաների և թե՛ ձևակազմության, որի հիման վրա ստաջ են քաշում «ասիական» (ասիա-Ֆեսական) կամ «փոքրասիական» լեզվախումբ։ Որ Հայաստ երկիրը նախկին) կամ «փոքրասիական» լեզվախումբ։ Որ Հայաստ երկիրը հասընկնում է մեր հնադար Փոքր և Բարձր Հայքերին, պրանում կասկած չկա, մանավանդ առաջինին։ Ա. Գյոտցեն այդ ամեն քաղաքական կազմակերպություն» (Ein grosseres politisches Gebilde) անվանում է Երզինգա—Երզրում ճանապարհի վրա (տե՛ս Revue hittite et asianique. 1934, Fasc. 7), իսկ ֆրանսիացի պետ. նախկին Յ. Կամենյակը նրան ժառանգում (RHA, էջ 14) գրում է. «Հայաստան XIV դարում մի մեծ միապետություն էր (monarchie),

ընդգրկելով ամբողջ արևմտյան Հայաստանը: Մեզ հայտնի է նաև, որ հունի մատենագիրները Արմենիա անվով, մինչև չորրորդ դարի վերջը, հասկանում էին հենց այդ Փոքր Հայքը: Բոլոր ավյալներով հաստատված է այդ Փոքր Հայքի բնօրրան լինելը հայ ժողովրդի և լեզվի կազմակերպության համար:

Հայաստանի լեզուն, որպես որոշ ցեղախմբի լեզու, պետք է պատկաներ ասիանիկ լեզուներին և ամենի հին ժամանակ պոլուբյուն ունենար: Ամենից շատ նա ենթարկվել է խեթերենի ազդեցության կամ խառնվորման, ինչպես այդ երևում է հայերենի և խեթերենի համեմատական ուսումնասիրությունից, նկատի ունենալով նաև խեթերի հայացման հնարավորությունը (12—7 դարերի ընթացքում): Ինքնական բնևոտիր պրոֆիլակի առանձնահատկությունը նշում է նաև, որ խեթերեն լեզուն բառեր է փոխ առել նաև հարևան ցեղերից կամ ժողովուրդներից: Հատ ուրարտական աղբյուրների, Ծորբում և Չորրորդ Հայքում, այսինքն Արտաշատ մայրին հասանքում ընկած երիրտմասերում (Տարոնից արևմուտք) իշխում էին խեթերը (իրենց առաջնորդներով), օրինակ՝ Շահուռնի կամ Շահևի դինաստիան՝ որոնք հետագայում նույնպես հիշատակվում են: Այնպես որ խեթական լեզվական տարրերի մուտքը հարևանների լեզվի մեջ անատրակուս է, ինչպես կտեսնենք հայերենի մատերիալի հիման վրա: Ես աշխատել եմ ցույց տալ ոչ միայն փոխառյալը, այլև ընդհանուր ասիանիկ լինելը: Հայ լեզվի (դրարարի) մեջ եղած արևմտյան վրացական (հարև-մեգրելական) ընդհանուր տարրերը (մոտ 30 բառարմատ) անշուշտ դալիս են Հայաստանի ժամանակից, և նա այդ կապում եմ վրաց արևմտյան մասի այն ցեղերի հետ, որոնց առաջնորդը եղել է լեգենդար Ազոն, նկատի ունենալով, որ Ճորոխի մոտ եղած Հայաստանի այդ մասը կոչվել է Ազդի: Թևևս վրացական շատ տարրեր նաև հայացել են, էլ չեմ ասում, որ շատ հարև-մեգրելական բառեր Հայաստանի հայերը փոխ են առել (ճանճ, շունչ, տոհմել և այլն)[1] և հետագայում դաղթելով Ուրարտու (Մեծ Հայք) մտցրել մեր բոլոր բարբառների մեջ: Հնդեվրոպական տարրերի մուտքը հայոց լեզվի մեջ բարդ է թե՛ ժամանակի, թե՛ տեսակետար կշռի, և թե՛ որակի տեսակետից, որի մասին մանրամասն կխոսվի առանձին: Իսկ ուրարտական և խաոտիական բառերի մուտքը հայ լեզվի մեջ պետք համարել

[1] Տե՛ս իմ О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков, Ереван, 1952 г.

պարզապես փոխառություններ նոր որակի և տրանսֆորմացիայի հասած հայ նոր լեզվի մեջ:

Ասպես, ըստ էս, պիտի դնել հայ լեզվի ծագման և ձևավորման (գենեզիսի) խնդիրը: Մաքուր հնդեվրոպական չի կարելի համարել նրանի ունենալով ձևաբանական և մանավանդ արմատների քանակի (10%) առկայությունը, ինչպես խոսքերն ենք, որ ավելի է հնդեվրոպական իր քերականության մեջ, բայց բառապաշարը շատ քիչ է հնդեվրոպական:

Թևրևս ասիանիկ որոշ լեզուների մեջ եղած հնդեվրոպական (արմատական խմբի) էլեմենտներից, նման հունականին, կար և հայասալի լեզվի մեջ, նկատի ունենալով հայաստանյան հատուկ անունների արմատներն և ձևերի կազմությունը, ինչպես տասմածանոնները—Trittituni և Unagasta հանգանալով առաջինը որպես «եռատոհ» (трехxвостый) կազմած tri «երեք» և titun «ատի, պոչ» (համմ. հայոց առուն<*tutun tut արմատից) նման հունական Tritōn տասմածանման: Հայասական Unagasta—մի քանի անգամ հիշվող և տարբեր անկերում պաշտվող տասմածանման կազմությունը հավանորեն nag- կամ unag արմատից է (=?) և -ast ածանցից, որ կա և հունարենում. ինչպես աքրիտաստ, էնատոպիաստ, էկկլեզիաստ և այլն: Հայերենի մյուս հնդեվրոպական տարրերը կարող են լինել այլ որակի, կապված հետագայում (VI—IV) նկած կիմմերասկյութական ներխուժումների հետ և հատկապես արամեականի հետ: Հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական, քան բառապաշարական մի ջրոցներով կարծես թե հավասար դրության մեջ է (հնդեվրոպական թե ասիանիկ), իսկ արմատների (բառերի) քանակի անհամեմատ գերազանցությունն ասիանիկ կամ անդրական է: Ստրաբոնատ (ուրմիա և առափրատոտ) թե ազատատ խնդիրը կարոշվի ուսումնասիրության վերջնական ավարտներով, թեպետ նախկին իմ հետազոտություններն ավարտներով, որոնք լրիվ չէին և թևրևս սխեմատիկ, գերակշռում է ասիանիկ լեզուների բազկացման բանավոգությունը:

Այն փաստը, որ հայերին օտարներն անվանում են արմեններ, որ դրանց հայն ազգությունները ազգակցում են փռյուգիացիներին, որպես վերիններին «եռանոտքներ» կամ «ժամառոտներ», և armen-, ormin- և նման անդանունները է անանում Բալկաններում, թեպետ դա շատ կասկածելի է և չի ճշտվում, իսկ հայն ավանդությունները շատ կասկածելի է և չի ճշտվում, իսկ հայն ավանդությունները արդանավորին ազգակցում են հայն արշավորդների դնկատարի հետ և այլն, այս բոլորը առնչվելին հայ ժողովրդի ծագման և ասումնասիրության համար մի անսակ նախապաշարում

և կանխատես մոտեցում: Այս, անշուշտ, հանճարեղ էվոլյուցիոնիստական և առաջադիմական էքսպանսիայի հնարավորությունը էր, որ իր գագաթնակետին հասավ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակ: Հենց որոշ գրողներ ոչ միայն հայերին, այլև մեզ ազգակիցներին, վրացիներին և ուրիշներին պատրաստ էին բնութագրել Հռոմաստահեղց: Արմին էթնոնիմական անվանիչը գործածվել պետականականների համար հայերի և հայ լեզվի ծագման և կազմավորման համար մի առանձին կիզակետ (фокус), որ ամենևին բուռն պետք արտացոլել: Այդ անունը նաև գործածվել նիվոր հայ հնդեվրոպացիների անունը և միշտ հակադրվում էր այդ երկու անուններին—ամենը հնդեվրոպական նիվոր ցեղերի համար (արմին), իսկ միայն՝ հայաստանի բնիկների կամ անդրադիմների համար (հայ): Հնդեվրոպական նիվոր ցեղերի անունը (կամ անունները) մեզ հայտնի չէ: Իսկ armen- կամ ավելի հիշյա՝ arnin- ցեղանունը շատ լավ բացատրվում է Հայաստանի հարևանությամբ եղած մեր էրային գեր շատ գործոր առաջ arim (հմմտ. Հոմերոսի մոտ հիշյալ արիմներին) և Arme կամ Arime երկրանունը ասորեստանական և արտասահմանական գրականության մեջ, որը համընկնում է հնագույն Անգելոս տուն (Angelene) նահանգի հետ իրեն հին Nihiria կամ Nihria գլխավոր քաղաքով, որ երևի նշանակել է «բերդ» (—անգլ. որ նույնն է նշանակում): Այդ երկրամասը մեծ մասամբ հիշյալ է Šupria-ի հետ, որն ավելի արևելք էր, արժյան Մանթարիին մոտ (=հին Տիգրանակերտ): Իսկ Թաբալոսի Բնհիասանի (Բիասանի) մոտի հին պատմական արձանագրության Արմինա (Armina, որից arminiya «արմինացի» անգանանը իրեն -ina ածք ցույց տալով տարբեր է կազմած): Ինչպես անունք հետ—Hatte և Hattina, Palestina (միջագետքի երկիր), Hattar-ina, Lulu-ina (Լուլու ցեղի տեղ, Քշհամու երկիր), Bia-ina (բիա ցեղի երկիր=Վան), Naştbina (=Մծբին) և այլն. այդպիսի կազմություն են ունեցել նաև Կարին, Գաղին, Ազին, Բալին, Արտին և այլ հայկական տեղանունները: Արմի և Շուպրիա երկրները մոտիկ են շուբար (=Քուռ) ժողովրդների շրջանը, որոնց լեզվից մոտ քառասուն հատիկ և հատկապես անուններ են մնացել հայերենում:

Հայոց լեզվի ստուգաբանության խնդրում ես բարվոք եմ համարում նախ վերցնել այդ լեզվի հնագույն տեղերը ստուգաբանական տվյալների կատարելության համար, հետո հնդեվրոպական մասը իր բոլոր դասակարգությամբ և քննությամբ և վերջապես պրոբլեմի սխեմանը, օրինաչափությունները և հատկապես արմատները ու ձևերը:

Ի ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ԼԵԶՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Թևակոտ լեզվի և իր կրողի միջև չկա մշտնջենական անխզելի կապ և պատմության երկար ու ծիծղ ընթացքում ցեղերն ու ժողովուրդները հաճախ են անցել ավելի ուժեղների առաջ և ենթարկվելով կրոնական, քաղաքական-պետական, տնտեսական ու կուլտուրական ճնշող ներգործությանը, փոխել են լրիվ իրենց լեզուները, լավագույն դեպքում թողնելով իրենց առաջվա լեզուների որոշ «մնացուկ» իրենց պրոլոր հիշատակարանների մեջ, թեպետ հայ ժողովրդի անցած որոշ հատվածները այդ նույն գործոնների ազդեցությամբ զարձել են դյուցներով ու շրջաններով թուրք կամ արաբ (Սղերդի շրջանում), այնուամենայնիվ հաստատ կարելի է ասել, որ հայերն իրենց պատմական լեզուն չեն յուրացրել պատերազմի վիճակում արևէ ուրիշից, ոչ տնտեսի Փոքր Ասիայում, և ոչ էլ դրսից՝ բնորոշ: Հայ լեզուն կազմված է հայ ժողովրդի գոյացման հետ, նոր ծնունդ ու կազմվածություն է, կազմված որոշ ցեղերի կամ ցեղախմբերի որոշ միավորումների, որոնց քաղաքական դերի ու գերակշռության հետ: Այս նշանակում է, որ նրան պատմական Հայաստանում եղել են մոտ հիսուն մեծ ցեղերի կամ առհասարակ միավորներ, ապա դրանց լեզուները համաչափ կերպով չեն մասնակցել հայ լեզուն կերտելու մեջ, ինչպես նաև հայացումը չի ակռվել և ձևակերպվել մեր պատմական հայրենիքի բոլոր ծայրերում կամ գավառներում: Հայաստանի ցեղերը հետզհետե հայացան, կազմելով հայ նոր ժողովուրդը 7—3 դարերում

մեր թվարկությունից առաջ, բայց կազմակերպվող, կուլտուրապես ավելի զարգացած և պետականորեն դեկավարող կորիզը — ցեղախումբը որոշ սահմանափակ վիճակ ուներ: Եվ այս պարագաներում նրան նորանոր ցեղեր անդամ գալին Հայաստանի տերիտորիայում, ինչպես, օրինակ բուլկարները (հյուսիսային Կովկասի բուլկարներից), որոնք նստել էին Վանանդում (Կարսի նահանգում), կամ ատակտին (սկյութականը) մի ցեղ կամ ցեղախումբ, որը հաստատվել էր Սյունիքում (զոգկերը), դրանք լավագույն դեպքում պիտի ձևավորվեին հարկական բարբառները, բայց ոչ մի ազդեցություն արդեն կազմակերպված պետական լեզվի վրա, որ ավելի մշակված էր և ուժեղ: Նման ազդով է ընթացել ժողովուրդների և պետությունների կազմավորումը և այլն: Օրինակ, ռուսական-սլավոնական ցեղերի խառնումը սկսվել է Կիևական ավազանի որոշ մասում (Վոլին), առնչվելով այդ տեղերի վաճառականության, Կիևի դերի և Կիևյան վրայով եղած արանգիտային ճանապարհի հետ (дорога из варягы в греки): Հետագայում Նովգորոդի, Պսկովի և ավելի ուշ Մոսկվայի, Տվերի, Վլադիմիրի և այլ քաղաքների կազմավորումով և վերջապես Մոսկվային ենթարկվելով կազմվում է ռուս մեծ ժողովուրդը, որը հետզհետե նահանջով Վոլգայի և Օկայի միջին ավազաններ, ինչպես և Վոլգայի ավազանը կազանով և Աստրախանով, ենթարկում է իրեն այլալեզու նորանոր ցեղեր, ընդգրկելով նաև Սիբիրը: Արդյոք այդ чудь, мари, весь, мордва, чуваш, удмурт և նման այլևայլ ֆիննական, թյուրքական կամ մոնղոլական ցեղերը կազդեին ռուսաց լեզվի վրա: Իհարկե ոչ:

Ուշագրավ է մեր հին ժողովրդական բանահյուսությունից այն հատվածը, որ բերում է Մ. Խորենացին Վարդան մանուկի մասին: Վերջինս հետաքրքիր գնացակից, այսինքն՝ անջատվելով յուրայիններից (իր ցեղից) գալիս է տեղերն գտնվոց (Վրաստան) այժմյան Ախալքալաքով, Բասեն գետի ընթացքով, գնալի Արտաանայի դաշտը, այժմյան Վաղարշապատի մոտ, ուր իր կայանն էր դարձրել հայ Երվանդը: Գալու նպատակն էր՝ «իմել կոխել դուռն Երուանդայ արքային», այսինքն՝ միանալ հայ էթնոսին կամ ցեղախմբին, հայանալ, թեպետ ուսուցչի գրված է «Խնամիանալ, միաբանալ»: Եվ այդպես ամենուրեք: Ցեղախմբերը մեծանալով և միավորվելով արտնվում էին արդեն այս հողի վրա՝ դասակարգային, որը և հիմք էր ծառայում պետությանն ստեղծելու իր թագավորներով:

Ստրաբոնի ասելով Արտաշեսի և Զարեհի ժամանակ (189 թ. մեր էրայից առաջ) հայ ժողովուրդը «միասնական» էր, այսինքն՝ ամենաուրախ իրար հասկանում էին: Իմ կարծիքով այդ ընդհանուր հաղորդակցության լեզուն մոտ պետք է լիներ Մ. Խորենացու կողմից բերած ժողովրդական («Գողթն»-ի) այն բանահյուսական կտորների լեզվին, որ երբվնչ կամ ասվել են Վահագնի, Վարդան մանուկի և Արտաշես ու Սաթենիկի մասին: Այդ լեզվին շատ մոտ է Փավստոս Բուզանդի ժողովրդավիպական լեզուն: Եվ թեպետ այդ երկու ժամանակակիտների մեջ ընկած է մոտ 650 տարի, այնուամենայնիվ այդ ժողովրդական լեզուն շատ չափով է փոխված լիներ: Իհարկի պետական կառավարության ակցիաների (օրենքներ, դատավարություն, բանակի, առ ու ծախի գործողություններ, արտաքին հարաբերություն և այլն) և մանավանդ կրոնական պահանջների հետևանքով այդ ժողովրդական լեզուն ավելի պետք է մշակվեր, հղկվեր ու գործածվեր: Այդ, ըստ էության, երևում է և մեր մենեռնական պրակտիկայի մեջ, երբ Անի քաղաքի (Ենիքալեի վրա) հնչեցնում ենք մեծ գրագետ-արխիվ, որից օգտվում էին և օտարները, ինչպես նկատում էր Բարդուղիմեոս, որը «ընթերցանել գիտենական պատմութիւնն, յորում և գործս թագաւորացն... փոխանակ գամենայն ի լեզու ասորի, որ և ապա անտի լեզու ի յոյն բանս» (Մ. Խոր., II, § 66): Հայտնի էին Անիի այդ Արտաշատի տաճարի գիտական գրքերը՝ Որոտանը և Մաժանը, իրենց պատմություններով: Իսկ այդ կրոնական գործոնը երբեմն ավելի ուժեղ էր լինում, քան աղգային-լեզվականը, երբ, օրինակ, հայ-վրացական տաճարներում գոնում քրիստոնյա միաբնակ (մոնոֆիզիտ) վրացին հնչառությամբ գոնում էր հայ, իսկ երկաբնակ (դիոֆիզիտ) հայ քաղկեդոնականը գերադասում էր գոնալ վրացի:

Հայ լեզվի կազմավորումը բնական է, որ պետք է անթա կապվի հայ ժողովրդի պատմության հետ, թե՛ իր ծագումով՝ գենեզիսով և թե՛ վերջնական կազմավորմամբ ու զարգացումով:

Հայոց պատմությունը մեզ մատչելի է դարձնել անցյալի մի շարք փաստական տվյալներով: Նախ՝ գրավոր բազմաթիվ վկայություններով՝ թե՛ աղգային աղբյուրներով և թե՛ օտար: Հետո նյութական կուլտուրայի մնացորդներով, սկսած հնագույն շրջանից: Վերջապես այս խնդրի համար նշանակություն են ստանում հայ ֆոլկլորի և դիցաբանության, հայերի մարդաբանական և ազգագրական մի շարք վկայություններ և այլն: Եթե որևէ ազգու-

թյան, որ առաջացել է որոշ ցեղերի միասրտումից ու անանուանական-հասարակական նոր փոխհարաբերությունից, հայ ժողովուրդը էականապես է 7—3 դարերում, ապա այդ փոխադարձական ամենացնդային և կուլտուրա-պատմական անունքները մեզ հասնելու պետք է հետաքրքրական: Եղած ավյալները առաջին մեզ բերում են այն եզրակացության, որ պատմական Հայաստանի (մեջը և մեծ) հողի վրա եղել են ոչ միայն այլևայլ ցեղեր[1], այլև պետություններ՝ Հայասա, Քուշ-Մուսասներ (մասամբ), Ուրարտու:

Ներկայան բնագրերը արձանագրությունները 1400—1200 թթ. (մեր էրայից առաջ) հանախակի հիշատակում են Հայասա (Hajaša) կամ Ազզի (Azzi) կոչված երկիրը կամ պետությունը, որն ընդգրկում էր Եփրատի, Ճորոխի և Արաքսի վերին հատվածների մեջ եղած տարածությունը[2]: Հետագայում այդ անվանումը մանում էր Փոքր և Բարձր Հայքերի մեջ: Արևմուտքից դալիս էր խեթերի «վերին երկիրը», որի մասն էր կազմում Գալա կամ Բալա երկիրը, որը բավականին զարգացած էր երևում և բանում էր հարթ տարածություն, ներկա Ալշիխա և Իրիս գետերի ընթացքում: Ներկայան թագավորները պարծանքով անվանի իրենց Հայասայի հետ, օրինակ խեթական կայսեր էին հաստատում նրա թագավորների հետ, օրինակ Մուշանտին հետ և Հայասան համարում էին իրենց վասալ մի պետություն: Երբ շուրջ 1200 թ. խեթական մեծ պետությունը փլուզվեցին, անդրծովյան մի քանի նվիրոր ժողովուրդների (ցեղերի), ինչպես գալն

---

[1] Տե՛ս իմ Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1940 г. էջեր 71—76:

[2] A. Götze-ն իր մի հոդվածում („Bemerkungenzu dem hethitischen Text" տե՛ս Revue hittite et asianique, 1930 թ., հոկտ., էջեր 24—25) համարում Ազզին Հայասայի մաս, գրում է վերջինիս մասին հետևյալը. Ein grösseres politisches Gebilde, wie es Azzi-Hajaša zweifellos ist in dem angegebenen Sector der hethitischen Ostgrenze nur denkbar, wenn es die Euphrat-Strasse Erzingan-Erzerum einschliesst": Իսկ F. Caraignac-ը նույն ժամանակի 1931 թ., Fasc. VII, էջ 14, Հայասան համարում է մի մեծ միապետություն, որը բանել է պատմական Հայաստանի ամբողջ արևմտյան մասը. „he Hajasa a été au XIV c siécle une grande monarchie. Couvrant toute l'Armenie occidentale": Հոդվածի վերնագիրն է „He premier royaume d' Armenie": Այս կարծիքները ևս չեմ բերում իմ „Хайаса—колыбель армян" գրքում հիշյալ ժամանակը ձևերիս տակ չունենալու պատճառով: Առաջինը կամ առաջիններից այդ անվան (Haiasa) և հայ անվան կապի մասին ասել է Նշան Միսաքյանցը) տե՛ս Caucasica, Fasc. 7, 1931, Leipzig, էջ 43): Գալ կրնչիկը նույնն ասել է 1932 թ. Anzeiger der Wien Axad., 1932, էջ 28 և շար.):

ն հայասացիներին, կաշկայցիներին հարվածի տակ կազմալուծվում է: Պետք է ենթադրել, որ Հայասան ոչ միայն անկախանում է, այլև տարածվում է, հատկապես դեպի հարավ, դեպի Մելիտենե, որ այն ժամանակ կոչվում էր Ինգարաման կամ Թագարաման (—ասսովածաշնչի «Թոգարմա»): Այդ է պատճառը, որ Հալիբը, հալիբի (resp. հայասացիների) նահապետը, համարվում է Թորգոմի որդի: Հայասա բառացի նշանակում է «հայա ցեղի (աստծո) տեղ», որ վերջին -սա (-sa) մասնիկը, կազմած հարաբերական -ս (-s) մասնիկից (թևերս լույի լեզվով) և ա (a) վերջամասնիկից, որ տեղ է ցույց տալիս, մտնում է մի շարք տեղանունների մեջ, ինչպես՝ Ամթիսսա (խեթերի մայրաքաղաքն է), Ամուրսսա (կամ Ամուրսաա) «խաոխանների տեղ», Ջազդիսա «պազանների տեղ», Նինասսա «Նինա աստծու տեղ», Տարխունտասսա «Տարխունտա աստծու տեղ» և այլն, և այլն: Հայասայի (Հայասայի) հավանական տրնտրը հայ անվան հետ ընդունվել է շատ գիտնականների կողմից և կարծես թե այժմ կասկած չի հարուցում, մանավանդ որ պատմականորեն հենց այդ Փոքր Հայքն է եղել հայերի բնօրրանը, որտեղից 7-րդ դարից սկսվել է այդ հայա, ազգի, բազա ցեղերի տեղաշարժը դեպի Վան, Արաքսի և Արածանի-Ադձնիքի շրջանները: Այս տեղափոխության պատճառը պիտի համարել VIII դարի վերջերը հանդես եկող կիմմերներին, որոնք հետևյալ դարում տակն ու վրա արին ամբողջ Փոքր Ասիան, ինչպես և տակերի (սկյութացիների) հետ նպատակցին Ասորեստանի կործանմանը: Այդ gimirri (հայոց Գամիրք = կապադովկիա) ցեղանունը անդրադարձ տալավորության է թողել հայերի և վրացիների վրա, որ gmiri, հայոց Գամիր նշանակում է «հերոս, զորավոր», իսկ saka-ն հայոց մոտ դարձել է սկա (ska) > հակա (hska)[1]: Այս անվան հետ եմ ես կապում և մեր Գարեգին Սկա-որդուն, առաջին հայ Թագադիր Քահանայապետին, ինչպես ասում է Մ. Խորենացին[1]: Նա, արևմ, տակերի որդի էր, որոնց առաջնորդը ըստ սուրբ գրոց Ասքանազն էր: Եվ

[1] «Սկա» անվան էթնիկ նշանակության ըմբռնումը ընդունել է ոչ միայն «Սկա-որդի» հոչակավոր մեջ, այլև մասամբ մեր պատմագիրների մոտ: Օրինակ, Անանուն պատմիչը, խոսելով Թագարատ Փառաւորյանի մասին, որն ըղդատաջում է հայոց առասպելական Արշակ—Վաղարշակին, ավելացնում է. «Զոր արա Արշակ արքայ ասացեալ հայասանն երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, մանաւանդ, ամենայն թագաւորութեանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր, որում ետ իշխանութիւնն ամենեցին: Նա կատարեաց զնախայաղ, որ գօրաժողով եղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորւոց»: Տե՛ս Քերովբե Պատկանյան, Պատմութիւն Սեբեոսի, 1887, էջ 9:

խզուր չէ, որ հայերը կոչվում էին ըստ այդ ավանդութիւնների (տուրք հայերի և Տորյունի մոտ) նաև «տաքանապան տուն»: Հավանաբար հայասցիներին միացնող նոր «պատկապիր թագավորը», այնինքն արդեն ժողովրդի թագավոր, *ոչ թե առաջնորդ, եղել է այդ Պարույրը:*

Հայասցիների, ազգի և բարբ ցեղերի որոշ փորր քանակը անցել է Բոի մոտով դեպի հյուսիս՝ Վրաստան, ուր հունա-հռոմեական աղբյուրները հիշատակում են achai-oi *անունով ժողովուրդ, որը «a» նախդիրով, ինչպես այդ հատուկ է և արիացական լեզուին (= a-bas-k-; A-kharthnə «Վրաստան», A-rus-nə «Ռուսաստան» և այլն), ծագած պիտի լինի* chai *անունից: Սմանլեռնում կան երկու «բարբ» անունով բարբառներ, ինչպես նաև Վրաստանում «Պարբ կացիոն» անցանուններ: Իսկ* azzi *ցեղանվան առկայութիւնը ևս ուզում եմ առնել վրաց առասպելական թագավոր Azo-ի անվան մեջ: Պատահական չպիտի համարել, որ այս ցեղերի անցափոխութեան ուղղութեաց կատարվել է նաև վրացական ցեղերի անցաշարժը Ճորոխի ավազանից կամ Բոի վերին հոսանքից դեպի այժմյան Արմավի—Քրիլիսի շրջանը, ինչպես անցանուններին հիման վրա այդ ուզում է հաստատել Բոլտունեանը:*

Արաքսի հովտով դեպի արևելք այդ նույն հայ-ազգի և բարբ ցեղերի անցաշարժի առկայութիւնը հաստատում են հետևյալ անցանուններըՔաղաց աշխարհ, Քաղաբերդ..., Քալա-Կարաճ (—Բարբ ցեղեր) կամ Կարաբալա «ցեղ բարբ» (—Դարբաղ), Քալաճուռա կամ Քուռի բալա «Բարբ գետ» (—Բալդար-չայ Ախրեքչանում). Aza կամ Haza քաղաքը Փոքր Հայքում և վերին ու ներքին Ազա գյուղանունները Գողթանում, Ազի (= Կամախ, հին Kummaha) քաղաքանունը Եփրատի վրա Հայասատում և Ազի ամրոցը, որպես Բագրատունյաց մայրաքաղաք Աշոտյան դեմի վրա, Aripsa բերդը Հայասատում և Արավիս (Մարանդում), Արաւսեակ կամ Արաւիս (դեռ և դյուղ Երիվանդակում, Արաքսի մոտ) և այլն: Իսկ այդ ցեղերի գաղթը իրենց նախկին տեղերից դեպի հարավ և հարավ արևելք՝ Արածանի ստորին հոսանքով դեպի Աղձնիք, հետո և դեպի հյուսիս, վկայում են —Քալա-հովիտ, Քալուզի, Քաղաճակաց տուն, Քալուր Քաղին, Քաղէշ..., Հազդու..., Հայնի, Հայոց ձոր և այլն:

Նկատելի է, որ ամենից շատ անցանուններ մնացել են Քալա կամ պալա ցեղանվան անունով, որովհետև հարերն են այդպես անվանել, իսկ հայ կամ ազգի համեմատաբար քիչ են, և բնական

է, որ այդ նոր հայերին բնիկները պիտի կոչեին, ինչպես, օրինակ, ուրարտացիք ասել են «Հայոց ձոր» վանից հարավ-արևելք, որ մոշար դեռևս ավազանում առաջին անգամ հայեր են հաստատվել: Նմանապես Հայնի անունը ասել են Տիգրիս գետի վերին հոսանքում բնակվող արիացիները—շապրիտները, որը իր -ցի (-ի՛ցի) մասնիկով նման է Ազձ(ի)ցիք կապադովկյան հին Alzi ձևից (Alzini հիշատակ են և ուրարտական արձանագրություններում): Գաղին (<Palina) անունով գյուղ կար ոչ միայն Բալուի մոտ, Արածանիից հարավ, այլև Դիարբեքիրից մոտ 40 կիլոմետր դեպի հյուսիս: Որքան էլ բազմաքանակ են նկել այդ բալա ‖ պալա ցեղերը և կուլտուրայով ինչքան հայացիներից ոչ պակաս, այնուամենայնիվ Ուրարտուում գերիշխել են ոչ թե դրանք՝ բալացիք, կամ ուրարտական տարրը, այլ նկվոր հայացիք, որոնք Ազձնիքում խառնվել են Ar(i)me և Šupria շրջաններին խուռիտական (շուբար կամ սուբար) ժողովրդի հետ: Այստեղից է և Armine անունը, որով հայերին կոչեցին մեզացիք ու պարսիկները, իսկ հետո հույներից յուրացվելով տարածվեց ամենուրեք: Միայն վրացիք են մեզ անվանում սոմեխի և քրդերը՝ ֆլա (ֆլակի գեմանին «հայոց լեզու»)[1]: Ինչևէ արիները (Arime երկիրը իր Niḫ(i)ria գլխավոր քաղաքով) հիշվում են շատ հին ժամանակից ասորական, խեթական և ուրարտական արձանագրություններում, և թեև համերաշխ նույն arimoi ցեղանունը, որը նա կապակցում է Կապադովկիայի Արգեյոս լեռան հետ, այնուամենայնիվ այդ Արիմեն, որ ըստ իս Անգեղտունն է հայոց ժամանակ («բնիկ տունը» angł «բնիկ» բառից) Շապրիտից (Տիգրանակերտից՝ Մոլֆարկինից) դեպի արևմուտք, յոթերորդ դարում արդեն մեծ մասամբ ասորացել էր, կորցրել գրեթե իր խուռիտական լեզուն և հնչյունքներ ունդի տվել հայացիների լեզվին, խառնվելով նրա հետ: Ծայգները (ուրարտացիք) դեռ հինգերորդ դարի վերջում ճնացել էին առանձնացած և վարձկան զորք էին տալիս սրմիններին, այսինքն՝ հայերին, ինչպես վկայում է Քսենոֆոնը իր «Անաբասիս» գրքում: Այնուամենայնիվ

[1] Տե՛ս իմ Хайаса—колыбель армян գիրքը (էջեր 171—209): Այստեղ օգտվելով աղբյուրից, ուզում եմ առաջարկել մի բառային առաջարանություն. այդ «բալ» (=вишня) բառի մասին է, որը կա և վրացերենում: Այդ անունը ևս կապում եմ Bala (Pala) պոնտական երկրամասի հետ, ինչպես կերասունդ քաղաքանունից ունենք կեռաս „черешня", pontic—«պոնտական» անունից «պնդուկ» («ֆընդըկ»), persic—«պարսկական» անունից ռուսաց персик «դեղձ»:

պետք է ընդունել, որ հայոց նոր լեզուն, որի փայլուն վիպասքները մեր հին դասական լեզուն է (գրաբարը»), կազմվել է հայագիտների, խմբիրների ու խոսուն-ուրարտական լեզուների, ինչպես և հնդեվրոպական մի (կամ մի քանի) լեզվի խառնուրդով[1]: Այդ վերջին հանգամանքի (հնդեվրոպական շերտի) մասին պատմական անմիջական տվյալները քիչ են, որովհետև փոքրագիտենների լեզուն, որքանով նա հայտնի է, նման չէ հայերենին, ինչպես այնպես էին հին հույն մատենագիրները («հայերը փոքրագիտենների հետնորդներն են» ըստ Հերոդոտի), իսկ տակերի (սկյութացիների) լեզվից մեզ ոչինչ հայտնի չէ: Միևնույն ժամանակ չէ, թե այդ տակերը, որ եղել են պատմական Հայաստանի տերիտորիայում (հարավ-արևելքում) որքանով միատարր կամ հնդեվրոպական են: Այնուամենայնիվ հայոց լեզվում կա մի տարր, թայլ չդնելիշխող չափ, թե՛ լեզվաբանության և թե՛ քերականության մեջ, որ մեր լեզուն կապում է հնդեվրոպական հետ: Այսպես որինակ՝ հայոց լեզուն է հանդիսանում մեր ժողովրդի պատմական զարգացման մի ապրյուր, որ ոչ միայն համընթաց է արտահայտվում մեզ հայտնի պատմական հնագույն դեպքերի ու փաստերի, այլև վկայում է մեզ չհասած և ոչ լրիվ պատմական իրադարձությունների մասին: Ինչպես տեսանք, լեզուն ևս պատմության համար մի ապրյուր է, այն էլ՝ հնագույն, ինչպես մարդու գամբարանը իր առարկաներով ու զանգով, հետը դրած զարդերով, սրերով, տանտեղեսով ու կերակրով, հետաքրքիր զարդերով կամ հատուկ ծեսերով և այլն: Ի դեպ ասեմ, որ հայերը իրենց մարդաբանական հատկությունների պատկանում են «արմենոիդ» կոչված փոքրասիական տիպին, որը տարած այդ Փոքր Ասիայից դուրս էր գալիս թե՛ դեպի արևելք և թե՛ դեպի արևմուտք[2]: Այս հանգամանքն էլ միանգամայն դեմ է խոսում հայերի եվրոպացից գալուն («հընդեվրոպական նախահայրենիքից») և հաստատում նրանց բուն փոքրասիական ծագումը, իսկ հայ լեզուն որպես փոքրասիական կամ ինչպես հիմա ասում են՝ ասիանիկ լեզու:

Որ պատմական Հայաստան-Այդին, ինչպես և հարևան Վասպուրական երկրի ցեղերը, ուրարտերեն դարի վերջից սկսած (կամ յոթերորդի սկզբից) կիմմերո-սակյան աստղատեսող ցեղերի ճնշմամբ

---

[1] Տես. խմբ. պրոֆ. Գր. Ղափանցյանի առաջադրած այս թեզը չի հիմնավորված:

[2] Արևելքում այդ տիպը հանդում է մինչև արևելյան Գոբակասան, իսկ արևմուտքում նա միախցված է Գինարյան տիպի հետ բալկաններում. տե՛ս A. Göetze, Kleinasien, Munchen, 1933, էջ 17:

սկսելին գլխավորապես անդրադարձվել հարթավ Եփրատով և հետո Արածանիի ստորին հոսիքը և այդտեղից մոտավոր վանա լճի հարավային շրջաններով դեպի Վան-Տոպ («Հայոց ձոր») և մինչ մոտավոր դեպի Ադձնիք, այսինքն՝ Տավրոս լեռնաշղթայից հարավ, անցավորվելով հին Arime և Šupria երկրամասերում և այլն, դրա համար մենք ունենք և այլ պատմական վկայություններ:

Նախ՝ ունենք հունական աղբյուրներից (Ստրաբոն, XI, §§ 12, 14) վկայություն, թե Աղվանքաղը Մակեդոնացու արշավանքների մասնակիցներ՝ Կիրոխ Փարատակին և Մենի Լարիսացին ասել են, որ արգոնավորդ Արմենոսի ուղեկիցներից [=հայերը] ոմանք բնակվեցին Ակիլիսենայում [Եկեղիք–Եկեղյաց գավառ Փոքր Հայքում], որը առաջ ենթարկվելիս է եղել Մոծերի իշխանության, ոմանք էլ հաստատվել են Միապիրիտում [ուղղել է՝ Շուապիրիտիս=հին բնակավայր Šupria, Arime-ից արևելք] հասնելով մինչև Բալաքենն և Ագիսարենն, այսինքն՝ Հայկական բարձրավանդակից դուրս: Երկրորդը՝ պատմական չորս Հայաստանների հաջորդաբար կազմվելը (I և II, III և IV Հայք), ինչպես որ նկարագրված է Խորենացու կողմից և Յուստինիանոս կայսրի նովելներում, աշխարհագրորեն վկայում է նույնպես Հայաստանի բնակիչների վերոհիշյալ ուղիով ատրածվելու մասին: Եվ վերջապես՝ Պարթևաց 1-ինն ասանեներկերտ ատրապատցիները հնում ընդգրկում էր հայերի բնակության այդ վերոհիշյալ անկյունը, սկսած հայկերի հարթավայրին նշած շրջաններից դեպի Արածանիի ստորին հոսիքը, անցնելով Մելիտենեից ի վեր, մինչև Սև ծովը, որ խնարկն արտացոլել է ոչ միայն աշխատական ու ճանապարհային նկատառումները, այլև էթնիկական և քաղաքական[1]: Այդ ճանապարհըն-

[1] Ըստ Հերոդոտի հայերը պատկանել են մանում էին XIII սատրապիան, սահմանակից էին արևմտյուրում հիլիկեցիներին [=Մելիտենեն] եփրատ գետով, իսկ արևելքում բաժանվում էին մատիենացիներից Տիգրիսի մի վտակով, հավանորեն Զամ գետով: Ալարոդները, որոնք գետ չէին հայտնի, հավանորեն Զամ գետով: Ալարոդները, որոնք գետ չէին հայտնի, բայանդների և մյուսների հետ մանում էին Դարեհոսի XVIII սատրապիան և սահմանակցում էին արևելքում այն մատիենացիների հետ, որոնք ապրում էին Ատրպատականում (Գազակատան), սկսած Արաքս գետից դեպի հարավ. Ուրմիա լճի կողմերը հայերի վերաբնակված ալարոդները էին հյուսիս-արևելյան կողմը: Գահի ցեղը Ն. Ադոնցը անգամ է նում էին հյուսիս-արևելյան կողմը: Գահի ցեղը Ն. Ադոնցը անգամ է նում էին Բոխտան (Աբենյան Տիգրիս) գետի ավազանում, ի նկատի ունենալով դրանց Բոխտան (Աբենյան Տիգրիս) գետի ավազանում, ի նկատի ունենալով դրանց նմանությունը (Pakti և Boxtan). տե՛ս նրա „Арм. в эп. Юст.», էջ 393։ Ըստ նմանությունը (Pakti և Boxtan). տե՛ս նրա „Арм. в эп. Юст.», էջ 393։ Ըստ Բանդաֆնի կենարքա գետը (=Boxtan) հյուսիսային ափի հայ գյուղերը ավերվել էին կորդուների կողմից, երբ նա անցնում էր այդ գետի ասորին հատվածը: Այդ ևս վկայում է հայերի և պակիների սահմանի մասին:

թացքի այն մասը, որ հյուսիսային Միջագետքում և հարավային Հայաստանում է ընկած, հայտնի էր դեռ Աստիաստանի թագավորների արշավանքի ժամանակ: Մինչև իսկ պարսից առասպելաններն էին օգտվում նույն ուղիով, որ հայտնի էր հնում որպես Պարսից 1-ինի «Մեծ հանդապարհը»՝ Նոշից մինչև Սարդ: Մինդուման Արծրունին պարսից Շապուհ արքայի գործերով համառոտ բնթացել է այն ուղղությամբ—«Ի ընդ Աղձնիս և ընդ Ծոփս մեծ ընդ Անգեղ տունն ընդ գաւառն Անձաւայ ընդ Ծոփս Շահանուց, ընդ Մզուր գաւառն և ընդ Դարանաղն, ընդ Եկեղեաց, զիորոմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն պարսից հանդերձ անթիւ զօրօքն առպատակեալ հնդնալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս (տե՛ս Փաւստոս Բյուզանդ, Ք. Պատկանյան, Պետերբ., 1883 թ., էջ 120):

Այն ուժեղ հակահարվածը, որ ավեց Պարսից I դեմի Բալաքինեն և Ադիաբենեն տարածված Հայաստանի ցեղերին հենց հակաատամարտներում (Զուզա, Տիգրա, Ուխտամա և Օտիարտա կեռներում Արմենիայում, և Իզալային մոտ Աստիաստանում) ստիպեց նրանց քաշվել հյուսիս դեպի լեռները և լեռնագաշտերը, հայցմանն ենթարկվում նախ Ուրարտուի արևմտյան մասը (Տարոն): Արդեն հինգերորդ դարի վերջերում ըստ Բենեֆոնի հայերը գտնվում էին կենտրոնա (Բոխտան-սու կամ Արևելյան Տիգրիս) գետից հյուսիս, սահմանակցելով Կորդուայց աշխարհի հետ: Նրանց Օրոնտա (Երվանդ) թագավորը ենթարկվում էր պարսից տիրապետությանը: Մյուս հայ թագավորը՝ Տիրիդատը՝ իշխում էր Արածանի ստորին հոսանքում և վերին Եփրատի (Կարա-սու) նախկին Հայաստանի հողերին՝ ի մեջ ասյալ և հասպերխանների ու բասյաննների տերիտորիան (—Սպեր և Բասեն): Այս վերջին հանգամանքը խոսում է հայացիների նաև դեպի արևելք տեղաշարժի մասին, Ձորոփի և Արածքի հովիտներով: IV դարում հայացման պրոցեսը ընդգրկում է նաև Արարատյան դաշտը, ուր IV և III դարերում իշխում էին դարձյալ Որոնտիդները (=Երվանդյանները), որոնց հաջորդում է Արտաշես I (որպէս Զարեհագրի) Արմավիրում և հետո Արտաշատում: Բուն Հայաստանի (Փոքր Հայքի) բնակչությունը այնքան նոսրացել էր և ընկել հարևանների ազդեցության տակ, որ Արտաշեսը ստիպված էր նորից նա վերցնել այս շրջաններըց, ինչպես Կարինը և Տևրջանը խալիբներից և մոսխեղիններից («աշտարակաբնակ»-ներից), Եկեղեաց գավառը՝ կատաոնններից: Հայերի տարածվելը հարավից (Աղձնիքից) դեպի հյուսիս՝ Արարատյան դաշտը, որ եղել է Արածանիի հովտով դեպի Հարք, Ապահունիք, Բագ-

բնանոց և Ալբարան, արձագանք է գտել նաև հայ բանահյուսության մեջ, ինչպես վկայում է Խորենացին, ուր նկարագրվում է Հալիկի, Արմենակի ու Արամայիսի չվելը Բաբկոնից և նրանց հետ կապված լեգենդները[1]:

Երբ Հերոդոտը ասում է, թե Հալիս և Եփրատ գետերը բաժանում են Արմենիայից կամ նրա լեռներից (գիրք I, 72 և 180), ապա այստեղ պիտի հասկանալ հետագա Փոքր Հայքը, կամ հին Հայասան: Նմանապես, երբ նա հայերին մոցնում է Դարեհոս I-ի տասներկերորդ սատրապիան և այսրդնեներին (ուրարտացիներին) տասներեքերորդ սատրապիան, ապա դրանով ևս շեշտվում է արմեններին (—հայերի) տարածվելը միայն Եփրատի հյուսիսային մասում: Այս նույն հինգերորդ դարի հույն գրող Քսենոֆոնի վկայությամբ, մոտավորապես 400 թվականներին մեր էրայից առաջ, արմենները (—հայերը) արդեն ունեին երկու Հայաստաններ, մեկը Ադձնիք—Տարոնում և կենտրոնական գետից հյուսիս, որ Որոնտի իշխանության տակ էր, իսկ մյուսը՝ Մոսիք—Փոքր Հայկ, որ նա կոչում է «Արևմտյան Հայաստան» և կառավարվում էր Տիրիբազի կողմից: Բայց նրա վկայությամբ արմենների հետ դեռ կային մարդերը, խալդերը, տաոխները և խալիբները, այսինքն Ուրարտուի կենտրոնական, արևելյան և հյուսիսային մասերը դեռ հայացված չէին: Ուրեմն, երբ Դարեհոսի Բեհիստունի (Բիսուտունի) արձանագրության մեջ պարսկական բնագրի Armina բառին ակկադական (սասուրա-բաբելական) թարգմանության մեջ կարդում ենք Uraštu, ապա այդ չպիտի հասկանալ ձևականորեն, որ դրանք քաղաքական և աշխարհագրական առումով նույնն են: Ակկադական բնագրերը նույնիսկ հինգերորդ դարի վերջին քառորդում դեռ պահում էին իրենց ավանդին հարազատ Ուրաշտու (<Urartu) հորջորջումը, երբ արդեն վաղուց այդ պետությունը չկար: Եվ ընդհակառակը, պարսիկների համար Ուրարտուն անցյալի տրագիցիա չուներ, իսկ նրա հարաւում (Arime>) Armina երկիրը իր նոր ևկմոր հայերով հինգ անգամ ուժեղ ապատամբում է Դարեհոսի դեմ, իսկ արմենացի Արախան (որպէս Քսերքսեսյան) ապստամբում է Բաբելոնում, որպես վերջինիս կատավարիչ: Գարգ է, որ պարսիկների համար նշանակություն էին ստանում այդ Արմինայի բնակիչները, որոնք հին արմեններն էին (Arime երկիր և ժողովուրդ), ողողված խաղաղասեր գաղթականներով: Շատերը ուշադրություն են դարձրել,

[1] Տե՛ս նրա «Պատմություն Հայոց», գիրք I, գլ. ժ—«Այս արգարացուցանէ զանգիր հին ասացեալ գրոցս» (տողեր 12—13) կամ «Արգարացուցանէ և այս զասացեալ գրոցս անդրեան» (տողեր 20—21) և այլն:

որ արմինացիները (arminiya) իրենց կողմից տրված հինգ հակառակ-մարտում մի ընդհանուր դնկավար չունեին, այլ յուրաքանչյուր անգամ նրանք «հավաքում էին» (hagmata) և առանձին-առանձին կրտում. և այստեղից եզրակացնում են, որ այդ կամողները դեռ ապրում են առհասարակ առանձին միավորներով: Ակադ. Վ. Մարտիկն իր մի հոդվածում՝ „Новые данные истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью" (տե՛ս «Տեղեկագիր» Գ.Ա., Հասարակական բաժանմունք, 8, 1946, էջեր 31—38) նույնպես ճիշտ ենթադրում է, որ պարթևների այս թշնամին „Не было коренное население Армении—Урарту, а племена, очень недавно вторгнувшиеся в Армению" և նա առաջարկում է այդ ներխուժողներին համարել սակեր (սկյութացիներ), որոնք այդ ճակատամարտերից հարյուր տարի առաջ (623 թ.) անցել էին Մարդին-Վարտու ուղղությամբ. իսկ չէ՞ որ Իշտլլաի ճակատամարտը հենց նույն անգամն է եղել, այսինքն՝ Վարդանից հյուսիս-արևելք: Ինչ խոսք, որ այդ ներխուժողները եղել են Հայաստանի հարևան, թեև և տակերի հետ, Գարուդը Ակո-արդու, այսինքն՝ Սակյան Գարուդի գլխավորությամբ, ինչպես այդ կարելի է ենթադրել ժողովրդական բանահյուսության տվյալներով բուն Մ. Հարևանում: Ինքը (Armina) բառը կազմած է տվյալ ցույց տվող -ina մասնիկով, ինչպես ասորական Bia-ina (=Ասորաստան), Ḫatina (<Ներների երկիր»), որ խեթական արձանագրություններում գրված է Ḫattina, huluina «լուսնների>թշնամիների երկիր», Argištiḫina «Արգիշտիական» (=Արտաշիրն է)..., Naṣibina «Նիզիբին» (=Հայոց Մծբին), Palestina (փղշտացոց երկիր), Madaena (<Madaina) «մեդացոց երկիր», Ḫattarina «խեթթացիների քաղաք» (խուռիտական արձանագրություններում), Kuzaštarina և այլն: Հայոց մեջ -in վերջավորությունն ունցող տեղերը (Կարին, Գաղին, Արտին, Թաշին և այլն) նույն կազմությամբ են: Արմինան, որ համընկնում է հետագա Անգեղտանը, ասորական, խեթական և աստվածաշնչյան արձանագրություններում հիշվել է Arime կամ Arme, իսկ հետագայում ձևակերպվել իրրև Armina: Մայրաքաղաքն է եղել Նիհիրիա (Niḫiria կամ Niḫria), որը խուռիտերենում հատուկ բառ է, թեև «տերը, դղյակ» նշանակությամբ, որ հետո փոխարինվել է angi<agil=սումերական egal, ակադ. ekall-u «պալատ» բառով: Հայաստանում այդ բառը ձևացել է որպես հատուկ անուն Անգեղ ձևով (անտ. հոլ. Անգեղ, այստեղից է Անգեղ տուն, Տոլք Անգեղայ) և ամենուրեք նշանակում

է «բնիկ, ամբոխ»: Ուշագրավ է Փավստոս Բուզանդացու այն խոսքերը, որ նա տալիս է այդ Անգեղ ասած կնճռոտներին, Անգղին, որը «Աստո՞ւն լեալ էր Հայոց վաղ վաղ», ուր և թագուհի են (I—IV գրքերում) նրա առնչում հայ թագավորները: Համեմատել նաև ասորիների վկայությունը „Ostan Arzōn" նույն կնոջ նկատմամբ (=Արդանիայի մայրաքաղաք): Բայց հայոց թագավորներին ինչպես և հարևան առաջնորդներին (Գրիգոր Լուսավորիչ և այլն) նույն ժամանակ թագում էին Պարթևաստայց Անիտում, այսինքն Հայաստանի կնճռոտներում Թիլում: Ըստ իս, այս նա վկայում է հայերի նախնի (Հայոստա=Փոքր Հայք) և հետագա (Անգեղ ասած=Armina) քաղաքական հանգրվանների մասին, իրրև արտոիիյայով սրբազնագործված վայրերի հայ բնօրրաններ: Իհարկե Հայաստանից տեղափոխված հայերը իրենց նկիրորդ հանգրվանում Armina-ում և գուցե մասամբ դեռ Ուրարտուում ենթարկվել են լեզվական խառնվածքման, խառնվելով այդ տեղի խուռո-ուրարտական («նաիրյան») լեզուների հետ:

Հայաստա-Ազղի և Բալա (Գալա) երկրների ցեղերի հետ նրանք նույն ժամանակներում (VII դար) կիմմերների ճնշման տակ, ուրարտու են տեղափոխվում նաև խեթական նախկին նրկու հայատակ ցեղեր կամ նրանց որոշ մասը: Դրանք են manda և šāla (=sāla), որոնք ըստ խեթական օրենագրքի (կոդեքսի) ի թիվս այլ ցեղերի կամ քաղաքների (Tamalki, Ḫatrā, Zalpa և այլն) ստացած էին իրենց դինվորներին տալ մի շարք պարտադիր աշխատանքներ, նման մեր «կոռ» և «բնիկար»-ի (=luzzi և šaḫḫan): Անկասկած է, որ հայ նախարարական տոհմերը—Մանդակունի և Սալկունի (կամ Սլկունի) առաջացել են խեթահպատակ այդ արտոնյալ նրկու ցեղերից, որոնց անունից կազմված է mandak «մանդացի» և sal(a)k «սալացի» կամ «սալյի», ցեղային պատկանելիության կամ ծագում ցույց տվող -ak ‖ -k մասնիկով (համմտ. բազակ «բալացի», Արմենակ «արմինացի»... էտրուսկներեն romak «հռոմայեցի», spartak «սպարտացի»..., հայ-կ «հայացի», bas-k «բասկացի», etrus-k «էտրուսկացի», a-baz-g (ա)բազգի (—արխազ), gur-g «գուրացի» (որից груз-ин. gurǰ-i և այլն): Երևի այդ manda և sala ցեղերը նկել են իրանական և խաչատուրական ավարառուներ, որովհետև աստուրական արձանագրություններում հիշում են ավազակարարո umman manda («մանդա» մարդիկ) բազմաթիվ ցեղ (կամ ցեղեր), որոնք նկել են նաև այժմյան Դիարբեքիրի (Ամիդի) մոտ: Այդ հայացած Մանդակունի և Սալկունի (Սլկունի) տոհմերը

հանդես են եկել միասին ոչ միայն խնէթական կոդեքսում, այլ նաև հետագայում, իրենց նոր տեղում, այն է՝ Տարոնի հյուսիս-արևմտյան շրջաններում — Մանդակունիք Արշամունիքում (Բինգյոլից հարավ), որ մի ժամանակ Տարոնի մասն էր. և Ս(ա)լկունիք Օղական բերդում (այժմյան Ախլաթ), որը Աբածանիի վրա է: Մ. Խորենացին էլ դրանց միասին է հիշում («Պատմ. Հայոց», II, § 8): Նույնպես նրանք միասին են հիշվում Գահնամակում (47-րդ և 48-րդ տեղերը), ինչպես նաև «գինվորականում» վիճակաթղթում (14-րդ և 15-րդ տեղերը):

Թողած մոսխերի մասին, որի mesx ձևից Ն. Մառը հանում էր somexi «հայ» վրացերեն բառը, մանրամասնենք նաև արևելքից Հայաստան մուտ մարդերի, մադերի (—մարերի) և մաննացիների մասին, որոնք գրավել են Մարդաստի և Մարդպետականի, Մանազկերտ կամ Մանազկանի շրջանները, ինչպես և կազմել Անմատենի «Մուրացան» նախարարությունները: Իրանական ծագում ունեն նաև Դիմաքսյան, Կամսարական և Բևրևս Գնունի հայ գինվորական տները: Իսկ Խորխոռունիները, ինչպես ճիշտ նշել է Խորենացին, առաջացել են Ծոռ նահապետից, որը Հայկի սերունդից է նա համարում, սակայն դա խուռիտների ցեղանունն է, և դուցե ամենաբիվում է խուռական-շուպրիտական ծագումը, ինչպես «ձնոն»-ից նա սերում է Մամիկոնյաններին, սակայն այդ «ձնոն»-ի սակ պիտի հասկանալ ոչ թե չինացու, այլ «ճան» (—լազ) ժողովրդին:

Եթե վերցնենք Ուրարտուի բնիկ կոչված տոհմերն ու ցեղերը, որ եղել են Հայասա և Բիայա ցեղամիությունների դարձ ժամանակ, ապա անցած մատավոր չի կարելի տալ դրանց թիվը: Տիգլաթ Փիլեսար 1-ինի ժամանակ, XII—XI դարերի միջում, Աբածանիի առափին հովտում Դիաու ամենաուժեղ ցեղի կամ ցեղախմբի շուրջը հավաքվել էին 60 այլ ցեղեր կամ տոհմեր՝ առերեսողներին դիմադրելու համար: Բաններից երկրանունների մի առանձին յուցակում հիշվում է, օրինակ, Šinibirani երկրանունը, իսկ այլ արձանագրություններում նաև Ginzibir անունը, որոնք առաջին նշանակում են «Շինի տոհմեր (ցեղեր)» և «Գինզ տոհմ (կամ ցեղ)» bir բառից (տե՛ս առաջ): Եթե դնկավորվենք VIII դարի մեզ ուրարտական արձանագրությունների տվյալներով, թողած հայկական անցանունների և նախաուրարտական անունների վկայությունները, ապա Ալբարատյան դաշտում և շրջակայքում, Երբակում ու Կարսի նահանգներում և Բագրեւանդում, մենք կհանդիպենք մոտ երկու տասնյակ ցեղապետների անուններ:

Օրինակ, Սևանի ծովեզրյա շրջանում հիշվում են չորս ցեղապետություններ—Վելիքունի (—նոր Բայազետի մոտ), Ազախունի (Բյուրեղունքի մոտ), Լուներու (Ագամխանի մոտ) և Արգունկի (Զաղալուի մոտ), վերջին երկուսը «ալրաններ» որոշիչով: Վելիքունին, որ հայոց Գնդարքունին է հնչյունադարձությամբ, ուներ 22 «քաղաքներ», որոնք փաստորեն առանձին ամրացված նստավայրերն են, ներթարկվելով մի «թագավորի», որը դրանց ցեղապետն էր: Արմավիրի մոտ հիշվում է ուրարտացիներին թշնամի (ևսև=յուրաբն) Ագա անունով մեկի ցեղը, որը նեռանվում է Արգիշտիի կողմից: Շիրակում կար Էրիա ցեղը, Տաշբուրունի մոտ՝ Էրփուա ցեղը, Սարիդամիշի մոտ՝ Աշտուա ցեղը, Ղալիջանի մոտ՝ Կուլի ցեղը, դրացի «իշխանություն», Կաղզվանի մոտ՝ Արիլիանի ցեղը, որը հայոց Արեգնան (Արեգոյ Արեգնան, Արեշինից) առանձ էր, հարևան Գաբեղեանին (համմ. Գարադ Գաբեղնան), Ախուրյանի աջափնյա մասում հիշվում են Լիքի ցեղերը, որոնց մեջ Վերդայի ցեղը (համմ. Վարձա հայ անունը, որից Վարձառունի): Արրաանիի ցեղը (համմ. Հայոց Հաւնունեաց առանձը), Կարսի շրջանում կար Իգանիի ցեղը, որից թևերևս հայոց Գնունի. Ալաշկերտի հովտում հիշվում են Լուշա, Կատարզա և Վիդերու ցեղապետների հոդամասերը, որոնց հետ հաճախ հիշվում է և Ապունի (—Հայոց Ապահունիք) ցեղապետությունը: Այս բոլոր ցեղանուններն, որպես երկրամասեր, կրում են թե՛ այրանական որոշիչի և թե՛ երկրի անուններ և մտնում էին մեծ մասամբ էրիունի կոչված ընդհանուր ցեղամիության մեջ, որը կարծես թե պետությունը կազմելու առաջին փորձն էր մինչև ուրարտացիների ասպատակ ներխուժելը: Բացի այդ էթիոնիից, որ համապատասխանում էր պատմական «Այրարատ» նահանգին, կար և Վանդուր մարզում անունով էթիունի երկիրը, որ ընկնում էր Սևանա լճից հարավ: Այսքանով բավարարվենք գաղափար տալու նախահայկական տոհմերի ու ցեղերի խառնության մասին որոշ տերիտորիայում: Իհարկե սա լրիվ չէ և հազիվ ցեղերի մի երրորդ մասը լինեն: Հետագա Հայաստանի մոտ երկու հարյուր նախարարությունները նույնպես վկայում են մեր տոհմերի ու ցեղերի երբևիցե շատությունը, բայց դեկտեմբեր և բազմանդամ ցեղեր Ուրարտուի ժամանակ, այսինքն հայերից առաջ, եղել են անշուշտ քիչ, թևերևս հիսունից ոչ ավելի, ինչպես նման քանակի ցեղապետություններ հիշում է Սարգոնը՝ Ավվանքում իր քառն և վեց լեզուներով:

Ուրարտուի տերիտորիայի վրա, ինչպես տեսանում ենք, կազմվել են ցեղերի չորս միություններ՝ դաշնակցություններ: Առա-

ջինը՝ Արտաշեսի առաջին հաստատում (հյուսիսային մասում) Դիաու ցեղի շուրջը, իվով վաթսուն և մեկ տարի թե ցեղ։ Սա դուռ պաշտպանողական նշանակություն ուներ ասատրական Տիգլաթ Փիլեսեր 1-ին (1114—1076) թագավորի դեմ և շատ շատ կազմալուծվեց, անդի տալով IX դարում նոր ցեղամիություններ։ Վերջինս զարգացավ, հիմնվելով դյուրավարական ուրուատրի և Բիա (որից Bia-ina) ցեղերի վրա, որոնք ենթարկվեցին դատակարգային դիֆերենցիացիայի, և տերիտորիական աշխատանքի հիման վրա բաժանծնցին և մոտ երեք հարյուր տարի պահեցին Ուրարտու պետությունը, որը շատ մեծ ծավալ ստացավ իր նվաճված բազմաթիվ ցեղերով ու տոհմերով, բռնած ունենալով մասամբ հետագա մեծ Հայաստանի մասերը։ Երրորդ ցեղամիությունը, որ նախանձիկ ուրարտացիների կողմից, դա մեր նշված էթիուհեն կամ էթիուխի երկիրն է, որ համընկնում է պատմական Այրարատին իր հետագա տասը հարյուրյան բարբառով։ Վերջապես չորրորդը դա Հայասա-Ազդի ցեղերի ու Ասիմինա երկրի խառնուրդ-ուրարտական ցեղերի կամ ժողովուրդների (Völkerschaft) միությունն է, որ ծավալով Ուրարտուի և շրջապատի բազմաթիվ ցեղերը VII—III դարերում մեր էրայից առաջ ստանձնեց հայ ժողովուրդը և իր պետականությունն ու լեզուն։ Ուրարտուից դուրս, 1400—1200 թվականներին, առանձնվել են երկու ցեղապետություններ—Հայասա և Ազդին Եփրատ—Ձորոխ—Արաքս գետերի վերին հոսանքում և Խուրո—Միտանի ցեղապետությունը՝ հյուսիսային Միջագետքում, որոնց անբնորոշ անունները մատամբ մոտ են հետագա Փոքր և Մեծ Հայքերի մեջ։

Խոսելով հայ նախնադարության տոհմային ժողովան հիմունքների մասին Ն. Ադոնցը իր „Армения в эпоху Юстиниана" կարևոր դրքում առաջ է քաշում չորս տոհմատիրական հասկացությունները—mamak, aspet, malxaz և tēr, որոնք գալիս են Հայասայի տարբեր կողմերից և նշանակում են տոհմի դեկավարին։ Այսպես mamak-ը, որ նա կապում է Մամիկոնյան տոհմի հետ, պետք է հասկացվի իբրև «հայր»՝ համընկնելով վրաց mama «հայր» բառին, որովհետև Մամիկոնյանները ճնշական ծագում ունեին, այսինքն՝ ճանապարհ-լոպական երկրորդ տերմինը՝ aspet-ը ծագելով արևելյան մեր գրացի աշխարհից՝ Իրանից, նկել է սկզբում vispati «տան (=տոհմի) պետ», որ հետո մասնավորվել է Բագրատունյաց տոհմի նկատմամբ։ Երրորդը՝ malxaz-ը ծագում է հարավից, որպես սեմական բառ, նշանակում է «իշխան»,

մակդիրն է հանդիսացել Մորխոռունի առհմի դնկավարի և առանձնանալով դարձել է Մադխազունի (կամ Մադխազ) նույն առհմի նախամամբ: Վերջապես չորրորդը՝ tēr-ը արտացոլում է արևմտաբերբ. այդպիսից նկած հնդևրոպական տարրերը, որ մտել են հայոց կրևնկախոսի մեջ: Այդ անունը, titajr «տղամարդ» բարդությունից, մնացած է անբառնությունն, ակրոպոլիսն, տանտուրք և այլն կարևոր հասարակական-անտևսական և քաղաքական նոր հասկացությունների մեջ: Ն. Ադոնցը ընդհանրապես ճիշտ է նշում հայերի բարդ և բազմատարր բնևոլը և մատնանշորապես մեր երկրի չորս կողմի հարևանների ևերգրումը կամ կապը մեր ժողովրդի էթնիկական զոյացման խնդրում: Նա նույն գրքում շեշտել է հայերի հնդևրոպական և արամևական (լավ կլիներ՝ արամական-արմևնական) տարրեր ասունքների, ծագումնաբղբյուրների:

Բայց նա կողմի հայ ժողովրդի ծագման հարցը մի քիչ այլ կերպ դևնել: Լավ էս, մեզ պետք է հնասրբրրի նաև, թե որոնք են այն անբմիևնները, որպես պատմական հուշարձաններ, որ «առհմ» են նշանակել, որբևնով դրանք արտացոլել են այդ առհմի զարգացման տարրեր փուլերը և ինչ ծագումով են: Նմանապես կարևոր են դրանց տարրերությունները՝ ըստ քաղաքական հանգամանքների և ևվաճողների ազդեցության: Վերջապես արդյոք եղել է ընդհանուր ասիանիկ անուն—«առհմ» հասկացության համար:

Առաջարանական ընդհանուր դևնումը նման բառերի «առհմ» կամ «ցեղ» նշանակության մասին, պարզում է, որ դրանք առաջանում են տարրեր բնիմատից—առուց (resp. վրան), ծնել (ծնունդ) կամ սերել (սերունդ), ցյուղ կամ սեռակ, արմատ կամ ծուցք և այլն: Օրինակ. այդպես են սլավոնական род—народ բառերը родить «ծնել» իմաստից, կամ գոթական kuni (վերին գերմ. künne), հունարեն genos, լատ. gens և այլն բառերը gen (հայոց «ծին») արմատից «ծնել» իմաստով, մեր հայոց առն բառը (առն թարգման, Գաղևնական առուն, Անգեղ առուն և այլն) ունի այդ «առհմ» իմաստը (և ընդարձակ լայնացած իմաստ), կամ ազգ բառը, որ պարսկերենում ցյուղ է նշանակում և հայոց մեջ առացել է «սեռակ, առհմ—ցեղ, ազգություն և ազգ (—нация) իմաստներ: Այդպիսի օրինակները, իհարկե, շատ են և դրանց իմաստաշրջումները արտացոլում են հասարակության այդ կոլևկտիվների զարգացման ընթացքը: Այժմ վերցնենք պատմաասուերհանական դարգացման ընթացքը:

կան այդ հին վիպասացությունները հայ ժողովրդի և նրա վիպաստեղծման:

Ասիանիկ, ինչպես և միջագետք արևելքի մի քանի լեզուներում, առկա էր bir կամ ber բառը «առն նշանակությամբ»: Ներքեական բնագրերի լեզվում կարդում ենք. È-ir (È=տուն պաշտպանողը) կիսագաղափարագիր և կիսահնչյունական գրությամբ բառը, որ բարեբախտաբար այլուր նրան է դալիս և լրիվ հնչյունական գրությամբ bi-ir, որը կարելի է կարդալ և pi-ir (-pir): Հատկապես նշելի է bir šaḫḫan(n)aš, որ նշանակում է «առն կոո կամ պարտադիր աշխատանքի», որովհետև կային և այնպիսիները, որոնք ազատված էին այդ կոոից կամ պետական պարտականից: Օրինակ, օրենսդրում (§ 54) կարդում ենք. «Եթե ժամանակ պինեմբանները Մանդա, Սալա, պինեմբանները քաղաքի Տամալկի, Ներմուա, Ուատրա, Զալպա, պղեղնատոր մարդիկ, հրամն մարդիկ, ձի մարդկանները luzzi աշխատանքը չէին առնձնում (և) šaḫḫan աշխատանքը չէին կատարում»: Այստեղից պարզ է, որ կային այդպիսի դժվար աշխատանք կատարողներ (bir šaḫḫannaš «առն աշխատանքի») և չկատարողներ, ազատվածներ: Այստեղ bir բառը ըստ իս կարող է նշանակել և «տոհմ», որովհետև «մանդա» և «սալա» թեմատական տոհմեր կամ ցեղեր էին, բայց ոչ առանձին անձեր: Ավելի արևմուտք նույն հին Փոքր Ասիայում bir բառը «տուն» իմաստով գործ էին ածում լյուդիացիք—aarak biraḳ «բակը և (-k) առնը» (տես kleinas Forsch, I, էջ 70). Թողած միջագետքական ֆոնետիկական բնագրերն, անկասկած բառը (տե՛ս Fr. Hrozny, Spr. d. Hethiter, էջ 60, ծան. 1):

Ներքեական աշխարհից դեպի արևելք, այսինքն Եփրատի հյուսիսային մասից դեպի բուն ուրարտական, հետագա հայկական շրջաններում, մասնավորապես Վանա լճից դեպի արևմուտք՝ Տարոնի, Տուրուբերանի և Աղձնիքի գավառներում ևս մեզ հետաքրքրող bir ‖ ber «առն>տոհմ» բառի վերաբերմամբ: Աստուրական թագավորներն իրենց արշավանքների նկարագրություն ժամանակ 23 նախրյան ցեղերի դեմ հիշում են դրանց թվում Ginzibir և Šinibirani անհատականները՝ որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ տոհմանունները «Գինզի(ի) (—Գինչ)? տոհմ» և «Շին(ի)—տոհմեր»: Այդ անունների „i" (ի) հնչյունը ասորական պետք է կարդացվի, քանի որ բնականագրության մեջ չկար առանձին բաղաձայն z կամ ẓ և գրվում էր zi, ni: Մենք գիտենք, որ Տիգրանակերտը, ըստ Ստրաբոնի, շին-

ին է Oliberia կոչված տեղում, որը բառացի նշանակում է «Օլի տոհմի տեղ»: Վերջապես հայկական մատենագրության ավյալներով մենք ունենք Տուրուբերան կամ Տարուբերան ընդարձակ տարածությունը, որ բառացի նշանակում է «տավր(ս)—տոհմեր կամ ցեղեր, ուր tauz նշանակում է «ցուլ» և դրած է ածվում նաև հընդեվրոպական և մոնղոլա-թուրքական լեզուներում: Վանա լճից հյուսիս մենք ունենք Աղբերան(ի) գավառը, որը նշանակում է «Ար—տոհմեր», ուր ar փոքրասիական (ասիանիկ) լեզուների ավյալներով կարող է նշանակել «արծիվ», «նոխազ», «բռնկվող». այստեղ հավանորեն արծիվ է նշանակում: Ուրեմն ունենք «ցլատաշտ (ցլատառամ) ցեղեր» և «արծվատաշտ (արծվատառամ) ցեղեր»: Այս չի վկայում արդյոք դրանց անառանապահական և որսորդական նախնական կենցաղի մասին: Բացի վերոհիշյալ վկայություններից, ber «տոհմ—ցեղ» բառը դրած է ածվել և նախաթուրքական հնուկյալ տոհմանունների մեջ՝ Տաբրիրուն, որը նշանակում է Տաբուբերանի հետ, Տամբեր «տաս, տոհմ» և Քաջբերունի, որը հավանորեն բաղադրվել է Քաշբերունի ձևից, նշանակելով kaš (=kaška կամ gašga) ցեղից. համեմատել Մյունիքի «Քաշաբաղ գաւառ», «Քաշի մարգ», «Քաշուհիք»: Եթե այս ճիշտ է, ապա կաշկա (գաշգա) ցեղերից որոշ հատված նույնպես գաղթել է Մյունիք, ինչպես բուլա, ազդի և հալեբը: Մյունիքում կար և առանձին գյուղ Բերաի անունով, որ կարող է նշանակել «տոհմեր», ինչպես և Ութբրուն գյուղը նույն տեղում թերևս «ութ տոհմ» նշանակությամբ: Վերջապես Արարատյան գավառում ունենք Այլաբերք գյուղանունը (տես. հոլ. Այլաբերից), ապա Այրիվերը, որ նշանակել է «Այլ (անունով) տոհմեր», ինչպես Աղիովիտ, եի կամ Այլի (Վանա լճից արևելք) նույն ali կամ ajli տոհմանունով: Միևնույն տոհմի կամ ցեղի հատվածները կարող էին լինել տարբեր և հեռավոր վայրերում, ինչպես պիտենք մարդերի, խալդերի, մատիենների, մանդաների և այլոց մասին: Այնպես որ ali, ajli, ēli u oli (oliberia-ի մեջ) կարող էին լինել նման հատվածներ մի մեծ տոհմից կամ ցեղից, ինչպես դեռ հիմա էլ բրդական ցեղերի մեջ է նկատվում:

Հայոց Տամբեր նախաթուրքական տոհմանունը կարծես թե համընկնում է խուռիտական Tembira (Tembiru) կամ Tiambiri ‖ Tiambira ‖ Tiambera անձնանվան հետ, որ հայտնի դարձավ մեզ հին Նաւրի (=ասիրյան Քնբրեկ) քաղաքում պեղած արձանագրություններից: Կա և առանձին Biru, Beru, Beiru անունը, ինչպես և կապադովկիայի աղբյուրներից (տարլեռանիներից) հայտնի

Berua և Beruaḫš-u անուններըː Վերջին անունը պիտի նշանակի «առհմի պետ», «առհմի իշխան»։

Հայաստանից հյուսիս ընկած վայրերում, այն է՝ Վրաստանում և վրաց լեռներում, նույնպես նշվում է ber «առհմ» բառի առկայությունըː Օրինակ, Կախեթների հովիտը Աջարիայում կրում է այդ անունը, որը անցել է և հայերին, որպես փոխառյալ հատուկ անուն («Ի ձեռ. ՈՂԴ (1224 թ.) կամաւն առաւծոյ եւ Գուրջա որդի Կախայբերին... եկի ի տուրս սեխոս Կեչառուս», տե՛ս «Վիմական արձանիքը» Կ. Կոստանյանի, էջ 87)։ Սխանեթիայում կա «Ճվիրների» կոչված համայնք և լեռնանցքː Հայտնի է նաև Սաբերիա (Saberio) տեղանունը, որ բառացի նշանակում է «առհմատեղ»։ Վրաց ազգանուններըը—Բերիձե, Շեշարիբիձե, Ղոզոբերիձե և այլն նույն beri «առհմ» արմատներից են, բնական այդ beri անունը այժմ հասկացվում է որպես «ձեռք, ծնունդ», արտացոլելով անշուշտ առհմական իրավունքներըː Մինչև իսկ ռազմական գնահատության համար ընտրվող, իսկ հնագույնում ժառանգական աստիճանըը՝ թագավորը կրում է այդ նույն առհմանունը կամ ցեղանունըː Օրինակ, գերմանական kuni «առհմ» բառից է kuning «թագավոր» (որից ռուսաց княгиня, князь) կամ գերմ. thiude «ժողովուրդ» անունից առնված thiudans «թագավոր», ինչպես նրանի er(i)—«ժողովուրդ», «զորք» բառից, որ անհն վրացիք, հավանորեն առաջացել է արտրատական erila կամ erela «թագավոր» բառը (համեմատել գերմ. volk «ժողովուրդ» և ռուսաց полк «զորագունդ», պարսկ. kāra «ժողովուրդ». բառը և «զորք»)։

Ինչպես տեսանք, Փոքր Ասիայում և նրանից դեպի արևելք ընկած երկրներում գործ է ածվել bir ‖ ber «առն>առհմ» անունը, որը դեռ մինչև հիմա էլ վերապրուկային ձևով մնացել է վրացերենում «ծնունդ» իմաստով, թողած անհայտնություններըː Հայաստանի և Վրաստանի անբրատրիանկերում իշխել է ber ձևը, իսկ Փոքր Ասիայում (խեթերի և լյուդիացիների մոտ), bir ձևըː Ըստ. Հրոզնու ասելով այդ բառը անցել է մինչև իսկ սաամերներին pir ձևով և «տուն» իմաստով, բնական նա մատնանշում է և հին եգիպտական նույնիմաստ pr բառը (տե՛ս նրա Sprache der Heihiter, էջ 60, ծան. 1)։ Ըստ իս այդ bir ‖ ber գուցե վերրատրիական (ասիանիկ) բառը խառնուրդների միջոցով անցել է սաամերներին և եգիպտացիներին, մանավանդ որ վերջիններըը երկար ժամանակ սերել են Սյուրիային, որ ապրում էին նաև խեթերը (ըստ Առաքածաշնչի), այսինքն՝ խառնուրդներըː

Սակայն հայոց լեզուն իր բառապաշարում այդ ber բառը այդ ձևով չի պահել, թեպետ, ինչպես անասնք, անդամների և տարմանունների մեջ ծառայել է: Այդ ber-ը կենդանի լեզվում, թեև նրա իշխող բարբառում, դարձել է վեր կամ վէր (անհ. հոլվերի կամ վէրի): Այդ նա անհամեմատ ճարպիկ և փեսալներ բարդ բառերի մեջ, որոնք նշանակում են «հարսի տոհմի ներկայացուցիչ» (հարսանիքի ժամանակ) և «փեսայի տոհմի ներկայացուցիչ», կամ ինչպես հիմա ժողովրդը ասում է «հարսնախոսներ» և «փեսախոսներ»: Հայտնորեն Արծավիր, Տարոնվեր, Վաղարվեր, Շուբարվեր և նման անդամանունների մեջ այդ վեր (վիր) մասը նույն «տոհմ» իմաստն ունի: Իսկ հին „b" (բ) բաղաձայնի անցումը հնուցած հարկական (v) (վ) բաղաձայնին հաստատվում է շատ օրինակներով: Համեմատել ասորա. *Biaina*—հայոց Վան, ասորա. abili= հայոց աւել (օրինակ. ասր. ebani ebani—ukidi abili dubi=երկիրը երկիրս ավերացրի), ասր. ebani «երկիր»=հ. աւազ (մեզր. abani «անդ», վրաց. ubani «ջեռոցատուն»), ասր. չեզոք բարերի անցյալ ժամանակի 3 դեմք եզակի -abi (uštabi «ընծայաց, արշավից», nunabi «նկավ» և այլն)—հայոց -աւ նույնպիսի բարերում:

Այս ընդհանուր տեսանկի ber>հայոց վեր ‖ վեր «տոհմ» բառը, որ սկզբում «տուն» էր, նշանակում, հայոց լեզվում իսպառ վերացավ և իրանի քաղաքական-կուլտուրական հզոր ճնշման հետևանքով փոխարինվեց «տոհմ» կամ «ազգ» իմաստով բառերով: Այդ նույն ազդեցության հետևանքով գուցե մղվից alx «տոհմ» իմաստով սեմականաստեղծ բառը, պահվելով աղի ձևով, բայց իմաստափոխված, այն է՝ սան ունեցած չանգացածը (=скарб) և ազնվականի տունը մեծացած հատարակ (սարակ) ժողովուրդը, առներն ասած՝ челядь: Այս բառերից է և հայոց աղախին բառը—սեմականներն mo-axle նույն իմաստ և նույնաձայնում բառին: Aḫl սեմականում նշանակել է «բնակարան» (արաբերենում) «էվրան, տուն» (հին հրեաների մոտ) և «էվրան» (Eḫall-u ասորա-բաբելացիների մոտ): Վերջինը գրած է ածիլել և ասորատական բնագրերում (È. HAL. LU) որպես գաղափարագիր: Բայց այդ բառը, ըստ էության, գրած է ածիլել և խառնաբնեռում, ասր ehal- ‖ eḫl- ‖ aḫl-ձևով մտել է մի շարք բարդ անուններին մեջ, ինչպես -Eḫli-Tešup (Eḫāl—Tešup) Aḫli—Šar (Aḫlip—Šar), Eḫlip—Ugur և այլն. համեմատել նաև խառներեն — ehlianaš. eḫlita. eḫlipakku (տուն, կահ-կարասի է) հատարակ բառերը (տե՛ս Nuzipersonal na-

mes, էջ 208—209)։ Վրացերենում այս axl «երան, տուն, բնատեղի» սեմական-խուռխռական բառին աղերսակցվում է քարթ. S-axli «տուն», մեգր. oxori(id) և սվաներեն mo-axle «ազգախին»։

Հայոց լեզուն աշխատանքային կարողացել է պահել սեպական հին բառեր տոհմական հասարակության տերմինոլոգիայից, ինչպես օրինակ զարմ և ցեղ բառերը։

Զարմ բառը, որ նշանակում է «ցեղ, սերունդ», առացել է լատ. ես որոշ նրանգավորում իրեն լավ ցեղ կամ տոհմ, երբ դրսևորվել է տոհմի մեջ բարձր իշխող խավը։ Այդ են վկայում քաջազարմ, բարեզարմ, լուսազարմ, կայսերազարմ, զարմահի «սերունդի համար պահված էգ ձի» (Ագ., Արմ. բառ., I, 713)[1]։ Իհարկե դա պետք լիներ լավ (ազնիվ) էգ ձի, սովորական էգ ձին չէր պահվի այդ նպատակով։

Մեր բարբառներում ևս պահվել է այդ բառը, ինչպես, օրինակ՝ աղվանացիներին, արարիխրցիներին, մշեցոց և տիգրանցոց մոտ, վերջիններիս մոտ նախատոհական «շատ զարմ» արտահայտության մեջ (ib., II, 910—911)։ Այդ բառի սկզբնական «զ» բաղաձայնը, ինչպես շատերն են դիտել, նախածանց է և հետևապես բառը կազմած է «արմ» արմատից, որը ի միջի այլոց բացի «արմատ» նշանակությունից ունի նաև տոհմաբնութական «ցեղ, զարմ, հիմ, խարիսխ» նշանակությունները։ Այդ արմ բառի ծագումը ևս կապում եմ ուրարտական armuzi բառի հետ, որը գրած է ածվել Չվարթնոցի բևեռագիր արձանագրության «անեծքի ֆորմուլա»-ի մեջ («Աստվածները... թե նրա անունը, թե տոհմը, թե սերունդը հողին թող հանձնեն»)։ Arm-uzi կազմված է -uzi ածանցով, որը շատ հաճախ է գործածվում ասխանիկ և խեթական լեզուներում (—հայոց -ուճ մասնիկին)։

Հայոց ցեղ (=племя) բառը, որ Հ. Աճառյանը բացատրում է «ազգատոհմ, սեռ. տոհմ» (Արմ. բառ., VI, 1059), ևս համարում եմ հին բնիկ (=ասխանիկ) բառ։ Սրանից են ցեղապետ, ցեղընտիր, ցեղակից, երկցեղ և այլ կազմություններդ։ Նկատի ունենալով երկցեղ բառի «երկպատակավոր» իմաստը, Աճառյանը հետևելով Հյունքներներյանին, Գաստրոյանին և այլն, առաջարկում է ցեղ բառի մեջ տեսնել հնագույն «բաժանմունք» իմաստը և կա-

[1] Հիշենք նաև զարմի այդ բարձր գործածությունը ժողովրդական հին բանահյուսության մեջ։ «Ոչ է օրէն գիւցազն գայլոց գիւցազանց զարմից բառնալ գինդանութիւն». համեմատել նաև Զարմայր հատուկ անունը, որ նշանակում է «քաշտատոհմիկ»։

պակցել ցեղում «ճնդկել, պատռել» հնդեվրոպական բայարմատի հետ: Ըստ իս նրկցիկ բարդության «երկպատակ» իմաստը նոր է, փոխաբերական, և ոչ թե սկզբնական: Մեր դրության բոլոր բարբառներում էլ այդ ցեղ բառը գործածական է և տեղ-տեղ առացել է «պատռ, կերտ» իմաստը: Գուցե ժամանակով այդ ցեղ արմատը սկզբնական «առանձ, անբունդ» իմաստով (համեմատել ցեղիլ «անբիլ, աճիլ», ցեղնանալ «բազանիլ, առաջ գալ» ըստ Աճ.) կապվածության գործողների հետ է կապվում, եթե նկատի ունենանք ուտիներեն ցիլ բառը, որ նշանակում է մարդու անբ (ըստ Գ. Բուշմանյանի հաղորդման), ինչպես մեր անբունդ, անբին և անբ բառերը առաջացել են անբել բառից (տադդ անբել»): Իսկ մենք գիտենք, որ հին -il (-իլ-) հնչյունափոխվելով հետագայում հայերենում դառնում է -ջ (-ել), որի համար օրինակները բազմաթիվ են:

Ցեղի մեջ մանողների քանակի մասին մենք ունենք մի հետաքրքիր տեղեկություն դեռ 12 դարից (մեր թվարկությունից առաջ): Ասատրական արձանագրությունների տվյալներով մուշկները (մոսխ, մեսխ) ներխուժել և տիրել էին 30 տարի Ալզի (Աղձնիք) և Բուրուտումդի երկրները, լինելով 20000 հոգի հինգ թագավորների պետավորության տակ, սակայն Տիգլաթ Փիլեսար առատրական թագավորը դրանց շարժում և վանում է այդ տեղերից: Կասկած չկա, որ այդ հինգ թագավոր կոչվածները եղել են ցեղապետներ և դրանց ցեղը բազկացած պիտի լիներ առնվազն չորս հազարից, եթե հարյուրավոր բաժաններ այդ 20000 մոսխներին, այն ինչ այդ ցեղերը իրոք պետք է լիներին ավել և պակաս[1]:

Հայաստանի շատ տեղեր և վայրեր, որ կրում են հոդնակերտ «ք» մասնիկը, կարող են ինարին վկայել ընտանիքների և առնվերի (կամ թևերու ցեղերի) մասին, բայց ինարին ոչ ամեն մեկը:

---

[1] Ասրհադոնի թագավոր Թուգուլտի-Նինուրտա (889—884) նվաճողը հիշատակում է մոսխերի երկիրը. բայց Տիգրիսի ակունքներից հարավ: Մարդոն 2-րդը (722—705) նույնպես ընդհարվել է մոսխերի (muški) հետ Մարդոնն Մելիտենեում կամ բիչ հարավ: Մյուս կողմից մոսխերին մենք հանդիպում ենք Կապադովկիայում, որի մայրաքաղաքը ըստ Մարկոս Պոլոյի կոչվել է «Մաժակ», այժմյան Կայսերին: Կեսարիայում վերջապես մոսխերը նշանակված են եղել մեռելազոտության շրջաններում և վերին Ֆրաթից հովում (համեմատել Պլինոսի moschorum tractus, մոսխոր գետի մոտ), Մարկոսի ասելով «Միքրիդատի մահից հետո մոսխիկան բաժանվեց երեք մասի—մեկը պրավեցին կոլխերը, երկրորդը՝ իբերները, երրորդը՝ հայերը»: Մեսխական ոստերը իրենց անունները ստանում են հայերից:

Օրինակ, կարք (=Կարս), Դադք (=Դադս), Երևթուք, Կնշատուք, Եկեղիք և այլն այդ չեն վիճաբան (Եկեղիք նշանակել է «գաշտաբնակներ» ասմական eḫl-u և «գաշտ» բառից, Երզնկայի գաշտի մասին է, «Եկեղեաց»-ն է), բայց օրինակ Կուսալք, Կոբաշք, Երշատունիք. Մակք և այլն կարող են խոսել այդ տեսակների մասին:

Ուրարտական հարուստ բնական անվանումները (առուներինը, սերնդացիք, հրեաններինը) տեսակին—ցեղին (կամ մարդուն) պատկանող անձնավորությունների համար բառին ավելացնում էին -ai մասնիկը, օրինակ, kald-ai «բաղդեացի» χαλδαι-οι «քաղդեր» հանդիպում oi հոդակիրով ավելի հիշած «խալդյաններ», խալդ աստծո պաշտոնեներ, madai «մեդացի». Mankai «մանկյան, մանկ ցեղին պատկանող» (խոսքը է Տիգրանակերտի պաշտպան Տիգրան II-ի զորահրամանատարի մասին), aššurai «ասորի», arminai «արմին, հայ», kossai-oi «կասխաներ», ortai-oi օրտացիք, օրտ ցեղին պատկանողներ (ապրում էին Վարդերդի գաշտում VI դարում և ինչու հայերենով առացվել է orort «երորդ» անունից. համեմատել և Որդ-անի հայ նախարարության անունը), korduoi-oi «կորդուենիներ», gimirrai «գիմիրներ, գամիրներ» (Գամիրք), ինչու մեր Կոբաշք «կոբներ». Կուսալք «կուսներ» և այլն, և այլն: Դարձ մինչև իսկ մեր Շարայ և Սիակ անունները նույն ասմական էթնիկ վերջավորությունն են կրում նշանակելով «շար տոհմին (ցեղին) պատկանող» (համեմատել Շար-ուր, Ա-շար-անի) և sak (—սկյութ) ցեղին պատկանող, ասմական լեզվով ասած՝ sakai:

Ասուր-ուրարտական լեզուներում, որոնք ենթարկվել էին էթնիկական և ընդհանրապես ծագումնական մասնիկի էր -ḫi (ին) կամ մասնավորապես -uḫi (-ախի) օրինակ, խոսք՝ Ḫ̌alpit Ḫ̌alpaḫi «Հալեպ (առասպածուն է) Հալեպա, Հալեպացի», ուրիշները՝ «Հալեպում պաշտվող Հավիտ», ինչպես մենք ասում ենք «Մշո տերը Կարապետ»: Տերք Անգելեաց «Անգղում պաշտվող Տերքը», որոնցից նաև այլ վայրերում պաշտվող Տերքեր և Հիպոմներ կային: Կամ ուրարտ. Erta-ḫi ebani «Էրխայան երկիր (Էրխայի երկիր), Sardur Argišti-hi «Սարդուր Արգիշտյան» (Սարդուր Արգիշտիի, Сардур Аргиштович) և այլն: Հատկապես նշված է -uḫi (-uḫe) ձևով այդ մասնիկը և կարծես ին էթնիկական ինքնատիպ, ինչպես, օրինակ, խոսք. Ḫ̌urruḫe umini «խուրրյան երկիր». Ḫ̌attuḫi «խաթթյան»... ուրարտ. Welikuḫi «վելիքյան» (երկիր). Ḗtiuḫi «էթիյան». Wiḫiruḫi «վիխիրյան» (երկիր). Urminiuḫi «Ուրմինյան (երկիր) և այլն: Բայց Ուրարտում ավելի գոր-

ծածանան է -uni, որը համապատասխանում է -uḫi-ին, ինչպես Etiuni, Welikuni (=Վեղապքռանի), Adaḫuni (Բյուլանդռան—Ծովինարի շրջան Սևանա լճից հարավ), Apuuni (=Ապահունիք), Argukiuni (=Զաղալուի շրջան, Սևանի հարավ-արևելք), Lueruni (նույն անվում), Buzuni և այլն, և այլն, որոնցից Adaḫuni, Lueruni և Argukiuni ունեն սկզբում «տէր» (տղամարդ) որոշիչը՝ գեաներմիհնասխիը, որը բացահայտ ցույց է տալիս առնի կամ ցեղ, անբաժան Ազախ, Լուերի և Արգուկ անվանց նախահայրից, ինչպես այդ հանձախ է լինում: Այդպես է և Ériaḫi, որը ունի կամ «երկիր» որոշիչը և կամ «տէր» որոշիչը: Այլուր մենք գիտենք, որ շատ ցեղեր կամ առնմներ իրենց ծագումը հանում են այսինչ կամ այնինչ աստծուց: Ուրարտական -uni ցեղանվան կամ առնմանվան վերջավորությունը միաց և հետագա հայերին, որոնք ունեն ոչ միայն արևգունի, պահունի, վիրունի (արարատյան բարբառ) և այլն, այլև բագրատունի, Սահառունի[1], Ռշտունի, Մորխառունի, Արծրունի և այլն:

Ինչպես անանում ենք այս «Հայ ժողովրդի և նրզվի կազմավորումը» հատվածից, ուրարտական շրջանի առնմներն ու ցեղերը, ինչպես և դրանց որոշ շրջանի միութիւնները (օրինակ Էլիխուսի) մեզ քիչ թե շատ հայտնի էին, հատկապես ավելի լավ հյուսիսային Ուրարտուում—հետագա Բագրեւանդում և Այրարատում, ի միջ առյալ Զանգվի և Սևանա լճի ավազանները: Դրանք, ինչպես և Վանա լճից արևելք գտնվող բուն ուրարտացիք, պետք է միացած լինեին մինչև դարի վերջը (մինչև Բանենհիմը), երբ արդեն Ազձնիքում և Տարոն-Տուրուբերանում, ի միջ առյալ հին Արմե, Շուպրու և կենտրոնաս գետի շրջանի հին Մուրուշկիա խառնուրդ շրջանները, հոծ մասսայով արդեն բռնել էին Հայասա-Ազդիի ցեղերը, ինչպես և հավանորեն դրանց ազգակից՝ թագմաքիով բալա կամ պալա ցեղերը: Վերջիններս նստել էին Բալա հովտում և Բաղնիքի շրջանում: Դրանց կից մարդերում էին հաստատվել Խեթիայից գաղթած մանգա և տալա ցեղերը:

Բագրատական ակտիվ կորիզը կամ խմորումը ձևակերպեցին հայերը՝ Հայասա-Ազդի հիմնական դևկավարող ցեղերը, որոնք այս նոր անելքում ևս կարողացան կազմակերպվել, դիմագրել պար-

[1] Սահառունի առնմանունը, որ կապված է Ախուրյանի աջ ափի հետ (Մրենն) ըստ ինց ծագում է հրեական Sahar (Սահար) անձնանունից, որ գոյ է ածվում Աստվածաշնչում: Արդյո՞ք Տիգրան Բ-րդի կողմից բերված և Երվանդաշատում բնակեցված հրեաներից չի՞ մնացել այդ անունը:

սինեներին, և ննջարկելով իրենց այդտեղի ազգիններին — շապրիա-նեներին, այսինքն՝ խառնիճաղան որոշ ցեղերի, առաջ բերին հայ ժողովուրդը։ Բայց (պայծ) ցեղերը Տարոնում, իրրև ցեղակից, բնական է, որ պիտի խառնվեին հայերի հետ։ Ինչևէ առաջ է «Ազգակից ցեղերի միաբերյալը ամենևին անհրաժեշտություն է դառնում, իսկ շատով նման անհրաժեշտություն է դառնում հենց դրանց ձուլումը և դրա հետ մեկտեղ՝ բաժան-բաժան ցեղերի երկրագործների միացումը ամբողջ ժողովրդի ընդհանուր տերիտորիային»[1]։ Բանն ուրարտացիների (Վանի շրջան) ձուլվելը ըստ իս սկսվել է IV դարում։ Հյուսիսային Ուրարտուի շրջանների խալդերը դեռ կային, որոնք այդ դարում զորք էին տալիս արմեններին (հայերին), թեպետ հայերը այդտեղ գալու ժամանակ նրանք քաշվել էին լեռները և դրանց իրր թե կյուրոս պարսից թագավորն է հաշտեցնում։ Իմ կարծիքով «խալդացիներ» տալով անպատճառ չպիտի հասկանալ այն ուրարտացիներին, որոնք պետություն տանջնելին և արձանագրություններ (200-ից ավելի) թողին, այլև նրանց ննջարկվող այն ցեղերին, որոնք խալդ տասծուն (այսինքն՝ Ուրարտուին) ընդհանում էին։ Համեմատած Սղերդի մոտ 25 քուրդ գյուղեր, որոնք կոչվում են «Քալդան»։

Հայաստանի տերիտորիայում նախկին ազգակից և ոչ ազգակից ցեղերի աստիճանական և տարբեր ժամանակներում հայացումը հետևանք առաջ էր բերում տարբեր և մանր «Հայքեր» (Հայաստաններ), որոնք հետո միացվելին և կազմելին Մեծ Հայաստանը Տիգրան 2-րդի ժամանակ։ Այս աստիճանական քաղաքական և էթնիկական միավորման պրոցեսում զուգընթացաբար երևան պիտի գային հարկի նաև տարընթացություններ տնտեսական, գաղափարական, կուլտուրական և բարքաուսային տրոհություններով։ Այդ վերջին հանգամանքներին նպաստում էին Հայաստանի նախկին ցեղերի ու տների տարբեր պայմանները, այնպես որ հայ ժողովրդի և նրա լեզվի այդ կոնսոլիդացիան կամ ինտեգրացիան բնականորեն պիտի հետը բերեր և իր տարբերացումը՝ դիֆերենցիացիան։

Հայ ժողովուրդը, արդեն իր ձևավորմանը հասած, շարունակում է իր մեջ ձուլել նորանոր ցեղեր ու ժողովուրդներ, մանավանդ հյուսիսում։ Լինելով «արմենոիդ», հայերը իրենց մեջ առան տարբեր ծագման և ռասայի շատ էթնիկական տարրեր, մինչև իսկ

[1] Ֆ. Էնգելս. Ընտանիքի ծագման, անձնականության և պետության ծագումը, էջ 142—143 (առաջ. հրատ., 1934 թ., հայ. հրատ., Երևան, 1948, էջ 216)։

փոխադրություններին և սկզբնաղբյուրներին։ Դեռ ոտս գիտնական Մ. Լոմոնոսովն էր ասում, որ „Ни о едином языке [=народе] утверждать невозможно, чтоб он сначала стоял сам собой без всякого смешения"։ Եթե հանգամանքն հին ազգությունները պրնդում են, որ հայերը փոխադրությունների հետևորդներն են և նրանց հետ ընդհանրություն ունեն, սակայն ամենայն համեմատականությունները այդ չեն հաստատում, թեպետ հնարավոր է որոշ փոխադրական ցեղերի միացումը Փոքր Հայքի հայերի հետ, մանավանդ որ փոխադրական Աստիճ աստծու պաշտամունքային որոշ հետքեր են անցել հայերին (տե՛ս իմ «Արա Գեղեցիկի պաշտամունքը»), ինչպես և «աստված» բառի ծագումը փոխադրական գերագույն աստված Sabazios-ից։ Հայ լեզուն ամենամեծ նմանությամբ ունի մի ամբողջ նշանակության կոչված լեզուների։ Այս իրողությունը պահանջում է պատմականորեն լուծել այդ երևույթը։ Արդյո՞ք փոքր Հայքի նախկին հայացիները էին լուրացրել այդ ամբողջը, թե հետագայում արդեն Արմի-Արմինայում են առացել և խոսրել իրենց նոր լեզվում հավանորեն ասկերից, թե գուցե և երկուսանք։ Լեզվական փաստերը, ինչպես շեշտվել է, պատմական ապրյուր են և այն էլ հին և համառ։

Հատկապես հայ էթնոգենեզիսի տեսակետից և մասնավորապես նրա կազմավորման մեջ մտնող առհասական տերքին զարգացման, առհասի անգամների փոխհարաբերությունն և կուլտուրական-տնտեսական տեսակետից մեծ հետաքրքրություն և պատմական ապրյուր է ներկայացնում հայ լեզվի այն փաստը, որ մեր պատմոնամիկայի և թվականների մեծ մասը հնդեվրոպական ծագում ունեն։ Թվականներից բացի «հարիւր» բառից ինացածը բոլորը հնդեվրոպական են («հազար» և «բիւր» թվականները իրանական փոխառություններ են)։ Իսկ պատմոնամիկայի մեջ հնդեվրոպական են —հայր, մայր, եղբայր, քոյր, որդի, հաւ «պապ», հան(ի) «աստաս», տալդր, տալ, նու, հարսն, կնատր, քնոջ, կին, տղուտին, դուստր..., ոչ հնդեվրոպական՝ մեծ մասամբ ասիանիկ են հետևյալ բառերը— պապ, տատ, թոռն և ծուռ, գաւակ և ճաւակ, անդր, դրացնչ, փեսայ, քեռի, եղբ, թարգմոտր, աղջիկ, ճեռ և այլն։

Հետագայում, երբ մանրամասնություններն կրնդլինն այն բնիկ բառերը, թե հնդեվրոպական և թե՛ ասիանիկ, որոնք կվերաբերեն հետ ու կացին, հավատքին, վարուցանքին, անասնապահությանը, անիներկային, բանտահանությանը, մետաղամշակմանը, կահկարասիքին, հյուսն-կարկտուն, որսորդությանը, վարչությանը, ռազմական տերմինոլոգիային, առևտրին հարաբերությանը և այլն, կարելի կլինի

որոշ նշանակություն ունի հայերի ազգամային և ռասայական համակազմի կազմի ու կուլտուրայի տեսակետից: Շատ բան է այդ առնչությամբ ասում Բանձոփանի նկարագրությունը հայ գյուղի մասին իր «գյուղապետով» (κωμάρχης)[1]: Շատ բան ինարկե հայտնի է հայերենի կազմավորման հետ առնչակցվող և հին հատարակություններից (խեթերից, խուռիտներից, ուրարտացիներից), ինչպես օրինակ, դարերջուր պատրաստելը և նրանցով խմելը: Հատկապես պետք է նշել ուրարտական «կարմիր բլուրի» պեղումներից հանված մի շարք ձեռքբերումները իրենց կառուցվածքով, հարդի (գարմանի) օգտագործումը՝ պատի ամազման և կավե ապրանքների մեջ, ցորենի, գարու և կորնկի մշակումը, ինչպես խաղողի, կարմիր քարերի ատշումը և հղկումը, բրոնզե ամաններից (թասերի) ասկյուդքները, ինչպես և մուրճի, բոլոր, գամերի պատրաստումը, նրանց շինվածքը և այլն և այլն: Եթե այդ առարկաների և անխնիկական միջոցների հետ պահպանված լինեն և համապատասխան բառերը, ապա դա մեզ լրիվ կրտսարտրի, թեպետ հաճախ իրանի հետ ապրելակերպի հետևանքով մեր հին բառերը փոխարինված են պարսկական անթիմնականով:

Արդեն մեր էջերի սասունցի գյուղում նախկին ռամկամտիկան հատարակություններն վերածված պիտի համարել գյուղապետերին շրջապատված համայնքներին և ավերակներին: Վերջիններն իրենց գյուղ-համայնքով (շինվածով) հարուստ էին արևելյան-

[1] Ն. Ադոնցը իր „Армения в эпоху Юстиниана" գրքում այդ մասին գրում է (էջեր 390—391)—«Հայ գյուղի նկարագրությունը Բանձոփանի մոտ, տալ հազար հարյուրերի նահանգի մասնավոր, մեր թվարկությունից մոտ 400 տարի առաջ, թափանցին բնաթագրում է երկրի հասարակական կենցաղը: Հայաստանը բազկացած էր բազմաթիվ գյուղերից, նրանց գլուխն էին կանգնած պետեր (начальники). κωμάρχης կամ ἄρχων τῆς κώμης. Կամաքներդ հանդիսանում էին մարքության օրգաններ ամառոցի կողքին, որոնք պարտից թագավորի ներկայացուցիչներն էին: Հարկ այդ պատմագրի կողմից գյուղերի նահապետական պատկերի նկարագրությունից դժվար չէ կռահել, որ համարիանները գյուղերում բնակվող ազատների պետեր էին: Գյուղերի շուրջն եղած հատկանշական պատմարը (вал). պետի տակ փորած բնակարաններով նախնադարյան անասնապահներ, ուր մարդկանց հետ միասին անցկացրած էին կենդանիները—ոչխարները, այծերը, կովերը և ազատական անային պաշարը (скот). այդ բոլորը ոչ այլ ինչ են, բան ազգամային ձևի հանդակների պատկանելիություններ: Այն ամպը, որ ուղեկցում էր հարյուրին, մեծ էր այն ամենը, ինչ որ ապրիս էին նրան օտարները, բայց վերը նա հանգիստում էր իր ազգակիցներից մեկին, միշտ վերցնում էր նրան իր հետ, այդ հայրական խնամքի մեջ չի կարելի չտեսնել այն գծերը, որոնք հատուկ են պետին—ազգի հորը»:

պարսկական տիպի ամառանոցներին և պետությանը պետք է տային բան հարկի դրոշական ջոկատներ։ Համանման գրող Պլինիոսը իր Historia Naturalis գրքում (Տնկրների հրատ., VI, 10) գրում է, որ Արշակունիների Հայաստանում հաստատվելու ժամանակ, պարենքն՝ առաջին գարի կնոխն, այդ երկիրը բաժանված է եղել 120 սատրապիանների, որը, ինչպես անանում ենք, վիճակական բնույթ է կրել։ Սակայն Ն. Ադոնցը շատ ճիշտ կերպով այս բանի հիման վրա ուղում է անանել նախկին տոհմատիրական կոլեկտիվների միացման վրա առաջացած ամառանոցական իշխանությունները, թեկուզ և իրենց զարգացման սկզբնական փուլում („владетельные княжества, хотя бы в начальной фазе их развития“ տե՛ս նրա Арм. в эп. Юст., էջ 392)։ Ինարին հայ ժողովրդի կազմավորումը, ի նկատի ունենալով լեռնային կամ դաշտավարական պայմանները, երկրի կտրվածքությունը լեռնաշղթաներով և ձորերով, նորանոր ցեղերի կամ մասը ժողովուրդների ներգաղթով և այլն, տալիս էր այդ երկրին որոշ տարաժամանակյա և միջազգ զարգացման և ձուլման հանգամանքներ, որի պայմանությունը մնում էր դեռ երկար ժամանակ, մինչև միջին դարերը։

Հայացման և հայ լեզվի դիրքը համարելով պղպակից հայապղի և բալա ցեղերի խմորումը Ուրարտուի հարավում՝ Տարոն-Աղձնիքում, դրանց լեզվի խաչավորումը խուռի-ուրարտական արմենական լեզվի հետ, ինչպես որոշ հնդեվրոպական լեզուների հետ, պետհետև պետականության պայմաններում այդ միասնական ձևավորված լեզուն, մշակվելով և հարստանալով իրեն է ենթարկում և հայացնում տեղական այլևայլ լեզուներ, երբ հայ պետականությունը ընդարձակվում է։ Այդ նոր լեզուները տեղի էին տալիս, բայց ոչ թե ապրում արդեն կազմակերպված հնդեվրոպական լեզվի վրա, պահելով որոշ չափով իրենց տեղական բառերը, այն էլ առնմանատիպ քանակով և երբեմն հնդեվրոպական լեզվական որոշ ձևերով։ Հենց դրանով պետք բացատրել մեր բարբառների գոյացումը ընդհանուր պետական լեզվի կողքին, որը տվյալ շատ դառնում էր ընդհանուր պետական։ Գրի և գրականության առաջ գալը 5-րդ դարում վերջնականապես կնքեց այդ միասնական լեզվի (գրաբարի) հաստատվելը, որն արդեն մինչ այդ ձևակերպվել էր։

ՀԱՅԱՍԱՅԻ ԼԵԶՎԻ ԱԳԵՐՍԸ ՀԱՐԵՎԱՆ ԽԵԹԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՀԵՏ

ՀԱՅԱՍԱՅԻ ԼԵԶՈՒՆ

Հայասայի լեզվից գժբախտաբար ոչ մի նմուշ չի մնացել: Միայն կարելի է ենթադրել, որ այդ լեզուն ապրակից կարող էր լինել բալալևերենին, որից նույնպես ոչինչ չունենք: Իմիլ Ծորբերը կարծում էր, որ դրանք երկուսն էլ մոտ նույն պետք է լինեին վրացական տիպի լեզուներ: Սակայն ես ուզում եմ այդ Հայասա-Ապդի միասնական երկրի տեղանուններին ու մարդկանց—աստվածների անուններդ քննել, որպեսզի դրանք որևէ բան չլինեն ասում:

Այդ կողմից հնարավորություն կարող են ներկայացնել աստվածանուններ—Terittitūni-, Korḫuḫu-, Unagašta-, Baltaik, իսկ տեղանուններից՝ Laḫirḫila, Arbita, Pättei (ariga): Պետք է նշել, որ տեղանունները չեն ենթարկվում խեթական լեզվի ձևաբանությանը, որովհետև՝ չեն կրում ազդական հոլովի «Ծ» ձևույթը, ինչպես որ այդ արվում է այրանունների և աստվածանունների հետ, թեպետ Ḫaiaša—«Հայասա» կազմությունը իր -sa բառակազմական մասնիկով կրում է այդ խեթական-լուվիական, որպեսզի արևմտյան փոքրասիական լեզուների ազդեցություն:

Ամենից շատ հնարավորություն է Terittitūnis (ազդ. հոլով) աստվածանունը: Դրանում հավասար կերպով կարելի է ընդունել, որ այդ բառը նշանակել է «եռատն, եռադեմ», որովհետև՝ բարդվել է teri մասից, որ պրծել է tri հնչման համար[1], քանի

[1] *Խեթերենում «երեք» (tri-) բառը նույնպես գրվել է te-ri, որ հնչվել է* tri *(տե՛ս E. Sturtevant, Hitt. Glos., 1936, էջեր 162, 190):*

որ բառասկզբում երկու բաղաձայն միասին բնականորեն չի կարող տալ, և tituni մասից, որ հավանորեն նշանակել է «տուն, տուն (=պոչ)» և կամ «տուն»։ Հայոց տրտունձ-ը առացվել է tutun նախնականից (համմ. տուն), որը տարբերվում է հայատան titun-ից իր «ի» արմատական ձայնավորով։ Թերևս այդ tituni նշանակել է «մատանի», այսինքն՝ tri-tit-uni «երեքմատնանի, նռամատան», ի նկատի ունենալով վրաց thithi «մատ»։ Իսկ tri «երեք», որը, ինչպես տեսանք ենք, զուտ հնդեվրոպական թվական է, կար և հարևան խեթերենում (տե՛ս E. Sturtevant, Hitt. Gloss., Philadelphia, 1936, էջ 190)։ Իսկ մեկ ընդունենք, որ այդ tri-ն եղել է նաև Հայաստանի (և Բալկանի) լեզվում, երբեմն բնիկ բառ, ապա կարելի է եզրակացնել, որ հայոց թվականների հնդեվրոպական ծագումը գալիս է դեռ Հայաստանից։

Մեր Trititūni (Tritītōni) անվան հետ արտաքին համանմանություն ունի հուների Τριτων աստվածանունը, որը ջրի աստվածն էր և Պոսեյդոնի որդին։ Մեկ ծագումնաբանական կապ է եղել, այսինքն՝ հույները այդ անունը վերցրել են Փոքր Ասիայից, որ հաճախ ենք անհանում սրանց աստվածանունների մեջ, ապա այդ Tritōn-ը առացված պիտի լինի հատկածգությամբ *Tritoton ձևից։ Հին պատկերացումով «երեքքառանի, երեքգլխանի, երեքպոչանի» և այլն, շատ տարածված անուններ էին, ինչպես հիմա էլ հնդիմեկներում ենք «երեքգլխանի դև»։ Ընդհանրապես «երեքը» և «յոթը» մի անսակ սրբագործված թվեր էին ամեն տեղ։ Մեկերի մասո, ապակին, ես չեմ հիշում այդ բարդությունների աստվածանունները։

Հայաստանի Karḫuhuš աստվածանունը լրիվ չի կարդացվում, եղծված են „kar" (կամ „ka-er") նշանակող բնականորեն, բայց Կարդունիշի հիերոգլիֆ — խեթական մի արձանագրության մեջ կա լրիվ գրությամբ այդ աստվածանունը, որը, ինչպես տեսանք ենք, միայն Հայաստանին չէր պատկանում։ Բառը բարդ է, կազմված kar և bubu մասերից (ն. տղդ. հոլ. վերջավորություն է)։ Վերջին մասը կարելի է համեմատել խեթական (թե՛ բնականոր և թե՛ հիերոգլիֆ արձանագրություններում) buba «պապ» բառի հետ, որը տեսնում ենք և խառխառների հատուկ այլանունների մեջ՝ Ḫuha, Ḫuban, Nišbuba, Šubišbuba, Aribuba («նոմիր պապի») և այլն։ Հայոց մեջ ևս կհամեմատանի արարիչ-ցոյց «խոխոռ բառը (խոխոռն կոպա), որով սովորեցնում են երեխաներին։ Պետք է ասել, որ բնականորեն չունեն հատուկ «ս» հնչման համար նշանագիր և այդ արտահայտում է «ս» նշանով, այնպես որ Karbubu գրությունը ավելի

դեպքում հնչվել է karxoxo (Կարխախա)։ Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Գրաբարյան բառարանում» (Թիֆլիս, 1913, էջ 481) բերում է հետևյալ ավյաններից այդ խոսքի կամ խոսքի բառի մասին. 1 «Խոս (Երզնկայում և Մանիսայում) երեսակալական էակ մը՝ որով մանուկները կվախեցնեին». նույն և խոխոն (Մանիսայում)—պարս. kux «ելնելուն» (կընիվ), 2. Նույն կնդանով շինված ապուր և անոնցմե կնքապարան՝ որով ապաքը կը վախցնեին. 3. որդ։ Կա և խոխալ բայը (Տրապիզոնում և Մանիսայում) «բէն (ոտ) պահել, նախանձավարկի ոգի տածել» (անոր մի խոխալ, կիրտծին խոտածին կը խոխա»։ Ըստ իս, այդ խոխ կամ խոխոն բառը, ինչպես ցույց է տալիս և պարսկերեցոց նման բառը, իրոք որ «երևակայական էակ» է և ոչ մի կապ չունի պարսկական kux «ձիու կամ շան հաճճ»—բառի հետ (որից մենք կանոնավորենք «կոխ» կամ «քոխ» փոխառությունը) և հնագույն ժամանակաշրջանում, այսինքն՝ Հայաստանի և շրջապատի երկրների քանակցին մի միացյալ է։ Այդ է վկայում «խոխոս» («խոխոս») բառի պահպանվելը մեծ մասն հայկական բարբառներում, որոնք նախկին Հայաստանի և նրա հարևանությունն են գտնվում (Երզնկա, Ակարկիր, Մանիսա) կամ այդ տեղերից են գաղթել (Տրապիզոն)։

Հետևյալ ածանցածանունը Unagaštaš գրությամբ հնչվել է իր տեղական (Հայաստանյան) գրծածության մեջ Unagast(a) և հավանաբար ածանցյալ բառ է unag- արմատով և -ast(a) մասնիկով։ Վերջինս մաս է խնխոական -ašti ձևին, ինչպես dalugašti—«երկարությունը» palbašti «լայնությունը» և այլն, որը կա և արտահայտվում—ость (<—osti) ձևով, ինչպես старость, юность և այլն։ Հայերենում կարծես մի ածանցի հիմքում ընկած է -st-, որը ավելանում է բայի խոնարհիչի (ա, և, ու, ի) վրա, օրինակ՝ գալ-ա-մ, գալաստ, իմանամ—իմաստ, հանգչիմ (hangi-)—հանգիստ, գովիմ—գովեստ, պահիմ—պահեստ, բայց և պահուստ, ինչպես թաղչիմ—թաղուստ, ապրիմ—ապրուստ և այլն։ Մակայն հայկական -ast(a) մասնիկը ավելի դեպքում՝ Unagast(a) բառի մեջ՝ պետք է ներգործեն (ակտիվ) իմաստ արտահայտեր և ոչ թե բայի գործողության (կամ արդյունքը) դրսևորեր, այսինքն պիտի լիներ այն տեսքի, ինչպես մեր գալաստ «գալացող» (և ոչ թե գալացում, գալացություն), ինչպես ունենք և հարուստ «կարող» կազմություն։ Թեպետ կապ ունենա արանց հետ խեթերենական մասնիկը գոյականների մեջ (համեմատել հատուկ անուններդը—Enniša, Ithišta կամ Ithišti, Ivišti, Tahrišti (տե՛ս Nuzi pers. names [NPN], էջ 258).

ինչպես և սրարրատական Argišti թագավորի անունը, համեմատել խուռիտերենի -(a)st բայամասնիկը, որ ըստ իս պատճառական բայեր է առնչում, ինչպես նույնը և սրարրատերենում (խուռ. šuramaštien «շտապեցնել, թող շտապեցնի», tataštiten «սիրել կուռ» iddušta «տարվա», սրարրտ. buraštubi «ժառանգիչը», amaštubi «քանդելիչ», nuluštubi(?) uluštaibi «առաջնորդեց»: Ենթադրվեն հայատակաև unag- արմատը կարելի է ընդունել «ս» նախածանցով, ինչպես նմանը կա խեթերենում («դնեը, сюда») և սլավոներենում («դնեը, туда») և nag- արմատը հավանաբ «տանել, ուղարկել» իմաստով (համեմատել խուռիտերեն nak- =ակկադական mašar-u «ուղարկել»): Այն ժամանակ U-nag-ast(a) առոլածանունը կնշանակեր «ուղարկող, տանող, փոխադրող», ինչպես սրարրատական պանթեոնի մեջ հիշատակվում է AN aluše uruli-we šiuali «առաջված, որը հոգիներ է փոխադրում»:

Baltaik առոլածանունը ունի -ik նվազական-փաղաքշական մասնիկը, որ հայերենում և վրացերենում ևս կա, և balta բնից, որ իրեն վերջին „a" ձայնավորով կարծես թե վկայում է սրամեական բնօրրանը, իսկ balt արմատով հարում է ակկադական balṭ-u «կյանք» բառին: Համեմատել նաև ակկ. հատուկ անուններըր— Balṭu-kašid «կյանքի հասած», Balṭu-šar(u)—մեր «Բազդասար», որը նաև պատահում է «կասպադոկիական տղուսականներում», ուր գրվել է Baldu-šar (Ba-al-du-šar). այս անունը, ինչպես գիտենք, կրել է նաև Բաբելոնի վերջին թագավորներից մեկը: Ուրարտական արձանագրություններում հիշվում է նաև Դիաու ցեղին ևնթակա ոմն Baltul (գրված է ածականի ձևով Baltul-hi ebani «բալտուլյան երիկըը»), ուր վերջին -ul մասնիկը ինձ հիշեցնում է խուռիտական Gilgamišal այրանունը, Gilgameš հայտնի դյուցազնի անունից կազմած. հայերենում նման կազմություն ունի Թաթուլ հատուկ անունը փոքրասիական tat- բնից (արմատից), որից կազմված են շատ այրանուններ (Tette, Titti և այլն) և որը խուռիտերենում նշանակել է «սիրել»: Ապացույց ինչպես Baltaik առոլածանունը հայատցիները փոխ են առել սեմիտներից, ինչպես և իրենց պլեսավոր Ugur առոլածուն, որը ապաճղարտամեսի առոլածն էր և ուներ իշատրի գաղափարանիշով գրված մի կին: Ուրեմն հայերը ունեին իրենց «կյանքի» (balṭu=առումներ. Tilla) և «հոգիներ փոխադրող» առոլածները:

Հայատցի անպանունների ընդուն գննելիս, մենք միայն կանգ կառնենք մոտ առանձին անպանուններից մի քանիսի վրա: Ես

չեմ կանգ առնի -hi հատկացական մասնիկով անգանուններին վրա, ինչպես Kummaha. Gašmiaha. Šammuha և այլն (այդ մասին տե՛ս իմ „Хайаса"-ն կամ „Суффиксы и суффигированные слова в топонимике древней Малой Азии", Ереван, 1948 թ., էջեր 25–29): Մեզ պրակցնելու են Lahirhila. Arhita և մանավանդ Pattiarik անգանուններր:

Առաջինը՝ Lahirhila-ն բարդ բառ է, ունենալով իր մեջ Lahir, որ աշխատանք է, և hila, որ մասնավորապես կա և խեթերենում և նշանակում է «հյուղ, портик храма»: Աշխատանք անշուշտ հնչվել է Lahr-, որ տեսանում ենք կապադովկիական բնիկ մի բառի մեջ—La-ah -ra-ah-šu (Lahr-ahšu), որտեղ -ahšu նշանակել է «իշխան, տեր-մասնակ» (համմ. խեթ. haššu—«թագավոր») և մտնում է մի շարք նման կազմությունների մեջ (Berw-ahšu, Arzan-ahšu. Hist-ahšut Kin-ahšu- և այլն)[1]: Այնպես որ Lahr-hila նշանակել է «Լախրի հյուղակ, նախասենյակ»: Բայց հնչյուն է որ այդ Լախրհյուղ գործել է բնակավայր («քաղաք» գաղափարագրերը միասորեն նշանակել է «բնակավայր»): Ուշադրավ ամենահետաքրքիրն այն է, որ որոշյալ դրվում է որոշիչից հետո, ինչպես հայերենում, օրինակ, Տիգրան-նակերտ, Վաղարշապատ, Յամատարեղ և այլն: Բայց այդ խեթական hila-ով անվանք և հակառակ կազմություններ, ինչպես գուցե է ասվել Մելիտայի խեթական մի թագավորի (իշխանի) անունն, որը հնչվել է ասորատական մի արձանագրության մեջ Hila-ruada «տնակ (նախասենյակ) Ռուադի»: Վերջին բառը ասոմասնանուն է և գոյ է ունեցել, օրինակ, հիերոգլիֆ խեթերենում J. Gelb. Hittite hierogiiphs, II, Chicago, 1935 թ., էջ 29: Ru-ta-a-si =ասորական Աբդաշ տերանունը):

Երկրորդ հետաքրքիր անգանունն է Arhita, որը նոյն է թե՛ Հայաստանում և թե՛ նրանից հարավ ընկած Իշուվա երկրում (Ասրբնեղից հյուսիս): Այդ անունը ածանցյալ է -ita մասնիկով, որով օրինակ խեթերենում կազմվում էր գործիական հոլովը, թեպետ այդ մասնիկը նոյն է խուռիտականի և այլ փոքրասիական լեզուներում, ինչպես և կա վրացերենում: Համեմատել քաղաքանուններր —Anzita (Անձիթ), Amith (Ամիթ), Xarzidh (Խարզիթ), Sewith (Սևիթ Սասունում, Նեղջիկից հյուսիս), Turhumit (Յոզգատի և Մելդիփանի միջև, հիշվում է կապադովկիա-

[1] Տե՛ս Stefens Ferris Personal names from cunliform inscrip. tions of Cappadocia. Wew-Haven. 1928, էջ 76 և 84:

յի ասացական արձանագրություններում)։ Կա և Erhita անունով քաղաքանուն, որը նույն կազմություն ունի, այսինքն erh- բառի դերբեյական հոլովաձևով է։ Իսկ -arh- ‖ erh- ‖ irh նշանակել է «սահման», որևից Arhita պիտի լիներ «Սահմանային» (բառացի «սահմանում—սահմանից»), թեպետ չի բացառված այդ -ita-ի մեջ անունել վրաց ēthi-ի նման ունի ցույց տվող մասնիկ։ Ինչպես Somxitha, Mçxitha, Rusethi, Herethi և այլն։

Վերջապես հայաստանյան Pättei(arig) քաղաքանունը, որի նախնի կար և խեթերի մոտ Pittiariga ձևով, համընկնում է Երզրնկայի մոտ եղած Բբրաթի անվան, և պիտի ենթադրել, որ -arig ‖ -rig (-ariga ‖ -riga) ինչ-որ անդ է ցույց տալիս (համեմատել Šerigga, Išmirigga, Pattiariga, Harmuziga և այլն)[1]։ Ինչպես ցույց են տալիս մեր Բիաբիճ, Գաղատաբիճ, Գալլատաբիճ, Զարդատաբիճ, Մոկաբիճ, Արջոյ ատիճ և այլ անուններդը, այստեղ ևս արոշիչ առաջին կոմպոնենտն է այդ բարդություններդ մեջ, ինչպես նույնը անում Lahr-hila հայաստանյան տեղանվան մեջ։ Այդ բանասիրական ճշտությունը, որ հաստատ էր Հայաստանին, համընկնում է, ինչպես ասացի, հայկականին։ Իսկ առիճ «տեղ, բնակատեղի» բառը թե՛ որպես առանձին հատուկ անդանուն և թե՛ այլ բառերի հետ որպես բարդության երկրորդ մաս, ունի մեզ համար նաև այն պատմական նշանակությունը, որ առնդված լինելով Փոքր Ասիայի խեթական (թե պրոտոխեթական) լեզվատեղծական բնագավառում, թերևս մերին նրա հյուսիս-արևելյան մասում, նա տարածվել է հայացյինների և բալայցիների գաղթի հետ թե՛ Արարքի հովտով դեպի արևելք և թե՛ հարավ-արևելյան ուղղությամբ դեպի Արածանիի առերին հոսանքը և հայկական Տավրոսից մինչև Մոկաց գավառը։ Այդպիսով, ասվեցին, այդ բառը չկա Ծորձյանք, Հաշտյանք, Տարոնի հյուսիսային մասում, Տուրուբերանում, Հարքում, Բաղրեւանդում և ողջ Վասպուրականում,—մի բան, որ համընթաց է և հայերի կազմավորմանն —ակսած Հայասայից։ Համեմատել նաև մեզրելական orenji («օրևնջի»). „приют, место существования (տե՛ս И. Кипшидзе, Грам. мегр. языка, 101), որի «ն» բաղաձայնը այնպես է առաջացել «ջ», «ճ»-ից առաջ, ինչպես հետագա հայերենում ունենք Առինջ, կարմունջ, գառնունջ (գառն

---

[1] Հայոց Գալլատաբիճ, Մկնաբիճ, Արջոյ ատիճ և այլ կազմություններում այդ բաբիճ-ը ցույց է տալիս տեղ, բուն, վայր» (հիմ ատիճ «խեթերի տեղ»)։

բույս է)<դառնուճ-ից և այլն: Հետաքրքիր է վերջապես, որ Փոքր Հայքում այդ «առիճ» բառի բարդության հետ պահվել են մինչև իսկ խնթական բառեր, ինչպես Aladar-ariza «հացապյուղ», ուր aladdar խնթերենում նշանակել է «ցորենի հատիկներ» (համմա. հայոց աղանդիք<alander<aladdar-ից), կրճատվելով նաև ladar ձևի նույն նշանակությամբ (ըստ Ջևդեթ-Ջումհուրի), որը նույնպես միացել է Լևթարիճ գյուղի անվան մեջ, որ եղել է անշուշտ, *Լևթարիճ և դառնալով է Շապին Կարահիսարի մոտ[1]:

---

[1] Տե՛ս նաև իմ „Хайаса—колыбель армян", էջ 44, ծանոթություններ Ահիճ անունը գրած է ածվել և բուսանուններին հետ, ինչպես Էրզրումի մոտ գտնվող Սուճկաճիճ և Paskarič (Բագկաճիճ)=Փոքր Հայքի Bazvoúzēta-ին, որ Մխիթարյան ամրոցն էր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՅԻ ԼԵԶՎԻ. ԱՅԼ ԿԵՐՊ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՊԵՐԸ ՎՐԱՑ ԼԵԶՎԱԽՄԲԻ ՀԵՏ

Հայոց լեզվի աղերսակցությունը վրաց լեզվախմբի հետ, ըստ իս, սկսվել է դեռ Հայաստանի շրջանից, այսինքն՝ մեր էրայից մոտ տասն և հինգ դար առաջ, եթե ոչ ավելին։ Եթե Հայաստանի ցեղերը բռնած էին մոտավորապես Սևբաստիա—Էրզերում տարածությունները, վրաց ցեղերը գտանելով նրանց հետագային տեղաշրջությունից, նույնպես մոտ էին այդ հայաստանյան շրջաններին, այն է՝ բռնել էին Ճորոխի միջին և ստորին հոսանքը և Պարխարյան լեռներից հյուսիս, անծովյան մերձակա տարածություններըː Կարող էին լինել վրաց ցեղերը և Հայաստանի մեջ, ինչպես որ եղել են և Քուռ գետի ավազանում և այլն։ Բայց հայ-վրացական հնագույն լեզվական աղերսի բնօրրանը պիտի փնտրել Ճորոխի մոտերքը, ուր դրկից կամ խառն էին ապրում այդ ցեղերը։ Վրաց հետագա ընդհատ լեզուն, այն է՝ լազերենն ու միգրելերենը, որ այժմ ոմանք կոչում են «ջաներենն», իրոք բռնած է եղել հենց վերոհիշյալ տեղերը, և ի զուր չէ, որ այդ լազամիգրելական լեզուն այնքան մոտ կապակցություն և ընդհանրություն է ցուցաբերում մեր հին և նոր լեզվի հետ։ Միայն այդ աշխարհագրական և լեզվական համակեցությամբ կարելի է բացատրել որոշ լազամիգրելական բառերի ու օրինաչափությունների մուտքը հնագույն հայ շրջաններն ու բարբառները, կապվելով հայացիների և բալոյցիների դադթի հետ։

Հյուսիս-արևելյան Փոքր Ասիայի այս մասում, Հալիսի, վերին Եփրատի և Ճորոխի միջև բռնած տարածության վրա խնթա-

կան ապրյուրներն հիշատակում են բալալցիներին, որանցից արևմուտքը՝ Հալաստա-Ազդի երկրի ցեղերին, և դրանց երկուսի միջև և հարավ ընկած Կաշկա կամ Գաշգա ավազակատարած ցեղերին: Կալխդական ժողովրդի մասին հաղորդում են ասորեստանյան Սարգոն 2-րդի արձանագրությունները, ինչպես նաև հունական ապրյուրները. ավելացնելով խալիբին, վիխրներին, տիբարեններին, մոսխերին, խալիբներին, խալդացիներին, խվներներին, սաններին և այլն: Հետաքրքիր է մեզ համար armeno-chalib ժողովուրդը, որ առաջացի նշանակում է արմենական խալիբներ, այսինքն՝ հայերի մեջ ապրող խալիբներ:

Ինչպես կալին suanno-kolxoi «սաննական կոլխեր», այսինքն՝ սաննների մեջ ապրող կոլխեր, երկր-սուանիք «երկրի (=մերձլիխյան) սաններ», leuko-syroi (փոխառյալ lyko-syroi) «լյուկիական սիրիացիներ» և այլն: Դժվար կլինեի ենթադրել, որ Գոնաուսի և Հորխոր հարևան այդ բոլոր ցեղերը միևնույն լեզվով կամ բարբառներով էին խոսում: Իրանց տարբեր խմբավորումները առաջացրել են լազերին (ճաներին) և մերձլիներին, խոպան սաններին, որոնց լեզվի և գուցե էթնիկ կազմության վրա ազդել են չերքեզները, ապրյուր ցեղը և լեզուն: Ես չեմ կարծում նաև, որ Հալաստա-Ազդի ցեղախմբավորման և քաղաքական ուժեղ միավորման մեջ, ուր ինչոս թագավորի ժամանակ հաջորդականություն կար, նույնպես միաձույլ մի լեզու է եղել, կամ մի մի լեզվի տարբեր բարբառներ: Հավանորեն այստեղ էլ եղել են մի քանի տարբեր լեզուներ: Կարելի է ենթադրել, որ Ազդի երկրորդական ցեղախումբը, որ մտել է այդ մեծ Հալաստա-Ազդի ցեղադաշնակցության մեջ և դրավել է այդ թագավորության հյուսիս արևելյան մասը, եղել է վրացական, նեթե նկատի առնել վրաց այն ավանդությունը, ըստ որի նրանց առաջին թագավորը (=նահապետը) եղել է Ազո (Azo) անունով մի մարդ, ինչպես հայերի մեջ եղել է Հայկը, այնինչ դրանք ազգի և հայա ցեղանվան անձնավորություններ են (персонификация): Մինչև իսկ բալա (պալա) և հայա (achai-oi անվան ասակ) ցեղերից որոշ հատվածներ անցնելով Սև ծովի ափերով միացել են վրաց էթնիկական կոլեկտիվներին, նեթե նկատի առնենք ավանդների երկու տրալտա բարբառները, կամ հունահռոմեական ապրյուրների achaioi ցեղին, այսինքն՝ ախայենների ներկայությունը այժմյան Վրաստանի արևմտյան ամրամաններում, արխազներին մոտ:

Յոթերորդ դարից սկսում է ոչ միայն հայերի էթնոկազմավորումը, որպես ժողովուրդ, այլ նաև վրաց, ի մեջ այլոց և լա-

պո-մերքինները: Այդ մի ընդհանուր պրոցես էր, որ ընդգրկել էր Հալիս—Նիդրատա—Ծորոխ գետերի մեջ ընկած ցեղերին, ուժեղ խթան ունենալով կիմմերների քաղաքական-ռազմական դերը և անտանական-հասարակական նկրտումները: Հետաքրքիր է նաև, որ այդ ընդհանուր նոր պրոցեսների դաշինքում են խալդայ կոչված ինչ-որ ցեղ (կամ ցեղեր) և ալարոդները, որոնցից առաջինը՝ խալդոյները, առաջին հերթին պաշտոն (xald-ai հերոդյան, халдянин, ai սեմական մասնիկով) միացան ազգային ցեղամիավորմանը, իսկ ալարոդները (= ուրարտները) մտան հայ ժողովրդի կազմության մեջ, բոնելով Այրարատը, այնինչ՝ ուրարտական ժամանակի նախկին ցեղամիության էլիխունիի (էլիխուխի) անունը:

Հայ և վրաց ժողովուրդների շրջումը Ծորոխի հովտում շարունակվեց այդ ժողովուրդների քաղաքական և էթնիկական կոնսոլիդացիայից հետո, թե՛ մեր էրայից առաջ՝ վերջին երկու-երեք դարերում, և թե՛ հետո, մինչև ալարոդական շրջանի ավերածությունները, երբ այդ տեղի հայերը, որոնցից այնքան տեղահանուեցան Ծորոխի հովտում, ստիպված էին թողնել իրենց վաղեմի բնակատեղերը: Այդ հովտի Սպերի շրջանումն էին Բագրատունիները և Տայքում՝ Մամիկոնյանները, որոնք հավանորեն ճանապարհ (յատկան) ծագում են ունեցել:

Հայ և վրաց ժողովուրդների այս հաստատումների շրջանին ու ներթափանցումը, ցեղային և կրոնական հողի վրա, թողած դեռ հետագույն Հայաստան-Աղդի ժամանակաշրջանը և մինչև յոթերորդ դարը (մեր էրայից առաջ), բնականաբար պետք է առաջ բերեր լեզվական որոշ ընդհանրություններ, որ պետք է պատմականորեն ճշտորոշվի լուսո կազմության և պատկանելության: Հատկապես հայ-վրացական այս լեզվաոճերով գրաղվեց Նիկողայոս Մառը, որն իր հակապրության եղած հնդեվրոպագետական տեսակետի և հայերենի միակողմանի ուսումնասիրության, առաջ քաշեց իր հայտնի կոչված լեզուների ազգակցության, որոնց մեջ մտցվում էին հայերենը, որպես իսառն բնույթի լեզու, վրաց լեզվախումբը, ուրարտերենը և այլն: Ն. Մառը նույնպես մեծ դեր է տվել կուլտուրական մեծ ազդեցությանը Ծորոխ-Տայքի այդ շրջաններում, որպես հանգուցային կուլտուրաշրջանի մի կենտրոն: Ամենից դժվար է պատմական ճիշտ հողի վրա դնել հայերենի և քարթվելական (արևելյան վրացերենի) խնդիրը, որը նույնպես գոյություն ունի և Ն. Մառի ուսումնասիրությունների խնդիրներից մեկն էր կազմում: Այդ խնդի-

րով (հայ-վրացական), մասամբ զրաղվել եմ և ես, բայց, ինարկե, կարիք կա ամբողջացնելու և զիտական ճիշտ եզրակացություններ հանգելու:

Մենք այստեղ կրկնենք հայերենի և լազո-մեգրելական լեզուների տվյալները, օգտվելով Ն. Մառի, Հ. Կիպշիձեի և այլոց աշխատություններից: Նախ և առաջ ես կմատնանշեմ այն հնչյունատրանական օրինաչափությունները, որոնք բնութագրում են արևմտյան (լազո-մեգրելական) և արևելյան (քարթվելական) լեզուները և տարբերացնում են դրանք, թողած դրանց ուրույն բառամթերքը և ձևաբանությունը: Արևմտյան խումբը կարելի է կոչել նաև š (շ) կամ շչական լեզուներ կամ բարբառներ, իսկ արևելյանը՝ s (ս) կամ սուլական լեզու: Բացի այդ, կան և այլ տեսակի հնչյունահամապատասխանություններ:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բոլոր վրացական (քարթվելական) լեզուները և բարբառները հարուստ են բաղաձայններով, հատկապես սիրիլանտներով ու դրանցից կազմված աֆրիկատներով (ս, շ, զ, ժ, ծ, ճ, ց, չ, ձ, ջ) և այլևայլ պալիատալներով (խուլ-ձայնեղ, խուլ շնչեղ, պալիատալական-աֆրիկատներ), որոնք այնքան շատ են նաև կովկասյան լեզուներում: Այդ հարստությունը անպրպտարձել է հայերենում: Ինչպես իրանյան տերևները ապրվել է կովկասյան հնչյունական հարստության դրությունից: Հայերենի համար նպատակավոր հող է եղել և ատիճանի լեզուներում, հատկապես խառնիտական և արտրատական լեզուներում: Հայերենը վրացերենի և արտրատերենի նման խուսափել է տևական (երկար) բաղաձայնից, այն ինչ որ կոչում են «կրկնակի բաղաձայն» (consonne géminée) և փոխարինել է կամ մենով կամ երկու անջատ բաղաձայնով: Բայց հայերենը ի տարբերություն վրացական արտասանական ունակության, չի սիրում երկու կամ մի քանի բաղաձայններով բառ սկսել, իսկ նեն ատիպված այդպիսիները փոխ է առել, ապա բառասկզբում մացնում է մի ձայնավոր: Մեծ մասամբ այդ լինում է բառամիջի ձայնավորը (համեմատել իրանական šx-ով սկսվող բառերը) և կամ այդ բաղաձայնների մեջ «ը» կամ այլ ձայնավոր են խցկում, նման ատժմյան պարսկերենին, թուրքերենին և արաբերենին, բացառությամբ sp, st, sk, šp, št, šk, šp', št', šk' (šph, šth, škh) և նման կոմպլեքսներին: Վրացերենը ոչ միայն ունակ է մի քանի բաղաձայններով (մինչև հինգ) բառ սկսել, այլև որոշ բաղաձայն բառասկզբում գարձրել է երկու հատ, ուժե-

դացնելով երկխնդիկել է, և առացվել են այսպես կոչված «դնեցնասիվ» շարքերը (децессивные ряды բառ. ակադ. Ֆ. Ախվլեդիանու): Այդպիսիներն են մեծ մասամբ ծկ՛ (ֆʒ), ծկ՛ (ֆց), ճկ (ʒʒ), ճկ՛ (ʒց), ցք (ցʒ), ցխ (ցխ), չք (ճʒ), չխ (ճխ), ձղ (ძღ), ղղ (ցღ), ած (სფ), zg, šg հնչյունակոմպլեքսները, որոնց մի մասը կարելի է պաշտպանել սեմական և հայկական լեզուների ազգակից հին բառաձևերով, ինչպես այդ ցույց տվից Ն. Մառը: Օրինակ, նա իր աշխատություններում և դասախոսություններում համեմատում էր վրաց ղղապարի (zγapari) «հնքիաթ» և սեմ. (արաբ.) dzabar (ձաբար) «խոսք, արտահայտություն» (слово, речь, изречение), լազ. zesqu (<*zesu) „дрозд, орел, черная птичка“ (= груз. šawšia, šošia) = հին հրեական sūs «ծիծեռնակ», վրաց zγvari «սահման» = հին հրեական ṣĕār «սահման», վրաց šxami «թուչն» (<*šami) = արաբ. sam, սիրիական semā «դող», վրաց jγveri («ձղվեռի<*ձվեռի) «անվեր» = հայոց ձաւն, վրաց çxviri (ցխվիրի) «քիթ, դունչ = էլամական siri, հայոց ցո-ուկ (արմատն է ցիւ կամ ցուռ) «քիթ, դունչ» (ЗВО, XXII, 85): Սրանց վրա ևս կավելացնեի նաև վրաց zγua (զղուա) «ժոռ» առացված *zua նախնական ձևից, որը կա նաև ութարտներենում şue (tsue) «ժոռ» և հայոց ժոռ բառերի մեջ, վրաց scavla «սովորել, սովորցնել» = հայոց սովոր-ել, ար վրաց scavl- <sawl-, որը արևմտյան բարբառում բուն օրինաչափության պիտի տար sowor (համեմատել նաև մեր բարբառների սորվ-ել, սորվոր և այլն): Նման մի երևույթ տեղի է ունեցել նաև հայերենում, անկախ վրացերենից և միանգամայն այլ բնույթի, որի մասին կխոսվի իր տեղում:

Այժմ բերենք վրաց այդ երկու լեզուների (արևմտյան և արևելյան) հնչյունաբառնական փոխհարաբերությունը.

Արևելյան (քարթվելական)	Արևմտյան (լազո-մեգրելյան)
(սիբիլյանտ)	(շշնական)
s (ս)	š (շ)
z (զ)	ž (ժ)
j (ձ) = $\widehat{dz}$	ǰ (ջ) = $\widehat{dž}$
ċ (ծ) = $\widehat{ts}$	č (ճ) = $\widehat{tš}$
ç (ց) = $\widehat{t's}$	č̣ (չ) = $\widehat{t'š}$
e (ե)	a (ա)
a (ա)	o (ո)

l (ლ)	r (რ)
r	r (რ) կամ j (ჟ)
ոչ լեռնային խումբ	լեռնային խումբ (полногласие)

Հայոց լեզուն իր հնչյունատրանսկան առանձնահատկություններով հարում է արևմտյան վրաց լեզվախմբին: Մանավանդ հատկանշելի է այդ երկուսի մեջ r ‖ l հնչյունագարձը, ինչպես և լեռնային խումբը, թեպետ այժմ արդ վրացագիտներ, ինչպես Ա. Չիքոբավան, հակված են պնդելու, որ այդ լեռնային խումբը սկզբում հատուկ է եղել և քարթվելներին („полногласие основ являлось исходным состоянием картвельских языков", տես Изв. АН, т. VII, вып. I, отд. лит. и языка, 1948 г., էջ 28 „О лингв. чертах картвельских языков"): Հայերենի մեջ եղած նման երևույթները կամ հնչափոխական երևույթները կարող են պատմել և արդեն ապացուցել կամ փոխառություն այդ արևմտյան վրացական լեզվաճյուղից և ընդհանրապես վրաց լեզուներից, բայց կարող են լինել և անկախ, որպես հնագույն սրանդիպրամպիկի արդյունք Վոնատա—Փոքր Հայքի (մասամբ և Բարձր Հայքի) տարածքներում բնակած հայասական և վրացական ցեղերի միջև:

Օրինակ, հայերենում պատմում է ղ ‖ ջ հնչյունափոխությունը դողդողալ > դողդոջալ բայերի մեջ, որ կրճատված է պարզ դողալ բայից: Եվ փաղփաղել «փայփայել, պաշպաշել», որ և փողփողել (id), բայց անձնք և պաղպաջել նույն իմաստով: Մինչև իսկ պատմում է մեր բարբառներում n ‖ ջ կամ p ‖ ջ փոխանցումը, ինչպես. օրինակ. Արարատյան բարբառում. այսօր պարզ մուռ «հակիճ, սրճի» (իրար՝ նեղքին ցավ) բառից ունենք մրմռա (< մրռմռա) „новая боль" (մռայլ հանկց «սրճիր հանկց», մրմռալ ասվել ջանին «ցավը ատրաժվել մարմնի վրա»), բայց և մրմռնջալ, որից մրմնջալ «մրմռալ», ինչպես նմանը մրմռալ > մրմնջալ, նշանակում է „бормотать", որպես բնաձայնական բառ: Միևս դեպքերում, երբ հայոց բառը պատպատում է արևմտյան վրացականին, պետք է կռնկրետ մոտենալ խնդրին: Օրինակ, հայոց ճանճ բառը նույնությամբ անհնում ենք մեզ. ճանճի (> ճանճի) բառի մեջ «ճանճ» իմաստով, որը համապատասխանում է քարթվելան մ-ձևին (արմատն է՝ «ժնր») նույնիմաստ բառին: Այսպես քարթ. «ժ» > մեզր. «ճ», «ն» ձայնավորը համապատասխան է մեզր. «ա»-ին և «ր» > «ջ», այսինքն՝ «ժնր» > ճաջ > ճանջ > ճանճ: Այդպես ինչպես քարթ. ատլ «հոդ» = մեզր. շուրթ > շունչի (բառ Ն. Մառի), որը հայոց շունչ

բառն է: Կարելի է պնդել արանց փոխառության վրա, մանավանդ առաջինի (ճանճ). բայց դժվար է նույնը պնդել հայոց առ «դիր» բառի փոխառության մասին լազերեն ɣuan «դրել» արմատից tš>t փոխանցմամբ (վրացերեն «ծնր» արմատն է «դրել» իմաստով ծնր > ճար > առ) ինչպես նմանը անենում ենք վրաց ծնչի «առյուծ» և հայոց «առիւծ» բառերի մեջ նույն լազո-մեգրելական լեզվական միջնադարյան ժամանակ. թեպետ կա ուրարտ. zali ‖ tsali «առիւծ»: Այս և նման օրինակները, որ բերում է Ն. Մառը, շատ են: Երբեմն հնչյունական տարբերությունը ավելի է արդելում: Օրինակ, ևս կամանանշնի մեջ. ნინი «ճիպոտ» (լազ. ნინი և ნიჩინი), որի դիմաց հայերենը ունի ջին «խոխոջ տալու, ճիպոտ» կամ մեգր. ნიმა «անել, ուսել, աստ. «кормить» և հայոց ջամբել (<*ջամ-) նույն իմաստով: Ավելի են հնչյունորեն տարբերվում քարթ. ბნი-ხუა «давить ճնշել», մեգր. n-ნიწახხ „давильная, точило" և հայոց ճրնշ-ել, որոնք բոլորն էլ ազգակից են (ծագո՞ւմ են) առաջադրարելական (անիգագական) sanak-u «ճնշել» բայի հետ: Այդ իմ առաջարկություններ պարզ ցույց է տալիս cnex ‖ činax ձևերի ավելի մոտիկությունը, քան հայոց č(i)nš- (ճ)ի(նշ-) ձևի, որը տակից իր «ճ»-ով մոտ է մեգրելական ձևին (ნიწახ-): Մեգր. ndur- «արդարջալ, «роптать, быть недовольным» ունի իր սկզբում ն (n) հավելյալ ձայնավորը, ինչպես ունենք ն-ջագի «թթենի», ն-ամխի. «ուշի», ն-գարա «լայն», ն-ձարն, «գառն» և այլն, և հետևապես ndur-ի արմատն է dur, որի կրկնությամբ կունենանք durdur կամ չափի շատ turtur (n-tur > ndur առաջընթաց առնմանության), իսկ turtur-ը կարող էր դառնալ t(u)rtu(n)j = արդարանջ, որը ի զուր են հանում անմիջապես քարթվելական tr-tinva «արտնջալ» կրկնավոր բայից: Այդպիսի օրինակները շատ են և մատնում կատարվելն ասելս ընդհանուր բառամթերքը քննելիս:

Վերցնենք այժմ լիաձայնության (полногласие) խնդիրը,—մի երևույթ, որ կա և ուրիշ լեզուներում (город կամ град և город, злото կամ злато և золото, хлод կամ хлад և холод և այլն): Այդ, ինչպես ասվել է, հատուկ է և վրացական արեւմտյան (լազո-մեգրելական) լեզուներին. ինչպես քարթվելական k'mari (քմարի) մեգրելական k'omoji (քոմոջի), քարթ. jaɣli «առուսանն, муж» և մեգրելական joɣori (հայ բարբառներում. օր. Աշտարակ (ձագլի) «շուն» և մեգր. joɣori (հայ բարբառներում. օր. Աշտարակ (ձագլի) «շուն» և մեգր. ჯოღორი «գազար շանը»-ը այն շանն է, որը միջակ մեծության է և կում

Հայերենում պետք է նշել -uալոր-ել և քարթ. scavla (<*savla) ուր „l" դառնում է „r" (ր), ինչպես ձագլի—ջոդորի, ինչպես քարթ. caplі «շագանակ» և Ղարաբաղի ցիղպուր (<*ճաղոր»-ից) «ընկույզ». այդպես է բան ից նաև մեր գորով «սեր, դութ» և քարթ. k'var- «սէր, սիրել» արմատը, որից հայերենում սպասելի էր kovor > korov, բայց որովհետև korov «ուժ» է նշանակում (որից կորովի), ուստի այդ կորով «սեր, դութ» բառը տարբերամանավել է գորով ձևի. այդպես է նաև մեր խորով-ել և քարթ. xurva նույնիմաստ բայը և ի դուր է Հ. Աճառյանը մեր լեզվի անմիջական հին շրջապատը ցողնում և խորովել բայից «խոր» արմատ առնչում, ազգակցում խարել «գաղել» արմատին և հանում չգո հնդևր. qor ‖ qer արմատից, որից են իբր սանս. kūḍayati «խաղձել» (սանս. kuṇḍayati «ալրել»), հուն. ke'ramos «բրուտի կավ թրծած աման, կոմիկոր, աղյուս», լատ. cremo «ալրել», հդգ. herd, անգլ. hearth «օջախ», սլավ. և ռուս. курить և այլ «կնդակից»-ներից (Սրմ. բ., III, 397—8, 628—9): Թևրևս մեր գավառական կառուի „ком" (կոտոշ ցուբ) բառը ձևացած լինի մեզր. (լավ) korop'ua «հավաքել» («դնդել») բայից, որպես փոխառություն:

Լիաձայնության երևույթը հատուկ է հայերենին և մանավանդ որոշ բարբառներին, անկախ լատ.-մեզրելականից, և այդ ունակությունը կարող էր դալ Հայասա-Ազգիի հավլական լեզվախմբից: Իր տեղում, r, j, l հնչյուններին ներթափանցման կապակցությամբ սկզբնական արմատական բաղաձայնից հետո, մենք դեռ կխոսենք այդ լիաձայնավորության մասին: Իսկ ընդհանրապես ամեն մի լիաձայնավոր բառադրության դեռ բավական չէ պնդելու այդ կազմության ձևափոխության մասին մի ինչ որ նախկին ոչ լիաձայն իր կացության: Օրինակ, եթե մի խորամ «խոսի խրճիթ» (Աշտարակում երկու խորամը միասին կապած տալիս է մի խուրձ) կարող էր հավանորեն առացվել xram∿xarm, xorm∿xrom և նման հին ձևից, այդ չի կարելի ասել մի խոնաւ, ծարաւ, կնդքել, բողոքել և նմաններին մասին, ուր մասնավորապես xon-aw և car-aw բառերը ունեն -aw վերջամասնիկը xon- և car արմատներից. ինչպես ունենք կճաւ, Որդնաւ, Սուկաւ և նման տեղանուններին մեջ, և այն ժամանակ xon և car պետք է նշանակին «թացություն», «ջուր» (համմ. վրաց. ckali, ckaro, առացված cal-, car- արմատից «ջուր» իմաստով): Դեռ ավելին կասեի, եթե բողոքել բայի -ոք մասը կարելի է դասել և կապակցել, օրինակ, բորբոքել բայի կազմության հետ, քանի որ կա բորբ մասը առանձին, ապա շողոքորբ

բառի շողոք մասը այդ դրությունը կարող է և չունենալ, ի նկատի ունենալով ողոք բառը, որ հնում եղել է *հողոք և մանավանդ վրաց siek'a (սևքա) «հարթել, կակղացնել» (ena-moslek'ili «լեզուն կակուղ, շողոքորթ», տե՛ս H. Марр, Осн. Табл. к грам. груз. яз., СПБ, 1908, էջ 6, ծան. 8):

Այժմ քննենք այն լեքսիկական ընդհանրությունները, որոնք կամ փոխառություններ են միմյանցից և կամ ի սկզբանե մի բլրից են և կապում են հայերենը այդ լազական և մեգրելական լեզուների հետ: Վերջիններիս բառերը բերում ենք միասին:

ԼԱԶՈ-ՄԵԳՐԵԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՄԹԵՐԸ

Մինչև առհորակատ բառերին անցնելը, ասելորդ չեմ համարում կանգ առնել այդ լեզուներում հանդիպող մի քանի բնաձայն բառերի ու կազմությունների վրա, որոնք կտրված չեն իրարից և կարող են նպաստել որոշ օրինաչափություններ ճշտելու: Այդպես, օրինակ, մեգրելերենում ունենք բարբանչի (barbanči) «աղմուկ, աղմկել», որից հնչյունարանորեն անանջատ չէ լազերեն բարբալափ (barbal-ap') «ցնդաբանություններ եմ ասում», և հայոց բարբաջել նույն այս իմաստով: Անտարակույս բոլորի սկզբնական աղբյուրն է bar-bal- կրկնակ ձևը, ինչպես տալիս է լազերենը, որ հետո l > j փոխանցումով տալիս է barbaj և „n" հնչյունի հավելմամբ „j"-ից առաջ՝ barbanj: Նմանապես ունենք լազերեն խիրխին- (xirxin) «խրխնջալ» բայը, որի դիմաց մեգրելերենը տալիս է խուրխինի (xurxini) կամ խիրխինի (xirxini) «խռմփալ» (храпение, храпеть, пыхтать, տես Грам. мегр. яз., 409), որտեղ արմատն է xir- և կրկնվելով տալիս է առաջընթաց առնմանություն *xir-xin* (< xir-xir-ից), իսկ հայերենում այդ կրկնությունը եղել է xir-xir և ապա xir-xij, որ „n" բաղաձայնի հավելմամբ „j"-ից առաջ տալիս է խրխինջ: Այդպես համեմատել նաև արդեն հիշված մեգր. n-dur- «տրտնջալ» (роптать, быть недовольным), որից n-durili «տրտնջացող» (недовольный) և վրաց drtwin-va (< dur-tuin-) „ропот", իսկ հայերենում *tur-tur > tur-tuj > տրտունջ: Այդպես նաև phn «թպռտալ» արմատից ունենք գրաբարում և այժմյան լեզվում բորբել «տրտի թպռտալը», որից և արարատյան բարբառում բորբջալ «երեխայի դեմ ու դեն ընկնելը» հիվանդության ժամանակ (Աշտարակում, Վաղարշապատում), որը առացվել է թիր-թիրջ < թիր-թիր կրկնավորից, նման լազերեն t'ir-t'in (ot'irt'inu) «թպռտալ, դողալ» (mat'irt'inen „трепещу,*

дрожу" «Шапкина», Грам. чанс. яз., 147): Բուղած լազ. b-gor--ам „кричу, ругаюсь" և հայոց գոռ-ալ բառերի համառեղյուններ, ևս հատկապես կնշնի բնաձայն բղոր- (bγor-) «մռնչալ» (рычать) լազական արմատը, որը առացվել է պարզ բոր- (bor-) նախաձևից, ղ (γ) բաղաձայնի պարզացմամբ բառասկզբի բաղաձայնից հետո (տե՛ս վերը). այդ bor- «մռնչալ» հին արմատը ևս անհետանում ևս հայոց բոռ-ալ, պոռալ բնաձայնների մեջ: Համեմատել նաև լազերեն բղու (bγu) „филин", որը հոդել է bu և այ հետադրյալ է հայոց բու նույնիմաստ բառին:

Լազո-մեգրելական և հարկավոր բնիկ բառերից մասնաշնորհ հետևյալները, անկախ նրանից, թե պրոնք փոխառյալ են կամ ոչ:

1. *bardi (լազերեն)*, „стог, в частности напоротника, собираемого для унаваживания почвы" (Н. Марр. Грам. чанс. яз., *129*): Հ. Աճառյանը այս բառը իր Արմ. բ.-ում (I, 1003—1005) դնում է որպես փոխառություն հայոց բարդ բառից, որ նշանակում է «դեզ» (խոտ, հացահատիկներ). «ոչ պարզ, բաղադրյալ», որից բարդան «խոտ, դեզ», բարդել «դիզել, կուտել» և այլն: Այս կարծիքը կարելի է պաշտպանել, ի նկատի ունենալով, որ հայերն իրենք ևս փոխ են առել պարսկերենից, ուր buland «բարձր» առացվել է bard-and, ինչպես salar առացվել է sardar ձևից, gul< <wəl-<vard-ից և այլն: rd>l հնչյունափոխություններ դատ պարսկական բարբառներին է, մյուս կողմանական բարբառներում մենք barz- «բարձր», ինչպես ասիստա barzant «բարձր, բարձրություն», barzah «բարձրություն», պահլ. burz «բարձր» (=պարսկ. burz), օսերեն bärzond և այլն: Բարդ բառը պահել են նաև հայ բարբառները, ինչպես Ալաշկերտում, Խարբերդում, Կարինում, Մուշում, Մոկսում, Վանում և այլն, ուր նշանակում է «հունձքի որոշ չափ» (30—40 խուրձ). տե՛ս Արմ. բ., I, 1004: Լազերենը իր bardi բառը չէր կարող փոխ առնել պարսկերենից անմիջական, ասածը հայերի միջնորդության, քանի աշխարհագրական պիրքի, քանի որ վրացերենում այդ բառը չկա, իսկ հարևան հայոց Կարինի (Էրզրումի) բարբառը դարձ է առել այդ բառը, որպես 30—40 խրձից բաղկացած մի դեզ: Հայերից փոխ են առել քրդերը (part բարդ, 30 խուրջ). Արմ. բ., (ibid.):

2. *bardi (մեգր.)* „куст, терновый куст, чаща" (Кипшидзе, Грам. минг. яз., 201), որին մոտ է և վրաց bardi „чилига" (Чуб. Груз. Рус. сл., 1887 г., 97), որը բառս է, և ասիրաց. abard

„чилига, куст": Հ. Աճառյանը բերում է այս բառերը (Արմ. բ., I, 1033) որպես փոխառություններ հայոց բարդի populus pyramidalis, тополь" բառից: Բայց ինչպես տեսանք, իմաստները տարբեր են—մի կողմից «թուփ» և մյուս կողմից բարդի „тополь": Մեր բարբառները նույնպես հաստատում են հայոց բարդի բառի այս իմաստը (тополь). ինչպես Ալաշկերտը, Մուշը, Խարբերդը, Վանը, Երևանը (Արար. բարբառ), Զեյթունը, Մոկսը և այլն: Միայն Առանձնում դա նշանակում է «ալգիների և պարտեզների եզերքի ցանկապատ» և Եվդոկիայում «շինվածանյութի փայտեր, որոնք ընդհանրապես բարդի ծառից են կտրված լինում» (ibid.): Փոխառության հարցը ըստ իս սխալ է դրված: Դրանք ընդհանուր կովկասյան-տարբրատեական բառեր են: Այստեղ պետք է հիշել Գարսաւ (Բարսաւ) քաղաքանունը, որ ստույգ նշանակում է «բարձուն» կամ «թխտուն». նման Արդնաւ, Կճաւ, Ջիրաւ..., վրաց Thelavi («թխկուտ») և նման կազմություններին (տե՛ս իմ Историко-лингв. значение топонимики древней Армении, Ереван, 1940, էջ 110), Ոչ ապացուցելի պիտի համարել Հ. Աճառյանի կարծիքը նաև լատ. bax- (բախ-) „бить, ударить" բառի մասին, որ իբր փոխառյալ է հայոց բախ-ել բառից: Թերևս դրանք բոլորն էլ Հայաստա և Բալա (Գալա) ժողովուրդների բառամթերքից են, այն էլ՝ բնաձայնական:

3. *gara, ngara* (մեգր.) «լաց, ողբ» կամ «լալ, ողբալ» (у Кипш., 214), լազ. *mgar*-(o-mgar-u, o-mgar-inu) կամ *bgar*-(o-bgar-u, o-bgar-inu) նույն նշանակությամբ („плакать", Грам. чанс. яз., 166): Թևակա Ն. Մառը գրում է լազերեն mgar- (bgar-) միասին, առանց դառնալու սկզբնական m կամ b. բայց իրոք արմատը եղել է gar, ինչպես ցույց է տալիս հայոց հազվագյուտ գեր (ger) նույնիմաստ բառը, որ առաջին անգամ կարողացավ գտնել ինքնուրույն Նորայր Բյուզանդացին: Գոթ է ածվել հատկապես գեր դրսևել «լալ, ողբալ» գործածքը (Յովհաննու Ոսկիբերանի Մեկնութիւն Ի Թղթոյն Գողոթ. Վենետիկ, 1862, հատ. Ա, էջեր 206, 492, 751, 832): Ն. Բյուզանդացին հայոց այդ ger «լաց, ողբ» բառը համեմատում էր պարսից girî «լացուկոծ», որ լինել «գոչյամբ և ապտակելու» բառի հետ (տե՛ս Արմ. բ., II, 139—141): Ըստ Հ. Աճառյանի կարելի էր գնել փոխառության խնդիր պարսկերենից, քանի որ ունենք պարսկ. g- հայոց գ (gund = գունդ) համապատասխանությունը: «Բայց ձայնավորները համապատասխան չեն» (ibid. 141): Ըստ իս, միգրելա-լազական gar արմատի գոյությունը վր-

կայում է հոդուտ հայոց այդ հազվագյուտ բառի ինքնուրույն զոյութիյան։ Բուն վրացերենում այդ արմատը չկա։

4. gordi (մեգր.) «զորա, лягушка» չի կարելի զատել հայոց գորտ բառից։ Կարելի էր դնել հայերենից փոխառյալ, բայց կա և Թուշերեն—kuarti (ყუართი) նույն իմաստով։ Իրուր են հայոց այդ բառը համարում հնդեվրոպական և համեմատում յատիշական warde, արևել. լատիշ. vargle և լիտվերենի varlė «զորա» բառերի հետ, անշուշտ իրր թե նախնական ընդհանուր wordo ձևից (Արմ. բ., II, 287)։ Բառը (gort-kuart-) ամենի շուտ բնաձայնական ստեղծագործություն է թողնում։ Հ. Աճառյանը մեգրելական gordi բառը դնում է որպես փոխառյալ հայերենից (ibid, էջ 288)։

5. dokia կամ dukia (մեգր.) „курочка", որը Կիպշիձեն համեմատում է հայոց դոխ «ազամուռ ձագ, курочка» բառի հետ։ Մեգրելերեն բառի վերջին -ia մասը փոդաքշական վերջածանց է, և սրանից արմատն է dok-։ Համեմատությունը հայոց այժմյան գավառական դոխ բառի հետ ճիշտ է և մեգր. Ķ (ę, որ չափազ է շփոթել y բազաձայնի հետ) =հայոց խ։ Հայոց դոխ բառը, որ հին գրականությունը (գրաբարը) չի պահել, տարածված է կարինի (էրզրումի) բարբառից սկսած դեպի արևելյան բարբառը և մինչև Ղարաբաղ։ Բանանց և Ղարադաղ (Գարակասանում), այսինքն՝ Գոնաոսի մոտերքից մինչև Ատրպատականի, իսկ սա հայասցիների և բալայցիների անդամախոսության մի որոշ ընթացքն է։ Լազերի մոտ այս բառը հավանորեն եղել է, բայց բառարաններում չի երևված։ Վրացերենում չկա։ Ըստ Հ. Աճառյանի «Գավառական բառարանի» (էջ 282) ունենք «Դոխ Ախց. կր. Աղամխի, Ջ. Ղրբ. լրամարդի, Յ. ղրբ. ղրդ. վաղակին մեծ հավ, որ դեռ չէ ածած, հավին ու վաղակին մեջտեղը»։ Իսկ Ս. Ամատունու բառարանում («Հայոց բառ ու բան», 169, 603) կարդում ենք «Դոխ Ախլցխ., Ախլք. ազամխի, ըստ Ալբար. դոխ՝ ազամխու ձագ։ Դոխ Գնձկ., Բննց. հավի մի տարեկան էգ ձագը»։ Ի նկատի ունենալով, որ Ախալքալաքցիի և Ախալցխեցիի հայերը կարինի կամ նրա շրջանից են գաղթած և Բանանցն ու Ղարադաղը կապված են Ղարաբաղի բարբառի հետ, ապա պարզ պետք է լինի այդ դոխ բառի որոշ իմաստը «ազամխու կամ հավի մեծ ձագ» և տարածումը արևմուտքից (Գալա, Հայասա, Կոլխիդա) մինչև Բաղաց ցեղերի Bala-karan «բալա ցեղը» կամ kara-bala «Կարաբախ») վերջին կանգառներինները։

6. Ndγul- ‖ dγul· (մեգր.) „плавить", օրինակ t'irindγuie «ձյունը հալվում է», ndγlap'iri «ձուլվածք» (сплав, տե՛ս Կիպշ.,

288), O-ndγulap'ari «հալվելու բան» (подлежащий плавке, предмет плавки)։ Այս մեզրելական dγul- արմատին պիտի կցել լազերեն dγul- „перезревать, прокиснуть" (ներկա 1 գ. m-dγul-ur), ինչպես թարգմանում է Ն. Մառը, (Грам. чанс. яз., 141), որ փոստոտրեն վերաբերում է պատշգների լեհելուն շատ հատկանշոց։ Ընդհանուր մեզրելալազական արմատն է dγul- (դղուլ)— լեհել, հալել, ձուլել իմաստով և «դնցկատիպ» շարքի հնչյունարտահայտական օրինաչափության հիման վրա, ինչպես նկարագրված է վերևում, այս dγul- արմատը հնում եղած պիտի լիներ dul- (դուլ-), իսկ այս նախնական արմատը հնում չէ բան թե հայոց ձոյլ-ձուլել արմատից։ Այսանդ երկու հանգամանք են պահանջում առանձնահատկություն ճշտելու, նախ հարկավոր է, որ հայերենում բառասկզբում ձ հնչյունը առաջացած լիներ «դ»-ից նաև այլ դեպքերում (բառամեջ շատ կա -խեդդ ‖ հնդկ. հերդ „черед" (= վրաց xvedri «մաս») և հերձել, լորդ «վարար» և լորձ-անք և այլն). երկրորդ, հարկավոր է, որ հայոց ձոյլ ձևի դիմաց լիներ և ձող- (ձոլ-) նախաձևը, ինչպես բոյլ ձևի դիմաց ունենք բող-ուն, նշոյլ ձևի դիմաց՝ շող-ալ, «արծոյլ» (= ցանց) բառի դիմաց նաև արծող և այլն, և հետևապես լազո-մեգր. dul-ին հարկավոր է համապատասխաններ dol- (> ձող-), որպես հնչափոխական տեսակ։ Բայց հայոց ձոյլ արմատին, որ գրվում է նաև ձոլդ և ձիւդ (Աբմ. բ., IV, 511), գրվում է հնդեվրոպական ձագում և ձուլել (ձուդել, ձիւդել, ձօդել) «թափել, ձուլել» > «պնդացնել, դոզել, ամրացնել» իմաստով կապում են հնդեվր. g'heu- «թափել, հեղել, ձուլել» արմատի հետ, ավելացած -lo մասնիկը։ Այդ հնդեվր. արմատին է պատկանում հուն. Χέω[<χew-o] «թափել, հեղուլ» [лить], χύσις «թափում, հալում», Χυλός «հյութ, հուլդ, համ», լատ. fundo [fu-di] «ձուլել, հեղել, թափել» („d"-ն ածական է), գոթերեն giut-an („t" ածականով) «ձուլել» (= գերմ. giessen) և այլն։ Այս հնդեվր. g'heu- արմատից են հանում նաև հայոց ձու և մինչև իսկ ձօն «նվեր» բառերը, որի համար սահմանում են g'hu- = հայոց *ձու + ուն (նման պաշտել-պաշտոն) և առացվել է իբր թե ձու ուն > ձուն (ձօն), որ բառացարձակ կցկցանք է, իսկ վրացական խմբի (քարթվելական և լազո-մեգր.) նման արմատի առկայությունը համարվում է «պատահական նմանություն» (Աբմ. բ., IV, էջ 525)։ Բան իս, հնդեվրոպական պիտի համարել միայն հայոց ձու բառը (отливка > форма իմաստաշրջումով), իսկ ձոյլ (ձուլել) և ձօն բառերը տեղական, կապված վրացական լեզուների հետ, որպես Հայաստանի բառեր։

7. Korali (լազ. Վիցեում)— այն փայտը, որով խփում (ծեծում) են բամբակը և կամ չարդում են ընկուզը (H. Марр, Грам. чанс. яз., 157): Մեգրելերենում այդ բառը չի գործածվում, բայց կա վրաց. kopali կամ kombali (ըստ Чуб. բառարանի) „дубина, палка“: Այս բառը կա նաև հայոց բարբառներում, ինչպես և արմատն պարունակներում և քրդերենում: Չի արձանագրված հալ և վրաց հին գրականության մեջ և թվում է, թե հարավային կովկասյան ծագումով պիտի լինի: Ըստ Հ. Աճառյանի (Գաղ. բառ., 593) այդ բառը գործ է ածվում Երև., Ղրբ., Վն., Տր., Տփ. կոպալ ձևով և Երև., Ղրբ., Տփ. կոմբալ ձևով, նշանակելով «խոշոր գլխով հաստ փայտ, բիր, մահակ»: Բայց Երևանի և Ղարսապի բարբառներում՝ նաև «կարճ ու հաստ փայտ է, որով թմբկահարը թմբուկը կծեծև» (աջ ձեռքի փայտն է), իսկ Համշենում այդ կոպալը նշանակում է այն փայտը, որով ծեծում են եգիպտացորենը կամ առանձ և խրնձորը մաղրի մեջ (Տրապիզոնում՝ կանեփը ծեծելու մի գործիք է): Ինչպես տեսնում ենք, Համշենի հայերն ու Վիցեի լազերը այդ «կոպալ» բառը մի ինքնուրույն իմաստով են գործ ածում: Հ. Աճառյանը մատնանշում է նաև նոր պարսկ. kōpāl «երկաթեն գավազան», քրդերեն kupal, kopal (gopal) «հսկայի մահակ», վրաց. կոբալի, կոմբալի և ասիներեն կովալ: Ըստ Ս. Ամատունու բառարանի (էջ 358) Արարատյան բարբառում կոպալ նշանակում է «բարակ կարճ փայտ, որով գութաչին խփում է գութի ականին», բնիկ գ. Փռուշյանից (Սոս ու Վարդիթեր, 271) հետևյալ կտորը «Գութաչին էլ կոմբաջին կոպալին տվավ»: Աշտարակում այժմ էլ կոպալը այն փոքրիկ (1½ թզաչափ) փայտն է, որով թմբկահարը ձախ ձեռքով խփում է թմբուկը ստիպից, իսկ կոմբաջով, որ համեմատաբար մեծ է և մեծ գլխով, խփում են թմբուկի վերին երեսը (աջ ձեռքով): Այստեղ մեզ հետաքրքրում է kombaǰ ձևը, որ առացյալ է kombal, սա էլ kobal < kopal ձևից: Հնչյունական l > ǰ (կոմբալ > > կոմբաջ) փոխանցումը, ինչպես մատնանշվել է վերևում, զուտ լազո-մեգրելական և հարկական է, թեպետ և լազերենում ու մեգրելերենում այդ բառը (kopal) և նոր բառաձևը (kombaǰ) չկա: Բանն այն է, որ լազերի մոտ բառը միայն Վիցեումն է գործ ածվում, իսկ այլուր և մանավանդ մեգրելերենում չկա, ապա պիտի եզրակացնել, որ kopal բառը լազերին անցել է հայերից: Այդ բառի նեղ կապակցությունը վանեցոց մոտ, ինչպես և քրդերի, թեպետ դեռ պարզաբանված, վկայում է նրա ստացման մասին հարավային Հայաստանում: Վրացական (քարթվելական) և ասիական ձևերն ևս հաս-

տատում են այդ բառի տարածվելը Անդրկովկասում: Ծագումը հավանորեն կովկասյան-ալարոդական է:

8. Око (մեգր.) „нужно, хочет", ко (լազ.) „нужно" Արևմտյան լազերենում այդ ко մասնիկով կազմվում է ապառնին և դրվում է խոնարհվող բայաձևի (ածրեսոի) վերջում, ինչպես վ-ոդղի-կո, ոդղի-կո, ոդղու-կո, վ-ոդղի-կութ, ոդղի-կու-թ, ոդղուկո-ս (=կխտանամ, կխտանաս և այլն) կամ ճար- «գրել» արմատից՝ ք-ճարի-կո, ճարի-կո, ճարու-կո և այլն: Դեռ 1940 թվականին ես մատնանշելով այդ ко մասնիկի և հայոց կու մասնիկի թե՛ հնչյունական և թե՛ ֆունկցիայի ընդհանրությունը: Բայց արևմտահնդեվրոպական վերապահում է առաջանում այդ ճանապարհը (լազական), այն էլ արևմտյան մեծ բարբառի այդ ուժեղ դերի մասին, որ ստիպել է բոլոր հայ բարբառներին յուրացնել այդ իրենն ко (>կու) մասնիկը: Այդ անակնկալից ազատվելու կու մասնիկի փոխառություն:

9. martini (լազ.) „чайка" անշուշտ, նույնն է պարարի մրոխիի բառի հետ (հդմ. մրամանք, անո.-արա. մրամանց), որ նշանակում է «ծովային ձկնակեր մի թռչուն»: Աշտարակում և Օշականում հիմա էլ այդ թռչնանունը գործ է ածվում: Ըստ Ս. Աճառյանի (Հայոց բառ ու բան, 493) դա է «գլուխը սև, թևերը մոխրագույն, և ոսկեսպիտան կտուցը կարճ և ուռուկ, ոտքերը կարճ, սև և թաղանթաոտ ջրասեր թռչուն»: Թեպետ այդ մրամիը փոքրիկ մի բադ է, ինչպես ինձ են հաղորդել, այնուամենայնիվ կարելի է համեմատել լազերեն martini „чайка" բառի հետ, զանց անելով իմաստաբանական այդ տարբերությունը,— մի բան, որ հաճախ է պատահում թռչունների անունների մեջ: Բայց հետաքրքիր է, թե ինչ միջնորդավոր շրջաններով է այդ բառը անցել և մանավանդ պատճառը բարբառի վերոհիշյալ երկու դյուրության:

10. ragvi (մեգր.) «թակարդ» (թռչունների համար) և լազ. ragi (վիցևում), «թակարդ» (մկների), ereki (վիցի), ireki (Ռոպի) „силок для птиц", որոնք բառ իս կազմվել են մեգր. ragv- „набрасывать(ся), накидываться" բայից, որտեղից՝ ragvi (ragi) «թակարդ» բառը հիմնականում նշանակել է „накидка", «բան գցելու (ցանց և այլն): Այս լազ-մեգրելական տարբերից պետք հանել և հայոց նետազ (արագազ) «հենդանիների բռնելու ցանց» դուրսկանը, որի վերջին -ազ (-az) մասը ածանց է: Համանորինն է նաև արոգայր «թակարդ, ծուղակ» բառը -այր ածանցով է նաև արոգայր «թակարդ, ծուղակ» բառը -այր (ait') ածանցով: Erag- կամ arag- արմատները այնպես է հարաբերում orog-ին, ինչպես ունենք աճար և ոճոր-ը «առատատար»

(=լազ. ճերի *ceri* Քոպևում, վրաց ճերի čeri «առաստաղ») սաղապիմ և սողոպիմ «ելևէջել, դնդնդել, գայթակղել», որպես տարրեր անդերի (բարբառների) արդյունք: Հայերենում -ալի ածանցը ունենք և ճառագայթի բառի մեջ (ճառագ-եմ բառից), որի հետ համեմատել սուվեր. zalag 'shining, resplendent' և խառխաներեն zalik «ոսկի», ապրինքն՝ փայլուն:

11. *rikali* (մեգր.) «երկար, բարձր» („длинный, высокий", ասա կիպչիմեի մոտ Грам. мингр. яз.): Այս ածականը (հոդված) կարող է ապացուցվել հայոց երկ-ար, երկ-այն բառերին, նեմ իմարկե մեղրելական բառը հին տեսք ունի և չի ալլակերպված ու փոփոխված հնչյունական մի ալլ ձևից: Ժամանակագրական լազո-մեգրելական լեզուների հին պրակտիկայում չի եղել, իսկ պրակտիկ անցյալով քարթվելականը նման բան չունի (վրաց grjeli «երկար», ալլ արմատ է և անցել է մեգրելներին ginje „длинный, высокий" ձևով): Բայց հայոց *erk-* արմատը (erk-ar, erk-ain) կարող է խառնվածքան ծագում ունենալ, ինչպես ցույց կտրվի իրեն տեղում:

12. *tep'uri* (լազ.) — լազական կլոր սեղան մի ցածրիկ ոտի վրա: Այս բառը Հ. Աճառյանը համարում է փոխառյալ հայերենից, նկատի ունենալով խարրելիցյոց դեփուր «փայտե կլորիկ սինի, որի վրա հաց են ուտում» (Ամս. բ., II, 1173), իսկ իր «Պատմական բառարանում» այդ խարրելիցյոց բառը սեփուր ձևով թարգմանել է «փայտե կլոր փոքրիկ սեղան» (էջ 1026): Այդ ձևով գործ են ածում նաև Ախն, Բաթում, Երևան [Աբար. բարբ.], Սարատախա, Տրխղիա, թեմուր ձևով՝ Խնուս, Համշեն, Ղարաքադ, բոլորն էլ «տախտակ, թաղլաս, սինիճ», որպես փայտե կլոր մասուցարան, որի վրա հասանելիները (տրեհն, բրինձ և ալլն) են մաքրում, «տեսիրում»: Կար և հին պրակտիկայում մեջ -բափուր «փայտե սկուտեղ, թեփսի», որը մեր այս պատմականների հետ իրր թե մոտ է առած նոր պարսկերեն tafur բառից, որ թարգմանում են «տանօթ քարեղեն և խեցեղեն» (ibid. էջ 1172): Պիտի ասարկել, որ նաև պարսկերենը ալլ իմաստ ունի (անոթ „сосуд") և քարից կամ խեցիից շինած, և երկրորդ, որ հին վրացերենական և թեթև խառնիտական լեզուներում եղել է նման բան, նեմ ի նկատի ունենանք խեթական օրենսդրքում *tapulli* „unplateau" (code hittite, 122—123), ինչպես թարգմանում են Hrozny և Carruthers (Hittite glossar", E. Sturtevant, 1936, էջ 152, 'plate, dish'??), բայց ըստ Süter bock-ի (ZA, № 7, X, 61), այդ tapulli բառը, որ ունենում է և «մեհյան» (URUD) որոշիչը, նշանակել է կարելու ինչ-որ գործիք, բայց ոչ

դանակ (տե՛ս Supplement to a Hit. Gl., էջ 42)։ Դուցե մեր տեփուր-բափուր բառը գալիս է խուռիտական աշխարհից, ուր նկել է tapri- աթոռի մի տեսակ է („a kind of seat", ibid, 42), որը կարող էր և կլոր տեղան նշանակել, նման ռուսաց стул-стол բառերի անցմանը։ Համանուներն Փոքր Ասիայի վրայով են լատիներեն tabula, հուն. tabla և այլն, որ նշանակել է տախտակ, հետո նաև «տեղան» և մտել է եվրոպական լեզուների, ինչպես և թուրքերենի մեջ («թավլա»)։

13. tutuli (լազ.) «ազիա, ազդր» (бедро)։ Այս բառը անշուշտ ածանցավոր է -uli մասնիկով, իսկ tut- արմատը պիտի ազգակցել մեր մի շարք գոյականական բառերի հետ, որտեղ դնում ենք նույն բառը։ Այսպես, Ղարաբաղում ունենք տուճու «նստատ տեղին» (Ամատ., 646, օրինակը «Գյո-Գաղիթ»-ից 188) կամ տուճղի «նստելը» (Աճառյան, Գավ. բ.), նույն Ղարաբաղում և Շամախիում՝ տուճդուուզ (<*տուճդուզ) «նստելը» (մարդու, անասունի և այլն)։ Ագուլիսի բարբառում ունենք մանկական բառ տուտուզ նույն իմաստով, իսկ որպես ածական կա նաև վանի տուտուզ և Ղարաբաղի տուտուուզ «տուած, գոբա ցցված» բառը, ինչպես որ -ուզ մասնիկով ունենք խլուզ (Մոքս, Ծշտունիք) «տուր տար ցցված ունկած» (ականջ, քար և այլն), տուուզ «լիցուն, ատոք» (ծառապատուզ, ընդհանն), պլուզ «փոքր», ճլուզ «շատ նկած, նիհար մարդ», գաուզ «խուճուճ» և այլն։

14. ni-k'it'i (մեգր.) «դունչ, մռութ, քիթ» (рыло, морда, нос)։ Այս մեգրելական բառակերպի „ni" (< n) հավելված է և հիշյալներն իրավամբ զատում է։ Անկասկած այդ բառը փոխառել է հայերենից՝ քիր բառից, իսկ բուն մեգրելական նույնանիշ բառն է jonjo (ջոնջո) „рыло, морда", որի հայկական ներկայացուցիչն է դունչ, ինչպես մեգր. jojo «մռութ, խլեզ» բառի դիմաց ունենք ոզոշ = աքրաքոքոշ «մռութս» (Առձ. Բ., 256, 830), այսինքն՝ հայերենում բառակերպի „d"-ին մեգրելերենում համապատասխանում է j (ջ)։ Ինչ վերաբերում է nik'it'i բառի ni հավելվածին, ապա ընդհանրապես վրացական և լազո-մեգրելական այդ ni- հնչմանը հայերենը տալիս է բն- (ən-), ինչպես niči «ընծա» (բուն քարթվելական նշանակությամբ ապառնի էր nici), nigozi «ընկույզ», որի արմատը gus ըստ նշանակում է և անմահական լեզուներում ուրևէ հայոց այդ ձևը փոխառել է վրացականից ni- հավելվածի պատճառով։

15. ǯeǯi (լազ. և մեգր.) «խոզ, վարազ», որը Ն. Մառը ճիշտ կերպով համեմատել է հայոց կինճ կամ կինջ նույնիմաստ բառի

հետ (տե՛ս նրա „Яфет. к в арм. яз.): Լազ-մեգր. ɣ = հայոց k տեղեք նաև լազ. ɣler- „мягкая кожура грецкого ореха“ և հայոց կլեպ բառերի մեջ:

16. jgud (մեգր. ჯგუდ): m-jgud-un „растет, проростает, пробивается“ միանգամայն ազնիւ է Արարատեան բարբառի ծլկըբել „проростать, пробиваться“, օրինակ, երեխայի առաջ ծլկըբեմ ա, ցանած ցորենը (կամ տնկած կորիզը) ծլկըբել ա: Հետաքրքիր է, որ մեգրելական ձայնեղ ձգուղ ձևին հայերենը համապատասխանում է խլարագաձայն ձկ(ու)ր— ձևով, որը ինքնին փոխառութիւն է:

17. ckit-on-ua (մեգր.) „цинуть“, որը իր ckit- (ծկիտ-) արմատով մտանում է հայ բարբառների ճմկրել (Արար.) կամ կճմբել, կզմբել նույնիմաստ հոլովներին: Լատ երեսփոխան հայոց ճմկր- > կճմբ- ձևերը հետևում նկել են առանց «ժ» հնչյունի, այնինքն նկել է ճկբի > կճբի: Մեգրելերենում ապառնի էր ckit-on-ua (ծկիտ-ոն-ուա): Կիպշիձեն (էջ 381) չի անջատում «n» բաղադձյունը, համարում է արմատական (ckitonua, ckitonap'a) և այդ տեսակետից այդ մեգրելական բառի բաղադձյունները ckn (ծկն) համաձայն են հայոց գոլատական čmkt' կամ kčmt' նույն չորս բաղադձյուններին, փոխելով n ‖ m:

18. čvit- ‖ čut- (մեգր.) «թակել աչքերը»: Այդ նուիտ- ‖ նուտ- արմատի դիմաց հայոց բարբառները (Արարատ., Վարդ.) տալիս են նքտ-ել մտատորատիպ նույն իմաստով: Ս. Ամատունու բառարանում կարդում ենք (450) — «ճանկ (աչք) — մի աչքը խփելով՝ մյուս աչքով մի բանի վրա առը նայել» (օրինակ, աչքը ճանկ, քարով տվեց աղունքին ու քցեց, աչքը ճքտանց, թվանքը քցեց): Այս բառը արժե էլ գործ է տեսնում վաղարշապատում: Ինարկեպում, ըստ Հ. Աճառյանի «Գավ. բառ»-ի (737). «ճանկ—աչքերը կիսափակ և ծուռ նայել», ճանիկ կամ ճանիկ աչվի «աչքերը կիսափակ և ծուռ նայել»: Հայոց այդ գոլատական նքտ- արմատը առացվել է նիտ կամ նուտ լրիվ ձևից:

19. čkvad- ‖ čkvid ‖ čko[r]d- (մեգր.) „разорвать, истребить“ (Кипш., Грам. м. яз., 394), čkwid- ‖ čkid- „ломаю, разрываю“ (Марр, Гр. ч. яз., 227) և čkod- „разорвать, оторвать“ (ibid., 226): Մեգրելական և լազական այս բառաձևերը բարբառային և ենթաբարբառային տարբերությունները անենք և առաջացել են հիմնական čkod- կամ čkod- «ճղել, ճեղքել, պոկել» ձևից, որը ավելի հեռուն, որպես բարդացած դերնաստիլ շարքին պատկանող (տե՛ս վերը),

առացվել է պարզ čod- (ճոդ-) արմատից: Հայ բարբառներում դբրան համապատասխանում է ճոր- ձևը, որն ունի նույն նշանակությունը, երբևիցե հավելացած «ո»-ով: Այդպես են — ճոթ «մատն, պատառ, կտոր» (հացի, հողի, շորի և այլն). երկը հոդը և երկը մանր ճոթը կից իրերաց. էրատնքի կոչնցնալ ճոթն ատամ վախտ վանքիս (Զամբռ, 290, 287): Մի ճոթ հաց ատր, փնշից մի ճոթ կտրնց (տե՛ս Ս. Ամատունի, 442): Այնտեղ ճոր բառը մատնավորապես առանում է ոտաց „отрез"-ի իմաստ, որպես նոր անկար շոր («Գնացին Երևան ճոթ առան», հարսանիքի շորերը վիճապի և հարսի համար, որ դնելում է. իսկ հարսի համար, որ նաև կոչվում է. «ճոթ կանք էր»). ճոթ անել «բաժանել» (ձի, հարստություն ճոթ արինց), ճոթ ճոթ գալ «կտոր կտոր գալ» (=նազ անել, փքվիլ, իրեն մեծ պահել): ճորոել «իրար պատառել, լայն ճեղքել» (Ամատ., 442): Այս արմատը և ձևերը գործ են ածվում գրեթե բոլոր բարբառներում (տե՛ս Աճառյան, Գավ. բառ., 728), ինչպես Ագա, Ախալքալաք, Ախն, Աբարկիր, Բյուրմանիա, Բալու, Զեյթուն, Լեհահայոց մոտ, Խնուս, Խարբերդ, Համշեն, Մոկս, Մուշ, Շատախ, Չարսանջակ, Գոլիս, Վան, Տիգրանակերտ և այլն: Իմարին կան և ածանցյալ ձևեր, ինչպես —ճոթեկեն, ճոթիկ (Մուշ), «պղտիկ կտոր», ճոթատալ և այլն:

20. čkori (մեգր.) «տրեակ, „раб" paton čkorala (=վրաց baton-ĸmoba („крепостничество") «տղայի՝ барство и рабство (տե՛ս Кипшидзе, էջ 298, 392): Այդ čkori (ճկորի) բառը ըստ իս առաջացել է čori հին ձևից, ինչպես čk կամ čk և նման բարդությունները կազմվել են պարզ č բաղաձայնից (տե՛ս վերը): Իսկ čor ճոր բառաձևը մեգրելական (և լազականն) նորմալ հնչյունափոխն է car- (ծար-) նախնականից, ինչպես վրաց kaçi (կացի) «տղամարդ» բառի դիմաց ունենք մեգրելալազական koči (կոչի), վրաց cabli «շլապտակ» և լազ.-մեգր. čuburi (<*čobori-ից) և այլն: Մեգրելական čkor-<čor-ից, իսկ վերջինիս *čor ձևափոխումը *car-ից հաստատվում է հայոց car'a (ծառա) բառով, որը արամեական „a" վերջավորությամբ (կամ առաբերեն ?) առաջացել է առաբերեն-խուռիտական šarri, zarra տրտի, ծառա բառից, ինչպես ցույց կտրվի իր տեղում: Թևրևս մեգրելական այս հին čor- (ճոր-) «տղա» արմատաձևի հետ կապ ունենա նաև հայոց ճորտ բառը, որը X դարից հաստատ է մեր հին գրականության (և վիմական արձանագրությունների) մեջ, ինչպես նաև գործածական է մեր մի շարք բարբառներում (Ագար., Մուշ, Ղազախ, Ղարաբաղ, Ջուղա, Սալմաստ, Տիգրիս, Ագուլիս և այլն): Վրաց լեզվում նա կոչ čorti

(հորսի) բառը, բայց «արծան, статуя» իմաստով, ինչպես կարդում ենք Ջուբինովի բառարանում, թևավոր վրաց հին պրակտեքյան մեջ կարծես թե բացակայում է, իսկ իմաստն էլ զեվարթքյամբ է կապակցվում մեր նորա «ապառաժոր, փորրաժոր, ծառաբառի հետ:

21. Xin- (o-xin-u, լազ.) „бледнеть, линять, желтеть от лихорадки" (Марр, Грам. чанс. яз., 232): Լազերեն այս բայածևը գործ է ածվում միայն արևելյան բարբառում՝ Խոպիում, իսկ արևմտյան (Ամենք-Վիցկ) բարբառում ապառնին է xun- կամ xon- ինչպես ունենք արևմտյան nusa «ճորտահարս» և արևելյան nisa (արդյոք փոխառյալ չէ՞ հնգևեր. snusa- «նոսա բառից), gub- և gib- «ծռվել», gut'- և git'- «կանգնել». t'or- և t'ir- «առնել», kod- և kid- «շինել, կառուցել», k't'ur- և k't'ir- «փոխառնակել», škor- և škir- «առյուծ լինել», çor- (ցոր-) և çir- (ցիր-) «մաղել, пропевать» (համեմատել՝ рпр-ել ‖ ծորիլ ‖ սորիլ) con- և cin- «փախչել» և այլն: Այդ անուանկոտոր արևմտյան xun- կան xon- ապառնին ձևի հետ, որ գերբախտաբար բառարանները չի վկայված, կարելի է համեմատել հայոց դարձառական խոն-անալ կամ խուն-անալ «դունդը դնել» (շորի, գլխարկի մասին), որ գործ է ածվում, օրինակ, Արարատյան բարբառում, Ղազախում, Լոռիում, Ղարաբաղում, Տիրիխում: Միջերկրյանում այդ արմատը չկա: Իսկ լազերենի վերաբերյալ ընդհանրապես պետք ասել, որ հայոց նախնադարյան բառերի ամենից հարուստ են նրա արևմտյան բարբառները (համեմատել նաև նրա ko և մեր կու մասնիկների գործածությունը բայածևերի մեջ, ներկայի կամ ապառնիի համար, ինչպես և մասնաճյուղավոր վերնի լազ. çor- (ցոր-) և մեր рпр-ել, որի սորիլ փոխհարկը մեր բարբառներում նշանակում է նաև «ալյուրի մաղելը շրաղացքարի տակից ալրաստանը»):

22. Мегр. p'aluri „блек".

Լազո-մեգրելական բառամթերքի կապը հայոց լեզվի հետ անուրանալի հետևում ամենից շատ նկատ պետք լինեն: Դժբախտաբար պրակտեքյան բացակայությունը այդ արևմտյան վրաց բարբառներում մեզ հնարավորություն չի տալիս ճիշտ և անմիջական հետազոտություններ ապառնել: Բայց և այնպես բերածս երկու առանձին օրինակները պրակտիկ կերպով են լուծում մեր և այդ լեզուների պատմական ազգերը, որը ինչպես մատնանշվել է, ստոկ ազգակցության կամ փոխառության հարց վրա չի կարելի դնել:

Ըստ Ն. Մառի և Հ. Աճառյանի հայերենից են փոխառյալ հա-

անալ լազո-մեգրելական բառերը. 1) anderi (լազ.) «աներ չանեցող», որ լսա Մաճառ հայոց անտեր բառն է. 2) t'ani (լազ.) „пахтание" լսա նոյնի հայոց թաճ բառն է. 3) ma(r)kart'i «մածնի համար մակարդ», լսա Հ. Աճառյանի մակարդ բառից. 4) maraka (մեգր.) «խոզերի գոմ», որը կիպչիձեի բառարանում համեմատած է հայոց մարագ „сеновал" բառի հետ, բայց լսա իս փոխառութիւն է. 5) omok'sura (լազ.) „ясли" «մսուր», որ Ն. Մառը համարում է հայոց մսուր բառը հնչյունական որոշ փոփոխմամբ. 6) pat'i (լազ.) „кусок доски" «տախտակի կտոր», որ Մառը համեմատում է հայոց փայտ բառի հետ, բայց անշուշտ որպես փոխառութիւն. 7) suriki „скворец (пепельного цвета с белыми пятнами, летает в стае). враг саранчи" [=թռի դուշ, розовый скворец], որը Հ. Աճառյանը համարում է հայոց սարեկ բառից փոխառալ, թեպետ հարցականով (Արմ. բառ.). 8) k'erendi „коса", «գերանդի». որը Ն. Մառը համեմատում է մեր «գերանդի» բառի հետ, անշուշտ իրեն փոխառութիւն. 9) gabari (մեգրել.) „плоскогорье" «բարձրավանդակ», որը կիպչիձեն արտում է ga «բլուր» և bari «հովիտ» (равнина), բայց հնարավոր է, որ դա լինի փոխառութիւն հայոց գաւառ բառից. 10) մեգրելական arvani „ступка деревянная" առացվել է անշուշտ avan < havan բառից, որը կամ հայերենից է փոխ առած (հաւան «ամանդ»), որը իրանական բառ է, կամ թե անմիջապես այդ վերջինից (պահ. hāvan. ավեստ. hāvana, պարսկ. hāvan և այլն) կամ թուրքերենից (havan), որը նոյնպես փոխառալ է իրանականից: Լազ.-մեգր. kalmaxa „фонарь", «ջլհան» ավելի մոտ է հայոց «կարմրատախտ» բառին քան, վրաց kalmaxi:

Բնական է, որ հայերը ևս, որ այդքան շփվել են լազերի և մեգրելների հետ, բառեր և թեկուս ձևեր պիտի վերցնեին այդ լեզուներից: Ի հարկե բերել երկուսանք անդի ունեցած բոլոր փոխառութիւնները և ապացուցել այդ խնդիրը իհարկի հնարավոր չէ: Այսուամենայնիւ ևս ևս կամանանշեմ այն հայկական փոխառութիւնները լազուտեղ ևս ևս կամանանշեմ այն հայկական փոխառութիւնները լազուտեղ և

է լազերեն p'urji „почка", «բողբոջ», do-p'urje „сложился в почку, завязался, дал завязь": 3) Խամրել «թաղանել, թօշնել, փշանալ», խամուր արմատով (վարդախամար, դիւրախամար և այլն) բան ևս ավելի մօտ է լազամեգրելական xom- կամ xum- «չորանալ, չորացնել», xomula «չորացած, չոր», ձևերին, քան վրաց xmeli «չոր» ga-mxmari «չորացած, քարթմած» ձևերին xm- արմատով, ինչպես որ առաջարկում է Հ. Ամատունը (Արմ. բ., III, 354): 4) Կախալ (Մատթեոս, Կարին, Համշին, Տփղիս) «ընկույզ վրայի կճեպովը միասին» (Ա.ճ. Դասվ. բ., 540). Աշտարակում նշանակում է «կանաչ կեղեւը հանած (ծառը թող տալուց հետո) ընկույզ», կակալել «ընկույզը կանաչ կեղեւից հանել» (առում է նաև ձուն աճել) անշուշտ փոխառյալ է լազ.-մեգր. kakali—„орех" (Ռոպնում), „штука ореха, мелкого и грецкого" (Աբխազ, Վիցի), okakali (Վիցիում) очищать мелкий орех от шелухи (Марр. Гр. чанс. яз., 150) kakal-ua (մեգր.), „очищать орех от шелухи" (Кипш., Гр. мегр. яз., 251), թեպետ kakali բառը կա և բան վրացերենում (քարթմականում): 5) Կճիճ կամ կճուճ «պռոշ» (горшок), որ կան նաև բարբառներում (Ախց., Երև., Ջղ., Տփ., Խրբ, Ղրբ., Ագլ.) կճուճ ձևով, իսկ Սևրատեխում «գչիչ» և «գչիկ» (Արտկիրում ևս կճիկ) փոխառություն պիտի համարվի լազ-մեգրելական խմբից, նկատի ունենալով մեգր. čkji (ճկուջի), որից և čkudi (ճկուդի) «ռնօք», „сосуд", me-čkuje «բռնաւ», իսկ սա իր հերթին առացվել է čuj-<čur նախաբմատից (čk<č, j<r, ինչպես ցույց է տվել), որ և պահպանվել է հին վրացերենում՝ čuri (ճարի) „посуда, сосуда, кувшин винный" (տես Чуб., Груз.-рус. сл., 1887 г., էջ 1715—1716): 6) Ճղոպուր «ընկույզ» Ղարաբաղում, որ առաջացել է «ճապար» հին ձևից (ղ<ճ) և համընկնում է մեգր. čuburi «շագանակ» (каштан) բառի ձևով, բայց ոչ իմաստով, և լազո-մեգրելական հնչյունական համապատասխանությունն է վրաց (քարթ.) cabli (ծարլի) «շագանակ» բառին, վրաց լեզվում ևս կա čuburi (ըստ Чуб.-ի բառարանի), բայց ինարին որպես փոխառություն, որտեղից թեպետ անցել է և արևվելքի հայերին մինչև Ղարաբաղ, և կամ գուցե հին բալա (պալա) ցեղի գաղթի հետևանքով է (VII—III դարեր մեր էրայից առաջ) այդ լազ.-մեգր. *čobur-ը ձեացել է պարաբաղցիներին («բող» ցեղի) միջ: 7) Մոնի մի շարք անկերում (Դվ., Երև., Ղզ., Ղրբ., Ղրդ., Վն., Տփ.) նշանակել է «մանրի ընծայատու, վարդապետի քով ծառայող մանչ կամ աղջիկ տիրացու» (Ա.ճ., Դասվ. բառ., 793), ըստ Ս. Ամատու-

նաև բառարանի (էջ 488) այդ բառը Արտաշատում, Վանում, Լոռիում և Ալաշկերտում նշանակել է «աշակերտ, առաջնորդական վանական պաշտոն», որից մոնաբեթագ, մոնաբեթյան («աշակերտաբերյան») -ibid. Փոխառության պետք համարել մեգր. mot'a (հոգն. mot'alep'i) «թոռ, внук», լազ. mot'a (Ծասն. Վիցե), „детеныш: внук", Աբխազում՝ mont'a. Արխազերում՝ mont'ala „детеныш". Թվական իմաստները տարբերվում են (հայերենում մոնր իսկական նշանակել էր «փոքրաթիվ», որ հետո չէ «զավակ, детеныш» լազ-մեգրելական բառիմաստից)։ 8) Ոչխար „овца" փոխառյալ է նաև լազ-մեգրելական լեզուներից (= լազ. çxuri, մեգր. šxuri), որի վրացական ձևն է çxovari, çxvari «կենդանի, ոչխար», Թվական հայոց բառի սկզբի «ո» հնչյունի նշանակությունը ինձ ևս մութ է մնում (Թերևս երկու բազմաձայնից խուսափելու համար բառամիջում եղած «ո») čxovar (ձայնավորի կրկնության է)։ 9) Ճանճ կամ ճանճն փոխառության է նաև լեզուներից, ինչպես այդ մատնանշվել է Մառի, Աճառյանի կողմից նաև նախորդ բառի վերաբերմամբ, համեմատել մեգր. čanǰi, čandi «ճանճ, муха» (Н. Марр, К вопросу о ближайшем сродстве арм. яз. с иверским, ЗВО. հատ. XIX. 1909, էջ 1072), որի համեմատ վրացերենը ունի m-ceri (Մրժելի)-id։ 10) Կախում «շան ձագ» փոխառյալ է լուռ Հ. Աճառյանի կասկածյան լեզուներից, ի նկատի ունենալով վրաց lekvi «շան լակոտ», առաջին կոչյունը, լազերեն laki, lak'i, լաքի «շուն», lakoti «շան ձագ», ևս կավելացնեի նաև մեգր. lakvi, „щенок"։ Բայց ավելի ճիշտ կլիներ համարել լազերենից փոխառյալ թե՛ „a" ձայնավորի պատճառով, որը հատուկ է մեգրելերենին, և թե՛ -nua (լակոտ) վերջածանցի բնույթով, որը Ն. Մառը իզուր ուզում էր իգական սեռ համարել (տե՛ս Արմ. բառ., III. 143—144), որովհետև Աորպատականի թուրքերենում կա läkätä «լակոտ, տխմար» բառը -ät հնչմամբ։ 11) Ոչ անել (չոչել), Արտաշատում բարբառում նշանակում է «երեխայի չորեքթաթի դնալը», որը լուռ իս գալիս է մեգր. çoč-ua = վրաց čočva նույն իմաստով. բայց որովհետև մեգրաց „лапа" և վրաց t'at'i(id.) բառը տալիս է լազ.-մեգր. լեզուներում t'ot'i(id.), այսինքն՝ o ձայնավորով, իսկ çoč- նույն արմատի ձևախեղություններն է, ուստի հայոց և վրաց çoč- ձևերը պետք համարել այդ լեզուներից փոխառյալ (համեմատել մեգր. çoč-ua „лезть, ползти", Кипш., Грам. мегр. яз., 366)։ 12) Լոր (< լոգ) «լայն քար» (Արար., Լոռի, Ղազախ) հավանորեն փոխառյալ է լազ.-մեգր. լեզուներից. համեմատել մեգր. o-lage „порог

у ворот", որը Կիպշիձեն վրաց laji «քայլ» բառի հետ նույնացնում է համարում, և որի մեջ o-lage նշանակում է „место для шага, чтобы перешагнуть" (Грам. м. яз., 269)։ *13)* Կրակիր *Աշտարակում նշանակում է այն ընկույզը, որի միջուկը դժվար է դուրս դալիս. համեմատել լազ.* kerketa „твердый орех" (kerketa neji *«կերկեթա նեձի» = ամուր ընկույզ), որը գործ է ածվում և վրացերենում։ 14)* Խախուրր *«կոկորդ, глотка» (Վաղարշապատում) համընկնում է մասամբ մեգր.* xorxota „глотка" *բառին, բայց հավանորեն երկուսն էլ գալիս են խեթերեն* huharti *(խուխուրտի-) նույնիմաստ բառից, չլինելով մեկը մյուսից փոխառություն։ 15)* Փիճի- *մի տեսակ մայրի,* pinus sativa, *որը Հ. Աճառյանը (Արմ. բ., VI, 1229) համարում է փոխառյալ վրաց* p'ičvi *«մի տեսակ մայրի, сосна», մեգր.* pičvi, *լազ.* p'inčo *«մի տեսակ եղևնի»։ Այժմ էլ այդ բառը գործածական է Պոնտական շրջանում, հայոց Նաւարջուի, Հաճընի և Սվեդիայի բարբառներում, հին ժամանակ նաև վրաց պրոսկանության մեջ։ Հյուբշմանը վրացական ծագում է համարում հայերենից փոխ առած (*Arm. Gr., 397*)։*

ՈՉ ՓՈԽԱՌՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՑ-ԼԱԶԻ-ՄԵԳՐԵԼԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՆ

*Սոխ բառի ստուգաբանության հարցերում, մեղրելիներում և պարակներում իրավամբ տեսիլ էր տալիս Կ. Կիպշիձեին հարց դնել ոչ թե հայերենի փոխառության մասին պարակներից, ինչպես Հյուբշմանն էր ընդունում (*Arm. Gr., 238*), այլ ի նկատի ունենալով և մեգրելերեն (*soxi „лук, цыбуля"*) համարել պարակականը փոխառյալ հարեվանական լեզուներից։ Պարակներում այդ բառը (*sōx*) չի բացատրվում որևէ իրանյան ծագումով և բացակայում է այլ իրանյան բարբառներում (Հ. Աճ., Արմ. բ., VI, 316 «Բառիս ծագումն ու առաջարանության չէ»)։ Բայց և այնպես Հ. Աճառյանը հայոց սոխ բառը, որ գոյություն ունի նաև մեր բոլոր բարբառներում, բացառությամբ Ղարաբաղի և Շամախայի, իր «Արմ. բառարանում» դրել է որպես իրանականից փոխառյալ։*

Օշոշ „ромашка, երիցուկ, Фр., camomille", *գործածական է Արար., Կարինում և Ղարաբաղում, օշոշիկ կամ օշշուկ Մուշում (Աճ., Դաս. բառ., 1135, տե՛ս և Աճ., Հայոց բառ ու բան, 681)։ Համեմատել մեգր. (Кипш., 295) և վրաց* ošoša „будра, кротовик" (Чуб., 1001, ošmeša, ošoša, ošošia)։ *Չի կարելի դնել փոխառության խնդիր։ Հայերենում վերջածանց -ոշ (-օշ) մասնիկը հանդիպում է նաև այլ բառերի անուններին մեջ, ինչպես -ճշոշ, ին-*

շոշ, մոլոշ և այլն, թեպետ կա և ոչ բառասնուններին մեջ, ինչպես իրիկոշ, լմիկոշ, թմիկոշ, դանդալոշ, պրիկոշ, մոթոշ և այլ ածականներում:

Ականջ „ухо" համարում եմ լազո-մեգրելական kuǰi «ականջ» բառին ազգակից, առացված նախնական a-kvar ձևից, որպես դուդանեա լազո-մեգր. և վրաց kuri-ին: Համեմատել, օրինակ, լազ. kwari (kuari) և kuri «ազռավ» և մյուս կողմից v հնչյունին անկման համար kwali (խոպա) kali (Աթինա) «պանիր» հայոց ոչխար > ոչխար և այլն, իսկ r > ǰ տոպրակական հնչյունափոխություն է այդ լազո-մեգր. և հարիսական (հայաստական) լեզուներում, ինչպես լազո-մեգր. piǰi «բնթան, դեմք, ատ» և վրաց piri(id.), p'uǰi «կոմ» վրաց p'uri(id.), (ǰiǰi > ǰindǰi), «արմատ» և վրաց jiri (ձիրի) -id և այլն, իսկ հետագայում ǰ բաղաձայնից առաջ մանում է n (ն): Այնպես որ a-kwar > akwaǰ > akaǰ > akanǰ: Հնդեվրոպականները հայոց ականջ բառը, որ դրաբարում հոդնակի ձևով էր (ականջ-ք), ցանկանում են ուղիղ բառի նրիկին դարձնել, ինչպես աչք և ակն (Meillet), բայց, ինչպես Հ. Աճառյանն է ասում (Արմ. բ., I, 79) «Չնայելս շատ այլափոխված է ականջը և ստուգաբանորեն դժվար բացատրելի. ապրվելով աչք բառից, սա [akan-] էլ ստացել է չք հատկությունը, որ հետո դարձել է ջ՝ նախորդ ընդհանրի պատճառով: Ինչպես անանուն ենք, պատճառաբանությունը շատ թույլ է և բանաստրոսիկ [ա(ն)կն > an-kan > akanč-k' > akanǰ-k?!]: Հայոց ականջ բառը ազգակից է լազո-մեգր. kuǰ-i «ականջ» բառին, բայց ոչ փոխառյալ:

Երինջ «էգ հորթ» Ն. Մառը իրավամբ կապակցեց մեգր. oriǰi կամ orinǰi «առվար» (սկոտ), orǰi «կով» բառերի հետ, միացնելով նաև հայոց արջառ «խոշոր եղջյուրավոր անասուն» (Н. Марр, Яфет. элементы в яз. Армении. ИАН. 1912, էջ 834): Ն. Մառը հայոց երինջ և արջառ բառերը համարում էր փոխառություն մեգրելականից, իսկ Հ. Աճառյանը ընդհակառակն է ընդունում, որովհետև վրացերենից փոխառությունը համարելը «ճիշտ կլիներ միայն այն դեպքում, երբ այդ [երինջ] բառը արդի կոլխատան մի որևէ լեզվի մեջ էլ գոյություն ունենար լիներ (Արմ. բ., II, 820—821): Լատ. խս, Գոնատս-Կոլխիդա, ինչպես և Հայաստա երկրամասերում եղել են երկու ձևով արմատներ, մեկը հայաստական arǐ ‖ erǐ տոպրակական a ‖ e նախահնչյունով, որ շատ տարածված էր նաև խեթերենում և խուռիտերենում, իսկ մյուս արմատաձևը՝ orǐ, որը հատուկ է եղել այդ լազոմեգրելական ճյուղին, և մի կողմից ունենք

arij-al>արջառ, *erij*>*erinj* իսկ մյուս կողմից *orijï* և *orinjï* այր «ա» բաղադրիչը (erinj, orinjï նորամուտ է) և or(i)j-ի: Փոխառությունը հարցը, ինչպես տեսանում ենք, դուրս է բնիկում, եթե նկատի ենք ունենում հայերի և հարևանների լեզվի ծագումը հայաստից, որը մոտ էր վրացական ցեղերին:

ձխիլ «փորոտիք, աղիք», ճխլ-ել (Երև., Տփ.), ճղլ-ել (Տրապ.) «ճմլել, ճզմել, անդադար ճնշել» (դյուրը՝ ճղլել), ճղլուկ (Նոր.) «շատ հանելով կախված» (օրինակ, ճխլուկ ծիրան), ճխլատրել (Ախալք.), «ճմլրթիկել, տրտնել», ճխլտոմել (Երև.) «ճզմվել, ճնշվել» և այլն շատ մոտ են հնչում մեգրելական cilix-ua (ծխլխ-ուա) „сжимать, выжимать" լազ. cilax- (ծխլախ-) ocilaxu „давить руками, выжимать сок руками": Հայոց բառարմատը ճխլ< *ճխխլ ավելի մոտ է մեգր. cilix-ին քան լազ. cilax-ին, իսկ իր «ճ» բաղաձայնով ավելի է արտահայտում այդ լազ-մեգր. շչակատեսքան կոմառանատիպը, քան իրենք են պահել: Թևակոտ բառ մեր գավառական բառարաններում (Ածառյան, Ամատունու) այդ ճխլ արմատը գործածական է մեր բարբառների հյուսիսային հատվածում (Արտ., Լոռի, Ղազախ, Բորչալու, Տրապ.), մոտ վրացական լեզվախմբին, անհետանկնալով գծված է դնել անմիջական փոխառության խնդիր լազ-մեգրելականից (վրացերենում այդ արմատը չկա):

Գատահատան նամանավյուն կարելի է անանել մուրճ „молот" «չաքուչ» բառի և լազ. burçuli (բուրճուլի) «առատար կնոջիկով» բառերի մեջ, ինչպես նաև լազ. kudi (Վիցեսում) «մեծ ու թռչուն, որ նստում է փտած ծառատեղերի վրա և խրում է կտուցով» m-kudi (Արխավուրում) „дятел" և մեր բարբառային ծառկուտուր „дятел" բառերի արմատները (kut-) մեջ, քանի որ դա բնաձայնական է (կուտ-կուտ, նման ռուսաց тук-тук) և այլն:

Բայց մի բան է պահված մեգրելերենում, որը նեղ ճիշտ է իմ կողմից առաջարկվում, ապա մեծ արժեքական նշանակություն կարող է ունենալ: Դա p'ap'ala „обрыв, пропасть" բառն է: Նեղ ածանող -ala ընդունելը որպես ածանց, ինչպես boši «տղա» և bošala «երիտասարդություն, քաջություն», kazaxi «պետպարի. կազակ» և kazaxala «տղերմություն» և այլն, այն ժամանակ այդ p'ap'- արմատը ևս կիսագոհկեի մեր փամբ (փամփ) լեռան անվան հետ, որից Փամբակ, հետո Փարաքլին պատմական հետ, որը գտնվում է Բաղրեշի ձորի լանջի վրա, իսկ հունական pab- «ապր, լեռ», որից հատուկ անուն Paphi կամ Pab-hi «լեռնային», տարած-

baba «տատ, լեռ», հայոց պամպ (Մ. Ռեհաքեցու մոտ) «բարձր տեղ», բաբա (Երեմիա Մեղրեցու բառարանում) «բլուր, ափափայ «դժվար և ապառաժ տեղեր»: Մեղրելերեն p'ap'-ala իրար նշանակելու է «լեռնաշխարհ, ապառաժոտություն», այսպես ասած «տարի (լեռան) հասակություն»: Այդ p'ap'- բառի մասերը արևմտյան վրացատառ կարդալ էր լինել կամ հին հայերի միջոցով և կամ այն խալդերի (ուրարտական ցեղերի) միջոցով, որոնք xaldai- անվան տակ անցավոխվելիցին լազերի մոտ՝ Ճանիկա < Ճանիկա (Խալդիա): Այս պատմական երևույթի հետ լուսո էս պիտի կապակցել մեղրելական երկու լեզվաղների մեջ մնացած ուրարտա-խեթերական անունները: Մեկը Ant'ari-žina աստվածանունն է, որի հիշատակը մեղրելերը կատարում են Մեծ Պասի սկսվելուց նախորդ օրը, ընթրիքի ժամանակ, առնելով հատուկ պատրաստված հաց, մեջը դրված կոնաձև պանրով: Տան տերը, որին ընկնում է հացի այդ պանրավոր մասը, պոռթք է անում հացը կտրելուց և բաժանելուց հետո և խնդրում է այդ Ant'ari-žini-ին, որ նա շատացնի անասունների քանակը: Ի. Կիպշիձեն, բնութագրելով այդ լեզվաղն իր մանրամասնություններով (Грам. иверс. яз., 194—195), ցանկանում է այդ անունը առաջարկել արիստական alt'ari „бог, покровитель скота и хуторского хозяйства" բնական է նկատի ունի և արխ. ança, ançwa «աստված»: Բայց նա լուսո էս իրար է խառնակարում այդ միհռանական Ant'ari-žini-ն, որ բերված է Сборник материалов по описанию племен и местностей Кавказа, հատոր XXXII, բաժ. III, էջ 99—100, և պատահարում žini Ant'ari իրրև մեղրելական žini «վերին, երկնային», որը սովորաբար սկզբում է գրվում (համեմատել žini boria «վերին քամի», žiniši ort'a «վերին օրթա», žino-šk'ua «աղնվական», žin-malu «վերև թռչող ուրուր»): Պետք չէ վերապատմելով և խառնակելով: Այդ անակնկալից ևս այդ Ant'ari-žina-ն կհամեմատանի աստվածական տերմիններում բերված մի անվանատրի (эпоним) հետ, որ ապրում էր Ադադ-Նիրարի I ժամանակ (1310—1280) և կոչվում էր Andari-sini. Ծան Սոդենը այդ անունը համարում է հնդիրանական և տեսնում է հրեղկական Indra-sena անվան մեջ: Սրա առաջին մասը պետք է տեսնել լուսո էս ուրարտական Andaria անվան մեջ, որ կառավարում էր Շատրիա (Տիգրանակերտի) շրջանը Ասորեստանիպալի ժամանակ (VII դարի վերջը), Թողած դեռ խառնիական Antar-ati (կա և Antar-atli). Antare արտահայտությունները, իսկ երկրորդ žini մասը, որ գրվում է, պետք է տեսնել մի շարք խառնիական և ուրար-

ասկան անուններին մեջ -şina (-şini), -sina, -zina (zini), -zana (-zani) մասով, ինչպես խեթերական անուններն են (Նոպիից)— Paişina, Paizana, Purnazini, Bir(i)azina, Uttazina, Ambizina և այլն: Ուրարտական մի արձանագրության մեջ հիշվում է Էմխուանի երկրի (= Ուրարտ. նահանգ) Diuşini թագավորությունը (H. Mapp и И. Орбели, Археол. эксп., 1916 г. в Ван, стр. 47. II այուռնակ, տող 51): Այդ -şina ‖ -şini կամ -zina ‖ -zini մասը անշուշտ հնչելիս է -žina ‖ -zini, որովհետև բնևռատիրը չի տալիս ž հնչյունը և այդ պատճառով է ş, z և միևնույն ժամանակ s գրությամբ (E. Speiser-ը առաջարկում է գրել z̄), ինչ ճիշտ այդ հնչումը պետք է ունենալ Antari-sina, այսինքն՝ մեզ. Ant'ari-žina աստվածանվան և հայոց Արաժին Aražin (անգամանք է) նմանատիպ աստվածանվան մեջ: Հիշած Pai-şina, Andari-sina և Diuşini պրանուններին առաջին կոմպոնենտները նույնպես աստվածանուններ են. -Pai (պալ. պայկ „фави, пан"), Andar= հնդկական Indra ավեստ. Andra, որը Գ. Կրիչմերը ցանկանում է ֆոնետիկական նմանություն համարել խեթ. Inara աստվածանունից, որը նույնպես դիմաստան («վիշապասպան») էր. ինչ էմխուանյան թագավոր Diu-şini-ն (Իպանդյան, Իպանդի որդի) նույնպես պարունակում է աստվածային (Ձևոփոր) կազմություն, ուր diu- մասը համապատասխանում է հնդկական dēv «աստված» (իրանականում՝ դև «չար աստված»):

Մյուս մեղրելական լեգենդը, որ արտացոլում է նման ուրարտական ներքում, դա Aram-xutu կամ Eram-xutu հերոսի մասին է, որ կարդում ենք նույնպես Ի. Կրիչմեանի մոտ (էջ 196), քաղած պրոֆ. Յագիչից „Мингрельские этюды" (I, 72) և վերոհիշյալ Сборник-ից (XVIII, отд. III, էջեր 49—58): Այդ հերոս-հսկան հայտնի է դառնում իր խեղդամահ հարձակումներով Ջամբ գյուղի վրա (Ջուգդիդիի գավառակում), բայց ի վերջո հաղթվում է ջամբցիների կողմից, որոնց օգնում են սուրբ Գեորգի և սուրբ Կլիմիկվի (—Կիրակոս) պատկերները՝ իրենց ձիերով, որ նույն տեսքն էին:

Այդ Արամխուտուի գլուխը և դեմքերը մատուցվում են սրբերի պատկերներին, մանավանդ Գեորգիի և նրա մի հսկա մանակը երկաթե գլխով, որը իբր հետո էլ գտնվում է ս. Գեորգի տեղական եկեղեցում, բայց իրոք դա մի տեղական մանակ է, որ հետները մաս են ածում լեռնականները: Արամ-խուտուն համապատասխանում է կամ ալան (հյուսիսային Կովկասի կարաչայ-բալկար), կամ չերկեզ-կաբարդացի և կամ արխազ (ibid.): Մեղրելերենում կամ խեռու կամ

խուռռու ալրանուն և խնամուշմուխուրի կամ Նուռուշ-Մախուրի անունով դյուղ Սամուրզականի շրջանում (ib., 400)։ Բայց արդյոք այդ xuțu-ն ուրարտերեն ḫuṭu բառը չէ, որ նշանակել է «քաջ» (տե՛ս, օրինակ, Արգիշտիի խորխորյան արձ. VII, տողեր 15—16)։ «Քաջերը ինձ ռազմամարտությունն ՈՇ = ZLKARU „мужество“ (արվեց, և քաջությունն և ուժ»)։ Այդ ḫu-ṭutubi բառի արմատը կա Ḫuṭuini ասոլոժանների մեջ, ինչպես խեթական inara— նշանակում է թե՛ «քաջություն, արիություն», թե՛ այդ իմաստով ասոլոժանուն է (—սեռներ. KAL) և թե՛ ալրանուն է։ Իսկ Aram անունը թևերեա ուրարտական հայտնի Arame թագավորի անունն է (IX դար), որ այդքան քաջություններ է արել նաև հայոց ավանդություններում (ըստ Մ. Խորենացու)։ Պետք է ենթադրել, որ ուրարտական պետության այլևայլ ցեղեր այդ թագավորի, ինչպես և Արա-Շամիրամի շուրջը առնծել էին բազմաթիվ զրույցներ, և հավանորեն այդ ցեղերի մի քանիսի միջոցով նման պատմություն անցել է մեր ծովի ափերին գտնվող վրացական որոշ ցեղերին կամ ժողովուրդներին, որոնք հետագայում փոխելով ու փոփոխելով այն ըստ պատմական իրադրության, կապել են արդեն քրիստոնեական շրջանի և շրջակա ժողովուրդների հետ (ալան, չերքեզ, արխազ), սակայն հիմնականում պահելով անուններըը —Aram-xuṭu «Արամ քաջ» և Antari-sina «Անդար ատամած» (?)։

* * *

Ի վերջո ավելորդ չեմ համարում, բացի վերոհիշյալ բառային ընդհանրություններից, ընդգծել և մի քանի բնութագրական ատեստավորություններ, որ հատկապես հատուկ է հայերենին և լազ-մեգրելերենին, թեպետ ընդհանրապես պիտի շեշտել, որ ձևաբանական կառուցվածքը հայերենի և վրացական ողջ լեզվաընտանիքի միջև բավական տարբեր է և արտացոլում է այլ լեզվատեսակային կարգություն, մանավանդ բայերի անձերի տարբեր ըմբռնումով, և այդ առանձնահատուկ ներքակցի տարբեր ձևակերպումով բայի դերծաղկությունը ոչ միայն դիմավոր տարբերակով մասնիկներով է, որ տարօրինակ է լեզուներում, այլև օրինակով (անմիջական և կողմնակի) վերաբերյալ մասնիկներով, որ դրսում է դիմավոր բայի սեռերում։ Սեռերի (роды) առանձնացից վերջ լեզուները և հայերենը մոտ են իրար, եթե չհաշվենք m նախամասնիկի մնացած դրությունը, որ անունների մեջ մարդկի է ցույց տալիս և գալիս է վրացերենի կովանունների մեջ մարդկի է ցույց տալիս և գալիս է վրացերենի կով-

կապան աբխազերենից, ինչպես ցույց է տվել առաջին անգամ ակադ. Ն. Ջավախիշվիլին, և այժմ ընդունված է վրացագիտների կողմից: Բնական էրների և կննդանիների անուններին մեջ ևս միացած լինել նման մեռած տեսանիշ:

Հայոց լեզվում, որ ազգքան մոտ կողմեր ունի լազո-մեգրելական հետ, և քանի որ ավելի հին ձևով է միացել (V դարից) գրավոր վաստաթղթերում, երբեմն կարող է տալ լեզվական իրավիճակներին այնպիսի վկայում, որ չի պահել այդ լազո-մեգրելական խումբը: Օրինակ, այդ լեզուներում տեղ ունեցել են |>ž, ինչպես ori>juri>žuri «երկու», Jordania>Žordania, Jakobia>Žakobia և այլն: Ն. Մառը այդ հնչյունափոխությունը երևի նկատի ուներ, որ առաջարկում էր հայոց յոլով «շատ» և ժողով բառերի ազգակցությունը. թեպետ պետք է ընդգծել, որ jolov ձևը չի վկայված լազերենում կամ մեգրելերենում, որ կարող էր և չլինել և հատուկ լինել միայն Փոքր և Բարձր Հայքի (Հայասայի) հայ լեզուներին:

Եթե խոսենք ձևաբանության մասին, ապա պետք կա պատմական որոշ կոնկրետությամբ պետք է ցուցադրել, նկատի ունենալով ոչ միայն հայկական և լազո-մեգրելական ավյալները ավյալ պահ կամ այն ժամանակում, այլև ավելի ընդարձակ «լեզվաընտանեք»: Օրինակ, մեգրելերենում գործիականն հոլովի վերջավորությունը -t' -t'i (լազերենում՝ -t'e) հանդում է սեռական -ši (կամ -še) ձևից, „путем тупого подъема... š в t'" (Кипш., 022—023, տե՛ս նաև Н. Марр, Грам. чан. яз., § 16, в. „тупым подъемом согласного š в t' род. п. še дифференцирован в t' и использован в качестве твор. падежа): Համարյա նույն ձևով է բացատրվում նաև քարթվելական գործիական հոլովի -it' վերջավորությունը: Բայց չէ որ կա բնականոր խոշոնում նույն գործիականը -it հոլովաձևով, ինչպես և հինդուլերի խոշոնում -ta („Abl.-Instr.")[1] նույն հոլովաձևը, որ հնդեվրոպագետներից ամանք ցանկանում են նախալեզվի -ot բացառականի ձևից հանել (ռուս. od, առնս. -at): Վրացերենում գործիական այդ -it' ձևը (=մեգր. -t', -ti, լազ. -t'e) մի ժամանակ նաև բացառականի իմաստ էլ է արտահայտել՝ օր. ավելաբարում՝ k'alak'it'a k'alakad «ի քաղաքէ ի քաղաք», ինչպես և հայոց որոշ բարբառների (գրական լեզվի նույնպես) -y վերջավորությունը, որ առաջացել է «թ»-ից (հոտոթ, հնոթ, մանկոթ...): Ուրեմն -i't ‖ t' վերջավորությունը խոշոնում (բնական

[1] Տե՛ս I. Gelb, Hittite hieroglyphs, III, 1942, Chicago, էջ 41:

դեր և հիներդլիֆ) վրացերենում և լազո-մեգրելականում, ինչպես նաև հայոց որոշ բարբառներում («ց» —հոգուց, քարից) ցույց են տալիս, որ *որոշ ստրածութիյան մեջ բնակվող ցեղերի լեզվում եղել է այդ t՝ մորֆեմատիվ գործիականո-բացառական (կամ բաց.-գործ.) միասնական հոլովաձև, ինչպես ունենք բասխներենում մի Ablativus և Instrumentalis հոլովաձև:

Փոքրասիական հին լեզուների այս կապակցութիյան մեջ թևերևս պետք է ծագումնաբանորեն դիտել և մեգրելական նեղիա դերբայի -enǰ ‖ -end վերջավորանիկը, ինչպես lur- «քնել» բայից lurenǰi «քնած» (спящий, Кипш., 274), ma- նախածանցով և -enǰi, ինչպես r «գոյութիյուն ունենալ, կալ» արմատից՝ ma-r-enj-i «էականո, գոնվող» („спящий, находящийся"): Անթևրենում հայոնի է նեղիա դերբայի -anza ‖ -anda, որ չեղոք բնույթ ունի կամ կրավորական: Բայց մեգրելականում ունենք նաև -inǰa ‖ -inda, օրինակ, šk'ūrinǰa ‖ šk'urinda «վախկոտ», čk'orinǰa «բարկացկոտ» և այլն:

Մեզ այստեղ հետաքրքրում է լազո-մեգրելական ձևաբանութիյան ազդեցութիյունը հայերենի վրա, որ բնականորեն թևքմանմեջ ի հայտ չէր գա, բայց բառակազմութիյան մեջ հետարտոր էր, քանի որ լեզուների փոխհարաբերութիյան խնդրում լրջորեն հետա բառակազմութիյունն է իր ժամանցներով ևնթարկվում փոխվելուն և յուրացմանո:

Այս կողմից ևս կմատնանշենի հայոց -ար կամ -եր մասնիկը, որ հատկացում է ցույց տալիս, բայց բարդված (հավելացած) ուրիշ ժամանցներով՝ -էն (-ēn) և -իմ (-im), ինչպես հայերեն, հուսնարեն... մտերիմ, հաւատարիմ, խոկ -ի-ն և -իմ մասնիկները առանձին ևս ունենում ենք նաև -կանաչ-ի-ն, լուսի-ն..., ուշիմ, խոհիմ և նմանների մեջ: Համեմատել լազ. noγ-ar-i՝ «քաղաքային, քաղաքացի, վաճառական» (noγa «քաղաք, շուկա»), pulera «տաղային» (pula Աբխազում և վիժում «Աստ»), žangeri «ժանդրտա» (žangi «ժանդ»), šoleri «թուշած» (šol- «թուշկ») և այլն:

Հայերենում փոխառութիյուն պիտի համարել -ší մասնիկը, ինչպես լայնշի, բոլորշի և այլն, ի նկատի ունենալով մեր. p'ar-t'aše «բացնշի, ապատարեն» (широко, раскрыто, настежь). dγoši «օրինակ» (dγa «օր»), xološi («մատաղտոր, մոտի»), (близкий, xolo «մոտ»), (ordo «առաջատ» բառից), բառից)... լազ. ordoši «առաջատյան» որը թևրևս կա հայոց վաղորդայն «վաղ առավոտ» բառի մեջ -այն

ածանցով, ինչպես որով -այն դոյականի մեջ, seriši „ночной" xeši «ձևանալին, խաբուս» (xe «ձևանք») և այլն և այլն:

Մեզրևլերենում կա բայից կազմվող անվան կազմութիւն -u ածանցով, ինչպես dgum-u «դնող» (ставящий), k'ot'am-u «ձգող, նետաձիգ» (бросающий стрелок), ասի Кипшидзе-ի մոտ, էջ 94, որոնց հետ անմիջապես համընկնում է հայոց՝ հասու, հոգաբարձու, հասու, ապրու և այլ նմանները: Ըստ այդ ձևը լայնորեն: Դժվար է հայոց ձևը համարել փոխառութիւն, իր արտադրիչով ածականից, որ այսօր էլ դեռ ներգործուն է:

Բայց հայոց համշենի բարբառը դուրս է ածում այդ բայի անորոշ ձևի -ուշ վերջավորութիւնը, ինչպես ասուշ «ասելի», խմուշ «խմելի» և այլն: Մեզրևլերենը ունի -uša նույն ձևը supinum-ի համար, ինչպես Ի. Կիպշիձեն է ասում (էջեր 095—096), օրինակ, o-t'as-uša „для посева, чтобы посеять", mi-o-zadap'-uša „чтобы встретить, навстречу" և այլն, որը կարող է փոխարինվել -alo ձևով (o-čar-alo „чтобы писать, для писания" miozadap'ulo" на встречу, чтобы встретить"):

Մեզրևլերեն այդ -uša (= -alo) հավասար է մեր արժման -ելու, -ալու (ասելու, կարդալու), որ առաջացել է հին -ելոյ, -ալոյ դերբայական ձևից (արևել. հոլ. անորոշից): Ինչպես գիտենք, համշենցիները ապրում էին Ճորոխի հովտում և հետևապես բաժանված էին մեզրևլերից Աջարիայով և Գուրիայով, որոնցից հյուսիս են ապրում միայն մեզրևլերը (Սամուրզականի և Ջավախքի, ինչպես Սևանակի շրջաններում), բայց հայոց այդ բարբառի -ուշ վերջավորութիւնը կամ վկայում է այն պատմական իրողութիւնը, երբ մեզրևլերը և լազերը դեռ չէին անջատված և կամ այն, որ մեզրևլերեն այդ -uša ձևը հասուկ է եղել և լազերին, որոնք արժմ չեն գործածում, բայց մի՛ժամանակ ունեցել են և հայերը, նրանցից փոխ են առել:

Ես պետք չեմ խոսել իմ մեր բարբառներին կամ մասնիկի մասին, որը առնվում է առնականի նշանակի ներկա և անցյալի անկատար և կամ պարզ առնականի ապառնի և անցյալի ապառնի ժամանակներում փոխ առնված լինելով լազերեն լեզվից, թեպետ այսպես պետք է մտածենք, որ դա (oko > ko «աչքի») ընդհանուր լազո-մեզրևլերեն նշանակիչ է: Համեմատել նաև մեզրևլերեն պարզ առնական նշանակը (условное наклонение) ապրեսից կամ անցյալ անկատարից այդ ko-ի հավելմամբ վերջից -b-čari-ko „чтобы я писал, если бы я писал" (2 դ. čari-ko, 3 դ. čaru-ko

և այլն) կամ b-čarundi-ko, čarundi-ko և այլն (Кипшидзе, էջ 068—069, § 78): Նշանակալից է, որ ko մասնիկի գործածությունը կա արևմտյան լազերենում (Աֆինա և Վիծե-Արխավա ենթաբարբառներում) և մեգրելերենում, իսկ դրանց միջև ընկած Հոպեի բարբառում ապառնին առնդծված է բայանձին ավելացնելով minon «ցանկանում եմ», ginon «ցանկանում ես», unon «ցանկանում է»:

Նմանապես մեր «անկատար դերբայի» -ում վերջավորությունը, որը համապատասխանում է հնդեվրոպական հոլովի ձև („um" բարբառներում), համընկնում է ճանապարհ (լազական) նման ձևին -b-čar-um, čar-um, čar-um-s և այլն, որը (-um) այլ ձևափոխություններով (-up' -ob և այլն) հատուկ է ողջ քարթվելական լեզվախմբին: Ինձ թվում է, որ ճիշտ է ակադ. Ա. Շանիձեի առաջարկը, ըստ որի նոր հայերենի այդ -ում մասնիկը անցում է լազո-մեգրելական լեզուներից:

Վերջապես պետք ընդգծել և բարդ բառերի կազմության նմանությունները լազո-մեգրելական լեզուների և հայերենի մեջ: Օրինակ, լազ. ունենք cianuri-mianuri „давний, предавний", որ հիշեցնում է մեր հաց-մաց, խճճել-մճճել և այլն. կամ լազ. mǰveši-mǰvuši „древний, предревний", որ ձևափոխությամբ նման է մեր մանր-մունր, խառն-խուռն և նման կազմություններին, ուր արմատի ձայնավորն է տարատեսակվում: Ինարկե կան և տարբերություններ կրկնավորների կազմականների ձևափոխությունների մեջ, որոնց քննությունը այստեղ տեղին չէ:

Որպես եզրակացություն կարելի է ասել, որ փաստ է հայոց լեզվի, թե՛ գրաբարի և թե՛ բարբառների, սերտ առնչակցությունը լազո-մեգրելական լեզվախմբի հետ, և այդ արտացոլում է թե՛ տարբեր ժամանակաշրջաններ, որ պետք է ավելի կոնկրետացվի, և թե՛ ապացուցում է, որ հայացման պրոցեսում, ինչպես մատաժ և հետո, հայկական ցեղաֆեմիններն (haia, azzi, bala...) հիմնական կերպով առհասարակվել և խառնվել ու ներթափանցվել են վրացական այդ արևմտյան ցեղերի ու լեզուների հետ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՊԱԲՈՒՆ ԽՈՒՄԲ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԵՏ

Արդեն քանիցս նշվել է, որ Հայասա-Ազզի ցեղերը, կիմմերների ասպատակութիւնների հետևանքով, ստիպված էին մեծ մասամբ թողնել իրենց վաղեմի բնօրրանն՝ Վերին Եփրատի (Կարասուի) շրջաններըը, որոնք հետագայում մտնում էին Փոքր և Բարձր Հայքերի մեջ։ Այդ ցեղերը միացած հարևան բուլայրինների հետ, որոնք հայասալինների նման էին, դաղթեցին Արտքոի հովտով դեպի արևելք և Եփրատի հովտով դեպի հարավ մինչև Արածանիի ստորին հոսանքը և այնուհետև դեպի հին հայոց Տարոնի—Աղձնիքը, տարածվելով Տիգրիսի վերին հոսանքի վտակների ավազանում։ Այդ վերջին անցումն էին դանվում բևեռագիր աղբյուրների Աբիմե (—հայոց Անգեղ տուն) և Շուպրիա (արժմյան Մուֆաբկին—Տիգրանակերտ) երկրները։ Ասուրական աղբյուրների բազմաթիվ վկայութիւններով դրանք միշտ միասին էին հանդես գալիս և դիմադրում ու երբեմն էլ դաշնակցում էին ասորեստանցիներին, ինչպես Անդարբայի ժամանակ, որ ապստամբել էր Ասուրբանիպալի դեմ։ Դիտական աղբի հետազոտութիւններով ընդունված է, որ այդ ցեղերը, ընդհուպ մինչև Վանի լճի հարավային ափամերձները, կազմում էին խուռիտա-ուրարտական վերջին բնագավառը, ուր դեռ VIII դարում խոսվում էր այդ լեզվով և դեռ լիովին չէին ձուլվել ասիրացների կողմից։ Արիմե կամ Արմե հետագայում հայտնի է դառնում Բեհիստունի պարսից արձանագրութեան մեջ Armina *անունով նոր* -ina *ածանցով, ինչպես ասորվածին* Ḫatina, Naharina, Urartina *(կամ* Urrar-

tina), Nasibina (Մծբին) և այլն։ Հայասպինները, որ բռնել էին Ar(i)me>Armina և Šupria խուռիանների այդ նախկին երկրամասները, VII—VI դարերի ընթացքում քաղաքականորեն արդեն այդ արիմ խուռիանների և կազմալուծված Ուրարտուի դերն էին ստանձնել և պարսիկ մոգացիների կողմից իրենց հայտնի Արմինայի ժողովուրդն էին հաշվվում, ինչպես ասատրարտելացիների նույն ժամանակվա հարցորդմամբ դրանք էլի նախկին իրենց ծանոթ ուրարտացիքն էին, այսինքն՝ բռնել էին Ուրարտու պետության քաղաքական անունը։ Գնաք է ենթադրել, որ Տիգրիսի այդ վերին հոսանքում ընկած և լեռներով պաշտպանված տարածությունները, ի մեջ առյալ Թևրիզ և Տարոնը, խոսում էին խուռիական դեռ ևնացած բարբառներով (VII—VI դարերում), իսկ Ծոփքում իշխում էր խեթերենը, գոնե VIII դարում, դառնալով ուրարտական արձանագրությունների։ Ենթերն ևս այդ ժամանակ սկսել էին տապագրվանալ, կորցնելով իրենց լեզուն և անհետանալով որպես ժողովուրդ չորրորդ դարում (մեր էրայից առաջ)։ Էթնիկորեն այդ ամբողջ շրջանում, սկսած Ծոփքից (խեթական նախկին սերտքի) և վերջացնելով Անդեղտուն (Armina) և Սղերդի—Մոքարկինի մարդերը, ուր դեռ ևնացել էին շուրարի-խուռիանները, ամենաառաջին տարրը հանդիսացան նկիզոր հայա-բալալցիները, որոնք և ենթարկեցին ու ձուլեցին այդ արդեն խառնված ժողովուրդներին ու ցեղերին։ Հայ ժողովրդի էթնիկական և լեզվի հիմնական ֆորմացիան (կորիզը) այդ կերպ է եղել, վերջանալով երրորդ դարում, երբ հայերը յուրացրին ողջ Ուրարտուի և շրջակա երկրների որոշ տարածությունները, որոնք հայացվեցին։ Ամենաառաջին էթնիկական լեզուները այդ ամբողջի մեջ բնականաբար պետք է լինեին խուռիաբենը և նրան մասամբ ապագիից ուրարտերենը։ Այդ տեսակետից մենք պետք է հետաքրքրվենք չափ ի հայոց բերնեք լեզվական այն տարրերը, որոնք այդ լեզուներից մնել են հայոց լեզվի մեջ, թե՛ դրարարի և թե՛ բարբառների։ Եվ այդ տեսակետից մեծ հետաքրքրություն և պատմական արժեք են ստանում մասնավորապես այն լեզվական հանդիպումները, որ զուգադիպում են սեռական հայ բարբառների և հին նույն տեղի խուռիական և ուրարտական լեզուներին։ Բայց որովհետև ուրարտական և խուռիական այդ լեզուների շատ տարրերը (բառեր և ձևեր) մեզ ևնում են դեռ անբմբռնելի, ուստի տարրի բերվող մեր այս լեզվական համեմատական ուսումնասիրությունը հարկավ կլինի շատ թերի։

Մեսի լեզվից մեզ հասնելիք քանակով վկայություններ ունենք, ինչպես 1887 թ. Եգիպտոսի Թել էլ-Ամարնա պետում (նախկին ասանդ Փարաոն Ամենհոտեպ IV-ի) հայտնաբերված թագավորական արխիվի (358 փաստաթուղթ) մեջ Միտաննի պետության թագավոր Տուշրատտայի հղչակավոր նամակը պրած Ամենհոտեպ III-ին: Այս նամակը, որ խեթերեն է և պատկանում է 496 տող (սկզբի 7 տողը, որպես հանդիսավոր սղջուկ, գրված է սկկագրերեն), մինչև հիմա էլ ամենամարելին է ցարմ հայտնաբերված խեթերական բոլոր փաստաթղթերում և գրված է ժողովրդական պարզ լեզվով: Բողազ-քյոյ գյուղի (հին Հատտուսա քաղաքը) խեթական թագավորների արխիվում ևս հայտնաբերված են խեթերական բնագրեր պրագրություններ, ընդհանուր քանակով մոտ հազար տող, որոնք լեզվով և ժամանակով մոտ են Միտաննիի նամակին, բայց ոչ նույնը, և մեծ մասամբ ծիսական-դիցարանական բնույթ են կրում, բայի Դիլեպամելի էպոսի թարգմանության պատառիկից: Բիչ են օգնում այդ բնագրերի հասկացմանը Ուգա-Շամրայում վերջերս գտնված բազմաձյնագիր բնևագրեր առանձնորները, որոնցից գլխավորն ունի 62 տող (17 պարագրաֆի վերածված), իրրև կոչ աստվածներին, չհաշված առանձին մի քերթ աստվածանուններով: Այդ Ուգա-Շամրայում (հին Ուգարիտ, հյուսիսային Սիրիա) գտնվել է և սեպագրա-խեթերական բառարան (135 բառերի թարգմանություն, բայց մասամբ կոտրված), որը ավելի է նպաստում խեթերենի վերծանման առաջընթացին, թեպետ ընդունելում է, որ այդ խեթերենը մի առանձին բարբառ է եղել: Վերջապես հին Մարի արվարձանում, այսինքն՝ այժմյան Թել-Հարիրի շրջանում, ուր Եփրատը վտակը թափվում է Եփրատ, գտնված են խեթերական շատ բնևագրեր պրագրություններ, որոնք Համմուրապիի ժամանակաշրջանից են և կրոնական բնույթ են կրում:

Դիտնականներից շատ-շատերը նշում են նախ, որ կրոնական բնույթի պրագրությունների լեզուն ինքնատիպ և առանձին բառեր ու ձևեր ունեն, այնինչ սեպագրա-խեթերական բառարանը առանձնապես շեշտում է իրավական և տնտեսական տերմիններ. երկրորդ, որ այդ տեղերի լեզուն, ինչպես և Նուզիում (Քերքուքի մոտ) գտնված ակկադական բնագրերի խեթերական հատուկ անունները, կրում են տարբեր բարբառների բնույթ,— մի բան, որ ընդ-

պիտի է նաև «աստղ» (<շուքար>) և «խուռի» անվանների գնահատման ժամանակ։ Նկ իրոք, ի՞նչպես կարող էր մի լեզու լինել այն հսկա տարածության մեջ, որը ընդգրկում էր հյուսիսային Միջագետքը, Սիրիան, Հայաստանի հարավը, Թևրևս Կիլիկիան։ Երկարատև քաղաքական միաձուլ պետությունն ևս չկարողացան առնչել այդ աստղի-խուռիական, նկն չհաշվենք կարճատև Միտաննին (1400—1200)։ Այդ տեսակետից հարց լուծվի աղերսը պիտի լիներ հյուսիսային խուռիականների հետ, որ մոտ էր Արմինա և Նուպրիա երկրամասերին, իսկ հայերին հնուց ոչդտնե են ատաջին անգամ հանդիպել նրանք, ինչպես հատատատում են նաև հույն աղբյուրները, Թոդած Փոքր Հայքը (resp. Ակիլիսենին)։

Այժմ տեսնենք Թե որքան հատարակ և հատուկ անուններ ունեն հայերը, ժառանգած այդ շուքար-խուռիականից։

1. aš՝ «կին» (женщина—жена), ամենատարածական բառարմատ է դանազան բնույթով և ածանցյալ ձևերով բոլոր խուռիական աղբյուրներում (բարբառներում), ինչպես aštá, որից իգական անձնանունները՝ Aštaḫuta, Aštaqanza, Aštakina և այլն Նոպիում, aštu- կամ ašdu ածանցավոր aštuḫ(ḫ)i ‖ ašduḫ(h)i «կանացիկ», իգական բառի մեջ, aštuzzi—հատուկ տեսակ է, կանանց հատուկ անուններին մեջ, ինչպես Ašdu, Ašduanti, Aštuatana, Ašduašar և այլն. ašti կամ aše բուկը ուղղականում aštiš, հայց. հոլովանում aštin և այլն, ինչպես և կանանց անձնանուններին մեջ —Aše, Ašten, Ašdallia և այլն։ Համեմատել հայց ասո-ի «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել» (մեկ անգամ գործածված Տիմոթեոս Կուկի «կնիկ հատատոց», էջ 168), որից ասող «աղջիկ ուզող, նշանած, փեսացու» (մեկ անգամ, անդ էջ 283), ինչպես առանձին անուններ жена բառից жениться (=առնել) և жених (առնող)։ Տիմոթեոս Կուկի հայ թարգմանիչը անշուշտ Հայաստանի հարավից է եղել, որտեղ և պահպանվել է այդ թանկագին խուռիական ժառանգով բառը։ Այդ բառը բերում է Հ. Ասատրյանը (Արմ. բ., I, 566—567), որը սխալ կերպով տալիս է և Առձ. բառարանը «հատատիլ—նշանվիլ աղջկան»)։

2. pap- կամ pab- «հայր, տատ», որից ածանցավոր papni և papaḫḫe «հայրական» նաև «տատենական», որը և աշխարհագրական անուն է դարձել Papanḫe (Babanḫe), որպես երկրանուն։ Կան և արական անձնանուններ—Parante (Babante), Ar-baba «հոյակ հայր», Ari(p)-parni (id. ?), Tatip-papni, Zilip-papni..., իգական անձնանուն Papaia։ Յոհաննես Յերեզկիսը այդ խուռիական

pap «լեռ, սար» բառի հետ համեմատում է նրան ազգակից ուրարտական babani «լեռնային», որը ածանցական է պարզ bab(a) արմատից և որը առկա է իմ միջի այլոց ևրևմիա Մեղրեցու բառարանը՝ բարա «բլուր», խուռիտական pap-ին ևս կցելի նաև ափափա «ժժվարամատչելի լեռնային ժայռեր», որը, ինչպես տեսանում ենք իր վերջին «ա» ով սեռիական տեսք ունի: Նմանապես մենք ունենք Բիթլիսի կիրճի լանջի վրա Փապչէն դյուղանունը, որը շեշտում է փապ կամ փափ բառի նաև «զառիթափ» իմաստաստորեքյակը: Նույն այդ արմատին են պատկանում Փամբի լեռնանունը (որից Փամբակի ձոր) և Փապակ անձնանունը: Թերևս կապ ունենա նաև փապ կամ փապար «ճնդք ժայռերի մեջ»: Տես վերը մեգրելական p'ap'ala զառիթափ, обрыв բառի մասին:

3. *Sarri* կամ šarri «ժռաստ», որ գրվում է երկու նշաններով՝ šar (sar) և ri. Թեպետև կա և պարզ sar (šar), ինչպես և sar-ra (šar-ra) և sar-ru (šar-ru): Արտաքուստ հնչյուններով համընկնում է ակկադական šar-ru «թագավոր» բառին, որի հետ և շփոթվել է: Ըստ իս խուռիտական այդ sarri (‖ sarra) բառի «ժռաստ» նշանակությունը արդարանում է ոչ միայն սումերա-խուռիտական nam. gar. ra=sar-ri համեմատությամբ, որ բերվում է Նաս-Շամրայի վերոհիշյալ բառարանում (III, 31), և նշվել է նաև արիշների կողմից (A. Götze, Die Annalen des Muršilš, Leipzig, 1933, էջ 228), այլև այդ բառի ակկադերեն հայերի և վրացիների մոտ, թողած դեռ այլ հանգամանքներ, մասնավորապես կրոնա-դաղափարական հին մտայնություններ: Նախ, խնամուի անտակետից պետք է ասել, որ սում. nam. gar. ra բառը այլուր փոխարինված է nam. ri կամ nam, ra ձևով և համապատասխանում է ակկադ. šallatum «նվաճված քաղաքներից ստրկող բնակչություններ», թեպետև nam. ra թարգմանում են ոմանք նաև «դերի, ստրուկ, կրոն» (տես Götze-ի մոտ նույն տեղում): Հետո, իզուր են ոմանք ցանկանում այդ խուռ. šar-ri (šarra) բառը համարել փոխառություն ակկ. šarru «թագավոր» բառից: Հանգես է բնորոշիչ արձանագրություններում պատահում այսպես ասած «տերտատանձև» արտահայտություն, երբ տասը բառով կամ այդ նույն հնչյունը արտահայտող գաղափարագրով են գրում սրվող տեղանքը կամ բառը: Մասնվում են նաև խուռիտական այդ բառը փոխառություն չհամարողները (Վայդներ, Գուտտաուա), որոնք ստում են կապակցել խուռ. šar— «պատանջել, խնդրել» բայի հետ: Տարօրինակ կլիներ վերջապես, որ սորիատերական այդ հին աշխարհում գոյություն չունենար «տերտատ» բառը, երբ, օրինակ, այդ սովորա-

ինչ բան էր աստղապաշտությունների կամ կապոհանների մոտ։ Համեմատել ակկ. ward-u (>urd-u) «ստրուկ», wardutu «ստրկություն» և անձնանունները—Waradtašmetu, Waradteia (Waradtešup անվան կրճատումն է), Waradkenuni, Waradkubi, Waradduri («պատճ ծառա»), Urdidiglat («ծառա Տիգրիսի») և այլն, որոնք դրած են ածել և նուդիի խուռիականները. կապոհանների մոտ նույնպես կար mele «ստրուկ» բառը, որ նույնպես մտնում է անձնանունների կազմող բառերի մեջ, ինչպես— Melešipak=Melemarduk, Melešibarru, Melesaḫ, Melešugab և այլն, որտեղ šipak=marduk, šibarru աստվածանուններ են, նման արաբական Աբդուլլահ, Աբդալմելիք, Աբդուլմասիհ և նման կազմություններին abd-u «ստրուկ» բառով։ Այդպես պետք է հասկանալ և խուռիականի անձնանունները— Šartešup կամ Tešupšar «ստրուկ Տեշուպի», Šartilla կամ Tillašar «Տիլլա աստծո ծառան», Duršar=ուրարտ. Šardur «ծառա (աստծո) պատի» (—տաճարի, ինչպես ունենք ակկադ. արքանուն Dur-ili-šu «Ընթա աստծո պատը» wall of his god), Paišar «Պայ դևմոնի ծառան», Enšar «աստծո ծառա», Ewrišarri «Քաղաքների ծառա», Aḫlipšar «իմ (-ip) տան ծառան»[1] և այլն։ Բողազքյոլի խուռիական բևեռագրերում (KUB, XXVII, ii) հիշվում են «հայրական աստվածներ» (DINGIRmeš-našuš [=ennašuš] attannibinašuš) այսինքն՝ այն աստվածները, որ մեր հայրերն են պաշտել (տող 9), բայց նաև «ծառայական (=ծառաների) և թագավորական (թագավորների) Տեշուպ աստվածը» (տողեր 14—15— dU-aš šarraššihinibiniš ebrišši̯hinibiniš), ինչպես և ընդհանրապես (տող 18) ծառաների և թագավորների (=տերերի) կողմից պաշտվող աստվածները։ Տուշրատտայի նամակի zarra բառը (I կոլոննա, տող 89) պետք հասկանալ կամ «ծառա» կամ «ծառայի (zar-) հետ (-ra)»[2]։ Ջազար-Բազարում (Մարդինից հարավ) պեղ-

---

[1] Կան և առանձին խուռ. aḫli կամ eḫli հասարակ բառ (տե՛ս KUB XXVII 46 i 19′, 23′, 26′, eḫliannaš, խուռ KUB VII 56 i 28′ eḫlita ուղղագրական հոլովմանով)։ Ըստ իս այդ բառը հավանորեն նշանակել է «տուն, վրան», հետո թերևս նաև «տոհմ, ազգ», կամ «պատ» челядь և ազգակից պետք լինի մեր պոկ alx (որից ոտպոխին), սվաններեն mo-axle «ազգախին», վրաց. s-axli, մեգր. d-oxori «պատ», հրեակ. aḥl «վրան», արաբ. ahl «ազգակիցներ», родня բառերի մեջ։

[2] Տուշրատտայի նամակի այդ տեղում ասվում է. «և քո եղբայր Նիմմուրիան, եգիպտական թագավորը, արձան apli (?) շինեց և Իշխինի քաղաքը, Շիմիգի աստծո քաղաքը, նկով և Շիմիգիի համար, իր աստծո, իր հոր

ված ակկադական սրբանագրութիւններին խուռիտական անուններուն մեջ ևս šarri բառի š (s) տառի փոխարէն գրված է նախդիկս z, ինչպես և Ուգարիտում գրված 'Ewrzr=սումերական Ewrišarri, Zmg-n-d= սումերական Šimigi-nid «Երմիկի տաճար համար»: Այսպիսով անհնում ենք, որ բացի Նուզիից (Կիրքուքից 15 մղոն հարաւ արևմուտք, Տորպան-Քալա գլխի մոտ) և Բողազքյոյից, ուր գրված է šarri (sarri), šarra (sarra) և šar (sar) այլ տեղերում, ինչպես Ջաղար-Բազարում, Մխոանիում և Թաս-Շամրամում, այսինքն՝ Համաստանից հարաւ ընկած խուռիտական վայրերում գրված է zarri, zarra և zar, որոնք հնչյունափոխուելին պիտի վերափոխուէին հայոց ծառա բառով, թեպետև ապացոյցի է նաև *ճառատ ձևը, որը պահուել է մեզրելեանում čori>čḳori «տորուկ» ձևով, անցած կամ հայերից (Փոքր Հայքի վրայով) և կամ այդտեղ եկած խալդացիներից (խաղաղների միջոցով): Համեմատել հայոց զաւակ „дитя" և ճաւակիք «աղջիկ զաւակ». խարգիր տեղանունը և հայոց խրճիթ, խեթերէն zavail— «բնիշ, դէմ» և հայոց ճիւաղ և այլն: Հայոց «ծառա» (գրաբարի ծառայ գրութեան վերջին յ տառը իրեն չի արդարացնում) գրութիւնն ու հնչումը կարող էր պահանջել բնագրի ոչ միայն zarra, այլև šarra, ի նկատի ունենալով ասորա. šue= ծով, արաբա. šari (zari)=ծառ և այլն:

4. nera «տասնիկ կին», жена деверя": Տաշրատտայի նամակի չորրորդ սյունակում (IV, 62) կարդացվում է ne-e-ri-iw-wu-u-la-an (=nēri-iwwu-la-an) նախադիր «կին» (SAL) որոշիչով: Այդ չի նշանակում, որ nēri— պիտի լինի կնոջ հատուկ անուն, ինչպես որ ասել է J. Fridrich-ը („Kleinasiatische Sprachdenkmäler", ուր գրված է SALNi-e-ri-iy-yu-ú-la-an): Նրա հատուկ անուն լինելը մատնանշել է սկզբում Կնուդտզոնը, իսկ հետո նաև Ենգնելը, Մեսերշմիդտը, Բորկը և ուրիշներ: Ենգնելը այդ nēri-ն թարգմանում էր «հորաքույր» կամ «մորաքույր» (Tante), իսկ Բորկը հարցականով՝ «ընկերակցուհի, սպասուհի» (Begleiterin, Sklavin). տես նրա „Mitanni breif", էջ 96, թեպետ 81-րդ էջի վրա չի թարգմանում, այլ նկարագրում է „für meinenēra-Franen". Տաշրատտայի նամակի այդ պարբերութիւնը մեջ (IV, 58'—68') ասում է, որ նա իր աղջիկները տվել է կնութեան եգիպտական

համար, նա հասցրեց (доставал): Իսկ հայրական նվերներից բացի այդ սրձանիկները (taše), շատ և շատ գնդացիկ, ծառան (կամ՝ ծառայի հետ) քերեր իր երկիրը... այդ սրձանիկը (Փիգուրան) ուղարկեց...» (տողեր 84—90):

քարտեզին, ինչպես որոշված է նրան (58′—59′), բայց շարունակությունը լավ չի հասկացվում, թեպետ և բնագիրը շատ լավ պահպանվել է: Ինչ բան կարելի է հասկանալ մեջբերից: Մյուսում խոսվում է երկու neri կանանց մասին (62′) և վերջում (65′—68′), ուր հիշվում են այդ կանանց անունները՝ Տադուխեպա և Վեդուկիտա, որանց ուղարկվում է զարդարանք (ըստ Բոլկի՝ azalta zukan «կզարդարեն մանրակով»?): Առաջինը (Տադուխեպան) Տուշրատտայի աղջիկն է և Փարաոնի կինը, իսկ Վեդուկիտան երևի Տուշրատտայի կինն է: Մեզ հետաքրքրող բառի սկիզբը պիտի լինի nēra-, որի „a" ձայնավորը -lwwu «իմ» էնկլիտիկայից կամ վերանվանական վերջածանցից առաջ կորչում է, ինչպես šena «եղբայր» բառը šeniwwu-š «եղբայրս»: Ոչ մի կասկած, որ nēra- նշանակում է երկու եղբայրների կանայք միմյանց հանդեպ, այդպիսի կինը (жена деверя), ինչպես ցույց է տալիս նույնանունչ և նույնաձայն հայոց Ճեր կամ Ճեր բառը, որը ևս ասիական և մի այլ նշանակություն ունեցել մի կինը մյուս կնոջ հանդեպ: Այս իմ առաջարկությամբ միանգամայն ջուրն է ընկնում հայոց այդ բառի բոլոր կապակցությունը սանս. yâtar, հունարեն enáter, լատ. janitrix, լիտվական jentere և այլնի հետ, թեպետ Ա. Մեյեն հայոց բառը դնում էր վրակպծի մեջ, երբ համեմատում էր այդ հնդեվրոպական բառերի հետ, երևի ինքն էլ չէր հավատում (տես նրա „Introduction"-ի առաձևին «թարգմանությունը 1911 թ., էջ 333) և 1938 թ. (էջ 392), թեպետ պետք է ասել, որ Հյուբշմանը չէր ընդունում այդ առաջարանությունը (Arm. Gram., 478): Գալով հնդեվրոպական հարազևաններին այդ միաուղիղ և հնչյունաբանորեն ոչ արդարացվող մեկնությանը, ես 1946 թ. (տե՛ս իմ „К происхождению арм. языка", էջ 10, ծան. 1) հարց դրի հայոց Ճեր բառի առաջարանությունը՝ կապակցել լիտիական ner բառի հետ, որ հարցականով թարգմանվում է «քույր»: Ուրախ եմ, որ խեթերական nēra բառը դալիս է հաստատելու այդ երևք լեզուների նույն բառերի փոքրասիական ծագումը: Հայոց այժմյան բարբառները ևս այդ «ներ»-ը պահել են, բայց ոչ հյուսիսային բարբառները, այլ հարավային և արևմտյան, ինչպես Ախալցխա, Ախալքալաք, Ակն, Խարբերդ, Կարին, Համշեն, Նոր-Նախիջևան, Զալիս, Ռումինիայի հայերը, Սևրաստիա, Սուչավա, Տիգրանակերտ, Ալաշկերի, Հաճին, Զեյթուն, Սիվեհիս (տես Հ. Աճառյան, Արմ. բառ., V, էջ 94), և հետևապես չեն գտնվում այդ «ներ» բառը Տարոնում (Մուշ, Բիթլիս, Բալու...). Վասպուրականում, Գար-

կահավորում և ամբողջ Անդրկովկասի հայ բարբառները, եթե չհաշվենք Ախալցխան և Ախալքալաքը, որոնց ժողովուրդը, ինչպես նաև Լեռնեականը Կարինից (Էրզրումից) են գաղթել:

5. ḫind-u «դինդ, серьга»: Այս խուռիտական բառը, որը նաև հոգնակի է լինում (ḫintena, na- խուռ. հոգնակերտով), գտնվում է ակկադերեն գրված մի նվիրատվականում (Geschenkenliste, опись даров, որ Տուշրատտան ուղարկում է իր քրոջ Տադուխեպայի հետ Ամենոֆեսեպ III եգիպտական թագավորին (տես Knudtzon, Die El-Amarna Tafeln, Leipzig, 1915, որը տպված է Vorderasiatische Bibliothek № 2 անբիտում): Այդ ուղարկվելիք առարկաները կազմում են իրարին Տադուխեպայի օժիտը, և մեզ հետաքրքրող ḫindu բառը, որ արված է ակկադական -u վերջավորությամբ, որպես ուղղական հոլով, պատահում է այդ ցուցակագրման երեք անգամ (EA 25, 12', 31', 37'): Նույնները կան նաև zaliewə, որը նշանակել է բրոնզից շինած ինչ որ առարկա (տես J. Friedrich, Kleine Beiträge zur churritischen Grammatik, Leipzig, 1933, էջ 3, ծան. 2, թեև ապարանջան (?): Ḫindu բառը բերված է հետևյալ կապակցություններով— 4 ḫintena ḫurāṣu (տող 12), 4 ḫirtena ḫurāṣu uḫḫuzu (տող 31) և 4 ḫindu ḫurāṣu (տող 37): Ակկ. ḫurāṣu նշանակում է «ոսկի», իսկ uḫḫuzu «ծածկված», իսկ ինչ է նշանակել խուռ. ḫind- բառը: Սրա թարգմանությունը չի տրվում և անտարակույս նա պիտի լինի «դինդ. серьга», որը բնականորեն զույգ թվով պետք է նշվեր («չորս դինդ»), և ոսկով պատած (ḫurāṣu uḫḫuzu), այսինքն՝ ոսկեզօծված: Հայոց գինդ բառը, որպես նրբաթական կուլտուրայի հին արևելյան ծագորդ, նույնանում է իր ծագմամբ այդ խուռ. ḫind- (=xind) նույնիմաստ բառին, թեպետ բևեռագրերի ḫ նշանը հայերենում անդրպատկում է մեծ մասամբ «խ» հնչյունով (ավելի քիչ «հ»-ով) և միայն երկու դեպքում հայոց «կ»-ով, ինչպես ակկ. ḫubātu «դժվել, թալանել» (ḫabtu «ավար, թալան») և հայոց «կապուտ», ակկ. (և ասոր.) ḫaṣṣinu «տոպրակ, топор» և մեր «կապին»: Համեմատել նաև խեթերեն ḫand- «հատատանել» և դրարաթում կանդաղեալ «հատատանված»: Հնդեվրոպագետ հայագիտնականը մեր գինդ բառը հանում են հնդեվրոպական նախալեզվից, ի նկատի ունենալով սանս. vandhura «կառքի բունը», ավեստ. ueṇdo «դարձած, շրջած», հին բարձր գերմ. uuindinga— կանանց մի զարդարանք է, գերմ. wenden «շրջել»: Այսպես առաջարկից առաջին անգամ Լիպենը (Armenische Studien, 5—7), հանելով այդ բոլոր հնդեվրոպական բառերը «կլոր»

դաղափարից, որը պահպանվում է Աճառյանի կողմից (տես նրա Արմ. բ., I)։ Մեր բերած փաստերը հակառակ են դրան։

6. tiwe «խոսք, բառ», նաև «բան, իր», հոդնակի tiwenaալից կա նաև tiw- (tiwliwan, tiwiwwan, tiwāllān, tiwāttān)[1], որը երևի tiwe ձևի կրճատումն է (համեմատել nēra և nēr- կամ šena և šen ժամանցման ժամանակ)։ Նուռիստանյան tiw- արմատը անշուշտ նշանակել է «խոսել» և նրա հնարավոր էր tiw- ‖ tow- ալաներենացման, ապա նաև կոամեմատենք այդ խոս. tiw- արմատի հետ հայց թովել «կախարդել», թովիչ «դիւթ, կախարդ» («թովիչ քաղցրագույն բանիւք հանէ զօձն ի դարանէ իւրմէ»), թոթովել (կրկնավոր է) «կռկռալ»։ Հ. Աճառյանը այս թով- արմատի հնագույն իմաստը դնում է «խոսել, շշնջալ, ձայնել (մանավանդ ընդհատ ընդհատ)», հետո նաև «խոսքով կախարդել, կարդալով համրել», ինչպես լատ. oro «աղել, խոսել» և oraculum «մարգարեություն, աստվածային պատգամ», գերմ. sprechen «խոսել» և spruch «կախարդական կամ անիծական բանաձև», հին անգլ. spell «պատմություն, խոսք, արտասանություն» և անգլ. spell «հմայք, դյութություն», հին սլավ. гадать «խոսել» և «բախտ գուշակել», обаять «խոսել, խոսակցել» և «հմայել, կախարդել» (Արմ. բառ., II, 1282—1282), որոնց վրա ևս կավելացնենք— говорить և заговорить, խեթ. uttar կամ addar (տես. հ. uddanas) «խոսք, իր, գործ, մոգական աղոթք, բանաձև» և uttania «դյութել, կախարդել», լատ. canto «երգել» և անգլ. incandation „чары, колдовство“ և այլն։ Հ. Աճառյանը հայ. թով- արմատը ազգակցում է սանսկ. stu- «գովել, օրհնաբանել», որից stotra կամ stoma «գովաբանք, գովաբանական օրհներգություն», ավեստ. stav,- stu- «գովել, օրհնաբանել, աղոթել», բոլորն էլ կրոնական իմաստով, ինչպես և հայերենի թովել «դյութել, կախարդել»։ Բոլորն էլ, թե հայերենը և թե հնդիրանական բառերը հանում է նախալեզվի tou- ձևից (ibid., 1282)։ Բայց ինձ թվում է թե խոսել div- (tiw-) արմատը ավելի անմիջական և պատմականորեն ավելի արդարացնող պիտի համարել, քան հնդիրանական stou- ‖ stu- արմատը մանավանդ որ հնդևրոպական այլ լեզուներում այդ արմատը այդ իմաստով չկա, իսկ հայերեն ձևը նաև փոխառություն չի կարելի համարել և կամ նախալեզվից բխեցնել։

---

[1] Տե՛ս E. Speiser, Introduction to Hurrian, New-Haven, 1941, էջեր 226—227։

7. *Kanzu* (ka-an-zu-ú *հիշվում է որպես ինչ-որ բույս* (šammu) *համանիշների մի թևրթում* (KUB XXVII, 38 iii B), *ինչպես կարդում ենք* Nuzi personal names, Chicago, *1943, էջ 233 (կրճատ* NPS): *Երևի այդ խուռիտական բույսը օգտական, համեխիտ և վայելուչ ու դեղագիտ բարձրությամբ էր, և ինչպես որ այժմ կան* Salbi, Fidan *և նման իրական անձնանուններ (Մանուշակ, Շուշան, Համբիկ...), այնպես էլ Նուզիի փաստաթղթերում կարդում ենք այդ* kanzu-*ով կազմած անուններ (միայն կանանց)—* Allaiqanza (*«կանգա-տիրուհի»*), Aštaqanza, (*«կ. կին»*), Kanzaia, Qanzu, Ḫašipqanzu, Qanzušaila (*«կ. կին»*): *Հայերենում պիտի համապատասխան* kanz-*ին անենայինք* *կանճ *կամ* *կանճ բույսանունը, բայց անենք միայն կանճոխ կամ կանճուխ «գավազան, ցուպ, ձող» (Դավիթ Անհաղթի «Դիրք սահմանաց»-ի մեջ, ԺԲ), որի վերջին -ոխ կամ -ուխ մասը հիշեցնում է խուռի-ուրարտական -uḫi ձագման (պատկանելիության) ածանցը, իսկ* kanč-(kanj-) *համանորեն այդ լեզուներում նշանակել է «եղեգ», որը ևս վայելչակազմ է և ևս նյութ է տալիս ձեռնափայտի և նետի: Համեմատել առաջ* трост *«ձեռնափայտ», որը սկզբում եղեգից է եղել, ինչպես ցույց է տալիս* тростник *«եղեգ» բառը: Եղեգի մասին որպես «նետ» և «նվագելու գործիք» տես իմ „О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений" տպված Պրագայում „Archiv Orientalny" հանդեսում նվիրված Բ. Հրոզնուն, „Symbolae Hrozny", I, *1949, էջեր 360—373:*

8. *tuldi, որի հետ կա* šammk *«բույս» բառը* (šam taldi), *ավելացած որ դա Շուպրիայում է* (ina Šubari *Շուբարիում), գործ է ածվել ինչ-որ և որպես հնագույն անուն՝* Duldu *ինչպես կա և այրանուն՝* Dulduqqa (Tuldukka), *տես* NPN, *էջ 268 (Գ. Գաբրիելի ինչ-որում): Կասկած չկա, որ այդ բառը պահվել է հայոց մեջ ևս հնում առաջ, երբևէ և սիրտ ձևով (=*althaea pallida WK *բան Տիրացյանի,* Contributo § 329)—*Աբմ, բառ., VI, էջ 971, ինչ նաև այժմյան բարբառներում նույն ձևով: Ըստ Հ. Աճառյանի հայերենից է փոխ առած վրաց* tuxti „mauve rose, althée ordinaire" (ibid., *էջ 972):*

9. *ḫinzur—խուռիտական արմատը գործ է ածվել ինչ Բոգազքոյի խուռիտական բնագրերում և ինչ մեզ հայտնի է Ծագել որպես իրական անուն Նուզիի ակկադական տարեգրություններից: Բոգազքոյից անենք* ḫinzurilaš, ḫinzurulaeš, ḫinzurinna, ḫinzurugan-

ում Մարիից ḫinzuruš (տես NPN, 217), իսկ Նուզիից հատուկ անուններ—Ḫinzurala և Ḫinzuri թեպետ հիշվում է ḫinzuri որպես նաև մի ամսանուն: Կասկած չկա, որ այդ բառը նշանակել է «խրճիթ» և ուրեմն հայոց բառը չպիտի կապակցել որպես փոխառության ասոր. hazzura «խնձոր» բառից (ըստ Հյուբշմանի՝ հակառակը), որը, ինչպես արդեն նշեցինք, ավելի հնում է հայոց ձևից քան խուռի ḫinzur-ը: Հայերի մոտ, ի միջի այլոց, կար և կնոջ անուն— Խնձոր, Խնձորիկ, որպես միջնադարյան հատուկ անուններ (13—14 դարերում ըստ Հ. Աճառյանի «Անձն. բառ.», II, 515):

10. Ḫašuntarḫi հատուկ առումածանուն է, հիշված Բողազքյոյի խուռիական տեքստերում Piša(i)šarḫi. Tarpantuhi և Šu-tu(ḫ)hi առումածանունների հետ, որոնք բոլորն էլ բուսական (վիճաստիճան) աշխարհից են: Դրանց մեջ վերջին -ḫi կամ -uḫi ածանցը, ինչպես ասվել է, ծագում և պատկանելություն են ցույց տալիս, որ կա և Bitenḫi առումածանման մեջ («ջրային, водяной» witen ‖ widar «ջուր» բառից): Ḫušundar— բունը կա և հայոց խաշընդեղ բառի մեջ, որ նշանակում է „rheum, ревень" մի տեսակ բույս, որը օգտագործվում է որպես դեղ ծննդարերության ժամանակ և որպես լուծողական: Ձևով հայոց բառը այնպես է հարաբերում խուռ. ḫašuntar-ին, ինչպես նախնդեղ բառը իրանական cugundar, ավեստ. čugundar և այլն նույնանիշ բառին, ընդ որում վրաց čakundela-ն, ինչպես և այդ իրանական ձևերը, Հ. Աճառյանը համարում է հայերենից փոխառյալ, որովհետև հայերենում կա և առանձին նախ նույն նշանակությամբ: Բարդության երկրորդ -dar մասը, որը կա նաև իրանական čavdar «տարեկան, рожь», gendumdar «ցորեն» բառերի մեջ, իրոք նշանակել է «խոտ, բույս, злак" և հայերենում ժողովրդական տարբերանության է ենթարկվել դեղ բառի հետ, որ նշանակել է «խոտ, բույս, злак» (տաքդեղ, «պղպեղ», դեղձիլ «թմնամորել», ինչպես отравить „բույր трава «խոտ» բառից:

Հայերենում կա և կապնդեղ բուսանունը (=լատ. ligusticum, levisticum), որը նմանապես բնիկ ասիանիկ-խուռիական ծագումով պիտի լինի (*kapundara?): Խուռիական Tarpantuḫi առումածանունը նույնպես ևս համարում եմ բուսական աշխարհից ծագած: Եթե հանենք նրա -uḫi հայտանի ածանցը, ապա նրա բունը (tarpant-) կիպապակցվի հունական terebinthos բառանվան հետ, որն անշուշտ իր տեսքով (-in.h- վերջածանցով) փոքրասիական ծա-

դում ունի, նման labyrinthos, Korinthos և նման բառերին։ Իսկ terebinth-ը հայտնի փշատներև այն ծառն է, որի քերծվածքներից դուրս են հոսում անթպենտին կոչված հեղուկը— սկիպիդարը, որը պաշտվել է, ի միջի այլոց, Սիրիայում, իսկ խուռիտների կողմից այդ ծառի աստվածացումը ցույց է տալիս, որ անթպենդին-սկիպիդարը պաշտվել է նաև խուռի-սուբարների մոտ։ Այդ ծառից առացված յուղի մասին, որպես դինվորների օծանելիք ցրտից, խոսում է Քսենեֆոնը, երբ նրա դինվորները անցնում էին Բարձր և Փոքր Հայքերի միջով, խալիբների երկրին մոտ («Անաբասիս», գլ. 4, 12—14)։ Šuru(b)li խուռիտական աստվածանունը ևս կապակցում եմ խաղողի պաշտամունքի հետ, ի նկատի ունենալով սեմական ծագում ունեցող սորեք sorekh (երբայեցերեն) ընտիր ևս խաղողը, որին թերևս ազգակցվի մեր բորբառների սորոկ (Նոր Բայազետ) կամ սորըք (Բուլանըխ) բույսը, որն ունի նեղ և երկայն տերևներ, դեղին ծաղիկներ և մանր ևս հատիկներից պատրաստում են գառը ձմեռ (տես Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 508, «շալկի» բառի տակ)։

11. ḫurr- խուռիտների ցեղանունն է և հանդես է գալիս այլևայլ ձևափոխումներով, ինչպես Ḫurri կամ Ḫurra (Hu-ur-ra) քաղաքանուն, Ḫurlaša (id.) ḫurla «խուռիտ», ḫurlili «խուռերեն», Ḫu-u-ur-ra (xōrra) աստվածանուն, Ḫurruḫe umini «խուռյան երկիր» և այլն։ Աստվածաշնչի հրեական ḥori և հունական χορρίτος ձևերը ցույց են տալիս xorr արտասանություն։ Վերջապես հայ ավանդությունները (Մ. Խորենացի, I, § 12), նույնպես խոսում են հօգուտ այդ արտասանության ի դեմս Խոռ Նահապետի, որը Հալկի ազգն էր և Խուխուռունյաց նախարարության անվանադիր առնծողը,— մի նախարարություն, որ նաև Մաղխազոնի (Մաղխազ) մականունով, առաջին անգն էր դրավում, տալով թագավորին 10 հազարից ավելի զորք (այդ իշխանները դրավում էին վանա լճից հյուսիս ընկած հողամասերը)։ Բայց ըստ իս, հայերի մոտ այդ Խոռ ցեղանունը պահվել է որպես հատարակ բառ, որպես այդ ցեղերի (կամ որևէ ցեղի) թողած մի ազգությունի հետքի վրա։ Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (III, 500) բերում է Բարսեղ Ձորնի «Մեկնութիւն ս. աւետարանին որ ըստ Մարկոսի» (Զոլիա, 1826) գրքից, որ XIII դարումն է գրվել, հետևյալ կտորը (էջ 81), «Բազում ոչ վասն Աստուծոյ, այլ յաղագս ընչասիրութեանն և խոռ և սիշտ բառուցն՝ յաղթեցին հնշտութեանն մարմնով և փափուկ կենաց»։ Այստեղ «խոռ» բառը համանիշ է

արշալ բառին, որ ժլատ է նշանակում, նման մեր «գող» նշանակամասա ցեղային բառին: Յեղանելան փոխանցումը այդ մարդկանց աչքի ընկնող հատկանիշին շատ սովորական է. օրինակ հայերի վրա թուրքերի կատարած գազանութիւնների հետևանքով այդ բառը առացել է «անխիղճ» բովանդակութիւնը, ինչպես նաև ոխ (-ակ, ակութեացի), «հսկա, великан», պարթև «մարդչակազմ», վրաց մոս gmiri (կիմմերների անունը) «հերոս», kerkeʻi (չերքեզների անունը) «մարդչակազմ, стройный» և այլն, և այլն: Պետք է ընդունել, որ խուռիները, ամենի ճիշտ խուռերը, առևտրական և խաղող, գլուղ մարդիկ էին, գոնե որոշ ժամանակում: Պետք է նկատել նաև, որ բնաւորիչ rr (կրկնակ r) կամ պլոզիվը հաճախ վերարտադրվել է «n» բաղաձայնով ոչ միայն hurr(i)=խոռ, այլև sarri ‖ zarra=ժողով համապատասխանութեան դեպքում, ինչպես այդ rr կրկնակի գրութիւնը ցույց է տալիս, որ n (r) հնչյունը եղել է նաև խուռիերենում և խեթերենում:

*12. pal- բայարմատը Տուշրատտայի նամակում նշանակում է «հանդրել, ուզել», բայց կարող է նշանակել նաև «հարցնել» (anfragen, erbitten): Ուզարիսի ասմ.-խուռ. բառարանում pal-išu թարգմանվել է «ասաց» (I, 17): Եթե սկզբնականը եղել է «խընդրել», ապա այդ pal- արմատին կարելի է կցել հայոց պաղ-ատ-ել բայը, եթե միայն վերջին -ատ մասը արմատական չէ, ինչպես ունենք կորել և կորատել: Կա խուռիերենում, օրինակ, հենց Տուշրատտայի նամակում pa(a)li կամ paala (pāla) «կնդիր, առաջարամասով— ...urḫēn *pa-a-la* gulia-ma, *pa-a-li*-mān urḫa gulia-ma (եթե) ճշմարտութիւնը որպես կնդիր չի (-ma) ասում, իսկ (-mān) կնդիրը որպես ճշմարտութիւն չի (-ma) ասում (II, 106): Այդ pāi-ը շատ է նմանվում մեր բաղայր բառին (<bala-), որ նշանակում է «հերյուրանք» և իզուր են հանում բաղ- «կից» արմատից որպես «կցկցանք», որը ավելի շատ «բաղձանք» բուլանութիւնից է: Բայց ամենաուժեղ առարկութիւնը հնչյունականն է. մի կողմից խուռ. սկզբնական p=հայոց պ կամ փ (pap- ‖ pab= «լեռ»—ասիական, Փապ., pal-=պաղ-ատ-ել, և մյուս կողմից pāi «հերյուրանք»— հայոց բաղալը):*

13. šir «դյուր գալ», širašše «դյուրնկան», որը հնչվել է sir- համեմատել մեր «ուէր»— սիրել, սիրուն և այլն:

14. paš(š)- «ուղարկել», որից pašiṭḫi «գնացող, առաքյալ», pa(š)šar- (օր. pašariwaen կամ paššariwaen «կարող է ուղարկել»), paššiama «չի ուղարկում» և այլն: Արդյոք մեր պաշար-

բառը, որ նշանակում է «ճանապարհին վերցնելիք ուտելաք», ինչպես վրաց sagzawi «պաշար» (gza «ճանապարհ» բառից). չի տարաբաժանել այդ խուռ. բառից, որը ունեցել է նույնպես -ar (pašar- ‖ paššar-) վերջածանցը: Հավանորեն մեր տատար, խանդարել, խաթարել և նմանները գալիս են խուռիտներենից: F. Bork-ը, ի միջի այլոց, խուռ. šat(t)- թարգմանում էր «օգնել», որ մոտ է մեր «տատարել» բային, բայց մյուսները օրինակ E. Speiser-ը այլ կերպ են թարգմանում (ըստ Speiser-ի «մխիթարել»): Բնագրիր š տառի արտահայտությունը եղել է բազմաձայն, և ինչպես խեթերենում և ուրարտերենում ենք տեսնում դրա դիմաց հայոց համապատասխան բառերում լինում է ս (s) կամ շ (š) բաղաձայնը: Շփոթվել պաշար, տատար, խաթարել, խանգարել և նմաններին -ar ածանցը, որ գալիս է խուռի-ուրարտական լեզվատիպից այն -ar մասնիկի հետ, որ առնվազն հնադարյան արդեն կազմակերպված հայոց լեզվում ar- «տանել» արմատից (առ-ն-եմ, արար-ի), որը տեսնում ենք մեծարել, գերգարել և նմաններում մեջ:

15. puḫ— «փոխել» թե հատարակ բառ, ինչպես pu-ú-ḫu, puḫi-zzaru, puḫukara- (նման Տուշրատտայի նամակի tadukara-, riddukar-, agukar- բայաձևերին -kara մասնիկով), և թե հատուկ անուններում մեջ, ինչպես Puḫi, Puḫišenni ‖ Puḫašenni («փոխհրաբույր»=նորոգ փոխարեն) Puḫimenni («հարաթ փոխարեն») և այլն, որոնք հայտնի գործառ մեզ Նուզիի պետություններից: Այժմ էլ արեվմտյան տարածքում կա մնացից հետո նորածին երեխայի տալ բազալ (=փոխարեն) անունը, որը, ինչպես տեսնում ենք, գոյություն ուներ մեր էպոսից առնվազն հազար հինգ հարյուր տարի առաջ: Հայոց փոխ արմատը իր բազմաթիվ ածանցավորություններով (փոխանակ, փոխարեն, փոխարար, փոխհատուցել և այլն) անշուշտ գալիս է մեզ այդ խուռիտական լեզվաշխարհից, բայց այդ արմատը կա նաև սեմական լեզուում. հետևապես թե հայերենը և թե խուռիտերենը պիտի համարվին փոխառությունն այդ սեմիտներից: Բայց արդյոք սեմ. pūḫu «փոխել» բառն սեմական է, այդ մեզ հայտնի չէ և կարող էր ինքը սեմիտների լեզուներից փոխառյալ լինել, ինչպես այդ ապացուցված է շատ դեպքերում: Հ. Աճառյանը իր Արմ. բառ.-ում (VII, 189) հայոց բառը դնում է առաջ բերելով փոխառություն, բայց ինչպես տեսնում ենք, այդ փոխառությունը, եթե իրոք եղել է, կատարվել է խուռիտ-արմիների միջոցով:

16. ḫir-ai ('ker-ai) «երկար» բառ Ուգարիտի բառարանի (IV, 28): Այստեղ վերջին ai-, այլուր -ae համարվում է ածական-

մակրակ առնվազն ածանց, ինչպես nir-ae «թևերս», paḫir-ie «ցույց», tubu-e «ուժեղ» պլևակալ ձևափոխություններով (E. Speiser, Intr. to Hurr., 118—119)։ Բայց այդ kir- (ker-) արմատը ընդունում է և այլ ածանցներ, ինչպես kiraše (keraše) «երկարություն», kirar- (որից kirara, kirariaš, kirarinna, kirarinnilam, անձ. NPN, 225). Նման ḫaš- «լսել» արմատից՝ ḫašarinni, tat- «սիրել» արմատից՝ tatar-ae, raš- «ուղարկել» արմատից՝ paššariwaen «իմող չուղարկեն», urbarinni «մորքոտ» (մատղաշ), որի հետ համեմատել urbumma epēšu «մորքեցել» (ինչպես «քերքեցել», «մորքի անել», ուր epēšu ակկադ.— «անել»)։ Կա և հատուկ արտահայտիչներ (նույնից) այդ kirar կամ kerar ածանցավորից, ինչպես Kerar, -Tešup, Kerar-Tilla։ Իմ կարծիքով հայոց երկ-այր և երկ-այն ածականները կազմված երկ- (erk-) արմատից անդրադարձնում են այդ խուռիտական kir- «երկար» արմատը, որը դարձել է e-kr>erk, թևերս այն պատճառով, որ խուռիտերենում հնչյուն է kr-ar, կրաշե և այլն, դոնե հետազոտում, իսկ հայերը խուսափելով երկու բաղաձայններով բառ սկսելուց kr>rk (kr-ar>rkar) սկզբում ավելացրել են b (e) ձայնավորը, ինչպես երկու (‖ կր-կին), երեք բառերի սկզբում։ Կա և մնգրնկերեն rikali «երկար», որի նմանությունը հայոց erkar-ի հետ թևերս առակ արտաբերին է, քանի որ հայերենը ունի և erk-ajn, այնինքն՝ արմատն է erk-։ Ակկադական 'rk «երկարացնել», 'ark-u «երկար» նմանապես չի կարող համեմատվել հայոց այդ erk- արմատի հետ, քանի որ ակկադական այդ արմատի մեջ ասպիրատ kh (=միրուք), որ հայերը իրենց ակկ. փոխառություններում միշտ պահում են։

17. gil- (gel-) կամ kil- (kel-) թարգմանում են «բարեկեցիկ», «բարեկեցություն», բայց ըստ իս պիտի նշանակի «գեղեցիկ, գեղեցկություն»։ Այդ բառը հաճախ է պատահում Բողազքյոյի խուռիտական տեքստերում (KUB, XII, 12; XXV 47) ke-e-lu, ke-lu-bi-en-ni, ke-lu-uš, ge-lum, ge-lu-uš, իսկ մի անգամ էլ Տուշրատտայի նամակում (I, 89) gi-lu-u-šu-a, որը հավանորեն պրատատնվել է gilošwa։ Բայց ավելի շատ է պատահում հատուկ անուններին մեջ, որոնք մեզ հայտնի են Բողազքյոյից, Նուզիից, Նիպպուրից և այլն և պարունակում են այդ արմատը, ինչպես ունենք Բողազքյոյից—Kili, Kilari, Šen-gila, Kilia, Kil-Tešup, Keluš-Ḫepa (կնոջ անուն) և այլն։ Իսկ Նուզիի փաստաթղթերում մեծ մասամբ գրվում է սկզբնական „g"-ով, ինչպես— Gel-Tešup (որից փոպոքշական՝ Gelteia, Gelte (Gelia, Kilia, Gel-Tilla, Ge-

lip-erwi, Gilim-matka *կնոջ անուն*), Gelip-šarri *կամ* Kilip-šarri, Gelip-Ugur *և այլն* (NPN, 224)։ *Այդ* gel- ‖ gil- *բառը հատկանալու համար ապավինում են հայտնի* gelti *կամ* kelti *բառին, որը հայտնի է շատ աղբից և իր միջի այլոց նաև Տուշրատտայի նամակից, որպես խեթերական համապատասխանը ակկադական* šulmu, šulmānu, šullumu *և թարգմանում են այդ* gelti-ն «բարեկեցություն, благополучие» *արմատը անանձով* gel- (kel-)։ *Ըստ իս այդ բառերը* (gelti *և* gel-) *կարող են և կապ չունենալ, և իր նախաի ունենալով հայց գեղ, գեղաձի, գեղեցիկ բառերի* geł *արմատը, որը կարող էր առաջանալ և* gil- *նախնականից, ևս առաջարկում եմ խուռ. բառը ևս այդպես թարգմանել, օրինակ,* Gilu-Hepa *կնոջ անուն հասկանալ «Գեղը խեպածի»* (=Գեղեցիկ Հեպա, ազինքն՝ Հեպիա). *ինչպես անունը* Tadu (Tatu)- Ḫepa «սերը Հեպային», Gel-Tešup «գեղը Տեշոպի», Gelip-šarri «գեղեցիկ իմ (?) Թագավոր», Šen-gila «եղբոր գեղեցկությունը», Keluš-Ḫepa *(կնոջ անուն), ար* keluše ‖ qeluše *գոյական է (գեղեցկություն),* -še *գոյականացնող մասնիկով։ Մենք գիտենք, որ ամենասիրելի դիցուհին Հեպիան էր, որը աստղա-բարեկական Իշտարի նման հարջորջվում էր «Հեպիա սքանչելի»* (Hepit mušni) *և տարօրինակ չէր, որ փառաբանվեր նաև նրա գեղեցկությունը, ինչպես կան ակկադերենով կազմված անուններ* Inbi-Šamaš «Շամաշի միրգը» (фрукты Шамаша). Gimill-Tešup «Նվերը Տեշոպի» (=խուռ. Ar-Tešūr), Zikn-Adad «Մորուքը Ադադի», Šer-Ištar «ուրը Իշտարի», Izza-ṭabu «Ուզան լավ», Tab-Ištar *(կնոջ անուն) «լավ է Իշտարը» և այլն, և այլն։*

18. Šauška *կամ* Šawuška *խուռիտների հայտնի աստվածուհին է, համապատասխանը Իշտարին, որի գաղափարագրով երբեմն գրվող* (^{d}EŠ$_4$. DAR-ru-uš-ga)։ *Տուշրատտայի նամակում* (I, 76) *գրված է* ^{d}Ša-uš-gaš *կամ* URU Ni-i-nu-a-a-we ^{d}Ša-uš-ka-a-we (III, 98), *որ նշանակում է Նինևեհիայի Շաուշկա աստվածուհին։ Ուգարիտի փաստաթղթերում ևս հիշվում է* susk *(կամ* swsk) *բաղաձայնական գրությամբ, ար հիշվում է նաև նման աստվածուհի Հապիրը ուղեկցման հոլովաձևով՝* Hrt-d։ *Եթե Հեպիրը իշխողն էր Փոքր Ասիայում (գլխավորապես խեթերի մոտ), ապա Շաուշկը՝ խուռիտների մոտ, թեպետ Հեպիրը ազդարարիկ կերպով հիշվում է ոչ միայն Միջագետքի հյուսիսային մասում, այլև շատ հարավ։ Հեպիրը ենթադրել է հայերի հեպիա>հապիա ձևով, ինչպես և հրապարակ-խապարակ բայերի մեջ (տես վերը), մանավանդ մեզ մոտ հավա-*

նորին արևմուտքից, Եփրատի կողմերից։ Թերևս Հայաստանի գլխավոր աստծու կինը եղել է հենց այդ Հնախուրը, որ գիրքախոտարար գաղափարագրով է գրված (Իշտարի գաղափարագիրը)։ Բայց ինձ թվում է, որ հարցականին ուղղությամբ ևս մեզ մոտ պետք է ենթադրել նույնպիսի և նույնարտահայտությամբ Šauška դիցուհին, որ արմենների ապրելակերպը պիտի համարել։ Այդ ևս ուզում եմ տեսնել մեր շոշոկել բայի մեջ, որ նշանակում է «գնդակից երեսու համար ձևեր անել, ալեշփել, նազուտել» (Յոհաննես Ոսկեբերանի Մեկնութիւն Թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862, հատ. I, աս Տիմոթէոս առաջին, էջ 68)։ Բայց կա նաև շոշակաձև առնել, որ ձեռագիրն է տալիս (տես Տիլոն Երբայեցու ճառերից, հատ. III, Վենետիկ, 1892, «Կնանք խմաստնոց», էջ 81) և իզուր է Հ. Աճառյանը փոխում շոշակաձև ձևի (Արմ. բառ., V, 401), մանավանդ տեսնենք Երեմիա Մեղրեցու մոտ վրիպակով գրված շողակեալ «հրեշակեալ» և շուշակեալ «հուշակեալ» փոխանակ՝ շոշակեալ կամ շուշակեալ։ Այս ցույց է տալիս, որ Ոսկեբերանի մոտ ևս եղել է գրված շուշակել կամ շոշակել։ Ես չեմ կասկածում, որ այստեղ մենք ունենք Šauška դիցուհու անունը, պահված որպես նրա հատկությունը՝ նազուտանքը (жеманство, кривляние)։ Փիլոնի շոշակաձև առնել ոճի դիմաց հայն օրիգինալը տալիս է ἐγκαλλωπίζομαι, որը Վենսանների բառարանը թարգմանում է „рисоваться, чваниться", այսինքն՝ հայերեն վերոհիշյալ ճիշտ թարգմանությունը։ Մենք հիշենք, որ հենց այդպես էլ հպտիմ (խպտիմ) բայը նշանակել է Հնախու դիցուհու ատրիբուտը դարձած հատարակ անոնն։ Նույն աստվածուհիները ատրբեր անհերում պաշտած և ատրբեր ցեղերի միջոցով մտած Հայաստան, ունել են այդ ժողովուրդների նման ըմբռնումները, որ այդ Šauška և Hepit դիցուհիները որպես դեղագիտության և սիրո աստվածուհիներ, ունեցել են «նազուտանք, կատուվելը, մեմռատիությունը, գայթակղությունը, այլևայլ դեմքով ու շորերով երևան գալը»։ Հնչյունաբանորեն հայերենում Šaušk- պիտի վերածվեր շոշկ-> շոշկ-, շուշկ-, որ դարձել է շոշակ-, շուշակ-, ենթարկվելով -ակ վերջացող բառերի ազդեցության։ Իսկ որ աստվածների անուններդ կարող են անցնել իրենց աչքի ընկնող հատկանիշի վրա, դրա համար ունենք, օրինակ, Attis-Attin փռյուգիական աստծո ամորձատման հետևանքով հայոց արիճիա «առնականության կորցրած», իրանական Mithra աստծո անունից՝ hammitria «կատարյալ», որը դարձել է մեզ մոտ ամիճի որպես փոխառյալ բառ, Tarku փոքրասիական հին անունը լիկիացիների

մոտ գարձել է ընդհանրական «աստված» (նման մեր «աստուած» բառին փռյուգիական Sabazios հատուկ աստվածանունից), բայց խնթերի մոտ ավել է նաև tarkua— «բարկանալ, կատաղել, պարել» ('rage, be furious, be mad; dance', տես E. Sturtevant, Suppl. to Hitt. Glos., Philadelphia, 1939, էջ 42)[1]: Ձևաբանական նման զուգորդութիւնների մասին (բուն արմնիւթեան) տես վերը խոս «ժլատ» բառի մասին ասածը: Նա թոդնում եմ նման իմաստաբանական փոխանցում մարդկանց հատուկ անուններից ծագած հատարակ անուններըը, ինչպես կայսր, король, մոմպատի, խուլիսան և նմաններըը:

19. Šantaluqqan (KUR, XXVII 1 ii 26) Šandallugan (KUR XXVII 6 i 12) խեռիտական աստվածանունը, որ ինչպես տեսնում ենք, գտնվում է Բողազքյոյի տեքստերում («աստված» որոշիչով), նույնանում է Šantalluk խեռիտական արքունական հետ նոյնի փոստաստիկներում: Ինչպես ճիշտ գիտում են, այդ անունը ածանցյալ է Šanta կամ Šanda հայտնի աստվածանունից -(a)l-lul: վերջածանցով, որ կա նաև Nutalluk և թերևս Timaluk (Ar-ti-maluk տեսակ մեջ) անուններրի մեջ: Իսկ Šanta (Šanda) կամ հունարեն վերարտագրութեամբ Sandon փոքրասիական հայտնի աստված էր, հավասար Միջագետքի Մարդուկին. կար և խնթական Šantawia իգական անուն: Հավասարեցվում էր նաև Vartragne— Վահագնին, և պետք է ենթադրել, որ նրա գեներացիաների մեջ էր մտնում նաև ամպրոպը, այդ կողմից յուրացնելով Տիշպակի որոշ կողմը: Ինչպես lensen'-ը (տես Հանդ. ամս., 1904, էջ 184) և Roth-ը (ZA, 1927, էջ 744) առաջին անգամ մատնանշեցին այդ աստվածանունը, որ «ոգի, մանավանդ կայծակի աստվածն» էր, պիտի նայեցնել հայոց շանթ (շանդ) «կայծակ» բառի հետ: Բայց իմ կարծիքով, ոչ թե կայծակինն է առաջացել այդ աստվածը, կրելով այդ կայծակի անունը, այլ ընդհակառակը: Šanta-ն եղել է երկնքի, անձրև-ամպրոպի և թերևս վիշապների դեմ կռվող աստվածը, պահպանել է նաև Հայաստանին հարևանները և թերևս արևմտյան մասերում (Հայաստանի և Ուրարտուի պահպանված չկար),

[1] Ինձ թվում է, որ Աբմինայի մեջ մտնող Անգեկ տան Տարբ աստվածը, որ հարավ արևմուտքից (Կիլիկիայից և այլն) է մտել հայերի մոտ, սկզբում Մ. Խորենացու հին Ձևապրկության պիտի լիներ Տարբ, որ ապավոգվել է Տուրք ձևի, պահված մի քանի Ձևապրկության, իսկ հետո փոխած Տորք նոր ձևի, թերևս Troko ձևն ևս կար փոքրասիական որոշ լեզուներում: (Համեմատել Τρακυζῆτε տեղը Կիլիկիայում):

ինչպես Տորքը, լուրացվել է հայ ժողովրդի կողմից և մացել է հետագայում (քրիստոնեության ազդեցությամբ է) որպես հատարակ շանթի «կայծակ», նման մեր ժողովրդական Մովիհար կամ Մովիհան («Մովի աստված, ոգի») հատուկ անվան, որ հիմա դեռ մացել է որոշ բարբառներում միայն «կայծակ» նշանակությամբ: Ըստ իս, հարավային կամ հարավ-արևմտյան շրջաններից (Սիրիա, Կիլիկիա) մեզ մոտ է եկել ոչ միայն խեթերական Šauška հայտնի դիցուհին (Բողազ Հապիս) (Հիպիտ ձևով մատե նույնչափ հայտնի նույնապաշտոն աստվածուհուն Խափանցման ճանապարհներից), Tarku աստվածը, Šanta աստվածը, այլև զուտ խեթերական Nupatik-ը (հիշվում է նաև Ուգարիտի սրվանագրություններում Nbdg բազաձայնները), որը ըստ երևույթին լեռան աստված էր: Պատահական չէ, որ Բագրևանդի (Ալաշկերտի մոտ) նպատ սարը ոչ միայն կրում է այդ անունը, այլև պահում է Nupatik-ի աստվածային ֆունկցիան ի դեմս նրա լանջին կառուցված (հնթանատական տաճարի անդում) «հռչակավոր «երնկ եկեղեցին» (Ուչքիլիսան), հին Բագավանը, որ առաջի նշանակում է «Աստծո տեղ (վայր)»:

20. ewri— «տեր» շատ հաճախ է գործածվել խեթի բնագրերում Բողազքյոյից, Տուշրատտայի նամակում, մի «խնթիական» հիերոգլիֆ արձանագրության մեջ (iwrina- ձևով), որը գտնվել է Կարգամիշում: Նույնի աղյուսակներում մեծ մասամբ դրսեհոությամբ է ewri ձևով: Բայց այդ ewri բառը սովորական է և ուրարտացիների մոտ՝ dHaldie eurile «Խալդ տիրոջը» (կամ dHaldie eurie-ukie «Խալդան տիրոջս»): Ոչ մի կասկած, որ այդ ewri «տեր» (ըստ E. Speiser-ի „bord") բառը հայերը ժառանգել են awri- ձևով, ինչպես՝ աւրիոդ (awri-ord) «տիրոջ որդի», բայց հետագայում տացել է «տիրոջ աղջիկ, барыня, барышня", հետո ունենք աւրեար, որ հաճախ գրվում է որեար և նշանակում է տատոյի «տերերը» և օրհնք (աւրհնք) նույն իմաստով: Ն. Մառը թարգմանում էր դեռ 1903 թ. „знать" (ազնվականություն), իսկ Ն. Ադոնցը ընդունում էր որպես նախարարության մի ադամական հատատատություն: Հայոց բառը արտացոլում է հյուսիսային հայ բարբառների հնչյունարանական այն առանձնահատկությունը, որ „e" ձայնավորով սկսվող օտար և բնիկ բառեր փոխում էր „ä"-ով, ինչպես ewri->աւրի, խուռ. en- աստված»>ան- (Ովիւան, Ան-թևդ...): Էլ չեմ խոսում այն բազմաթիվ դեպքերի մասին, որ «ր» (r) և ղ (l) հնչյունների առաջ անկի է ունեցել այդ e ‖ a ալտերնացիան, ինչպես Երասխ ‖ Արաքս Eriza ‖ Ariza.

Erwand ‖ Arwand ‖ Orwond Ēr ‖ Ara աստվածանունը, երագ ‖ արագ, երինջ ‖ աղինջ, եղեխր ‖ աղախիր և այլն և այլն: Մի խիճարյաններըր ատրեար ‖ որեար բառը թարգմանում էին սովորական «մարդիկ» բառով (այդպես է Հ. Աճառյանի մոտ «Արմ. բառ.»-ում): Նրանք չէին խմանում, որ նիթն «ազատորեար, հայորեար, հայ մարդիկ, գլխավորներըր» (ըստ Աճ. բառարանի), աւագորեար և այլն: Կարելի է վերագրել ազատանուն, ապա «ծառայորեար» բառը նույնպես այդ քաղաքական ֆունկցիային համար է և նշանակում է «իշխողներ» (կառավարողներ և այլն), որոնք ծառաներից են բարձրացել այդ բարձր անդին: Պատմությունն շատ դեպքեր կան, երբ ծառաներըր բարձրացել են իշխանության գլուխ:

Խուռի-հայկական հատարակ անուններըի ազգակցականության քանակը իհարկե երկու տասնյակով չի սահմանափակվել: Խուռի լեզվի նորանոր վաստակի հայտնաբերումը և հաջող տառադարձությունները հնարավորություն կընձեռնեն ապագայում այդ ընդհանուր բառամթերքը ավելի հարստացնելու: Խուռի բառերի իմաստը ճշտելու համար երբեմն հայերենը կարող է վճռական դեր խաղալ և ընդհակառակը, ինչպես վերևում ցույց արվեց: Իսկ երբեմն էլ տեսական-ձևական մոտեցումը, որ զուտ հիպոթետիկ բնույթ է կրում, ամենորդ չափոի համարվի: Օրինակ խուռ durupi բառը Տուշրատտայի նամակում (III, 108—124, հինգ անգամ) Բորկը տառադարձում է toropi և թարգմանում «համաձայնություն, պայմանագիր, դաշինք» (տես նրա Der Mitanibrief und seine Sprache, Königsberg, 1929, էջեր 76, 105), իսկ Ե. Սպայսերը (Intr. to Hurrian, էջեր 71, 115) գրելով turubi կամ durubi թարգմանում է «երկյուղ, վտանգ» (danger) կամ «կարիք» (need), որը ինչպես տեսնում ենք անորոշ է: Եթե դիմենք հայոց լեզվի օգնության, որ որոշ պայմաններով (հնչյունական օրինաչափության և այլն) և զգուշությամբ անհրաժեշտ է մինչև իսկ, ապա ես կարող էի պաշտպանել Բորկի թարգմանությունը, մանավանդ որ այդ հատվածում անընդհատ խոսվում է նամակագրության (tuppe «աղյուսակ» և հոդն. tuppena) մասին: Հավելենում կա թուռի («հյուսված շոր, հագուստ») և ցանցի նման իրար կցկցված շոր կամ գրահ», որի հիմնական գաղափարն է «կցկցված, հյուսվածք» (=խեթ. tarup— «հյուսել, կցկցել, դաշնավորել»), իսկ այդ «հյուսել» գաղափարից հետո չէ «դաշն, միություն» իմաստը, ինչպես դերմ. Bund «դաշն», binden «կապել» բայից, խեթ. išḫiul «դաշն, միություն», išḫia «կարել» բայից, ռուս. союз հին -юз «կապել»

բայից և այլն: Բայց այս իմ անսական առաջարկը ունի մի հնչյունաբանական առարկութիւն, այդ այն է, որ էխուռ. „r" (ոչ rr) մի բաղաձայնի դիմաց հանդիպանում ենք «ա», իսկ sarri (zarri) և մեր «ծառաս» համեմատութեան մեջ ունենք խուռ. rr=հայոց ռ: Այսանդ կարող է լինել անդրկան-խուռիտական (Միտաննի բարբառի) առանձնահատկութիւն, որը, ինչպես վերևում անանք, Նուզիի և Բողազքոյի խուռիտական բառերի կրկնակ բաղաձայնների դիմաց (-šalli, -anne, elli, menni...) տալիս է մի բաղաձայնով գրութիւն (šala, ene, ela, mēna և այլն). մանավանդ որ Տուշրատտայի նամակի մեջ չկա šarri (կամ sarri) գրութիւնը, բայց կա zar-ra, որը հավանորեն նշանակում է «ծառայի հետ» (տես վերը):

Անցնենք խուռ-հայկական հատուկ անունների ուսումնասիրութեան: Այստեղ ևս պատահում են հնչյունաբանական առանձնահատկութիւններ, որոնք իրենց պատճառները ունեցել են, բայց մեզ անհայտ, ինչպես խուռ. z- հայ. z (զ), այնինչ մյուս դեպքերում, բնականաբար փոքրասիական և խուռ-ուրարտական այլ անունների համեմատութեան ժամանակ լինում է, օրինակ, խեթ. z=հայոց č (ճ): Ես արդեն մատնանշել եմ հենց հայոց զաւակ և ճաւակներ բառերի մեջ այդ բազմազանութիւնը, որը անշուշտ բարբառային և ժամանակային հանգամանքներով պիտի բացատրել: Նմանապես խուռիտական t կամ tt հայերենի հատուկ անունների լինում է տ (t) և թ (t'), նմանապես դժվար պարզաբանելի, քանի որ գրութիւնը չի տարբերում պարզ պայթականները և ասպիրատ պայթականները:

Բնորոշ այսանդ խուռիտական հատուկ այրանունները, քաղելով դրանք Նուզիում հայտնաբերված ակկադական անուանական, դատական, իրավական այլևայլ փաստաթղթերից (NPN), անկախ նրանից, թե որտեղից են դրանք մտել խուռիտների մոտ, բուն խուռիտական են, թե յոթացրած ակկադներենից կամ կասիտներենից:

1. *Akitta* (‖ Akitti, Akitte)=Ակիթ, որը վարդապետ էր (տես Ղազար Փարպեցու «Թուղթ առ վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1904, էջ 196): Ուռիտներենում վերջամաս -i(t)ta կա նաև Ennita, Ḫupita, Ikita, Miššita, Ukkitta և Zikita այրանուններում:

2. Arditi (‖ Artiidi, Ardiidi)=Արտիթ, որը հայոց նախկապոտ էր Բասենում (համեմատել նաև Արտիթես Մ. Խորենացու մոտ, էջեր 99 և 219): P. Purves-ը (NPN, 203) այդ Artiti-ն բաժանում է Ar-titi, որը I. Gelb-ը (ibid., 35) համարում է կաս-

կածելի: Ard- արմատը (<ar- *տալ, նվիրել*), որ կա նաև ուրարտերենում (ard-iše «նվիրը»), բարդված է նաև -it' (-ith) ածանցով, որը մանում է ոչ միայն հայոց Ակիթ, Արտիթ բնոյթ ալրանունների մեջ, այլև Ասիթ (*Ամասունիներից էր, ասս. Թ. Ասթրունու մոտ, 147*). Բրիթ, Զուիթ, Գնիթ (*Ինքնանի նախնիները, ասս Մ. Խորենացու մոտ 335, 340*):

3. *Bazi* (Pazi) կամ Baza=Բազ, որը Հալիի թոռն էր, անվանադիրը Բդնունի նախաթաթոմիյան: Ասորեստանի անունը շատ ուշացած անուն է եղել, որովհետև երեան է դալիս ոչ միայն Նոպի-Գաստրի, այլև Նիպպուրի, Աննատուիայի և այլ աղբյուրներում և համապիսում է «խուռա-անասաղիսական» (NPN, 244): Նոպիից մեզ հայտնի է և ածանցավոր *Pazaku* անունը, որը համընկնում է Խորենացու մոտ լսվածքով իշխանավոր բազուկ անվան հետ:

4. *Puta* կամ *Puttu* (Puddu) =Բութ, գլխավոր քուրմ էր, կամ Բուտա, որ Առաքեղան տոհմի իշխաններից էր, խուռիտներն բառը հաճախ *Putu-Ḫepa* կնոջ անվան մեջ, որ տասույի նշանակում է «Ննեպա (=Ննեփիա) տասմածուհու ապատարհինն» և այլոր գրվում է կիսագաղափարական ձևով՝ ERUM-ḫe/hi-pa „servent of Ḫepa (NPN, 248): Համեմատել նաև վրաց *Budu*, որ իր վերջին „u" ձայնավորով ոչնչան մոտ է խուռիտներին: Հ. Աճառյանը «Հայ անձնանունների բառարանում» (II, 425) հայոց Բութ (Բուտ) անունը հանում է ասորական (սիրիական) bud «ևկեղեցական հակիչ» բառից: Հայ-վրացական անուններըը քան թե անկախ են ասորականից և նրանց «ապատավոր» իմաստը (servent) կար խուռիտների մոտ երկու հազար տարի մեր էրայից առաջ, որ տեսնում ենք, օրինակ, Pudu-Ḫepa իգական անվան մեջ:

5. *Dada* (Dadā) ուր քաղաքի III դինաստիայի ժամանակաշրջանի ասորական անուն է (*տես* I. Gelb, Hurrian and Subarian, Chicago, *1944, էջ 95, 109*): —Հայոց Դադէ կամ Դադիու: Հիշվում է նաև խուռ. (և ուրարտական?) *Dade* արքանունով մեկը, որ Arziza (=Արճիշ?) քաղաքից էր: Համեմատել նաև վրաց Dadiani, Dadeškeliani ազգանուններըը: Արդյոք խուռիտական անունը կապ չունի խեթ. բնիկ ասրական Datta և խեթ. հիերոգլիֆական Tatta տասվածանվան հետ (I. Gelb, Hitt. hier, III, 48), որը թիթեռ մանում է և հայոց Դատվան (Dat-van) քաղաքամանի մեջ, վատա լճի հարավ-արևմտյան անկյունում, որը տասույի նշանակում է

«Թաո տասծո բնակավայր» (Dat-ը փոխարինում էր Տիշպակ ջրի և ամպրոպի աստծուն):

6. *Dudukaia*, որը իրեն Dadu- մասով=հայոց Դուդու անվան: Ածանցվելիս -kaia բարդ մասնիկ է համարվում (-ka և -ia), որ անհատ ենք նաև Ḫanukaia, Ḫerrikaia, Innikaia, Kanukaia, Pallakaia և այլ բառերի մեջ (NPN, 222): Կա նաև հայոց Տուտա և բարդ Տուտհորդի հատուկ անուններըը, որոնք այս թիվն են պատկանում: Թերևս խուռիտական-հայկական բառերը վերջին հաշվով անմահացնից փոխառյալ լինեն, ար կան թե Dûdu աստվածանունը և թե՛ անձնանուններ —Dûdu, Dûdu abu-šu «Դուդուն նրա (šu) հայրը», որոնք հայտնի են մեզ Նուզիի տաբլետներից, որպես խուռիտների անուններ: Ե. Շրադերը („Die Keilinschriften und das Alte Testament». Berlin, 1902, էջ 483) այդ Dûdu աստվածանունը կապակցում էր ժամանակ անմահան dâd, dîd dûd «սիրելի» արմատի հետ, որից և «բնուի» նոր նշանակություններ (NPN, 303):

7. *Zaza*=հայոց Զազա, որ կրում էին մի քանի Զաքարյաններ XIV—XV դարերում: Կա և փոքրազիական Զազիկ (Ա.Ա., «Անձն. բառ.», II, 163): Ամեն բառը հայտնի է ոչ միայն Նուզիից, այլև Կապադովկիա տաբլետներից, որպես բնիկ անդրկան բառեր (F. Stefens, Pers. names of Capp., 70, 85)—Zazia, Zaz, Zaza (աստված), Zazuni: Ի միջի այլոց հայոց Զազա անունը հիմա էլ գործ է ածվում մեր գյուղերում, օրինակ Աշտարակում, ար կա հիմա էլ Զազինց ազգանունը և «Զազի գուդ» հարթավայրը: Թուրքի հայոց Զազ և Զազուռ անունները բարբառային այլ ձևեր են, հին հնչյունի դիմաց տալով «ջ» (փոխանակ «ճ»):

8. *Zige* կամ *Ziki* (արական և իգական) Նուզիի և Կապադովկիայի տաբլետներից (Stefens, Pers. nemes of Capp., 70) =հայոց Զիկ, որը Հ. Աճառյանը համարում է փոխառություն պարսկ. Zik անձնանունից (Անձն. բառ., II, 208), բայց մենք դիտենք, որ պարսիկները հնում իրենք էին փոխ առնում Միջագետքից, մինչև իսկ հատարակ անուններըը (օրինակ պարսկ. Vitaksa= բռնաշխ, ուր Вестник древней истории, 1949, № 3, էջեր 11—13):

9. *Ḫinzuri*, *Ḫinzuraia* իգական անուններըը (Նուզիից)= մեր նշանր, նշանրիկ միջնադարյան անուններին, որոնք կազմված են անկախ խուռիտներից, քանի որ հատարակ ծագում ունեն և հայոց «խնձոր» բառից են (ուր վերը): Արաքսով վերադառնում է հա-

յոց այդ բառի փոխառութեան խնդիրը աւորական ḫazzūrā բառից, բայց ակկադական ḫašḫurr-u-ն «խնձոր» բառի առկայութիւնը կարող է խոսել այդ բոլոր ձևերի (խուռի, հայոց և աւորի) փոխառութեան մասին Միջագետքից:

10. Ḫušuše, Ḫušušaia որպես իգական անուն ḫuš- արմատից և -(ü)še դոյականացնող ածանցից (կա և Ḫušḫušu կրկնակ արմատով իգական անուն) (=խուշուշ, կնոջ անուն է և գործածական է եղել X—XIII դարերում («Անձն. բառ.», II, 562):

11. Ḫutta (‖ Ḫutti, Hutaia, Hutia) =խութա, որը Սատունի հայ իշխաններից մեկն էր և իր Ամբառ, Մուշեղ և Ներսես եղբայրների հետ, բյուզանդական Մավրիկիոս կայսեր հրամանով, գնաց օգնելու վաղուած պարսից Խոսրով Թագաւորին («Անձն. բառ.», II, 555):

12. Ḫuia (Ḫuuia) բացի Նուզիից հիշւում է նաև Բողազքյոյի վաւերաթղթերում (KBo, III, 3, Col. III, Us. 2) որպես Կարգամիշի իշխան=Հոյ, որ հայոց լեգենդար կառավարիչներից մեկն էր Գերճ, Արրան, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայլակ և Ակաւորդի շարքում (Մ. Խոր., I, § 20), այսինքն՝ մինչ սկյութական շրջանում (VII դար): Թերևս խուռ. Ḫuia և հայոց Հոյ անուննները առաջացել են hoi- հնաւարակ անունից, որ հայերենում (արմինևերենում) դեռ մնացել է «փառաւոր, ամուր» իմաստով (հոյական, հոյանուն), ինչպես նաև խեթերենի ḫu-ú-e (KUR VIII 60 obv. 8), ḫu-e-ni-wa-an (ibid., I, 14), ḫu-u-iš-ta (KUB X 63 ii 11) և հնաւոկ անուննների մեջ մտնող Ḫui կամ Ḫuip- մասով—Ḫuišša, Ḫui-Tešup (կրճատ Ḫuite), Ḫui-Tilla, Ḫuip-erwi, Ḫuip-Tilla և այլն:

13. Ḫambizi կամ Ḫaburzi (<Ḫabbur-^{d}Sin «շառավիղը Սին աստծուց») =Համբուժ անվան, Համբուժեան նախարարական առնանուան մեջ, որը «Դահնամակում» յուում է քառասունմեկերորդ տեղը (տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Петербург, 1908, էջ 250) «գորանամակում» սխալ «Հարուժեան», էջ 252, իսկ Ներսեան վարքի «կնոջ դահնամակում» Համուժեանք, (էջ 258): Պետք նշել, որ Համբուժ=խուռ. Ḫamburzi ինչպես և վերևում բերուած Հոյ=խուռ. Ḫuia համեմատութեան մեջ խուռ. ḫ ոչ թե համապատասխան է հայոց «խ» բաղաձայնին, որ սովորական է այլ դեպքերում, այլ հայոց «հ»-ին: Խուռիներենում այդ հնաւոկ անունը փոխառութեան է ակկադերենից առնուած: Սումերական ḫabbūru նշանակում է «ճյուղ, շառավիղ» (stock, shoot, sprout" (NPN 305, A. Makrae-ի դրած հաւասարման), իսկ

sin աստծու անունը բարդութիւններում հաճախ դառնում է -si կամ -zi փոխվում է նաև Zi-ni, Zi-i-ni կամ Sin-ni-i կամ Zi-ni-a, ^{d}Sin-ni-ia, Sin-nia-ia, Si-ni-a, համեմատել այդ անունը որպես բարդութիւն երկրորդ էլեմենտ -*A-bi-^{d}-sin*, A-bi-zi, A-bu-zi, A-pil-^{d}sin *(«որդի Սինի»)*, A-bi-zi, Mu-hur-^{d}sin *(հանդիպումը— ընդունումը Սին աստծո)*, Mu-ḫu-ur-za, Šarru-^{d}sin, Šarru-zi և այլն: Այդպես և Ḫu-bur-^{d}sin կամ Ḫa-ab-bu-ur-^{d}sin և Ḫa-bu-ur-zi (ibid., 311): Մեր Համբուժ- կամ Հարուժ- անունը առացվել է այդ Ḫaburzi-ից, որը ցույց է տալիս, որ խուռ. (resp. *սեմերա-ակկադական*) z կամ s բաղաձայնը կարող է տալ հայերենում ž (ժ): Գուցե Արա-ժին անունը նշանակել է «նվիրը Սին աստծո», իսկ հին sie ‖ zin փոխարկուարար նշանակել հետագայում «աստված» «Արա-ժին» կարող էր նշանակել «Արա-աստված»? Համեմատել մեգրելական Antári-žina, հնդկ. Andari-sina և այլն, որ պիտի նշանակեին «Անդար աստված»: Հայոց Hambuž- և ակկ. Ḫuburzi-ի խուռ. ձևի հետ համեմատել աստուրական Kambuzia անունը (Kn. Tallkqist, Assyrian Personal Names, 1914, էջ 274), որ այնքան հիշեցնում է պարսից Kambūses անունը:

14. *Kuari* (ku-a-ri կամ ku-ú-a-ri) Նուզիում արաբան և երբևիցե իշխան անուն է (NPN, 89)=Կուար, որը իբր հնդկական Դեմետրե-Փիսանի իշխաններից որդին էր Տարոնում, հիմնում է իր անունով Կուարա գյուղը և Ծուհան ու Մեշոի եպրայրների հետ կռուներ է դնում այդ իշխաններին: Ծուհան անունը անշուշտ ցույց է տալիս խուռիտական ծագումը և որոշ ցեղերի կամ առհասարի գալը Տարոն-Տուրուբերան: Թերևս սա արձագանք լինի նաև այն ժամանակաշրջանին, երբ հնդկական որոշ ցեղեր բարձր դիրք էին գրավել իրենց ազնվականության մեջ և maryannī զորքով, որ այդ ազատանուն ազատներից (*ջաջերից*) էր կազմվում, իշխում էին ՔՈ խուռի-Միտաննիում և ՔՈ հյուսիսային Սյուրիայում, թողած դեռ հնդկական դրանց լեզվի ազդեցությունը, որը ըստ իս եղել է նաև հայերի էթնոգենեզի վրա, անմիջապես ՔՈ միջնորդությամբ:

Խուռիտական և հայկական անձնանունների հանդիպման դեպքեր կարող ենք ավելի բերել, եթե իրարին ձևական և արտաքին բնույթ չկրեն, որ երբևիցե անխուսափելի է դառնում: Օրինակ, ունենք խուռ. անձնանուն *Warašama* և հայկական Վարշամ, խուռ. *Zarmia* (Zarwia) և հայոց «զարմ» (=ցեղ, սերունդ), որը իրար հետ է հանում զ+արմ «ծառի բուն» (համեմատել և Զարմայր հատուկ անունը), խուռ. Atikka և հայոց Աթիկ և այլն:

Թևրևս խառխառների միջոցով է մեզ անցել ամպրոպի և կայծակի աստուածական Adad աստծու անունը, որպես այրանուն, թևպես խառխառների մոտ այդ Adad անունը առանձին չի գործածվել քան եղած նյութերի և միայն մտնում է անձական բարդ անունների մեջ, որոնք յուրացրել են և խառխառների կողմից, ինչպես օրինակ, այրանուններ—Adad uballiṭ «Ադադը ապրեց կյանք», Adad-noṣir «Ադադը—հովանավոր (է)», Zupradad (>Zurbadda) «Ադադի մագիլները» և այլն: Այնուամենայնիվ հայերին անցել է այդ Adad անունը, այն էլ որպես առանձին այրանուն Առատ ձևով, ինչպես հետ ունենինք Առատ Խորխոռունի, Առատ Գնունի և այլն: Նմանապես կասխանների Ḫarpa (Ḫarbe) աստվածանունը (էնլիլին համարը) մտել է խառխառների մոտ, որպես այրանուն կամ անվան մի մասը թե՛ այդ ձևով, թե՛ Ḫarme ձևով: Օրինակ, նույնիսկ ունենք—Ḫarbaniwe (Ḫarpaniwe) և Ḫarme, ինչպես նաև Ari-ḫarpa կամ Ari-ḫarm(e)e, Ḫaš-ḫarba կամ Ḫaš-harme, Kizzi-ḫarpa (Kizzi-harbe), Mele-ḫarpa (ստուկ «Մարդալի») և այլն: Ինձ թվում է, որ մեր առասպելական հայկազնի Հարմա անունը ավելի մոտ է այս խառխառացրած Ḫarme-ին, քան հունական Hermes-ին, թեկուզ վերջինը փոքրասիական ծագումով լինի:

Վերջապես կան խառխառական այրանուններ, որոնք թվում է թե պետք է լինեն երեխաների թոթովանքի արտյունք (Lallwörten), բայց այսօրվա նա կարելի անվանել ազգակցական նմանաբռնություններ, ինչպես խառ. Kakki (Gakki), Kakkia, Kakku, Kakkuia, Kakkuzzi (Gakuzi), Kik(k)i, Kik(k)ia, Kukkuli, Kuku (Gugu) և այլն, և մյուս կողմից հայոց Պաղ, Պաղիկ, Կոկ... վրաց Kakuli, Kakuçi և այլն (տես NPN, էջեր 222, 226, 229). թևպես նման անուններ կան նաև Կապադովկիայի հնագույն ժողովուրդների մեջ, ինչպես Gaga (աստվածանուն), Gagia, Gakii (F. Stefens, Pers. names of Capp., 82, 83), ինչպես նաև աստուրական բնագրերում՝ Gagii, Gagu և այլն (Ibid., վկայակոչելով Kn. Tallquist, Assyr. pers. names, էջ 79)[1]:

---

[1] Հմմտ. F. Stefhens-ի («Pers. names of Cappadocia», էջ 58) բերած այլևայլ ցրվելից հավաքածո անուններից, աստուրական ազդակիցներում («Բյուր-Թևին»-ից, կնատիայի մոտ) ի մէջի այլոց հանդիպում ենք սեմական կազմութեամբ հետևյալ այրանունը— Me-šú-rabi և Me-šar-rabi, որոնցից մանավանդ առաջինը շատ նման է մեր Մեսրոպ անվան, թևպես ապացնի էր Մեշրոպ:

Յատկ և հայ լեզուների այդ ազգակցական փոխհարաբերությունը կարծես թե բառամթերքից այն կողմը չի անցնում, լինեն այդ բառարմատներ հասարակ թե հատուկ։ Ես թողնում եմ այն ընդհանրությունը, որ օրինակ այդ երկու լեզուները „r"-ով բառ չեն սկսում, սեռեր չունեն, որովհետև այդ հնությունը հատուկ է բոլոր վերքրասխական և մի շարք այլ լեզուներին, ընդդրկելով և խնթիներները („r"-ով բառերի բացակայությունը և սեռերից միայն արականի և իգականի ներկայությունը անուններում, դերանուններում և դերանվանական վերջամասնիկներում)։

Յատկանիշների հոլովման և խոնարհման թևքույթներից հայոց լեզուն ոչ մեկը չունի, ինչպիսիք են ուղղ. (էրգատիվ), -š սեռ. -we, արտ. -wa ուղղորման -ta կամ -da, ներգոյական -a կամ թե բայերի մեջ ներկայում—I դ. -au, II դ. -u, III դ. -ia (հոդնակին լավ չի հայտնի), անցյալում նույնը բայց -uš մասնիկով՝ aruš-au «տվի», aruš-u «տվիր», aruša «տվեց», ինչպես որ ապառնի համար -et կամ -ill մասնիկն է ավելանում՝ kat-et-au «կհաղորդեմ», katilliet-a (katillit-a) «կհաղորդի», gipanet-a «կուզարկի» և այլն։

Յատկանիշների կցականությունը ևս հայերենը գրեթե չունի, որը լինում է ամեն մի բառի հետ, նման խնթիներենին և մասամբ ուրարտերենին։ Հայերենը միայն մի բանով է դրանց մոտենում, այդ էլ է, որ դերանվանական վերջածանցներ (հոդեր) է դնում թե անուններին վրա (հայր-ս, հայր-դ, հայր-ն) և թե բայաձևերի վրա (գրեցաւ-ն, գրեցեր-դ, ասիմք-ս...), որով մեր լեզուն մոտենում է դրանց, բայց ոչ միայն խուռիտներենին։ Համեմատել խուռիտներեն ḫaš- uš-au-n pisand-uši-tta-ān «լանցի (ḫašušau) նրան (-n) և (-ān) ուրախացրի (pisand-uši) ինձ (-tta), Šeni-wwu-šš-ān ašti šaruša..., undu-mān aruša-n և (-ān) եղբայր իմ (-wwa) նրան (-šš) կին (ašti) ուղեց (šaruša)..., ապա և (undu-man) տվեցի (arušau) նրան (-n)»։

Բառակազմության ընդհանուր մասնիկներ (ածանցներ) ևս գրեթե չկան խուռիտներենի և հայերենի մեջ։ Կարելի է ընդունել it՝ (- իթ) ածանցը, ինչպես խուռ. *Ennita* (կա և Ennia), *Ikita*, *Miššita*, *Ukkita*, *Zikita* (կա և Zike, Zige), իսկ հայերենում՝ Արտիթ, Մարդիթ, Մաճիթ, Տիրիթ, Գնիթ, Ակիթ և այլն։ Կարելի է տեսնել և -ukka, -uk ածանցը—*Dušuk*, Šašuk, Ḫašuk (իգական անուն), *Kaltuk*, *Kizzuk*, *Naḫaruk*, որի դիմաց հայոց Արջուկ, Հաւուկ, Սիւուկ, ինչպես և գառնուկ, խոզուկ, մանչուկ և այլն։

Ձևաբանական կապի դրսևոր բացակայությունը այդ լեզուների մեջ թերևս պիտի բացատրել նրանով, որ խուռիտների ձևաբանական այդ վիճակը դրսևորվել է մեզ հայտնի վիճակից հեղել է մոտ երկու հազար տարի առաջ, և բնական է, որ ուժեղ տարբերը այդ կողմից բացակայում են։ Կարելի է ենթադրել, որ խուռի այն լեզուն, որ հյուսիսում (Աղձնիքում և այլն) է գործածվել, որոշ չափով հետևել է նաև Մխոանների լեզվից, որը վատատրին մեր քննության էր հարկերին համեմատ։ Եվ այդ հյուսիսային խուռիտները, որ նա կանվանենք պարմանական կերպով արմինների, ավելի մոտ է եղել ուրարտներենին, ինչպես ցույց են տալիս մի շարք բառային և ձևաբանական հանդիպումները այդ երկու լեզուների մեջ։ Այդ հյուսիսային խուռիտներից, որը Արմինա և Շուպրիա և լեռնական մասերում է խոսվել, անցել են հայերին, այսինքն՝ Հայասայի նկիրներին, ավելի շատ հատուկ անուններ, ինչպես և աստվածանուններ (Hapit ‖ Hepit, Šauška, Tark-, Šanta-, Ara, Nupatik), քան ուրարտներենից, որից ընդհակառակը ավելի են ձևերը մնացել, բայց էլի համեմատաբար քիչ։ Վերջապես ուրարտների լեզվական վիճակը մեզ հայտնի է համեմատաբար ավելի ուշ շրջանից (VIII – VII դարեր), այսինքն խուռ-արմինենից յոթ դար հետո։ Եվ բնական է, որ այդ ուրարտները, որը դեռ շարունակել է տալ հինգերորդ դարում մեր էպոսից առաջ, ավելի անմիջական լեզվական նյութ պետք է ներկներ նորագտածների հայերենի մեջ, քնական էքսնիկների հայերը հինգերորդ դարում, մանավանդ Մեսրոպ ժամանակ, երբ գիտեցողը դեռ կային, մոտ էին իրենց էթնիկական և դարձյալ լեզվական ձևակերպման։ Այժմ անցնենք հայ-ուրարտական այդ լեզվական առնչություն։

ՈՒՐԱՐՏԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՎԱԴԵՐՄԸ

Ուրարտի տերիտորիան համեմատաբար ավելի հարմար և հանգիստ վայր եղած յոթերորդ դարից առաջ (Հայասային) պատճառաբանությամբ, ինչպես և պալա (բալա) բառգաթիվ ցեղերի համար, քան իրենց վայրերը Վերին Եփրատի և Գոնտուսի շրջաններում, ուր նրանք ապրում էին որպես հարևաններ երկրորդ հազարամյակում մեր էրայից առաջ։ Երկ Աղձնիքում, որ Ուրարտուի և Ասորեստանի կռվախնձորն էր, այդ ներկրները չկարան ուժեղ հակադիր և ազգմիկ վաչկատուն ցեղեր, չհաշված պարսից պետությունը քաղաքական ճնշումը, ապա այդ տեղական խուռ-ուրարտական ցեղերին հնարա էր ենթարկել և մերթ-մերթ կազմել, խառնվե-

լով պրանց հետ, ինչպես որ եղավ նաև նրանց շատրարի (շատրխալի) և արմին խատխոանների իրենց լեզուն պրելին կորցնելու ընթացքում էին, ենթարկվելով ասսամալիզացիայի (սիրիացման) նոր ալիքի ազդեցության, գրա դիմաց հյուսիս ընկած լեռնային և Տարոնի, Հասան դեռ վատպտրականի, ցեղերը դեռ զերծ էին այդ ասիմիլյատորական հոսանքի ազդեցությունից: Եվ հայոց լեզուն հիմնականորեն, մանավանդ քերականական տեսակետից, սիսի բարբառներ, մնալու, խոշոցներ այդ Ագձնիք-Տարոն (Տարաբերդան) լեռնաստաղերը: Իսկ Միտաննի խատխական լեռնաստաղերը մանավանդ քերականության տեսակետից, ինչպես արդեն տեսանք, դեռևս չափազանց անհետացին այդ VII—V դարերում: Դժբախտաբար Տարաբերդան այդ լեռներից դրական մեզ ոչինչ չունենք, միայն կարելի է ենթադրել, որ դրանք միշտ տեղը սիսի գրավների հին Միտաննի խատխոանների և համեմատաբար ավելի նոր ասորատականի միջև: Իսկ այդ վերջինը, եթե համաձայն հայոց «տարտրա» և «խալդ» տերմիններին, որ ամեն պարագայում չէր կարող լինել (խալդյաց... նշանակում էր «խալդապաշտ», «խալդիվանեցիների» իշխանության ենթակա, «խալդիվանեցիների» իշխանությունը և Ասդի տասնեակ ընդունող), ապա փաստ է, որ հինգերորդ լեռներում այդ խալդերին անվանում տակ շատ ենթակել են ապրել մինչև հինգերորդ դարի վերջերը, մինչև Քանաքերի ժամանակ: Այժմ վերցնենք պարզաբանական մեզ հայտնի ասորատուր իշխողների լեզուն և հանձնենք համեմատական քննության և տեսնենք, եթե ինչեր են լուծարել նկատի հայերը, որպես հայացիներ: Վերցնենք նախ ասորատա-հայկական ընդհանուր բառամթերքը, իսկ հետո և քերականական տարրերը:

1. abili «տղա, տղեր», Gombe: Այս բառը գոյ է ածում միայն ebani ebanitukedi abili dabi նախադասության մեջ, որը մեզ անգամ պատահում է միայն ասդմական արձանագրություններ մեջ (Այրգիշտիի և Սարդուրի): Մ. Մնանդինին իր հրատարակած Սարդուրյան նոր արձանագրություններ (Հ. Օրբելու կոլմից գտած, Վանի ժայռի արձանագրությունների) աշխատության մեջ (էջ 40 և շարունակություններ), հնդհանուր առատությամբ նման ասդմական արձանագրություններին māta ana mātija utir «երկիրը երկրիս կցցի» նման արտահայտություններ վրա, ասորատական վերոհիշյալ նախադասությունն էլ արդյոք է թարգմանում (տես նաև J. Fridrich, Einf. ins Urartäische, էջ 62—63): Երկուսն էլ abili dabi գրում են միասին, իսկ խնամքի տեսակետից J. Fridrich-ը ասորատեսակետում է, որ ասորատ. այդ բառը ակզբում (ծագմամբ) համընկ-

ներ այդ ակկադական turru «շրջել» (drehen, wenden) կամ «կցել» (hinzufügen) բայի խառատին: Ես ևս կարծում եմ, որ abili-dubi) ընդհանրապես է ազիլ որպես «միացնել, կցել», բայց ի նկատի ունենալով հայց «ավել, ավելի» բառը, որից յաւելում (=ավելացնել), առաջարկում եմ ուրարտ. այդ նախադասությունը թարգմանել՝ «(այդ) երկիրը երկիրս (ebani-ukie-di) ավելացրի»: Արդիշխի I մի արձանագրության մեջ, որը լուսո Հ. Օրբելու ճիշտ ենթադրության վերագրվեց է Վանա ժայռի սրճելյան նիշերի մեծ քարակոթողից (որ չի վերացել), ս. Սահակ եկեղեցու գոհատեղանի տակ է տեղավորված, մենք կարդում ենք այդ ուրարտական նախադասությունը այլ թարգմանությամբ (տողեր 8—19)—„3KUR ebanieli edini suṭuqubi LUtaršuanarani abili-dubi KUR ebani-ukie-di...“ =երեք երկիրներ տուգանեցի, (իրենց) մարդկանցով միասին (-rani) ավելացրի իմ երկրին՝ երկիր Կալխի..., երկիր Անգելասին (և) քաղաք Շաշիլուխին: Վերջամասնիկ -ra «միասին» կա և խառնաբերնում: Իսկ -uki «իմ» կամ նաև ka-uki-(kai-uki) «աջկա» (ka կամ ավելի հաճախ kai նշանակում է «առաջ»), -di ազդարման հոլովի վերջավորություն է: Abili բառը ազգակից եմ համարում հայց աւել „более“, abili dubi «ավելացրի» (прибавил), որ ուրարտ. b=հայց ւ կամ վ, ինչպես Biaina=Վան, անց. կատ. կրավորական-չեզոք -abi—հայց աւ և այլն: Abili dubi «ավել արի» (=ավելացրի) ոճի մեջ երկրորդ մասը (dubi) առանձին բայ է, անցյալ կատարյալ առաջին դեմք եզակի, և ամբողջ մասը այդպես բարդությունների մեջ կարծես թե ներգործականապառնառական խառատ է պառնառում նախորդ բառին, ինչպես -atḫana dubi «պաշտամունք արի» (=պաշտանցի), ipša-dulini «խմել արվելու» (=խմեցվելու), niki duli «տուգան, տուգանքի» (?), nipsi duli «գոհ, գոհացիր» (կա և nipsi dulini Զոլաբաշեցի արձ.. տողեր 19, 23), wili duli «գունդ արի» (=հավաքվիր?), որի համար կա նաև welisini «հնազանդին», weli šusini «մեկ գունդ» և այլն: Հայց աւել(ի) բառը ազգում են կապել հունարեն ophéllō «մեծացնել, ուռցնել, աճեցնել, ավելացնել, շատացնել», óphelma «առաջ», óphelos «օգուտ, շահ», նման հնչյունական հարաբերությամբ, ինչպես հայց աւել «ավելցնում» գործիք, веник և հուն. ophéllō «ավելի», óphelma «ավել» (տես Աբմ. բառ., I, 805, 807): Բայց հայերենում հնդեվրոպական ծագում ունենալու դեպքում սպասելի էր *որել կամ *արել, ինչպես ճիշտ դիտում է Հ. Աճառյանը (անդ, էջ 805): Մյուս կողմից ուրարտերեն abil(i) բառի

դիմաց ամենքն շուտ հայերենում սպասելի էր առնել կամ արեղ, ինչպես արարատական ժամանակի Abilianiḫi անուանումը, որը անձնանունից է, հայերենում ստիլ է Արեգնան, Արեգնից նախաթուրքական անունը, պահելով իրեն B –հայց Բ (b)։

2. baba «լեռ, սար, горa», որից babani «լեռնային» և Baba աստվածանունը Մհերյան դռան արձանագրության մեջ (տող 21/68)։ Հայերենում այդ բառը մաքուր կերպով պահել է Երևանի Մեղրեցու բառարանը, ինչպես ասվել է խուռիտական հիշված pap- ǁ pab- նույնիմաստ բառի մասին։ Հայոց Փարի-ջնն, ափափա, Փամփ-փամբակ, պահպ և նման բառերը գալիս են Հայաստանի արևմտյան մասից, Վանի լճից արևմուտք, այնինչ Բարթ «բլուր» բառը ծագել է ուրարտերենից, չխոխնելով b բաղաձայնները, ինչպես Abilianiḫi=Արեգնան հատուկ անուններին պնդում (այդ նախաթուրքությունը դանվում էր Արարքի ավազանում, Կապղեմանի մոտ)։

3. ebani «երկիր», որին ազգակից է հայոց աւան «գյուղաքաղաք», «ինձ գյուղ» բայց նաև «գավառ», ինչպես կուբերեղ Ազնքանդրացու մոտ է (Մեկնութիւն Աստվածաշնչի, Թարգմոթրաց դրքի մեջ) ուր աւանապետ նշանակել է «գավառապետ» կամ թե «աւան այն ասի, որ յանդէպ ոք մտանի ի շինուած գրասիցէ» (տես Արմ. բառ., I, 794—795)։ Ազգակից եմ համարում նաև մեգրել. abani «տեղ» և քարթվելյան ubani տեղամաս, «թաղամաս»։ Համեմատել նաև Gardabani վրաց քաղաքանունը (=*Պարտավան)։ Մեղրելական և հայկական ձևերը հին „e"-ով սկսող բառերի մեջ պիտի լինեին „a"-ով սկսող aban կամ avan։ Հայերենը այս դեպքում „b" բաղաձայնի դիմաց ունի v (w), ինչպես ուրարտ. abili =հայոց աւել օրինակի մեջ։ Ուրարտերեն բառը իններորդ դարի վերջից է, և պետք է ենթադրել, որ նա իր հերթին ազգակից է հիներոդլիֆ խեթ. umene «քաղաք» և խուռիտական Umini «երկիր» բառին, որը ամանք (Bork, Speiser, Sagce...) գրում են amini բնաձագիր u (ոչ ú) նշանի պատճառով։ Նույն այդ umini (omini) բառի հետ պետք է առնչակցել խեթ. -uman վերջամասնիկը (Hattušumanas, Palaumanas), որով ցայց է տրվում տվյալ քաղաքին կամ երկրին պատկանողի նման մեր -ացի (Կողբացի...). -եցի (Վարենեցի...) մասնիկին։ Ըստ իս, աստրական awwānā, Թամուտական avnā «իջևան, բնակարան», քրդական awāni «շինք, շեն տեղ» և առնակը. avani «երկիր, հող» փոխառություններ են այս հին ասիանիկ լեզուներից։ Եվ իզուր են ուզում հայոց աւան

բառը համարել պարսկերենից փոխառյալ, ուր կա միայն հին պարսկ. āvahana «գյուղ, ավան» (=ասևկր. āvasana «քաղաք»): Ուշ. և հինր. խնթերեն umen ‖ umin (‖ uman- «ժողովուրդ», Umman Menda Մանդա «մարդիկ, ժողովուրդ») և վրաց uban «բարբ. ետև հարց ասան և այլն բառերը տարբեր հնչյունական ձևափոխություններ են միևնույն արմատի m ‖ w աղերսական հնչիմաստաբանությամբ (ալտերնացիայով), որ այդքան հաճախ է այդ բևեռային լեզուներում (համեմատել նաև էլամական uwanis «քաղաք» առացված *umani- բնից):

4. eurī «տևել» (և ինուս. ewri-) միացել է հարց որթար (օրնար)=օրհնանք «տևերը, մեծերը» և ophopn բառերի մեջ, որոնց բառն է awri-e ‖ a աղերսական փոխանդրումով բառակերպում: Հաշվենում ոչ միայն արարատական բառակերպն «e»-ն է դառնում „a" (ebani=աստ. ewri-=աբեր-), այլև „u"-ն դառնում է նույնպես „a", ինչպես Urart-(u) Արարտ (Արարատ), Urrana քրմի անունը =հ. Արամ քրմապետ:

5. haț-ubi «կարևոր, բաժանելիս», աղերսական ոճ է առդամական արձանագրությունների մեջ— «հեռանկյն A երկիրը..., կտրեցի (ռազելա, отделил) մինչև (parie) B քաղաքը» և այլն: Haț- արմատը ապրակից պիտի համարել հարց հատանում և խնթ. hatt- նույնմատ բառարմատներին:

6. huš «ցցել, бросить» օրինակ Չմարթեցոց արձանագրության մեջ— aluše KI apulie aluše A^meš hušulle (35'—36') «ով հողով ծածկի, որ ջրերը դյան» (արձանագրությունը), կամ ին Սարդուրի VI արձ. վանի հյուսիսային ժայռե արևմտյան նիշատակ -all isiuše mānuḫušibi «ինչ... միացել էր, ես դուրս կորզեցի» (տես J. Fridrich-ի „Heiss ich hinausgeben", տես Caucasicb, Fasc., VII, 1931, էջ 84): Աբարատական բայն արմատը անշուշտ հնչվել է hos- և պիտի կապակցել հարց հոսել բայարմատի հետ, որ նշանակում է «հոսել, վազել, հոսել, թռչել, ցորենը նրնելով հարդից ջոկել, վիրից ցած ցցել, գահավիժել»: Վերջին իմաստը «գահավիժել, ցած ցցել» միանգամայն համընկնում է աբարատ. huš- (=hos-) արմատի իմաստին:

7. ḳiura- (ǫiura) «հող» շինարարական հայտնի հատվածում „ḳiurani ḳuldini manu uigiei uštini sidauri, որը մի անգամ գրվել է KI^meš ḳuldini manu և այլն (Corp. Iser. chald, 149, XXXIX աղյուսակը), ուր KI գաղափարագիրը փոխարինում է աղերսական ḳiura կամ ḳira «հող» (ḳirani ṣirabae manu..., «կարակալալի արձ., տող 4, Արատքի վրա): Հնչյունական iu (iw)>i փո-

խանգամը պատահում է և այլ դեպքերում, ինչպես arniušinili *և* arnišinili (=RU^{meš}-li *«շինություններ», «ձևնարկություններ»)։ Հայոց լեզուն այդ* kira (qira) *հոդը ձեր յուրացրել է հին* ekira *(եկիրա) ձևով, դնելով սկզբում „e" ձայնավորը և հետագայում ավելացնելով „r" երկին բառի ապղեցությամբ՝* erkin-ekir *ինչպես բարբառներում ունենք երկինք-գետինք, ուր երկինն է արիմատը, ասիմիլյացիայի ենթարկվող (առաջընթաց բառային ասիմիլյացիա)։ Համեմատել երկինքի առաջնության տեսակետից մեր «երկնէր երկին և երկիրս (կամ «երկնէր երկին, երկնէր երկիրս») խոսքատիպ* nepis tekann-a *«երկին և գետին» և այլն։*

8. pahini *«արջառ, խոշոր եղջյուրավոր անասուն (եղ, կով)», որ ամենատարածական բառն է ասդմական արձանագրություններում, որպես ապրուստի աղբյուր։ Համեմատել հայոց պախրք «տավար, արջառ, նախիր», որը փոխաբերաբար նշանակում է նաև «տունիք, գույք, ինչք, ստացված, ապրանք, դրամ»։ Կա և* pahupaj (id.), pahupkiḫ *«մի քիչ դրամ» (տես Արմ. բառ., V, էջ 781)։ Այդ վերջին իմաստները (ապրանք, ինչք, դրամ, ունեցվածք) բխում են առաջին իմաստից, ինչպես ճիշտ նշում է Հ. Աճառյանը, միաձայնելով յուս.* pecus *և* pecunia *«ինչք, ապրանք, դրամ, արծաթ», որոնցից առաջինն* mäl *«եզ, տավար» և «ապրանք, հարստություն, ինչք», որոնց վրա ևս կռվելացնելի պատմական (ուսաց)* скот *և գերմ.* schatz *«գանձ, հարստություն» նախնական* skat *ձևից։ Կան և սեմական նման մեր պախրք-ին հնանալ բառերը— տասր.* baqrā *«նախիր», հբր.* bāqār *«արջառ, կով. ցուլ», տրար.* baqara, baqra *«եզ, կով», տասեր.* buḳḳuru *«հնդկկով»։ Աղարիներից է փոխառյալ հետագա հայոց* պաբաբայ *նույնիմաստ բառը (ibid., 781)։ Մեր բարբառներից Զեյթունը, Սվեդիան և Հաճինը այդ պախրք բառը պահել են «եզ» նշանակությամբ, իսկ Երևանը, Տիգրանը և Ղարաբաղը ունեն պախրա «եզ, կենդանի» իմաստով (ib., 783)։ Սեմական ձևերը ավելի մոտ են հայոց բառին վերջին „r" բաղաձայնով, իսկ ասորականները սկզբի «ա» բաղաձայնով, ասորերիզով վերջին իր n (ն) բաղաձայնով։*

9. pili, pilie (=pile) *«ջրանցք», որին համընկնում է հարավային խառխոսների* pala=*տասեր.* pa, *(տես* Kleinasiatische Sprachdenkmäler, *էջ 153, հրատ.* J. Friedrich-*ի, Berlin, 1932)։ Համանման է, որ ասորատ.* pili (pile) *«ջրանցք» բառը նշանակած լինի սկզբում «հորվածք», և նկատի ունենալով հայոց նույնատիպ* պեղ-*ով բառը, որի ամենի հին արմատը պետք է լիներ*

pil- ինչպես այդ անունում ևնք արիշ արմատների մեջ (Սիլվեստրոս=Silvestros, Բասիլ=Basilios, նշանավոր=illustris և այլն):

10. šani «անոթ, աման» (Gefäss), որը կարդում ևնք կելիշինո ուրարտական հայտնի երկլեզվյան (ուրարտա-ասորական) արձանագրության մեջ (VI տունակում), ուր առաջ. naši-ṭṭqar erī „er brachte Gefässe von Err" նախադասության է համապատասխանում ուրարտերենում՝ naḫuni šani ERI (տես A. Götze, Lur Kelischin-Stele, ZA, HF, V, էջ 108): Հաջորդում այդ ուրար.-šani (հնչվել է san) բառն դիմաց ունենք նույնանշ և նույնիմաստ սան (san) «մեծ կամ փոքրիկ կաթսա» բառը, որն անշուշտ ուրարտերենից (խուռիտերենից) է մտել մեր լեզուն:

11. šerdulie «ճեղքել, paccerem" ապառնի 3-րդ դեմք եղանկի, գործ է ածվում անեծքի համատեքստում («որ այս քարտարձանը šerdule"), գրված է še-ir-du-li-e կամ երբեմն še-ri-du-li-e, որոնք ցույց են տալիս šerdule արտասանության: Ես այդ թարգմանությունը տալիս եմ նկատի ունենալով հայոց շերտ «փայտի չորցված կտոր, պանրի կտոր», «ցանկապատի ցից», շերտել «շերտ շերտ կեղևել, գծել, չարդել, ճեղքել». շերտակոտոր կամ շերդակոտոր անել «տապարով չարդել, կոտրատել», շերտափակ «ցիցերով փակած՝ գոցած»: Ուրարտերենում Šerdulie կարելի էր տեսակտորեն բաժանել և šer-dulie, որ dulie կրճատ ապառնի 3 դ. «կանե, сделает», ինչպես ունենք՝ atqanaduli «պաշտամունք արել», nepsi-duli, šišul-duli «ծես կատարելիք», ter-duli ի նկատի ունենալ terubi (‖ terulubi) «գրի, հաստատակեք, նշանակիցք» և այլն և այլն: Բայց ավելի դիպուկ šerd- պիտի դնել պարզ արմատ, մանավանդ որ կա ոչ միայն հայոց շերտ ‖ շերդ այլև արաբ. šarf «տարմինը շտանել», տատ. šarāf «պատառատել», թող թե հնդեց հայոց շառաել, որը կարող է հերթափոխ ձևը լինել շերտ ‖ շերդ արմատի: Վերջապես ուրարտերենում ունենք և արիշ նման մեր šerd- պարզ ձևին, օրինակ, ինչպես nuld- «ընդարձակել» (նոր Բայազետի արձ.— aluše KUR Biainili nulduali «ով Բիայնա երկրները ընդարձակեց»):

12. Uiri «գնե, պատրաստ, жирный» գործ է ածվում Մհերյան դռան արձանագրության մեջ (տող 26/83 u-i-ti կամ [u]-i-e-ri), որպես հատկանիշ գոնեղող ոչխարի: Մենք հին աղբյուրներից (Աստվածաշունչ և այլն) գիտենք, որ ասոծուն կամ աստվածներին շատ սիրելի էր ասուցել գոհ պատրաստ կենդանիներով: Ուրարտական

այդ բառը և նշանակությունը ևս հատուկտում եմ հայոց յոյր «պարտություն բառով:

13. *ul-adi* «ուղևորվեցին» (Սարգսյրի Նիշային V, 4 տող.— uladi KUR Etiuniedi «ուղևորվեցին Էթիունիի երկիրը»): Այս չհղոր անուն *ula-* ձևի կողքին կա և *ulu* «ուղարկել, դնացուցանել», որ անհնչյուն վերջացեալ է դորձ ածվում ul-ulie ձևով («հանգստություն... Խալդ, Թեյշեբա, Արև) և այլ (ստուգաձևերը են arḫiuruliani են inaini են nara բնաչնչման մասանն): Այդ արմատը առկա է հայոց Ուղի „направление. путь" ուղիղ (որից ուղղորդ) „правильный" և նման բառերի մեջ: Համեմատել և վրաց vla «չվել»:

14. *uḫ-* «տանգել, հանձնել» դորձ է ածվել *uḫulini* ձևով Ռուսա I Թեյշեպուրի արձանագրության մեջ վանի մոտ (28′—32′) —«ջրեր Ալաշեի դետից առաջ տարավ Ռուսախինալի [=Բուիրակ լիճ], որ ջրերը Ալաշեի դետից Տուշպանյան դաշտը ուղղեն, որ ջրերը Ռուսախինալի համար խմելու ծառայեն» (? ipsadulini): Թերևս այս uḫ- արմատից է և uḫu «արշավանք, поход», որ կարդում ենք Սարգսյրի Իշտլան արձանագրության մեջ (21′—23′): ištidi uḫudi URU Meliṭaani..., nunabi ᴵHiḫeruadani ka-ukie «այս արշավանքին Մելիտան... եկավ Խիտրուադան առջևս»: Այս uḫ- արմատին ազգակից եմ համարում հայոց ուղխ «ջրի հոսանք, անկում, поток»: Իմաստի և ձևերս ծագման տեսակետից համեմատել խեթ. laḫui «թափում է ջուրը, և выливает» և laḫḫa «արշավանք», թողած դևռ lax- (լըխ-) բնաձայնական արմատը ջրի խուլ շարժվելու մասին (տես Ն. Մառի անվան կուրինեանի աշխատություններ, 3, 1948 թ., Երևան, Պետհամալսարան, «Երկու բազադաշն բառէլևմնեանք», էջեր 5—211):

15. *uduli* «խաղող»=հայոց ողի «վայրի խաղող», որանց հետ համեմատել նաև արաբ. duali և ասիներեն toli նույն նշանակությամբ: Թերևս եղել է արաբա. նաև aduli «խաղող» ձևը (տես ստորև):

16. şue «ծով», şuini «ծովային»=հայոց ծով և վրաց zʒue (id.), որը առաջացել է zue հին ձևից:

17. şišuli «ծես, արարողություն, ритуал»: Գործ է ածվել 1908 թվին Արամուխում գտնված Սարդուրյան մեծ արձանագրության մեջ (տող 10) adulie şišuli tananini ᴵArgištili ᴵSAR durie tini «խաղողի» (փոխառնակ udnlie?) ծես կատարվեց Արգիշտու

և Սարդուրի անվամբ: Դրան ազգակից են հայոց ծիս և վրաց ծամ (ցցել) նույնիմաստ բառերը:

18. urb- «գոռոզ»: Ունենք urbulini «ձևը», օրինակ Աշուռադարդալի (Վանից արևելք) արձանագրության մեջ (տողեր 4—5)— emi qua šaqiq uššuše qaṣṣu (nipsi-dulini), մի նոր խոյը սասեցու գոռոզից (urbulini)", կա և urbuaṣi «գոռոզաբար», —urbika «գոռոզ», «մարմոց» (տող. հոլ. ur-bi-i-ka-a-še. urbikani-kai —«գոռոզի սասց»). մարդ որոշիչով, ինչ Արմավիրի 13 տողանոց արձանագրության ձախ քարի ութերորդ տողը և աջ մասի իններորդ տողը (միջին քարը կորել է) խառնախրնամ ունենք urbum-ma epēšu «գերծել» (epēš-u «անել» անկատարն է), urbarinni «գերծող, մարմոց» -ar սոմերական մասնիկով (E. Speiser, Intr. to hurrian, 115, 135): Ուրիմն սխալ տանմանել արտաշատ-խառխատական urb- «գոռոզ, մարմնել» բայը, որը ինքնս orb- է հնչվել: Ի նկատի ունենալով որ «գոռոզ, մարմնել» բայը ունենում է և «հնդել, возлять» իմաստը. ինչպես spant- խլխլելուն բայն առումներն են (համմ. և հայոց spand), ևս ենթադրում եմ, որ մեր գամատական որոխիլ կամ որոխլ (Արտ., Դարտրող) «հնդուկ՝ դինի, ջուր և այլն բաժակով կամ գդալով վերցնել և տարից թափել տանդր» ազգակից պիտի լինեն այդ ուրարատ-խառ. orb- «գոռոզ-գնդել, թափել, возлять» արմատին:

19. uruli «հոգի», որը ևս հանում եմ Մհերքան գրան արձանագրությունից (տող 9/45)—GUD 2 LUDINGiR aluše uru-live šu-aii «նոր (և) երկու աչխար [պիտի գոհել այն] աստծուն, որը [աստված ոմ] հաղիևեր է փախստրնում»: Ունենք անհնչի ֆորմատյի և նշանավոր arḫi uruliani բառը, որը inaini (=?) և nara (=?) բառերի հետ նույնման է ենթարկվում: Arḫiuruliani, որ մի անգամ և գատ գատ է գրված (arḫi մի տողի վերջում և uruliani մյուս տողի սկզբում) բառ ևս նշանակում է «մոտիկ հոգիներ», այսինքն «ազգատոհմ, родня, ազգակիցներ»: Այդ uruli բառի վերջին -ul մասը պիտի համարել ածանց, ինչպես ունենք šišuli «ծնող, իսկ ur- «գոռոզ», ինչպես և uru- «ինձ» ունենում ենք հայոց ուրվական „призрак" և մանավանդ մեր գամատական ur || ura «գոռոզ» բառերի մեջ, ինչպես, ութումս տալիս ա «գոռոզ մեջ տալիս է» (Աստվածք) կամ ութս տալիս ա (նույնը), ութ ութս տասցվել է ութայս ձևից, ինչպես՝ տղա, բայց տղէս, երէխա, բայց երեխէս և այլն: Այդ «ութում (կամ ութ) տալիս ա» ևս ևր տղատ կերպով կարելի է թարգմանել «ես ներքուստ զգում եմ», «ինտուիցիայով զգում եմ, ушеня в душе отдается»:

20. weli «զորագունդ, գունդ» (ú-e-li) երկում LÚ «մարդ» որոշիչով: Ն. Մառը թարգմանում էր „созыв, ополчение" (Археол. экск. 1916 г. в Ван, табл. V, էջ 54): Կա հոմանիշական ոճը— weli dubi «հավաքների, զորահավաք արյո», ունենալով LÚḫuradinili «զինվորներ» կամ LÚA, Sl[meš] «զորքեր» առարկան: Հետո ունենք— LÚweli šusini «գունդ մեկ» (ušladi LÚweli šusinie KUR Welikunigidi ḫaubi KUR Welikunini KUR-nie «զորավոնցի մեկ գնդով Վելիքունիի երկիրը (և) զրավոնցի Վելիքունյան երկիր(ներ)ը», Մարդարի Նիշալի V արձ., տողեր 16—17): Կա նաև ածանցյալ LÚwelisinie (Արգիշտիի Մոքսորյան IV արձ. 79—80 տողերում՝ LÚ. A. Sl[meš]-şie LÚwelisinie... dasirani ḳarḳaruubi «զորքերի մեջ գնդային...): Հիմնական հավաքական զաղափարը հնում որոշ ռազմական պայմաններում դառնում է զորագունդ, նման դեպի. Volk «ժողովուրդ» և ռուսաց полк «գունդ» ազգակից բառերի իմաստաշրջման: Համեմատել և գրչերեն gund «դյուղ», իրանական gund «գունդ, ком", որից գնդակ: Այդ նկատառումով զորագունդ wel- բառը ևս պետք եմ համարել հայոց գեղ «դյուղ» բառի մեջ, քանի որ զրաբարյան գեղ, ունենալով սեռ.-տրակ. գղջ (որից գղջուկ) ցույց է տալիս, որ հնագույն նրա տրամաբ եղել է գեղ, իսկ wel->գեղ հնչյունական փոփոխությունը մենք ունենում ենք նաև Welikuni- Գելարքունի անվանման մեջ, իրոք գեղ այդ w>g փոփոխությունը մի շարք հնդեվրոպական ծագում ունեցող հայ բառերի մեջ (համեմատել նաև վեր>գեր): Ինչպես մենք հետո գտնում է մեանք, ձեռք>ձեռք, երբ>երբ և այլն, այդպես էլ գեղջ-ը գարձել էր գեաղ, որ բնավ հնագույն չէ, ինչպես ամանք են գրում: Իսկ w (հայոց ւ) ձայնորդի բառամիջում անկանալու դեպքեր մենք ունենք ոչ միայն գեղ>գեւղ (>գիւղ) բառի գեպքում, այլև ըստ ամի>առեւ (>առիւ), եղ („елей", „ἔλαιον, oleum)>եւղ) (>իւղ)..., ինչպես մաղխի մառւ, հետամ>հեւս>հիւս, դ(ր)ա-անեմ (հդեռ «գառան»)>գիւռ, արած-եա>արուս և այլն:

Ուրարտա-հարիական լեզվական ընդհանրություններն անշուշտ շատ են եղել: Կան դժբախտաբար նմանություններ, որ կարծես թե ձևական են, արտաքուստ, այսինքն՝ հնչյունական կազմով նման են, բայց արտահայտվող բառի բուն նշանակությունը չի պարզվում,

ինչպես անունը ikukani «նուշ» բառի կողքին նաև inukani, որ կարծես ini «ալյուր», որից inuki «ուտել» և կարելի է ենթադրել և inukani, ինչպես անունը Չմարթնոցի արձանագրության մեջ inukaḫini (umeš.ni tini inukaḫinie ¹Rusainie «տրվեց անուն այս նուշին՝ Ռուսային»): Եվ հնարավոր կարելի էր ենթադրել inukani նման նշանակությամբ մի դերանուն և կապակցել հայոց ինքն-իճիբաճ դերանվան հետ:

Հնում լինում են դեպքեր, երբ հարկիական բառը չի առոգված խառատի և կամ ձևի անաակնատից, որ հանախ ազատագրված է հնում դիշագիրների կողմից: Օրինակ, Երևմիա Մեղրկյու բառարանում (անս Արմ. բառ.-ում) բերված է «մեղարդ» բառը, որը թարգմանվում է «լուսին»: Եվ քանի որ այդ բառարանը երբեմն շատ հին ուրարտական բառեր է պահել (օրինակ, բառա «քյուր»), ապա նա հաստատ կարող եմ պնդել, որ այդ մեղարդ-ը ազատագրված է սեղարդ ձևից կրկնաձագիր U և U տառերի շփոթությունից, իսկ ուրարտերեն šelardi (ši-e-la-ar-di-e) արաք. հոլովով՝ 1 եդ. Ձ ոչխար Աստված Սին-ին, որը գտնվում սեքառում դրված է «Աստված Սելարդի-ին», անս Մհերյան դաշն արձ., տող 7/41): Մարիում հայտնաբերված խուռիտական աղյուսակներից մեկ հայտնի է šindi šalardi (անս Speiser Intr. to Hurr., 27), որ šindi նշանակում է «լոքո», իսկ šalardi-ն հավանորեն նշանակել է «աստղ»: Այդ բառերի -ardi մասը կա և şinuiardi աստվածանվան մեջ նմին թոդոննք Ardi(ni) աստվածանունը, որը կատարելի է ընդունելում, որպես սրա աստված (բառ J. Fridrich-ի պիտի կարդալ Šiwini «սրա» աստված=խուռ. Šimigini): Ուրարտերեն šelardi-ն հնչվել է selardi (սելարդ>սեղարդ), ինչպես š տառը հնչվել է s նաև šani (=հայոց սան). Tušpa=հայոց Տուսպ և նման դեպքերում: Խուռ. šindi šalardi=«Մեծ արջ» (Большая Медведица)?:

Վերջապես ուրարտական բառեր կան, որոնք իմ կարծիքով հնդեվրոպականի նման և նույնիսկ բառերի հետ միասին են ձևավորել հարկիական համապատասխան բառերը: Օրինակ, ուրարտերենը ունի iese (=iese) «նա» և խուռ. iša- (=isa) «նա», որոնք կարծես իմ ասել են հայոց ես es բառը, բայց մյուս կողմից հընդեվրոպական eg'o(m) դերանունը հարկիերենում պիտի դառնար նե eç, որ սակայն այդպես չի հնչում, այլ վերջի «ձ» բաղաձայնի փոխարեն տալիս է u (s): Այսպես անշուշտ նախորդել են ուրարտա-խուռիտական ies- ‖ is- «նա» բառերը: Այդ կրկնակի արդնցությունը երկու այդ տարբեր լեզվական ակունքներից մեզ առնում

ձևեր նաև մեր «այլ» բառի ծագման խնդրում: Հնդեվրոպարաններում մեր այլ բառը հանում են «նախահնդեվրոպերեն» alyo- ձևից, որից նաև հունարեն állos «այլ, ուրիշ», լիներ կան մարդիկ, որ առաջարկում են և ailo- նախաձևը, որից կիմբր. ailos, լատ. alius, գոթ. aljis, հին իռլ. aile և այլն (Աբմ. բառ., I, 249—250): Բայց ևս պիտի ավելացնեմ, որ եղել է և ուրարտ. uli- «այլ, ուրիշ» և խառ. u-u-li «այլ» ('other', Speiser-ի մոտ, 24), որը հնչվել է oli: Կարելի է ենթադրել, որ ուրարտերեն uli-ն ևս հնչվել է oli, իսկ քանի որ ուրարտ. սկզբնական u (=o) ձայնավորները հայերենում անդրադարձել է „a" ձայնավորով (Urart=Արարատ, Urzana=Արձան), ապա ապաանելի էր և oli>*ali>այլ: Այստեղ ևս, ինչպես es վերանվան առաջարանաթյան դեպքում, եղել է այդ խառն-ուրարտական լեզվաշխարհի միջամտաթյունը, դրան բառի լուրացման պատմաններում, նրա պատմական լինելության ժամանակ: Եվ այդպես անշուշտ և շատ այլ դեպքերում: Միևնույն իսկ կարելի է պնդել ուրարտ. ag-ubi «տարա» (ջրանցք, մարդկանց դեպի վեր), at-ubi «բերա» բայերի հնդեվրոպական նման բայերի հետ ազգակից լինելու մեջ (համեմատել խեթ. at- ‖ et- «առնել», խառ. ag- ‖ ak- «վարել, առնել»), որոնք չեն համընկնում հայոց առ-ից և ուս-ից ձևերի հետ, որոնք նույնպես հնդեվրոպական ag- և ot- արմատին են պատկանում: Հնդեվրոպական տևոք ունի և ուղղական հայտի (agentivus, ergativus) „s" վերջավորությունը, ինչպես uli-še «ուրիշը այլ մարդ», alu-še «ոչ», Argišti-še և այլն, նրա հետ բայը նախդրեթական տևոք է: Նման անձնական ենթական -š ուղղականով և անցողական բայի հետ ունի նաև խառնոտերենը (Giliašš-ān paššitḫiwwuš tiwe anti guluša «և Գիլիա գնապահ բառն այն ասաց»): Անմիջական խնդիրը (ուղիղ խնդիրը) երկու այդ լեզուներն էլ առանում է -n վերջավորությունը, նրա առարկան անձնանուն է: Այս երկու վերջավորությունները (ուղղ. -š հայց. -n) նույնպես հնդեվրոպական տևոք ունեն, բայց իհարկե սա կարող է մեզ թվացող լինել:

Ձևաբանական ընդհանրություն ուրարտերենի և հայերենի միջև ևս տեսնում եմ հետևյալ դեպքերում: Ուրարտերեն բայարանը „a" ձայնավորով տալիս է կրավորական կամ չեզոք բայանների ֆունկցիա, ինչպես šia-bi «երևաց», բայց šiubi «մոխրագրվեց», naḫadi «հանգավ, բազմեցավ», բայց naḫabi «ուրարկվեց», ինչպես հայոց եղեր «բերվեց», բայց բերաւ «բերվեց», նաև «առնամ», увидел, բայց տեսաւ «տեսանվեց» և այլն: Այդպես բազմեցաւ, մնծա-

ցաւ և այլն։ Այժմյան հայերենը սիրում է չեզոք և բնաձայն բայերը տալ „a" բնով („a" խոնարհումով), ինչպես— ապրել, խշխշալ, թռչալ, ծլվլալ և այլն։ Համեմատել ծխել „курить", բայց ծխալ „дымиться", թվել „считать", բայց թվալ „казаться" և այլն։

Ուրարտերենում ոչ միայն „-a" բնով առանձնանում են չեզոք-կրավորական բայարմներ, այլև վերջավորութիւններն էլ են տարբերւում։ Երբ ներգործական բայն ունի անցեալ կատարեալում -bi (1 դեմք եզ.), -ni (3-րդ դ. եզ.), ինչպես ḫaubi «գրվեցի», atubi «ինրա», karubi «հաղթահարեցի», ...ḫauni «գրավեց», karuni «հաղթահարեց, հարվածեց» և այլն, չեզոքը տալիս է uštadi «արշավեցի», nunadi «եկա», šiadi «առաջացա»..., uštabi «արշավեց», nunabi «եկավ», šiabi «առաջացավ» և այլն։ Վերջին դեպքում, չեզոքի երրորդ դեմքը (եղակիում) առանում է „a" բնանշից հետո b վերջավորութիւնը, որը դարձել է հայերենում ւ (w), այսինքն՝ -abi (-abe) = հայոց -աւ (-aw)։

Գիտի նշել հրամայականի -ri (turi «ջարդիր») վերջավորութիւնը, որ կա և հայերենում, ինչպես՝ տուր, դիր և այլն։ Ուրարտերենում այդ turi դարձ է ածւում անձնի ֆորմալում uli turi «գնա ջարդիր», որի թարգմանութիւնը առատրերեն լինում է alik ḫipi գնալնելի երկրավիզան արձանագրութիւն մեջ, իսկ ուրարտ. tu-ըստ ամբ այլ ձևերով էլ է հանդես գալիս (aluše tu-li-e «ով ջարդիր»)։ Բայց, ինչպես անանում ենք չեզոք բայերի հրամայականը այդ „ri"-ն չունի, ինչպես uli «գնա» (բայց tu-ri «ջարդիր»)։

Վերջապես, գոյականների սեռական ունի i վերջավորութիւնը, ինչպես Menuai pili «Մինուայի ջրանցք», Rusai URU «Ռուսայի քաղաք», Argištiei Sarduriei tini «Արգիշտու (և) Սարդուրի անվամբ» և այլն, և այլն։ Այս -i վերջավորութիւնը կա և հայերենում՝ տան, քաղաքի..., գնաց, մարդիկ և այլն, թեպետ i թեքութիւնը հատուկ է և մի շարք հնդեվրոպական լեզուներին։ Գիտի ընդգծել, որ խուռիերենը չունի այդ ձևը, այլ սեռականի համար տալիս է -we վերջավորութիւնը։

Բառատեղծական ձևերից նշելի է ուրարտ. -uni վերջածանցը, ինչպես Etiuni, Welikuni և այլն (Etiuḫi, Nelikuḫi ձևերի հետ)։ Հայերենը ըստացրել է այդ -uni (և ոչ -uḫi) ածանցը, ինչպես պահունի, արեգունի, դղյունի..., Բագրատունի, Սահառունի և այլն։ Ուրարտերենը ունի և -gi հավաքական հոգնակիի ձևը, ինչպես ḫubigi «գաշտեր, Դաշտեր» (Զիարիենցի արձ., տող 17, „ḫubigi aše pilinikiduli), Welikunigi, Išteluanigi երկրանունները (uš-

tadi... KUR Welikunigidi «Մարդ. վանի Նիշալի V արձ., 17, uš-tadi KUR Išteluanigi-di, նույն արձ., 14)։ Հայերենում այս ուրարտ. -gi համար ունենք հայց. -ի մասնիկը մարդիկ (люди) բառի մեջ։ Ուրարտերենում շատ տարածված է եղել -ini (=in) մասնիկը, որով ստեղծվել են գոյականներից նոր հատկացական ածականներ. ինչպես Sardurini «Մարդուրյան» (Sardurini-li kurili Šatuali «Մարդուրյան ոտքերը բռնեց»), Argištini «Արգիշտյան» և այլն, նման առաջ сестра-сестрин, дядя-дядин և այլն, որը կա և ուրիշ հնդեվրոպական լեզուներում (հուն. -inos, լատ. -inus և այլն)։ Ինձ թվում է, որ ուրարտ. a-ով վերջացած գոյականներից ստեղծված հատկացական ածականներից (Menua-Menuaini, Teišeba-Teišebaini, Rusa-Rusaini....) առաջացել է հայց. -այիի նման ածանցը, ուր „a"-ն սկզբում եղել է գոյականների վերջին արմատական հնչյունը, ինչպես ուրարտերենում -ik նվազական-փոքրքշական ածանցը (садик, домик...) տրվելով -ец վերջացող մի շարք գոյականներին (палец, конец...) և դառնալով -чик(>ш-ик), աստիճանաբար վերակրկնվել է որպես առանձին նվազական-փոքրքշական ածանց. և մենք անալոգիայով ասում ենք мальчик, аэропланчик, гурченчик և այլն։ Այդպես էլ Menuaini, Rusaini և նմաններին -aini ձևը առանձնացել և վերցել է հայց. -այիի ածանցի ձևով։ Զարմանք չպետք է պատճառի ուրարտական գոյականներից ածականակերտ ini (=-in) մասնիկը հայց. -ի մասնիկի հետ, որով ածականից ածական է ստեղծվում, ինչպես -վեր և վերին, խոր և խորին, առաջ և առաջին, մեջ և միջին և այլն, կամ շատ հետո գոյականից նոր գոյական էինք ստեղծում նույն -ի մասնիկով, ինչպես լույս և լուսի, ոտք և ոտքի, դարբին, ամուսին, և նմաններին մեջ։ Բայց ունենք գոյականներից ստեղծված ածականներ միայն ժխտական ան- մասնիկի հավելմամբ, ինչպես— անհոգի, անհնարին և նման ածականները։

Ի վերջո պետք է ասենք հետևյալը։ Ուրարտերեն-հնդեվրոպական մի հետևությի, որ կապում է մեր հին հայերենը (գրաբարը) ուրարտերենին հետ։ Այդ գրեթե ապացուցել է հատկացուցչի և հատկացյալի փոխհարաբերության ժամանակ, երբ հատկացուցիչը փոխանակ անմիջական հոլովի վերջավորության պահելու, վերջինը փոխարինում է հատկացյալի ինք հոլովներից մեկով (հայերենում, գրեթե նման բացառական հոլովով)։ Օրինակ, հայերենում ունենք՝ յերկրէ Հայաստանէ (փոխանակ՝ Հայաստանի) արտաբ բարկութիւնամբ (փոխ. բարկութենեն) և այլն։ Համեմատենք ուրարտերենում DINGIR^{me}-aš-

te KUR Biainašte «աստվածներին Բիայնային» (փոխանակ՝ Բիայնայի)։ Այս կրկնությը, որ J. Fridrich-ը կոչում է հունարենով՝ sxema kath, olōn kai meros, կա և խեթերենում հայկական հոլովի ժամանակ, օրինակ, Gilgamešan ALAM-an šamnēr «Գիլգամիշի արձանը շինեցին», ուր Gilgamešan հատկացուցիչը դրված է խնդիր-հատկացյալի հոլովով։

Վրացերենում և խուռիտերենում նման դեպքում պահվում է թե՛ հատկացուցչի սեռական հոլովանիշը և թե՛ դրան ավելացրած հատկացյալի ձևը։ Օրինակ հին ნებაი მამისა ჩემისა ზეცათაისაი nebai mamisa çemisa zeçat'ai sai «կամքը հոր իմ երկնքի» հատկացյալ neba-i ուղղականից կախված է mam-isa çem-isa հատկացուցիչը -isa սեռականի վերջավորությամբ, որից իր հերթին կազմված է zeça-t'a-isa-i հատկացուցիչը սեռական հոգնակի -t'a վերջավորությամբ, հավելացած թե՛ նախորդ իր համար հատկացյալ mamisa çemisa բառերի սեռականածանը և դրա հատկացյալ -i ուղղականի ձևը, և ստացվում է բարդ համաձայնության կոնստրուկտիվ zeça-t'a-isa-i։ Նույն խուռիտերենում, ինչպես DINGIR^{meš}-na[=enna] (artiniwena «աստվածները քաղաքի», ուր հատկացուցիչ artiniwe «քաղաքի» ունի իր սեռականի -we վերջավորությունը վրա նաև հատկացյալի (enna «աստվածներս») հոգնակի -na վերջավորությունը, ինչպես վրացերենով առևրնք ღმერთნი ქალა-ქისანი ɣmert'ni k'alak'isani։

Բոլոր դեռևս ակնհայտները ընդունում են, որ հայերենը, մանավանդ բարբառները, մեծ ժառանգություն է ստացել ուրարտերենից կամ ավելի ճիշտ Ուրարտուի ընդհանուրից, թեպետ, ինչպես վերևում ասացինք, մի քանի-քանիհինգ ընդհանուր բառերը միայն մոտ հինգ տոկոսն են կազմում ուրարտերենից մեզ հասած չորս հարյուրից քիչ ավելի բառերից կամ արմատներից, թողած դեռ այն հանգամանքը, որ դրանցից որոշ քանակ կարող էր մտնել Աղձնիքի-Տուրուբերանի միջոցի արմինևևերեն-շուպրիական խուռիտական բարբառից, ինչպես, օրինակ ar- «առա», որը ըստ իս ծագել է հայոց յարիմ „придаюсь, просоединяюсь, примыкаю“ (ար յ նախածանց է, ինչպես և յառնեմ «վեր կենամ» բայի մեջ)։

Բայց ամենաուշագրավը այն է, որ մարդկանց հատուկ անուններ հայոց մեջ պերազանցորեն խուռիտերենից են կամ Արմինևշուպրիայի վրայով աստուրարաբերենից։ Ուրարտական պատմենի շուրջ վաթսուն աստվածանուններից, որ մինչև այն դեռևս արձանագրություն է տալիս, հայերենում ոչ մինը չի ծագել, եթե

չաշվինք Ar'ā (Arha) և մեր Արա անունը։ Բոլոր բնիկ մեր աստվածանուններն՝ կամ որպես էպիթետներ և կամ որպես նրանց հատկություններն, փոխարինություններն, ունեն փոքրասիական և խուռիտական ծագում։ Այդպիսիներն են —Արա, Տորք (Տուրք=Տարք), Հեպիտ կամ Հապիտ, Շաքր (որից՝ շանթ), Շուշիկ կամ Շուշ (շուշանիկ, շուշանիկ «նոպանք անդր բայի մեջ», ան «աստված» (Մովսես և թևրևս Անբերդ բառերի մեջ), Թեպղա (Թպղի) չորս աստվածները (=խեթ. telipi աստվածները), ցիւաղ (=zawalli— «հրեշ աստվածները»), Նար «քրահարս, нимфа" (Մովսես, Ոսկիներ, Հնդեան, Նարին>Նարին, «Նար մեծ քրահարս», կամ Նարա հայ>Նարոյ.... բաբելական nār գետի ջրի աստվածանունից), Մաժուն քրմի անունը, որ աստվածացվում է և գերեզմանի պաշտամունքը հաշակվում է համահայկական ասո (ըստ Խորենացու), համընկնում է փռյուգիական Masanes աստվածանվան Աստին, որի «խորհրդատեղ կատարչին» Գանատասում մինչև դարերում անգամ (ըստ Հովհ. Սարկավագի), և որի անունից եմ ես հանում ասիենել «իմ պատանեան դառնալ» (այդ բառը բերում է Գր. Մագիստրոսը իր § 67 թղթում) այդ աստծո ինքնամարձատման հնձանքով, երբ անընդհատ նրան հնձապնդում էր Կիբելեան. աստուած ըստ Մաոի փռյուգիական հայրանի աստված Sawazios-ի անունից, ինչպես փռյուգիացիների մոտ trqq նշանակում է «աստված», բայց ծագում է Tarku— աստծու անունից (=մեր Տորքը)։

Ուրարտական պանթեոնում կան իշարկի աստվածանուններ, որոնք հիշատակվում են և հարևաններին մոտ, ինչպես ուր. Teišeba ամպրոպի աստվածը, որն է փոքրասիական-խուռիտական Tešup-ը, ուր Unina=բաբել. Onn(es) կամ Oann(es), ուր. Ziqequni=խեթ. Zagaga (պաշտվում է Մուրիշնա քաղաքում, Bogh. St. III, 98), ուր Anapsa նմանվում է խեթ. Napsara աստվածանվան, աստուրաբաբելական ծագում ունեն ուր. Šebitu և Adaruta աստվածանները (տես «Տնտեսագիտ» Հայկական ՍՍՌ ԳԱ 1944 թվականի №6—7, և Շերիթիուի մասին առանձին իմ դրքույկը, նույն Ակադեմիայի հրատարակությամբ 1947 թվականին)։

Բայց, օգտվելով ասիերից, ես կուզեի այստեղ ցույց տալ նման մի աստվածանվան— ուրարտ. Turan- և խուռ. Tiranna- անդրադարձումը հայոց լեզվի մեջ և շեշտել այս դեպքում ևս խուռիտաբաբելական առաջնության ուրարտականի հանդեպ։ Խուռիտական tiranna կամ dTiranna նշանակել է «ժխտածան» և դրա աստվածացումը, որից ունենք Նուզիի վաստաթղթերում Ar-turanna «նվիրի

Տիրաննական հատուկ այրանուններ: Ըստ իս այդ tiran- ծիրածանց բառը հնչողությամբ կարող էր դառնալ հայերենում ծիրանց ա>ծ փոխանցմամբ, ինչպես՝ աստանիմ (անիմ բայից) և ծածանիմ, պիղծ>պղտոր, պարտ (հայարտ, ամպարտաւան)>պարծիմ, աղանդութիւն ‖ աղծութիւն, կնդտ>կնդծ..., բարբառներում՝ տտ ‖ ծծ, Տրդատ>Ծրդատ և այլն և այլն: Իսկ հայոց ծիրան-ի բառը հնում նշանակել է «դեղնցիկ կարմիր խառն դեղնի հետ, վարդագույն, ոսկեգույն, մանուշակագույն, ծովագույն, երկնագույն» (ըստ Առձ. բառարանի) և ոչ մի կապ չունի ծիրան պտղի հետ: Մեր ժողովուրդը ծիրածանին ասում է «կանաչ ու կարմիր» և բնական է որ հայոց ծիրանի բառը նախկին tiran- ծիրածանից ժառանգած ունենար այդ «կարմիր-դեղին» կամ ժողովրդական «կանաչ ու կարմիր» գույնը: Մյուս ուժեղ հատկանիշը այդ ծիրածանի աղեղնաձև լինելն է և այդ հատկանիշը պահել են վրացիք ჭირანო čirano (ճիրանո) «լուսնի բակը», орбита луны (Чубинов-ի բառարան, 1887 թ., էջ 1708): Ի դեպ վրացերենում ծիրան պտուղը կոչվում է ჭერამი čerami, որ ինչպես տեսնում ենք տարբերվում է čirano «աղեղ, բակ» բառից թե իմաստով և թե հնչմամբ: Խուռիտերենում tiranna ծիրածանց բառը համարվում է փոխառյալ սումերերենից (տես Nuzi personal names, էջ 267): Իսկ որ ծիրածանը կարող է և աստվածացվել, այդ ցույց է տալիս և հուն. iris ծիրածանց և Irida դիցուհու անունը, որպես աստվածների համբավարեր. ինչպես տեսնում ենք խուռ. Tiran- աստվածանունը ավելի մոտ է հայոց ծիրան-ի և վրաց čirano բառերին իր ձևով, քան ուրարտ. Turan աստվածանվան ձևը: Սա ևս գալիս է ասելու, որ հայոց շատ բառեր, թե հատուկ և թե հասարակ, ավելի շատ հարավից են, խուռիտական Արիմե-Շուպրիասից, քան Ուրարտուից, որը ինչպես դիտենք ուշ հայացավ (V դարի վերջից), մանավանդ Վանա լճի արևելյան մասը:

Հույս պիտի ունենանք, որ նորանոր լեզվաքննությունների հայտնաբերումը այդ խուռ-ուրարտական լեզուների բնագավառում, ինչպես և եղած նյութի համեմատական լրացուցիչ ուսումնասիրությունը, ավելի ևս կլուսաբանեն հայ բովանդակ լեզվախմբի դերիշխող կամարննեսի տեղական այդ շերտը ճշտորոշելու թե քանակապես և թե որակապես, մանավանդ այն մասնահատուկ կողմերը, որ վերաբերում են հին բնիկ ժողովուրդների նյութական և հոգևոր կուլտուրաների որոշ բնագավառներին: Իսկ լեզուն հենց դրանց արտացոլող հայելին է:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱՏԱՐՐԵՐ ԽԵԹԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԵՋ

Նոր խնթական պետությունը իր շուրջ երկու հարյուր տարիա (1400—1200) ընթացքում տիրել կամ վասալական կապերով ենթարկել է իր հյուսիս-արևելյան սահմանակից Գալա, Կաշկա և Հայասա-Ազդի ցեղամիություններու։ Եվ բնական է, որ այդ ժամանակ, ինչպես Քերևս և առաջ, այդ մարդ ցեղերը պիտի կրեին նաև խնթական (և պրոտոխնթական) կուլտուրայի ու լեզվի ազդեցությունը։ Այդ շրջաններին մնում էին նաև վրացական կամ նախավրացական ցեղերը, որ հետո մտան վրաց ժողովրդի մեջ։ Ենթերը, կորցնելով իրենց քաղաքական կոնֆեդերատիվ պետությունը (շուրջ 1200 թ. մեր էրայից առաջ) շնորհիվ «անդրծովյան» ցեղերի (փռյուգիացիների, լուդիացիների և այլն) և սահմանակից ու վասալ ցեղերի (լուվիացիների, կաշկաների, հայասացիների և այլն) հարվածի, ինչպես և մի շարք ներքին հակասությունների, այնուամենայնիվ շարունակեցին մնալ մինչև չորրորդ դարը (մեր էրայից առաջ), երբ արդեն ապազդայնացել էին, մինչ այդ ունենալով VIII—VII դարերում փոքրիկ պետություններ Մելիտենեում, հյուսիսային Սիրիայում (Սամալ, Մարաշ)։

Գնաք է ենթադրել, որ խնթա-հայասական ընդհանուր լեզվատարրերը գոյացել են վաղ շրջանում, երբ խնթերը դեռ ազդեցիկ էին, այսինքն՝ 1200 թվականներից առաջ, թեպետ չի բացառվում որոշ բառերի մուտքը և մինչև VIII—VII դարերը մեր էրայից առաջ։ Քանի որ խնթերը պերիշում էին նաև Մելիտենեում և Թեպերամալում, որ հետո հայացան, ապա այդ վերջին ենթադրու-

թյունը նույնպես հնարավոր է։ Հիշենք հմմտ. «Ծոփք Շաուշի կամ Շաուշկա, որ Փալատաց Բուղազկոյ մոտ է բնված, երբ դեռ ուխերոտ գարի կնկեն Միլիտենեին ենթակա մի շրջան ենթարկվել է Շաուշ դիւնասուհուի թագավորներին, ինչպես կարդում ենք Սարդուր II Իշպուէլի մոտ թողած արձանագրության մեջ. իսկ այդ շրջանները կազմեցին հետագայում Ծոփքի Հայաստանը իր Արկաթիոների մայրաքաղաքով, և ուրեմն պետք է ենթադրել, որ այդ-տեղի խեթերը, ինչպես և Կատաոնիայի արևելյան մասում (Միլիտենեից արևմուտք) եղածները հայացել են (տե՛ս նաև Տամաշկի հոդվածը „Euphrat und Ost-Kappadokien" ապված „Festschrift für Kiepert"-ում, էջեր 143 և շարուն.)։

ՀԱՅ-ԽԵԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՄԹԵՐԸ

Խեթական բառերը, որ առկա են հայոց լեզվում, կարող են երեք տեսակի լինել. մեկ որ՝ խեթերենից անցած լինեն, այսինքն՝ լինեն փոխառություններ, երկրորդ, որ Հայաստանի և նման ցեղերից մոտ լինի խեթերենի մեջ, որ արձանագրված է մինչև իսկ խեթական բնևոպրում (բառաստեղծում դրված են երկու հորիզոնական բնևոխիներ), և երրորդ՝ այդ բառերը կարող են եղած լինել թե՛ խեթական նախկին ցեղերի լեզուներում կամ բարբառներում, և թե՛ նրանց սահմանակից կամ շփվող պալայկիների, հայասցիների, մոսխերի և մյուսների լեզուներում։

Ա

Վերցնենք այն անուններն ու հասարակ բառերը, որ ակընհայտորեն խեթական արմատներից ու ածանցներից են կազմված, և հետևապես Հայաստանի և մյուս ցեղակից լեզուներում պետք է դիտվեն որպես փոխառություններ։

Առաջին անուններից նա կմատնանշենք խեթական երկու թագավորների՝ Մուրշիլ (Muršil-iš) այրուձուկը, որը դեռ Հ. Աճառյանը ճիշտ կերպով կապակցեց մեր հայոց Մուշեղ անվան հետ։ Այս բառը այնպիսի կազմություն ունի, ինչպես Հաթթուշիլ (Ḫattušil-iš), Բիաշիլ Biašil-iš) թագավորանունները, որոնց հետ նա կհամեմատենք խուռիտական (մխոանյան) Արտաշիլ, Միթրաշիլ անուանծանուննները և Մեծ Ծոփքի Մամուշիլ գետանունը, որը պահել է Փալատաց Բուղազկոյին (խեթական Շահ)ա (— թագա-

վոլտաքիլանը Փոքր Ծովքից նույնպես պահվել է այդ պատմագրի մոտ)։ Հետո մեզ հայտնի է Zidi-ն այրանունը, որ գտած է ածվել խեթերի մոտ թե՛ առանձին և թե՛ բարդանուններին մեջ՝ որպես երկրորդ բաղադրիչ մաս, ինչպես Tarḫundaziti, Kalmaḫaziti, Kulaziti, Ḫalpaziti, Ḫuḫḫaziti-, Santaziti և այլն (տե՛ս A. Götze, Die Annalen des Muršiles, Leipzig, 1933, էջեր 210—211), իսկ այլուր այդ ziti բառը արվում է գաղափարագիր LÚ «այր» նշանով, նույն բարդություններում, որից ակնհայտանի է դառնում ziti կամ zidi բառի «այր» նշանակությունը։ Այդ հատարակ անվան վերածվելը հատուկ անվան հայտնի է և հայերի մոտ «Այրուկ» ձևով։ Իսկ խեթերի այդ Ziti կամ Zidi հատուկ անունը ևս տեղում եմ հայ Ծ՛իտ՛ա անվան մեջ, որ բերում է Մարիխարոը իր մի հոդվածի մեջ, արված Caucasica ամսագրում[1]։ Վերջապես Կարգեմիշ քաղաքի մի հիերոգլիֆ խեթական արձանագրության մեջ բերված է Katisi ուղղական հոլովով (-si) մի այրանուն (տե՛ս J. Gelb, Hittite hieroglyphs, I, Chicago, 1931, էջ 66), որ շատ նման է Փոքր Հայքի հայոց Կոտիս (Կոտյուա) թագավորի անվանը։

Հատարակ անուններըը բնականաբար ավելի շատ պիտի մտած լինեն հայատառի (reps. հայոց) լեզվի մեջ։ Այդպիսիներեն են.

1. Աղանդեր կամ աղբնդեր «կնքահորից հետո քաղցր ուտելիք, մրգեղեն, դեսերտ» (Արմ. բառ., I, 121), «կնքահորէն հետև թեթև ուտելիքներ, չարագ» (Առձ. բառ., 15)։ Այս alander (<alander) բառը հետաքրքրել է alandar և ըստ իս նշանակել է «զաղանձված հացահատիկներ» կամ «զաղանձ», որ, ինչպես գիտենք, մեզ մոտ մինչև վերջերս մատուցվում էր ճաշից հետո կանեփով, չամիչով խառն։ Alandar-ը վերցված է խեթերենից, ուր aladdari և կրճատ laddari, ինչպես կարդում ենք, օրինակ, Զապաբնիկրի քրմի հայտնի ծխատոմսում (էջ 81, NIN DA aladdari «հայց al.»)։ Այդ «հայց» գաղափարագրով արված aladdar-ը ածվում էր բուն մեջ («1/2 բուռը aladdari»), կարող էր նաև բաժանվել (անդ)։ Ես չեմ տարակուսում, որ դա եղել է սովորական հացահատիկը և գտած է ածվել նաև հատուկ տեղանուններին մեջ, ինչպես Aladar-ariza կամ հայոց Աբառիճ<*Աբաբառիճ ձևից, որոնք գտնվել են Փոքր Հայքում (տե՛ս իմ Хайса—колыбель армян, էջ 44)։ Տատացի այդ ա-

---

[1] Գիրախտարար ինձ մոտ հատորը և էջը չի մատնանշված, միայն հունական գրությունը վկայում է հունական մատենագիրներից վերցրած լինելը։ Հ. Աճառյանի անձնանուններին բառարանում այս հատուկ անունը չկա։

նունը, իբրև բարդ բառ, նշանակում է «հացահատիկի տնդ» (<Հացատվանդ)։ Խեթերեն aladdar կամ laddar ձևերը կորցրել են n (ն) բաղաձայնը d (դ)-ից առաջ, ինչպես այդ հաճախ է տեղի ունենում այդ լեզվում (օրինակ hanzassa և hassas «իմաստ», kuen- «սպանել» և kuašk-<kuan-šk- նույն իմաստով)։ Հնարավոր կարելի է ենթադրել, որ հայոց alander-ը պահել է ավելի հին ձևը aland- բարբառական, որ կա և մի քանի հնդեվրոպական լեզուներում «հաց» իմաստով։ Բայց կարող է և հակառակը լինել, այսինքն խեթական aladdar-ը իր հին aladd- արմատով վեր ածվել հայոց մեջ aland-ar ձևի, ինչպես օրինակ անտիք «օրէնք» առացվել է Ֆրանսերեն assise բառից։ Խեթերենում, ի միջի այլոց, եղել են դանազան տեսակի հացկոնններ NINDA ('bread. loaf') դաղափարանշով, օրինակ NINDA ampuri, NINDA ituri NINDA paurandeš իսկ միայն դաղափարագրերով —N. GIRiL 'fresh bread' (համեմատել մեր «թարա հաց»), N. KUR. RA' ordinary bread' (=harši) NINDA harzazu'-tallow-cak' (=մեր «խորիսով դաթան»?), որը արվում է առանց դաղափարագրով NINDA IA'. E. D. E'. A. կար և N. SIS 'thin bread, flat bread', որ մեզ հիշեցնում է «լավաշ» հացը (տե՛ս մասամբ E. Sturtevant, Hitt. Glossary, էջ 110 և դրա լրացումը, էջ 33)։

2. Մանավանդ մակրայը ինձ թվում է վերցված խեթերեն mānapa «երբ» (als. wenn) բառից, ինչպես մոտավորապես քարդմանում է Հրոզնին (Sprache der Hethiter, էջեր 185 և 231)։ Ինչպես որ խեթերենում սովորական է -anda մասնիկի կցումը նման մակրայներին, օրինակ, katta «ցած» և kattanda, appa «ետ, դեպի հետ» և appanda, araḫza «շուրջ» և araḫzanda, para «առաջ» և par(r)anda, այդպես էլ սպասելի էր mānapa և mānapanda, որը կատր հայոց մանաւանդ ձևը p>w անցումով։

3. Բրդմնջել «տրտնջալ» (роптать) առացվել է քրթմնջ-<*քարթմխուճ նախնական ձևից, որը խեթերեն kartim(m)iaz բառն է և նշանակում է «ցասում, բարկութիւն, տրտունջ» (առատվածներից), կազմված kartimmia- «բարկանալ» բայից։ Սա էլ իր հերթին առացվել է kardi- «սիրտ» բառից (հետ. kardiaš, տրակ. kardi), ինչպես գրաբարում ունենք սրտմտիմ «բարկանում եմ», բարբառներում սրտոդել «բարկանալ» սիրտ բառից կամ ռուսերենում сердиться «բարկանալ» серд-це «սիրտ» բառից։

4. Բարգաւանդ «պատնեշել, փառավոր, ծաղկյալ» բառ էս խեթական բառ է pargu- (հոդն. հայց. pargav-eš) «բարձր» ածակա-

հից, որից ունենք նաև pargamuš (հոգն. հայց.), pargatar «բարձրություն» և այլն: Ինչպես ցույց է տալիս pargav- խեթական բունը, մեր բառը միայն տարբերվում է վերջին -աš մասնիկով, որ նույնպես խեթական է -az ձևով, ինչպես օրինակ šurā «վեր վեր, վերբ, наверх» և šaraz(z)i «վերին, գերագույն վեհ»: Ինչպես որ հայոց bargaw-ač բառը տառացի պիտի նշանակի «բարձրյալ, բարձունքում գտնվող», փոխաբերաբար «փառավոր, ուռճացած, անմահ» և այլն: Հայոց ձևը կարող է վկայել հօգուտ խեթական bargu-հնչման, այսինքն՝ սկզբնական „b" բաղաձայնի և ոչ „p", ինչպես շարլոն կերպով գրվում է. թնպես Հրոզնին իր Spr. d. Hethiter գրքում գրել է barku-bargaves „hoch" (էջեր 189—190, 217): Անշուշտ խեթական փոխառություն է նաև հայոց ամրաքիաւան «ամրարտավան, հպարտ, բարձրամիտ» բառը, որ նման կազմություն ունի իր աճ մասնիկով: Բունն է թերևս barhu- խոկ am- ոչ թե բացասական մասնիկն է (-ան), այլ այն ամ- (համ-) մասնիկը («միասին, со-»), որ կա ամփոփել (կա և ափոփել<*գիփոփել), ամբառնալ (համբառնալ) բայակազմություններին մեջ: Խեթերենում կար warḫuwwan «անմատչելի, անառապրկեր» (inaccessible, impassible; dammed up), բառ Götze-ի (տես Hitt. Gl., լրացումը էջ 46), warḫui- „косматый, непостриженный; грубый; недоступный" (H. Gl., 177), warḫu-nu- „сделать грубым, недоступным" (ib.): Այնպես որ am-warḫu-ač գարձել է «ամբարհաւած». w սկզբնական հնչյունը (=v) հայոց „m" (am-) նմանատի ազդեցությամբ գարձել է b, թնպես բառ իս դեպքեր կան, որ w կամ v փոխարինում են b կամ p բաղաձայնները, մանավանդ խուռիտներենում:

5. Ուրդ «պարտեզները ջրելու համար փոքրիկ առուց (տես Աբմ. բառ., V, 700): Պերվիշյանը այս բառը հնում համարելով շրջված *urd ձևից, կապակցում է սանսկր. udra, հուն. ὕδωρ, սլավ. вода, գոթ. vato, գերմ. wasser «ջուր» բառերի հետ (անդ, էջ 701): Ես ևս դնելով այդ ուրդ բառի համար, որ իմիջի այլոց գործածական է և բարբառներում, հնագույն *ուդր (*udr) ձևը, հանում եմ այդ wedar կամ wadar խեթական ձևերից «ջուր» իմաստով: E. Sturtevant-ը իր բառարանում բերում է wātar, wetar, տես. հ. weitenas կամ wetenas, տրակ. witeni ‖ weteni, գոթ. wetenit, հոգն. ուղղ. widār, (տես նրա Hitt. Gloss., 1936 թ., էջ 179): Խեթական wātar-ը հայերենում պիտի տար անմիջապես *vard* ձևը, խոկ wetar-ից կապահինք *verd* ձևը: Հետագայում այդ verd-ը կդառնար urd, ինչպես «վերջ»-ը գարձել է «ուրջ» (այս բա-

որ տալիս է Առձ. բառարանը). համեմատել նաև Վիշապ և Ուշապ, որ մատնանշել է Ն. Մառը, վրո(ն) «մուրճ» և «ուռնա» նույն նշանակությամբ, «մարկանա» (բարբառային) և «ուրկանա» դրարարի նույնանիշ բառաձևերը, հայոց ունայն և լատ. vanus, գոթ. wans և այլն բառերը (Արմ. բ., V, էջ 646) կամ թե ստար լեզուներում՝ խեթ. waštul և uštul «հանցանք», խուռ. Vašuganni և Ušuganni (քաղաքի անուն է), ակկադերեն ward-u և urd-u «ստրուկ» և այլն: Եվրոպերեն wātar>հայոց vard («վարդ») «ջուր» ևս անանում եմ վարդ-աւ-առ բառի մեջ, որ առաջին նշանակում է «ջրալուսա, ալոհնքն ջրով լվանալը, ցնցղվելը (համմա. խեթ. vetenit arr- «ջրով լվանալ»), որտեղ -aw- հոդակապը կամ ձևույթը ինձ անհասկանալի է: Այդ վարդ «ջուր» իմաստն են կրում մեր մի քանի տեղանունները—Եղիվարդ, որ առաջին նշանակում է «վերին ջուր» (համմա. Եղեգաստուշ «վերին քաղաքի» Եղիվանք. «վերին վանք», և հակադրություն Թաղավարդ անվան, որ նշանակում է «ներքին ջուր»: Բայց կա և վերդ «ջուր» (<wetar-ից) բառը— Շաշվերդ «մեծ ջուր» (Օշականի և Ոսկեվազի միջև գետակ է), Օլսվերդ[1] (=?) Լատիվերդ (=?) և այլն: Տարակուսս չկա, որ հայոց vard, verd և ard բառերը Փոքր Ասիայից են մտել մեր լեզվի մեջ:

6. Ուռան «աշխատանք, վաստակ, հրաման», թեպետ մեր հին գրականության մեջ միայն մեկ անգամ է գործածված (տես Արմ. բառ., V, 672), բայց առույգ և կարևոր բառ է: Ըստ իս, դա փոխ է առնված խեթերենից, ուր թեպետ այդպիսի գոյական անուն չի արձանագրված, բայց արմատն (war- ‖ ur-) և կազմության տեսակետից (-an վերին մատնիկով) միանգամայն ապահով է: Եվրոպերեն war(r)- արմատը նշանակում է «վառվիլ, այրվիլ» (ըստ E. Sturtevant-ի „burn“, որպես անցողական բայ, H. Gl., էջ 177 warā- ձևով), որից պատճառականը՝ war-nu- «վառել» („cause fo burn, burn“, գերմ. ver brennen): Կան հետևյալ ձևերը—wārani և urani «վառվում է», warandari «վառվում ևն», warānu և urānu «վառ վառվիլ», waranza «վառված, վառվող», urr-ir «վառվելը» և այլն: Եվրոպերեն war- և հայոց վառ-ում արմատները նույնանիշ և նույնահունչ լինելու մասին գրել են Մարտիրոսյան (Հանդէս ամսօրեայ, 1924 թ. էջ 458) և Հ. Աճառյան («Նորք», 1925 թ., № 5, էջ 393):

---

[1] Տես. խմբ. դյուղի անուն, որ գտնվում է Վրացական ՍՍՌ Ախալքալաքիի շրջանում:

Խեթերենում արմատը մեծ մասամբ գրվում է մի ՀՐ-ով, բացառությամբ ūrr-iz «վառվելիքին»: Կա և արմատի կրկնությամբ -wariwaran և uriwaran «որպես դերբայական ձև (=*wariwaranza ‖ *wariwarant-), որ այնքան համընկնում է հայոց վառվառն կամ վրաց (փոխառյալ ?) varvari „пылать" (varvarebs „пылает", ասս Чубинов, Груз.-Рус. словарь, 1887, էջ 302): Հայոց տառանձ բառի ոչ միայն արմատն է խեթական, այլև -անձ մասնիկը, ինչպես ունենք խեթ. naḫḫan «երկյուղածություն» (naḫ-mi «քաշվում եմ, պատկառում եմ»), kuššan «արծաթին» (kušḫaḫat «վճարելիս»), šaḫḫan «պարտադիր աշխատանք», ḫaršan «գլուխ», parkan «քավում, սպաշխարում» (parku- «մաքուր» բառից) և այլն: Իսկ wa-հնչյունակոմպլեքսի վերածումը „u"-ի (wa>u) մենք արդեն տեսանք wad(a)r կամ wedar «ջուր» բառի նկատմամբ, որ դարձել է հայոց ուրդ տառա վերջ>ուրջ, վիշապ>ուշապ..., խեթերեն war->ur- «վառել», wāši «վճարում է» և ušneškatta «վճարում էր» walkišsaraḫ- (√walk-) և ulkiššaraḫ- «անդրակ դարձնել», waštul և uštul «հանցանք» և այլն: Այսպիսով, սրանից հայոց ուռուցն «աշտանակ, վառարան» բառը, որ և կուլտուրական նշանակություն ունի, գալիս է խեթական աշխարհից, որպես փոխառություն հայացիների (resp. հայերի) կողմից:

7. Շաղ բառը, որ գրաբարում առանձին չի պահվել և նշանակել է «մեծ», մնացել է ասկայն մի քանի բարդություններում, թե՛ որպես հատարակ անուններ և թե՛ որպես հատուկ: Այդպիսիները են՝ շաղակրատել «մեծաբանել, մեծ մեծ խոսել» (-կրատ մասը անգործածվելի է առանձին), շաղաւաշուրթն «փչախոս, ցոփախոս, խարնախոս» (այդպես ըստ բառարաններիր), որ ստուգի նշանակում է «մեծաշուրթն», այսինքն «մեծախոս, շատախոս» մեջի -աւ մասը ավելորդ է. շաղաշոյտ «անմիտ, խենթուկ» (Արմ. բառ., V, 249, գրված է շաղաշուտ), որից շաղաշուտութիւն «անտառակություն» (ibid.): Այս բառը կազմված է «շաղ», «մեծ» և շուտ «ցոփ, զեխ, վատաշուռ», որը կրճատվել է շոյտ ձևի, ինչպես գրաբարի շուք (-ատվեր) բառի փոխարին ասում ենք բարբառներում շատ: Այնպես որ շաղաշոյտ պիտի նշանակի «մեծ, ցոփ, անառակ»: Ունենք նաև հատուկ անուններ մեջ Շաշվերր (< Շաղվերդ) «Մեծ ջուր, «Մեծ առու» (այս գետակը Օշականի և Ոսկեվազի միջև, կազմվելով Արագածից հոսող ջրերից, թափվում է Քասաղ գետը), Շաղագոմ «մեծ գոմ», որը գրվում է նաև (սխալմամբ) Շաւագոմ, ինչպես նրանի Շաւարերդը եղել է Շաղրերդ «Մեծ բերդ»: Այս մեր

շաղ- բառը (šal) խնիթերենում, թե բնագրերը և թե հիերոգլիֆ, ամենատարածական բառն է šall-iš (հիերոգլիֆ խնիթերենում՝ sali- „great", տես J. Gelb, Hitt. hiero glyphs, II, 7, էջ 30):

Բ

Եթե վերահիշյալ բառերը խնիթերենից անցել են հայերին, որ իրարին շատ են նման, ապա հնարավոր կլինի այստեղ քննել նաև այն բառերը, որոնք խնիթերն են վերցրել իրենց հարևան լեզուներից: Բարեբախտաբար այդպիսի բառերն ունենք ակզում երկու հոլովոնաձև բնեռիկներ (=), որ ուրիշ բնեռագիր լեզուները չեն կիրառում: Այդ բառաֆոնեմները կատարված են լուվի լեզվից, թեպետ կան և խուռիտերենից: Հնարավոր է, որ լինեն և Պալա և Հալաստալի լեզվից: Այդ իսկ անոանկախից հայոց լեզուն մեծապես շահագրգռված է: E. Sturtevant-ի բառարանում (2-րդ հրատ., 1936 թ. և 1939 թ. հավելումը՝ Sapploment-ը) բերված են մոտ 45 այդպիսի փոխառություններ (որոնց իմաստը քիչ թե շատ հաստակացված է): Ավելորդ չեմ համարում բերել այդ բոլորը և նշել դրանց որոշ քանակի համընկնումը հայ բառերի հետ: Իրարին կան և չնմանվածներ, որոնք չեն բերվում:

1. aggatiu-š «ցանց» (որսի համար):

2. akkuša «փոս»? Սրա հետ կարելի է համեմատել հայոց ակօս (борозда) բառը:

3. allalla «կռիվ»?? Թերևս բնաձայնական բնույթի բառ է, նման հայոց աղաղակ բառին:

4. antari-š «առաված, թագավոր»?? Այս բառի հետ են կապակցվել Շուպրիայի (Տիգրանակերտ—Սուֆարկինի շրջան) իշխան Antaria-ի անունը, որը ապստամբել է Ասուրբանիպալի դեմ:

5. arkām(m)a-š «հարկ», համապատասխանում է լուվիական բառ. կա նաև բայական arkammnallāwi «նա հարկ տվի»:

6. arunnuha «ամպրոպի կամ դիջնցի»??

7. hanhaniai «դիտում է, ուշադիր է»: Ուշագրավ է երրորդ դեմքի „i" ձևը՝ ֆորմատիվը, որ այնքան համընկնում է հայոց «յ» ձևի հետ (կարդալ «կարդում է», գոյ «գոյություն ունի», գրէ <*գրել «գրում է»): Այդ „i" երրորդ դեմքի համար կա նաև խնիթերենում, օրինակ, pai «տալիս է», dai «գնում է»...:

8. hašp(i)- «քանդել, քայքայել» (hašpaha անց. 1-ին դեմք, hašpir անց. 3-րդ դեմք հոգն.) destroy:

9. ḫumma «խոզերի գոմ», որը երևի հնչվել է ḫomma (համմամա) և նման է հայոց «գոմ», վրաց. gomi կամ gomuri «գոմ», թուշերեն gomuri(id), քրդերեն gom. guw, gaua «ոչխարի փարախ», ասորական, թուրքերեն kom, պարսկ. gumārā «գոմ խաշանց և հղանց», բայց նաև՝ շվեդերեն gamma «հովի մասուր», գաղիերեն gamme «գոմ, ախոռ, ոչխարի փարախ», նորվեգ. gamme «խրճիթ», և այլն: Այս բոլորը (բացի հնդեվրոպական մի նախաձևից *ghomo-, որ ինարկին սխալ է: Համանուներն այդ ḫomma, հայոց և վրաց gom և այլն արևելքից անցել են արևմուտք, թեպետ սկանդինավյան ձևերը gam- արմատով, կարող են և պատահական նմանություն տալ:

10. ḫup(p)ala «որսի ցանց» (net), որը, ինչպես անանք նուշանիշ է վերևում բերված aggatiu-ն բառի հետ: Այս բառը ըստ իս սեմական աշխարհից է գալիս և համընկնում է ասոր. կամ արամ. xawlā «չվան, լար», արաբ. ḫabl «չվան, կապել», ḫibāla «թակարդ», էթիոպ. ḫall «չվան» և ḫabel «թակարդի չվան», հբր. xebel «չվան, թակարդ», ակկադ. ḫābilu «բռնող», naḫ̣alu «թակարդի չվան»: Այս սեմական (ասորական) ակունքից է նաև հայոց փոխառյալ խաղր-ք «որոգայթ, թակարդ, չվան» բառը, որը նաև դրված է ճաղր-ք (տես Hübschmann, Arm. Gram., էջ 308 և Աճառյան, Արմ. բառ., IV, 39): Հայոց xałb<ḫabl- ձևից, մեսրոպեզիասով:

11. ḫāta-š «ջանասիրություն կամ նեանդ կովի մեջ»:

12. ḫuwalli-š կամ ḫuḪi-š «շինկացած կրակ», wa>u հընչյունադարձով:

13. ḫurpanalla «թշնամական»??: Այս բառը կապվում է խեթական ḫarpu-š «թշնամական» բառի հետ, թեպետ վերջինիս սկզբում փոխառության երիտ բևեռիկներ չեն դրված: Բայց խեթական գրողները ըստ իս ճիշտ են վարվել, որ ածանցական ḫarpanalla բառը նշել են որպես օտար, որովհետև նախ կա հայոց խարդ «ագահ և անյագ՝ ուտել-խմելու մեջ, լիրբ, անառակ, խառնակեցիկ», որը Հ. Աճառյանը փոխառյալ է համարում վրաց xarbi «ագահ, անկուշտ» բառից (Արմ. բառ., III, 410—411), թեպետ նշում է և «պատահական նմանություն» արաբ. xarba «կրանի և ապրուստի գեմ խռովություն հանող, թևրություն, պակասություն», ասոր. xirbä «գեշ, հոռի, անպիտան»: Բանի որ հայոց խարդ «ագահ, լիրբ, անառակ» ուշ ժամանակի գործածված բառ է (Մաղաքիա արևղալի

մոտ, էջ 24), դրա համար էլ Հ. Ամաւլանը համարում է փոխառյալ վրացերենից: Ըստ իս, այդ բառը լինելով և խեթերենում, հայոց և վրաց բառերի հետ պիտի համարել սեմական փոխառութիւն շատ հին ժամանակից, ինչպես և խեթ. ḫuppala, հայոց խաղող բառերի նկատմամբ:

14. ḫaḫreške/a, որը գրվում է առանց և փոխառութիւնն ակադերէնի (ḫaḫḫarške/a կամ ḫaḫḫarš-) նշանակում է «բարձր ծիծաղել», իսկ parā նախդիրով՝ «ծաղրել»:

15. ḫuwaiš «խուսափիլ», որը սումերական ḫuwai- «խուսափիլ» բայի անցյալ 3-րդ դեմքն է (տես „Supplement to a Hitt. Gl.", էջ 21): Փոխառութեան նշանը գրված է նաև ḫuwiami «խուսափում եմ» ձևի վրա (Hitt. Gl., 54), իսկ մյուս բազմաթիվ ձևերը անհիշ են (ḫuwai կամ huwwai և huwwaizzi «փախչում է», ḫuwwanzi «փախչում են, խուսափում են»), ḫuwenu- «առիթիլ որ խուսափի, թողնել, փախցնել» և այլն: Ըստ իս, մաքուր արմատն է ḫuw(w)-, որ հնչվել է how- «խուսափիլ, վազել, փախչել» (run, flee, escape): Հայերը փոխ են առել խեթերից ապահովել բայը, որ բաղկացած է apa (= խեթ. appa) «ետև, назад» և hov- «փախչել» բայից, այսինքն՝ ետ փախչել, ետ գնալ, որով մարդ վտանգից (նեռից) ապահով է դառնում, ինչպես հունարենում կա apostrophē „отвращение, отклонение" բայց և „убежище, защита" (apo «ետև» strephō «դարձնում եմ») նման մեր «ապաստան, ապաւէն, ապահով» իմաստներին, որոնք բոլորն էլ խեթերենից են անցել Հայաստան վրացով հետագա հայերենին: Նեթեական այդ առար ḫuw(w)- «խուսափիլ, փախչել» արմատի հնչման տեսակից, իբրև hov-, համեմատել նաև մաքուր խեթական huwարմատը, որ մանում է huwandas (անս. հ.), huwwanteš (հոգն.), huwwaduš (հոգն. հայց) «քամի» (wind) նշանակութեամբ: Ոչ մի տարակուսս, որ այս ḫuw(w)- բառը (-and սումերական մասնիկով) հայոց hov «թևթև քամի» բառն է, որից՝ զով (<զհով): Հայոց բառի «զովութիւն» (прохлада) նոր պիտի համարել, ինչպես որ հին «քամի» իմաստը պահել են խեթերի երկրին մոտ Ակնա, Եարբնդի, Սեբաստիայի, Տիգրանակերտի բարբառները (տե՛ս Աբմ. բառ., IV, էջ 375): Հիմա էլ Աբարատյան բարբառում և գրականում երբ առում ենք «հով է գալիս», մենք ղռում ենք առնութեան հետ և օդի փչելը:

16. ḫuḫḫupaš «չեզոք» (neutral):

17. gaši-n (հայց. հ.) «երկրպագութիւն, поклон» (obeisance??):

18. kappilazza- «բարկանալ» (grow angry??):

19. kargaranti «հոժարությամբ» (gladly, willingly??):

20. kukūpalatar «վիրավորանք» (offense?):

21. kugurniyaman anda „под печатью скрытности"???

22. kunistayalli-š «կոնֆիդենցիալ»??

23. kupiyati-š «պլանավորում, խորամանկություն, հնարին նպատակ»? կա և ոչ փոխառությունն նրանով գրված kur- (անցյալ kurta) «պլանավորել, խորամանկել»:

24. guršawanza «ավերված»? կա և guršawara նույն նշանակությամբ:

25. kuwayami (տրակ. հ.) «երկյուղալի»?

26. lawarr- «ջարդվել, քանդվել»:

27. lulu «բարգավաճում, процветание»:

28. lumpašši-n (հայց. հ.) «բավարարում, բավարարություն»:

29. marḫ- «հաջորդել»:

30. marša- (հայց. հ. maršan) «վատ, փչացած» (bag, corrupt):

31. maruwait «որոշեց (վճռեց) երկու հակառակորդների միջև (վեճը)»:

32. niwalli-š «անմեղ»? Այս բառը պատահում է Փիլդամիշի էպոսի խնթական թարգմանության ֆրագմենտներում, որ հրատարակել է Johannes Fridrich-ը: Ես առաջնի այս բառի համապատասխան անդը ասորաբաբելական բնագրում, որտեղ կա «թույլ» իմաստը („немощный, упавший духом", տե՛ս իմ Chetto-armenica, 73—74): Այս հասատատում է նաև հայոց նուազ «թույլ» բառը, որը nival ձևից է և համապատասխանում է խնթերենի «ստոր» niwalliš բառին: Թուցն խնթերը այդ «ստորություն» երկու նախադիր բնեռիկներով ուզում էին ասել, որ ամբող բառը գործ են ածում և ստոր լեզուներըը, մանավանդ միևնույն բառի այլ ձևերը հաճախ այդ բնեռիկները չունեն:

33. pašiḫā- «տրորել, փուշի դարձնել, մանրացնել»? Բայց կան և առանց փոխառության անպիկների գրություններ pašiḫaizzi «փուշիացնում է»: Արդյոք կապ չունի՞ այդ արմատը (-ḫa ստոր ֆորմատիվով) հայոց «փուշ» բառի հետ:

34. pintanza «թիեր, թիավարներ» (rudders?), որ վերաբերում է նավին (մակույկին): Ձևը, ինչպես անանում ենք՝ հոգնակի է (-anza), այն էլ լուվիական լեզվով արված:

35. pulpulī- ծառի կամ նրա մի մասին վերաբերող մի բառ

է և հայտնի է դարձել մեզ Գիլգամեշի էպոսի խեթական թարգմանությունից, որ հրատարակել է Ֆրիդրիխը (ZA, NF, V, 47)։ Առաջը վերաբերում է ծառերի կտրելուն (šummitanta «կացնով»)։ A. Götze-ն առաջարկում է թարգմանել «ճոճղեր», „брусья, бревна“ (Stämme, Balken)։ Ըստ իս այդ pulpuli բառը, որ կարելի է գրել և bulbuli, քանի որ p ‖ b սովորական է խեթական գրության մեջ, նշանակել է «ճյուղեր» և սկզբում ծագել է «ընձյուղ, отпрыск» իմաստից։ Դրա համար ինձ հիմք է տալիս նույնանունչ և նույնիմաստ հայոց բողբոջ բառը, որը առացվել է bolbol հին ձևից, ինչպես ունենք դողդոջալ և դողդողալ (արմատն է դող-ալ)-մ(ը)րմունջ „шопот“ և ընկերքին ցայլ (արտրաալան բարբառում) և մրմունդ (արմատն է մուռ- «մրմիմրմիալու ձայնը» և «բերժ», մուռը հանել «բերժը» հանել), արտունջ < turtur-ից, պաղպաջել, «խայլել» ‖ պլպլալ, փողփողել և այլն։ Բայց խեթերենում կա նաև warwala- «սերունդ» իմաստով նույնպես որպես օտար բառ, որը ազդակից է այս pulpuli ‖ bulbuli «ճյուղ, բողբոջ» բառին։

36. šappatta «նա մշակեց ձողեր», he trimmed (poles)?

37. šinaḫila «հրամանատար» (commander-in-chief)? Այս բառը կազմված է šinahha- «դարան» (ambush, ambuscade) արմատից, -ila մասնիկով, որը չունի փոխառության անպիսիներ։ Համանուն այդ օտար šinaha բառը, ինչպես և kupaḫi- «գլխարկ», šadupšaḫi «գահի վրա», zizzaḫi «ծխական իմիչք» բառերը, նախախեթյան կամ բալահատասական լինեն, որոնց հարում է այդ -aḫ-մասնիկով հայոց դիպաճ բառը, որ նշանակում է ժամանակավոր «բանակ» (ի դիպաճոջ ‖ ի դիպաճուջ «բանակում»)։

38. tapar— «կառավարիչ»։

39. tapašša— «տենդ» (fever?), որը թվում է թե արխական ծագում պիտի ունենա (= սանսկր. tápas «տենդ») անցնելով Փոքր Ասիա, կամ ավելի ճիշտ Մուսի Միտաննիում եղած հնդկական ցեղերի լեզուներից, ինչպես տեսանում ենք նաև խեթական մի գրվածքում, որ վերաբերում է ձիու մարզմանը (тренировка-ին) իրեն մի քանի հնդկական անվանիններով (aikawartana «մի անգամ», pančawartana «հնգապատիկ», šattarwatana «յոթնապատիկ»), համեմատել խառոնների արխական աստվածանուններից (Yndra, Našatia երկվորյակները, varuna), marianni ազնվական դասը և այլն։

40. tarpanallaššata «խռովություն առաջ բերեց»??

41. dūr «մեզ, моча» (urine)։

42. upati— «արևելք»?

43. ušaiba «խանգարենք, արգելենք»:

44. warku-š— մի անթարեննպատա հրեության, որ առաջու կողմից ձևանարկված է լինում ծխատարածական միջոցներով:

45. warwalan- (warwalani, warwalanteš, warruwalanaš) «անբիծ, անբուծ»: Համանորեն գոհ է առնված հնդկերենից, ինչպես վերոհիշյալ tapašša «աննդ, մալարիա», և թերևս mataššu «քաղցուց» համեմատել հուն. methu, ռուս. мед, գերմ. met, հայ գաւառ. մադ «գոշար» և այլն: Սրա համար կա պարզ wal- «անբիծ» հայ և արվանական մի քանի հատուկ անուններին մեջ, ինչպես ասիզ. Varaz Vatan (Վարազ Վաղան) «վարազի անբիծ, Վարազի անբուծ», Arsvai (Արսվաղ) «արջի անբուծ, արջուկ», հայոց Վաղարշ «անբուծ արջ»: Ենթական փոխառյալ warwal- բառը նա համարում եմ կրկնված, ինչպես նմանը մենք անառանք pulpuli (bulbuli) «ճյուղ» բառի մեջ:

46. waššа- (հզդն. waššanti «հագուց» wassari, հրամ. wassaru) նշանակում է «շոր հագնել» (put on clothes), հագնել (clothe) թեպետ կա և առանց փոխառության անալիկների waše ‖ waššа- (waššezzi 1 դ., waššaši 2-րդ դ., waššanzi 3-րդ դ., waššanza «հագած»), waššeškiši «հագնում նա», waššiazzi «հագնում է» և այլն: Արմատը մաքուր հնդեվրոպական է, որ կա օրինակ լատիներենում vestis «զգեստ», հայոց զգենում (զգեցայ) «հագնել», զգեստ, հագուստ», գոթ. vasti «զգեստ» wasjan «հագնել», առնակր. vas- «շոր հագնել» և այլն: Բայց ինչո՞ւ է համարվել նաև փոխառությունն ի միջի այլոց կա և waššuttal «շոր, զգեստ» հարցականի տակ դրված բառը (garment?), որը, ասկայն, կարելի է պաշտպանել հայոց ուսանիլ մի անգամ գործածված (Ագաթանգ. §) բառով— «Մեռաքա ասկեզօծ, ապիտակ բնհնդ, ուսանիլ ծանրագին էած ի վերայ նորա» (Արմ. բառ., V, էջ 684): Հայոց այդ բառը կարող է փոխառյալ լինել իմիջ. waššut- կամ waššt- ձևից wa>u փոխանցումով, ինչպես անառանք ուրդ, ուսան և նման բառերի քննության ժամանակ:

47. winat «ննջուհներ» (stakes?):

48. wiwidai «բերում է» (brings?):

49. zam(m)ura- (zammyraizzi, zammuranzi, zamuranun) «վիրավորել, հարձակվել» (injure, attach): Համանորեն այս բառը վերցված է Հայաստանի կամ նրան մոտ լեզուներից: Թերևս համեմատե-

լի է համար-տակ-ել «մեծարանել, առաջ նետվել» բայի առաջին մասը և ակկադ. zammura կոչվող քրմական դասի:

50. zaršia- «բարեկամություն, երկրի ազատություն» (guest-friend= ship, freedom of the country??) ազատություն երաշխիք (guaranty of safety?):

51. ziladua «ապագայում» (tur the future). կա և առանց վերջածանցի անալիկների zilatia(id), zilati (արաք. հոլ.?) «ապագա»:

52. zūwan «անուռդ, միս» (food, morsel, meat?):

53. miu- (հայց. miun) «մեղմ, դյուրնկան» (soft, smooth, pleasant):

54. galpariwat- =? (տե՛ս Die heth. Bruchstücke des Gilgames-Epos, ZA, NF, V, էջ 8):

Ինարկի վերջածայր բառերը ավելի շատ են և առայժմ չեն հասկացվում և մեկնվում. նրանք կարող էին և նշված չլինել երկու հոլիզոնական անալիկներով, ինչպես վերևում հաճախ այդ անուանք, երբ բառի մի ձևի հետ այդ նշված է, իսկ մյուսների մոտ չի դրված: Վերջապես կան բառեր, որ ըստ խնթագնտների հավանորեն օտար են, ինչպես, օրինակ, šadupšāḫi «գահի վրա», որը մեզ հետաքրքրում է իր -aḫi վերջամասնիկով նման մեր դիպան կամ դիպանի «ժամանակավոր բառը» (տե՛ս վերը) բառի, կամ թե šeḫelliški- «առաջա» և šehe(l)lia- ‖ šeḫilla «շրջան, աղբյուր» բառերը, որոնք հավանորեն խառիտական են համարվում (Hit. Glos., էջ 136):

Այժմ վերցնենք այն խնթական-հայկական բառամթերքի քննությունը, որոնց ընդհանրությունը չի կարելի անմիջապես բնական փոխառություններից: Խնթական փոխառությունները, ինչպես որ այդ դեռևս էին իրենք՝ խնթ դրագրողները, վերևում բնորոշեին և մասամբ համեմատվեցին, թեպետ ինարկի այդպիսի փոխառությունները կարող են լինել և վաղամի ժամանակից, որ չդիտակցվեին հետագայում, երբ դրվում էին բնագրերը: Այդ տեսակետից որոշ վերապահություն պետք է լինի ինարկի այդ բուն խնթական արմատանների ծագման հանդեպ, երբ ակնհայտնի է դրանց որոշ մասի հարաբերությունը հնդեվրոպական լեզուներին, իսկ մյուս մասի կապը բնիկ փոքրասիական (ասիանիկ) լեզուների հետ, թեպետ դեռ անհայտը: Այս կոնկրետ պատմական, բայց և բազմազիծ տեսանկյունով պետք է մոտենալ և ստուգել բնորոշիչ հայ-խնթական բառարմատների ընդհանրությանը:

Քանի որ խեթական բևեռագրությունը չունի տարբեր նշաններ š(z) և s(u) հնչյունների համար և մեկ š գրությամբ նա արտահայտում է, ինչպես կտեսնենք, ընդհանրապես s (u) հնչյունը, թե՛ հայոց լեզվի համեմատությամբ և թե՛ հնդեվրոպական, ուստի հետևելով E. Sturtevant-ին, որ իր բառարանում միայն գործ է ածում s, ես ևս այսուհետ կտառադարձեմ այդ տառով։ Իսկ ḫ գրությունը պահում եմ անփոփոխ, հակառակ E. Sturtevant-ի, որ գրում է h։

1. Աղմուկ «շփոթություն, իրարանցում», որից աղմկել, աղմկոտ, աղմկարար և այլն։ Հ. Աճառյանը alm-(-uk մասնիկ է) արմատը համեմատում է հուն. po'lemos «իրարանցում, կռիվ, պատերազմ» (Արմ. բ., I, 115), որը ինչպես ինքն է առում, «մեծ հրճվանքով ընդունեց Meillet»։ Բայց այդ բառի հետ ավելի հարմար է կապակցել խեթական alalimas (amas alalimas) = ակկադ. ḫetidu «խրտնում, վախ» (Erschrocken heit, տե՛ս Kleinas. Forsch. I, 186; Hit. Gl. „fear" ? 19, ZA. NF. V. 75)։ Խեթ. alalima- բառի երկու հոդորդ al- հնչյունակոմպլեքսը ենթարկվել է միացման և հապլոլոգիայով և առացվել է alima, որը հայերի մոտ պիտի տար աղմ-ուկ։ Իմաստի տեսակետից էլ հայոց աղմուկը իրրև «շփոթ վիճակ, իրարանցում» հետու չէ խեթական alalima «վախ, երկյուղ, խրտնում»։ Հայոց բառը կապ չունի հունարենի po'lemos բառի հետ։

2. Աճպարի «չափազանց մեծ, անհեթեթ, անճոռնի, վիթխարի» (Արմ. բ., I, 290 – 1)։ Հ. Աճառյանը այս բառը բաժանում է աճ-, որպես բացառական մասնիկ և արի «արիացի арией» և համարում է փոխառություն ամեստ. anairya-, սանսկր. anārya-, պահլ. aner «ոչ արիական, օտար»։ Ըստ նրա «ազգերը սովորություն ունեին իրենցից դուրս գտնված ազգերին «վայրենի, բարբարոս, արյանոչակ» համարելու և նրանց անունը այս նշանակությամբ ուրիշ վատ իմաստով իրր ածական գործածելու»։ Նա օրինակ է բերում խուժիկ, խուժան..., խաղտալու, խաղտալեզու xuž «էլամիտ» և xald ցեղանուններից, ինչպես նաև այժմյան գավառական մեր բարբառներում քուրդ, թուրք, գազա, լազ, բոշա և նման անուններին փոխարերական հոդեբուխնները։ Այդ այդպես է, բայց կան իհարկե և լայն մոտեցումներ, օրինակ հայոց պարթև «պարթևացի», սկա «սակ, սկյութացի», վրաց kerketi «վայելչակազմ, стройный «kerket չերքեզ» անունից, վրաց gmiri «հերոս» կիմմերների ցեղանունից և այլն։

Վերջապես «ոչ արիական» հայերենում չկար և հայտնի չէ, որ իրանյաններդ ևս այդ anaria- անվան տակ հասկանային «վիթխարի, չափազանց մեծ» կամ թևերով «անճառոնի, աննկթելի», թևավոր և հակադրում էին քաջազգականներին Ēran և Taran կամ Anēran: Հատ ես, հայոց անարի բառը ածանցված է anar բառից i վերջածանցով, ինչպես ապի, երկաթի, ջրի, հայոդդի և այլն: Իսկ anar-ը վոքրասիական մի բառ է «հզորություն» իմաստով, որի համար կա խեթ. innara ('Strength', Hitt. Gl. 59) կամ „Kraft, Macht, Gewalt" (ըստ Ֆորրերի, ան՛ս կրիչների հոդվածը Klein. Forsch. էջ 301), որից կան բազմաթիվ ածանցյալներ, ինչպես inarahh- «հզորացնել», innarawes «հզորանալ» և այլն: Ի նկատի առնելով, որ վոքրասիական որոշ հին լեզուներում, ինչպես, օրինակ, լուվիերենում, խեթական Innarawwentaš աստվածներին համապատասխանում է լուվիերեն Annarumenzi ձևը. խեթ. idalu «չար» = լուվ. adalua, խեթ. išha= հին կապադովկիացիների aḫš (բառդ առանձնացում), ասած կարելի է նպատակացնել, որ հայատցիները (այլ խոսքով հայերը) իրենց անար «հզորություն» բառը փոխցրել կամ ունեցել են հենց այդ ձևով, այսինքն բառասկզբի „a" ձայնով, փոխանակ խեթական „i" ձայնավորի (համմա. մեր awri- «տեր» և արտրատասխոսական ewri- «տեր»): Իսկ «հզոր» իմաստը հնչառությամբ կարող է հասկացվել և իբրև «չափազանց մեծ»: Այդ անարի ածականով Եղնիկը հորջորջում է ծովի ձկներին (կնոնն?), կամ Խորենացին «ընդդեմ անարի ի ձեռն իւրում» (1-ին գիրք, § 11), ուր խոսվում է Հայկի հզոր նիզակի մասին:

3. Անգոսնել, որ գրվում է նաև՝ անկոսնել, անկուսնել, անգուշնել, անկուշնել, անկոշնել, նշանակում է «արհամարհել, անարգել»: Այս բայերը ոչ մի կապ չունեն անկուշել կամ անկուշանալ բայերի հետ, որոնք մասամբորպես նշանակում են «վարվել ամաչելով» («ծրագրեցան և անկուշեալ սիրելին») կամ «Յորժամ դիրացաք, աստուցաք, լսեցնացաք և անկուշեցաք», քան այլ ձևերով՝ անկուշացաք (տե՛ս Աբմ. բառ., I, 298—299): Նմանապես մեր բայերը կապ չունեն անդունդ «հիմք, ստորին, խոր» բառի հետ, որ ուզում է տեղեկանալ Հ. Աճառյանը (տեղ. էջ 298): Մեր բայերը, նշանակելով «արհամարհել, անարգել, կաղմված են ան- բացասական մասնիկից և գոսն- ‖ կոսն ‖ kusn- արմատից, որոնց „s" բաղաձայնը փոխանակվում է նաև „š"-ի հետ: Դրանց սկզբնական ձևն է kosn (košn) կամ kusn (kušn), որ նշանակում է «վարձատիրն, վարձ», և կա խեթերեն լեզվում: Մանավանդ շատ է գործածվում

խեթական օրինադրքում, ուր կարդում ենք kušnezzi «վարձում է» ('hire', Hitt. Gl., 85), kuš(š)an (տրակ. kuššani, kušni, բացատ. kušnaz) վարձագին, աշխատավարձ, գին ('pay, fee, wages, price'), kuššanattalliaš «վարձկան» (գինվոր) և այլն: Հետևապես հայ բայերը անկոանել (անկուանել) կամ անկոշնել (անկուշնել) ստացագի նշանակում են «անարդել», այսինքն «արժեք չտալ, չհարգել» (arg- պարսկերեն նույնն է նշանակում՝ գին, արժեք): Գարդ ատանց բացատրական ան- մասնիկի արմատը ևս տեսնում եմ Երևմխա Մեղրեցու բառարանում բերած կօշնել «ձօնել, ընծայել» և կօշնող «ձօնող, ընծայող» բառերի košn- արմատի մեջ (տե՛ս Արմ. բառ., III, 1492): Հետաքրքրական է, որ հայերը պահել են թե՛ kosn (kusn) և թե՛ košn (kušn), այսինքն թե՛ „s" և թե՛ „š" հնչմամբ արտասանությունները: Դժվար է իմարին դնել փոխառության խնդիրը: Նկատվում կար և kušata «վճռոջ համար արվող վարձագինը» և kuš- բայը (kušḫaḫat «վճարեցի»), տե՛ս Hitt. Gl. էջ 85 (kušata „bride-price; marriage", kuš- „pay, repay"): Բառ իս խեթական kušan այնպես է հարաբերում kušata (<kušanta) բառին, ինչպես հայոց նաւասի բառը «նաւասա»-ին, թողած դեռ նաւասարի բառի կազմությունը:

4. Անբ և հոգնակին անուբ «թևի տակը, подмышка»: Արդի բարբառներում մի քիչ ընդարձակ և գուցե ավելի հին իմաստով է գործածվում. «գիրկ» (Ախալցխա, Զեյթուն, Համշեն), «կապոց, տրցակ» (Հաճին), «թոռակ» կամ «երկու բազուկների կամ մեկ թևի ու իրանի միջև առնված մի բանի քանակություն» (Մոկս, Զարսանջակ, Տրապ.), «մի կուրծք բնու, լանջի վրա առած բնական քանակություն» (Ամն), «ուս, կռնակ» (Մարաշ): Ամեն անդ հնչյվել է «անթ» և ոչ թև «անուբ» և ինչպես տեսնում ենք Հ. Աճառյանի բերած այս բարբառային օրինակներից (Արմ. բառ., I, 367), այդ բառը հատուկ է եղել արևմտյան և մասամբ հարավային հայ բարբառներին: Այդ «անբ»-ը ևս կապակցում եմ խեթ. antak-išši կամ antak-itti բառաձևերի antak- բնի հետ, որ նշանակում է «մեջք, փոր, գոտկատեղ» (Hitt. Gl. 22; midde, abdomen, waist): Գրաբարում կար և անուբբա «թևի կամ վրի տակ ուռկեր», որը գուցե հին antak- ձևից է:

5. Անբեղ «առաջ մոխիր, մոխրած կրակ», անբեղ հարկանել «կրակը մոխրի տակ թաղել»: Այս բառը Հ. Աճառյանը համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ, ի նկատի ունենալով վրաց anth-eba «կրակ վառել, հրահրել, բորբոքում», anth-ebuli «վա-

ուժ» (Արմ. բ., I, 326)։ Կա նաև մեր մի շարք բարբառներում (Ա-լաշկ., Ախալքալաք, Հաճին, Չևլիքուն, Մուշ, Խարբ., Տիգր., Ակն, Ղարաբ., Երևան), և ինձ թվում է, որ հալ և վրաց anth- բնից սերված ձևերը կապ ունեն Փոքր Ասիայի լեզուների հետ, որոնցից էլ կհամեմատենք խնթ. ānt-(ānza) „горячий" heiss, «այրող» բառի հետ։ Թերևս փոքրասիական ծագումով է նաև հունական anthraks «ածուխ», anthrakia «անթեղ»։

6. Աշխար «ոդր, լաց, կոծ», աշխարել կամ աշխար դնել «վըրան լաց լինել, կոծել»։ Այս բառից եմ ես հանում ապաշխարել, որ առաջի նշանակել է «հանցանքը լացով (ոդրով) քավել», ելնա լացել»։ Համեմատել խնթ. ešḫaḫru (išḫaḫru) «արտասուք, լաց» ('tears, weeping'— H. G., 37)։ Ներքևում, խուռիտներենում և հաբներենում արմատի սկզբնական e ձայնավորը հաճախ փոխանակվում է «a» ձայնավորով կամ ընդհակառակը, ուստի ešḫaḫru-ի տեղ ապահովի է նաև aššaḫru, որը կորցնելով վերջին «ḫ», որ հավանորեն «h» հագագն է եղել, ավել է հայոց aġxar «լաց, կոծ» բառը։

7. -ապ կամ -ափ վերջամասնիկը, որը իմ կարծիքով ցույց է տալիս մի որևէ գործողությամբ բռնված լինելը։ Այդպես են կազմված a) ապգնապիմ «հնդկվել, չարչարվել» (ապգնապաւ «փութով, հապճեպով»), որը թերևս խնթ. dagan ‖ tekan «գետին» բառի takn(a)- բնից է, ասյնքան՝ բուն նշանակությունն է «գետի գետինը տարվել (բռնվել), տապալվել». b) տաղտ «ձանձրություն» բառից ունենք տաղտուկ, որից տաղտկ-ապիմ «հնդկվել, ձանձրությամբ բռնվել», ինչպես և տաղտ-ապել «չարչարել, հնդկել», տաղտապիմ «հնդկվել, տառապել, դժկամել» (տաղտ արմատի հետ համեմատել առորական talet «ծուլանալ, դանդաղել»), c) խուճապ(ք) «ճիվաղ, արյական, անսիլ, խուճապ տագնապ», խուճապիմ և այլն, առացված խուճ (կամ խուճիճ) ‖ խունճ «խրտվիլակ», ինչպես պանդխտ և պան առաջածանունը. d) կապիլ «օձի դալարվել, նռնելը», Արարատյան բարբառի «կուտապ գալ, կուտապ կուտապ գալ», համեմատել և միջնադարյան կռուտկի նույն իմաստով, որոնք բոլորն էլ կուտ < կոյտ «կուտակվիլ» բառից։ Իսկ -ափ մասնիկի համար համեմատել—խուտափիլ (բայց խուտ տալ). ատրտափիլ (բայց ատրտալ, ատրտուն)։ Շուխտափիլ (շոլի բառից), խարշափիլ «տերևների խշրտալը», բարբառային՝ մռատ = քնատ «քնով բռնված», թըլըփ-ել (Աշտարակում) «թուլանալ, իրեն կորցնել» (<*թիլափիլ) և այլն։ Այս -ap (-ապ) կամ հետադա -aph (-ափ)

մասնիկը եղել է մի ժամանակ ուրույն բայ, նշանակելով «բռնե(լ)ել», որի հետ համեմատել խեթ. ap- կամ ep- «բռնել», վերցնել („fassen, ergreifen, einnehinen" բառ Götze-ի, Ann d. Murs., 283, տե՛ս նաև H. Gl., 39): Մնգրել. xakaphi „сжук" (v-xaki „я стукнул"). çvitaphi „чириқание" čkiaphi „крик, писк" և այլն, իրրև բնաձայն, ունեն այլ ժամման -aph:

8. Ապա «հետո, после», որից յապաղիմ «ուշանալ», անյապաղ և այլն: Հնդեվրոպական լեզուներում թեպետ կան նման հնչմամբ ձևական բառեր (նախադրություններ), ինչպես ավեստ. apa, լատին. ab, գոթ. af և այլն, բայց իմաստով չեն համընկնում հայոց ապա բառին: Այդ կողմից ճիշտ վարվել է Հ. Աճառյանը, որ «Նորք» ամսագրում (1925 թ., № 5, էջ 393) առաջարկել այդ հայերեն բառը կապակցել խեթ. նույնիմաստ և նույնահունչ appa-ի հետ ('afterwards, again), որը կարող է լինել և նախադաս (praewerbium): Այդ ֆունկցիայից են հայոց փոխառյալ ապահովել («հետ վազել» =խեթ. *appa huwa-*) ապաշաւել «զղջալ» հանցանքի համար (=խեթ. appa šaw-? šaw(w)ar «գաւառում»), ապաքինել «լավանալ, առողջանալ» (=խեթ. appa + kinu- «բացել» =նո բացել, նո բացվել) և այլն:

9. Առաղձ «շինանյութ, փայտեղեն», որից առաղձագործ և առաղձարար «հյուսն»: Այս բառի *atal-* մասը նո կապակցում եմ atalluš (հայց. հոգն.?) «փայտ, անտառ», ինչպես որ այդ բառը կարդում են Ինձելիքը և Ֆրիդրիխը (տե՛ս „Die heth. Bruchstücke des Gilgameš— Epos, ZA, NF, V, էջ 81): Խեթական այդ բառը ունի սկզբում գրած «ծառ, փայտ» (GIŠ) գաղափարանիշը, որ ընդհանրապես վերաբերում է փայտանյութին: Այդ տեղում միասին գործածված են $GIŠ_{TIR}$ «անտառ» և $GIŠ_{atalluš}$ (էջեր 81, 68): Հավանորեն առում է անտառից կտրվող փայտանյութի մասին, որով պետք է առն շինվի: Խեթերեն բառի առաջին հիշն է կազմածելի —կարդալ kal?-tal-lu-uš թե u?-tal-lu-uš թե $GIŠ_{a}$-tal-lu-uš: Վերջինը, ինչպես Հ. Ինձելիքն էլ է շեշտում, ավելի է հավանական, որովհետև նախորդում է $GIŠ_{TIR}$ համանիշ «անտառ» գաղափարը (էջ 81)[1]: Վերջապես հայոց առաղ-ձ բառը կարող է այդ ճիշտ ընթերցվածքը պաշտպանել: Հայոց բառի վերջին ձ բաղա-

[1] Բևեռագիր 𒄑𒀀𒀀 *kal* նիշը կարելի է դառել 𒄑 *giš*, որը և «ծառ, փայտ» գաղափարանիշն է, և 𒀀 *a* ձայնավորը: Իսկ ū ձայնավորի համար գրվում է 𒄑𒀀𒀀:

ձայնը հավելված է (տես ինչին վերաբերող մի բան է?»), ինչպես ունենք դեղձ, որը կազմված է դեղ «դեղին» բառից, նման պարսկ. šaṭṭrang «դեղձ» (բառացի՝ դեղնապուկն), իղ-ձ «ցանկություն, հղմայք» կազմված ił- «ցանկալ» արմատից (համեմատել թևերս խեթ. ilalia «ցանկալ, անձկալ», ileššar «ցանկալ» (desire?), (տե՛ս Hitt. Gl., 57 և Suppl., 92): Մաղ-ձ „желчь", որի հետ ազգակից է թևերս մաղ-աս «բալդամ, մարմնական հյութ» բառի մաղ- արմատը: Այդ «ձ» հավելվածը նման է «ջ» աճական բաղաձայնին գաղջ բառի մեջ (գոլ բառի արմատն է), ինչպես ունենք նաև սառնջ (լատ. ster-ilis), շուրջ (շուռ բառի արմատն է). կամուրջ, որը կապ ունի «կամար» (=свод) բառի հետ (համեմատել խուռիտներեն kamari կամ gamari, որը մի տեղ է Ḫušri քաղաքի մոտ, Նուզիին մոտ, կամ «Տեշուպ տեր gamari-ի Իրրիտու քաղաքի, որ սխալմամբ թարգմանում են «ամբոց, բերդ» NPN, 292):

10. Ասր (տես. հ. ասու) «բուրդ», թևակոտ հոլովվում է նաև «ր» և «ս» հոլովմամբ (ասրոյ ‖ ասրու, ասրով, ասրոց, ասներ): Համեմատվում են հետև. po'kos «կտրված բուրդ», pe'kos «գեղմ», լատ. pexus «բրդոտ», pecus «արջառ, պաճառ», սանս. paçu «ոչխար», ավեստ. pasu «հոտ, ոչխար, արջառ», պարսկ. pašm «բուրդ, բուրդ», հին բարձր գերմ. fahs «մազ», գերմ. Vieh «արջառ և այլն (տե՛ս Arm. Gr., 421, Արմ. բառ., I, 583—584): Բայց բառ ես, այդ հնդեվրոպական մարզանքը ներթարկվում է ձախողության, որովհետև կա խեթ. ašara š «բուրդ» (wool, տե՛ս Sturt. Chrest, 119, իսկ ըստ Götze-ի, Tunn. 85 fn. 325 «բրդեղեն?»). E. Sturtevant-ը գրում է asaras (տե՛ս „Supplement to a Hitt. Gl., էջ 14): Կա նաև asareske- կամ asareska- կապել բրդով ('bind with wool'? ըստ A. Götze-ի ibid):

11. Արգատ «երթևեկության լուս, կոտրված ամենորդ ճյուղերը» (Արմ. բառ., I, էջ 643): Միջին հայերեն բառ է, ունի նաև Երևմիտ Մեղրեցին, ինչպես և ամենայն Արարատյան բարբառը («արքատ»): Համեմատել խեթերեն ārg- արմատը (ārgi 3-րդ դ. ներկա), որ նշանակում է «կարել (отрезать), ամպանդակել, կտրատել, надрезать» (Hitt. Gl., 27, „cutoff, mutilate, cutup"): Հայոց բառի մեջ վերջին -at մասը վերջածանց է, նման արմատ, ճապատ, ոդքատ և նման բառերի:

12. Արուեստ «ճարտարասիրություն, մտավոր կամ ձեռական արհեստ», կամ «խորհրդական հնարք, հրաշք», արուեստական «ճարտար արուեստագետ», ետաքինի, բարեպաշտ», «երաժշտական» և այլն

Հետագայում ասվում է՝ նաև արհեստ, որ իմաստի անասելիորեն բնականոնության պիտի ստրկեցնի, առանձնացով այժմյան իմաստը (ремесло): Ըստ իս, պետական բառը հնագույն ժամանակ ունեցել է կրոնական ծագում, նշանակելով «պաշտամունք, культ» իմաստը, այսինքն՝ այս ծիսական առնդծագործությունը իր բոլոր գործնական և գիտարանական («գիտական», «առնդծագործական») կողմերով, որ պահանջվում էր կրոնը գործնելու կատարյալ և ազդու: Համեմատել հայոց բառի «ճարտարություն, բանեցաշարություն և նրաժշտություն» հատկանշերը: Եվ այդ կողմից ևս կիպ ակցնի խեթ. arwe- արմատի հետ, որ նշանակում է «երկրպագել, պաշտել» (Hitt. Gl., 23, 'bow before, worship'): Հայերենում վերջամաս -„eš[a]-ը սովորական ածանց է, նման գովեստ, ուսուցս, պահեստ և այլ կազմություններին: Խեթերենում կար aruw(w)aizzi «պաշտում է», aruwānzi կամ arwanzi «պաշտում են» և arwānun «պաշտեցի»: Իմաստը ճիշտ կերպով որոշել են Ehelolf-ը և E. Sturtevant-ը (H. Gl., ibid):

13. Արծարծ-ել «հրահրել, բորբոքել»: Տերվիշյանը («Նախալեզու», 48, 64, 102) այս կրկնավոր բայը կապկով «արծնել» (= տաք երկաթով կամ գունավոր մոմով փայտի վրա նկարել) բայի հետ հանում է հնդեվրոպական նախատիպ arg-ից, որ պիտի նշանակեր «փայլ, ցոլք, լոյս» (Ամր. բառ., I, 690) և ծնացել է հուն. argo's «փայլուն, ապիտակափայլ, սպիտակ», առնակր. arjuna «սպիտակ», arǰ- «խորովել», լատ. arguo «լուսաբանել», argutus «իմաստուն, լուսամիտ» և այլ բառերի մեջ: Ծողնելով արծնել բայը, որը, որպես կոնկրետ տեխնիկական և կուլտուրական բայ, հավանորեն անդրական (կամ սեմական) բառ լինի, ևս առաջարկում եմ արծ-արծ-ել բայն ևս համարել ոչ հնդեվրոպական և կապել խեթ. arš- (araśzi, aršizzi) «հոսել», āršarš-ur «հոսանք» ('flowing, current of a river', см. Hit. Gl., 28, 28 և Suppl. էջ 14) բառի հետ: Խեթերենում arsarsur ածանցյալ է -ur մասնիկով, որ ցույց է տալիս գործողության արդյունքը: Հայերենում այդ արծարծ-ել բայը, նրա փոխաոությունն լինեին, պետք է հնչվեր «արտարտուր»: Բուն իմաստն է «տարած(վ)ել և որպես ջրի հոսանք, «распространять(ся), разливать(ся)»: Խեթ. s (š) = հայ. ծ կա նաև խ. kars- «կտրել» և հ. գերծուլ կամ քերծուլ «ասիրել, մազերը կլտրել», որին մոտ է նաև մեգրելական քերցուա (ქერცუა) «կտրել, резать, отсекать» (տե՛ս И. Кипшидзе, Грам. Мингр. языка,

էջ 342)։ Այդ հնչյունարանական խեթ. s (š)= հայոց ծ հարաբերության համար համեմատել նաև հետևյալ օրինակը։

14. Արծի «բույս». առանձին չի գործածվում, այլ մանում է մի քանի բարդ բայանուններին մեջ, որպես այդ բարդությունների երկրորդ մասը։ Այդպիսիներն են -թաւարծի «որթի փախուկ, կոկուղ և մատղաշ ծիլ», թաւարծի (քան Առձ. բ. «բրդյախո»), որի սկզբի թաւ- մասը Հ. Աճառյանը կապում է «թաւ» (-թանձր, խիտ, մազոտ, բրդոտ) բառի հետ. կա և աղբծրի (աղաբծի) բուլանուն (Արմ. բ., II, 1160, III, 441)։ Այս արծի հին բառը ևս կապում եմ խեթ. arsi-s «տունկ», «տնկաստան» ('a planting, planted field'. Hit. Gl., 29), որ գործ է ածվում օրինակ խեթական օրինադրքում (տես Code hittite, 102, takku aršin kuiški taiazi „siune plantation quelqu'un vole" 11, կամ aršin appa aršâizzi „la plantation il replante" 20)։ Կա և âršakizzi «տնկում է», անց. âršikkit «տնկեց» և այլն (Hit. Gl., ibid)։ Բայց իր այդ բառարանի հավելվածքում Sturtevant-ը խեթական այդ arša- կամ arše- արմատները թարգմանում է «մշակել» ('cultivate'. Supp., 14), որը հարմար չէ arši- գոյականի համար։

15. Բուլ «հայոց, հնոց, горнило», որից բուլել և բուլճրել «խարկել, աղանձել» (բարբառներում)։ Համեմատել խեթ. bauwant դերբայը (կրավորական), որի սկզբում դրված գաղափարագիր NINDA «հաց, հացահատիկ» (օրինակը բերվում է Զոմմեր-Ֆելդի գիտնականների կողմից Պապանիկրիի ծխաբանում)։ Sturtevant-ի բառարանում թարգմանվում է «թխված տաք մոխիրների տակ» կամ «լավ թխված» (Hit. Gl.)?? Թերևս այդ NINDA pauwant- (կամ pawwant-) նշանակել է «գորեն աղանձած»։ Հայոց «բ»=խեթ. «պ» (p) գտնում ենք նաև հայոց բարգաւաճ և խեթ. pargaw-az. հայոց բողոջ և խեթ. pulpuli. Թերևս նաև հայոց բդուղ (մեծ կճուճ է) = խեթ, pulluria, որը մեղրի համար կճուճ է (բերանը թզենու տերևներով էր գոցված, տե՛ս Պապանիկրի քրմի ծխաբանը, Bogh. — St. X, 8*, 38, 56) և այլն։ Հայոց բուլ (և բուլել) բառարմատը Հ. Աճառյանը (Արմ. բ., VII, 108) ուղում է կապել գերմանական լեզուներում գտնվող be- արմատի հետ (<*bhē-), ինչպես—հին բարձր գերմ. bâen, նոր բ. գ. bähen «հացը խորովել», հին իսլ. bað «շոգիով բաղանիք», հին սաքս. bath, անգլոսաք. boeth, գերմ. bod «բաղանիք», նորվ. bara «տաք ջրով մաքրել» և այլն։ Հայոց բուլ արմատի մեջ վերջին w հնչյունը համապատասխանում է ուրիշ «ամանական» ձևերի։ Այդպիսի կամայական և արհեստական ձևով, որ այդչափ

հատուկ է որոշ հնդեվրոպաբաններին, ամեն ինչ կարելի է անել։ Հայոց bow, խեթ. pauw- (կամ baww- ‖ bauw) արմատները թեև կարելի է կապակցել միմյանց լատ. foveo «տաքացնում եմ» բայի հետ, այն էլ նեթե ապացուցվի, որ լատ. սկզբնական f բաղաձայնը (ինչպես fero և նմաններին մեջ) առաջացել է bh ձայնեղ ասպիրատից։ Ի միջի այլոց բացի հայոց b = խեթ. p հարաբերակցությունից ունենք նաև հայոց g = խեթ. k, թեպետ պետք է ասել, որ ընդհանրապես խեթական բևեռագիր գրությունը շփոթում է ձայնեղները և խուլերը։

16. Գժդմիլ կամ գժդմիլ «նեղանալ, բարկանալ, զայրանալ» կամ «մեկի հետ խռովել, քեն ընել, արդոզել» (Արմ. բ., II, 185), որից գժդմագոյն (ձեռագրում՝ գշդմագոյն), գժդմիլություն։ Թեպետ կա և գժդմիլ և այլն։ Բայց դրանք, ինչպես ճիշտ դիտում է Հ. Աճառյանը, հին ձևեր չեն և ժողովրդական առուգաբանության են ենթարկվել «գժ» բացասական մասնիկի կապակցությամբ։ Ես թողնում եմ դեռ գժտել բայը «բարկացնել, նեղացնել, սիրտը ցավացնել»։ Բայց ամենից ցայտուն այդ gəždəm(n)- <*guždum- արմատը հատատում է խեթական kušduwa(e)— լինել «անբարեացական, թշնամական» ('be malvolent, be hostile'?), որից kušduwātar (ակդ.-հ. kušduwāta) «անբարյացակամություն, թշնամություն», kuštuēške- կամ kuštuēška— «անբարյացակամ կամ թշնամի լինել» (տե՛ս Sturt., Suppl., 28)։ Այս ձևերը բերում է Ֆերդինանտ Ջոմարդը, հիմնվելով խեթ-ակկադական երկլեզվյան մի արձանագրության վրա, որը վերաբերում է Մաթիուշիլ 1-ինին։ Այնպես որ խեթական բայի նշանակությունը արվում է ըստ ակկադական համապատասխան բառի և, ինչպես ցույց է տալիս հայոց գըժգըմ- ձևը, համատը մոտավորապես ճիշտ է արված։ Ենթերենում համատն է «անբարյացակամ, թշնամի», իսկ հայերենում «քինոտ, բարկացկոտ, խռովկան»։ Թվում է թե հայոց բայը (գժդմ-իմ) փոխառյալ է խեթերենից, թեպետ գժտ-ում ձևը մնում է անբացատրելի։ Պիտի ընդգծել նաև, որ խեթ. „u“ (կամ „w“) հնչյունին հայերենում համապատասխանում է „m“ բաղաձայնը։ Այս կապակցությամբ հիշենք, որ հնոց խեթերենում ունենք m ‖ w հնչյունների փոխանցում՝ այուանրնացիա, որ հաճախ է լինում բայական անուննների մեջ =umar ‖ -uwar ածանցով, որը թեև հոլովներում դառնում է -nmn-aš (անս.), -umn-i (արակ.) և այլն։ Վերջապես ընդգծելի է, որ խեթ. š (kušduwa-) հայերենում անդրադարձած է նույնպես շչականով (գշդմագոյն, գժդմիմ) և ոչ թե սուլականով, ինչպես սովորաբար լինում է։

17. Գնամ «գնում եմ, ухожу», որից գնալուն, խելագնալ, գնացկան և այլն: Բունն է gna- որ ևս կապակցում եմ խեթական kina- (kinaizzi) «շարժվել, գնալ, գալ» (move, go, come? տե՛ս Suppl. to Hit. Gl., 26): Խեթերենում ձայնեղ և խուլ բաղաձայնների պրեֆյուններ հաճախակի միօրինակ է և շփոթվում է. p, t, k պրեֆյուններըը, ինչպես տեսանում ենք և դեռ կպատահենք, արտացոլվում են հայ համապատասխան բառերում հաճախ կամ b, d, g և կամ ph, th, kh բաղաձայններով:

18. Գորգ «խալի, ковер», որը թեպետ միջին հայերենում է մի անգամ գործածվել (Երզնկացու քերականության մեջ, տե՛ս Աբեղ. բ., I, 281), բայց իմարկի կարող է լինել շատ հին բառ, մանավանդ որ հարևան նոր լեզուներում մենք չենք տեսանում նման բառ: Համեմատել խեթ. kurka-š (հայց. հոգն. kurku-š) «ծածկոց (попона) ջորիների համար» (cover for a mule??, որը թարգմանում է F. Sommer-ը տե՛ս Suppl., 27), որի հետ կապակցվում է, իբրև փոխաբերական իմաստ, խեթ. *kurkessar (արտկ. kurkésni) «գետի մակերևույթ» (surface of a river?, ibid.: Այս դեպքում ևս խեթ. „k" բաղաձայնը համաձայն է հայոց գ-ին:

19. Երես (մանավանդ երես-ք, երեսաց և այլն) «դեմք, կերպարանք», որ ոմանք կապակցում են երե-իմ բայի արմատի հետ, իբր առաջացած *erews-ից, իսկ erew, բայարմատը A. Meillet-ը համարում է հնդեվրոպական՝ ապացույց հուն. prérō «երևալ, աչքի ընկնել, նշանավոր հանդիսանալ, թվալ, կարծվել, կերպարանք կամ երևույթ ունենալ», թոդած դեռ հին բ. գերմ. furben «մաքրել, ավլել», միջին բ. գ. vürbe «մաքրելը, թռիչ ասող», կիմբ. rhith «երդանակ, կերպ» և այլն (Աբեղ. բ., II, 796): Գերմանական բառերը իմաստով, թեկուզ և հնչյունաբանորեն, չեն կապվում մեր բառի հետ, իսկ հունարենի (prepō) և հայոց erew-(im) բառաձևերը կարող են կապակցվել միայն նախալեզվի գոյութեյունից ելած, թեպետ բուն հնդեվրոպերեններին երկու լեզուների վկայութեյունը (հուն և հայ) միշտ կասկածի տակ պետք է առնել: Ավելի պատմական և իրական (ռեալ) կլինի իմ առաջարկութեյունը՝ կապակցել հայոց eres-ը խեթ. esri-ի հետ, որ նշանակում է «կերպարանք, արտաքին» (Bild, Gestalt), ինչպես մեկնում է J. Fridrich-ը (տե՛ս Kl. Forsch, I, 240, ZA, NF, V, 33—34): Ըստ առեվտրա-ակկ.-խեթ. բառարանի խեթերեն esri = առևտր. ALAM = ակկ. salmu «պատկեր, արձան, արտաքին»: Խեթերենը գրվում է e-eš-ri կամ e-eš-ša-ri, որը ըստ E. Sturtevant-ի արտացոլում է ēsri, իսկ հայոց

eres-ը առաջ եղել է es(e)r-, բաղաձայն „r" հնչյունի ասիրական միառաքնգայով (բաղաձայն + r դառնում է r+ բաղաձայն):

20. Թե, որ հետո գրվից pē «եթէ, որ, քե, մինչև, որպեսզի» կապակցվում է որպես հնդեվրոպական բառ. հատ. the, անգլոս. ðē (շեշտված) և ðe (անշեշտ), լիտով. te և -t (be-t, uź-io-t) ձևերի հետ: Բայց ինձ թվում է, որ այդ pē բառը բնիկ փոքրասիական-կովկասյան է, որովհետև ունենք խեթ. ta «այն ժամանակ (тогда), և, այնուամենայնիվ, բայց», ինչպես և -kku մասնիկի հավելմամբ՝ takku «եթե, если» (H. Gl. 146, 148, Supll, էջ 40) և վրաց. თუ thu («քեռ») «եթե»:

21. Թող-ում «թողնում եմ», որ կա նաև մեր գրեթե բոլոր բարբառներում, համընկնում է խեթ. tal- կամ dal- նույնիմաստ արմատին, talai «թողնում է», dalaḫḫun «թողի»: Կան և ածանցյալ dales և dalia- բայարձևները նույն իմաստով՝ оставлять, покидать ('leave, let alone, let go', H. Gl., էջ 148, կամ գերմ. „lassen", տե՛ս Ann. d. M., էջ 312): Ուշագրավ է, որ խեթերենում այս արմատը մեծ մասամբ բաղաձայնով է գրվում: Արդյոք նույն արմատի՞ց չէ բարբառային «թալ-ել» բայը:

22. Թռռոպ «գրած, վառ գծնում», որից ասղնագործող «քերթ, խորդ» (Արմ. բ., II, 1280), իսկ ըստ Առձեռն բառարանի «թռռոպ— կարկատան գծնում, ցանցի պես հյուսված հագուստ՝ գրած»: Գրվում է նաև թռռոպ: Այս բառի նախնական իմաստի վրա լույս է սփռում խեթական tarúp(p)- բայարմատը իր բազմապիսի բնաձևերով, ինչպես taruppun (անց. 1 դ. եզ.), taruppir (անց. 3 դ. հոգն.), tarup (հրամ. 2 դ. եզ.), taruptari (3 դ. եզ. չեզոք. կրավ. սեռի), իսկ tarup(p)al- բնիկ taruppaizzi կամ darupaizzi (ներկ. 3 դ. եզ.), taruppeske- կամ taruppeska- բազմապատկական բառը իր ձևերով, taruppessar գոյականը և այլն, և այլն: Tarup(p)- արմատի բուն նշանակությունն է «գոլորել, հյուսել (օրինակ՝ բուրդը, պարանը, թևը և այլն), կցել միասին, հավաքել միասին, դարձնել ներդաշնակ» ('twist; fasten together; assemble, herd together; harmonize', տե՛ս H. G., 155): Հայոց թռռոպ բառը ընդհանրապես նշանակել է կցկցված կամ ներհյուսված մի բան (գրած, գծնած, կոդով...): Սրան ապացույց է նաև միջին գարերում գործածված և դեռ այժմ էլ մեր գյուղերում (օր. Աշտարակում, Ախալքալաքում և այլուր) գոյություն ունեցող հայտնի թարփ բառը, որ նշանակում է ծառի ճյուղերից հյուսված ոտքաման մի քիթց-գործիք՝ գնահատում ձուկ որսալու համար: Համեմատել վրաց tharphi „пле-

тенка, кошница" (*цит. Чубинов-ի* Рус. Гр. сл.): *Այս թարփ բառը կա Անանիա Շիրակացու մոտ, վիմական արձանագրութիւններում, հիշում է երեմիայի բառարանը, որը տալիս է նաև թարփափել «կցորդել» հնաոճրքրիր բառը, որի իմաստը խնայած եղել է «կցկցել, ներհիւսել»* (сочетать, увязать): *Անշուշտ Փոքր Ասիայից է վերցված հունարէն* tárpē, tarpánē, tarpós *«կողով, մեծ կողով (2 ունկով)»: Այսպիսով ունենք երկու հին տարբերակներ— բուռոպ և թարփ: Այսօրէն ևս կ'հիշնի և խուռիտերէն* turupi (durupi) *բառը, որ կարդում ենք Նուռի-Միտաննու թագավոր Տուշրատտայի նամակում, գրած Եգիպտոսի Ամենհոտեպ* III *թագավորին (XIV դար մեր էրայից առաջ): Ե. Բորկը այդ բառը թարգմանել է «դաշնագիր», որ ըստ իս վերոհիշյալ բառարմատները արդարացնում են (համմ. „make harmonious" կամ „harmonize" առումը խեթ.* tarupp. *կամ* tarup(p)a(e)- *բայաձևերի համար):*

23. Իրեար *(անո. հ. իրերաց) «իրար, մեկմեկու»: Եթե ի նկատի ունենանք «ա» հոլովումը (իրերաց, իրերաւք), բունը պետք է վերականգնել* ireara-, *որը անշուշտ եղել է* *iriara-: *Այս բառը ինձ թվում է կրկնավոր, ինչպես նման դեպքում ունենք „друг друга", մեկմեկու, վրաց* ურთი-ერთჰას urthi erthas *կամ* erthinan erthsa, *լատ.* alter alterum *և այլն: Արդպես էլ ունենք խեթ.* aras aran *«իրար» պարզ* ara- *բնից, որ նշանակում է «ընտիր, բարեկամ»* (Freund, Genosse, *տե՛ս* Fridrich, ZA, NF, II, *էջ 52*, Ann. d. Murš., 280; Hit. Gl., „companion friend", *էջ 26*): *Այդ* ara *«ընկեր, друг» բառը հաճախ դրվում է «մարդ»* (LÚ) *որոշիչով: Հայ* iriara- *բառը կազմված է* iri-ara *«ընկեր, ընկերոջ», „друг друга", բայց* iri- *ձևը խեթական չէ, այլ մի այնպիսի տեղից է, որտեղ ավելի շատ խուռիտերէն էին հնչում, համեմատել Տուշրատտայի նամակում* iri-n, *որի բունն է* iri-, *որը ըստ* E. Speiser-*ի նշանակում է* aid = *«օգնական» (տե՛ս* NPN, *էջ 220), բայց ավելի շատ պիտի նշանակեր «ընկեր», կա նաև* Ir-Tešup, *որը փոխարինվում է* DU (= LÚ) Tešup *«մարդ Տեշուպ» առումով* (Bogh.-St, III, *135*).

24. Խար-ել xat'-el *«նվաղել, թուլանալ» (ըստ երեմիա Մեղրեցու բառարանի, տե՛ս Արմ. բ., III, էջ 312), համեմատել խեթ.* ḫat- *(անց. 3 դ. եզ.* ḫazzašta *3 դ. հոգն.* ḫater) *«չորանալ, թառամել», որից պատճառական* ḫatnu — *«թառամեցնել, չորացնել» (Hit. Gl., 47): Իմարկե այս առաջարկությունը վերապահությամբ պիտի ընդունել, քանի որ երեմիայի բառարանի բառերը մեծ մասամբ*

ադաւաղված են թե՛ արտաքին հնչյունական տեսակետից և թե՛ իմաստով:

25. նախարր «կոկորդի ժածկոցը, կոկորդը»: Այս գավառական բառը լսել եմ մի վաղարշապատցի պառավ կնոջից, երբ երեխայի ոտքերով վերև բռնած ժամանակ նա ասաց՝ «խախուրթը շուռ կանցնի»: Նկթերենում կա հայկական հոլովով ḫuḫḫartin (ուղղ. հոլ. պիտի լիներ ḫuḫḫartiš), որի սկզբում կա UZU «միս, միս ու արյուն, մսեղեն» գաղափարագիրը: Սկսը (A. Sayce, Revue d'Assyriologie et d'Archéologie Oriental, Paris 24, 124) առաջարկում է այդ խեթերեն ḫuḫḫarti- բառը, որը ըստ իս կարելի է կարդալ և ḫuḫḫurti- (նկթ. միջի har ‖ hur հնչական մասը մի նշանով է գրված), թարգմանել «կոկորդ» (throad??, տե՛ս Hit. Gl., 50), որը կարելի է պաշտպանել ոչ միայն գավառական խախուրթ բառով, այլև ձևով: Ինչպես տեսնում ենք, այդ հին ցեղակից և հարևան լեզուները ավելի մոտ բառակազմություն ունեն (խախուրթ < խախուրդ, կոկորդ և խեթ. ḫuḫḫart- ‖ ḫuḫḫurt-), քան մյուս լեզուները (zopт-ань, լատին. cartilago, թուրք. kərtlauk և այլն), որտեղ ամենուրեք այդ բառերը բնաձայնական ծագումով են (համեմատել նաև՝ կրճիկ ‖ խրճիկ, ռուս. хрящ և նմանները):

26. խանդ «սրտի վառվելը գիժով (կարոտով) կամ նախանձով», որից խանդալ «նախանձել», խանդանք «նախանձ», խանդել «նեղել, խռովել, չարչրկել», խանդեղութիւն «չարիազանց գրգռվածություն», խանդաղակաթ «խանդակաթ», խանդաղանք «գորով», խանդաղատ «գորովալից», խանձ (խանճ) «այրված բանի հոտ», «հրդեհ», «բռնկեցնելու նյութ», խանձել «սաստիկ փափագել, մոլիլ», «տռփել», խանձել «այրել, դաղել, խարանել», խանձատ «կրակի կայծ, ածխի կտոր», խանձատ «այրուած», խանձատել «այրել, տոչորել», խանձող «հիմնայրված փայտ» (головня), «հրաբուխի լավա», խանձիր «խանձի հոտ», «մուխ, մուր» և այլն (տե՛ս Արմ. բառ., III, 367—369): Շատ հետաքրքիր ձև է Ալաշկերտի բարբառով խանձուր «այրած շոր, որ վերքի վրա են դնում իբրև բալզամիչ», որ այլուր արտասանում են խանձիր (կամ խանձիլ), իսկ դրանից նաև՝ խանձրութ (արտասանվում է խանձրուս) «այրած շոր»: Հայոց խանդ ‖ խանճ արմատը Տերվիշյանը և Աճառյանը կապում են, որպես հնդեվրոպական բառ, սանսկր. çand- կամ çčand- «լուսավորել», հուն. kándaros «ածուխ», լատ. candeo «փայլել, այրվել», candela «կանթեղ», incendo «այրել» և այլ բառերի հետ: Բայց Խարկն ըստ իս ավելի է մոտ հայերենին խեթերեն han-

da-iš «տաքութիւն, տոչորանք, վառվիլը» ('heat' Hit. Gl., 41)։ Հայոց խանդ և խանձ- արմատներից կան կազմած մի քանի հին ածանցուններ, հաղվագիւտ մատնիչներով, ինչպես խանդագ-խանդաղատ կամ միասին՝ խանդագաղատ, որ կարծես ճիշ վերարտադրում է խեթական xarnalanza > xarnala(n)t-, հնաոճ ոդ ածանցով՝ խանձող, շատ նման է խեթական -ul ածանցին (օրինակ՝ paḫḫarue «խանձող, головня», šešarul «քամիչ, фильтр», išḫiul «դաշինք» և այլն), -ուր ածանցով, որ կա նաև խեթերէնում (համմ. NINDA itur ampur հացի տեսակներ են), -ուզ ‖ -ուձ ածանցով՝ գոյատևում է խանդուզակ ‖ *խանդուճակ, «ծոռերի կամ փոխ կրակը խառնելու փայտ», որ ամենատարածուածն է խեթերէնում, մանաւանդ գործիքների և սամանեղենի կազմութեան մէջ և այլն[1]։ Հայոց խանդ- (խանձ-) արմատի շատ հին և բազմաձև ու բազմատրոհանգամ լինելու կապակցութեամբ ես կատաջարկեի նմանը տեսնել և խեթերէնում, ուր այդ արմատով կան շատ բառեր, իրարից տարբեր նշանակութեամբ, ինչպես, օրինակ, ḫantezzi «առաջին», (ḫanti «առաջնում»), ḫand- «հատատանել», handatar կամ ḫandandatar «տատուծո գործութիւն», handallia «համաձայնվիլ» և այլն։

Իմ կարծիքով վերջին երկուսը կարելի է տղերքել մեր xand- «բորբոքվիլ, վառվիլ սիրով, նախանձով» արմատի հետ։ Երբ պատերազմի ժամանակ, դժուար մամլեանին խեթական աստվածը ցուցաբերում է parā handatar կամ parā ḫandant-atar (կրկնավոր է), այդ կարելի է ավելի շուտ հասկանալ «նախանձաւորութիւն, рвение, ревность», քան ḫandallia-, որ այնքան հիշեցնում է կազմութեամբ մեր խանդաղ ձևը, գործ է ածվել Մուրշիլ II թագաւորի մի արձանագրութեան մէջ, երբ հայացիները (ազգիցինները) կռվի ժամանակ դիրքագրավել են դիշերը հարձակվիլ, ցերեկը zaḫḫiawanzi Ù-UL ḫanda ilier «կռվելու ոչ տենչացին» (A. Götze-ն թարգմանում է wagen «համարձակվիլ» բայով, Ann. d. Murš., էջեր 133, 249)։

27. խառն (ի, ից) «ոչ պարզ՝ բազադրված, կցած, շաղած», որից խառնել, խառնուրդ, խառնակ, խառնարան «տամանեղէն պինդ լցնելու կամ խառնելու» (խառնարան Հնխ.ատասխ, ըստ քերթողաց,

[1] Տե՛ս Հ. Աճառյան, Գավառական բառարան, էջ 98, խանդուզակ (Սիվրի-հիսարում), խանդրուշակ (Սվանդում) «երկար փայտ կամ ձող, որով թոնրին կամ փուռին կրակը կխառնեն»։ Այլ բարբառներում դա կոչվում է անթզոց > անթրոց > աթարոց։

«Եւ նա լերան կրակատանը»), խառնելիք «թթակով, հրաբուխի բերան» (խառնելիք ինց «դնկի երկու կողմը կապած չմանելերը»), խառնադանձ կամ խառնիճադանջ «խառնիխուռն (ամբոխ)», և այլն: Հատկապես մեզ հետաքրքրում են վերջին բառերը իրենց -ադանձ (-ադանջ) և -իճադանձ (-ի ճադանջ) մասերով, որ հարում են խեթական լեզվի բառակազմութեան ձևերին (-izzi = իճ, al կամ ail = = ադ, -anza = -անձ կամ -անջ): Բայց խեթերենում նրա նշանակութեամբ նման բառ չունենք, կա միայն ḫarna- բայը, որից ներկա դերբայ ḫarnan (= ḫarnant, ḫarnanza «խառնանձ) «խմորված կամ խմորել» ('ferment' բառ J. Fridrich-ի, ZA, NF. I, 176, տե՛ս Hit. Gl., 44): Ունենք նաև բայական գոյական ḫarnammar (ուր. h. *ḫarnamnas) «խմորմանութիւն», որից ḫarnamnia «խմորել, դրդել» ('ferment, instigate'? էջ 44): Հատկանշելի են մեր բարբառային մի քանի շատ հին կազմութիւնները, ինչպես խառնըշտ-ել, որը կազմված է խառնանձ (կամ խառնանջ) խեթական դերբայական ձևից (ḫarnanza) և հաճախակիութեան ցուցց ուժով ու մասնիկից (խառնանջ-ա-ել > խառն-ընջ-ա-ել > խառնըշտել, ինչպես լօթանջ-ել ձևից նոյն բազմապատկական «ա»-ով ունենք բարբառային արըշտատ-ալ, օրըշտալ և այլն), որին ավելանում է «կ», «ոտ», «որ» (խառնըշտկել, խառնըշտոտել, խառնըշտորել): Աշտարակում լսել եմ նաև խառնադրշտորել, որը առաջացել է *խառնադանձ-ա-որ-ել ձևից և համապատասխան է պրտարերի «խառնադանձ»-ին, aḫ (= խեթ. -al ‖ -all) և -anč (= խեթ. -anza) մասնիկներով: Կա և խառնուխատին (Արար. բարբառ) և խառնախտիշ (Ղարաբաղ) «խառնաժողով» իմաստով, որոնք կազմված են «խառնադատիճ»-ից և ունենք խառն + ադ + ատ + իճ, ինչպես կա խառնդ-ադ-ատ և նման «խնճիքներ»: Պրտարերի խառն-իճ-ադ-անջ ունի բազադրութիւնը, միայն -իճ մասնիկը ընկած է արմատից հետո, հակառակ գոլատական խառն-ադ-ատ-իճ կազմութեան: Այստեղ գոլատական -ատ մասնիկը համեմատ է պրտարերի -անճ (-անջ) մասնիկին, թեպետ պրտարերում ևս կա -ատ (-վոր, -ունա), -կրող իմաստով, ինչպես խառնադատ, խառնձատ, աղբատ, կնատ („баба-нак") և այլն (= վրաց. -adi, bel-adi «առաջնորդ», mçvadi «խրատված» և այլն, ռուսաց. -ат-: Крылатый, усатый, богатый և այլն): Զպիտի շփոթել այդ -ատ մասնիկը բազատական -ատ մասնիկի հետ (գլխատ, կռնատ, պռատ և այլն), որը √հատ-ից է:

28. խել-ք «գլխի ուղեղը, միտք, բանականութիւն, հանճար,

հնարք, կամուրջի գլուխը, նավի դնկի կողմը, նավի նստարանները, տան կտուրը» (Արմ. բ., III, 453)։ Հավանորեն նախնական գաղափարն է նդել «գլուխ» (համեմատել՝ կամուրջի գլուխ, տան կտուրը—գլուխը, նավի դնկը—գլուխը) և պիտի ազգակից համարել խեթ. ḫal-anta «գլուխ» բառի հետ, որը Հրոզնին առաջարկում է կապակցել հայոց. խալ-ամ «ինդեղանու չոր գլուխ» բառի հետ։ Երեմիա Մեղրենցու բառարանում (էջ 140) բերած խեղկան «հատատատուն կամ գլխավոր» բառը նույնպես պիտի համարել xel- գլուխ բառից ածանցված։ Խեթերենի ḫal-(anta) արմատի դիմաց ապասելի էր հայոց խալ- կամ խաղ- («ա» ձայնավորով), եթե իհարկե հայերը անմիջապես փոխ առած չինեին։ Հայաստանում xela- «գլուխ» բնիկ բառ էր։ Բայց այս չի նշանակում, որ հայերը այլ բառեր չունեին, ինչպես «գլուխ», որը համընդհանուր է բոլոր հայերի մեջ, չնատելով դեռ այլ առումներով գործածվող «խոխ» (Սասունում), «կոտ» (Արաբ. բառբ.) և այլ բառերի մասին, որոնք արհամարհական իմաստ ունեն։ Խեթերենում կար նաև մի երկրորդ բառ «գլուխ» իմաստով, որ հնչվում է harš(š)an (H. G., 45, 129 „head; person, self, chief“)։

29. խիղճ «խղճմտանք, խղճի ցավ», որ գրվում է նաև խնդճ և խիղծ։ Առանձին նշելի է խիղճ մտաց = խղճմտանք, խղճել «տարակուսալով ևս քաշվել, կարնկնել», խղճամիտ, խնդճ «խըղճմըտանք, տրտի ցավ, թշվառ, ողորմելի, խղճալի», որից խնդճմիտ, խնդճմտութիւն և այլն (տե՛ս Արմ. բ., III, 486)։ Այս խնդճ ձևից եմ հանում Երեմիայի բառարանում բերված (էջ 140) խնդդ «տրտում», խնդդութիւն «տրտմութիւն», որ իրոք պետք է դըրվեր խնդտ, խնդտութիւն «ճ (š) պալաթաշխականի վերածումով (դիսսիմիլյացիայով) «տ» պարզականի։ Եթե խնդճ ‖ խիղճ ‖ խիղճ արմատի հին իմաստը ընդունենք «ներքին ձայն» կամ «մտքի ձայն» (խիղճ մտաց) կամ առումներում ունենք „голос совести“ «խղճի ձայն», այն ժամանակ այդ հայոց xelč (xiłč) ‖ *xelç~xiłç արմատաձևերը կարելի է կապակցել խեթ. ḫalz- բայարմատի հետ, որ նշանակում է «գոռալ, ոռնել, կարդալ, կոչել» ('cry, recit, read, call, summon, invoke', տե՛ս Supll. to a Hitt. Gl., էջ 17, կամ ըստ A. Götze-ի rufen, schreien“, Ann. d. Murš., էջ 285)։ Ինչպես տեսանում ենք Գլոսացնի Թարգմանութիւնից այդ խեթ. արմատը կարող է ունենալ և «պարսավել, պախարակել» (schimpfen) իմաստը, որը թերևս ավելի մոտ է հայոց խիղճ «խղճի ցավ» գաղափարին։ Ինչ վերաբերում է խեթ. „z“ = հայոց «ճ» կամ «ծ» հնչյունահարաբերությանը, ապա

պետք է ընդգծել, որ դա ամենաուշագրավ փոխհարաբերությունն է ոչ միայն խեթա-հայկական, այլ նաև սեմական-հայկական բառահարաբերությունների մեջ: Իսկ ձայնավորների (խեթ. a = h. e/i) փոխհարաբերության համար համեմատել նաև խեթ. ḫal-anta = հ. խոյ: Հայ բարբառների խեղճ «թշվառ» և խժմտանք «խիղճ» բառերը ոչ միայն իմաստական նոր տարբերացում են առացել, այլ-ինչպե՝ խղճմտանք բառը բառը բռնել է նախկին խիղճ (совесть) բառի տեղը, այլև իրենց սկզբնական խ ‖ հ հնչյունների տարբերացում, որը մի կողմից բացատրվում է խեղճ բառի խ և ղ հնչյունների տարանմանությամբ (դիսիմիլյացիայով), ինչպես ունենք խաղ>հաղ, խաղաղ>հաղող (>հավող), խարբուխ>հարբուխ, խեղդել>հեղդել և այլն, այլև խղճմտանք բառի այդ տարանմանությանը չենթարկվելով, երբ նրա «ղ» հնչյունը արդեն դարս էր ընկել, ապա թե ոչ կունենայինք հղճմտանք: Գրաբարի խիղճ («խիղճ») բառը դեռ հնում ունացել է խիճ ձևը, «ղ» բաղաձայնի անկումով:

30. եցայ-եմ «դիպել, մեխքանալ, պատիժը ներել, զգուշանալ, խնամքով պահել», խնալ առնեմ «խնայել», խնալեամ (մի խընալեար), խնալիկոս «ժլատ», խնալութիւն, անխնալ և այլն: Այս xna- արմատից է և խնա-մ «խնամք» (попечение), ինչպես զգա-մ (ան-զգամ) գոյականը զգա-լ բայից (այս դիտել էր դեռ Ջ. Գատկանեանը): Բայց ավելի հին բայ է անխայ-եմ կամ անխայեամ նույն նշանակությամբ: Այս բոլորը նզրակացնել է տալիս, որ նախնական ձևը եղել է anxa(i)- «դիպել, խնամք տանել», հետո նաև՝ խնայել (беречь), ներել (щадить) և նման իմաստներով: Նախնական «դիպել, հոգ տանել» նշանակությունը ավելի առաջ ծագել է «երկյուղածել, պատկառել» ըմբռնումից, ինչպես անհնարին ենք համոզ խիճալ «հոգ տանել, վախենալ, մտատանջվել» (մի խիճար «մի վախեներ, հոգ մի տաներ», որից մբխիճար — մխիճարել) և մանավանդ ազգակից խեթերեն naḫ(ḫ)- բայի մեջ, որ նշանակում է «վախենալ, երկյուղածել, պաշտել» ('fear, respect, revere', Hit. Gl., 105): Եվ խեթերեն բայի այս իմաստը առաջդ է. հաստատված է Ֆրիդրիխի, Գյուտցեի, Ջոմմերի և այլոց կողմից. կա naḫmi (ներկա 1 դ. եզ.) naḫta (անց. 3 դ. եզ.), nāḫun կամ naḫḫun (անց. 1 դ. եզ.) naḫḫan „fear, reverence" «գոյականը, ածանցյալ բայաձևեր» naḫḫe-šk-, naḫšaria- և այլն: Այս խեթա-հայկական ɣah- ‖ anxa- «երկյուղ տածել (մեկի համար), խնամել» բայերին պետք է միացնել և վրացական ნახვა nax-va «առնանել, ալցնելը» կամ «պահպանել» (хранить, беречь, ան՛ա

Чуб. Рус.-Груз. сд. *1887, էջեր 974—975)։ Հայոց* anxa(ի) *ձևը իր բաղաձայններին (*nx*) հաջորդականությամբ հնագույնն է քան* xna(ի) *ձևը, բայց անհասկանալի է իր սկզբնական ձայնավորով, որը կամ բառարկու „a“-ն է (*naxa(ի)-*), առաջ ընկած, կամ առանձին նոր նախադիր ձայնավոր է։ Ներթա-հարկական-վրացական* nax- *արմատի իմաստական շրջանները են → վախենալ → երկյուղածել → պաշտել (խնիկներում) → հոգ (խնամք) տածել → պահպանել, խնայել, ալցնել, տնտնել (վրացերենում), և կամ հոգ (խնամք) տածել > խնայել, խնայողություն անել (экономить) հասկերենում։*

31. խողխողել *«մորթել, փղդռտել, չարաչար սպանել» կրկնավոր բայը միանգամայն համապատասխանում է իր* xol- *արմատով խեթ.* ḫullanzatar *«ջախջախում»* ('battle' or 'defeat' Sommer, Die heth. akkad Bilingue, 65 fn. 5)*, ḫullanzaiš կամ hullanzan (հայց. հ.) նույն իմաստով, hullā- (որից* ḫullai *3 դ. եզ. ներկա,* ḫulliš *անց. 3 դ. եզ.* ḫullumen *1 դ. հոգն. ներկ.) «հարվածել, ոչնչացնել»* ('smite, destroy, annul', Hit. Gl., 51), ḫulle- ‖ hulla- (hūllazzi, hullit, hullir.)-id., *ḫulliške/a-* (id.), *ḫullia-* (id.), ḫulḫulia- *կամ ḫulḫulie- «կռիվ»* ('fight'), *որը ավելի հիշատ պիտի նշանակեր «խողխողել»։ Հայերենում կա և հաղվագնյ հոդհոդել գրութիւնը, որը հարկավ նոր հնչյունափոխությամբ (տարբանմանությամբ) է ձևացել միջին դարերում (XI դարից հետո, երբ հին ł դարձել է γ)։*

32. խոռ *«ծակ, փոս, ծերպ, պարապի վրա բացված խրամ «պակասավոր, թերի» (առաքինաշարքում մի կամ մի քանի առած ընկած), «ձորակ, փոս» (ըստ Հ. Տաշյանի ՀԱ. 1926, 73 «կիրճ, կապան»), որ տեսնում ենք Ստ. Օրբելյանի մոտ։ Խռնել «պատի վրա ծակ բանալ՝ խրամ բանալ», «մարմնի վրա վերք, փոս բանալ», «հանցավորին ի պատիժ՝ մարմինը խեղել»։ Խռոչ (խռուչ) «փոս, ծակ» (дупло)։ Անխռո «անկոծ, ամբողջական»։ Խռնտրիլ «մարմինը որևէ հարվածով վնասել, խեղել» կամ ըստ Հին Հայկազյան բառարանի «պատռել, կտրատել, խողխողել» (տե՛ս Արմ. բառ., III. 586—588)։ Բայց շատ հիշատ նշանակություններ են պահել մեր բարբառները, ինչպես -խռո «ամբողջությունից մի կտոր կտրած հատած» (Մուշ), «պատի մեջ քանդված, անցնելու համար շինված բացվածք» (Երևան, Ախալք. բարբ.), «տձև, ձևական եղած» (Գոլիս, Սեբաստիա)» և այլն։ Խռռատ «կիսատ կամ մեկ կողմը կտրած» (Խոտրջուր, Մուշ), խռռել «պատի մեկ մասը քանդել, փլցնել» (Ախալք., Երև.), ամբողջից մի մասը կտրել հանելով՝ եղծել, ձևա-*

հան անել» (Աալ., Ալբր., Ալաշկ., Նոր-Նախ. Պոլ., Սեբ.)։ Խոռվել (Երև.) «փչանալ, վնասվել» խոռակ (Բուլանըխ) «բերանը կտրած (աման)» և այլն։ Հ. Աճառյանը բերելով իր Արմ. բ.-ում այս հարցաւոր նյութը, հակված էր գրանց բոլորն մեջ ընդունել նախնական ձեռք, միտք նշանակությունը և համարել հայոց խոռ բառը անմասնան, նկատի ունենալով արմ. xōrā, ասոր. xurā «ձեռք», ասաւոր. ḫurru «ձեռք, խոռոչ», երբր. xōr, xūr «ձեռք» և այլն։ Ես էլ իմ «Աասորա-բաբելական բառեր հայերենում» գրքույկի մեջ հայոց խոռ բառը իր «ո» (ոչ ը) բաղաձայնի կապակցությամբ համարել եմ փոխառյալ ասորա-բաբելական (ակկադական) լեզվից։ Բայց անշուշտ այս բոլորը սխալ ենթադրություններ են։ Նախ խոռ-խոռակ բառը, թողած ածանցյալ հարաւոր ձևերը, չափազանց տարածված է եղել հնում, կարելի է ասել համահայկական է։ Երկրորդ, բուն իմաստն էր ոչ թե ձեռք, միտք այլ «քանդված-բացված» (պատի մեջ, ժայռի վրա, լեռան վրա, առաւելաշարքում, ամանի մեջ և այլն), այն որ առանները առում են „брешь", իսկ մարդու վերաբերմամբ «խնդված» (травма)։ Եվ, վերջապես երրորդ առարկությունը իմ և Աճառյանի առաջարանության դեմ, որպես անմասնան փոխառության (ձեռք. միտք նշանակությամբ), այդ այն է, որ խնթերենում կա ավելի մոտ բառ հայերենին թե հնչմամբ և թե՛ նշանակությամբ։ E. Sturtevant-ի բառարանում կարդում ենք խնթ. ḫarra- (նեկա. 3 դ., նպ. ḫarrai, 3 դ., հոգն. ḫarranzi դերբ. ḫarranza) «ջարդել, կոտրել, փոշիացնել, քանդել, վնասել» ('break, pulverise, ruin, make harmful', էջ 45). դերբայական կարճ ḫarran (ḫar-ra-an) ձևը հաճախ կարդում ենք այն բնագրերի մեջում, երբ գրանց պատճենահանման (արտագրման) ժամանակ ցուց է տրված, որ բնագիրը եղծված է (ibid)։ Հայոց խոռ (խոռակ) բառի «ո» ձայնավորը վկայում է, որ խնթերենում ḫar-(ra) բնիկ ձայնը այս դեպքում ևս պետք է կարդալ ḫuz, ḫar-ri այժմ կարդացվում է ḫur-ri, paḫ-ḫar այժմ paḫ-ḫur «կրակ», ḫar-da — այժմ ḫurda – «եռնեխված» և այլն։ Դեռ որոշ չէ թե ինչպես կարդալ ḫar-nau—թե ḫurnau «ձեռնոցյան աթոռ»[1], ḫarpaštan—թե ḫurpaštan «տանիք» և այլն. իսկ ḫurra-, որ առաջարկում եմ կարդալ harra-ի փոխարեն,

[1] Թե ընդունենք, որ խնթ. ḫurnāu- (քան Զոմմերի և Էհելոլֆի „Gebärgestell?) իրոք առն անկյունում ապրած մի առանձին վրան (палатка) էր, այն ժամանակ ևս կկապակցնի հայոց խորան «վրան, ապավար» բառի հետ

հնչյուն է ḫorra- (ինչպես ḫur-ri = ḫor-ri «խառնուրդ» = աստվածաշնչի khōr «քորացք», այսինքն՝ խորխոր, աստիճանացի)։ Իմ այս առաջարանությամբ հայոց խոռ բառը ոչ մի մի բնական փոսի, ծակի կամ խառնչի անուն է, գոյական է, այլ բայի (քանդել-քացնել, նոծնել...) գործողության հետևանք և փոխաստիճան չէ խնիվերևնից, այլ բնիկ անդական (մորքրատիկան) բառ։

33. ḫurp «անհարազատ» կամ ապօրինի (որդի) «խարդախ, կեղծ», «կոշտ, անհարթ», որից խառնախորթ, օտարախորթ, խորթանալ։ Անորթուրթի (կամ խորդուրդ «աստապատ, անհարթ վայրեր») և այլն։ Համեմատել խեթ. ḫurtāiš (հայց. հ. ḫurtain) «անեծք» ('curse', Hit. Gl., 56), քայց KBo II Vs Kol. II կարդում ենք «այս դժնատեսները idalawēš ḫurdāēš... lē uwanzi «չար (և) խարդախ (?)... չեն գալուս», որից երևում է որ ḫurda- ածական է („diese bösen, schlechten(?) Opfernden., mögen nicht kommen" քան Hrozny-ի, ան՛ս Bogh.-St., III, էջ 72)։

34. ḫorḫ. «օձի շապիկ, խողի մորթ, կճեպ (պտղի, սերմի)», որոնցից խորհանալ «կոշիկ դառնալ», խորհատուր «փեճնկաւոր» (պատուղ, սերմ)։ Բարբառներում նուշպես գոյություն ունի այս բառը -խօրխ (Ղարաբաղ) «ծառի կեղև, ծաղկախառն թեփոնք, հարթուխից հետո քթի վրա ձեռացած թեփը, շերտերի բոժոժ անպետք մաղմզուքը», խուրխ (Ագուլիս) «օձի շապիկ», խնրխ (Սերաստիա) «օձի շապիկ», խրխի (Երևան) «օձի շապիկ»։ Բայց այս բառը կա և չհնչեղներնում՝ խորխոտ «թաւիշ», կլոսրիներնում՝ xür «կոշիկ, մորթ», քրդերենում՝ xür «մորթ, կաշի», որոնք հայերենի հետ միասին Հ. Աճառյանին ենթադրել են տալիս, որ դրանց բոլորի արդյունքը խալղերեն (սերաստերեն) կամ մի ուրիշ հին լեզու է (Արմ. բ., III, 621–622)։ Եթե թոզիներեն քրդերեն, կլոսրիներեն xur կամ xür ձևերը, որոնց վերջում չկա «խ» (թերևս ընկել է?), ապա xorx հայկական (և չհնչեղական?) բառը «մորթի» իմաստով ևս կհամեմատվի խեթ. ḫaḫri բառի հետ, որ մարմնի որոշ մասն է նշանակում և ունի սկզբում UZU որոշիչը՝ մարմնի մասերի վերաբերյալ (միս, արյուն, անդամը, ձևերը և այլն)։ Կաշվի կամ կաշվիների համար կար այլ որոշիչ kuš։ Ենթագիտ Ferd. Sommer ը Ասիթուշիլ I-ինի խեթ-ակկադական երկլեզվյան արձանագրության հրատարակության մեջ առանձնացրում է ḫaḫḫri բառը թարգմանել «թոքերը» ('lungs'??, ան՛ս Suppl. to H. Gl., էջ 17)։

35. ḫuṛ «հյուղ, խրճիթ, խեղճ անասուն», որ մնացել է նաև մեր բարբառներում, ինչպես -խուղ (խարդ) «խրճիթ» (Մատրջոյ)

«քարաշեն փոքր շինք, որի մեջ մածուն և այլ անասակ կաթնեղեններ են պատրաստում» (Սասուն) խոտուն —նույն իմաստով, (Բաղեշ) «զոմանոցում շինված խրճիթ» (որից խուղովր). (Հաճին) «այգիներում շինված տնակ»: Թրքախոս հայերը Ագռնաձոր նույնպես պահել են այդ խուղ «հյուղ» բառը (տե՛ս Աբմ. բառ., III, 646—648): Ըստ Հ. Աճառյանի հայկաբանից են վերցված վրաց xula, xuxula «հյուղ, խրճիթ, փոքրիկ խանութ», Ագռնաձորի թուրքերի և թրքախոս հույներն xuɣ «հյուղ», իսկ Ատրջուրի խուլազ և Ախալքալաքի խիւլակ «հյուղակ, տնակ, հովվի խրճիթ» ձևերը նոր փոխառություններ են:

Հայոց խուղ և նրա հիմնավորյալ հիւղ բառը, վերցված նաև ցիւ «առանձնաշինք» և քիւ «առանձնամաս քարանձավի վերի դուրս ցցված մասը, կորնիզ», որոշ մոլի հնդեվրոպալաններ հանում են «նախալեզվի» squ- կամ qu- «ծածկել» արմատից, որի վրա ավելացնում են «ժառանգ լեզուներին» մեջ ալևայլ ածականներ՝ „n“, „l“, „t“, „r“, „m“ և առաջ են գալիս, օրինակ, առն. skunāti, skāuti «ծածկում է», հուն. κεύθω «ծածկում եմ, պահում եմ», κυτίς «արկղիկ», κύτος «պատյան, մորթ, կաշի», τεῦλος «մորթ, կեղև, կըճեպ», τεῦρος «քարի գլուխ», լատ. cutis «մորթ», լիտ. skurà «կաշի», հին բարձր գերմ. skora «մորթ», hūt «կաշի», scūr «քուն», hūs «առուն», hutta «հյուղակ», անգլոսաքս. scūa «տավիղ, մուֆ», hyð «կաշի, մորթ», sky «երկինք» և այլն (տե՛ս Աբմ. բառ., էջեր 646—647):

Հիւղ «պատսպարան խրճիթ, խուղ» դրած է ածելի նաև հիդ, հուղ և հիղ ձևերով: Դամասականներից ունենք միայն Զեյթունում հուղ «հողաշեն խրճիթ», իսկ ըստ Հ. Աճառյանի հայկաբանից է վերցված քրդերեն holik «հյուղակ, խրճիթ», ինչպես և քրդ. և թուրքմեն huɣ «ճիլերով շինված վրան կամ եղեգով ու խոտերով տնակ» (Աբմ. բ., IV, 319): Ըստ իս հնագույն ժամանակ եղել են երկու ձևով, մեկը xula-, որից խուղ և բաղնիշեցոց, խարբերդցոց, Կիլիկիայի և Ատրջուր-Կարինի (Ախալքալաք) խուղ-ը, որը անցել է և վրաց, ունենալով տարեմանոթյամբ և հիւղ տեսակը, իսկ մյուս ձևն է հիւղ կամ հիղ: Համեմատել խեթ. ḫila կամ ḫēla-, որն ունի սկզբում գրված «առանձնաշինություն» և նշանակում է «տաճարի գավիթը կամ նախասենյակը», (ըստ Ֆրիդրիխի և Զոմմերի, տե՛ս Hit. Gl. 49 'forecourt' or 'antechamber') կա «առանձ» որոշիչով նաև ածանցված ḫilammar (արտակ. հոլ. hilamni, hilamna) «գավիթ կամ նախասենյակ տա-

ճարի արտաքին (նկքի) դուռն մուտ», hilamnanza «բոլոր դռիվիճ-ներըն (հավաքական հոգնակի է)։ Անշուշտ հայոց հիղինակ, հիղնակ, հիղիւճակ, հիւղամնակ, հիւղնճակ տարբեր դրութիւնքով ձևերը, առաջացած հիղ- կամ հիւղ- արմատից և տառաջնորդ, գլխատոր, վարիչ» նշանակութիւնքով, սկզբում նշանակել են. տառաճարի դռիվիճում դանվորը», այսինքն՝ ուխտավորների առաջինը, առաջնորդը կամ գլխավորը։ Այդանդից է հնդեվրոպական տառաջնորդական և հնդեվրոպական ժամանակաշրջան, կանխավ որոշված, երկուսն էլ հնդին- ձևից, առաջված -ին մասնիկով հնդ- (խնթ. hel- ‖ hil-) արմատից, ինչպես ունենք աղխ արմատից աղախին, լոյս արմատից լուսին և այլն։ Թերևս հնդին ա-ւոր կամ հնդին ակ ավելի շատ ասր հնդնաւոր և հնդնակ? խուղ (>հիւղ) և հիղ ‖ հնդ բառաձևերի տարբերութիւնը հավանորեն բարբառային է։ Ենթադրել կարելի է, որ խուղ (xul) ձևը բաղկերեն է, որովհետև դրա-ծածվում է այդ ցեղերի տարածման վայրերում — Քարբերդ (բալա-հիսար), Բալու (տե՛ս «Բալու» Հ. Սարգսյան, Կահիրե, 1932, էջ 432)։ Բաղդը և այս անունից դարձած Կիլիկիայի հայերի մոտ (Ջելթ. Հաճին)։ Քառերդի բարբառը, ինչպես և Ախալքալաքը և վրացիք փոխ են առել այն բալաչյինների, որոնք մատակ գնացել են Քոի և Արաքսի հովիտներում։ Հիղ կամ հնդ (hil- ‖ hel-) ձևը անցել է հայացյինների միջոցով. և շատ հնարավորական ընդհանուրհայերական երևույթ է, որ Տարոնում, Բաղրևանդում, Վասպուրականում և Այրարատում այդ բառերը բացակայում են։

36. Ռումբ «հավաքված բազմութիւն» (մարդոց, մանավանդ դինվորների), խմբել «ժողովել հավաքել», առնախմբութիւն ա-նել», խումբ դարձել «զորք հավաքել», աշխարհախումբ, միախումբ, ինձախումբ և այլն։ Ապացոյց են համարում խնթ. hūm-anza (կամ hūm-an) բառի հետ, որ նշանակում է «ամբողջ, ողջ, ամենայն» ('whole, all, every') hūm-andaz «ամբողջովին» ('completely', Hit. Gl., էջ 32)։ Վերջին -anza (-anda) մասնիկը թերևս հավա-քական հոգնակի է, ինչպես hilamnanza ա՛ս վիրը, parnanza «բո-լոր տներըն (parna «տուն»), nepišanza «երկինքներըն (nepiš- «եր-կինք») և այլն, որը համարվում է լուվիական ծագումով էլ չեմ ասում, որ խնթերենում կա և զուտ անզական -anza (-anda), ինչ-պես halanta «գլուխ», wittanza «տարի», udneanza «երկիր», gim-manda «ձմեռ», hameshanza «գարուն» և այլն։ Հայոց mb հնչյու-նակոմպլեքսը խումբ բառի մեջ ծագել է պարզ m-ից, որ հատկա-պես բառասկզբում ժխեզանալով (mm), երկարկվում է և դառ-

նամ mb: Այդպես է դարձ «գանգ», «ոսկոր» = պարս. dām «որոգայթ, ակռաստ», շամբ «ոսկոր» = վրաց. çama «ոսկր», դամբան և դամբարան („могила") բառի damb- մասը = ասոր. tamma «ոսկոր» (բառ. Մառի), դամբարան բառացի նշանակամբ է «ոսկրատեղ», «ոսկրարան», որի իմաստական համարժեքը ևս տեսնում ևմ խեթական haštiaš per «ոսկրատեղ, mausoleum" (Hit. Gl., 47): Այդպես են նաև կաղամբ = պարսկ. kalam, կաղամբի «խնկի տեսակ» = ֆրանս. calamite (Արմ. բ., 891), բամբ = ժողովրդական բամ-բ, բուռ, = լատ. tumulus, բայց հուն. τύμβος «գերեզմանաթումբ», ասլամբ („серая куропатка. «չիլ կաքավ) = ժողովրդական ասլամ. ծծումբ = վրաց. cumcuma, cumcuba, համարիմ = ժողովրդական համբարել, համբրբրել թեպետև մասամբ գործում է m-r (-մար-) բաղաձայնների ազդեցությունը, ինչպես՝ թմրել > թմրրել, ամր > ամբր և այլն:

37. Ուխ «ամուխ, գոլորշի, շոգի», որից ծխել, ծխախոտ, ծխան, ծխոտել, ծխաճելիք «խուղակ, կնգրտակ» և այլն: Գործ է ածվում նաև մեր բոլոր բարբառներում (Արմ. բ., III, 816—818): Հ. Աճառյանը այս ծուխ բառը համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ, ի նկատի ունենալով վրաց წუხვა (ծուխվա) «ցաւ, տրամաբքուն», მწუხრი (մծուխրի) «ապրամուջ, երեկո», მწუხრება «երեկոյան մութը», წუხელის вчера «երէկ», նման հայոց երեկ և երեկ, ռուսաց вечер և вчера, և բուն հայերենն է համարում մուխ, որպես հնդեվրոպական բառ, ազգակից հուն. σμύχω «բիչ և անբոց կրակով նիհել կամ այրել», հին իռլան. múch «ծուխ», կիմր. mwg «ծուխ», կորն. mok «ծուխ», անգլս. smoca և անգլ. smoko «ծուխ», գերմաներ. schmauch «թանձր ծուխ, թևրևս առաջ смуглый և այլն (Արմ. բ., IV, 1140): Իմ կարծիքով՝ անդի է անցնել միանգամայն այլ պատմական երևույթի: Նախ, հայոց ծուխ «ծուխ, գոլորշի» բուռ իմաստի հետ է վրաց նման բառից, «ծուխ, երևոյթ» իմաստով և ուրևէ փոխառության չէ կովկասյան լեզուներից: Մեր «ծուխ»-ը ավելի շուտ կապվում է փոքրասիական լեզուների հետ, մասնավորապես խեթ. tuḫḫuiš, որ A. Götze-ն թարգմանում է «ծուխ, գոլորշի» ('smoke, vapor'? Hit. Gl., 163), որից tuḫḫuiššar «բուրվառ» ('censer'?), որը ծառայել է կրոնական ծեսերում: Խեթական tuḫ ḫ)- արմատի-դիմաց հայերենում ապահովի էր «ծուխ» կամ առնվազն «ոսխ», բայց անդի է անցնել դրանց p (ա) բաղաձայնի փոխանցումը «ծ»-ի, ինչպես հենց հայերենում կա թևքիլ > ծևքիլ, թորել > ծորել, խայթել > խայծել..., կամ առաս-

նիմ (ասն-ել արմատից) > ժամանիմ, Տրդատ > Տրդատ (ժողովրդական լեզվում), ատ > ժո և այլն, թեպետ լինում է և հակառակը: Ինչ վերաբերում մեր մուխ բառին «ծուխ» (дым) նշանակությամբ, ապա այդ ևս համարում եմ այսպես ասած բառային տարանմանություն (лексическая диссимиляция) հնչեմանք, երբ առնդիմում է կրկնությամբ ծուխ-ծուխ, հետո՝ ծուխ-մուխ և վերջապես նոր ձևափոխված կոմպոնենտը անջատվում է այդ զուգորդությունից և դառնում է առանձին բառ: Իհարկե երկու բառերը, ծուխ և մուխ, միևնույն նշանակությամբ չեն կարող ունալ միևնույն լեզվում (բարբառում), կամ դրանք պիտի երկու տարբեր առումներ առանան կամ մեկը պիտի ձգտարի դուրսմղվելուց: Համեմատել -մանձրիլ «ալրել, մրկել», առնդիմած «իրանձրիլ» հին ձևի տարբերակումից. մետ «պինդ, ամուր, հաստատուն», մետիմ «պինդ հաստատվել, ամրանալ», գոյացած հաստատման «հաստատ» կրկնակիից հատ «հաստատ» բառից, ինչպես որ կա մատ, մատդ «հաստատ» նույն «հաստատ» ձևից, ճշել «ճմռել, քրել, շաղվել, տրորել», առացյալ նույն ձևով ճնշել բայից, որ հետո նշանակել է «ճմռել, տրորել» (=ակկադ. sanaku, վրաց cneχa „давить"), մշնիլ (14-րդ դարի բառ) «աչքը անկած նայել», առացյալ պշնալ բայից և այլն: Թողնում եմ բառային տարանմանությամբ նոր բառերի առաջացման մյուս ձևերը, որոնք մանավանդ շատ հարուստ են մեր բարբառներում:

38. Կանգ-ուն «ոտքի վրա կանգնած», քայլելուց կանգ առած», որը իր կանգ- արմատով գոյություն ունի մեր բոլոր բարբառներում: Արտաքինով և մասամբ իմաստով համընկնում է խեթ. kank- կամ gank- արմատին, որը նշանակում է «կախ ընկնել, կախվել» ('hang' բառ F. Sommer-ի տե՛ս Hit. Gl., 69), ունենալով ganki, gangai «կախված է», kankandu «կախ կախվելն», kanganu- «կախել» ('cause to hang'): Եվրոպական այդ gank- ‖ kank- արմատը ամբողջովին մոտենում է հին բարձր գերմ. hangēn, գերմ. hängen, անգլ. hang ձևերին: Նույն իմաստով, բայց միջնադարյան լեզուներում այդ վկայությունը չկա, իսկ «նախալեզվից» հանելն էլ (k'ang-) անիմաստ է: Հայոց կանգ- արմատի բուն նշանակությունն է «ընդունել ուղղահայաց դրության դիմացից», իսկ խեթերենի gank- կամ kank- արմատի իմաստն է «ընդունել ուղղահայաց դրության վերևից (մի որևէ կետից)»: Թերևս հայոց կախ- արմատը, որ իմաստով ամբողջովին նույնն է խեթերենի բայի հետ, անցել է հայոց լեզվին մի այլ աղբյուրից, որը ասիական մի այլ լեզվից, ունենալով սկզբում *kanx- ձևը, որպես զու-

գահնա kank-ին, ինչպես կա Tarku- և Tarḫu- աստվածանունը (հիերոգլիֆ խեթ. Tarḫun-). Kadaḫḫaš (Gadaḫḫaš) և Ḫadaḫḫaš, Ḫataggaš աստվածանունը և այլն (տե՛ս Klein. Forsch., I, 93)։ Այս դեպքում պետք է ընդունել, որ „n" բաղաձայնը ընկել է հայոց kax- „весить, висеть" արմատի մեջ, այնպես ինչպես ունենք խեթ. ḫunḫ(u)- «հնդկ. ալիք» -ḫunḫuwanaš (անս. հոլ.) և ḫuwanhueššar, ḫuwwanḫuešar (անս. հ. hunhuešnaš) բառաձևվերում, որի հետ կարելի է կապակցել հայոց խոխ- արմատը խոխոմ «թխթոտ ձոր, նեղ ծործոր և առուամեջ, հատնքի անցած տեղը» բառի մեջ, որի -ոմ մասնիկը կա նույնպես խորշոմ բառի մեջ խորշ արմատից (Հ. Աճառյանը «խոխոմ»-ի մեջ ուզում է տեսնել կրկնավոր խոմ-խոմ» և «խոմ»-ը գարձնելով խում, որտեղից և խխուում, համարում է «կովկասյան լեզուներից փոխառություն»)։

39. Կանդաղեալ «հաստատալ», որը գործ է ածվել մեկ անգամ (Իսահակի Սողոմոնի IV, 4). բառարանները բերում են նաև կանդաղուն «հաստատուն» ձևը (Աբեղ. բ., III, 949)։ Ինչպես տեսանում ենք, բայերմատն է կանդ-, որի վրա ավելացել է -աղ ածանցը, ինչպես պատաղիծ, յապաղիծ, խանգաղատ, կախաղան, կենցաղ և այլն։ Համեմատել խեթ. ḫanda- «հաստատուն, որոշել, պատրաստել, ամուսնանալ (կարգվել)», չեզոք «հաստատուն, որոշ լինել» Hit. Gl., 41. տե՛ս նաև Ann. d. Murš., էջ 285» festgestellt werden). ḫantešk- «հաստատել» ('establish' H. G. 42 ըստ Götze-ի)։ Հայերենում ավելի շուտ սպասելի էր խանգաղ-«հաստատա(վ)ել», որը և գուցե եղել է, եթե ի նատի առնենք Մանեթոնի հայ գավառական խանք (<խանդ) բառը, որ նշանակում է «դիմացկուն» (տե՛ս Հ. Աճառյան, Գավառական բառ., 450)։ Անկասկած փոխառությունների մեջ կարող ենք ունենալ, երբ բնիկ ձայնը անդրադարձել է հայերենում (կ) բաղաձայնով, ինչպիսին են ակկ. ḫabtu «գրավում, հափշտակում» և հայոց կապուտ «ամպրոպություն», ակկ. (և ասորական) ḫassin-u «կացին» =հայոց կացին։ Ենթենքնի այս ḫanda- =հայոց կանդ- (աղ) համապատասխանությունը տալիս է նման երկրորդ օրինակը։

40. Կարի-ք «ցավ, վիշտ» (կա և կարի «պետք, պիտույք»), կարնկից «ցավակից, մխիթարիչ», կարնկցություն, կարի առնել «ցավել, տրտմել» և այլն (Աբեղ. բ., III, 1049)։ Համեմատել խեթ. kāri tia- «բարեպարտել ընդառաջել» ('comply, yield', H. Gl., 7). karia- (kariaḫḫat, անց., 1 դ., եզ.) նույն իմաստով ('yield, gratify')։ A. Götze-ն թարգմանում է kāri tia- „willfahren" շոշափ-

дать, угождать" (Ann. d. M., 292)։ Նկատի ունենալով և նախապես J. Fridrich-ի տված թարգմանությունը (ZA. NF. I, 42)։ Այս խնճոկան ոճը գործ էր ածվում պատերազմի ժամանակ, երբ թագավորի մոտ էին ուղարկվում որևէ քաղաքի ծեր կանայք կամ անդի իշխանի պատասխանը և ընկնելով արշավողի ոտները ազաչում էին քաղաքը չքանդել և չթալանել, օրինակ, Մուրշիլը ասում է. «Ով որ ինձ կանայք իմ ոտքերը ընկան, կարևցեցի (ka-a-ri ti-ja-nu-un)» և այլն։ Kārī բառը համապատասխանում է արաբական հոլովածև. իսկ tiia- բայը թարգմանվում է „ступать, заступать, стать". (treten., թևպես նման բայ կա նաև «դնել» իմաստով։

41. Կարիճ «քաջ, արի» գործ է ածվում մեր այժմյան բարբառներում (Արաբկ., Զեյթ., Մոքս., Մուշ., Բուլանըխ, Վան...). «հերիսասարդ» (Ամխ., Խարբ., Համշ., Նորնախ., Գոլիա, Ռուսք., Սուչ.) -ան՛ս Հ. Աճ. Գամ. բառ., էջ 621 և Ս. Ամատ., Հայոց բառ ու բան (377), ուր բերվում է նաև օրինակ Վարդանի առակներից (ՃԺԷ. 137, ՃԻ. 142) «ոչ ունէր ժառանգ աթոռոյն իւրոյ՝ ոչ կըտրիճ և ոչ աղջիկ»։ Այդ բառը գործ է ածվել նաև Անդիկը Անտիոքայ (Թարգ. Սմբատ Գունդստաբլ ֆրանսերենից՝ մինչ 1265 թ.) «հերիսասարդ» իմաստով (էջ 51), ինչպես և այդ Սմբատ սպարապետի ձեռքով գրված պատմության մեջ (տե՛ս Եաննազարյան, Տարեգիրք Սմբատյաց Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 108)։ Այս վկայությունները ևս քաղում եմ Հ. Ալճալյանի «Արմ. բառ.»-ից (III, էջ 1356)։ Շատ ուրախալի է, որ այս կարիճ բառը գրաբարի հին բնագրերում չի գործածվել, այլ միայն XIII դարից սկսած և այժմյան բարբառներում։ Բայց և այնպես այս բառը ինձ թվում է շատ հին և «քաջ, արի» սկզբնական նշանակությամբ կարելի է կապակցել խեթ. kutruš (հոգն. kutrueš, հայց. kutrūš) «վկա» բառի հետ։ Դան և բայեր kutruwē- «վկայնեալ բերել» և kutruwaḫḫ- «մեկին վկա դարձնել», kutruwatar (ար. հ. kutruwanni) «վկայություն» (տե՛ս Hit. Gl., 85—86)։ Խեթական այս բառերը գործ են ածվել, օրինակ, օրենսդրության, երբ գործերի և այլ դեպքերում պատասխանում պետք էր վկա ցույց տալ, և ինչպես հայոց բառն է իր իմաստով մեզ ասում, այդ վկայությունը կապված էր ուխտի և անվախության հետ, ինչպես հետագայում այլ սոցիալական-կրոնական պայմաններում դաշնակցի հավատաուխտը՝ վկայումը՝ տերտոր քրիստոնեական ժ՚ողովրդում և այդ պատճառով սուտելը (չարչարելը, դատապարտելը) առիթ եղավ վկս > ատաղձյալ իմաստաշրջության. համեմատել հայոց վկայ > ճաճանակ, հունարեն μάρτυς, ասոր.

sahdā, լատ. testis, վրաց. moçame (մոծամե), արաբ. šahīd — բոլորն էլ նրկու իմաստով «վկա», բայց նաև «նահատակ», мученикъ (տե՛ս Աբմ. բ., VI, 689)։ Հայոց կարին բառը առացվել է kutr-iç ձևից, որի -իճ (-iç) մասնիկը և փոքրասիական (խեթական) լեզուներում, իսկ հայերենում համեմատակ նաև դահին, կարին, բուին, (բուէճ), լուին, ուտին, կաւին և այլն։ Իսկ այն որ «կարին» և «երիտասարդ» հասկացութիւնները միախառնվում են շատ հասկանալի պատճառով, ապա այդ նույնը տեսնում ենք էլի հարավային հայ բարբառներում (Ռնուս, Մուշ, Սասուն) խորի բառի նկատմամբ, որ նշանակում է «երիտասարդ» (Ռնուս, Մուշ) և «կարին, քաջ» (Սասունում), ինչպես կարդում ենք Հ. Աճառյանի «Պատմ. բառ.»-ում (էջ 486), թեպետ պետք է ավելացնեմ, որ այդ բառը կա և քրդերենում «երիտասարդ»-ի իմաստով։ Թերևս դրա ազգությունն է արաբ. ǧuradi և խուռխական ǧurati «զինվոր, մարտիկ»։

42. Հաճ-ել «հանել, հափշտակել, խլել, բաժին հանել» հայոնի բայը, որ ունի բազմաթիվ ածանցումներ ու բարդութիւններ և բազմազան առումներ (հանելավ «արձակված կին», հանելուկ, հանք, հանելի «ծակ», բայց իսկապես «հանողը», հանածոյք, խաչահանում, կնահան, պատկերահան և այլն), փորձում էին բացատրել հնդեվրոպական ծագումով, ինչպես Meillet, Brugmann և ուրիշները (Աբմ. բ., IV, 105, կապելով սանս. sanōti «շահել, ձեռք բերել, օգտվել, առանալ», հուն. ἄνομαι, ἀνάω «կատարել, լրացնել, ի դլուխ հանել», իրրև նախալեզվային sen կամ sn ձևից։ Բայց, ինչպես անհանում ենք հայոց հաճ-ել բայը այլ իմաստ ունի (вынуть, ֆր. tirer) և կապ չունի մանավանդ հունական կամ հունական բառերի հետ։ Հայոց բառերի պինդամիկական ակունքը փոքրասիական լեզուներն են եղած, ի նկատի ունենալով խեթերեն ǧān (նեբկա 3-րդ դ., նզ., hāni, անց. դ., նզ. hānun «հանել, թաթավել», ('draw, dip' H. Gl., 41), ինչպես թարգմանել է A. Götze-ն „Kleinas. Forsch. I, 201 (և ծան.) ǧa-a-ni „schöpft", դինի հանելու մասին է փոքր ամանով մեծ ամանից. հետո ունենք ջուր հանելու մասին ջրհորից, մի քանի անգամ, կա նաև memian ǧa-a-nu-un (KUB VIII 79, Rs. 5) = խոսք հանելի, հետո ǧanišša, որը ամանելին է և այլն, և այլն։ E. Sturtevant-ի „dip" բացատրութիւնը ավելորդ է, քանի որ կա ոչ միայն դինի, ջուր հանել մի բանով, այլպես ասած «թաթախելով հանել», այլև «խոսք հանել», այնպես որ միանգամայն այդ խո-

թեական բառը համընկնում է թև՛ խամաոով և թև՛ ձևով հայոց «հանել» բային:

43. Հաճի կամ հաճ- «տատ» հոր և մոր կողմից: Համարվում է հնդեվրոպական լեզուներին ազգակից և կապվում է լատ. anus «պառավ կին», հուն. annis «տատ», հին բարձր գերմ. ana «տատ», ano «պապ», միջին բարձր գերմ. ane, գերմ. Ahn, Ahne, հին պրուս. ane, լիտ. any'ta «կնատեր, տալ», աֆղան. anā «մեծ մայր» (= տատ) բառերի հետ (Արմ. բառ., IV, 101): Ժխտելով նման բառերի նմանությունը, որ գուցե շատ դեպքերում է թոթովական (Lallwörter) բառեր լինեն, ինչպես n, t, m և այլ բազաձայնների շուրջը առնդված երևակայական բառահորջորջումներ (ana, nana.... ata, tata..., ama, mama...), մենք այնուամենայնիվ անմիջական պատմական կապ ենք ուզում տեսնել հայոց han(i) «տատ» և խեթական ḫannaš «նուիրական և նուիրական բառ հետ ('grandmother', H. Gl., 41): Հայոց բառաձևը, ինչպես և վերևի «հանել» բայի ձևը, ցույց է տալիս, որ խեթ. ḫ ամբակ դեպքում հնչվել է h և ոչ x (խ): Այդ են հաստատում նաև ստորև բերված օրինակները:

44. Հասկ «հատած ցորենի ցողունի գլուխը», որ ամենք ուզում են կապել հայոց հաս-անիմ բայի հետ (Տերվիշյան, Patrubany) կամ նորվեգիական åksa «հասկ» բառի հետ (Աճառյան), որ ասկայն չի ընդունում A. Meillet (Արմ. բառ., IV, 149—150): Խեթերենում կար ḫaššika- անունով բառակերտ SIŠ որոշիչով, որը այլուր բնորոշում է «ծառ, թուփ», բայց H. Ehelolf-ը ավելի ḫaššika- բառի նկատմամբ ընդունում է որևէ բույս (die pflanze GIŠ ḫaššika-, Kl. Forsch. I, 141). = կատկածելով նրա կապը ḫašk- «կշտանալ» (խմելով, ուտելով) բայի հետ: Համանորեն այդ խեթերեն. բառը հնչվելով ḫaška- (ḫašška-) նշանակել է «հասկ». լինելով հայ բառի հետ ազգակից: Ի միջի այլոց մեր բարբառները պահել են ոչ միայն «հասկ» հնչումը, այլ նաև խաշիկ (Վան, Մոկս) «հասկ», հաշիկ (Սասուն), թեպետ կա և խաշիկ (Մուշ, Մուշ) իրանի մի տեսակ է, որը կարող էր կապվել խեթերենի հետ, եթե վերջինիս ḫaššika- իրոք այդպես էլ հնչվել է: Նկատելի է նաև, որ խեթ. š = հայոց s (ս), բայց և š (շ):

45. Հասուն «ին» հոլովում) «ամուր, հաստատուն, ուժով» կամ գոյական հասու, հասու-ք «հաստատություն, ամրություն, անշարժություն», որից հաստատել «տեղահատել, մեծանալ», հաստել «պընդացնել, ամրացնել, հաստատել, տևեցնել», հաստիչ «տևեցող», հաս-

ասոց «անջրպետ» հատուած, հատուած, հատուածեան ‖ հատուամեան, հատուանաբուսա, հատուի հարիւրանել, «հատուածա կանգնել», հատուլը «ատատիկ, ուժգին» (մանրիկի համար համեմատել զարհուլը, կազդուլը) և այլն: Հայոց այս hast- արմատը Հնդեւրոպական աստիճանի կազակցել դերմանական լեզուներում գտնուող past- «հատուածուն, ամուր» արմատի հետ (հդ. festi, մդգ. veste, նդգ. fest, հաբբ. fast, անգսք. foest, անգլ. fast, որոնք ենթադրում են գոթ. *fastu, տե՛ս Արմ. բ., IV, 152): Տերմիշյանը fuuun (և fuuuuun) բառը ազգակցում էր սանս. sthā-, ավեստ. stā-, հուն. ἵστημι, լատ. sto, սլաւ. стать, հդգ. stam բառերի հետ, բայց այս *sta- «կենալ» արմատին ավելի շուտ հարում է մեր uuuuuul բայը, իսկ Հնդեւրոպական աստղաբանութիւնը դերմանական բառերի հետ չունի միջնորդ օղակավորող լեզուակցութիւններ, ունայ պատմական չէ և կրում է զուտ տեսական բնոյթ, այն էլ կապուած պրեսոնցիոյ նախալեզուական կացութեան հետ: Ըստ իս հայ hast բառի մասին պատմական ուժեղ վկայութիւն կարող է հանդիսանալ միայն խեթական haštai- (տես. ḫaštijaš, տրակ. ḫaštai, գոթ. ḫaštiit, հոգն. ḫaštae, բառը, որ նշանակում է «ուժ, ամրութիւն», ('strength, force, Hit. Gl. 47), թեպետ նշանակել է նաև «ոսկոր» ('bone'), որից E՛ ḫaštijaš (Ḫatt. IV, 75) = ḫaštijas per «գամբարան» (բառացի «տուն ոսկորի»): Արդյոք ḫašta- ‖ hašti- սկզբում մի իմաստ ուներ «ոսկոր», իսկ հետո նաև «ուժ, ամրութիւն», թե երկու տարբեր նոյնանուն բառեր են եղել: Հայոց fuuun բառը իր «ամուր, հաստատուն, ուժով» (կամ «ամրութիւն, ուժ») նշանակութիւնով պատկանում է այդ երկրորդ առումին: Ենթ. hastai- (այդպես է գրում E. Sturtevant-ը) բառը կապուում է սանսկ. asthi- և ավեստ. asti- «ոսկոր» բառերի հետ[1], որոնց հետ իրրև թե ազգակից է հայոց ոսկր «ոսկոր» բառը: Ենթե իրոք հայոց հաստ (հաստատ) բառը փոքրատեսական է և առնչւում է խեթ. hastai- «ոսկր, ուժ, ամրութիւն» բառի հետ, ապա իր սկզբնական «հ» բաղաձայնով (համեմատել նաև հ. հան, հանի և խ. hanna-) կարող է վկայել և հնդուա հնագոյն փոխառութեան, ինչպես որ սովորաբար հորջորջւում է:

---

[1] Տե՛ս A. Götze, Die Annalen des Muršilis. Leipzig. 1933. էջ 241, ծան. 2. Առաջին անգամ ḫaštai- բառը «ուժ» (Kraft) իմաստով բացատրել է J. Friedrich-ը (ZA. NF. I. 175), ibid., էջ 241:

46. Հայ. *փորկլը, հատված, կտոր, մեկ հատիկ սերմ, ոսոխ (ցորենի և այլն)», հատանել «փորել, կրճատել, վերջացնել, դրամ կտրել», հատու «տար, կտրուկ», հատիկ «սերմ», հատիճ «կուտ (Ղուկասում խատիճ «ձմերուկի կուտ»), հատոր և այլն: Կա և դատ «առանձին, զատված», որը առացվել է դ-հատ միացումից, ինչպես ունենք և յատ (յատանել, յատոց, յատուկ): Այս հատ— արմատը Հյուբշմանը համեմատում էր օսերեն fadun «ճեղքել» և բելուջներեն pataγ «փորել, ծակրատել, կրճատել» բայարմատների հետ, որոնց սկզբնական ձևն է pat-, իսկ հայոց բայը ենթադրում է նախնական pad-, և դժվարանում էր նախալեզվային մի ձևի վերածել, թեպետ ըստ Հ. Աճառյանի հետաքրքիր էր այդ «նախալեզվում» pat- և pad- արմատների փոխառնակումը (տե՛ս Արմ. բառ., IV. 160): Բայց և այնպես և նա «նորը» (1925, № 5, էջ 393) ամատպրում մատնանշել է հիմֆրեներն (= բնեռագիր, խեթերեն) ḫatt- հոմանիշը հայոց հատաճիմ բայի համար, որը իհարկե ավելի ևս պատմական է հայոց լեզվի զոյացման համար և որը ևս անկախաբար տվել եմ իմ „Chetto-armeniaca" (Երևան, 1931—1933 թթ., էջ 38): Ենթերեն ḫatta- (ḫaddāi, հոդն. ḫattanzi, չևզոք՝ hatta և ḫattanta) արմ թարգմանում են «հարվածել, կտրել, вырезывать, зарезать ծակել, սպանել» ('strike, hew, carve; makea hole; slaughter, տե՛ս Supplement to a Hit. Gl., 1930, էջ 20):

47. Հնգկ կամ հնգ (նախդ. ի հնդկի, ի հնգկով) «ժողով», «ճեմուկ, հանդառակութիւն», հնդկել «ժողովել», որից հնդկուած, հնդկիչ, հնդկական, հնդկատար, իսկ «նդ»-ի անկումով նաև՝ հնգնել, հնգնաթիւն, հնգնական, որոնք ընդունված են գրական նոր լեզվում (Արմ. բ., IV, 251): Համեմատել խեթ. ḫinganij-war «պարս. ուրախ տոնախմբություն» ('dance, merry-making' (H. Gl., 50), որ բերում է F. Sommer-ը Պապանիկոի քրմի ծեսերանի հրատարակության մեջ (Bost. X, 28): Ակկադերենում այդ խեթական բառին համապատասխանում է melult-u „танец увеселение": Հայոց «ժողովել» խոսքն հետո կարող էր առաջանալ «ծիծաղել» գաղափարից, ինչպես смеяться > осмеять, տանձահայոց խնդալ «ժողովել» և խնդալ (գրաբ.) «ուրախանալ» և այլն:

48. Հիմակ կամ հիմիկ «արդ, ինչպես և հիմա և հիմի մեր բարբառային ձևերը, որ չեն արձանագրված մեր հին մատենագրության մեջ և ոչ էլ փոխառյալ, իմ կարծիքով մեծ հնություն ունեն և կարող են կապակցվել խեթ. imma «ամենայն ցուցք ար-

վող դերբայի հետ, որ նշանակում է «իրապես, իրոք, այժմ, բացի այդ, այդ բոլորից հետո, ավելի շուտ» (really, actually; besides, after all; rather), որը ընդունված է խեթագիտների կողմից որպես առնչ (Götze, ZA. NF. II 266—268; J. Fridrich, Vertr. II, 157—160; Sommer, Die Ahhijawā-Urkunden VI, 87 f.; Götze- Pedersen, Muršiliš Sprachlāmung 51, 77—79 տե՛ս H. Gl., 57)։ Խեթերենում կար և -k(k)u մասնիկով ածանցված ձևը immak(k)u, որը մոտագույն նշանակություններ պիտի ունենար հիշյալ imma դերբայից, ինչպես ընդգծում է E. Sturtevant-ը (ibid., 58)։ Արդյոք այդ -k(k)u վերջածանցը չի համապատասխանում մեր բարբառային -կ մասնիկով (հիմա-կ, հիմիկ), որը մտնում է և -ին կամ իկա ձևով և դերանուններին մեջ (ասիկա, էսին... գրաբ. -իկ՝ այսերիկ, այսմիկ..., այսոր-ին և այլն)։ Խեթական imma և immak(k)u և հիմնական կերպով նշանակել են՝ արդ, արդեն, իրոք։

49. Հուղկաճար «ամպագործ», որից հուղկաճարու, հուղկաճարություն (Արմ. բ., IV, 391)։ Հայտնի է, Տաշյանը սաստաբերում է հուղկ- մասը համարել խեթ. ḫaluga «դեսպան, դեսպանություն» բառը, որ նրանից հուղկահար = դեսպանություն գործող։ Բայց այդ դեպքում կունենայինք հայոց «հաղկահար»։ Իմ կարծիքով հայոց այդ հուղկաճար բառը իր բարդության այդ հուղկ մասով պետք է կապակցել խեթական ḫuluganniš (հայց. ḫulgannin, բաց. ḫuluganaz) «պատգարակ, носилки» բառի հետ (տե՛ս H. Gl., 52. 'litter'??), ուր -anni մասնիկ է։ Հայտնի է, որ հին ժամանակ ազնվական կանայք, գուցե և հարուստները, ձիերով լծած պատգարակների վրա էին նստում երկար ճանապարհորդության ժամանակ։ Բայց այժմ B. Landsberger-ը այդ խեթական բառին, որը կարող է լինել և նախախեթական, տալիս է ավելի կոնկրետ նշանակություն «ճանապարհասայլ» (Reisewagen). Թեպետ այդ մասին մանրամասնությունը դեռ չի հրապարակված (տե՛ս նրա հոդվածը՝ „Kommt Ḫattum" „Hettiterland" in den Kültepe-Tafeln vor?", տպված Archiv Orientální ժուռնալում vol. XVIII, № 1—2, 1950, էջ 342)։ Խեթական բառը նա գրում է ḫu-lu-kà-ni, որ ցույց է տալիս ḫuluk- արմատը։ Հայերեն հուղկ— հնչմամբ առաջացել է հին húluk- (և húlug-) ձևից, ուր շեշտը առաջին վանկի վրա է եղել, որի հետևանքով երկրորդ վանկի u (ու) ձայնավորը ընկել է։ Բերես բառի այդ հնչումը (húluk) եղել է բուն խեթերենում։

50. Հպիտ «ծաղրածու, մխիթար» (ըստ Գ. Փեշտմալճյանի, Բառգիրք հայկազյան լեզվի, Վոլիս, 1841), որ և հապիտ «մխիթար,

խեղկատակ, խեղճ, մեղկ», որոնցից հատիկ «պատռտելիք, պարպարվել, միմոսախյուններ անել» (ըստ Առձ. բ.-ի հատիմ «հագցվել, զբաղվել, շփոտվել, խեղդվել»), հատանք «պատռտանք, միմոսախյուն» (ըստ Ա. բ. հատանք «ապխերտ զարդ»), հատատանք (կամ խատատանք) «պչրանք, պճնանք, կեղծիք, միմոսախյուն» (ըստ Ալ հատատանք — հատանք), հատատալ — «կեղծված, ծաղրված»։ Նոր Հայկազյան բառարանը սրանց արմատը դնում է հպիտ, որ ինչպես անանում ենք ունի և Փիշտմալճյանի բառարանը, իսկ ամենակարևորն է ինձ համար Երեմիա Մեղրեցու բառարանում բերված «Հապտել—պատճառել կամ խարել» (էջ 117) և «հապտել—մերձել, պատրաստել, պատճառել, ալլալել», համեմատել նաև «Հին Հայկ. բառ-ի յապտիլ «ծպտիլ, ալլակերպիլ, մտանել յոլ կերպարանս, ձևանալ» (Արմ. բ., IV, 1245)։ Այս բոլորը հաստատում եղրակացությունն է մեզ բերում, որ նախնական արմատը եղել է հրպիտ (həpit) կամ թերևս հապիտ (hapit), թողած «խ»-ով պրոթեզները։ Հնչյունատարանորեն həpit դարձել է արտասանության ժամանակ həppit, իսկ հետո՝ hətpit։ Նշանակությունը բազմազան է և կարծես թե սրամտարանորեն անբացատրելի— «միմոս, խեղկատակ (проказница)», «խեղճ, մեղկ» (развратный, слабонравный), «պատռտվող, զարդարվող» (наряжающаяся), «կեղծվող, ծաղրվող», «ալլալող», «խարող» (ըստ Հայկ. բառ.-ի՝ խոտատանք = նաև պատրանք) և այլն։ Այս բոլոր և հարևան առումները մրնացորդ են Փոքր-Ասիայի Hepit աստվածուհու հատկանշերի։ Այդ աստվածուհին, որ թերևս նաև Հայաստանի գլխավոր աստծո կինն էր «իշտարի» դաղափարագրով գրված (տե՛ս իմ „Хайаса—колыбель армян“ գիրքը) ամենատարածված, ժողովրդականն և գեղեցիկ դիցուհին էր, Փոքր Ասիայի Իշտար կամ Աֆրոդիտեն էր երկրորդ հազարամյակում (մեր էրայից առաջ)։ Նման խառնիճաղանջ Šaŭška դիցուհուն։ Տարածվեց մատաղ և Միջագետքի խառնիճաղանջ մատրկնաստ ձևով հանդես է գալիս Hepa անունով։ Հունական փոքրասիական արձանագրություններում (Մեռնոյից) հայտնի է Hipta ձևով, որպես կին Sabazios-ի։ Եվ երբ մոտ նա Արիննա քաղաքի արև աստվածուհին էր և դրավում էր առաջին տեղը խեթական պանթեոնում, կոչվում էր «տեր»։ Բնական է, որ այդ Hepat, Hepit, Hipta և այլ ձևափոխություններով երևան եկող աստվածուհին չէր կարող մեզ քրիստոնեական դարերում և պահվել կարող էր միայն իրեն հատկանշերով, որպես զարդարվող, կերպարանափոխվող, դիղեցիկ, գայթակղող (խարող) և ծամածուություններ անող խեղճ աստվածուհի։ Աստվածուհիներ ունեին կանանց անուններ,

որ նշանակում էին Tatu-Hepa «աներ Հեպային», Gilu-Hepa «Դեղեցկութիյունը Հեպային» կա և Hepit mušni «Հեպիտ սքանչելի» (նման «Իշտար սքանչելի»-ի ակկադացիաներին մոտ):

51. ձիւաղ կամ ճուաղ «հրեշ, աստղալական գազան», որից ճիւաղագործ, կամ ճուաղագործ, ճիւաղական կամ ճուաղական և այլն կա և ճիւղիկ «թիթեռնիկ», որ Հ. Աճառյանը կապակցում է այդ ճիւաղ բառի հետ: Այստեղ կա այնպիսի հարաբերութիյուն, ինչպես ունենք —խիպխիպիկ «մի տեսակ գիշերային երևակայական ոգի, մղձավանջ», кошмар* և մյուս կողմից մեր գալառական խըպպըկիկ, խիպխիպակ, խիպխիպիկ և այլն ձևով բառը, որը որոշ տեղում նշանակում է մի կողմից «թիթեռնիկ» (Ախց. Լհ. Եր. կղզ. Հնդ. Ննխ. Տր.), իսկ մյուս կողմից «մղձավանջ, մղձավանջի ոգի» (Ակն. Առ. Բլ. Եւդ. Մլթ. Մն. Մղ. Նր. Սվ. Վն.), «պատռվող քամի, սաստկի քամի, փոթորիկ» (Զեյթուն), «ճարպիկ, կարճահասակ և սաստկա մարդ» (Բուլանըխ) «մանր ու վտիտ մարդ» (Վան), «մի տեսակ հիվանդութիյուն (Սեբ.), «փոխոխամիտ, անհանդարտ (Եարբ.), «չարաճճի» (Զեյթ.), «փոքրիկ ու սիրուն» (Կարին, Զուղա), «սիրուն աղջիկ» (Նոր Նախ.), «երևքնուկ խոտը (Համշեն) և այլն (տե՛ս Արմ. բ., III, 495—498): Եվ ունենալով միևնույն թաթարական լեզուների kābālāk, թուրք. kebelek, kelebek, kebenek «թիթեռնիկ» բառի նմանութիյունը, Հ. Աճառյանը չի վարանում այսքան տարածված հայկական «խիպխիպիկ»-ը համարել փոխառութիյուն այդ թուրք-թաթարական լեզուներից, այնինչ, ինչպես նշել է Ն. Մառը, կա նաև ասորական xabala «բռնաբարիլ, աստառնաց», արաբ. xibli «կախարդանք»: Իսկ քանի որ մեր ճիւաղ ‖ ճուաղ բառին նման է ճանղիկ «թիթեռնիկ»— բառը, ուստի արաբ. ja'faliq կամ jufalak (janfaliq) «խոշոր մարմնով կին» նույնպես համաբում է փոխառյալ այդ հայոց ճիվղիկ և ճիւաղ ձևերից, մանավանդ որ Կամուս, թուրք, թարգմ. P (878—879) ասում է, որ այդ արաբերենը օտար փոխառութիյուն է (Արմ. բ., IV, 665): Բայց իրոք գոյութիյուն է ունեցել փոքրասիական (խեթ-հայկական) և հին ասմական այդպիսի բառ: Ասիներենում կար zawalliš աստվածանունը, բավական էր այդ բառմաթիվ zawall-ներից մեկի ցուցումը, որ դուշակումները այս կամ այն երևույթի կամ նպատակի համար ձախողվեն (տե՛ս E. Forrer-ի հոդվածը, որ տպվել է Kl. Forsch, I, էջ 277): Ասիրական այդ հրեշները, որոնք ուրիշ չար էին, հավանորեն այն թևաոտրած հրեշային էակները լինեին, որ քանդակված են «Ճոպղի կոյտ» կոչված ժայռի վրա: Ասիրական zawall-ը պիտի տար ըստ հնչյու-

նարտամական օրինաչափության հայոց *ճաւալ (ճաւաղ), բայց այսօրուան ունդի չի ունենալ անմիջական փոխառութիւն վերջապես եւ կամառնանշանի և հին հնդեւրոպական zebul «նուիրեալ տաւր, որ նշանակել է «չար ոգի, սատանա», այսօրուից՝ Be'el-zebul «Բէելզեբուղ» (Веелзевул)։ Արաբական ja'faliq («չխմիլ»), որ նշանակել է «խոշոր մարմնով կին», թեպետ ցայդ է տալիս իւրական տեսք հրեշ, բայց հարկով պատկանում է խեթ-հայ-հրեական մեծ բառին։

52. Մաղր-եմ «աղօթել, պաղատանք, բարեխոսել» պատկանում է, ինչպես վաղուց հայտնի է, հնդեւրոպական որոշ խումբ լեզուների, այն է՝ բալթիկ-սլաւոնական ճիւղին, ինչպես -լիթ. maldyti «շարունակ աղաչել, թախանձել», maldà «աղօթք, աղաչանք», ռուս. молю, молить, հին սլաւ. moliti, լհհ. modla «աղօթք», modlić «աղօթել», չեխ. modla «կուռք, սահար» (Արմ. բ., 769)։ Սակայն նորահայտ խեթ. malt- (malti, maldi, բայանուն malduwar), malta- (maltai, անց., 3 դ., եզ. maltaš, 1 դ., եզ. maldahhun) և maldia- բայարմատները «աղօթել, աղաչել» ('pray', H. Gl. 86 որոշ ձեռք), գալիս է ասելու, որ հայոց malth- արմատը ավելի շուտ պետք է կապակցել անմիջականորեն խեթերենի հետ, քան թէ բալթիկ-սլաւոնական լեզուներին։ Այդպես պետք է մտածել և հայոց մալել «ամրել, փշրել» արմատի ծագման, որը միացվում էր մինչև հիմա լատ. molo, գոթ. mala, հուն. μύλη «երկանդ», սլաւ. melja (мелью), լիտ. malú, հիտ. melim «աղում եմ» (Hübschmann, Arm. Gr., էջ 471), բայց խեթ. malla- «աղալ, մանրացնել» (zermahlen) արմատին հայոց ձեր ավելի է մոտենում։ Իհարկն միշտ այդպես չէ, ուրեմն հայոց մի բառաձև ավելի է մոտ հունարէնին կամ սլաւոնականին, քան խեթերէնին։

53. Մորմոք «կսկիծ, ցաւ, ևրք», որից մորմոքիմ, մորմոքանք, պատառմորմոք և այլն։ Եթե այդ արմատը հասկանանք որպես «մոք» պարզ արմատի կրկնութիւն, ինչպես որ առաջարկել եմ դեռ 1916 թ. (տե՛ս իմ „О происхождении др. арм. слова amehi", ЗВО, XXIII, 357) կապակցելով պարսկ. مو mūž, موژ mūža «ցաւ, վիշտ» արմատի հետ, ապա այժմ այդ առաջարկը ավելի վաստակի կերպով կարելի է պաշտպանել, ի նկատի ունենալով խեթ. muga(e)- (mugāi, անց. mūgait 3 դ. հոգ. mukaēten) «լաց լինել, սրտնեղել, թախանձել» ('lament, cry, iplore' H. G. 104), mukeške-(id.), mukeššar 'lamentation'։ Խեթերէնի այդ արմատը հնչյուն է mog- (mok-) «սրտունջ, սրտնեղել, ամոթանքել»։

54. Մոր «մոշ, մորենու պտուղը», որից մորենի կամ մորի թուփը= լատ. rubus nemorosus Hayne, այս անունը տարածվեց Եվրոպայում «թուփ, թփենի» նշանակությամբ —հուն. μόρον, μῶρον «թուփ», μορέα, «թփենի», միջին խոլ. merenn, կիմր. merwudden «թուփ», լատ. morum «մոր, մոշ», morus «մորենի», ավելի ուշ հուն. μόρον «թուփ» բառի ազդեցությամբ լատ. morum-ը ստացավ «թուփ» նշանակությունը և տարածվեց գերմ. լեզուներում (հբգ. mōr-, mūr-, mūl- beri մբգ. mūl-boum, mūl-ber, գերմ. Maul-becre, անգլս. mórberie, անգլ. mulberry, լիտ. mõras, լեհ. morva «թուփ»), (տե՛ս Արմ. բ., IV, 1120—1121)։ Նույն բառը համարվում է փոխառություն Փոքր Ասիայից, իսկ մյուսները՝ հունարենից։ Այդ անասկնից համեմատել թևրևս խեթ. *muris (հոգն. mures, հայց. murius) «խաղողի ողկույզ» ('cluster of grapes', H. G. 105), որ առաջարկում է թարգմանել H. Eheloff-ը։ Արդյոք այս թարգմանությունը ճի՞շտ է։ Նույն անդում (OLZ 36. 5 f.) էհնդլոֆը GIŠmāḫla- թարգմանում է «վազ» ('vine branch'), թևպետև առաջ ընդունվում էր «խնձորենի» (=հուն. μᾶλον; լատ. malum, թևրևս թուրք. alma և վրաց vašli<*mahli), որ չգիտեմ ինչու չի հիշում E. Sturtevant-ը։

55. Պատ «բալորտիքը, չորս կողմը, շրջան, պատյա, պատ, պատել «փաթաթել, շրջապատել, ման ածել», պատեաց „шелуха, кожицы, латы", պատիճ «ցորենի կճեպ, պատյան, ամասպան, փոքր կճեպիթ», պատատ «կապոց, բնա», պատատել «փաթաթել, պատատակ «բադեղ», պատատիլ «գրաղվել, պարապիլ», «խափանվել, արգելվիլ» (опутаться, запутаться) «պատատիճա, «բադեղ» և այլն։ Վերջին պատաղ- ձևի հետ են համեմատում նաև խեթ. patallia- հրամ. 3 դ. հոգն. patalliandu), որ Sturtevant-ը առաջարկում է թարգմանել «պատատնգնել, опутывать" ('fetter'? H. Gl., 120), իսկ J. Fridrich-ը սխալմամբ թարգմանում էր «խանգել, հաշմել (make lame???)։

56. Ջախել «ամուր զարնել, խորտակել, փշրել», ջախջախել «խորտակել, փշրել», Արարատյան ջախուփուրր անել և այլն, որը Ն. Մառը (UAH 1919, էջ 408), Հ. Աճառյանը (Արմ. բ., V, 1187—1188) կապակցում են վրաց ჯახება jaxeba «բաշխել, զարնել» ჯახჯუხი jaxjuxi «ծղոտակ, շոմոզ», լազ. jax «ամուրճով զարնել», ուտիերեն ժախ-փնաուն «ծեծել, փշրել, կոխոտել», ցախ-փնաուն «քամել, ճմլել, ճզմել» և նման բառերի հետ։ Համանուրեն այս հայ-վրացական-ուտիական ընդհանուր jax- (çax)- արմատը «զարնել, ударять" իմաստով

կապ ունի նաև խեթ. zaḫḫaiš (հայց. zaḫḫain, zaḫḫin, արտկ. zaḫḫia) «մարտ, կռիվ» ('fight, battle', H. G., 185) բառի հետ, որը առաջը է և ընդունված բոլոր խեթագիտների կողմից՝ կա և zah(h)-ների. 3 դ. zaḫzi, հոգն. zaḫanzi, I դ. հոգն. zaḫḫuweni, չեզոք zaḫtari, հոգն. zaḫḫanda, հրամ. հոգն. III դ. zaḫandaru) «վիրավորել, կռվել» ('injuze, fight'), zaḫḫiške- (id.), zaḫḫia- (նեղդ. և չեզոք) id., zaḫḫianu «կռվեցնել» (անց. I դ. նդ. Méianun = zaḫḫianun)։ Իմաստաբանական տեսակետից «պարտվել, խլվել» > «կռվել, ճակատամարտ տալ» համեմատել գերմ. schlagen «խփել» և schlacht «մարտ», ռուս. бить «խփել» և бой «մարտ» և այլն։ Եթե. z բաղաձայնի հանդիպակ հաճախ մեզ մոտ ունենք ճ (*ճախել, *ճախճախել, ինչպես Արարատյան բարբառում ունենք ճարճանճանիս», «ճիճիկիկել», բայց և «շշնջիկել» ջախջախել), սակայն այս ձևական հանգամանքը չի կարող արգելել այս հայ-վրացական-ասիական ընդհանուր jax- (cax-, çax-) արմատի և խեթական (resp. միջբրատական) zaḫ- արմատի միջև պատմականորեն առկայող ընդհանրությունը թե՛ իմաստի և թե՛ ձևի տեսակետից, մանավանդ որ մեզ անհայտ շատ անցումնային և միջնորդական հանգամանքներ են եղել։

57. Սակ «պարման, սահմանված չափ, կոպեկ, կարգ, դաշն, օրենք» (Արմ. բառ., 28), ըստ Առձ. բառ.-ի սակ «որոշած կարած՝ դրած՝ կարգ՝ պարման, չափ, թիվ, օրենք, դաշն, կնիք»։ Այստեղից են սակնալ «պարման դրած», սակ արկանել «դին կարել» անսակ «անպարման, անճաշակ» և սակս «վասն, պատճառով», ըո՞ր սակս «ինչի համար...», սակաւ (չափաւորյալ, թիվ ենթարկված, քիչ) և այլն։ Հիմնական նշանակությունն իմաստն է եղել «նշանակված, որոշված» և ինչպես շատ լեզուներից է այդ հայտնի, այդ բխել է հին կրոնական ըմբռնումներից, որ իբր առաված է սահմանում իր նշանակությամբ կամ ասելով մարդկանց վիճակը, բախտը (destinée), բաժին է հանում և այլն։ Հայոց սակ արմատը այդ հին ենթատրպանից է և բառական իմաստով է «նշանակվածություն» > նորմա, կացութիւն, վիճակ, չափ, թիվ, օրենք և այլն։ Այդ առանկատով համեմատել մեր այդ sak-ը խեթերեն šagaiš (ուղղ. հ.) բառի հետ, որ նշանակիլ է «նշան» ('sign, omen'), որից ունենք šakia- «նշանակել, հայտարարել», šakiaḫḫ- «նշան տալ, նշանակել» šakiške-(id.) և այլն։ E. Forrer-ը մի ժամանակ պաշտպանում էր այդ արմատի šakiaḫḫ-ինն, որ դրվում է գաղափարագրերին IZKIM-aḫḫ) «խավարում» իմաստը, օրինակ ^{d}UTU-uš šakiiaḫḫta «արևը

խավարնց», dSIN-aš IZKIM-aḫta «լուսինը խավարնց և այլն, բայց ավանդ ևս հիմնական դաղափարն է «ընշան տվնց (խավարումով)։ Որ խնթերևնում ևս sag(ā)- արմատը նշանաւորություն է ցույց տվնլ առածո կողմից այս կամ այն կարդի վերաբերյալ. այդ վկայում է նաև šaklaiš (արակ. հոլ. šaklia, šaklāi բառը, որը թարգմանվում է «ծնս, սովորություն, տուրք, օրենք» հար և նման մեր սակ բառին նույն նշանակություններով ('rite; custom, law'. H. Gl., 129)։ Այդ կապակցությամբ ծագումով անհայտ պարսկերեն sav, պհլ. sāk, որ գրած է ածվում sāk և bāž «տուրք և մաքս» արտահայտությամբ մնք և իրր անցնել է հայոց սակ «տուրք, հարկ» (գուցե «նշանակված, սահմանված տուրք» առանց խորության «գլխահարկ»), պետք է համարել փոքրասիական և ոչ իրանյան, թեևս ուրարտացիների միջոցով անցած պարսիկներին, ինչպես որ Դարեհոսի բեհստունի արձանագրություններին ռնը «Դարեհոսը ասում է», որ այնքան հաճախակի է, լուրացրած է ըստ Սևքի ուրարտական արձանագրությունների նման ռնից, որ հատուկ չէ սաստրական գրության ձևին։ Խնթերենի šagaiš, šaklaiš, šakia-, šakiaḫḫ- և այլ ձևերը վկայում են šag- ‖ šak- արմատի մասին, որ հնչվել է, ինչպես հայ բառն է ցույց տալիս sag կամ sak (ալդպես էլ գրում է E. Sturtevant-ը իր բառարանում), և հարց կարելի է դնել մինչև իսկ փոխառության։

58. Սար «լեռան գլուխ, բարձունք», սարակ «լրլրակ», սարանալ «բարձրանալ, հպարտությամբ չկամենալ», սարահարթ, սարանանիք «լեռնաբնակը», սարաւանդ, սարաւոլիթ «բարձր պատյատ» (Արմ. բ., VI, 118—122)։ Այս արմատը համարում են հնդեվրոպական k > r-, k,er- «գլուխ, գագաթ, կողքուրց, որին պատկանում են սանս. çira-, çiras- «գլուխ, ծայրը», ավեստ. sarō «գլուխ», պհլ. և պարս. sar «գլուխ», հուն. kāp, kapa «գլուխ», լատ. cerebrum «ուղեղ», հնխ. բ. գերմ. hirni, գերմ. Hirn «ուղեղ» և այլն (Hübschmann, Arm. Gr., 489, Արմ. բ., VI, 118—119)։ Այս հնդեվրոպական լեզուների ker- ‖ ser- արմատի շուրջը խմբվող բառերը նշանակում են «գլուխ», հայոց բառերը սար, սարակ, սարաւանդ, սարահարթ և այլն տալիս են հիմնականում «լեռ, բարձրություն» իմաստը, որը բնավ էլ փոխաբերական առումը չէ այդ հնդեվրոպական k,er- ‖ ser- «գլուխ» բառից։ Հայոց բառը փոքրասիական-խեթե-ուրարտական է և նշանակել է սկզբում «վերը, наверх, вверх*», հնում և գրական «բլուր, սար, вершина*»։ Համմամասին խեթ. šarā (հնչվել է sarā) «վեր վերը, վրա» ('up, above',

H. Gl., 131), որից *šara(z)zi-* «վերին, բարձր, վեհ» ('upper, highest, superior, best'), *šarba-* «բառաբացնել» և այլն: Կային վերին աստվածներ (dŠarazzeš) և ստորին (katteres): Ուշադրավ է, որ *se-e-ri* «ամպերում, հավերժած, сверх», որը գրած է աժմում ասդամական բնույթի արձանագրություններում, երբ մի երկիր կամ քաղաք պաշտոնապես վերցնելուց հետո ասված է, որ վիճակորներն էլ իրենց հերթին šepi partu «ներքի ստորան» (= թալանեցին) կամ իմ šeeri'aše SAL.lutu LÚ.asi meš-ue arubi (Սարդուրի V արձ. վանի նիշային, տող 28) «ամենի մարդ ու կանանց գործքին ասին», ստինքն՝ «ամենի ետևցած, сверх того», խոսում է միևնույն այդ դիրքերին կատարելու և վառելու մասին:

59. Սեղեխ «շնացող մարդ, կնոջ ապօրինի սիրեկանը», գրված է նաև սիղեխ, սիղխ, սիղեղ, սիղխը: Վերջին երկու ձևերը նոր ձևեր են, 9—11 դարերից հետո, երբ «ղ» տրված հետևալեզվային շփական (ֆրիկատիվ) բաղաձայն էր: Այս սեղեխ selex արմատը նույն նշանակությամբ կա և խեթերենում, ուր գրված է *šalik-* (հնդկ. III դ. նգ. šalikzt, հոգն. III դ. šalikanzi, չնդք՝ šaliga, šalika, անց. I դ. հոդ. šaliku-waštati, հրամ. salikazu) «պատկել միասին, բռնաբարվել» ('lie together, be contaminated' H. G., 130), šalikeške «լինել պիղծ, բռնաբարվել» ('be impure, defile'): Հայոց selex (=selex ‖ silex) «շնացող» բառը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ հնչյունական համրնկնում է խեթ. salik- ‖ salig- բային, միայն իր շփական „x" բաղաձայնով համապատասխանելով խեթ. k կամ g բաղաձայն պայթականին:

60. Սկ-ի «արթնալ, արթուն լինալ և ուշադիր լինել», որից հսկել (նուբեր), հսկումն, հսկուն, հսկիչ և այլն: Համեմատել խեթ. uške- (uška-) «տեսնել, նայել, հսկել» ('see, observe', H. Gl.; 171), «ճանաչել, քննել» ('recognize' Suppl. 45), uškiške- «տեսնել, հսկել», LÚ.uškiška(t)talaš «հսկիչ, պահակ» ('observer, watchman') և այլն: Խեթերեն արմատն է usk-, սակայն ամենը դրա -sk- մասը ցանկանում են համարել հաճախության ածանց, թեպետ uskisk- կազմության մեջ այդ տրվին կա: Հայոց sk-el հնչվել է əsk-el, իսկ հետագայում həsk-el, ծագելով *usk- նախնական արմատից: Թեպետ ուրարտ. Haldini ušginu նշանակվել է խալդյան հսկողության, որանք *ušgi = հսկողություն, տեսչություն (?):

61. Սկալ-ի «ջարդանալուց կամի պես հարճքել»: Համեմատել խեթ. iškalla- (iškallai չնդ. iškallā i) «կտրատել, расщепать, разрезать ('split', H. Gl., 61): Խեթերենի արմատն է *skall-* <

skal- (չեզոք և նեղդ.), որի հանդեպ հայերենը ունի սկալ-իմ (չեզոք), բայց և ցել-ում (ցել-եմ) «պատառել, ճեղքել», որոնցից առաջինը (սկալ-) գալիս է Փոքր Ասիայից, խեթերենի հետ միասին կամ գուցե հենց խեթերենից, իսկ երկրորդը (ցել- < skel ձևից) մի ուրիշ էթնիկ տարրաւրից: Այդ արմատները կան և հնդեվրոպական լեզուներում, ինչպես օրինակ, լիտ. skelìu, skélti «ճեղքել», հին իսլ. skilia «ճեղքել, բաժանել», իռլանդ. scalim «բաժանել, ցրվել», գոթ. skilja «մատգործ», հդգ. skellen, անգլոսաքս. scellan «բաժանել, հեռացնել», ռուս. щель «ճեղք», հուն. spàllo «փորել, քաղհանել» և այլն:

62. Սկս-ան-իմ (անց. կատ. սկս-ալ) «սկսել», որից սկիզբ-ն կամ սկիռան, սկիզին, սկոնակ և այլն: Արմատն է սկիս—, որը իմ կարծիքով առացվել է գ-կիս- ձևից «գ» նախաժանցով, ինչպես գգնտնել, գկծել..., գգնատ աքօղել գ-քօղ-ել և այլն: Իսկ kis- արմատի հետ համեմատել խեթերեն kiš- «դառնալ, լինել случиться, стать" ('happen, become' 79) անկանոն շատ ձևեր kišari, II դ. եզ. kištati, անց. kišat, I դ. kišḫat, kišnaḫat), անկանոն բայ kikkiš(s), (III դ. եզ. kikiššari): A. Götze-ն թարգմանում է kiš- „geschehen, werden, entstehen, eintreten" (Ann. d. M. 294), համարյա հաճախ է գործածվում «երբ գարունը եղավ (kišat)» նախադասության մեջ կամ «երբ հալրս աստված դարձավ (kišat)»= մեռավ:

63. Սպանդ «գոհ, մատաղ, գոհելը, սպանութիւն», որից ըսպանդանոց «մի մարթելու տեղ», սպանդարան «գոհարան»: Հ. Աճառյանը (Արմ. բ. VI, 388) կապում է սպան-անել բայի span- արմատի հետ, ավելացած -դ, փոխանակ -անդ, ինչպես նաև բայի հա- արմատին ավելացել է -անդ և առացվել է հանդ: Բայց ինձ թվում է, որ հայց spand իր հիմնական «գոհ» իմաստով պիտի կապել ոչ թե span- «սպանել» բայի հետ, որից թեև ազդվել է «սպանել կամ սպանվել» նոր իմաստով, մանավանդ, որ գոհը բնականաբար սպանվում է, այլ հնխ. sipant- (sippant-) =spant- ‖ spand- (նեղդ. III դ. եզ. sipanti, sippanti, հոդն. sipandanzi, sippandanzi), «գնդել, возлить գոհել (կենդանի). նվիրել — գոհարերել» ('pour a libation fo, sacrifice (an animal) to, dedicate (a place) to', H. G. 140): A. Götze-ն արմատը գրում է šipand- („libieren"), անց. I դ. եզ. šipandaḫḫun, դերբ. šipandant- «գդ. հ. šipandaza, անորոշ šipanduwanzi (Ann. d. M., 310): UDU šipanduwaš «գոհարերելու ոչխար» (Sommer, Hifh. II, 41—42):

Հոմմելը և Ինելոլիը šipant- թարգմանում են „giessen, ein Gussopfer oder Tieropfer darbringen“ (Pāpanikri, էջ 90)։ Դեռ Ֆր. Հրոզնին իր Sprache der Hethiter գրքում (էջ 4, ծան. 1) այդ խեթ. spand- արմատի հետ կապակցում էր նաև. spanden, լատ. spondeo „свято обещаю. даю обет“ (gelobe), հուն. spéndō- «դնդել (գինի, կաթ և այլն) աստվածներին»։ Հայերեն spand- արմատը մոտ է խեթերեն spand- կամ spant-ին ոչ միայն իր իմաստով «դոհել կենդանին» (բացի возлить «դնդել» դադափարից, որ հայերենը չունի), այլև արմատի „a“ ձայնավորով և տարբերությունն հունարենի և գերմաներենի (spend-) և լատիներենի (spond-)։

64. Սպրդել «ծածուկ ներս մտնել, սողոսկել», սպրդիլ (արմ) «վրիպել, ձեռքից սահել «փախչել», սրսրդել (Զեյթուն) «սահիլ, սայթաքիլ», սարսրդել «սահելով մի տեղից ցած իջնել» (Հաճին), սրսիթրտիլ (Նոր. Նախ.) «սահել, ազատիլ, ձեռքից սպրդիլ, աչքից վրիպել» (Արմ. բ. VI, 412—513)։ Արմատն է spird- ‖ spurd- կամ թեևս spard- «սահել, սողոսկել (ներս, ցած), որի հետ համեմատում եմ խեթ. išpard- ‖ išparz- (հնչվիլ է spard-) «դուրս փախչել, улизнуть, утекать“ („entkommen, entfliehen“, տես A. Götze, Ann. d. M., էջ 289)։ Հայերենում գործողությունը դեպի ցած կամ ներսն է լինում, թեևս հիմա ասում են «դուրս սպրդել», իսկ խեթերենում՝ դեպի դուրս կամ վերև šarā ispart-)։

65. Տագնապ «տրտում, անձկություն, մեծ նեղություն, հոգս», որից տագնապալ, տագնապել, տագնապիլ և այլն։ Այս բառը թեևս խեթերենից է վերցված և կազմված խեթ. dagan- ‖ takna- «հատակ, գետին» և ap- ‖ ep- «բռնել», այսինքն՝ tagnap- «գետինը բռնել», վախից, տարտափից և այլն, հետո՝ «տակնուվրա, суматоха», իսկ վերջում «տրտում», «հապճեպություն» և այլն։ Այդ -ap կամ -ap՝ (-aph) մասնիկը հայերենում շատ հաճախ է հանդիպում։

66. Տող «ուղիղ շարք» (մարդարմանների, շղթայի, բազմականների, խոսքի, կամ բաների), տողել «ուղիղ շարել, դասավորել», տողան «շարք, դաս», շղթայատող, մարգարտատող, քարատող «քարով շարված» և այլն (Արմ. բ. VI, 941—942)։ Հ. Աճառյանը մեր տող «ուղիղ շարք» բառի հետ ազգակցում է նաև վրաց. ტოლო tolo կամ ტოლი toli «հավասար, նման, հասակակից», որից ტოლობა toloba «հասակակցություն» և այլն, ենթադրելով, որ այդ երկու լեզուների նման բառերը գալիս են խալդերեն (ուրարտերեն) լեզվից։ Անկախ այդ վերջինից հայոց և վրաց բառերը «ուղիղ հավասար (հասակակից) շարք» հիմնական իմաստով պետք է կցել

խեթ. tulia- բառին (հայց. tulian, անո. tuliaš, տրակ. tulia), որ նշանակում է «խորհրդակցություն, ժողով» counsil, assembly', H. Gl. 164)։ Արդյոք Նիֆիայում ժողով — խորհրդակցությունը, որ հրավիրում էր (tulian ḫalz- «ժողով կանչել») թագավորը, ուղիղ կամ՝ որոշ շարքով էր լինում թե ազատ։ Մեր այս առաջաբանությունը խոսում է հօգուտ ուղիղ կամ կանոնավոր շարքի, նման մասամբ հայոց թագավորների շուրջը բազմող իշխանների շարքով բազմելուն, նայած նրանց դիրքին։

67. Տոռն (տոռին, տոռունք) «չվան, կապանք» (Արմ. բառ. VI, 953–954)։ Սրա հետ համեմատել խեթ. turammit «իմ լծասարքը» („my team" ըստ Hrozny-ի, Aor. I. 284) = turan-mit? խեթերենում կա և բայ tur- (turizzi, անց. tūrit) «թամբել», turia- (turiazi, turianzi) «թամբել» ('harness' H. Gl., 115)։ Հրոզնին թարգմանում էր «լծել, կապել», ANŠU. KUR. RA tu-u-ri-ia-wa-aš „un cheval d'attelage" (օրինագրքում» Code hittite, 56)։ Ուրարտերենում ևս կար tur- բայարմատ (VI արձան., Սարդուրի Նիշտում պատի վրա), որը ևս թարգմանում եմ «պարտադրել, obliger, „обязать" (turubi անց. I դ. եզ.), որը նույն «կապել» նախնական իմաստից է զարգացել։

68. Փարուլ (Տրապիզոնում) «թափվող ձյունի քուլա, хлопья», որը Արարատյան բարբառում, Լոռում և Ղարաբաղում հնչվում է «փաթիլ» (փաթիլ փաթիլ ձյուն է գալիս), բայց այդ բառը նշանակում է (Լոռի, Ղարաբաղ, Ղազախ, Ղարս) նաև «բրդից վերցրած մի փոքր մաս՝ փաթույթ, որ պիտի գդվի ասեղների վրա»։ Այդ գդվածը փաթաթում են մատների վրա, ուստի կոչվում է «փաթույթ», որը մեծացնելով կծիկ են շինում։ Փաթույլ կամ փաթիլ բառերի հետ ևս համեմատում եմ խեթ. pittula, որը կարելի է կարդալ և pattula (pat-ի pit բևեռանշանով) «բրդի փաթիլ, օղակ». ինչպես առաջին անգամ թարգմանեց A. Götze-ն („Schlinge")։ Այդ բառը սկզբում ունի «բուրդ» (SIG) որոշիչը՝ դևանիմնատիպը։ Հնաոճրբրական են և բնագրերի այդ տեղերը— «Թագավորը և թագուհին վերցնում են սպիտակ (և) կարմիր բուրդ karzana-ից (կոստրակ, корзина?), կցկցում են իրար [taruppanzi] և շինում են փաթույթներ», կամ թե «փաթույթները ուղում եմ... թագուհու համար բացել», անշուշտ մանելու համար, կամ թե «և այն մարդու, որ հիվանդ է, կապում են սեղանի (?) առաջ փաթույթներով ձեռքերը» (տես Riein Forsch, I, էջ 189)։ Արդյոք հայոց այդ փաթույթ ‖ փաթիլ բառերը փար- «փաթաթել» արմատից չէ՞, ինչպես և

խեթ. pit(t)- կամ թևրևս pat(t)-, որից patallia- «պատել, պատառել» (տես վերը պատաղիմ):

69. Փետուր «փետուր, թևատուր», որից փետրալից, փետրամօրուս, փետրիկ..., շրջված՝ թևատուր, թևատրիկ, թևատրել «ճեպընդել», որոնք ժողովրդական ձևեր են (Աբմ. բ. VI, 1209—1212): Այժմյան բարբառները մեծ մասամբ ունեն թևատուր հիմնական ձևը, որից թևատրել («թռիատրել»), բացառությամբ մի քանիսի, որոնք դեռ հին ձևն են պահում (Վան, Ախալք. «փետուր», Սալմ. «փիտուռ», Սվեդ. «փիդէօր», Մարաղա «փուդուր» և այլն): Այս փետուր („nepo. Feder") բառը դեռ Մարտիրոսյանը (Հանդես Ամս., 1914, էջ 458) և Աճառյանը (Նոր բ., 1925 թ. 5, էջ 393) համեմատել են խեթ. pittar նույնմասամբ բառի հետ: Բայց ինչպես անում ենք. pittar = հայց փետուր *phetur* տարբերվում են վերջին ձայնավորով, ուստի անմիջական փոխառության խնդիր խեթերենից չի կարելի դնել հայց բառի համար:

70. Փերր «կտոր», փերթել «պատառատել» (մարմինը), միապերթ «միխակտուր, միաձուլլ», անկափերթ «կաշվի կտոր», փերթիկար «հնամաշկատոր», Ամնամ և Ալաշկերտում փերթ «կարկատան անելու կտոր» (կաշի կամ շոր): Գործ է ածվում և այլ բարբառներում (Մուշ, Սխալց., Սեբաստիա, Գոլիս, Հաճին, Մարաշ և այլն տե՛ս Աբմ. բ. VI, 1214—5), ապրնքն՝ Հայաստանի հարավ-արևմտյան և արևմտյան բարբառներում, որոնք մոտ են նկել խեթական նախկին պետությանը, և այդ տեսակետից համեմատել խեթ. pärtaizi «պոկում է, պղպղում է (բուրդը)» (տե՛ս ZA. NF. V, 52. partämöglicherweise „(Wolle) zezzupfen?" ինչպես թարգմանում է J. Fridrich-ը մատնանշելով նաև partiparliskizzi անհայտ իմաստով կրկնակ բայածևը: Հայց փերր արմատին կից է ժողովրդական փուրր (ջախափուրթ անել, փրթել ‖ բրդել, փրթոք ‖ բըրդուճ...):

71. Փեթել «քերել, քոթել, ակրդել», մարմինը՝ մորթը քերթել», «իրարից հանել, արթել, ջնջել, մաքրել», «շփվելով անցնել», «մորթազրկել, քանդակիկ, գրել», քոթել «շփել մարմինը, քերել՝ մարմարը հանգստացնելու համար» (Աբմ. բ. VI, 1448—1449): Այս քեր- ‖ քոթ- արմատը համարում են հնդեվրոպական «նախալեզվային» *sqer-* կամ *qer-* «կտրել, ճեղքել» արմատից ածված, ինչպես ունենք նաև հուն. keirō «կտրել, մկրատել, խուզել», լիտ. skirtiù, skirti «բաժանել, անջատել», սլավ. скоро (= шкура «մորթի») և кора «կեղև», հրդ. sceran «կտրել», գերմ. schere «մկրատ»

և այլն: A. Meillet-ի այս առաջարկը հայոց kher- ‖ khor- արմատների նկատմամբ հայտնի հայտնիս Հյուբշմանը չէր ընդունում (տե՛ս նրա Armen. Gram., էջ 503): Իմ կարծիքով հայոց այդ արմատները նախ և առաջ պետք է կապակցել խեթ. kuer- կամ kur- (kuiz-zi. kur-anzi) «կտրել» ('cut off', H. G., 87) արմատի հետ, we ‖ u ստորական հնչյունափոխությամբ:

72. Գուդ «ոլորած դերձան, վուշի թել», որից քրանցք «զգեստի ծայրը, շալոյ խոզ նշանակել է «զգեստի ծայրի այն մասը, որ խծիծի միջոցով թևին էր անցնում և կամ ծայրի ծոփաթելերն էին կախված, իբր քուղերի անցք» (Արմ. բ. VI, 1518): Գործ է ածվում նաև մեր բարբառներում, ինչպես՝ քուղ «դալիճան» (Ղազախ), «չվան» (Ագուլիս), «թել» (Շամախա). «զգեստի եղերքի կար կամ երիզ» (Դորիս, Ղարաբաղ, «քուղ» ձևով), քոլել «զգեստի եղերքը երիզ (ресьма) կարել» (ibid): Կա և գավառական կուղ «սամիթի փոկը», (Ա՛ճ., Գավ. բ., 603), կղան (Ղարաբ.) «վաշվի հատ փոկ գուլֆաները կամ սալը չծին կապելու համար» (ibid; 578), կղել (Արաբ., Բուլանդ., Ագաթան) «պարանը ձուռան ծակել» (Ամատունի, Հայոց բառ ու բան, 348): Հայոց այս քուղ- կամ կուղ- արմատի հետ ազերբայջ. պիտի համարել խեթ. ḫūlali «փաթույթ, փաթթ», ինչպես թարգմանում են Զոմմերը և Լինդրոթը (wohe „wickel (Bind)", տե՛ս Pāpanikri, էջ 83), կարև GIŠḫulali «թել-շի» („Spinnrocken") ինչպես նաև ḫulalia- «փաթաթել, мотать" („wickeln"): Նեմեսական այդ բառի վերջին -al-ը մասնիկ պիտի համարել, ինչպես ունենք, օրինակ, paḫḫunalli «օճախ» (paḫḫur «կրակ» բառից), kuttanalli «մանյակ, վզնոց» (kuttar «ուս, վիզ» բառից), որից թևերս հայոց «քրքմանակ» փաթաթելու շոր, ծածկոց), ḫuḫupal- երաժշտական գործիք է, թևերս «պարկապզուկ, волынка» (որը նախապես են խխկելով և այնպես է կազմված, որ դրանից կարելի է հնչուկ խաղալ, տե՛ս E. Sturtevant, Comp. Gram. of the hit. Language, 1933, էջ 146), հավանորեն բնաձայն բառ է, կազմված al- մասնիկով և ḫop-ḫop կրկնավորից (=հայոց խոպոպամ «ցարդել, խաղալ („резвиться")» և այլն: Ինչ վերաբերում է խեթ. ḫ =հայոց «ք» կամ «կ» հնչյունատարաբերությանը, տե՛ս այդ մասին նաև խեթ. ḫand- «հատատանել» և հայոց կանգնաձիալ «հատատալ» համեմատությանը գնաքում, ինչպես նաև համապատասխանությունը ակկադական և հայոց փոխատու-

թյուններին մեջ (ḫassinu = կացին, ḫabtu = կապուտ «թալան, ավարառություն»): Բայց ընդհանրապես պետք է ընդգծել նաև, որ հնում կարող էին սկզբնապես «ս» բաղաձայնով հնչված լինել, իսկ հետո փոխանակվել «հ» (կամ «ք») բաղաձայնով դերխմանների կամ փոփոխականների, ինչպես ունենք խաւսալ և կալթել резвиться «թռուռալ» խաւսան և կաւսան «չվանս». խ(ր)ճան, և կճան» скорлупа «խրճիթ և կճիթ» хрящ «խորոմու և դորոմու (Արաբ. բարբ.) «թոնրում ամրողջապես խորոմելի գաւս (ոչխար) կամ այծ» և այլն: Ակնհայտ որ ոչ մի երաշխիք չկա, որ հնում չէր կարող լինել ըսկզբնական խանդաղնալ, խաղ և այլն կանդաղնալ և կուղ (քաղ) և նման բառերի փոխարեն: Համմ. նաև խեթ. saliga և հայ. selex «շնագող»:

* * *

Հայ-խեթական բառային հանդիպումներ, որպես կամ փոխառյալ և կամ ընդհանուր փոքրասիականի՝ ցեղային կամ կուլտուրական շրջանի հողի վրա առաջացած, մենք ունեցել ենք իհարկե շատ և ավելի շատ, քան իմ մատնանշած լոթ առանձնակ դեպքերը: Բայց դժվարություններ կարող են լինել դրանց ճիշտ պատմա-լեզվական բնույթը, ծագումը և տարածման ընթացքը նշելու տեսակետից: Բայց վերոհիշյալ լոթանասունների ընդհանուր բառերից, որոնցից որոշ օրինակներ կարող են մատնել և փոխառությունների շարքը, որովհետև այդ դժվար է որոշել, կան դեպքեր ևս, երբ այլևայլ պատճառներով այդ ընդհանրությունները կամ գուտ փոխառությունները ետում են կամ առախս, կամ սխալ և պատահական: Էլ չեմ ասում այն բառերի մասին, որոնց նշանակությունը լավ չի ճշտված: Բերենք օրինակներ.

1. Իշխել և իշխան բառերի արմատը իր ձևով շատ նման է խեթ. išḫa «տեր», хозяин բառարմատին, ինչպես այդ դիտել են Ն. Մառ-Իրոսլանը, Հ. Աճառյանը և ես, իրարից անկախ: Բայց այդ նմանություններ առերևույթ է: Նախ խեթերենում այդ բառը կարելի է կարդալ և ešḫā-, իսկ E. Sturtevant-ը այդ էլ առաջադրած է esḫa- (արամ. eshe): Երկրորդ, նեթե անգամ išḫa- կարդանք (կամ ešḫa-, այսինքն š-ով), ապա այդ բառը ըստ իս չպիտի անջատել կապադովկիական aš-u, «պետ, տեր» բառից, որ ևս առաջարկում եմ տեսնել մի շարք հատուկ անուններին մեջ, որոնք մեզ հասցել են կապադովկիական տաբլետներում, դրված սեպա-

յատկան լեզվով, ինչպես Arzanaḫšu, Barvaḫšu, Hištaḫšu, Kiniaḫšu և այլն (տե՛ս իմ Хайаса-колыбель армян, էջ 116—117)։ Ոչ մի կասկած, որ այդ ahš-u բառը իր նախաձայն „a"-ով, ինչպես տեսել ենք, լուվիական արտաքին ունի, իսկ հայերենը այլ դեպքերում հակվում է լուվիական ձևին։ Համեմատել -խնթ. Jnnr «աղամարդ, հսկա» և հատուկ անվամբ առումածը = լուվ. Anar- (և հայոց անաբի «հսկա»), խնթ. išḫaḫru, ešḫaḫru «ողբ, լաց» և հայոց աշխարել, խնթ. Jštanu- նախախնթ. eštan «օր» (հդն. leštan «օրներ») = լուվ. aštanua խառ. և ուրարտական ewri «տեր» = հայոց awri (աւրի-որդ), խնթական irḫi ‖ erḫi «սահման՝ բառի դիմաց կա Arḫita (սահմանադիր) քաղաքը Մուքրում և Արխաշեն ձորանունը մեզ մոտ։

Վերջապես հայոց իշխ- արմատի ծագման խնդրում էլ մենք չենք կարող անտեսել և նրա փոխառության հնարավորությունը իրաներենից, ուր կա xšayami (= իշխամ) և axšāvan «տիրներն ձևը, մանավանդ որ հյուսիսային պահլավերենում արմատի š կամ s մոտ ավելանում է „i", ինչպես է հայերենում ևս (տե՛ս Арм. я. VII, 137)։

2. Հուռն «քրտանգք» (ըստ Առձ. բառ.-ի), որից ոսկեհուռն, մարգարտահուռն։ Կա խնթ. ḫurn- (III դ. հզ. hurnanzi, անդր. hurnuwanzi) «շրթել, ցնցղել» ('sprinkl' H. G. 52, Suppl. 21, ըստ H. Eheloff-ի, տես Klein, Forsch. I, 146—150)։ Բայց իմաստով տարբեր են, որովհետև հայերենում արմատը վերաբերում է քրտանգքի մեջ ոսկի կամ մարգարիտներ հյուսվելուն, իսկ խնթերենում հեղուկ ցնցղելուն (ռուս. кропить)։

3. Մէտ «հակվելը», որից միտիմ, միտում և այլն։ Խնթերենում կա mita- (նախ. III դ. հզ. mitaizzi; անց. I դ. հզ. mitānun), «հաստատել, որոշել» (fix, determine' or the like, H. G. 103)։ Նմանապես դեռ ստույգ չի կարելի համարել դրանց կապը։

4. Ոգորիմ «վախել զննդով, ձեռքով, կոտշով», որը նախ հնչվել է wogor-, թեև պրոթյամբ սպառնալի էր վոգորիմ, ինչպես ունենք վոհմակ, այդ դեպքում շատ մոտենում է խնթ. waggaria- արմատին, որ նշանակում է «ընդվզել, ապստամբել» ('revolt, rebel')։ Ինչպես տեսանում ենք առարկությունն կարող է լինել թե հայոց բառի հնչածևի և թե դրա և խնթական բառի իմաստների հանդեպ։

5. Ոփ «խոռոչ, ծակ», որը նման է ոչ միայն վրաց ube „яма, пазуха, кузов (экипажа)", հուն. ορέ «ծակ» (отверстие,

дыра), այլև խեթական wappu- (անս. wappu(w)as, սրանց. wappu(w)i), որ թարգմանում են «վերևգետնա» կամ «խրամատ» (ըստ J. Fridrich-ի), կամ թե «քարանձաւ пещера» (ըստ Forrer-ի) և կամ «գետին» (տե՛ս H. Gl. 176)։ Դարձյալ է անտակասելին առաջարկել թեթ. wappu- բառի համար և հայոց փապ (որից փապար), ինչպես խ. wewak- «ցանկալ» բայի հանդեպ հայոց փափագիմ։ Առաջին դեպքում ունենք խեթ. waggar-= հ. ogor-im, խեթ. wappu-= հ. օրհ, այսինքն՝ խեթ. -wa- հնչյունակապակքը = հայոց o, թեպետ կա նաև խեթ. wa = հ. u (տե՛ս վերը՝ հայ փոխառութիւնները խեթերենից)։ Ելնելով այս բոլորը վերջնական տեսքով կարող է ասվել «առուակ» ու «փորվել» բնաբիծ է կրում։

6. Իմովսաճն «կրցածին չափ, իմ կողմանէ» (Առձ. բառ.)։ Այս բարդ կազմութիւնն ունի իմով (գործ. հոլ. իմ դերանունից) և առանձ անորոշ ձևով անորոշ բառից, որովհետև համաձայնութիւն չկա հոլովման մեջ։ Կա և իւրնանցան (վախենալ իջուցին զանգամալոյծն առ Յիսուս իւրնանցանն հաւատով»), որը պիտի ուղղել իւրնանցաննն։ Նոր գրականում, ինչպես Հ. Սճառյանն է ընդգծում, այդ նմանութեամբ առնծվել են մերոյսանն, ձերոյսանն, իւրոյսաննն։ Թևերս իմոյսանն նշանակել է «իմ (իմացածին, կարողութեան) պես», «իմինի պես», ինչպես ասում են մեր բարբառներում, և իմոյսանն թևերս ուղղելի լինի «իմոյսանն», ինչպես է «իւրնանցաննն» (ձևագրում՝ իւրնանցանն)։ Նեթերեն լեզվում կան դերանվանական մակբայներ -san վերջավորութեամբ, ինչպես ki(s)san «այսպես» ('in thisway, thus' H. G., „so folgenderwassen" Ann. d. M., 294) ki- «այս» ցուցականից, apenissan «այսպես» (thus), annisan «առաջվա պես» ('previously' H. G., 22) և enissan «արդեն. առաջ առնմանված» ('ita, as just stated', H. G. 35)։

7. Գաղց «առնթութիւն». քաղցնում (անց. կատ. քաղցնայ) «առնթենալ», գործ է ածվում և բարբառներում (Նոր Նախ., Տիր., Երև., Մարտաղ., Սալմ., Սուչուվա, Մոքս, Տիգր., Սվեդիա), տե՛ս Սբմ. բ. VI, 1366—1367։ Սբմատը համարվում է հնդեվրոպական և կապակցվում է սանդինավյան լեզուներում գտնվող swelt- բառաձևի հետ, որպիսիներն են՝ հին սկանդ. svelta «քաղցել», շվեդ. svälta և դանիական sulte (նույն նշանակութեամբ), որոնք իրր թե կապվում են հին սկանդ. svelta «մեռնել» անգամ. sweltan և գոթ. swiltan «մեռնել», հրպ. swelzan «սպրել» և այլն (ibid.)։ Հայոց քաղց- ձևը հանվում է «նախալեզվյան» sweld-sk'-ից, որի ներ-

կայացուցիչները միայն անհնդհնաեվրոպական լեզուներում են, թողած այդ լեզուների և դերմանականի «մանանեխ» կամ «մկրտել» նշանակող բառերը։ Ավելի պատմական կլինեն հայոց բառը կապակցել խեթ. kast- «քաղց, սով», արմատն հնս (ուղղ. kasza, հայց. kastan, gastan), եթե միայն խեթերենը ունենար է, նման ակկադերեն լեզվին, lt>st փոխանցումը։ Հնահայեն խեթ. kast<*kalt- (կա և kest-, kist փոփոխակը) և սլավ. гладъ „голод" (<gald-ից) բառերը ազգակից են դառնում հայոց «քաղց»-ին, որի վերջին ց» բաղաձայնը կարող էր «թ»-ից առացվել (համմտ. մեր «ցախ» և վրաց «թխեսա», հայոց հոգն. սեռ.- արակ.- բաց. «ց» և վրաց th)։

8. Ռրբրիլ «քրքրել, փխրել, քակտիլ և պրգռել, պրպտել», որը առացվել է կրկնավոր քիրքիր ձևից (համեմատել հնառքրքիր), պարզ գոյութիւն չունեցող «քիր» (khir) արմատից։ Խեթերենում կա kurkurais «ապականություն» ('mutilation'?), kurkuria- «ապականել» (suppl. 28), որը հանվում է պարզ kuer- ‖ kur- «կտրել, կտրատել» բայից իբրև կրկնութիւն։ Պետք է ենթադրել ուրեմն, որ միջքրաեվրոպական լեզուներում կար և khir- (kir-) տարբերակը հանդես khur (= khor) տարբերակի, այլ կերպ ասած՝ խեթ. kurkur- „изуродовать, изорвать" ձևի դիմաց կար khirkhir- հայոց ներկայացուցիչը՝ համարժեքը։

ՀԱՅ-ԽԵԹԱԿԱՆ ՓԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԸՆԿՆՈՒՄՆԵՐԸ

Խեթերի քաղաքական, կուլտուրական և ազդագրական ուժեղ ազդեցութեան հետևանքով, խեթական լեզուն ևս, ինչպես դրքիս ակզբում շեշտվել է, բնականաբար սիրել ներթափանցել և ընդգրկել Մերձևփրատյան (Հայաստ. Դերսիմ-Ջարսանջակ, Մոսիք) և մասամբ Մերձճորոխյան շրջաններում։ Նվ ուրևէ այդ տարածութեան մեջ ընկած նախկին լեզուների ու բարբառների մեջ, որոնցից մասամբ գոյացել է և հայերենը, պետք է ենթադրել ոչ միայն բառային ընդհանրութիւններ և փոխառութիւններ, այլև մինչև իսկ քերականական ձևեր, եթե այդ ներթափանցման ուժին, աստիճանների։

Ա.

Եթե վերցնենք հայ-խեթական հնարավոր հնչյունական և հնչյունաբանական զուգերը, ապա կարելի է մատնանշել հետևյալը։

Հայոց լեզուն չի ունում բառեր r(ռ) բաղաձայնով, ինչպես և խեթերենը, բայց նույն հատկությունը ունեցել են նաև սրարտներենն ու խուռիտերենը, մասամբ և վրացերենը, այնպես որ նրման բացառական հոդը r(ռ) հնչյունի համար բառակզրում կար Հայաստանի տերիտորիայի և նրան շրջապատող լեզուների մեջ, էլ չեմ խոսում այն մասին, որ նման երևույթ կա և միքրասիական մյուս լեզուների մեջ (լյուդիերենում և լյուկիերենում), չհաշված դևէտրուսկերենն ու բասկերենը։ Հետո, մենք գիտենք, որ հայոց լեզուն հնդեվրոպական լեզուների b, d, g ձայնեղ բաղաձայնների դիմաց ազգակից բառարմատներում տալիս է խուլ պալեոկոններ, իսկ նմանը մենք տեսնում ենք նաև խեթերենում։ Մինչև խոշ վերջինիս մեջ եղած ձայնեղները փոխանցվում են խուլերով, մանավանդ երբ դրանցից հետո գալիս են e կամ i ձայնավորները։ Օրինակ, išpanda «գիշեր», բայց ispanti «գիշերը», ночью (սրբակ. հ.), dāi «գնում է, վերցնում է», բայց tianzi «գնում են, վերցնում են», dagan «գետին», բայց և tekan(id) նման մասամբ դրաբարի „d" բաղաձայնի վերածման „t"-ի, ինչպես աՁդ «там, այնտեղ», բայց աՁաի «оттуда, այնտեղից» (-ի ձայնավորի այդ բացառական հոլովի ֆունկցիան ունենք և առա «գալառնդ» և առաի «գալառնդից», ուստա և ուստի)։

Հայերենում հաճախ է լինում դ ‖ ձ հնչյունափոխումը, ինչպես յորդ և յորձանք, խնդրեմ և հնձեմ, խանդ և նախանձ (նախաձանդ է), փոխինդ և փոխինձ, գավառական բնդորել, «մի կերպ կարել, կարիատել» և բնձորել..., խեթ. ḫatr- «գրել», վրաց. xvedri «բաժին» (< xedri, ինչպես čvartali < ճարտար բառից), հայոց հերդ „очередь" գրար. հերձաՁիմ (հերձեմ, հերձում) և այլն, ուր հիմնական իմաստն է „разрезать, высекать, разить", որից «գրել բևեռագիր տառերը», հետո «բաժին, մաս» և «հերձել, разить» (>հերդ> հերթ „черед")։ Խեթերենում ևս սովորական է d(t) ‖ z փոխանցումը, մանավանդ ներբառական -anda (anta) և -anza, համեմատել նաև ispanda ‖ ispanza «գիշեր», ispard- ‖ isparz- «գործ պրծնել», ad- ‖ az- կամ թե ed- ‖ ez- «առնել», tesḫa «երազ» և zasḫa- (<*dasḫa) -id և այլն։ Մինչև իսկ հետագայում, հունա-հռոմեական շրջանում ունենք միքրասիական անհատանուններ Nazianzos և Nadiandos, Zizimēnē և Dindumēnē։ Փոքրասիական z-ի դիմաց, որ պալեաշխատական dz (ts) կամ dž (tš) մի հնչյուն էր, հայերեն ազգակցական բառերում, ինչպես և փոխառություններում, ունենք ճ, -nz տալիս է հայոց նջ։ Այդպես է ընդհանրապես հարաբերությու-

նր և մյուս հին լեզուների (ուրարտերենի, խեոխտերենի, ակկադերենի) հետ։

Հայտնի է, որ հայերենում «ս» ձայնավորից հետո հոլովման և խոնարհման ժամանակ չի ավելանում «յ» (և «վ», «ւ»), որը ըստ նորմալի պետք է լիներ։ Օրինակ, «ս» հոլովման ժամանակ գիտատ (ուղ., հ.), գիտատս (ս.—սր.), այնինչ սպասելի էր գիտատյ։ Այդպես և խոնարհման մեջ — թողում, թողաս, թողաւ (փոխանակ թողո-յ), թողամք, թողաք (փոխանակ թողո-յք, թողոյք) թողան։ Նման երևույթ կա և խեթերենում, օրինակ Telipinus անունից տրակ. հոլովը պիտի լիներ „1° ձայնավորի հավելմամբ Telipinui, բայց իրոք կա միայն Telipinu, և կամ թե այլ հոլովման սխեմայով է գնում և տրականը հոլովը լինում է Telipini, ինչպես այդ անդի է ունենում նաև գրաբարում (օրինակ «մարմին» բառը ենթարկվում է «ո» հոլովման, բայց տրականը որպես ներդրական չի լինում ի մարմնոյ որ բացառական է դառնում, ուստի այդ ներդրականը կազմվում է «ի» հոլովման ձևով՝ ի մարմնի)։

Մենք գիտենք նաև, որ գրաբարում «ի» ձայնավորով վերջացող բառերի մեծ մասը հոլովման բառը («ենեմա») է առանում «նա» կամ «ւս» (ea ‖ wo), օրինակ, բարի — բարւոյ, բարւով, բարւոց, բայց և բարեաւ, բարեաց, բարեաւք։ Ենթարկվում կա *ia* ‖ *ua* ալտերնացիա, օրինակ, հնաւկալ դեպքերում *-ziladia* և ziladua «ապագայություն», *ḫuia-* ḫuwa- «վազել՝ убегать», Assua (Aššuwa) և կլասիկ Asia «Ասիա» (ըստ E. Forrer-ի) և այլն։

Վերջապես մեր գրաբարում որոշ դեպքերում դեռ զգացվում է «հին հնդեվրոպականը» լեզվաոիպերի օրինակով բայարմատների e ‖ a (<o?) ալտերնացիան (чередование), ինչպես —կին (<gena-ից) և կանայք (gana-), վից և վաթառ (>վաց-առն ձևից առյուծանուն թյուռքի), ճնշում, որ դառնում է և ճիշում «հյուսում եմ», բայց կա նաև հանում նույն նշանակությամբ։ Ենթարկվում այդ e ‖ a փոխանցումը սովորական է օրինակ et- ‖ -at «ուտել» ep- ‖ ap- «բռնել, պահել» es- ‖ as- «նստել» es- ‖ as- «լինել» kest- ‖ kast- «քարկոծ», vek- ‖ vak- «իրենք» tekan ‖ dagan «գետին» և այլն և այլն, թողած դեռ բառակզբի e ‖ a ձայնավորների սովորական փոխանցումը, որ շատ ուժեղ էր նաև խեոխտերենում և ասկա է նաև հայոց լեզվում մանավանդ «ղ» (ɣ) և «ր» բարձանգներից առաջ։

Եթե վերցնենք դրարերի բառակապակցական շարահարութիւնը, ապա ալտաղ ակնարկ է դառնում այդ լեզուի աղերսը ոչ միայն խեթերէնի նման տիպոլոգիական հետ, այլ նաև ուրարտերէնի և խուռիտերէնի հետ։ Մի խոսքով այդ լեզվական երեսակի համար հայ լեզվի ձևավորման ընթացքում նպաստավոր տիպոլոգիական հող կար։ Մեր լեզուն, իր տարբերակիչ հնդեվրոպական լեզուների, իր ինքնատուն բառերին կցում է վերջից դերանվանական էնկլիտիկաներ, այսինքն՝ դերանուններ, որոնք մասնիկի դերում են հանդես գալիս, թեև կան նաև իմաստի նաև ինքնատուն դերանուններ։ Այդպիսիները մեր լեզվում u, դ, ն հոդերն են, որոնք երեք նշանակութիւն ունեն — ցուցական, անձնական և սեռացական, այն տարբերութիւնով, որ u վերաբերում է առաջին դեմքին դ՝ երկրորդ և ն՝ երրորդ, և երեսին հայրս ձեր գրարերում կնշանակի թե «այս հայրը» (խոսողին մոտ), թե «նա (որևէնա) հայրը և թե «իմ հայրը»։ Այժմյան բարբառներում և գրական լեզվում իշխում է այդ վերջին նշանակութիւնը։ Բայց այդ s, d, n հոդերը, իր տարբերութիւնն այժմյան բարբառների և գրական լեզվի, գրվում են ոչ միայն անուններին վրա, այլ նաև բայածևերի վրա, ինչպես օրինակ՝ «որ շարժին և փոփոխի չէ էականը» (Եզնիկ), այսինքն՝ այն (-ն) որ շարժվում է և փոփոխվում, էական չէ, «որ չարագոյն ևս է քան զոր գրնացաքդ (Եղիշէ)— որ ավելի վատ է, քան այն, որ ահա (ձեզ համար) գրնցինք, և այլն և այլն։ Խեթերենում, ինչպես և խուռիտերենում ու ուրարտերենում ոչ միայն դերանվանական մասնիկներն («հոդերը») են կցվում, այլ նաև շաղկապներ և այլ ձևական բառ-մասնիկներ, այն էլ ոչ միայն մեկ հատ, այլ մի քանի, երբեմն մինչև հինգը, նման կցական տիպի լեզուներին (համեմատել խեթերեն ev-ler-imiz-da-ki «այն որ մեր տներումն է» նման մեր ուրարտական բարբառի՝ այն-տներ-ում-ս)։ Համեմատել խեթերենում kisri-mi «ձևը-քում-ս», n-aš-ma-mu „и-он-же-мне“, uppi-warat-mu «ուղարկիր— այն ինձ», ištama-šin-ia-at «լսեցիր-և-այն (նրանց)» kuenzi-uš LUGAL-us huiš-nuzi-ia-aš LUGAL-uš „убивает-их царь, освобождает-ли-их царь“ (այսինքն՝ թագավորին է իրավունք վերապահված սպանել հանցավորին, թե ազատել, Code hittite, § 198, էջ 148, Հրոզնա հրատ.), maḫḫan-ma-wa-mu-kan „когда-же-мол (дескать)-мне-кап (?)“, որը նախադասության սկզբում է լինում։ Գրարա-

թում, ինչպես գիտենք, ալգոպիսի շաղկապներ և այլն, որպես մասնիկներ. չեն կցվում, բայց ձևակազմորեն անկախ բառերով կարող է նմանը արտահայտվել, ինչպես կարդում ենք Նիդիշևի մոտ «Բայց սակայն թէպէտ և ամենայն գործս այս դժնեայ էին...»:

Այս կցականության կապակցությամբ կուզեի մատնանշել և մի ձև, որ այժմ չի պահվել, բայց կա դրարարում և խնխինենում: Այդ չնո միացումն է, որ նշանակում է «դնո, չ-ը, օրինակ «չնո էր ուրուք ձեռն արկնալ յալանի լեկկոգինն» (ոչ ոք դնո չէր ձեռք մեկնել հալանային նկնոցու վրա), «չնո իցէ հաւս խօսակ մինչ դու երիցս ուրացիս լինա» (դնո արարատյո կանչած չի լինի, երբ դու նրանք անգամ ինձ կուրանաս) և այլն: Նմիներենում այդ «չնո» կապակցության դիմաց կա nā-wi, օրինակ kuitmanza-as-kan LUGAL-iznanni nāwi ešari «երբ ձա (-as) դնո չէր նասել (գահի վրա) թագավորելուց և այլն: E. Sturtevant-ը (H. Gl. 108) թարգմանում է nawi (nawwi) „notyet", այսինքն «չէ դնո»: Այստեղ խնթ. na = հայոց չ, իսկ -wi = հայոց նո:

Հարիներենում (դրարարում) մի շարահյուսական — համաձայնական հոգվարկյուռ դնկը կա, երբ հատկացուցիչը փոխանակ անուական հոլովով դրվելու, փոխում է այդ սովորական հոլովածևը հատկացյալի հոլովածևին, մի երևույթ, որ կա խնխինենում և սրարաբերենում, իսկ խառխառնենում և վրացներենում հատկացուցիչը իր հոլովածևի վրա (անու. հոլ.) ավելացնում է նաև հատկացյալի հոլովածևը: Այս մասին մանրամասն կխոսվի սրարատական լեզվի և հարևանների միջև եղած աղերսի հատվածում:

Պիտենք նաև հայ-խնխինական բառակազմության ձևերը, որոնց համընկնումները կարող են և դիտելուկի նշանակություն ունենալ: Այստեղ մեզ պիտի հետաքրքրեն նրանք ձևաբանական միջոցներ — բառաբարդության, բառակրկնության և ածանցավորումը:

Բառաբարդման մեջ նշանակալից է այն տարբերությունը, որ երբ հայոց «որոշիչ բարդության մեջ (compositum determinativum) առաջին անդամը՝ կոմպոնենտը լրացնում և որոշում է երկրորդի իմաստը, խնխինենում մեծ մասամբ հակառակն է անդի ունենում: Օրինակ, մենք կասենք «լուսնաքիս» ինչպես մաշկաքիս (=չղջիկ), կարճաքիս և այլն, բայց խնխինենը ասելիս է pittarpalhis, որը ինչպե՞ս թռչուն է և առաջի նշանակում է «թևնալաղնջ», նման հունաց և վրաց բառակազմության դասակորության (համեմատել վրաց ფეხმრავალი phexmravali „многопожка", առաջի «բազմոտը»— կենդանի է ბირუთყვი pirutkvi «եղնաաուն», առաջի

քերանը չխոսող = անասուն և այլն, հուն. metropolis «մայրաքաղաք», որ հայերենի ճիշտ բառակազմության համար պիտի ունենանք՝ քաղաքամայր, այսինքն՝ քաղաքների մայր, ուր այդ մայր բառը առաջին կոմպոնենտով կոնկրետացվում և որոշվում է ինչի՞ մայր): Հնարավոր կարող է երկու ձևով էլ կազմվել Dorotheus «աստված տված» և Theodoros «աստվածատուր» և այլն: Համեմատել և խեթ. siwanz-annis «աստվածամայր» (annis «մայր»), gamar-suwanza «համախառնված լիքը, с наполненным пузырем (?), ḫurpastanus «տերևներ», բայց քան ինչ, ասկի շատ «տերև» կամ «ծաղիկ» (ḫurp-) «տերև» (dIstanus, հայց. dIstanun), այսինքն՝ «տերևածաղիկ» (խեթ. «ծաղկարան»): Կա խեթերենում և բարդության կոմպոնենտների հավասարության (dvan-dva), ինչպես ḫuḫḫaḫannis «պապը-տատը» (ḫuḫḫa «պապ», ḫannis «տատ»):

Մեր բառաբարդությունները արմատի կրկնության, որ մի տառնչակից ավելի փոփոխականը են, ավելի են համընկնում խեթական նմանների հետ: Օրինակ, մեր փոփոխել, խարխարել և նմանների դիմաց ունենք խեթ. partipartiskizzi „шиплет, дерет (?), pariparāi- «փչել երաժշտական գործ» (պարզ parai- «փչել» և բարբել կրակը, վառել»), suksukkia- «կապալ, хроматъ» (կննդանու մասին), kurkuria «քրքրել» և kuskuss- (kuskuszi, kuskussanzi) «խառնշտորել» (mix) և այլն: Հայկական փափագիմ, տատաճիմ և նմանների դիմաց ունենք խեթ. ku-kkurske «կարել», ḫa-ḫarsanunza «փչացրած», ḫal-ḫalt-umari «վնաս անկյանդ», ḫu-ḫur-al- երաժշտական գործիք է, pa-ppars- «ցնցղել» և այլն, և այլն:

Հայոց կրկնության այն տեսակը, երբ երկրորդ կոմպոնենտն է ձևափոխվում, կորցնելով արմատի առաջին բաղաձայնը, ինչպես շաղփաղփիմ, հալթալթիմ, լորջորջիմ և այլն, խեթերենում նույնպես գոյություն ուներ, ինչպես ցույց է տալիս ḫand-and-ātar գոյականը, որ նա թարգմանում եմ «նախանձ, рвение, ревность»: Վերջապես մի կրկնություն էլ կա, որ հայերենում քիչ է պատահում, ինչպես ծիծաղ, բայց խեթերենում հաճախ է տեղի ունենում, ինչպես memal «ալյուր», mal- „молоть"- sesar-ul «քամոց (фильтр), vevakk- «խնդրել» (պարզ vek- արմատից), թերևս zi-zzaḫi- ժամանակակից մի խմիչք է: Այս բարդության ձևը ըստ A. Meillet-ի համապատասխանում է «խակական» հնդեվրոպականին:

Բառակազմությունը հայերենում, ինչպես և խեթերենում մեծ մասամբ տեղի է ունենում վերջամասնիկների (suffix) ձևով, որոնցով իսկապես առնչվում են բառարմատները (основы): Այդ երկու լե-

գոյներում ևս տեսնում եմ առնվազն վեց վերջամասնիկ (վերջածանց), որոնք կարող են վկայել և դրանց ազգակցության մասին։

Առաջին ածանցն է մեր -աւղ (ծնաւղ, դրաւղ...), որ հետո գրվում էր -ողղ, և խեթ. -atalla։ Սլավոնական լեզվում սրանց համապատասխանում է -тель (создатель, творитель, свидетель և այլն)։ Խեթերենում շատ են այդ կազմություններր, ինչպես -wisuri-skatallas «ճգմող, մղող», weskatallas «ճնգատացող». wehesgatallas «պահակ», uskiskatallas «հսկիչ», unattallas «ծառաստակած», mania-ḫḫatallas «կառավարիչ» (governor), ḫalugatallas «գնապան» և այլն։ Այդ ածանցով ստեղծվում են nomia agentis, գործող առոնններ։ Մեր ածանցը -աւղ awł առաջացել է -atl-ից և, ինչպես տեսնում ենք իր „a" սկզբնական ձայնավորով ավելի մոտ է խեթականին, քան սլավոնական -тель-ին։ Հայերենում -ātl սլեպես է դառնում -աւղ -awł, ինչպես -atr> -աւր -awr (mātro-s> մաւր mavr, arātron> արաւր arawr և այլն)։

Երկրորդ՝ հայ-խեթական վերջածանցը պետք է համարել -uman, որով հայերենում արտահայտվում է բայի գործողությունը— ուսումն (учение), շարժումն (движение), սայթաքումն (скольжение) և այլն, որոնց բունը խոսպան լինում է usuman-, šaržuman- և այլն։ Այդ -ում(ա)ն մասնիկի իմաստը շատ հիշտ է տալիս ռուսաց -ение. -ание մասնիկը։ Խեթերենում այդ բայանուններր ուղղ. (հայց.) հոլովում ունեն -ummar (-umar), իսկ մյուս հոլովներում դառնում են -umn (-<uman), որի հետ պետք է կապել և հայոց -ումն (-ուման) ածանցը։ Այդ -um(m)ar ածանցի հին ձևի փոխարեն հետագայում լինում է նաև -uwar, ընդ որում „u" ձայնավորը կարող է լինել կարճ (u) և երկար (ū)։ Օրինակներ -tarnumar կամ tarnuwar «թողնելը, „пускание", annanuwar «հրահանգումն», arkun'(w)ar «աղոթելը, խնդրելը», duškudumar «սրտախանդալը» (sich freuen), laḫuwar «հնդումն, излияние» wassuwar «հագցնելը», wasdumar «հանցանք, ոճիր», waḫnumar «գառնալը, դարձը», tepnumar «ցածացում» և այլն, և այլն։ Խեթերենում „r" հնչյունը վերջում շատ դեպքերում է փոխվում ինք հոլովներում „n"-ի, ինչպես harnammar «խմորում, դրդում», բայց այստեղից նոր բայ է կազմվում ḫarnamnia- «դրդել», ḫilammar «նախագավիթ» (папертъ у храма), բայց սրսկ. հոլովն է hilamni կամ hilamna, նմանապես ḫilatar «դուռը, բակը», որից անս. հոլ. (<*ḫilannas), (<*ḫilatnas) paḫḫur «կրակ», բայց անս. հ. paḫḫwenas, սրսկ. paḫḫuni, որպիսի բնից paḫḫunali «օճախ» (խոշապար կրականոց) և այլն, և այլն։ Գրաբա-

բում ևս կար այս r ‖ n փոխանցումը — մանր (<*մանուբ), գործ. մանումբ (<manun-b), մանունք, մանունց և այլն, այդպես նաև փոքր, թանձր, քաղցր և այլն:

Երրորդ՝ հայ-խեթական ընդհանուր վերջածանցն է -asti, մի հատկութիւն, որ գոյականացում է նման ուսանելի նուչն -ость ածանցին (мудрость, ловкость, мягкость...): Հայերենում այդ ածանցը լինում է -ust (փախուստ, թաքուստ, գալուստ, ապրուստ..., հարուստ),— -est (ուռնեստ, պահեստ, բայց և պահուստ), -ist (հանգիստ): Համեմատել խեթ. palḫasti «լայնք», dalugasti- «երկարութիւն» (долгость) և այլն: Հայոց այդ բառերի հոլովումը „i" հոլովմամբ (փախեստի, փախեստիս) ցույց է տալիս, որ հնում դրանք հնչյուն են խեթերենի և ուսանելուն նման -sti (-osti, -esti, -asti):

Չորրորդ՝ հայ-խեթական ընդհանուր ածանց է թերևս -ū!, ինչպես խեթ. wastul «հանցանք» (wast- «հանցանք գործել»), taksul «համաձայնութիւն» (taks- «կապել»), sesarul «փարատ քաղց», išḫiul «գաշնադրութիւն» (išḫia- «կապել») և այլն: Հայերենում թերևս դրան համապատասխանում է իւղ iwi ածանցը երկիւղ և ընդիւղ բառերի մեջ:

Հինգերորդ՝ հայ-խեթական ընդհանուր ածանց է -ուճ (-uč) և խեթ. -uzzi, ինչպես հայերենում ունենք — պարկուճ «դրսի կնդ պարկի պես» (гильза), ափուճ «խոտազնդակ» (ափ „ладонь" բառից), ճաւուճ — Ղարաբաղում այն հատն է, որի մեջ դնում են միս, սոխ և այլն ամրողջապես եփելիս, դառնուճ— Աշտարակում մի տեսակ դառն բույս՝ գաշտերում աճած, բաղկուճ (Արար., Ղարաբ.)— այն մազերը, որ առաջանում են տանրելիս, ըրդուճ «հացի ըրդուճ, փրփուշ, кроха» և այլն, և այլն: Համեմատել խեթ. -uzzi մասնիկը, որով նման բառեր են կազմվում („instrument nouns", „Gera" tenamen), ինչպես apuzzi «կաւ, ճարպ» (clay, tallow), kunkunuzzi «դիորիտ» (քար է), laḫurnuszi կամ laḫurnuzi «զոհասեղան», išḫuzzi «կծիկ», ispantuzzi «հնդուկ վերցնելու մի գործիք» (գդալ, черпало), warpuzzi- բրոնզի մի տեսակ է (warp- «լվացք անել»), dupuzzi «տախտակ (գրելու)» և այլն, և այլն: Հայոց այդ -ուճ ածանցը երկիմաստն է -ին նմանանպատակ ածանցի, ինչպես -կաւին, -լուին, կարին, կտրին, դաճին, պատաղին և այլն: Ի դուր է E. Sturtevant-ը ճգնում իր A comparative grammar of the hittite language. դրքում (էջ 155) այս փորձառական ածանցը հանել հնդեվրոպա-հնդկական tis մասնիկից ավելացած "u" ածականով, որը իբր

թե բառարանի վերջին ձայնավորը կարող էր լինել: Այդ -uz ածանցը կարելի է առանձնել և տրարտական armuzi բառի մեջ (անբուռդ ?), թողած դեռ pulusi «քարաթափողա» (pul «սկիծ քար», որ կա և հայերենում պաղ ձևով, ինչպես պաղանձաւ և այլն), որը փոխառությունէ է ակկադերենից (pulu, palu «քար»):

Վեցերորդ՝ հայ-խեթական փորրատիական ածանց է -and(a ‖ -anz(a), որ դրվում է բայարմների վրա չեզոք (կրավորական) սեռի նորմա դերբայ առանձնացնելու համար: Իհարկե հայերենում այս երևույթը վաղուց մնացած է, միայն հնագույն հնչյունը են մնացել: Բայց խեթերենում այդ -anda ‖ -anza ածանցը դրվել է նաև գոյականների վրա, հատկապես ժամանակ ցույց տվող անուններին վրա, որ հայերենում նույնպես վերապրուկներով է մնացել, որպես անհատականալի մնացորդ: Հայերենում, օրինակ ունենք մակով դրժածվածի աւ-իմ «մոլեգնել» բայը, որից աւող (նաև աւողական), աւիղոց, աւեալ, աւիւն, բայց նաև դերբայական աւանդիմ բայը նույն նշանակությամբ, որը կազմված է aw-and «մոլեգնող» դերբայական ձևից: Այդպես նաև ան(<արհ) «վախ» բառից ա-ան-անդ-իմ «վախենալ, խրտնել», ուր ah-and խոկական նշանակել է «վախեցող, վախկոտ»: Այդ -and ածանցի համասոր դեռ զգացվում է հիւանդ և պա(ն)առնդ բառերի մեջ, բայց, օրինակ, կենդանի բառի մեջ արդեն մնացած է (նդել է ki-and «ապրող» կամ «կենդանի, живой», հետո ավելացել է -ani մասնիկը): Երբեմն թվում է, որ այդ -and ածանցը, նման -und ածանցին, որպես վերջինիս փոփոխակը, գոյականներ է առնդհել բայնրից, ինչպես ունենք նստանդն նստամ բայից, էլ չեմ ասում շուանդ (շուանդ) «ոոկուզդի չանչը» և աւանդ «легенда, залог» բառերի մասին, որոնց այդ -and-ի գոյությունը պետք է դեռ ապացուցել («շուանդ»-ի համար համմ. խեթ. šuwa- «ճգմել, թափել, դուրս մղել» որից šuwanza= շուանդ ?): Համեմատել նաև խառն-աղանջ (էջ):

Բայց և մենք ունենք և այդ -and մասնիկի ալոերնատիվ -anz ձևը, որը, ինչպես ասվել է, հնչվել է խեթերենում -anč (ըստ վեցդնների), ինչպես ցույց է տալիս նաև հնդկերենից փոխառյալ panzawartana «հնդապատիկ» (արխական panča «հինգ») բառի գըրությունը: Հայոց նահանջ, դողանջ, թրանջ բառերը կազմված են nah- (համմ. ուրարտ. naḫubi ?), ław- և jawz- բայարմատներից, թեև վատաբանելիս «ապատամբել, գլուխ քաշել գնալ» բայը նախնում նույնպես եղել է vtaranǰ- կազմած vtar- բայից: Բայց

հայերենը խեթերենի նման ունի -(and) ‖ -anz (=-անջ) մասնիկը նաև ժամանակ ցույց տվող անուններին մեջ, որոնք անուններից են ածանցվել: Այդպես տիւ «օր» բառից ունենք անս. տր. աուընջեան (təw-ənj-ean), միշտ, բառից՝ մշտնջեան և վաղ բառից՝ վաղնջուց, ի վաղնջեն: հետէ և այլն: Համեմատել խեթ. ḫameššanza և ḫameššanda «գարուն», gimmanza և gimmanda «ձմեռ» (gimma<gima «ձմեռ» կամ «ձիւն» հնդեվր. արմատից), zēnanza «աշուն» և պարզ zena-(id), ispanda (արտակ. ispanti) և ispanza «գիշեր», siwaz (UD-az, արտակ. siwatti) «օր», որը թերևս եղած լինի *si-wanza, բայց այս ձևով կա sivanza «առաւօտ» (?), որը կարելի է պատահական հայոց tiw «աստուած» և слав. диво, լատ. deus, իրան. dew և այլ ազգակից բառերով, որ «աստուած, օր և առաւօտ» կարող են մի բառածէ ունենալ: Հայտնի չէ միայն խեթ. tesi բառի ճիշտ իմաստը, որը թերևս «առաւօտ» է նշանակում (հայտնի է միայն, որ այդ ժամանակ ամպրոպ է լինում): Ունենք նաև wettanza «առաւօտ» (արտակ. wetti): Հրոզնին մի ժամանակ այս ժամանակի բառերի -anza մասնիկը ևս ուզում էր ներկայ դերբայի anza ‖ anda մասնիկի հետ նոյնացնել առնելով „Das Wort [ḫameshanza] ist ein Partizipium. wieja die hethitischen Zeitausdrücke uberhaupt gerne die Partizipi-albildung auf -anza annehmen“ (Bogh. -St., IV, 90, прил. 4, Die spr. d. H., 88, прим. 2): Այս տեսակէտից շատ ուշագրաւ է ընդհանուր լեզուաբանութեան տեսակէտից ևս, որ այժմեան նոր հայերէնը նոյնպես մասնաւորութեան մեջ առնիծել է այսպես ասած ժամանակի կատեգորիան, ներթարկելով ժամանակի ամէն տեսակ բառ. ինչով էլ որ վերջանան, տեսական-արտայանում -ա և այսոնիից բաց. հոլովում -ան առանձին ձևանշերի (ձմեռ — ձմեռա, օր — օրա, տարի — տարիա և այլն):

Դ

Դրաբարի թևքումը՝ հոլովում — խոնարհումը, ինչպես և թևքութիւնները, որոշ, թեկուզ և քիչ, համանութիւններ ունեն: Նախ, հայոց լեզուն վաղուց կորցրել է սեռերի գոյութիւնը, թեպետ -ա ան -ա սխտեմի հոլովման մեջ ցանկանում են տեսանել արտայան սեռի վերապրում (բարի, բարւոյ, բարւով, բարւոց, բարւովք), իսկ -ea (<ia) սխտեմի մեջ՝ իգական սեռի վերապրում (բարի*, բարեայ) (Տիգրանուհեայ, բարեաւ, բարեաց, բարեաւք): Ընդհան-

բացակա առած, հայ լեզվի շրջապատում, ինչպես խեթական լեզվում՝ թե՛ բևեռային, և թե՛ հիերոգլիֆ, ուրարտերենում, խաուխաներենում և վրացերենում այդ սեռերի տեսակներից նախատեսված հող չի եղել: Ներկերենում մեկին տարբերվում է արական — իգականը մեռածին և չեզոքը, այն էլ շատ քիչ, իսկ մյուսներում (վրացերենում և խաուխատական — ուրարտականում) այդ հնչին տարբերակումն էլ չկա: Եվ խեթերենը, որ չգիտեմ ինչու անմեղադարձորեն կոչվում է հնդեվրոպական կամ մի առանձին ներկայացուցիչ այդ լեզվա-ընտանիքի կողքին[1], ունի բազմաթիվ ոչ հնդեվրոպական տարրեր, թեպետ ավելի քիչ, քան հայերենը: Բառամթերքի տեսակետից տեղական, տոպրասխական մասը գերիշխում է թե՛ հայերենում և թե՛ խեթերենում:

Հոլովումը հայոց լեզվում, մանավանդ եզակիում, տարբերում է ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովաձևերը, եթե նկատի ունենանք և դերանունները, ինչպես եզակիում, այնպես էլ հոգնակիում: Այս ձևերի շատությունը նպաստավոր հող է ունեցել հայերենի շրջապատ լեզուներում, այսինքն հայերենը իր գոյացման ընթացքում ունեցել է բազմահոլովաձև լեզվական ընկերություններ: Օրինակ, վրացերենը ուներ ուղղական (-i), սեռական (-is), տրական (-s), ներգոյական — սուբյեկտական (-man), ուղղորդական -allativus (-ad) և գործիական (-ith), որը և բացառական է: Այդչափ հոլովաձևեր ուներ և խեթերենը՝ ուղղական, սեռ., տր., հայց., (-n), բաց. (-az), և գործ. (-it, -i), նմանապես ուրարտերենում՝ ուղղ.— սկիզբ (-s, se), սեռ. (-i), տրակ. (-e), հայց. անձ (-n), ուղղորդական (-d) և գործ. (-ini):

Ներկերենում դերանուններն ունեն հոգնակի սեռական և բացառական հոլովներում -ēnzan (<-e(n)dan), որի դիմաց դրաբարում ունենք բացառական -ēnj, ինչպես մեծ և ձեծ (համեմատել խեթ. šumenzan «ձեր, ձեղնից», apēnzan «նրանցից», kēnzan «սրանցից»), թեև եզակի բացառականի -az ձևին հայերենում համապատասխանում է գրաբարի -oջ (-oj) ձևը, որ հնում ունենք «նից» և -ջ (j) ձևով «դեղջ» սեռականներում,

---

[1] Տես. խմբ. Ներկերեն լեզվի հնդեվրոպական բնույթը նորագույն հետազոտություններով կարելի է հաստատված համարել. հետևյալս պրոֆ. Գ. Ա. Ղափանցյանի թերահավատությունն այս հարցում հնացած պետք է համարել: Այս մասին տե՛ս B. Георгиев. Исследования по сравнительно-историческому языкознанию. Москва, 1958.

այնպիսի իմաստական անցումով սեռականից բացառական, ինչպես այդ տեսնում ենք, օրինակ, ալժիրյան ֆրանսերենում, ուր սեռականը նաև բացառականի ֆունկցիա է կատարում:

Հայերեն դերանունների հոլովման ժամանակ երբեմն վերջում ավելացիր կերպով կցվում է -իկ (ik) մասնիկը, օրինակ, այս, այդ, այն, այսմ, այսու, այսք, այց, այս, այսուք և մյուս կողմից՝ այս, այսորիկ, այսմիկ, այսուիկ, այսքիկ, այսոցիկ, այսոսիկ, այսքիւք (<*այսովքիկ): Այս -ik կամ -k մասնիկը ունի նաև խնթական դերանունը, ինչպես tu-k «քեզ» (դրսում է և tu-g), zig (zik) «դուն» ammug (ammuk) «ինձ, նա», երբ կա և uga «նա» ուղղականը: Համեմատել լատ. hi-c «այս» haec, hoc. արական. hu-ic, դրծ. —բայց hō-c:

Թևրևս խնթ. դրծիականն -it, -t (հիներոգլիֆ, խնթ. -ta) և վրաց -ith նույն դրծիական հոլովանիի կապակցությամբ է առնչվել նար հայերենի և մի շարք բարբառների (հյուսիսային -g (-ç) վերջավորությունը, ինչպես՝ քաղաքից, դյուղից..., բայց ոսկուց, ուռկուց և այլն, th (թ) բաղաձայնի անցումով ç (g) բաղաձայնի: Համեմատել բարբառային մանկուց «մանկուց», ինքուր կամ ինքուր «ինքուց և նման -ուր վերջավորությամբ բառերը, որը բացառականի ֆունկցիա ունի, ինչպես և հին վրացերենում ქალაქთა ქალაქად (քալաքիթա քալաքադ «ի քաղաքէ ի քաղաք» Ավետարանում): Համեմատել լատ. ablativus (բացառական) հոլովը, որը և դրծիական է (instrumentalis):

Հայոց լեզվի բայի թևքուլիններն ունեն խառն դոյացություն՝ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական: Եռթևքների կապակցությամբ ասածդ ես կանդ կառնեի նախկա ժամանակի եղակի երրորդ դեմքի «յ» (j) ձևի վրա, որ հանդես են հնդեվր. -ti վերջավորության երկու ձայնավորների միջև, իբր հին bhereti > բերեթի > բերէ > բերէ «բերում է»: Այդ «յ»-ն մաքուր կերպով երևում է «ա» և «ո» խոնարհման մեջ (կարդամ, կարդաս, կարդայ, դամ, դոս, դոյ): Եռթևքների բայերը նախկա ժամանակում երկու տեսակ են խոնարհվում, օրինակ, ep- «բռնել» արմատից՝ epmi, epsi, epzi, epweni, epteni, apanzi այս ապակս կոչված „mi" խոնարհումով է, իսկ կա և «ի խոնարհում», ինչպես sak- «իմանալ» արմատից՝ sakĥi (I դ.), sakti (II դ.), saki (III դ.), sakweni, sakteni, sakanzi կամ dā- «վերցնել» բայից՝ daĥĥi, datti, dāi և այլն: Ինչպես տեսնում ենք եռթևքներն այդ երկրորդ խոնարհման (-ի խոնարհում) ժամանակ ներկայի եղակի երեք դեմքերը ունեն միան-

գամայն այլ ձևեր. տրամազծորեն տարբերվող մյուս „mi" կոչվող խոնարհումից: Եվ որքան տևտնում եմ, այդ -ḫi, -ti, -i ձևույթների ծագումը հնդեվրոպական լեզուների ապյալներով չի բացատրվում և կամ համոզում: Ըստ իս խնթ. այդ „i" (j) III դեմքի թևքուլիը պիտի կապել հայոց նույն մասնիկի հետ, և գուցե կապակցել նաև իտա. tatia *«հիրում է»* (<tatiai ?) *խնթ. վերապրուկային* paršia (<parsiai ?) *«փշրում է», ուրարտ.* a-li-e *«տալիս է», (=alē): Խեթերենի այդ իտան լեզվական բնույթը, թե՛ մասամբ քերականության թևքման տեսակետից և թե՛ մանավանդ բառարանների, շատ լավ տալիս է* Johannes Fridrich-*ը իր* „Hithitisch und „Kleinasiatische" Sprachen (1931, Berlin-Leipzig) *գրքում ասելով,* „Dass das Hethitische keine idg. Sprache im land läufigen Sinne, sondern eine Mischsprache von der Art des Albanischen ist, steht fest. Der fremde Einfluss macht sich besonders im Wortschatz geltend. Noch ungelöst ist die Frage, aus welcher Sprache oder Sprachen die indo-germanischen Bestandteile des Wortschatzes entlehnt sind": *Հայերենի դիրքը այդ լեզվաժամանակ և կազմավորման տեսակետից ավելի խառն և բարդ է, քան այն ենթադրվում էր խեթերենի մասին:*

II ՄԱՍ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԼԵԶՎԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆՍՏՎԱԾՔԸ (ԲԱՂԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ)

Երբ XIX դարի հենց առաջին քառորդից սկսվեց հնարավոր ճշտությամբ հնդեվրոպական լեզուների («հնդկերմանական», «արիական») ընտանիքը, որի մեջ մտնում էին հնդկերանական, բալթիկ-սլավոնական, գերմանական (չորս ճյուղերով), իտալո-կելտական, հունական և այլ լեզուները կամ ճյուղերը, ապա սրանց մեջ մտցվեց նաև հայոց լեզուն: Այդպիսի լեզվաընտանիքների թիվը հասցնում են երբեմն տասնյոթի, թեպետ դրանց ազգակցությունը բոլոր-չէսր ընտանիքի մեջ կարող է լինել մոտավոր և հնարավոր, դպրի իրենց սխատեմով և ֆակտուրայով, և մյուս՝ հաղիվ նշմարելի: Այդ ընդհանուր լեզուները սկզբում մոտ են եղել մի լեզվի մեջ, որը կոչվում է «նախալեզու», «մայր լեզու», «հիմք լեզու», որից աստիճանաբար դուրս եկել են այդ լեզուները: Հնդեվրոպական «նախալեզվի» սկզբնական կրողների «նախահայրենիքը» իրր եղել է Ռուսաստանի հարավում (Սև և Ազովյան ծովերից հյուսիս) կամ Կարպատյան լեռների և Վիստլայի միջև ընկած տարածության վրա: Նրանց գաղթը այդ նախահայրենիքից սկսվել է մոտ 2500—3000 տարի մեր էրայից առաջ, և շատ տարօրինակ է, որ «նախալեզվից» բարբառները (դիալեկտները) ունենալ են իրենց բնօրրանում նույն տիպարումը իրար նկատմամբ, ինչ որ հնարավորություն ուներ միջերկրյայինից հետո իրենց հնարավոր նոր վայրերում: Ըստ երիտասարդաց Wolde-Pakorny կողմից կազմած հնդեվրոպական «նա-

հայերենի» բառարանի այդ մասը լույս ընծայել է 2223 բառ-արմատ, որ թվում է արհնաաստվանորեն չափազանցված։ Holger Pedersen-ը, որ նշանավոր լեզվաբան է և հայագետ, իր մի հոդվածում այդ բառարանի շինծու արմատների մասին գրում է. «Բայց վերջացական «արմատների» վերականգնումը (construction), որը թերևս անհրաժեշտ է Walde-Pokorny-ի տիպի մի բառարանում բաց տեղերից (lacune) խուսափելու համար, չունի ամենամեղմով ոչ մի ընդհանուր բան արդարացի լեզվաբանության հետ»[1]։ Բայց այդ հնդեվրոպական լեզուների նախալեզվական կացության ըմբռնումը ոչ միայն բառարմատների ճիշտ կազմի անսակնկատից, այլև հնչյունաբանության-ձևաբանության շատ խնդիրներում, առարկություն է առաջացնում նաև ուրիշ լեզվաբանների կողմից (Մեյե, Վանդրիես, Շուխարդտ և այլն)։ Օրինակ, Վանդրիեսը խիստ է համարում հնդեվրոպական «նախալեզվի» վերականգնումը, որին քննադատ է վերաբերվում և «Մեյեն»։ Հայերենի կազմավորման տեսակետից Մեյեն շատ մեծ նշանակություն է տալիս տեղական ոչ հնդեվրոպական լեզուների ազդեցությանը, որոնք առաջ են եղել։ Նա ասում է. «Դժբախտաբար չհաջողվեց մինչև հիմա որոշել, թե որոնք են չասուզարանված հայ բառերը, որոնք գալիս են բնիկների լեզուներից» („Esquisse", II հրատ., էջ 12)։ Նույնը նա տեսնում է բնիկների լեզվից ելող տեղեկացությունների և հատկապես հնչյունական սիստեմի մեջ, որ նման է հարավային կովկասյան լեզուներին, հայերենի հոլովների քանակի, անվանական տեսերի բացակայության մեջ, ինչպես պարսկերենը այդ տեսերը կորցրել է էլամերենի ազդեցության հետևանքով և այլն։ Հարկ է նշել մանավանդ նրա հետևյալ խոսքերը. «Հավանական է, որ երկրի հին բնակիչների լեզվական միտումները (tendances) լայն չափով ստիպել են հայերենի բախտը» (նույն տեղում)։ Հայոնի լեզվաբան Հաստ Շուխարդտը կողմնակից էր նույն իսկ «խառն» կոչված լեզուների տեսությանը։

Հայտնի, սովորական երևույթ էր, որ ցեղերը կամ ցեղախմբերը բաժան-բաժան էին լինում, դիֆերենցիացիայի էին ենթարկվում և պատճում շատ հետևանքը, ինչպես տեսնում ենք Ամերիկայի բնիկների մոտ։ Բայց և հանրահայտ է, որ այդ ցեղերը կարող էին նոր և այլալեզու ցեղերին միանալ կամ նրանց հետ շփվել և խառնվել. այսինքն՝ ապրել էթնոլեզվական նոր պրոցես՝ ինտեգրացիա։

[1] Տե՛ս Lingua Posnaniensis, Poznan, 1949, էջ 2։

Եվ ուրեմն լեզուների ազգակցությունը միայն ու միայն բաժանումով չէր լինում, այլև միացմամբ. Եթե ցեղերի մեջ ուժեղին և թագավորականին միանում էր իսլը, պատմող բնական է, որ կհաղթեր ուժեղի լեզուն, ինչպես այդ լինում էր ամենաբարդ դասակարգային հասարակարգում: Այդպիսի մի դեպք նշում է Մ. Խորենացին Վարդգեսի առնաց ցեղի մի հատվածի և հայկական երկանդի ցեղի կամ ցեղերի մեջ, երբ «Հատուած գնացեալ Վարդգես մանուկն ի Տուհաց գաւառէն գիտասդ գնաւոյ նիմալ նաւանալ գերէշ բլրով... կանչ կոչել զդուռն երեւանդայ արքայիւ, ասիներն միանալու երկանդին, խնամխնամալու նրա հետ: Վրացական մի փոքրիկ ցեղային հատված դալիս և միանում է հայ մեծ ցեղախմբին և բնական է, որ լեզուները չէին խառնվելու, այլ միայն էր հարկավոր: Բայց իհարկե կարող էր լինել և խառնվելու պրոցես այլ ցեղաիրարպրության պայմաններում և հնարավոր կատացվեր լեզուների իսկական խաչաձևության և խառնման, կզրնանար մի նոր որակի լեզու, խառն լեզու (Mitschsprache) իր ծագումնական կոմպոնենտներով:

Մենք գիտենք, որ ժողովուրդների պատմությունը իր դրոշմն է դնում լեզուների զարգացման ընթացքի և որակի վրա: Ինչպես նշվել է մեր կողմից, Հայասայի ցեղախումբը ուժեղ շփման մեջ էր խեթական էքսոնիայի և կուլտուրայի հետ, ինչպես և մասամբ ճանապարհներների հետ, իսկ հայ հնագույն լեզուն, որը մեզ հասել է գրաբար մոտ 1500—1600 տարի անց այդ նախնական շրջանից, լեզվական հարուստ նյութ է քաղել այդ հին ժամանակից, որի մասին մանրամասն խոսվել է: Հայասայի լեզվի մոտ 15 հատուկ անուններից, որոնք մեծ մասամբ տեխնիկ են, երկուսի մեջ (Teritittun-Unagast-) ևս տեսնում ենք հնդեվրոպական լեզվածն և արմատներ, որոնք կարծես իմ համեմատում են հունական լեզվի նման ձևերին և արմատներին: Պիտի նշեցրել, որ փոքրասիացիների Փոքր Ասիա գաղթելուց առաջ նրել է „k" արևմտյան հնդեվրոպական լեզուների (խեթական-պալեոնեսական-պալայական) ազգակցությունը այդ Հայասայի լեզվի վրա: Գիտք է իհարկե հանել հնդեվրոպական այն բառերը, որոնք ունեն և անցել են խեթերից և ուրիշներից, ինչպես օրինակ kardmiaz «ցասում», որ հայերենում կա քրթմնջ-ել (=роптать) բայի մեջ: Բայց երբ հայասացիները գաղթում են Ուրարտուի լայնածավալ անբերրության, ուր հիանալի չափ ցեղեր կային, մեծ մասամբ այլևայլ լեզուներով, ապա այսպես բնական է, որ Հայասայի լեզուն ենթարկվում է այդ նոր լե-

դուներից որոշ ուժեղ լեզուների ազդեցությունը, խաչավորման: Բայց ավելի ուժեղ լեզվապրոցեսը լինում է այն ժամանակ, երբ հայացիները ենթարկվում են կիմմերների և մանավանդ սկյութացիների (սակերի) քաղաքական և լեզվական ներգործության: Այս դեպքում անդի է ունենում մեր լեզվի կատարյալ արտաճգումը:

Ես գտնում եմ, որ հայերենի հնդեվրոպացումը լինում է հենց այն ժամանակ, երբ անդի է ունենում այս սակերի և սկյութների մուտքը Ուրարտուի այս նախկին գավառները: Հիշենք, թե ինչպես են ցրված հայացիները ենթարկվել մեդական պետության, որի վարչական (—կիսքասար?) բաժանումը իրենն է ենթարկում սկաորդի (սակյան) Գարուչին «բաժանությանն ձև և շուք տալով», այն Գարուչին, որը սկյութացի լինելով արդեն միացրել և ենթարկել էր Հայաստանից եկող ցեղերին և վարչական հետ դնացել էր Առաբբանիպալի (Սարդանապալի) մայրաքաղաք Նինևիային վրա: Իմ կարծիքով Գարուչի ոչ հայկյան (=հայասական) լինելը հիշտ է արձանագրված Հովհաննես Կաթողիկոսի պատմության մեջ, ինչպես և ակնարկ կա այդ մասին նաև Մ. Խորենացու մոտ: Իսկ առաջին «պատմական» թագավոր» տիտղոսը թերևս վկայում է նաև նոր էթնիկական կազմավորման մասին, երբ ցեղերը միանում են և սկսվում է ֆեոդալական տիպի պետության կազմավորումը, որը վերջանում է չորրորդ դարում (VII—IV) մեր էրայից առաջ: Իրանի հետագա քաղաքական, կուլտուրական և լեզվական ազդեցությունները պիտի համարել օտար, ոչ հարազատ ու անբնական: Մեր լեզվի իրանական բառերը բոլորն էլ փոխառյալ են:

Հնդեվրոպական այն լեզվանատամածքը, որ կա հայոց լեզվում, դալիս է այդ լեզուների արևելյան կամ «ժ» խմբից, որին պատկանում են բալթիկ-սլավոնական և հնդիկ-իրանական լեզվաճյուղերը: Հայերենի այդ մասի ինքնությունը, որ ճիշտ ձևակերպեց Հյուբշմանը, շատ որոշ և ակնհայտ է, ունի մոտ չորս հարյուր արմատներ և բառահարաբերական (քերականական) դրական վկայություններ: Ակնհայտ ենթադրելով բառարմատների ճնշող մասը, ինչպես և բառակազմական ձևերի մեծամասնությունը հնդեվրոպական չեն[1], թողած դեռ այն նկատառումները, որ տվել է Մեյեն (տե՛ս վերը): Իմ կարծիքով հայերենի նկատմամբ ծագումնաբանական (գենեալոգի-

[1] Այս. խմբ. Հեղինակի առաջադրած այս թեզն ընդունելի չի կարելի համարել, քանի որ ներքին փաստերով ապացուցված է հայերենի հընդեվրոպական բնույթը:

կան) հետևությունն անելը հօգուտ հնդեվրոպականի (par excellence) թևերս միակողմանի է: Երևան եկած նոր լեզվափաստերը և ապագայում հայտնաբերվելիքը կարող են շատ բան փոխել և դնեցիսի հարցը այլ կերպ դնել: Լեզվական անդորյին (սահմանիկ) փաստերը, ինչպես նաև հայ էթնիկայի, կուլտուրայի, կրոնի (առասպածների) և նյութական կուլտուրայի տվյալները խոսում են հօգուտ հայերի վերջրասխական կուլտուրական ժամանակ, հօգուտ այդ սահմանիկ բնօրրանի:

Այժմ ծանոթանանք հայերենի այն առավել նյութին, որ հնդեվրոպական է և հաստատված պատմա-համեմատական ուսումնասիրությամբ: Իմարկի կան և թեական առանգարանություններ, որոնց մասին նուշնպես կխոսվի և կքննադատվի: Մեր այս նկարագրությունը գլխավորապես հիմնվելու է Ա. Մեյեի Esquisse-ի (1936) վրա և օգտագործելու նաև Հյուբշմանի „Armenische Grammatik" հոյակապ աշխատության 5-րդ՝ «բուն հայկական բառերս կոչված մասը: Այդ բառարմատների ուսումնասիրությանն առնակցից մեծ նյութ տալիս նաև Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» իրեն լրիվ հատորով: Կարևոր է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» (հ. I, 1940, Երևան), որտեղ ընդհանուր մի հաշվեհարդար է տրվում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ձայնց տանք կատեգորիաի և ֆակտորալի տրդնն առհմանված այն հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները, որոնք բնութագրում են հայերենի որոշ կացութիաները կամ հարաբերակցությունը այս կամ այն հնդեվրոպական լեզվի կամ լեզվախմբի հետ: Այդ կատակցությունն մեջ հայերենը ամենի շատ հարում է հունարենին, հնդիրանականին և բալթիկ սլավոնականին: Նշենք ամենաբնութագրիչ լեզվահամեմատական յուցանիշները կամ իզոգլոսները:

1. Հայերենը տարբեր կերպով է անդրադարձնում հնդեվր. k′ և k, k^{w} բաղաձայնները նման հնդիրանականին, բալթոսլավոնականին, արտանդերենին և թրակո-փրյուգիականին: Առաջին բաղաձայնը (k′) հայերենում արտահայտվում է s (հայոց u) շփականով, իսկ վերջինը (k, k^{w}) հետևագլոտալին kh (ք) պայթականով, այնինչ հունարենը, կելտականը, լատինականը, գերմանականը, խեթերենը և թոխարերենը այդ տարբերությունը չեն տալիս: Օրինակ սիրտ բառը (=հնդեվր. *k′ērdi) ներկայացված է (իս. šardis, լատիշ.

sirds, *ռուս.* серд-це, *հայց* sirt..., *բայց խնթերեն* kardis, *հուն.* kardia, *լատ.* cŏr-cordis, *անգլ.* heart, *գերմ.* herz, *հին իռլ.* cride. *Կամ թե օրինակ տասն (=հնդեվր.* *dek′m) *բառը ունեն սանս.* daçan, *լատիշ.* desmit, *ռուս.* десять, *հայց* tasn, *իսկ մյուս կողմից՝ հուն.* déka, *լատ.* decem, *գոթ.* taihan, *գերմ.* zehn *և այլն: Հայց լեզուն այդ* k′ *հնչյունի արտահայտման անսակնտից մնացում է հնդեվրոպական սրնկլյան բարբառներին:*

2. Հայերենը հնդեվրոպական բառասկզբի s *շփականը փոխում է* h *շնչականի կամ բնավ չի պահում, որով նա մոտ է հունարենին և իրաներենին: Օրինակ* հիճ *բառի (հնդեվր.* *senos) *մի բառաձև ունեն սանսկր.* sana, *լիտ.* senas, *գոթ.* sinista, *հին իռլ.* sen, *լատին.* senex, *իսկ մյուս կողմից՝ ավեստ.* hanō, *հուն.* hénē, *հայց* hin, *կամ թե լատ.* sal *«աղ», սլավ.* соль, *գոթ.* salt, *գերմ.* salz.., *մյուս կողմից՝ հուն.* hal-s, *հայց* ał *և այլն:*

3. Հայերենը հունարենի և հնդիրանական լեզուների նման ասրիատի հզակի երբորդ դիմքում ունենում է e *ածականը (*ayr-menm*). ինչպես* bher—*«բերել» արմատից ունենք հուն.* éphere, *սանս.* ábharat, *հին պարս.* abara, *հայց* berr *«բերեց»:*

4. Հայերենը գործիական հոլովի իր b *վերջավորությամբ հարում է արիական, հունական, ինչպես նաև իտալա-կելտական լեզուներին, ինչպես՝ սանս.* -bhyas, *ավեստ.* -byō, *լատին.* -bus, *հին իռլ.* -bo, *հուն.* -phin.

5. Հայերենը հոդնակի ներգոյական հոլովում ունի s, *որը նթե ծագումնաբանորեն չի առացվել հոդնակի հայցականի* s *վերջավորությունից (<*ns-ից), *ապա կապվում է արիական, բալթասլավոնական և հունական լեզուների ներգոյական ձևերի հետ: Համեմատել՝ սանս.* vṛkešu *«գայլերի մեջ», լիտ.* vilkûsu, *սլավ.* вльцѣху, *հունարեն* ly′koisi, *հայց* igajls:

6. Հայերենը արգելական հրամայականի ժամանակ գործածում է mi *բացառական ձևական բառը նման սանսկրիտներենին (*mā*), հունարենին (*mē*) և թոխարերենին (*mā*), այնինչ մյուսները ունեն* ne: *Լեզվաբանները այդ վերջինի հետ են դնում և լիթվերեն* le *ձևական բառը, բայց դա արդյո՞ք ձևափոխություն չէ ակկադական (աստուրա-բաբելական)* la *նույն ֆունկցիան արտահայտող բառի, որ կա և մյուս սեմական լեզուներում (օրինակ արաբերենում):*

7. Հայերենը կազմում է անցյալ ժամանակի դերբայ (վաղակատարը) -eal(o) *ձևով, որով և անցյալ բայրդ ժամանակները նման „есмь", lit „я был" օժանդակ բայերի հետ: Այդ նույնը անս-*

նում ենք նաև սլավոնական լեզուներում (համմա. մեռեալ եմ mereal em և հին ռուս. мерл(а) есмь)։

8. Հայերենը ունի -աւղ -awł վերջավորվող ներկա կամ ենթակայական դերբայը (ծնող, գրող...), որը համեմատում են սլավ. -тель ածանցի հետ (родитель, писатель...), բայց քանի որ սլավոնական լեզուները ունեն ոչ միայն -атель, որին մոտ պիտի լինեի հայոց -աւղ (<-a-te), այլև -ительь (творитель), -етель (свидетель), իսկ խեթերենում կա միայն -atal(l) մասնիկը նույն նշանակությամբ, ապա բարվոք պիտի համարել հայոց ձևը կցել խեթերեն այդ -atal(l) ձևին, մանավանդ որ այդ լեզուները ունեն և ուրիշ շատ ընդհանրություններ։ Խեթերենում, օրինակ, ունենք kuššanattallaš «վարձկան» (դինվոր), išḫamatallaš «երգիչ», ḫalugattallaš «լրտեսար, вестовой, гонец", unattallas «վաճառական» և այլն։

Իհարկե, լինում են այլ բնութագրական դեպքեր այդ ընդհանուրի մեջ, ինչպես, օրինակ, perfectum-ի կազմելու ժամանակ, երբ բարդումը կրկնվում է հնդ-իրանական և հունա-լատինական լեզուներում (հուն. pepaideka «կրթեցի», paideo «կրթում եմ», լատ. momordi «կծեցի», mordeo «կծում եմ» և այլն)։ Բայց հայերենում ունենք միայն մի դեպք. այդ առնել «առնել» բայն է, որի ar- արմատը անցյալ կատարյալում դառնում է արարի, ալսինքն՝ կրկնվում է։

Հատկանշական է մանավանդ այն հունա-հայկական ընդհանուր հնչյունաբանական երևույթը, երբ հնդեվրոպական որոշ արմատների վրա այդ երկու լեզուները ավելացնում են սկզբում a (հունարենում, նաև o)։ Այդպիսի նախադիր ձայնավորով են հայոց ասող, ասամն, ականջ, ամիս..., հունարենի՝ astēr, odys, onoma և այլնի համեմատ, այնինչ մյուս հնդեվրոպական լեզուները այդ հավելումը չունեն։ Զարմի սրա հետ միացնել այն հնչյունական երևույթը, երբ հայերենում և հունարենում մյուս հնդեվրոպական լեզուների դիմաց r առնանատով սկսվող բառերից առաջ նույնպես դրվում է որևէ բազմաձայն, մասնավորապես e ձայնավորը, ինչպես հնդեվր. *rḗg^{w}os «մթություն» արմատը ունեն սանս. rajas, գոթակ. riqis, հին իռլանդ. rūkkr..., բայց հայոց erek «երեկո, մթություն» և հուն. érebos (id.)։ Ոչ միայն հայերենն ու հունարենը չեն սկսում r առնանատով բառեր, այլև մի շարք լեզուներ, որոնց թվում փոքրասիական լեզուները և ուրարտերենն ու խուռիտերենը։ Մինչև իսկ հնատարա պարսից փոխառությունների սկզբում հայերը ավելաց-

նում են ձայնավորներ, ինչպես երանգ, երամակ..., առաստան, առաստ, արտյր և նմանների մեջ:

Հայերենի համեմատական ուսումնասիրության մեջ բերում են նաև մի քանի հանդիպումներ, մանավանդ հնչյունաբանական, որոնք ըստ իս արտաքին և պատահական են համեմատվող այդ լեզուների մեջ, ինչպես, օրինակ, հնդեվրոպական p, t, k պայթականների վերածվելը հայերենում խուլ շնչավորների (ասպիրատների)—*ph(> հ), th (թ), kh (ք), ինչպես գերմաներենում այդ p, t, k պարզ պայթականները վեր են ածվել խուլ շփականների f, θ, x: Կամ ինչ պատմական. նշանակություն պիտի հանել հօգուտ հնդեվրոպական բարբառագիտության այն բանից, որ հնդեվր. bh, dh, g'h, g^wh ձայնեղ ասպիրատները լատիներենում և հունարենում դարձել են խուլ, իսկ մյուս բարբառներում հանդես են գալիս ձայնեղ պայթականներով:

Մանավորապես նշվում է հայերենում ածականի համեմատական -tero կամ -jes ածանցների բացակայությունը, որոնցից առաջինը կա հնդիրանական և հունարեն լեզուներում, իսկ երկրորդը լատիներենում, կելտերենում, գերմաներենում և բալթիկ-սլավոնական լեզուներում: Բայց այդ ժամանակ չգիտեին, որ այդ ձևերը չկան և խնթերենում,— մի հանգամանք, որ թերևս պատմական բացատրություն ունենա հայերենի և խնթերենի փոքրասիական բնօրրանի աղերսությունից, կազմավորման ակունքների համանմանության առկայությամբ:

Լեզվաբանները, հետամուտ լինելով բերել և այլ բնորոշ գծեր հայերենի և այլ հնդեվրոպական լեզուների միջև, երբեմն ընկնում են սխալմունքի մեջ այն տեսակետից, որ քննվող երևույթը վերցնում են հայ լեզվի ներքին զարգացման օրինաչափությունից դուրս, կորելով այդ հողից՝ հանուն կանխակալ տեղեկացի և ցանկության: Կարծես թե գործ ունենք մեխանիկական-մաթեմատիկական համեմատությունների հետ և ոչ թե պատմա-համեմատականի՝ իր ապեցիֆիկ դրսևորմամբ: Օրինակ, բերում են գոյականների ըստ թեմայով վերջացող հիմքեր, որոնք սովորական արական սեռի հետ շատ քիչ դեպքերում ցույց են տալիս և իգական սեռ, մանավանդ որ կանանց են վերաբերում: Բերում են (Մելե) մանավորապես հուն. nuós և լատ. nurus բառերի հետ նաև հայոց նորահարսն նու-նուռ-նուռով ձևարար (նոxa) բառը: Բայց այստեղ ըստ իս, հայ բառը ավելորդ արխայիզացիայի է ենթարկվում, որովհետև այդ բառի nuo- բունը իրեն ըստ իրի իգական ցուցանիշով գալիս է ոչ

ինչ հնդեվրոպական «նախալեզվից», այլ կազմվել է հայկական հողի վրա, ուր բոլոր միավանկ բառերը «իւ» կամ «ուս» ձայնավորով հոլովվում են այդ «օ» հոլովմամբ, ինչպես ձու-ձուոյ, ձուով, լու-լուոյ-լուով, բու-բուոյ-բուով..., կամ մի-միոյ-միով, ֆի-ֆիոյ-ֆիով և այլն: Հետևապես և նու բառի հիմքը իր «օ» ինամարով հանդիսանում է զուտ հայկական առանձնահատկություն, այսինքն բառը լինելով մաքուր հնդեվրոպական իր «օ» հոլովակիրոջը չի ժառանգել մայր-լեզվից, այլ արդյունք է հայոց լեզվի հետագա զարգացման:

Հայերենի համեմատական ուսումնասիրությունը հնդեվրոպական լեզուների հետ ուրվագծորեն տվել է Մեյեն իր „Esquisse"-ում, և մենք բարվոք ենք համարում վերցնել մեզ համար կարևոր դրույթները այդ համեմատական քերականության մեջ, ենթարկելով իհարկե քննադատական նկարագրության, նկատի ունենալով նորագույն հայտնաբերումները ասիանիկ լեզուների բնագավառում:

Պահելով հնդեվրոպական նկարագրության ընթացքը, մենք ևս կրակրկնենք հնչյունաբանության հետ կապված ձևաբանական (հոլովում-խոնարհում) մասը, ավելացնելով հարկ եղած ձևաբանական-շարահյուսական որոշ կապակցություններ, և վերջապես մեջ պետք է բերենք նշած այն բառամթերքը (լեքսիկան), որը հայոց լեզվի մեջ համապատասխանում է հնդեվրոպական ժառանգով («իսկական» հայ բառեր), որոնք ըստ նույն հնդեվրոպական (Մեյեի) չորս հարյուրի չեն հասնում

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նշումներ: Հնդեվրոպական շարժուն շեշտը, որ եղել է երաժշտական, հայերենի բառերի մեջ կարող դիրք է ընդունել նախավերջին վանկի վրա, որը պետք է վերագրել ասիական լեզուների ազդեցության, ինչպես այդ ընդգծում է և Մեյեն (Esquisse, էջ 23): Այդ ազդեցությամբ է նաև, որ այդ հնադույն շեշտը որակով փոխվել է, դառնալով արդեն արտաշնչական (կամ ուժական), չունենալով զուտ մի հետք հնդեվրոպական տոնից», վրացիք նույնպես շեշտում են նախավերջին վանկը, իսկ պարթևացիք և պոկերը այժմյան շեշտը, որ վերջին վանկումն է, նույնպես փոխադրում են նախավերջին վանկը:

Իսկ որ հայերենի հնդեվրոպական բառերում շեշտվել է նախավերջին վանկը, այդ պարզ կերպով երևում է օրինակներից: Երբ առնակրիաները տալիս է ábharat հավատար հունարեն éphere

(վերջին „t"-ի անկումով) հայերենը ունի միայն երե՛ք «բերից» այդպես նաև ասաս. ádhāt «դրից»=հայց եդ (<*édhēt)։ Բոլորը մեր հոլովական ձայնավոր թեմաները, որ հանդես են գալիս միայն թեք հոլովներում, մի ժամանակ արմատի մեջ էին։ Այդ երևույթ է նաև իրանական փոխառությունների մեջ, երբ օրինակ, daiva «դև» ձևը հոլովվում է (դիւաց) „a" հոլովմամբ, կամ խրատ հոլովվում է „u" հոլովմամբ (իրանական xratu «ուշք, միտք») և այլն։

Հայոց լեզվի շեշտի դոյութիւնը բաւի նախամերջին վանկում գալիս է, բաւ իս, գեռ հնագոյն շրջանից, մեր էրայից 1000—1500 տարի առաջ, դառնալով Հայաստանի և Ուրարտուի ժամանակից մնացած բառաձևերից։ Եթե նկատի առնենք, որ «իւ», «ուս», «ոյ» և «էշ» հնչյունները շեշտի անդադրելիության պատճառով հնչյունափոխվում են միայն Արշակունյաց շրջանից, ինչպես ցույց են տալիս իրաներենից փոխառյալ բառերը, ապա պիտի եզրակացնել, որ հնագոյն ժամանակ այդ ենթակցիան տեղի չի ունեցել, իսկ նման ունենք նման հնչյունափոխված բառեր, ապա դրանք առացվել են քրիստոնեական դարաշրջանից։ Օրինակ, ունենք հայոց Դվինատ քաղաք անունը (Տիգրանակերտի մոտ), որի հին ասորերական տառադարձությունն էր Kullimeri. որևէն պիտի եզրակացնել, որ հայերը այդ հին անունը սկզբում հնչել են սեմիտների պես Kulimer ‖ Kulimar, իսկ հետո Khəlimar, շեշտ դնելով երկրորդ վանկի վրա (դժվար թե վերջինի վրա)։ Այդպես նաև եղել է Pattiariga կամ Patarič գյուղանունը, որ թերևս նշանակել է «փոքր քաղաք» (համմ. ուրարտական patari «քաղաք»)։ Հայերը մեր էրայի սկզբից այդ անունը հնչել են Բլթառիճ (Երզնկայի մոտ է) կամ Բաթռիճ (Արագածի հարավային լանջի վրա). երկու դեպքումն էլ շեշտը վերջընթեր է ընկնում։ Շատ հետաքրքրական է խլթական ulug-«սայլ, ճանապարհասայլ» (Reisewagen), ինչպես հիմա ճիշտ թարգմանում են այդ արմատը (ուղղ. հոլ. uluganiš) հայերենում ստացել է նուղկ ձևով հաղկահար «սայլակ» (ճիշտը՝ սայլեր թալանող) բարդ բառի մեջ։ Անշուշտ շեշտը հայերը դրել են վերջընթեր, այսինքն húlug-, որը դարձել է hulg, ապա թե ոչ կունենայինք həlug (hlug)։ Այնպես որ վերջընթեր շեշտը, որ հաճախ է լինում լեզուներում, եղել է նաև հայերենում, ապացուցվում է նաև անդրանիկ ծագում ունեցող անուններով և բառերով, իսկ այդ ուժական շեշտի հետագա անկը վերջավանկում է, ինչպիսին է նաև հիմա, հետևանք է վերջին վանկի (ձայնավորի) և բառի սղման։

Մինչև հայ գրի հրևան գալը (V դար), այդ հնչյունական նոր կացութեան հետևանքով գոյացել էր արդեն (մեր էջերի I–V դարերում) նոր հնչյունահարաբերական դրութիւն՝ ժամական շեշտի վերջնահամանկային փակ դրութեամբ. նրա անդի փոխոխութեան հետևանքով, որպես հետևանք բառակազմութեան և թեքման, նախկին շեշտառնակ ու, ի, է, ոյ, եա, եայ ձայնավորները և դիֆտոնգ-տրիֆտոնգները կրում են նոր փոխոխութիւններ, այն է՝ ու և ի ձայնավորները կամ դուրս են ընկնում կամ դառնում ը, է>ի, ոյ>ու, եա>ե, եայ>է: Այժմ մեր բարբառներում և գրական լեզվում այդ նշած կանոնավորութիւնը մասամբ խախտում է հոդուռ այդ հնչյունների պահպանութեան, չխոփոխվելուն, որ նկատվում է մասամբ և գրաբարում միևնոյն բառերի սկզբում, ինչպես՝ իժ-իժի, ուս-ուսոյ, ուղտ-ուղտու, ունկն-ունկան և այլն:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԸ (ՀՊԱԿԱՆՆԵՐԸ) ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. ԳԱՐՋ ՁԱՅՆԵՂՆԵՐ—b, d, g', g (g^w)

Սրանք հայերենում մեր են ածվել ամենաուրեք պարզ խուլերի—պ, տ, ծ, կ: Երիվնային պալիտական *b>հայոց պ փոխանցումը ունենք մեր առէպ, առիպել բայարմատի մեջ, որի դիմաց կա հուն. steibō «խոտում եմ, կոխրտում եմ», stibarós «ճղմած, ոտմածած»: Շատ օրինակներ կան d>տ փոխանցման համար, ինչպիսիք են սանս. dā- (dádami), հուն. (dō- (didōmi), լատ. do, սլավ. даю...=հայոց տամ, հուն. kardia, լատ. cor, cordis, գոթ. hairto...=հայոց սիրտ, լատ. odī=հայոց ատեամ և այլն: Գալատալ (միջնալեզվային) G'=հայոց Ծ համապատասխանութեան համար նույնպես շատ օրինակներ կան—հայոց ծիճ, սանս. jánaḥ (j=dž, ջ) «ռասա», հուն. génos, լատ. genus..., հայոց այծ=հուն, aix, aigós..., հայ ճանաչեմ (<*ծանաչեմ—ծանեայ, ծանօթ)=սանս. jānāiti «ճանաչում է», սլավ. знать, հուն. gignóskō և այլն: Ած-եմ բայի ճ բաղաձայնը առացվել է *հնդևր. gy-(=gj) ձևից: Ընդհանրապես ասած նախահնդևրոպական բնևոագիր լեզուների z բաղաձայնը հայոց փոխառութիւնների մեջ տրվում է ծ կամ ճ բաղաձայնով: Նմանապես պետք է շեշտել այդ նույն բնևոագիր լեզուների ձայնող պալիտականների անցումը հայերենի մեջ որպես խուլ պալիտականներ, ինչպես աստուրական d բաղաձայնի վերածվելը հայոց t բաղաձայնի Adad աստվածանվան մեջ, որը գարձել է հայոց Աստատ (Atat) անունը, որ կրում էին հայ նախարարները:

Ձայնեղ ասպիրատները հայերենում դարձած են պարզ ձայնեղներ և նայած նրանց դիրքին բառամիջում և մասամբ հպակապության բուլության տակ են ունենում տարբեր հնչյունադարձներ:

Հնդեվրոպական շրթնային bh բառասկզբում դառնում է p (b), ինչպես, օրինակ, բերիմ=սանս. bhárāmi, հուն, phérō, լատ. ferō, գոթ. baira: Բառի մեջ նա վեր է ածվում ւ (w) կամ վ (v), երկու ձայնավորների միջև, ինչպես՝ բանիւ, ամաւ, քնով..., բայց n, r աննախանձներից հետո մնում է բ, ինչպես բառասկզբում, օրինակ՝ հարբ. գառամբ, ուր այդ բ-ն գոյություն ունի գործիականի հոլովի համար նաև աննախրխոնեներում -bhiḥ (հոդնակիում), հունարենում -phi (եզակի և հոդնակի): Վրացներենում կան մակրալիական իմաստով գոյականներից առացված գործիական հոլովաձևեր, ինչպես igurdiv «կողքի վրա» (gwerdi «կողք»), dziv «ուժով» (dzali «ուժ») և այլ նման հայոց հազիւ և նմաններին կազմությամբ, որ պիտի ենթադրել որպես պատահական նմանություն:

*Հնդեվրոպական առաջնային dh-ն բառասկզբում ներկայացված է հայոց դ ձայնեղ պայթականով, ինչպես՝ դնիմ (եզի «դրի», դիր)=սանս. dhā- արմատին (ներկա dá dhāmi), հուն. thē- (tithēmi), սլավ. дкь-ть և այլն: Դուռն=սանս. dvár, իրան. dvar, հուն. thýra, սլավ. двьрь, գերմ. doûr.., դուստր=սանս. duhitár, հուն. thygátēr, սլավ. dŭšti, գերմ. daúhtar և այլն: Բառամիջում *dhj հայերենում դառնում է ջ (համմս. մէջ և սանս. mádhyaḥ, լատ. medius): Այդ դրությամբ ունենք նաև դեղեւիմ «գնա ու դնեն եմ շարժվում», որը կրկնությունն է -դեւ պարզից, ինչպես սանս. ունի dhu- (dhunoti «երերում է») և կրկնակի dōdha-vīti «առանց ճոճվում է»: Բայց ինչպես ճիշտ կնկատվի նշում է Մեյեն, հայոց դեդեւիմ բայի միջին d բաղաձայնը կարող էր պահվել սկզբնական dh-ի ազդեցության տակ և ոչ թե արտացոլել հնդեվրոպական հնադույն դրությունը, ինչպես սանսկրիտներենում:*

Հնդեվրոպական g'h քմայինի (պալատալ) ձայնեղ ասպիրատը բառասկզբում անդրադարձել է հայոց ձ (dz) բաղաձայնով, համապատասխանելով սանս. h, ավեստ. z, հին սլավ. z, լատ. ž, հուն. χ, լատ. h, գոթ. g: Օրինակ հայոց ձիւն=հուն. chiōn, հայոց ձմեռն=սանս. hēman, հուն. cheimón, cheimeria, լատ. hiems, իրան. zima, հին սլավ. zima, լիտ. žēmà, խեթ. gimanda և այլն: Բայց

ձայնավորների միջում այդ հնդեվր. g'h-ն տալիս է հայոց z (ղ), ինչպես դեզ, դիզանիմ=առնակ. dehí (=kyra, groyда), ավեստ. (uz-)daēzō «կուլա, կուռակում», հուն. toîchos, գոթ. daigs «խմոր»: Ինգալին (n, m) նայ առնանուններից հետո հարևնում նույնպես ունենք *g'h=dz (ձ), ինչպես՝ բարձր=առնակր. brhánt-, ավեստ. bərəzant—«բարձր», հին վերին գերմ. berg «լեռ, սար», կամ թե հայոց իճձ (=мне)=առնա. māhyam, լատ. mihi, բայց բեզ ձևի մեջ ձայնավորների միջանդում ունենք ոչ թե ձ, այլ զ: Համեմատել նաև հայոց իճձ „леопард" բառը առնակրիտների sim'há—«առյուծ» բառի հետ, որոնք առացվել են հին *sing'ho- ձևից: Ի միջի այլոց ինգալին (n, m) և նայ (ր, ղ) ձայնորդներից հետո ազատվող շփական z (z) բաղաձայնի վերածվելը պալեաշփականի (աֆրիկատ) ձ (dz) բաղաձայնի շարունակել է իր այդ միտումը նաև հետագա պարսկական փոխառությունների մեջ, երբ, օրինակ. հին varza, ganza և նման բառերը հայերենում դառնում են վարձ, գանձ և այլն, ապինքն՝ z (z) դառնում է ձ (dz):

Հնդեվրոպական հետնալեզվային ձայնեղ gh (g^{w}h) առալիտաբար հայերենում երկու•կերպ է արտահայտվում: Երբ դրանից հետո առաջնաշարքային կամ քմային (պալատալ) ձայնավոր չի գալիս, այդ դեպքում հայերենում ունենք գ, օրինակ՝ գան=առնա. ghanáh «բիր, կոպալ» (ghāta «գարի, հարվածե»), ghnánti «գարկում են», հուն. phónos «սպանություն», սլավ. гокить..., կամ մեզ=առնա. megáh «մեծ», հին սլավ. mīgla („мгла"), լիտ. miglà, հուն. omichlē: Իսկ երբ այդ gh-ից հետո գալիս է քմային (առաջնալեզվային) e կամ i ձայնավոր, այդ ժամանակ հայերենում ունենք ջ (dž), ինչպես՝ ջեր=առնա. hárah, հուն. théros, «ամառվա տաքությունը», ռուսաց жар և այլն. կամ՝ ջիղ=լիտ. gýsla, հին սլավ. žila „жила": Ձայնավորների միջև այս ջ աֆրիկատը կորցնում է իր հպականությունը և դառնում շփական ժ ինչպես՝ իժ=առնա. áhiḥ, ավեստ. ážiš, համեմատել զ (z) շփականը առաջացած ձ (dz) աֆրիկատից, երբ վերջինը (=հնդեվր. g'h) գտնվում է ձայնավորների մեջ:

Ինչպես այս կապակցությամբ ճիշտ դիտում է Մելիեն, հետնալեզվային բաղաձայն պալեաշխականները e և i ձայնավորներից առաջ, որ լինում է այդ լեզուների արևելյան խմբի մեծ մասի մեջ, առաջացնում է այդ քմայնացած հետնալեզվայինների վերածումը g (c) կամ ջ (č) կիսապալեաշխականների (աֆրիկատների): Համեմատել այս տեսի է ունենում միայն հնդեվրոպական ձայնեղ աս-

պիրատի (gh) նկատմամբ, որը քմայնանալով դառնում է չ և ծ, նայած դրանց պայմաններին՝ իսկ հնդեվրոպական g (g^{w}) և k (k^{w}) պալեթական հետևակզվայիններըը հայերենում մնում են նույնպես պալեթական:

3. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱՐՋ ԼՈՒԿ ԳԱՑԹԱԿԱՆՆԵՐ—p, t, k', k (k^{w})

Սրանց զարգացումը հայկական հողի վրա առնում է գնալ այդ պարզ պալեթականների ասպիրացիա, եթե չհաշվենք, որ k' հայերենում, որպես հնդեվրոպական արևելյան լեզվախմբում, առաջիս է u (s), ինչպես՝ սիրտ=հնդեվր. k'erdi *(սլավ.* сердце, *լիտ.* szirdis, *հուն.* kardia...), տասն=հնդեվր. dek'mi *(սլավ.* десять, *հուն.* deka, *լատ.* decem..): *Իսկ հնդեվր.* p, t, k (k^{w}) *պետք է դառնային* *ph, th, kh, *որոնցից վերջին երկուսը մնում են իրենց զարգացման այդ աստիճանին (իսկ գերմաներենում դրանք դառնում են հետագայում և շփականները), իսկ* *ph *խուլ ասպիրատը ապրում է հաջորդ զարգացումը, դառնալով* h *և միատեսակ դրանից էլ գրվիլ, իրըև հետևանք հայոց ասպիրատների թուլ հպակառուցքյան:*

Այսպիսով, մենք ունենք՝ լրացնեմ *(արմատն է* լիր-*) =սանս.* riṇákti, *լատ.* linquit *«թողնում է», հին պրուս.* -linka *«մնում է» (հայոց* եղիք *«թողեցք»=հուն.* elipe*) կամ հայոց* բ=*անգլոս.* the, *հին սաքս.* the *«որ» լիտ.* te *և այլն, թեպետ վերջին օրինակի (*բ, գ*) կա և վրաց* thu *«եթե» (համմտ. նաև հայոց* թե-թուլ-ք*) և խեթերեն* ta *նույն իմաստով: Իսկ հնդեվր.* p>ph>h *(>գերմ.) ունենք հայոց* հուր=*հուն.* pūr, *ումբր.* pir, *հին վերին գերմ.* fiur, *խեթ.* pahhur *(անտ.* pahvenas*), հայոց* ոտն=*հուն.* póda *(ուղղ. հ.* poús*), այնինչ նույնպիսի* հինգ=*լատ.* pes *(*pedis*) «ոտ», սանս.* padám *«հետք», հուն.* pedon *«դետին, հող» նման հնչյունափոխությամբ, այսինքն «հ» հնչյունի անկմամբ, ինչպես ենթադրվում է հայոց* հեղում=*լիտ.* pilu *«հեղում եմ, թափում եմ» և հայոց կրկնակ* ողող-եմ, *որի արմատը եղել է* *հող- *«թափել»: Նման հընչյունափոխական միատեսակ կա և հայոց* հինգ *և յիսուն բառարմատի (հինգ-* ‖ *ինգ) մեջ, որն ազգակից է առնս.* panca, *հուն.* pente *և նմանների հետ:*

Ինչպես տեսնում ենք հինգ>*հնդեվր.* *penke *ձևից (լիտ.* penki*) հայերենում «ն» (*n*) անպայմանից հետո ունենք* գ *(*g*). այնինչ սպասվում էր* բ *(*kh*). ըստ օրենքի: Դիտվում է, որ անգա-*

ձ(ննեերից (n, r) և նաև (r, l) ստնահանեերից հետո հնդեվր. k-ն դառնում է հայերենում g, իսկ t-ն դառնում է d. ինչպես՝ ինգ<հընգ-նեվր. *penke (լիտ. penki), արգելում=հուն. arkéo, լատ. arceo, մարդ=հուն. brotos (<mrotos<mort-os), ռուս. с-мерт-ный, արդ «ձև»=հուն. artus, «հյուսվածք», լատ. artus, սանս. ṛtúḥ և այլն:

Ա'մանգամում e կամ i ձայնավորների առաջ հայոց ք (kh) բաղաձայնը չի առանում (այդ բանը լինում է միայն gh-ից հետո), ինչպես՝ քերիմ=հուն. keirō, հին բարձր գերմ. sceran «խուզել», խնթ. kwer- «կարել, խուզել»:

Հնդեվր. p բառամիջում, ձայնավորների միջև, դառնում է հայերենում ւ (w) կամ վ (v), ինչպես՝ եւ (ew)=սանս.—ápi «հնուչպես, «հետո», հուն. epi հետո», թաթաւիմ (=погрузить, окунуть) կրկնավոր բայը իրեն բաւ արմատով=հին սլաւ. топить. հովիւ <*owi-pā (համմ. սանս. avi-palā-, gopā և այլն): Մենք արդեն գիտենք, որ հնդեվր. -bhi թեքուլքը գործիական հոլովում ձայնավորներից հետո դառնում է ւ (w), ինչպես ամառ, արտիւ, գետով: Այստեղ նմանութեամբ ևս կմատանշենք ուրարտական լեզվի b բաղաձայնի նման վերածվելը հետագա հայ բառերի և թեկնա ձևերի մեջ v (w) հնչյունի, ինչպես Biaina>վան, abilidubi>ավել արի (ավելացրի), ebani «երկիրը»>աւան (երաց. ubani «թաղամաս», մեզր. abani «տեղ»), անցյալ կատարյալ կրավորական և չեզոք բայերի 3-րդ դեմքի -abi>հայոց-ւ (uštabi=ընթացաւ, nunabi=նկաւ և այլն): Փ պալեթականը դուռ հայոց բառափոխութեան ժամանակ, օրինակ կրկնելու ժամանակ, դառնում է w (v), ինչպես՝ թաւթափել (=թօթափել), շաւշափել (շօշափել), սաւառափել (սօսափել):

Հնդեվր. p-ն դարձել է w նույնպես եւրն բառի մեջ, առացված լինելով septn ձևից (=лат. septem, սանս. saptá, հուն. hepta), քուն<*swapnos (=սանս. swápnaḥ, հին իսլ. suefn, հուն. hýpnos) և ութ (<*opto<octo) բառերի մեջ, ուր քուն և ութ բառերի ու (u) ձայնավորը գոյացել է *op>*ow>u փոփոխմամբ: Նման հնչյունափոխութիւն ունենք և ցաւր, մաւր, եղբաւր, արաւր, ծնաւղ բառերի մեջ, ուր հին -awr (-awl) ձևացել է նախկին -a-ϑr կամ ā-ϑl կոմպլեքսից, ուր ϑ (θ) դարձել է ph (f), նման հունական θ հնչյունի վերածվելուն ռուսաց f շփականին (Федор, Фома անուննների մեջ): Արդեն է նկել, օրինակ, լատ. frigus բառը, առացված *ϑrīgus ձևից:

Հնդևվր. p բառասկզբում r ձայնից առաջ, այսինքն՝ pr խումբը դառնում է *hr (hr)>r>er, քանի որ «r» ձայնասով հայերենը բառ չի սկսում և դրան սկզբից ավելացնում է մի ձայնավոր (e), ինչպես՝ երեց «ավագ, старшій" =լատ. priscus, կամ երեխ=հուն. prérō (նույնիմաստ), ուր միջի „r" օրինաչափորեն դառնում է ւ (w): Համմ. բառասկզբի tr- կոմպլեքսի նման էվոլյուցիան երեք բառի մեջ, առաջացած հնդևվր. *trē- =սանս. tra'gaḥ, սլավ. trije, հուն. treīs, լատ. trēs ձևերից:

Հնդևվր. t վերջին վանկի ընկնող ձայնավորի և նախորդ վանկի ձայնավորների միջև դառնում է հայերենում y, նման r-ին երկու ձայնավորների մեջ, որ դառնում է w: Այդպես ունենք՝ ապա-յ «նա ապում է», բերէ (<bere-j) «բերում է» =սանս. bhárati, ուր -ti վերջավորությունը դառնում է հայոց -y: Այդպես նաև հոգնակի 2-րդ դեմքում -te դառնում է հայոց -ք, ինչպես՝ ապայք «ապում եք», բերէք «բերում եք» =հուն. phérete, հին. սլավ. berete, նմանապես հայր=հուն. patēr, մայր=գոթական mater, կամ բույ=հուն. phátis: Հնդևվր. -nti բայական վերջավորությունը հայերենում, ինչպես և գերմաններենում, կորցրել է վերջին -i մասը, ինչպես նե=սանս. sánti, գոթիական enti..., կամ հուն. „брод" բառի մեջ, որ եղել է ponti=առաս. путь, լատ. pons, pontis «կամուրջ» (արմատն է pont-), կամ բառն (<*գիսան) =բնաւորական հունարենում vikati, լատ. viginti և այլն, ուր wi- կրճատ ձևն է dwi- «երկու» (>հայերենում եր-<wi), իսկ -սան «տասն» (<tsan ձևից):

Հնդևվր. p, t, k խուլ և պարզ պայթականները v բաղաձայնից հետո, այսինքն՝ sp, st, sk կապակցություլան մեջ, հայերենում մեծ մասամբ (բացի sk-ից) պահվում են, չեն ենթարկվում ասպիրացման (շնչեղացման): Այդպես են սպառնալ, որի հանդեպ ունենք լատ. sperno «մերժում եմ, արհամարհում եմ». qqbum= լատ. vestis, և ընդհանրապես -ստ (պահնատ, փախուստ) ածանցի մեջ, որ կա և առաներենում -ость ձևով (бедность...), խեթ. -asti (dalugasti «երկարություն»), սոխը=լատ. sterilis, հուն. steīra և այլն:

Իսկ sk-հնչյունակոմպլեքսը հայերենում փոխվում է և դառնում g (c), ինչպես՝ գույ=հուն. skýlaks, գիլում=լիտ. skeliù, հին իսլ. skilja «ճղել, կտրել եմ», խեթ. iskallai „расщеплет, разрезает" (արմատն է skal-), հարցանիմ=սանս. pṛcháti «հարցնում է», լատ. poskō (1-ին դեմք եզակի), հին վ. գերմ. forscōn

(անորդ. դերբայ) և այլն։ Ըստ այսմ նիթ հնդևր. sk կոմպլեքսը ձայնեղանալ և դառնալ *zgh, ապա դրա հայերեն անդրադարձումը կլինի ոչ թե ըզգ, այլ դրա ձայնեղ տեսակը ըձձ և ինքնազբոսնում է, որ հայոց մոզի=μοσχίον (moschion) ճիշտ ստուգաբանությունը պիտի տար հայերենում նախ *մոձի, որ դառնում է մոզի, որովհետև ըձձ աֆրիկատը ձայնավորներից առաջ (կամ միջև) վեր է ածվում ըզ՝ պարզ շփականի։

Հայոց ոսկր բառը իր սկ (sk) մասով համապատասխան է նախկին (հնդևր.) -st(h)- կոմպլեքսին, նկատի ունենալով սանս. ásthi «ոսկր» և հուն. նույնիմաստ ostéon բառերը։ A. Meillet-ի մեկնաբանությունը բառամիջի t-ի մասին, որ հայերենում վեր է ածվել ըթ՝ բաղաձայնի, օրինակ, երկոյր, ծաթիօր և նման բառերի մեջ, սխալ էր։ Նախ հայոց -ոյթ բառակազմական մասնիկը ըստ իս կարող է և հնդևրոպական ծագում չունենալ, ինչևիցե դա փոխառություն լինի սեմական (ակկադական) -uth ածանցից (օրինակ šarr-u «թագավոր», šarr-uth-u «թագավորկը, թագավորություն»), իսկ «ծանոթ» բառի «թ» բաղաձայնը ոչ մի կապ չունի հունարեն „t"-ի հետ agnōs, agnōtos բառերի մեջ, այլ առաջացել է «չ» բաղաձայնից ճանաչ իմ <*ծանաչեմ բառի մեջ, երբ այդ ածանց դերազանցիկացիայի է ենթարկվում (չ>թ և հավելացնելով w տալիս է երկբարբառ (дифтонг) -aw (-աւ), որով առնչվում են բայարմատներից կամ բայարներից դոյականներ, ինչպես՝ ամաչեմ—ամաւթ, աղաչեմ—աղաւթ, արածեմ—արաւ (ծ>ս), զգածիմ «հագնել» (արմատն է (զաձ-) -զգաւթի, դառնեմ (արմատն է զիս-) -զիւս, մատ-չ-իմ-մատաւս և այլն (տե՛ս իմ „О внутренних закономерностях развития армянского языка, Ереван, 1952 г., էջեր 17—18)։ Նմանապես սխալ պիտի համարել հնդևրոպարաններին այն պնդումը, որ բառասկզբում հնդևրոպական k^w վեր է ածվում հայերենում ըձ (ձ-իմ, ձի-գան) կամ խաղաս վերանում, ինչպես ո ըոչ և c^*իս (գ-ի) ընչ բառերի մեջ, առաջացած k^wo- և k^wi- ձևերից (տե՛ս Մեյե, Esquisse-ը, էջեր 33—34)։ Այդ վերջին արտառոց ձևափոխության մասին կարդում ենք դեռ Brugmann-ի մոտ (Grundriss, II, էջ 772), որը Հյուբշմանը հարցականի տակ է դնում (Arm. Gr., էջ 481)։

---

[1] Հնդևրոպական t բաղաձայնի այս և նման սխալ անասրանությունը հայոց բառերի մեջում ասիկել է Ա. Մեյեին ի վերջո ավելացնել.— „Cette question du traitement de i.-e. *t* à l'intérieur du mot arménien est encore obscur" (Esquisse, էջ 33)։

Հայերենը հնդիրանական լեզուներին պես իր նյութով բավականին հավատարիմ է այդ խուլ շնչեղների գոյությունը, մանավանդ ph *և* kh, *որոնք հայերենում ներկայացված են փ և խ բաղաձայններով՝ իր միջի այլոց հնդեվր.* kh *այդ ասպիրատը չի ունենալ այն* w *էլարխո-վիլարթ հավելումը, որ հատուկ է մյուս հնահնդվոլին բաղաձայններին* (k—k^{w}, g—g^{w}. gh—g^{w}h)։ *Թողնելով խուլ* th *ասպիրատի խնդիրը, որ, ինչպես Ա. Մեյեն է ասում, դեռ պրոթևմատիկ բնույթի է, մենք այստեղ նշենք միայն շրթնային և հնահնդվոլին խուլ ասպիրատների* (ph, kh) *փոխհարաբերությունը անակրխտանքներում* (=ph, kh), *իրանքներում* (=f, x), *հայերենում* (փ, խ) *և հունարենում* (=φ, χ)։ *Այդ ասպիրատները նույնությամբ հանդես են գալիս բառի մեջ թե՛ սկզբում, թե՛ միջում և թե՛ վերջում։ Կարևոր ենք համարում բերել հետևյալ հավասարումները—*փայլ, փայեմ, փաղփաղիմ, փողփողիմ *և մյուս կոմիից առնս.* phalguh *«փայլը», հուն.* φαλόνη *«փայլեցնում էր», փրփուր= հուն.* a-phrós (id.), լափ-*եմ=հուն.* laphýssō, *հին բ. գերմ.* laffan (id.), փուք, փչեմ=*հուն.* phȳsa (φῦσα) *«փուք», առնս.* phut-karaḥ *«փչելը, սուլելը», լիտ.* pusiú (p ‖ ph *փոխանցումով*), փուլ, փլանիմ=*հուն.* spállō, *լատ.* fallo (?), *լիտ.* pūlù, pulti, *գերմ.* fallan (*sph ‖ *ph ‖ *p *փոխանցումով*)։

Բերենք հնդեվր. kh=*հայոց* խ *համապատասխանության հավաստումները, խախանք «քահքահ ծիծաղ»=առնս.* kakhati *«ծիծաղում էր» (<*khakhati), հուն.* kacházo (<*chacházō) „смеюсь расхатисто", *հին սլավ.* хохот, *որին հին վ. գերմ.* huoh *«ժպիտ, ծիծաղ», լատ.* cachinnus, *«խռմփոցներ, կծում եմ»=առնս.* khād-*«կծկել», լիտ.* khándu (id.), *մուխ «ծուխ»=հին իռլ.* múch *«ծուխ», միջ. բ. գերմ.* smouch (id.), *հուն.* smýchō *«կիպում եմ, ոչնչացնում գանգատ կրակով»*[1], *ուր անդի է ունենալ* sm ‖ m *հնչունական փոխանցում (ասոներնացիա), այդպես նաև* ցախ=*պարսկ.* šāx (<*kšāx), *առնս.* çākhā- *«ցախ» և սլավ.* coxa (<*kakh) *«ծռած հյուղ», ուր ունենք* *ksākh- ‖ *kākh։

Հայոց th=*հնդեվր.* *th *համապատասխանության համար ունենք առայժմ մի լավ օրինակ՝ հայոց* որթ *(անս. արթու) «հորթ»,*

[1] *Այս առնչությամբ ընկնում է իմը, որը ավել են մուխ բառի նոր պիսիխլատիկ կազմության՝ մուխ բառից։*

теленок»=սանսկր. pṛthukaḥ «փոքր կլեզանին», որի հանգնակ գավառական ներր (>forth) ձևը թերևս ավելի հին է իր սկզբնական «ո» հնչյունով։ Ենթադրվում է նաև, որ հայոց հուն բառի վերջում եղել է նախնական th, որովհետև ունենք սանս. pánthāḥ, սլավ. potь „путь“, լատ. pons (սեռ. pont-is)։

Հնդեվրոպական «նախալեզվի» պալեմական բաղաձայնների և դրանցով կազմած արմատների ընդհանրությունը (ազգակցությունը) մարմաջը սալեաքմանն մեջ էր դրում մինչև իսկ այնպիսի գիտնականի ինչպիսին Ա. Մեյեն էր։ Նա, օրինակ, իր դրքում բերում կամ կրկնում է ուրիշների այնպիսի «ընդհանրությունն» (ազգակցությունն), ինչպես հայոց սպառնալ „угрожать“ և լատ. sperno «արհամարհել», որովհետև հնչյուններով նման են, իսկ իմաստական տարբերությունը կարելի է անտեսել։ Այդպես նաև հայոց խաղամ «շարժվում եմ» կապակցվում է հուն. chalaō «թողնում եմ, բաց եմ թողնում», մուխ-մխեմ «շիկացած երկաթը գրի մեջ տանել պնդացնելու համար» կապակցվում է հուն. muchós բառի հետ, որ նշանակում է „самое внутреннее или удаленное место, самая внутренняя или задняя часть чего-либо, углубление“ (նկատ. Ա. Բուդդեի կողմից տարրերված այս առանձնությունը Հյուբշմանը դնահատել է „durchaus unsicher, Arm. Gr., էջ 475) և այլն, և այլն։

Պալեմական բաղաձայնների վերլուծման հետևանքով Ա. Մեյեն տալիս է մի ամփոփիչ տախտակ, որը կարևոր ենք համարում բերել այստեղ, փոխելով միայն նրա տերմիններըՙ dentale դարձնելով առաջնալեզվայինն, palatalèՙ միջնալեզվայինն և gutturale, որ տառացի նշանակում է կոկորդայինն, դարձնելով հետնալեզվայինն։

	շրթնային	առաջնալ.	միջնալ.	հետնալ.
Ձայնեղ հնդեվրոպականներ	h (w ւ)	t‘ թ	s ս	k‘ ք
Ձայնեղ ասպիրատներ	p‘ փ	t‘ թ	—	x խ
Ձայնեղ հնդեվրոպականներ	p պ	t տ, c ծ	c ծ	k կ
Ձայնեղ ասպիրատ.	b բ (w ւ)	d դ	j ձ (z զ)	g գ ǰ ջ (žə)

Այս նշված հնչյունները կամ սկսում են բառերը և կամ ձայնավորների միջև են գտնվում. իսկ եթե կա և երկու դեպքն էլ, ապա միջձայնավորությունը դրված է փակագծերի մեջ։

Հնդեվրոպական շփական *s բաղաձայնը։ Հնդեվրոպական լեզվում եղել է շփական *s բաղաձայնը, որը կարող էր լինել նաև ձայնեղ (z), նայած թե դրան ինչ է հաջորդում (*zb, *zbh, *zg, *zgh և այլն)։

Բառասկզբում ձայնավորից առաջ այդ *s-ն հայերենում ոչ-վորթարար չի ներկայացված, բայց անշուշտ առաջ եղել է հ, ինչպես ունեն հարևան իրանական և հունական լեզուները: Օրինակ, աղ, աղա=լատ. sal, սլավ. соль, հուն. hals., գոթ. salt, եւրբ=սանս. saptá, ավեստ. hapta, հուն. heptá, լատ. septem և այլն: Բայց բառասկզբում մնում է նաև հ, ինչպես տեսնում ենք հիմ բառի մեջ, ազգակիցներն են՝ սանս. sánaḥ, ավեստ. haṅō, լիտ. sẽnas, լատ. senex: Ենթադրվում է, որ հիմ բառը, որ իր մեջի ի ձայնավորով դառ հայկական բնույթ է կրում (<*e-ից), ազդվել է իրանականից (ավեստ. hanō), որովհետև սկզբի հ-ն շնչականը չպիտի լիներ: Այդ իհարկե կարող էր լինել, որովհետև նման դեպք տեսնում եմ և հայոց հաճ առատ բառի մեջ, որը լատիներենը ունի anus ‘պառավ կին’, հին վ. գերմ. ana ‘տատա’, պրուս. ane ‘պառավ մարդ’, բայց հայերենի հարևան խեթերենում՝ hannas ‘տատա’, որը կարող էր իր հ-ով ազդել հայոց լեզվի վրա: Բայց մենք ունենք դեպքեր, որ հայոց բառասկզբի հ-ն հընչյունը չի արտաբառնում իր ծագումով, այլ միանգամայն նոր է, առաջացել է հայկական հողի վրա, ինչպես նմանը եղել է և հետագա բարբառներում գրաբարի հանդեպ (հնկնիր<ընկնիր, հարբել<արբել...): Այդպիսի զարգացած նոր հ-ն ունեն հոտ=լատ. odor, հուն. odmē, հում=հուն. ōmós, սանս. āmáḥ, *haw ‘թռչուն’=լատ. avis, *haw ‘պապ’=լատ. avus (հին auos), որը թևրևս իր նոր հ-ով ազդված լինի han ‘տատա’ բառից: Հայոց հ-ն հնչյունը, ինչպես երևում է նրբևին թուլ է արտասանվել, և, օրինակ, անհայտացել է կրկնավոր հեղ-եղ (*>հեղ-հեղ), հեծծծմ, հևկևկամ և նմաններուի մեջ: Այդպես և հոգի (առացվել է շոգի-ից), որը դառնում է ոգ, ոգի կամ հատանում բայի hat արմատը ազում է -at ձևի (կիս-ատ, կտն-ատ, ձևն-ատ, պրուս. „с заячей губой“), վող-ար ‘վող վիշտ’ (համմ. վող հարի), զատ (զատանել (>զհատ (-զհատանել), յատել), (<յ-հատել (յիսուն<յ-հիսուն<*հինգ-հիսուն, յօրաց ‘խորթ հայր’<յ-հօրաց, յետ<յ-հետ և այլն:

Բառի մեջ միջձայնավորյան հնդհլր. *s հայերենում նուլնպես կորչում է, դառնալով սկզբում երևի հ-ի: Այդպես են՝ նու=հուն. nuós, սանս. snuṣā, սլավ. снъха, ռուս. сноха, վերին հին գերմ. snura, լատ. nurus, բոկ=լիտ. bãsas, վ. հ. գ. bar գարուն=հուն. Ғєαρ (wear), լիտ. vasoré, սանս. vasantáḥ, ուր հայոց ձևը առացվում է *wesr>*ge(h)ar-<*gar-ից. ագիւն=սանս. asṛk, հուն. ear ‘արյուն’ և այլն, ուր հայոց ar- արմատը (-iwn ածանց

է) առաջացել է *esr- հին ձևից, որը դառնում է նախ *e(h)ar-, հետո՝ *ar. համեմատել նաև բոյր բառը, որի հնդեվրոպական նախաձևն է *swesōr>*swehur>*sweur>բոյր:

Հնդեվր. *s հնչյունը ենթարկվել է հայոց լեզվի մեջ հետևյալ փոփոխություններին:

1. Երբ դրան ունենք սեպական s-ի հետ, որ առաջացել է երկու ss հանգիպումից, ինչպես՝ ես=համապատասխան essi, լատ. es, սլաւոներեն՝ ess, որը հին բանաստեղծների մոտ համարվում էր երկար վանկ:

2. *t խումբ պալեթականից առաջ, ինչպես՝ առնդջ=հուն. steira, լատին. sterilis, *k"h-ից առաջ, ինչպես սխալիմ=սանս. skhalati «սայթաքում է, երկրում է, սխալվում է», հուն. sphállō «վայր եմ գցում», *ph-ից առաջ՝ սպիւռ=հուն. speiro.

3. Ընդալինից հետո, որ ընկնում է -ուս=սանս. áṃsaḥ, գոթ. ams, ամիս=լատ. mensis.

4. *p-ից հետո, որն ընկնում է -սուս=հուն. pseūdos «կեղծ», եփեմ=հուն. hépso. Ա. Մնչեն հայոց երգա բառը ցանկանում է կապել եբիւիմ=հուն. *prépō* արմատի հետ, երբ. eres<*prep-s, բայց սա սխալ է, քանի որ հայոց eres-ը ավելի մոտ է խոթեներեն ēssri (ēsri, ēssari) „форма, вид, образ" բառին, որի գրաբարյան է հայոց *eres* բառը:

Հնդեվր. ձայնեղ պարզ պալեթական *d-ից առաջ *s շփականն ևս ձայնեղանում է, դառնալով z, բայց քանի որ այդ „d"-ն հայերենում խլանում է և դառնում «ս», ուստի ամբողջ zd կոմպլեքսը հայերենում արտահայտվում է նուշնակս խուլ ձևով սս, ինչպես հայոց nuսս=հուն. ózos, գերմ. ast (բոլորը *ozdos ձևից), ցիսս=սանս. nīḍáḥ (<*nižđas-ից), լատ. nidus (<*nisdos-ից), հին վերին գերմ. nest „Nest", սլավ. г-нездо: Հայերենին ներսում միայն մի դեպք ունենք, երբ «ս» շփականը հետընթաց ազդմանությամբ ենթարկվում և ձայնեղ պալեթականից առաջ դառնում է «զ», դա սկիս- արմատն է (սկս-անիմ), որ տալիս է սկիզ- սկիզբն բառի «զ»-ից առաջ:

Հնդեվրոպական *s աւլականը „r" ձայնորդից հետո, այսինքն rs խմբակցության մեջ, հայերենում նման հնդիրանականին և բալթոսլավոնականին արտահայտվում է շչական š շփականով: Այդ rš կոմպլեքսը հայերենում կարող է վերածվել նաև ŕ (ռ) կոշտ ձայնորդի: Այդպես ունենք—բարշամիմ և բառամիմ «քաշտամում եմ», вяну=հուն. térsomai «չորանում եմ», գոթ. ƀaursus «չոր», սանսկր.

tṛsyati «ծարաւում է», գաղղ.=սանս. hṛšyati «միշտ քաղցում է, մազերը ցից-ցից են լինում, վախենում է, ուրախանում է», hárṣate «ուժով ուրախանում է». ghṛšhú «ցնցված, excité», լատ. horrēre «սոսկալ», քաղդեմ.=սանս. kárṣati, ավեստ. karšaiti (id.). մոռանալ=սանս. mṛšyate «մոռանում է», լիտ. miršti «մոռանալ», վ. գերմ. ars, հուն. órros (<órsos), խեթ. arra-.

Երբ *š-ն *k պալաթականից հետո է, նուչնական դառնում է š հնդեւրոպական և լիտուա-սլավոնական լեզուներում: Հայերենում կարծես թե ունի է ks, որովհետև գրան, ինչպես և sk համալիքի դիմաց ունենք c (g), ինչպես վեց, հուն. *wéks, լատ. sex և այլն. ghū=հուն. iktinos (kt=սանս. kš), բայց հայոց այս «ց»-ի դիմաց (վեց բառում) ունենք նաև վիշտասան, ուր «շ»-ն կորցրած լինելով պալաթական նախկին «թ» մոմենտը (թշ>շ), վկայում է հնագույն շշտական «չ»-ի մասին, այսինքն որ եղել է *վիչտասան, ինչպես ունենք շշտական «չ» ապ բառի մեջ, երբ արիշենների նայած (հուն. árktos, սանս. ṛkšah, լատ. ursus) պիտի ապահովինք «*արձ»:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՁԱՅՆԱՐԴՆԵՐԸ

Ձայնավորները: Հայոց լեզվի ձայնավորներն են ա, ե, է, ի, ո, ու, ը, որոնցից ը ձայնավորը ինքնուրույն չէ, գրաված է միշտ անշեշտ վանկը, վանկատար ըստ. ընդ. ձևական բառերի (նախդիրների) և արտասանվում բաղադրիչների որոշ կոմպլեքսների մեջ՝ արտասանության հնչառության համար: Ի ձայնավորը ասաջ եղել է դիֆտոնգ էլ, իսկ հետո ասաջնալեզվային միջին բարձրացման փակ ձայնավոր, որի բաց (լայն) անասնին է ե:

Ելպիսով, հնդեւրոպական մեր լեզվանասվածքի համար կարևոր են հինգը՝ ա, ե, ի, ո, ու, որոնցից ի և ու կատարյալ համապատասխանում են հնագույն ձայնորդների (առնանունների) կապակցությամբ, իսկ ա, ե, ո ձայնավորները արտահայտում են հնդեւրոպական a, e, o թե՛ կարճ և թե՛ երկար: Հայերենը կորցնելով ձայնավորների քանակը, այսինքն՝ տևողությունը, կարճ և երկար անասնները, և ի տրիտուր ընդգրկելով ինտոնացիոն շեշտի դերը, պատահմանոյնով երկար ē և ō ձայնավորները հետզհետե դարձել են այնպիսի նեղ (փակ), քան կարճերը (e, o): Հնդեւր. *ā-ն տալիս է հայոց ա, ինչպես, օրինակ, ածեմ=սանս. ájāmi, հուն. ágō, լատ. agō: Հնդեւր. *ē-ն տալիս է հայոց ե. ինչպես՝ ծնր=հուն. gérōn: Երբ e ձայնավորը մասամբ ընդգրկված է հետևյալ ընդհատիչներից (n, m) առաջ, ապա այդ ե-ն դառ-

նում է ի, ինչպես ծին=հուն. génos, լատ. genus, կամ թե՝ իմ=հուն. emé։ Հնդևիր. o կարճ ձայնավորը (ŏ) դառնում է հայոց օ (o), օրինակ՝ հոտ=հուն. odmé, լատ. odor, իսկ ենթալինից առաջ դառնում է u (u), ինչպես հուն=լատ. pons, սլավ. путь։ Հնդևիր. ā-ի համար ունենք հայոց ա, ինչպես էր և ă-ի համար, օրինակ ամ-ա-ւ «առարկա»=սանս. sám-ā-bhiḥ «առարինեցրած», *ē-ն տալիս է հայոց ի, իսկ *ō-ն տալիս է հայոց ու, ինչպես՝ մի (մեծատևան ձևական բառ)=հուն. mē, սանս. má, ապր-ք=հուն. dōron, հին սլավ. darŭ (=дар)։

Հնդևիր. *ə (շշված) ձայնավորը, որի դոյությունը ձևակերպվում է հետևյալ համապատասխանությամբ՝ սանս. i=հուն. ă, լատ. ă, հայերենում հանդես է գալիս a ձայնավորով, լինի դա կարճ (ă), թե երկար (ā), ինչպես՝ սանս. pitá, հուն. pătér, լատ. păter... և հայոց հայր, ինչպես սանս. mātá, դորիական māter, լատ. māter... և նմանները համապատասխանում է հայոց մայր։ Բառամիջի վանկում այդ հնդևիր. *ə ձայնավորը ընկած է սլավոնական, բալթիկ դերմանական և իրանական, բայց և հայկական հետևյալ համապատասխանության մեջ՝ դուստր, գաթա-ավեստ. dug(ə)dā, հին սլավ. dŭšĭ, լիտ. dukter-, գոթ. dauhtar, բայց ունենք՝ սանս. duhi-tá, հուն. θυγά-τηρ (thygá-tēr)։

Ձայնորդները։ Հայտնի է, որ հնդևիրոպական *y, *w, *r, *l, *m, *n վեց ձայնորդները ունեն որակ կամ հատկություն՝ լինել ձայնավորի դերում, դիֆտոնգի տարրի դերում և բաղաձայն—մի տեսություն, որ արդարացվել է այդ լեզուների պատմությամբ և Սոսյուրի փորձով, բայց շատ կարևոր մի աշխատություն Դրանց ձայնավոր լինելու դեպքում, այսինքն՝ երբ երկու բաղաձայնների միջնադիրն են, առաջին երկուսը՝ y, w նույնանում են i և u ձայնավորների հետ, մյուսների առկ դնում ենք փորձով շրջագիծ՝ r̥, l̥, m̥, n̥.

Հնդևիր. *i ձայնորդը, լայն թե կարճ, նեղկատացված է հայերենում ի ձայնավորով, ինչպես՝ ելիք «էծողնց»=հուն. élipe և հայոց ցին=հուն. ikĭnos։

Հնդևիր. *u ձայնորդը, կարճ թե լայն, տրված է հայոց ու ձայնավորով, ինչպես՝ դուստր=հուն. thygáter, լիտ. dukter, կու „навоз"=սանս. gūthaḥ։

Հնդևիր. *r̥ ձայնորդը տրված է հայոց ար հնչյունակոմպլեքսով, ինչպես՝ արբի «ծամնցիր»=լատ. sorbēre, լիտ. surbiù։ Երկար r̥ ձայնորդը, որը վոկատրևն համարվում է այդ r հնչյունի և հա-

ջորդ *ə (շվա) ձայնավորի միացումը հայերենում հանդես է գալիս անորոշ. նա կամ համապատասխան է ար ձևով արմուկն բառի մեջ այլ լեզուների -īr ձևին (սանս. īrmah «արմունկ»), հին պրուս. ir-ձևին (irmo «ծուռ») և կամ ծագել *arə- ձևից, որ տալիս է հին սլավ. ramo բառը: Այդ հնդեվր. r ձայնավորը ունդուկցիայի ենթարկված մի այլ ձայնավորի հետ (°r) նույնպես տալիս է հայերենում ար. ինչպես՝ գառինք=հուն. warén, սանս. úraṇah (<*w°ren-): Հայերենի «ռ» կոշտ հնչյունը ալառեղ առացվել է «ր»-ից հետևյալ «ն»-ի ազդեցությամբ, ինչպես այդ պարզ երևում է դուռն-դրան-դռբ-դրաց... առնեմ—արարի և նման դեպքերից և առոգաբանությունից:

Հնդեվր. *l ձայնավոր ձայնորդը դառնում է հայերենում ալ, ինչպես ունենք գաղտ=լիտ.—vilti «խարել», նմանապես *ol «առաջին է ալ, ինչպես սալ «գարբինների պինդ քարը կամ երկաթը, наковальня"=սանս. çilâ «քար»: Այդպես և կաղին=հուն. bálanos, լիտ. gilė, հին սլավ. želadĭ, լատ. glans (glands-is) և այլն, առացված *g"alen-ից, ուր հայոց «կաղինձ»-ը պիտի լիներ հնագույն ժամանակ *կալին, բայց սնո. հոլ. kaŋŋoi, որից և կաղնի ծառը, ալևինքն հայոց «լ» հնչյունը եղել է փոփոխ e, i ձայնավորներից առաջ և ղ վելար (հետնալեզվալին) ձևով բաղաձայններից առաջ, ինչպես բացատրում է Ա. Մեյեն: Նման պատճառներով պիտի բացատրել ըստ խս—փայլ ‖ փաղ-փաղ-ել, թոլլ- ‖ թողուլ, ալ ‖ աղաւաղել, նշոլլ ‖ շողալ և այլն: Հետո պիտի ընդգծել, որ հին «ռ» ձայնավորը այդ հետնալեզվալին «ղ»-ից առաջ մեծ մասամբ դառնում է «ա» (Նեղոս, Բարսեղ, սանդ և նման բառերի մեջ):

Հնդեվր. *n և *m ձայնավոր ձայնորդները դառնում են հայերենում ան և ամ, ինչպես, օրինակ, քսան=բնատիպական (հուն.) wikati, ավեստ. vīsaiti, լատ. vīgintī, այդպես նաև հնդեվր. °n, °m>հայոց ան, ամ ինչպես՝ ամառն=հ. ի. գերմ. sumar:

Հին e, o, a ձայնավորները, որոնց վրա հավելանում են i, u, r, l, m, n ձայնավոր առնանառները, կազմում են հնդեվրոպական լեզուներում երկբարբառներ (դիֆտոնգներ): Հայերենում դրանք այսպես են ներկայացված—երգ=սանս. arkáḥ, սիրտ=հուն. kēr, գոթ. hairto, սանս. hárdi, աղտ «աղ»=գոթ. salt (գերմ. salz): երեսուն=հուն. triaconta: Արդեն նշվել է (էջ) ընդալին ձայնորդների հետ կազմվող երկձայնավորը (դիֆտոնգը), հաջորդ s-ի հետ, երբ այդ ձայնավորները արդեն հայերենում ընկած են, ինչպես՝ ուս=սանս. ámsaḥ, գոթ. áms, ամիս=լատ. mensis:

Նմանապես նշվել է հայոց աւծանել և աւձ բառերի w ձայնորդի ծագելը ավելի առաջ եղած հնդեվր. n-ից, բայց նման հընչյունափոխությունն չի եղել մեր գիւտ բառի մեջ, որը ցանկանում են կապակցել առնա. vindáti «գտնում է», լատ. findō «գտնում եմ» բայաձևերի այդ ներկա բնների „n" ձայնորդի հետ, որպես դիֆտոնգի տարրերի: Հայոց այդ գիւտ գոյականը w ձայնորդը առացել է գիտ (նկատ ենա գտաւ, գըտ-անե-ևմ) բայից գոյական կազմելու համար, ավելացնելով այդ w-ն արմատի կամ բնի ձայնավորի վրա, ինչպես մասնիմ բայից ունենք մասուս, հիսում բայից՝ հիսուս, յառնիմ բայից՝ յուսուս, արածնիմ բայից՝ արարուս և այլն (տե՛ս իմ О внутр. закон. разв. арм. языка, էջ 17):

Հնդեվր. *aį և *aų դիֆտոնգները հայերենում մնում են այդ պարզ գրությամբ, ինչպես, օրինակ, հայոց այծ=հուն. aiks (aigós), ապր «գիշերը իջնելու տեղ»=հուն. aũlis. Հնդեվր. *eų (*ew) և *oų (ow) դիֆտոնգը հայերենում անդրադարձել է ոյ ձևով, ինչպես՝ լոյս=հուն. leukós, loũssos, բոյծ «անունդ»=առնա. bhógah (հնդիրան. *bhaugas) և այլն: Մենք արդեն տեսանք, որ հայոց բոյր բառը առաջացել է հնդեվր. *swesor>*sweth)or>*sweur ձևից, որի դիֆտոնգն է eų (ew): Բուն հայերենի հարի վրա ոյ դիֆտոնգը համապատասխանում է ույ (=ույ) հնչյուններին, ինչպես հեղոյր «թափում էր», նման կազմությամբ հեղու բնից, ինչպես բերն բնից ունենք *բերեյր>բերեր կամ աղա- բնից՝ աղայր և այլն, թեպետ սեր բառի մեջ մեր «է» ձայնավորը (փակ ē) առացվել է eaj տրիֆտոնգից (=ti+ajr, որ ti- մասը, որպես բառամիացորդ կա նաև ան-կին և ան-նգնիք բառերի մեջ): Իրանեբեններից վերցրած բառերի մեջ «է» այդ ձայնավորը փոխարինում է aj դիֆտոնգը, ինչպես սեզ=պարս. tēγ (<*taiγa-), իսկ ոյ դիֆտոնգը փոխարինում է իրանական au (=պարսկ. ō), օրինակ, կապոյտ=իրան. kapauta, պահլևի kapōt: Ինձ թվում է թե նման հին փոխառության ժամանակ, բայց առաջատ-բարելական լեզվից, հին -ույթ ածանցի ոյ մասը իրեն յ հնչյունի հայտնության համար, այսինքն՝ ոյ=ույթ հնչեմամբ, ունենք նաև երևույթ, բնույթ, ձանձրույթ և նման բառերի մեջ (համեմատել առաջատար. šarr-uth-u «թագավորելը, թագավորության»):

Հայերենի մյուս դիֆտոնգները բավականին փոխված են և չեն համընկնում հնդեվրոպականների հետ: Օրինակ ea մասը կեսում «տարում եմ» բայաձևի մեջ, առաջացած -*ija նախնականից, որ կա մեկին *-ijo անբոլ հուն. biōnai ձևի մեջ, կամ թե ea մա-

ար առրիատի բնում (գործեաց, գրեաց...) կարող էր առացված լինել * is-ā նախաատիպից. կամ թե ea մասը ձեան հոլովածևից, որ կապված է *-ijon նախածևի վրա, նկատի ունենալով հուն. chiónos «ձյան» անուական հոլովածևը: Այդպես կարող են տարբեր ծագումով լինել և մյուս հալ դիֆտոնգածևերը. ինչպես՝ iw ձիւն բառի մեջ, որն արտահայտում է -ijo (կամ -ijō) ածգային ածանց (=հուն. chión, chióna), iw մասը միւս բառի մեջ (=մի+իւս), iw մասը իւր դերանվան մեջ, որը (իւր) առացված պիտի լինի նախկին *sewe-r կամ *sewo-r ձևից՝ համարժեք հուն. he(w)é կամ he(w)ós նույնիմաստ կազմութեան, ew>iw դիֆտոնգը այլևայլ բառածևերում՝ աղբիւր>աղբիվր, հիւս>հիւս «հյուս» բիւր>բիւր, առիւծ>առիւծ և այլն. իսկ ew դիֆտոնգը, որ սկզբնականն է ևթն, մեւք, ձեւք. արդեւք բառածևերի մեջ, միատեմ է առացել դառնալ eaw արդիֆտոնգ՝ ևաւթն, մեաւք, ձեաւք, արդեաւք և այլն:

Գալով բաղաձայն r, l, m, n, w, y առնառնականներին, պիտի նշել դրանց առանձնահատկությունը հայոց լեզվում:

*r բաղաձայնը բառի ամեն դիրքում հավերնում արտահայտված էր ճոնեմայով, միայն բառասկզբում ունի նախդիր (պրոթեմատիկ) որևէ ձայնավոր, ինչպես և հունարենում, որովհետև դրանք, ինչպես և շատ ուրիշ լեզուներ, չեն սիրում բառեր այդ r (r)-ով: Հետո, բառամիջում, ն (n) անդալիներից առաջ այդ «ր»-ն դառնում է կոշտ n, որը կարող է ինալ և այն դեպքում, երբ այդ հանգամանքը արդեն չկա: Վերջապես այդ r առնառնալը, որ հնում եղել է բաղաձայնից անմիջապես հետո, անդատելում է այդ բաղաձայնից առաջ: Այդպես ունենք, օրինակ, pīrāmi=առնս. bhárāmi, հուն. phéro, լատ. fero և այլն: Սկզբում՝ brbh=գոթ. riqis «աղջամուղջ, մութը», առնս. rájah «մութ տարածութեան», հուն. erebos, արև=առնս. raviḥ, արժան (<r-pṛṣ-an) «արծիվ»=լիտ. rūgiu, լատ. ruçtō, հուն. ereúgomai և այլն: Երեց «առաջ» (=լատ. priscus) և երեք (լատ. tres tpu...) բառերի սկզբի „e" ձայնավորը նույնպես նախադիր է, նոր զարգացած: rn կոմպլեքսում առաջին „r"-ն դառնում է ŕ (ռ), ինչպես գառն, առն «վայրի ոչխար» (=հուն. arneiós) և այլն, բայց դառն-դրան, ձմեռն-ձմերան և այլն: sr հին հնդկաևրոպական դառնում է հայերենում ŕ (ռ), ինչպես՝ քոռ «քրոջ»=հնդկեր. *swesr-os, առնս. svásre, առաս=առնս. srutiḥ, իռլանդ. sruth «գետ», հուն. hrutós «հոսող»: Դրափոխություն (մետաթեզ) անեն՝ արբ=առնս. çubhráḥ «պայծառ, մաքուր», փրկի=հուն. hidrós, լիտուա. swēdri, արտասուք (<*drak'u-)=հուն.

dákry, հ. վ. գ. trahan, երկաճ=սանս. grávā, լիտ. girnos, սլավ. жернов. Վերջին երկու բառերը — արտասովոր և երկան — «բռ»-ից առաջ ունեն նոր «բռ» նախադիր ձայնորդը: եղբայր (=սանս. bhrā́tā, լատ. frater...) և աղբեր (=հուն. phrḗr) բառերը ունեն թե՛ դրափոխություն (br>rb), թե՛ տարնմանություն (rb>łb) և թե՛ նախադիր e ‖ a ձայնավորները:

l հնդեվր. ձայնորդը հայերեն տալիս է լ (l), թե բառասկզբում և ձայնավորների միջում, ինչպես լիզեմ=հուն. leichō, լիտ. lẽžiù, լատ. linguo, գնում «ոլորում եմ, որորում եմ»=հուն. welù-sthē «ծռվել է, կռացել էր», լատ. volvō: Այդ հնդեվր. „l-ն բառամիջից առաջ հայերենում դառնում է ղ (ł), ինչպես՝ եղն- «եղնիկ»=սլավ. елень, հուն. ela-phos, հին իռլ. elit «մկների ալծ», բայց այդ «ղ»-ն տարածվում է «ռ»-ի նման և մյուս հոլովներում (եղին, եղինք, ինչպես՝ դառին, դառինք), ուր սպասելի էր «լ», համեմատել մեր բարբառների -ali «աղիս» ձևը ածանցավոր անալի (>ալանի>անլի>այլի), որ նշանակում է «ոչ աղիս: Հնդեվր. sl հայերենում լինում է լ կամ ղ, ինչպես ջիլ կամ ջիղ, որի դիմաց ունենք լիտ. gýsla, ռուս. жила. Այդ նույն sl բառասկզբում կորցնում է իրեն „s“ (u) բաղաձայնը նաև լու «լսած, հայտնի» բառի մեջ (լըս-եմ<լուս-եմ, անց. կատ. լու-ալ, հրամ. լո՛ւ-ր), որի դիմաց ունենք սանս. çrutáḥ, հուն. klytós, բայց բառասկզբի լու- մասը կարող է առացվել նաև plu- (սանս. plúṣiḥ «լուս, ալբ. pl'est «լուս» (?) և կամ blu- ձևից (—լիտ. blusà, ռուս. блоха, աֆղ. vraža «լուս»):

*n հնդեվր. ձայնորդի դիմաց հայերենը ունի բառասկզբում և բառամեջ ն, ինչպես՝ նիստ=սանս. nīḍáḥ, լատ. nīdus, հվգ. nest. նիհ=սանս. sánaḥ, լիտ. sẽnos, լատ. senex: Հայոց եղունգն պետք է կապակցել բուս Մեխի հուն. onyks (ὄνυξ), լատ. unguis, նույնանիշ բառերի հետ, համարելով հայոց սկզբի «ե» ձայնավորը նոր (նախդիր), իսկ «ղ» (հին ł) տարնմանության համար առաջացած «ռ»-ից, այնպես որ հնագույն ժամանակ եղել է *nung-n: Հետո, նկատվում է հնդեվր. *sn-ի վերածումը հայերենում պարզ «ռ»-ի, ինչպես՝ նուռ=սանս. snuṣā́, սլավ. снoха, հ. վ. գ. snura, հայոց գիհ=սանսկր. vasnám «գինի», հայոց գգենում «հագնում եմ»<z-ges-n-u-m) (արմատն է ges-<*wes):

Հին -*pn- կոմպլեքսը նախապատմական շրջանում դարձել է հայերենում -ո(-ն), ինչպես քուն=սանս. svápnaḥ, հուն. hypnos և այլն: Ուցիմ իր ուն- արմատով առացվել է *op-ne- ձևից, որի ձայնավորը (ուն-) այնպես է հարաբերում հնդեվրոպական ep-mi «վերց-

նում եմ», ինչպես nun-եմ բայը իր nun- վոկալիզմով վերաբերում է լիտով. ėd-mi՝ կամենալ, որ խնձրենում կա նույնպես et- «ուտել», որի et-(ed.) «ուտել» հայ և նման է ep- ‖ ap- «վերցնել» -es- ‖ as- «լինել», ekk- ‖ akk- «մոնենալ» և այլն: Լատ իս, հայց ուն-ել բայի արմատը «ունենալ, սեփականություն ունենալ» իմաստով ինքնս ամեն լավ լինի կապակցել խեթ. unattalla— «ամառատեղ» գոյականի հետ, ուր -atal(l)- ածանց է նման ռուսաց -тель մասնիկի (покупатель, создатель):

Հնդևր. *m բառասկզբում և ձայնավորների մեջ միում է հայերենում, ինչպես, օրինակ, միս=ատես. māṃsàm, գոթ. mimz, սլավ. męso, „мясо", իմ=հուն. emé: Հայոց միս բառի արմատն է mis, նկատի ունենալով լատ. mensis, հուն. mḗm, menós և այլն. „a" ձայնավորը նոր զարգացած հնչյուն է, ինչպես ունենք և ուրիշ դեպքերում: *sm կոմպլեքսը վեր է ածվում հայերենում պարզ „m"-ի, ինչպես՝ մի=հուն. mia (<*smia), որի արտկանը heis (հայոց ևզ «մեկ») առաջացել է *sem-s ձևից: Մն-ամ բայի արմատը (մն-) առաջացել է *min- ձևից, որն էլ հնում եղել է men- (mēn-), համապատասխան հուն. mén-ō, լատ. man-ere և այլն հնդևր. նույնարմատ բայերին:

Մենք ունենք -mn (անո. հ. -man) ածանց, որը հնդևրոպական է համարժեք սլավոնական -мя (знамя, племя, время) <-мен-, լատ. men (ceptamen, examen...), հուն. ma (անո. հալ. -mn-t-os) և այլն, ինչպես՝ ջերմն, դեղմն, սերմն և այլն: Բայց մենք նաև այդ մն (-man) ածանցի այլևայլ ձևափոխումը դրան նախորդող a կամ u ձայնավորների հետ ինչպես՝ պաշտաւն—անո. հ. պաշտաման, ուր այդ -աւն ածանցը կարծես մի տարբեր է -աւն (=ոն) այն ածանցից, որ կա կարօն, գործոն և նմաններում մեջ: Անուն բառի մեջ կա -*u-mn>uwn=ուն (անուն, անո. անաման): Բայց մենք ունենք -u-mn ածանցը, որով բայերից կազմում ենք վերացական գոյականներ (շարժումն, առիթաքումն, ուսումն), որը լատ իս համապատասխանում է խեթական -umar ‖ -umn բայածանցին, որով առնդնում են բայանուններ (verbal nomen), ինչպես tarnumar «թողումը, թողնելը», որը գրում է նաև tarnuwar (m>v անցումով), ուղղական հոլովում լինում է -umar (>-uwar), իսկ մենք հոլովներում՝ -um(a)n- (tarnumnas, tarnumni"): Այդպիսի կազմություններ են նաև՝ duškumar «գրպում, վայելք» (dušk- արմատից), wašdumar «հանցանք» (wašt -արմատից), arkuwar «աղաչում», šunnumar «լցնելը, լցնումը» և այլն: Բայց հայերենը

ունի և -մն (-ման) ածանց, կազմած գոյականներից նախորդող «ա» ձայնավորի հետ, ինչպես սառն-ա-մանիք, այծն-ամն, նեհաման: Մեկի կարծիքը, որ հայոց -ուն (շարժուն, թռչուն, գնալուն...) ածանցը առացվել է հնդեվր. -omno-ից (լատ. al-umn-us „питомец"), որ -omn> own>հայոց ու կասկած է հարուցում, քանի որ ավելի մոտ համապատասխանող նման ձևը կա սլավոնականներենում, ինչպես ցուլ են տալիս ռուսաց грызун, хрястун, лгун և նմաններըː

Հնդեվր. w բառասկզբում վեր է ածվում *g^{w}, ինչպես բրնտաններենում, իսկ հայերենում դառնում է գ (g)ː Այդպես են՝ գիտեմ=սանս. véda, հուն. voîda, գոթ. wait, գործ=հուն. wérgon. [w]órganon, հ. ս. գ. werc. (գ-)գինում=հուն. wénnymai. wéstai, սանս. váste «հագնվում է». գին=սանս. vasnàm, «գարնա»=հուն. warén, գաղտ=լիտ.—vilti «խաբկել», գարուն=հուն. wéar, լատ. ver. գետ=սլավ. вода, միջագ. bedy (ȝεδυ). գեղմ.=լատ. vellus. գեղում=հուն. welýsthe «շրջվել է», լատ. volvō. գիտ=սանս. ávidat և այլն: Բայց վեց բառը պահում է բառասկզբում վ նման հուն. wéks և հին պրուս. uschts «վեցկրորդ»ː Ա. Մեյեն բերում է Ֆր. Մյուլլերի կողմից հայոց վառել=լիտ. virti, սլավ. варить և այլն, առատպատանեթյունը, որը կասկածի տակ դրեց դեռ Ա. Բուդդեն (KZ, 32, 56) և Հյուբշմանը (Arm. Gr., էջ 494), հայոց վառեմ բայը ըստ Հ. Աճառյանի և ուրիշների կապակցվում է խնթերեն var- նույնիմաստ բայի հետː

Այդ հնդեվր. *w-ն հայ բառերի մեջում տալիս է ւ (w) կամ վ (v) ո ձայնավորից հետո, որ ու չառացելիː Այդպես ունենքՙ տիւ «օր»=սանս. divé-dive «օրեցօր». կով=սանս. gaváh, հուն. bo[w]ós, լատ. bovis և այլնː Բայց այդ կով բառի դիմաց ունենք և կոգի «կարագ», ինչպես ունենք արիւ (=սանսկր. raviḥ) և արեգ, արեգակնː Նմանապես ունենք առու (=հնդեվր. *sru-ից) և առգել, առգելը (<հնդեվր. *srow-)ː Մյուսն գ (<w) բաղաձայնով ունենքՙ տայգր<սանս. devár-, հուն. daér, լիտ. dēveris, ռուս. деверь, լոգանում=հուն. loyó, լատ. lavo. wr կոմպլեքսում w-ն կորչում է ևոր բառի մեջ (=հուն. ne-(w)ar-ós), սոր «ծակ»=լատ. caver-na, որ cav-<*kow- ձևից: Համեմատել նաև աղբեւր (>աղբիւր)=հուն. phréar <*phrewar «ջրհոր» ձևից որ հայ ձևերը հանգում են հնդեվր. *bhrévr (սեռ. *bhrevros), իսկ հուն.=*bhrēvrː

Հնդեվր. *sw տալիս է բառասկզբում հայոց ք (kh), ինչպես՝ քոյր=սանս. svásā, գոթ. swistar. քուն=սանս. svápnaḥ. քիր=սանս. svédaḥ, հին սաքս. swēt.

Հնդեվր. *k'w տալիս է հայոց բառերի սկզբում սկ, ինչպես սկուճի՝ շրնիկ=ասես. çwå (հայց. çvánanı), գոթ. hunds, սկեսուր=ասես. çvaçrú, սլավ. svekry, հուն. hekyrá, գոթ. swaiho և այլն:

Հնդեվր. *tw կոմպլեքսը հայերենում գառնում է բառասկզբում p, ինչպես pbq=ասես. tvám, հուն. sé(<*twe), իսկ ներս այդ tw-ին նախորդում է s, այդ tw գառնում է ոչ թե p, այլ k, ինչպես st (ժխտական st°) հնդեվր. *st-ի հանդեպ (առեղծել, առասպել..., -եաս ‖ -ուաս ածանցի մեջ և այլն): Թևրևս այդ p դերանվանական հայկական արմատի վրա (pn ‖ pi- քիզ, քեն, քիս) ազդել են կամ կոնտամինացիա են գործել Հայաստանի հին (շրնիկ) լեզուներըը, քանի որ նզակի երկրորդ դեպքի համար եռանախդիմային պալեիական բաղաձայն (k, g) ունին վրացական և սեմական մեր՝ շրջապատի լեզուների այդ դերանունը:

Հնդեվր. *dw կոմպլեքսը մի դեպքում երկու բառի մեջ, դարձել է pi, ինչպես են ասես. duvā, հուն. dýō (δύω), dó-deka, սլավ. dūva, լատ. duo և այլն, որոնց հանդեպ հայոց երկու բառը պահել է միայն վերջին «ա» կամ «ս» (երկուասան) երկակի նիշը: Ըստ իս հնդեվր. *dw անմիջապես չի դարձել pi և այդ հայոց բառը հնչյունապես ձևավորվել է միայն իրեն թվականների շրջապատում: Նախնական dvō ձևը հայերենում պիտի անդրադառնար *tgō (*tgu) ձևով, որը առաջընթաց առնմանութեյամբ դառնում է հետո *tko (*tku), իսկ հետո՝ rko (rku) առանալով նախադիր r, ինչպես կա և երկք (<tre-) բառի մեջ: Ինչպես լատիներենում ունենք quatuor:quinquc (<pinque հին ձևից), այդպիսի ձևարանական առնմանութեյուն երևի եղել է նաև e-tko-erekh, որ դարձավ erko-erekh: Ա. Մելիե բերված այլ դեպքերը այս *dw>հայոց rk օրինաչափութեյան համար անհամոզիչ են և արժեաորական: Նախ, հայոց մեղկ «թույլ, թուլամորթ» բառը իզոր է համեմատվում առես. mŗduḥ, լատ. mollis (<moldwi-) և նման բառերի հետ, քանի որ կա ավելի մոտ մեր մեղկ (melk) բառին խնթերեն miiisku—բառը նույն նշանակութեյամբ (weak „слабый, хилый"), երբ շատ օրինաչափ է հին -il կոմպլեքսի գառնալը հայոց -եղ ձևին (Մուշեղ և խնթ. Muršil, Բարսեղ=հուն. Basil-cus, Նեղոս= Nil և այլն, իսկ հին sk բառամիջ հայերենում պահում է միայն «կ», ինչպես musk-=մուկն, *usk- „ухо"=ուլ(ն)ին և այլն, այնպես որ մեր մեղկ բառը=խնթ. -milsk- ձևին: Երկրորդ. մեր երկար բառը, որի արմատն է erk- (համմտ. երկայն) չի կարելի կապել հուն. dărós, կամ dērós «երկար» բառի հետ, որի իրը թե հին ձևը

եղել է *dwārós, քանի որ այդ w տնտանեի առկայության հետք չկա, իսկ հայոց երկար բառը ավելի շուտ պիտի համարել խուռհուրական ծագումով՝ խուռ. k(i)rar ‖ k(e)rar «երկար» (հնչվում էր krar). մեգրելական rikafi (id.): Վերջապես հայոց երկիլիմ (երկիւղ) բառի արմատի (erk-) նշանակության համընկնումը հուն. d(w)eyos «վախ» բառին այդ արվեստական ձևով դեռ ոչինչ չի ասում:

Հնդևր. *y ձայնորդը հայերենի բառասկզբում դարձել է յ, ինչպես՝ յուծ=սանս. yugám, պարսկ. jūγ, հուն. zygón, լատ. jugum. սլավ. igo..., «բոլորը *yugó-m նախածանից, համանասին՝ լծարդ=սանս. yákṛt (սեռ. հ. yaknás), ավեստ. yākarə, պարս. jigar, հուն. hēpar, լատ. jecur և այլն. այժմ ևս բարբառներում (օրինակ Աշտարակում) կարելի է լսել յուպկա=ռուս. юбка, այնպես որ հնդևր. *y պիտի ընդունել թե յուծ և թե լծարդ բառերի սկզբում (յարդի և մյուս նույնարմատ բառերի համար սահմանում են նախնական *lyēkrt): Բայց Ա. Մեյեն աուսջարկում է հնդևր. *y հնչյունի համար նաև բառասկզբում հայոց «չ», որ ինձ թվում է անհամոզիչ. ինչպես՝ ջուր=լիտ. júres, հին պրուս. juray «ծով» և ջանամ=հուն. zēlos (ζῆλος) «տենդ, ավյուռն»: Ինչպես տեսնում ենք վկայությունն ընթրվում է հայերենից և մի երկրորդ լեզվից, որ շատ քիչ է, իսկ ջանալ արմատը թվում է ինձ իրանական «ջանա» (=հոգի, մարմին) բառից, ինչպես մենք ունենք հոգի և հոգ տանել, հոգալ: Ա. Մեյեի տեսությամբ, հնդևրոպական միջձայնավորության *y-ն հայերենում (և հունարենում) ընկած է եղել միևնույն թեմատիկ ձայնավորների անկումը, ինչպես գոյականներից առնծված բայերի մեջ (գրել, ջրել, սիրել..., յուսալ, թուալ...), ուր e խոնարհիչը առացվել է -eye (=սանս. -aya), իսկ ա խոնարհիչը՝ -āye (=սանս. -āya) ձևերից: Նույնպես այդ -y ձայնորդը ընկած է երեք բառի մեջ, որ նախածանում եղել է *treyes=սանս. tráyaḥ, սլավ. trīje: Այդպիսի երեք բառի «ի» հարաբերությամբ (երից, երիս, երիւք) չի՞ ասում հնագույն *trik ձևի մասին, թեպետ շեշտափոխությունն կա:

Մի շարք բառերից հետո եղած «չ» բաղաձայնը ուզում են հանել հնդևր. *y-ից, ինչպես՝ սառիչ=հուն. steîra (<stérya-ից), աճուրչ «երթագ» (*anōryo-ից) =հուն. óneiron (*>oneryon-ից), ոդչ=խալդեղ. uile (<*olyos): Բնորում են և մուճչ, ջինչ (ջնջեմ, հուն. theinō) օրինակները, բայց դրանք սխալ են, քանի որ մուճչ բառը առացվել է մուռ (լատ. ու մուռ) ձևից՝ մուռ>մուչ>*մուճչ, ինչպես *čar>čaǰi>ճանչ և այլն (տե՛ս իմ „О взаимоотношении арм. и лазо-мегр. языков".

Հնդևր. *ky տալիս է հայոց չ, ինչպես՝ ալ̈ք (=հուն. osse< <*ok*ye), չու=սանս. cyávate «շարժվում է» հուն. seúō, (<*ky-ew-) «շարժվում եմ»:

Հնդևր. *dhy տալիս է ջ մեջ բառի մեջ=սանս. mádhyah, լատ. medius և այլն, իսկ հնդևր. *sy միասին է-ի հոլովանքի մեջ (տես. հոլ.) «ո» թեմատով, ինչպես՝ մարդոյ=սանս. mártasya, հուն. (հոմերական) brotoio «մարդու» -oio ձևով:

Եթե գանք այն նոր հնչյունափոխությանը, որ եղել է արդեն կազմակերպվող կամ կազմակերպված հայերենում, ապա կարելի է նշանակել մի քանիսը: Նախ, խուսափումը ks, kt *հին կոմպլեքսներից, որոնցից առաջինը դառնում է „y", իսկ երկրորդը հավանորեն «չ» (չորք բառի մեջ): Հայոց* pĝi *խումբը դարձել է* pi>ոի *դառնալ և բառնալ բայերի մեջ (համմտ. դարձալ և բարձի, որ ցույց է տալիս նախկալի համար *դարձնալ և *բարձնալ): Մեսաթիևան եղել է հնուց և շարունակվում է արդի բարբառներում, երբ մանավանդ հետքադաձայնյան «ր» առնանոցը թուչում, ընկնում է այդ բաղաձայնից առաջ, ինչպես* սուրբ (<*subro), քիրան (<*khitran), արտասուք (<*drak'ur), *ինչպես բարբառներում՝ մրիատ (<մըկրատ), ակտա «առատ» (<ակուտ) և այլն: Կրկնակի բաղաձայն լինում է երկվանկ բառի մեջ, ինչպես երկրորդ (առիասի) ապառնիում՝ կնցցես, կացցես, ընթերցցիս (‖ ընդ+թերցցիս) և այլն, իսկ բազմավանկ բայերում այդ gg կոմպլեքսը դառնում է ug, ինչպես, սիրնացես, դնաացես, առաացիս (=ըառաացիս) և այլն:

Հատկապես պիտի նշել, որ հաջորդ վանկի «ու» ձայնավորը չի թողնում, որ նախորդ վանկում լինի «ի», որը ապաավում է ըստ օրինաչափության: Օրինակ, տեր բառից ունենք տիրել, տիրական և այլն, բայց տերուհի, տերություն: Հետո ճնճուղ «հինում եմ» (գոթ. spinnan «մանել», սլավ. pęti «լարել»), որից ապաանալի էր *հինուհի, ինչպես ապիժ է: Նմանապես՝ զգենում (հուն. wennumai), ուր ապաանալի էր «ն»-ից առաջ «ի»: Լեզու բառը պիտի լիներ լիզու (լիտ. lēžuvis «լեզու» բառի ē ձայնավորը արտացոլում է դիֆտոնգ i ձայնավորով վերջացած), ինչպես ճիշտ կերպով ունենն մեր բարբառները: Վաչիսուն ձևի տեղ ըստ այդ դիտողության ապառնալի էր վիճիսուն:

Բառամեներում u (ու) և i (ի) ձայնավորներից հետո չի դրվում j (յ), երբ, օրինակ ապաավում է *խրատուլ, թողուլ, քիրիլ և այլն: Նմանապես u (ու) ձայնավորից հետո չի դրվում w, r (խրատուս, խրատուսլ):

Վերջապես հնդեվրոպական հնչյունաբանության մեջ կարևոր տեղ բռնող e ‖ o ‖ - ալտերնացիայից, թե՛ թեքման ժամանակ և թե՛ բառակազմության, հայոց լեզվում միացել են միևնույն շատ քիչ միացորդներ, որպես վերապրուկներ: Հոլովման «Ո» թեմայի ժամանակ հանդես էր գալիս հին ժամանակի դեռ հարսին—հարսամբ—հարսում հնչյունափոխությունը, ուր in ‖ an ‖ un հայոց այդ փոխակերպումները արտացոլում են հնդեվր. -*en-os (=հուն. ev-os) ‖ -*n-bhi (=սանս. -abhiḥ հոգնակիում) ‖ *-on-es կամ -*ōn-es (=հուն. ov-ες կամ -ωv-ες): Պիտի նշել նաև e ‖ o հոլովման թեմայի առկայությունը ճիտ բառի համար—հնագույն ճիտե քարացած ձևի մեջ և ասվորական «ո» հոլովման մեջ, ինչպես՝ հետ, հետոյ, հետով: Հետո այդ ճիտ բառը «ոտ» խմասում հնդեվրոպական լեզվում ուղղականում ունեցել է pod- ձևը հանդես բերած հոլովման ped- ձևի, որի միացորդն է հայերենում ոտ-ն և ճիտ (որից բետ=բ-հետ): Համեմատել հուն. póda, «ոտն» և հայց. հոլովում pédon, սանս. padàm: Մեռանիմ բայը իր արմատում ունի „e" ձայնավորը («ոտ»-ի համար համեմատել խեթ. merr- «մեռանել»). իսկ նույն արմատից կազմած մարդ (=մահկանացու) բառը իր -ar- հնչյուններով արտացոլում է r ձայնորդը (=սանս. mṛtáḥ «մահ»), առանց „e"-ի: Լոյս բառի (=հուն. leukós) դիմաց ունենք և լուսն „бельмо" լնանալ «աչքի վրա սպիտակ արատ ունենալը»: Բեր-եմ բայի ber- ձևի դիմաց ունենք և -wor ածանցը լուսաւոր=հուն. leukophoros) և թևրևս բարդ «դեղ» (որից՝ բարդել) e ‖ o ‖ - (գևրո) ալտերնացիայով: Կին բառը հոգնակիում ունի կան-ա-ք ձևը, որոնցից kin (<*ken-) ձևը ունի „e" ձայնավորը (=սլավ. жена, հին պրուս. genna), իսկ kana- ձևը գևրո ալտերնացիա (=հուն. γυναῖκες, բնոտ. ǯanāḫes): Սան- մասը քսան բառի մեջ արտացոլում է երկակի թիվ (=բնոտ. wikati), իսկ -սուն մասը՝ հոգնակի (երկսուն=հուն. triákonta): Ունենք միակ օրինակ ō ‖ ə փոխանակման -նտու (=սանս. ādām, հուն. édō-ka), առաք-ը (=հուն. dōron, սլավ. даръ) և մյուս կողմից առաջ (<*də-ye), ինչպես լատ. dă-mus «տալիս ենք» ձևերի մեջ (տե՛ս Ա. Մեյեի „Esquisse", էջեր 61–62):

Հայոց լեզվի հնչյունաբանական սիստեմը և պատմական փոփոխումը շատ է տարբեր հնդեվրոպականից, և, ինչպես երևում է, այդ եղել է որոշ ներհուն միտումներից (տենդենցներից) դրդված, գլխավորապես նրանից, որ հայերենին շնչաղ, որ վերջընթեր էր, կրում էր հենց սկզբից ուժական (ինտենսիվ) բնույթ և անշարժ

(ֆիքս) բնութ, որ կայունացավ արդեն վերջին վանկի վրա, քանի որ նախկին վերջին վանկը չքացավ: Հնդեվրոպական լեզուների շեշտը երաժշտական էր և շարժուն, ձայնավորները լինում էին կարճ և երկար, որից դուրկ էր հայերենը: Նմանապես առանձին (ձայնորդ) հնդեվրոպական հնչյուններըը, որ երևք ձևով էին հանդես գալիս այդ լեզուներում (բաղաձայն, ձայնավոր և դիֆտոնգի երկրորդ տարր), հայերենը բնավ զրկված էր այդ երանց հատկանըշից: Իսկ հնչափոխութ յուններըը այնքան փոխվեցին, որ առաջին հայացքից ոչինչ նմանութ յուն չեն տեսնում հայր և *patēr*, եղբայր և *bhrāter*, քույր և *swasar* (սանս.) և մանավանդ երկու և *duwō* կամ հինգ և **penkʷe* բառերի մեջ: Ա. Մեյեն այդ հիմնական փոփոխիչ առնձնցնները վերագրում է մեր երկրի ոչ հընդեվրոպական լեզուներին (Esquisse, 58—59):

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԹԵՐՄԱՆ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Գոյականներ և ածականներ: *Թրաքարի հոլովումը կատարվում է երկու թվով՝ ևզակի և հոգնակի, ունի յոթ հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, ներգոյական և գործիականս Չկան տրական, իգական և չեզոք սեռեր:*

Սովորական հոլովումը լինում է յոթ տեսակի՝ ա, ի, ու, ո, ե, ր, ղ, որոնցից առաջին չորս տեսակը ձայնավոր տիպի են: Բերենք նախ հենց այդ ձայնավոր տիպի հոլովման պարադիգմաները և վերլուծենք դրանց հնդեվրոպական բնույթը, ինչպես բերում է Ա. Մեյեն (Esquisse, էջ 66 և շար.):

Ե ս ա կ ի

	ա թեմա	ի թեմա	ու թեմա
Ուղղ., Հայց.	*ամ*	*բան*	*պղնատ*
Սեռ., Տր., Ներգ.	*ամ-ի*	*բան-ի*	*պղնատ-ու*
Բաց.	*ամ-է*	*բան-է*	*պղնատ-է*
Գործ.	*ամ-ու*	*բան-իւ*	*պղնատ-ու*

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	*ամ-ք*	*բան-ք*	*պղնատ-ք*
Հայց., Ներգ.	*ամ-ս*	*բան-ս*	*պղնատ-ս*
Սեռ., Տր., Բաց.	*ամ-աց*	*բան-ից*	*պղնատ-ուց*
Գործ.	*ամ-աւք*	*բան-իւք*	*պղնատ-ուք*

Ե զ ա կ ի		Հ ո գ ն ա կ ի	
Ուղղ., Հայց., Ներգ.	գետ	Ուղղ.	գետ-ք
Սեռ., Տր., Բաց.	գետ-ոյ	Հայց., Ներգ.	գետ-ս
Գործ.	գետ-ով	Սեռ., Տր., Բաց.	գետ-ոց
		Գործ.	գետ-ովք

Ուղղական հոլովում ի ձայնավորով վերջացող բազմավանկ բառերը ենթարկվում են երկու տեսակ հոլովման: Առաջին տեսակները, որոնք -ացի ածանցով են (գիւղացի, կանացի...) և որոշ բառեր, ինչպես հոգի, որդի և այլն, ենթարկվում են զօ հոլովման, ուր այդ „i" ձայնավորը դառնում է w (io>wo), իսկ մյուս բառերը, մասնավորապես -ուհի ածանցով վերջավորվողները ենթարկվում են „a" հոլովման. պահվում „i" վերջին ձայնավորը, վերածվելով էա դրությամբ (ia>ea), բայց սեռական-տրական հոլովածից, ուր լինում է -ւոյ (քրմուհւոյ, տեղւոյ...), ինչպես է բոլոր մյուս դեպքերում՝ էա ձայնավորով վերջացող գոյականների մեջ: Հատուկ անուններըդ, որոնք ունեն -ուհի վերջածանցը, միևնույն ժամանակ սեռական-տրականում ունեն -եայ ձևը (Տիգրանուհի—Տիգրանուհեայ—Տիգրանուհեաւ):

Հայերենի հոլովման հիմնական չորս հոլովումները մտնում են հնդեվրոպական նույն տիպերին, որոնցից i և u թեմաները իրենք պատկանում են ձայնորդ «թեմատիկ» տիպերին, ինչպես ունենք r, l, n հոլովման աթեմատիկ տեսակները: Սակայն հայերենում, ինչպես և շատ այլ լեզուներում i և u ձայնորդ տիպերը խառնվել են ձայնավորական o կամ a (ā) թեմատիկ հոլովումներին, ուր թեմատիկ ձայնավորը և վերջավորության ձայնավորը խառնվում են, իսկ թեմատիկ բուն ձայնը արդեն առանձին չի պետակցվում, ինչպես պետակցվել է հնում:

Ըստ հոլովման տիպերի կամ տեսակների, հայց o հոլովումը (օրինակ, բուճ—քնոյ—քնով) համընկնում է սանս. sváp**n**aḥ, լատ. somnus, հուն. hy'pnos բառերի հոլովմանը. a հոլովումը (ամ-ամի—ամէ-ամս... համընկնում է սանս. sāmā բառին, արուեստ և st (վաստուտս, թաքուստս... գոլեստս, ուտեստ... (վերջածանցով բառերի հոլովումը էա հոլովմամբ համընկնում է, օրինակ, հին սլավոնական юность, молодость նման կազմություններ (-ti) բառերի հոլովմանը (նաև -asti վերջավորվող գոյականները նույնպես), իսկ „u" հոլովման

համար (զարդ-զարդու) համեմատել օրինակ, հունարեն artys «հարդարանք» բառի նման ածեմատիկ հոլովումը:

Թեմայի ձայնավորի և վերջավորության խառնվելը և առանձին չգիտակցելը երևան է գալիս մինչև իսկ հին հունարենում III դարում (մեր էրայից առաջ), ուր աթենացին չէր ընկալում hypno -բուծը hy'pnos, hy'pnou և hypnō հոլովական ձևերում („Esquisse", 68): Իսկ այդ o տիպի -o-is վերջավորությունը անցնում է արական և չեզոք բառերի վրա հյուսիս-արևմտյան հունաստանում, ուր III դարում արդեն ունենք androis. somatois և այլն: Կամ լատիներենում „i" ձայնի հոլովման -bus (=i-bus ինչպես pedi-bus) ձևը, որպես -ibus հոլով. -mū (արակ. հոգն.) վերջավորությունը հոլովման թեմատիկ „i" ձայնավորի հետ միանալով դառնում է նոր -ī-mū) slovesīmŭ և այլն:

Հայոց լեզվի շեշտի վերջընթեր լինելը և վերջին վանկի և ձայնավորի ասրբեր փոփոխականներ կրելը, մինչև նրա անկումը նկատելու, հիմք են ծառայել նաև հոլովականների փոփոխության և անկման, ինչպես որոնց հետ կապված նորամուծությունների, որ երբեմն դժվար է լինում բացատրել: Այնուամենայնիվ հայերենը հնդեվրոպական ութ հոլովներից կորցրել է միայն կոչական ձևը և պահպանել յոթը, այնինչ հունարենը, որ այդքան հին է իր ձևաբանության ենացած կողմերով, պահել է միայն հինգ հոլով: Բալթիկ սլավոնական լեզուները, որ հայոց լեզվի նման ուշ են վկայված, նույնպես շատ հոլովաձևեր են պահել:

Հոլովաձևերի և տիպերի հնդեվրոպական ծագման առնակիսից վերցնենք նախ ձայնավոր (վոկալ) անասնականը:

Աչառել նշելի է վերջավանկ ձայնավորների անկման հետևանքով նախ ուղղական և հայցական հոլովների միատիպ լինելը, այսինքն՝ առանց դրանց հատուկ նշվածքի: Օրինակ, քան ձևը համապատասխան է թե՛ առնա. svápnaḥ, լատ. somnus (=հուն. hy'pnos) նգակի ուղղականներին և թե՛ առնա. svápnam, լատ. somnum (=հուն. hy'pnon) նգակի հայցականին: Այդպես էլ ամ ձևը=առնա. sāmā (ուղղ. նգ.) և sāmām (հայց. նգ.), զարդ=հուն. artys (ուղղ. նգ.) և artyn (հայց. նգ.), սիրտ=լիտ. širdis (ուղղ. նգ.), širdin (հայց. նգ.) և կոչական širdē-ին: Հոդնակիում ուղղականի համար ավելացնում ենք p, որը ձևական առնականից երբեմն հանվընկնում է. հնդեվր. s-ին, ինչպես բալսկան -մք վերջավորությունը (սերեմք...) =առնա. -maḥ, դորիական -mes, լատ. -mus, -եք=լատ. -tis, p գոյականների հոգնակիում (nun-p) =s (առնա. pādaḥ, հուն. pódes).

-ըր (դերբ.)=սանս. -bhiḥ, ավեստ. -biš, լատ. bus և այլն: Հնդեվր. երեք և չորք բառերը (սանս. -tráyaḥ, սլավ. triye, աւոտիկ. treîs և այլն) ունեն, ինչպես տեսանում ենք, հոգնակի նշան: Ա. Մելլեն այս բոլորը նշելով հանդերձ, ավելացնում է, որ հայերենի ր մասնիկի երեակը հնդեվր. s-ի տակով, անառարկ է (n'est pas constante, էջ 70): Այդպես է դրված և Esquisse-ի 1903 թ. հրատարակության մեջ: Լատ իս, ոչ մի տարակույս չի կարող լինել, որ հայոց ր նշանը հոգնակիի համար է և որ դա հանդես է գալիս ոչ թե իրրև հոլովման և խոնարհման վերջավորություն, այլ իրրև վերջածանց: Մասնավորապես մեր խոնարհումը՝ եմ—եմք (есмь—есмы), ես—էք (ecu—ecma), ինչպես և մյուս դեպքերում (գովիմ—գովիմք, գովիս—գովիք, ասեմ—ասեմք, ասես—ասեք) ավելի հարում է վրացական տիպի կառուցվածքին՝ var «եմ»—var-th «եմք», xar «ես»—xarth «եք», vakheb «գովում եմ», vakhebth «գովում ենք», akheb «գովում ես»—akhebth «գովում եք»: Ա. Մելլեի և մյուսների այդ մեր «ք»-ի գննումը դուռ մնխանիկական, անհիմնավոր և ձևական է:

Հայոց բառերի հոգնակի հայցական s ձևը անշուշտ հնդեվրոպական է, բայց հնդեվր. պարզ s հնչյունը հայերենում ըստ օրինաչափության պետք է ընկներ: Ենթադրվում է, որ հայոց s ձևը եղել է իր նախնական վիճակում *ns, ինչպես նման տեսակը ունենք հունարենի կրետական բարբառում (*ns) և դոիներենում (-ns), որտեղից՝ հայերենում այդ ns դարձել է s, ինչպես մեր „мясо" (<menso), ռուս. „месяц" (լատ. mens-is) և նաև այլ դեպքերում: Իսկ քանի որ հայոց այդ հոլովածևը ծառայում է նաև ներգոյական հոլովի համար (ի միտս, ի սիրտս...), ուր հնդեվրոպական լեզուներում եղել է -*si (հնդեվրոպականում, բալթիկ-սլավոնականում) և հունարենում -*si, ապա ենթադրվում է, որ այդպիսի մի ձև եղել է և հայերենում: Բայց ըստ հայոց հնչյունաբանական օրենքի, ձայնավորով վերջացող բառերի վրա ավելացած -su կամ -si ներգոյականի հոլովածևը պետք է ընկած լիներ (ինչպես ձայնավորների մեջ s բաղաձայնը ընկնում է), ուստի ենթադրվում է, որ «եռհնամասոկ» բնների (r, l, n հոլովումների վերջում) պահվող -su (-si) վերջավորությունը ըստ անալոգիայի անցել է նաև բնամասոկ հոլովաբնների (a, o, u, i):

Դերբ. հոլովածևը ձայնավորով (ա, ո, ի, ու) վերջացող բնների մեջ նույն է թե՛ եզակիում և թե՛ հոգնակիում, երբ վերջինիս համար ավելանում է հոգնակիյա «ք» մասնիկը: Դերբ. վերջավորությունն է -աւ (-aw), -ով (-ov), -իւ (-iw) և -ու (-u),

որը առացվել է -*uv (-*uv) հին ձևից։ Համեմատել հունարենի՝ -ēphi = հին -āphi (առնս. -ā-bhiḥ, հոմեր. -o-phi, հոմեր. -*u-phi (= առնակր. -u-bhiḥ), հոմեր. i-phî (օրինակ՝ wiphi «ուժգին կերպով»)։ Հայերենը, ինչպես անհնում ենք, իր w (v) վերջավորությամբ, որը հին *bh-ից է, մոտենում է հնդեվրոպական, հունական, լատինական և կելտական լեզուներին (բալթոսլավոնական և գերմանական լեզուները ունեն *m վերջավորությունը, տես. -mī հզակիում և -*mi հոդնակիում)։ Հայոց այդ -w(-v) վերջավորությունը, ինչպես և -b (գաւեաբը, անուամբ և այլն), ընձեռում են մեզ ֆոնեկցիա՝ գործիական հոլով, որ հին հիշյալ հնդեվրոպական լեզուները այդ *bh կամ *m ձևերով ստանձնում են գործիական, բացառական և տրական հոլովաձևերը (առնակրիում և սիներում միայն հոդնակի գործիականի համար, առնս. -bhiḥ, սիներ. -biš)։

Գրաբարում հոդնակի սեռական-տրական-բացառական հոլովաձևերում, ինչպես ձայնավոր թեմաներում, այնպես էլ բաղաձայն («աթեմատիկ») հոլովումներում և դերանուններում (բացի անձնական 1-ին և 2-րդ դեմքերի), ունենք g (c) վերջավորությունը, որ նման հոդնակերտ «բ»-ին չի բացատրվում հնդեվրոպական հողի վրա։ Ձևական տեսակետից, քանի որ այլ դեպքերում անգամին և նաև (liguidæ) ձայնորդներից հետո եղած «ց»-ն (անձանց, հարց) վերարտադրել է հնդեվրոպական *sk հնչյունախումբը և այդ «ց»-ն չի փոխանակվել ձայնեղ տեսակի հետ (ձ, ձհ), ապա այս տես.-տր.-բաց. «ց»-ն ևս պետք է այդ նախկին *sk ծագումը ունենա։ Այդպես էր մոտենում վերլուծմանը Ս. Բուդենս։ Նա առաջարկում էր այդ «ց»-ն ոչ թե որպես վերջավորություն, այլ որպես վերջածանց -sko ձևով ինչպես հին սլավոներենում ունենք nebesĭskŭ «երկնքի» (տես. հոլովի խմբագրով), առաջացած nebes- «երնից» (=небо «երկինք»), ինչպես կան чудес-, колес-о, кудес-ник) և նման -es ձևով բներ։ Օրինակ, հայոց մի բնց ձևը պիտի սկզբում ունենար ուղղականի *swopho-sko-s, հայցականի *swopno-sko-n ձևերը, որ առանում է (?) տեսակեան և հետո նաև տրականի և բացառականի ֆոնեկցիա։ Ուրեմն ունենում ենք -os-kos, -askos, -iskos, -uskos ձայնավոր (թեմատիկ) հոլովման տես.-տր.-բաց. հոդնակի նախկին բարդ կազմություններ։ Այս արհեստական ձևակազմություններ ըստ իս, անհամապիչ է նախ վերջավորության փոխոխումով վերջածանցի (-sk ածանցը կա և ուրիշ հնդեվրոպական լեզուներում բառաստեղծման համար) և հետո ֆոնեկցիայի տարօրինակ ձևակերպումով։ Ես կարծում եմ, որ այդ «ց» վերջավորությունը հնդեվրոպական չէ, ինչպես վրաց լեզուն

ունի k'alak'-t'a «քաղաքաց», ուր t'(=th) վերջավորությունը ունի նրանք ֆունկցիա հոդնակիում (անո., արտական, բացատական) այդպես էլ մորրատախական (ատխանիկ) լեզուներին (Հայատալի) հիմանը վրա կազմավորվել է մեր այս «ց» թիվ-ցուցիչը, ինչպես և հոդնակերա «ք» մասնիկը։ Ն. Մառը հայց «ց» և վրաց նախնապաշտոն „t" ձևերը միևնույնն էր համարում քառ ծագման, մանավանդ որ այդ հնչյունների փոխանակումը կարելի է անունել և այլուր. օրինակ վրաց ცხა (thixa) «կնդա, ցեխ», որը համընկնում է մեր «ցեխ» արմատին, կամ մեր «թխել» (печь) և վրաց ცხობა (ცხობა) „печь, испекать(ся), выпекать(ся), согревать яйца (о наседке). համեմատել մեր թուխ բառը։ Համեմատելի է նաև մեր բարբառային -ից (-ուց <*ուից) բացատականի վերջավորությունը վրաց գործիական-բացատական -ით՝ ձևի հետ, որը կա և բնիավոր խեթերենում (-it) և հիերոգլիֆ խեթերենում եզակիում և հոդնակիում -ta ձևով (Abl. —Instr., տե՛ս I. Gelb, Hitt. hieroglyphs, III, Chicago, 1944, էջ 41)։ Հետաքրքրական է նաև մեր հետագա -ուր ~ -ուց ալտերնացիան, որ տեղի է ունեցել բարբառներում բացատական հոլովաձևի մեջ. ինչպես՝ ճնուր «ճնուց», մանկուր «մանկուց», հօրուվ «հորից», մօրուվ «մորից». այսինքն հորս և մորս ժամանակից։

Հայերենի «ի» և «ու» հոլովման անուական-տրական-ներգոյական սրտի և զարդու ձևերին համապատասխանում են առնակրիտերենի տե. -iyaḫ, -uvaḫ, տրական՝ -iye, -uve, հունարենում՝ անուական -iyos, -uwos և տրականում՝ -ī, -yi (-vi) ձևերը։ Հետևապես անուական-տրական սրտի (srti) ձևը համեմատելի է հուն. Πόλιος «քաղաքի» ձևի հետ։

Ամենից դժվար է բացատրել a հոլովման անուական-տրական-ներգոյական «ի» վերջավորությունը, օրինակ ամ բառից ամի ձևը, որը Ա. Մեյեն կոչում է առեղծվածային (énigmatique)։ Բայց և այնպես հնարավոր է առեղծվածային ձևով առաջարկվում է համեմատել հայց այդ ձևը իսլանդական լեզվի, օրինակ՝ túaithe «ժողովրդի» (տե՛ս հ.) túat «ժողովուրդ» ուղղականի հոլովից (հին արմատն է *teuta, որ կա բալթիկ լեզուներում tauta ձևով և գերմաներենում՝ teut-on, diutu „deut-sche") և այլ ձևերի հետ։ Հայց այդ անուական ամի և նմանները, որոնք a հոլովման պատկանում են գնում, առաջարկվում է կապակցել նաև հնդիրանական ā թեմայի, օրինակ, սանս. senāyāḫ, հին պարսկ. haināyā «հնդիկ» անուականների հետ։ Մեր հատուկ անունների անուական-տրական -այ ձևը (Տրդատայ, Արշակայ և այլն), ըստ Մեյեի, չի պատկանում հին -a թեմայի։

հայց ο թեմային հոգևի արտահայտը պիտի տար *ōi (=հուն. -ῳ; լատ. -ui) և կորցներ վերջավորութիւնը. ենթադրվում է, որ հոգևի սեռական հնդեվր. -*osyo (=սանս. -asya, հոմեր. -οιο) վեր է ածվել հարիւրնում -ոյ ձևի, որը և այլ հոլովաձևերի անալոգիայով անցել է նաև արտահան հոլովաձևի. այդպես հայց թնոյ ձևը արտացոլում է սանս. svápnasya, հուն. (հոմերոսական) ὕπνοιο ձևերը:

Հնդեվրոպական հոլովման վերոհիշյալ թեմատիկ տիպերը կազմվում են կամ անմիջապես բառի արմատից և թեմայից, կամ արմատից և մի որևէ ածանցից՝ նույն թեմատիկ ձայնավորով:

Այդպես են ο թեմայով—գործ (գործոյ, գործով)=հուն. wérgon «գործ» և wórganon «գործիք», կեր, որ պիտի արտացոլեր *կոր (>կուր, կերակուր?), ձևով գոյական, եթե ճշտորեն հնդեվրոպական ձևավորում առանար նման հունական lógos, phóros և նմանաներին: Մասնիկներով ունենք -*yo- մասնիկով՝ միջ (միջոյ) =սանս. mádhyaḥ, լատ. medius, -*no մասնիկով՝ մուճ (մճոյ) «ճանճ», համմտ. այլ մասնիկով՝ լատ. mus-ca, լիտ. mus-é, հուն. myia (μυῖα), սլավ. мухa, -*to- մասնիկով՝ մարդ (մարդոյ)=սանս. mṛtáḥ «մահաց», հուն. brotós<*mrotos «մարդ, մահկանացու», -*ro- մասնիկով՝ առու-ք (առուո-ք) =հուն. ῥοῦς, սլավ. даръ (darŭ), -*i- մասնիկով՝ գալար (գալարոյ) =հուն. θαλερός, -*tro- մասնիկով՝ արաւր (արաւրոյ)=լատ. arātrum և այլն:

Հնդեվր. -ā թեմային տակ են գնում, ինչպես տեսել է, հայց ա հոլովումը, ինչպես ամ (ամի, ամէ, ամաւ), սկեսուր (սկեսրաւ) =հուն. hekyrá. համանապես մեր գլխուա (գլխուաւ) բառը, որի վերջին մասը այդքան մաս է սանս. jihvā, լատ. lingua բառերին: Որոշ բարդութիւններում և ածանցավոր բառերում, ինչպես ցնկեր, բազաւոր և այլն, մենք տեսնում ենք a հոլովումն: Օրինակ ընկեր բառը, որ նշանակում է «միասին ուտող» նման է սանս. voe-вода, լատ. -agri-cola «երկրագործ», հուն. οἰνο-δόκη «գինեշուն» տրամագրող բառերի կազմութիւնն a հոլովումով, թեպետ կեր «տանուղ» առանձին բառը գնում է ο հոլովման տակ (կեր, կերոյ, կերով): Այդպես էլ բազաւոր բառի -ւոր մասնիկը ավելի շատ արտացոլում է հնդեվր. -*bhorā, քան հունարեն -φόρος, որը «ο» հոլովման ենթ -ի ածանցը (առնդիչ, գաղիչ, արարիչ...) հընդեվրոպական ծագում ունի և գրաբարով կազմած բառերը գնում են a հոլովման տակ (արարիչ—արարչաւ), իսկ ինքը մասնիկը առաջացել է հին -ik-yā ձևից, բայց ոչ -ik-yo ձևից (համմտ. սլավ. „ко-

вачь, «вдаряю», которичь «молотить» և այլն)։ Մենք արդեն խոսել ենք ուղղական-հայկական հոլովներում «իա» ձայնավորով վերջացող բառերի մասին, որոնք նմանվում են o կամ a հոլովման, պահելով թեթև դրսնով վերապրուկ նաև հին արտասան և իզական սեռերից։ Այդ կապակցությամբ ես չեմ ընդունում -ացի վերջածանցով առնդնվող ածականի հնդևր. -*a-sk-iyo ձևը, այլ այդ -ացի ձևը համարում եմ ասիանական, նման լյուվիական նույնմանատ -azi (spartazi «սպարտացի») կամ -ezi ածանցին (syriezi «սյուրիացի»)։

Հայոց հոլովման «իա» թեման ունի համապատասխանը և ուրիշ հնդևրոպական լեզուներում, ինչպես՝ իժ (գրաբ. հոլ. իժիւ), որը առացվել է հնդևր. *ēghi-ից և նույնն է սանս. áhiḥ ավեստ. aži̯s, հուն. ὄφις բառերի և ձևի հետ։ -ti մասնիկով բառերը այնպես են հոլովված, ինչպես՝ աւր «դիշերվա տևող», aw- արմատից, որն ունենք նաև ապաճիմ, «իշնել դիշերվա համար» և կա հուն. ἑαύω և αὔλιϛ բառերում։ Բարդ (բարդիւ) և սպանդ (սպանդիւ) բառերի -դի մասնիկը առացվել է նույնպես -ti- ձևից, այս ինքն հայոց «դ» ձայնեղը n և r տնտանոնեիից հետո արտացոլում է հին խուլ t բաղաձայնը։ Ինպես սպանդ (սպանդի, սպանդիւ) բառը կապակցվում է սպան-անեմ «սպանում եմ» արմատի հետ, բայց թեթև կապվի և իմիջ. spand- «զոհաբերել, վեհել, возлять» արմատի հետ։ Հայոց բան (բանիւ) «խոսք» բառը իր -նի ածանցով նույնպես գնում է „i“ հոլովման, նման ռուսաց նույնարմատ баснь կազմությանը, իսկ արմատի անսակետից համեմատել դրբ իսկան φᾶμι, առարկ. φημι, ϝφωνή, ռուսաց баю և այլն։ Մեր այծ բառը, որ արմատով նույնն է հունարենի αἴξ (սեռ. αἰγός), «այծ» բառին, իր հոլովման թեմայով (այծիւ) առարկեր է և իր „i“ թեմայով արտացոլում է հին իզական սեռը (-i- կամ ī ձևով)։ Համեմատել այդ սեռի ներգործյա այծնանին բառի մեջ (այծի- և -մն- մասերով), նման երկի եղնամն բառի կազմությանը (eli+amn) և թեթև նաև առանձամանքը բառի կազմությանը, թեպետ վերջնիս մեջ այդ «իա» սեռանիշ ձայնավորը չկա (կորած է)։

Հայոց ու (u) հոլովման թեման համապատասխանում է հնդևր. u (կամ ū) թեմային, ինչպես տեսանում ենք հետևյալ դեպքերում -որ (գրաբ. որբու), «հորթ»=սանս. pṛthuka-, -*tu- ածանցով՝ զարդ (գրաբ. զարդու)=հուն. ἀρτύς, զգ'ուտ (գրաբ. զգեստու) *wes- արմատից համեմատվում է լատ. ves-tis ձախ (տարբեր թեմայով)։ Հայոց բառերը, որոնք վերջանում են ւ կամ վ հնչյուններով

նույնպես ենթարկվում են այն ուս (u) հոլովման, թվում և տարբեր ծագումով լինեն, ինչպես՝ կով (գոթ. կոմա) նման է հուն. βοῦς, βο(ϝ)ός. հաւ (գոթ. հաւս) ջրհոսնան նման լատ. avis ջրհոսնան բառին (տարբեր հոլովմամբ): Այդպես է նաև բուռ անասլոգիայի ծով բառը, որը ուրարտական ծագում ունի (=ուրարտ. şue ջրհեղեղ, ծով», ուր ş հնչյունը հնչվել է ts=մեր ծ-ի համա. վրաց. ʒʏue ծովը առացված *ʒue հին ձևից): Հին չեզոք բառերը, որոնք ու (u) ձայնավորով էին վերջանում, հետագայում առանում են հավելյալ ր (r) ձայնորդը և ունենք ծուներ (*<ծունա-<*ծնոռ-), որի հետ նույնն է հուն. γόνυ ծնունդ բառը, ինչպես են հավանորեն նաև ծաղր և մեղր բառերը (անս. ծաղռ, մեդռ), իսկ ասր բառը ևս համարում եմ իր սկզբնաձևը և համեմատում խեթական asaras (asāras) ջրերդ, բրդի դրժվածք բառի հետ (ըստ Փլոցկի և Մաուրոնխանոի, տե՛ս Hitt. Gloss., Philadelphia, 1936, էջ 30 և Suppl. to a Hitt. Gl., 1939, էջ 14):

Հոլովման ոճային և ձայ տեսակները: Այս տեսակները, մանավանդ ոճայինը, արտացոլում է հնագույն հնդեվրոպական սիստեմը: Ոճային թեմաներից որոշ կազմություններ այժմ ևս պրոդուկտիվ են և կարող են անվանման նորաստեղծումներ տալ, ինչպես -ումն վերջացող վերացական գոյականները՝ որոնք բայերից են կազմվում: Այս հոլովման ժամանակ վերջին ո (o) ձայնորդից առաջ տեղի է ունենում ձայնավորների ալտերնացիա՝ ə ‖ i ‖ a ‖ u:

Երեք վերջավոր ացնգ բառը և նրանով բարդված միացնգ, վեցանգնգ, դասարկացնգ հրկու ամպական հոլովումները, ասյա կանոնները, որ մի կողմից ունենք՝ անձն—անձին—անձնէ—անձամբ և հոգնակի՝ անձինք (անձինս)—անձանց—անձամբք. իսկ բարդությունները հոգնակի ուղղական անձինքի ձևի փոխարեն տալիս են՝ միանձնանք, վեհանձնանք և այլն: Այսինքն ունենում ենք -ըն, -ին, -ան, -ուն փոխոխություններ: Հոլովման մյուս տեսակները ավելի պարզ են՝ շարժումն—շարժման—շարժմանք, սկիզբն—սկզբան—սկզբանք, որդն—որդան—որդանք..., լեառն—լերին—լերինք, նաւն—նաւին—նաւինք, գաշն—գաշին—գաշինք..., արիւն—արեան, արիւնք, անկիւն—անկեան—անկիւնք, գիտութիւն—գիտութեան—գիտութիւնք..., այսինքն՝ ունում է երկու ձևափոխություն՝ -իւն||-իւն (-ուն|ան), ինչպես ձիւն—ձեան, շուն—շան, տուն—տան: Վերջին հնչյուն „ո" (o) հոլովումը նախկին -*ար>-ըր վերջացող ածականների մեջ (ծանր, մանր, փոքր, քաղցր և թանձր) վեր է ածվում -ըր ‖ -ուն պարզ մի ձևի մեջ, ինչպես ծանր—ծանրա—ծանրամբ, ծանրանք—ծանրանս—ծանրանց—

ծանուցմամբ։ Այդ վերջին հոլովման մեջ վաստորին լինում է *-ur > -ըր (ծանուր > ծանըր) -ու (ծանու) -ուն ալանդնացիա, որը նույնպես ունի հին սխոսեմի ինացորդ, բայց ոչ մաքուր անգալին հոլովման սխոսեմ, այլ խառն՝ նալ- անգալին կամ ավելի ճիշտ՝ նալ-ձայնավոր-անգալին։

Ըստ Ա. Մեյեի սեռ.-տր.-ներգ. -in վերջավորությունը եղել է հնդեվրոպական *en-es կամ *en-os վերջավորությունը, ինչպես հունարեն poimén-os «հովիվ» (սեռ.) poimén-i (տրակ.). հին սլավ. kamen-e — քարից (սեռ.), սանս. brâhman-ah «աղոթքից» (սեռ.), իսկ հայոց սեռ.-տր.-ներգ. -an վերջավորության համար եղել է հին *ô-es, որը պիտի ունենալ նաև սանս. vṛṣṇ-ah «արուի» (սեռ.) մեջ։ Հայոց -ին-ը ուղղականին համապատասխանում է հնդեվր. *-en-es (համմտ. հուն. poim-én-es «հովիվներ»), իսկ -ան-ը վերջավորությունը՝ *-on-es (հուն. -on-es)։ Եզակիում ձայնավորի տարբերության անսակնակից համմտ. լիտ. akmũo «քարը» (ուղղ. հ.) և սեռ. akmeñs «քարի», գոթ. hairto (ուղղ. «սիրտս և սեռ. hairtins «սրտի», իսկ հոգնակիում՝ hairt-ona «սրտեր» (չեզոք սեռի է)։

Հայերենում -իկ և -ուկ վերջացող մի քանի գոյականներ (անձեր և ածականներ թե՛ հոլովներում և հոգնակիում գնում են -ան հոլովման տակ), ինչպես՝ աղջիկ—աղջկան—աղջկունք, մանուկ—մանկան—մանկունք, փոքրիկ—փոքրկան—փոքրկունք, Սաթենիկ—Սաթենիկան, մարդիկ—մարդկան, ուր ապա—իկ մասնիկը հոգնակի համապատկան իմաստ է արտահայտում։ Բացի ապա, կան -ուստ, -իստ, -ուրդ ածանցներով վերջացող բառեր, որոնք եզակիում երբեմն հոլովվում են -եան ձևով, ինչպես -իւն (արիւն, անկիւն... պիտակիչն և այլն) ածանցով վերջացողները—հանդիստ—հանդստանան, փախուստ—փախստանան, ժողովուրդ—ժողովրդեան... և -իլ ածանցով՝ տեսիլ—տեսլեան բառերը։ Սրանք բոլորն էլ այս հոլովման ձևերը ստացել են հետագա ժամանակի անալոգիայով և ոչ թե գալիս են հնդեվրոպական ընդհանուր մի վիճակից կամ ժամանակից։ Մեզ քաջ հայտնի է, որ -ուստ, -իստ, -ուտ, -ուստ (պահուստ, հանդիստ, ուռուստ, առաջուստ) ածանցները հնդեվրոպական ծագում ունեն և ենթարկվում են ուրիշ լեզուների նման „l* հոլովման (համմտ. սլավ. юность, գոթ. dalugasti «երկայնություն» և այլն)։ Նմանապես -ուկ և -իկ մասնիկով բառերը այդ -եան հոլովման ձևերը ստացել են հետագայում։ Ես արդեն մատնանշել եմ -ութիւն և -ումն ածանցների

մասին, որ դրանք փոքրասխական (ասխանիկ) լեզուների ազդեցությամբ են կազմված: Երեսուլթ, բնուլթ և նման կազմություններ պետք է բխեցնել -uth անմասնան և բուն երեսուլթին նաև ուրարտական նույն բառակազմական ածանցից և ոչ թե վերցնել -ութի (երեսուլթ ⊥, բնուլթ ⊥ և այլն) և ավելացնել -ւն (-wn)-. այսպես կան երկու ածանցներ՝ -uth- և -iwn: Նմանապես -ումն (*-ուման >-ըման) ածանցը, որ հնդեվրոպական է իր -մն մասով (գնդում, ջրիմն, անրիմն...), նման ասենս. -ma, հուն. μα, լատ. -men, սլավ. -men (знамя—знамени, пламя—пламени...), ունի իրեն նախորդող „u" (-ու-ւմն) ձայնավորը ոչ թե իբրև ընդարձակում, ընդլայնում (élargissement), որը իբրև թե „S'explique par la nécessité de donner plus de corps au suffixe", ինչպես նման փորձեր առաջարկել է Osthoff-ը (տե՛ս Ա. Մեյեի Esquisse-ում, էջ 80—81), այլ առաջացել է խեթերեն նման կազմության ձևով, ուր բայերից կազմվող վերացական գոյականները ունենում են -umar || -uman վերջամասնիկը:

Հոլովման ր (r) և ղ (l) ձայնորդներով վերջացող թեմաները ավելի քիչ են, քան վերևում բերված ն (n) թեմայով բերված բազմաձև և բազմաքանակ բառակազմությունները: Բացի այդ r և l թեմաներից առաջ եղած վանկում միայն e ձայնավոր է, չկա ուրիշ ձայնավորների այսպիսի սահմանափակություն, ինչպես վերոհիշյալ ենթալին հոլովման ժամանակ: Բերենք այդ r—l հոլովման նմուշով ձևերը.

Ե ր ա կ ի

Ուղղ. Հայց.	ակր	աստղ
Սեռ. Տր. Ներգ.	ակնր	աստեղ
Բայց.	ակներէ	աստեղէ
Գործ.	ակներբ	աստեղբ

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	ակներք	աստեղք
Հայց. Ներգ.	ակներս	աստեղս
Սեռ. Տր. Բաց.	ակներաց	աստեղաց
Գործ.	ակներաւք	աստեղաւք

Վերջընթերք e ձայնավորը, որ անփոփոխ է և մնում է բոլոր դեպքերում այդ վանկում, պարիս է հնդեվրոպական շրջանից,

ինչպես անանուն ենք դասերք=հուն. θυγάτερς կամ ասաղերք= հուն. ἀδτρεχέ և այլն:

Հայկական այս տիպի բառերի ճնշող մեծամասնությունը ունենում է a ձայնավորը եզակին գործիականում և հոգնակի բոլոր թեք հոլովներում, բայց լինում են դեպքեր, երբ առանց այդ ձայնավորի, որը, իբրև թե կոլնկտիվ գաղափար է նշում (B. S. L. XXXIII, էջ 7): Օրինակ, ունենք՝ տարերց, համերց, ալերց և այլն:

Երեք բառ – հայր, մայր, եղբայր – նույնպես ենթարկվում են „r" հոլովման և ունեն շատ հին ձևափոխություններ: Օրինակ, հայր (=հուն. πατήρ), սեռ.-տր. հաւր (=հուն. πατρός, πατρί), հաւրէ, հարբ—հարբ, հարբ, հարբ, հարբբ, ուր միայն հար- հիմքն է և դժվար է բացատրվում հնդեվրոպական ձևերի տեսակետից:

*Հինգ-վեց թվականները, որոնք „r" ձայնորդով են վերջանում, ինչպես ծանր, փոքր, մանր, թանձր, քաղցր, նօսր, ունենում են -(ա)r-ա-աս- վերջավորություններ: Այսպես, ուղղ. հայց. ծաւր, ա.-տր.-ներգ. ծաւու, բաց. ծաւուէ, գործ. ծաւու, հոգնակիում՝ ուղղ. ծաւուք, հայց.-ներգ. ծաւուս. ա.-տր-բաց. ծաւուց և գործ. ծաւումբք: Սկզբնական ձևը (ծաւբր) առացվել է *ծաւուբ-ից, որը նախնականում եղել է չեզոք սեռի թվական: Երեք բառը (աւադ, «քահանա») ենթարկվում է եզակիում ու (u) հոլովման՝ երիցու (ա.-տր.-ներգ.), երիցուէ (բաց.), երիցու (գործ.), իսկ հոգնակիում լինում է՝ երիցունք, երիցուն, երիցունց, երիցամբք և ենթադրվում է, որ եզակիում չի առացել ուղղականում ր, որովհետև դա չեզոքի ձև կլիներ. այնինչ դա արական սեռի բառ է: Ըստ այսմ ծունր, ապր, ծաղր, մնդր բառերը չեզոք են համարվում: Սուրբ բառը կապվում է առն. jánu, հուն. γόνυ, սեռ. γόν (β)-ατος, խնթ. gënu (ginu) «ծունր» բառերի հետ, թեպետ հայց ծուրբ ձևը եզակիում չի հոլովվում, ինչպես արուսր բառը, իսկ ծունգ ձևը առացվել է հին երկակի *ծունեւի (*cunwi) ուղղականից, որ հետո հոլովվում է նաև -ան (-en) ենթալին հոլովմամբ (ծընգան, ծնգամբ) կամ „a" հոլովմամբ (ծնգաց, ծնգաւք):*

*r ‖ n ձայնորդների այսերնացիա, որպես հնութիւն մի վերապրուկ, ունենք նաև հուր «կրակ» և *«հուն-» (*hun-) ձևափոխության մեջ, որը նույնպես նշանակել է «կրակ» ածանցավոր հնց բառի մեջ:*

Հնչյունաբանության մեջ խոսվել է մի շարք գոյականների մասին, ինչպես քոյր, այր, ակր, աւր և այլ բառերի մասին, որոնք ինչպես տեսնում ենք, վերջանում են ր» ձայնորդով:

Հնաոճրբրբրական պրոցես է անցել ունեցել մի շարք բառերի հոլովման մեջ, որ կրկնում են ունել է միայն միավանկ բառերի մեջ։ Այդ բառերը ենթարկվել են եզակիում -ո հոլովման, իսկ հնաոճ նաև հոգնակիում։ Օրինակ, ունենք եզակիում ոտն, ձեռն, դուռը և նման բառեր, որոնց հոգնակիներն են ոտք, ձեռք և դուրք։ Հասասասապես եզրակացվում է, որ հին ժամանակ, թերևս մեր էրային դեռ շատ առաջ, եղել է եզակիում նույնպես ոտ, ձեռ, դուր և այլն, որոնք հայցականի հոլովում պետք է կրկնած ունենային -ո (ն) և որ միևնույն այդ հայցականի հոլովաձևերը պետք է հնչվին ոտն, ձեռն, դուրն։ Բայց քանի որ մեր հոլովական սիստեմում և այլ դրվականների մեջ ուղղական հոլովաձևը եզակիում համընկնում է հայցականի հետ, այսինքն՝ չի տարբերվում վերջինիցս, ապա ըստ նմանատեսության (անալոգիայի) այդ հայցական հոլովաձևը դարձավ և եզակի ուղղական հոլովաձև։ Այսպես ունինք հայոց ոտն նախկին հայցականը, որ հար և նման է հուն. πόδα, ձեռն, որ արտացոլում է հուն. χειρα և այլն, դարձան նաև ուղղականներ և բոլորովին հոլովվել՝ ոտն-ոտին-ոտամբ, ձեռք-ձեռին-ձեռամբ և այլն, թերևս հոգնակիում ևնացին հին ձևերը՝ ոտք-ոտից-ոտիւք, ձեռք-ձեռաց-ձեռօք։ Բայց, օրինակ, դուռն բառաձևը, որ առաջվել է հնագույն դուր-ից (համեմատել՝ հուն. θύρα, գոթ. daúr, գերմ. Thür, լիտ. dúrys և այլն), որպես եզակի հայցական, ոչ միայն անցել է նաև եզակի ուղղական, սեռական և այլն, այլ նաև հոգնակի՝ դրունք, դրանց և այլն, թերևս ևնացել են և հին դուրք դրաց, դրաւք ձևերը։ Ես կարտահայտնշնի ձեր-(«ձեռն») հին ձևի համար ձերր-ա կալ բարդությունը, որ մեզ հնաոճրբրող բառը վերարտահայտել ձեռ ևնացել և առանց -ն հավելվածքի և -ր (ոչ թե ռ) հնչյունով։ Այդպիսի «ոտ» (ո) անշուշտ անունն բիրան, «բրտինք» (=հուն. hidrōs, հին գերմ. sveiz). դուրգն «բրտուր անիվը» (=հուն. τροχός, հին իռլ. droch «անիվ»), ձմեռն-ամառն, (համեմատել ձմեռոց, ձմերկ..., ամառայնի, ամառաստն), ասեղն և այլն, քանի որ ազգակից օտար բառերն ևս այս վերջին ունդային ձայնորդը չունեն։ Ըստ Ա. Մեյեի հնարավոր է, որ ակն բառի «ոտ» (ո) բաղաձայնը եղած լինի եզակի հայցականի վերջավորություն։ Հոգնակի աչք ձևի մեջ պետք անսպասել աչ- (ač-) մասը որպես եզակի «երկու աչք», նման համեմատական ὄσσε, հին սլավ. oči, „oru„, լիտ. akì երկակիններին, իսկ այդ մեր աչ-երկակի թվին, երբ նա չի պահպանվել, ավելացվել է հոգնակի «ք» մասնիկը։

Տիւ «ցերեկ» բառի սեռ.-սրկ. առաջնեան (=առավոտեան)

ձևը, որ համարվում է անմիևնույն, պիտի ըստ իս կապակցել վաղ-ընջևան (ի վաղընջնէ), մըշտ-ընջ-ևան բառերի -ընջ ժամանակ ցույց տվող մասնիկի հետ, որ կա նաև խնթնընեում ժամանակ ցույց տվող բառերի մեջ (օր. աշուն, ձմեռ և այլն)։ Ի տուէ և ի պիշերի արտահայտության մեջ առէ փորթաստական լեզուների արտ.-նեղոց. ձև է։

Հայոց գոլականների հոլովման սիստեմը, ինչպես Մեյեն է ասում, իր զարգացման մեջ չհասավ մի հաստատ հավասարակշռության, դնդնելով առացված հնդեվրոպական ժառանգության, նորամածությունների և ոչ հնդեվրոպական ուժեղ ազդեցությունների մեջ։ Այդ բանը մենք տեսանք հնչյունափոխության մեջ, ուր շնշոց այնքան մեծ «ավերիչ» դեր է խաղացել հոլովման թեմաների, վերջավորությունների, ալոներնացիայի (e ‖ o ‖ -) չքության և այլնի վրա։ Երբեմն ինչպես տեսանք, հոլովման ձևերը կրում են նպակի բնույթ (գիւղ-գեղջ, տիւ-տուընջևան-առէ) կամ ազդեցությամբ, այն է անալոգիայով առնչվում են նորանոր ձևեր, ինչպես ոտն, ձեռն, դուռն մի քանի նպակի հայցական ձևերի շնորհիվ հայցական «ո» ձևեր տարածվում են բոլոր հոլովներում, կամ արամբ-արանց ձևերի ազդեցությամբ ձևավորվում է կանամբ-կանանց (կին-կանայք հիմնական հին թեմաներից), կամ բառի երկու-երկք բնների (թեմաների) ևնթարկվելը, տարբեր հոդակի (կոլևկտիվ ձևեր գործածելը (մարդ-մարդիկ, մանուկ-մանկտի, խոզ-խոզանն, աւազ-աւազանի...) և այլն։ Մեյեի առնչով ասեն հոլովումը, որ հանդես է գալիս հին հնդեվրոպականում, դանվում է հնդեվրոպական անցյալական շրջանում» (Esquisse, էջ 86)։

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Անձնական դերանուններ։ Անձնական դերանունների ձևերի մեկնաբանումը, ինչպես Ա. Մեյեն է ասում, դժվար է բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ, որովհետև այս դերանունները չունեն իսկապես ասած հոլովական ձևեր հնդեվրոպականում (Esq., 91—92)։

Ուղղականը պահել է իր անկախ ձևավորվածությունը մյուս հոլովաձևերի հանդեպ. ես և դու ձևերը բացատրված են որպես հնդեվրոպական, բայց «նա» ձևը վոխանակ* sʻo (eç) <*eg'o-ից պիտի բացատրվի ըստ իս ստրատական ieše=iese) և խառնարևնեի iša (=isa) նույնանիշ դերանվանական ձևի ազդեցությամբ՝ կոնտամի-

նախնական: Մեք ձևը համապատասխան է լիտ. mēs «մենք» ձևին, որին մոտ է նաև հին սլավ. my „մե“: «Դուք» ձևը ուղում են հանել ju-k' ձևից, ի նկատի ունենալով լիտ. jūs, գոթ. jus, ալեման. yuŏ «Դուք» ձևերը, որը (դուք) ձևափոխվել է դու ձևի ազդեցությամբ: Ըստ իս ոչինչ չի խոսգպատում հայոց «դուք» ձևը անմիջապես հանել «դու»-ից, ավելացած «ք» հոդնակերտ մասնիկը:

Իմ ձևը (անս.) համապատասխան է հուն. emé, emoû ձևին: Իճն (արակ.) ձևին համապատասխան է սանս. máhyam «ինձ», լատին. mihī «ոմբր. mehe «ինձ», որտեղ այդ սանս.—լատ. h հնչյունը առացվել է հնդեվ. *g'h-ից: Հայկական իս ձևը իրր թե առացվել է *ins նախնական վիճակից (=հուն. emége), որից ինչպես և արական իճն ձևից, ճոացել է իճ-բուռը իճեճ «ինձնից» և իճու «ինձնով» հոլովաձևերի մեջ: Եզակի երկրորդ դեմքի հոլովաձևերը, բացի ուղղական դու (du)-ից, վատ են բացատրվում հնդեվրոպական հոդի վրա, առաջարկվում է ապդակցել քի- բուռը (քեզ, քէն, քեւ) հուն. se (<*twe-ից), «քեզ» (հայց.) ձևի հետ: Բայց հայոց ոչ մի այլ բառի սկզբնական «ք» հնչյունը չի արտացոլում հնդեվր. *tw. այդ տեսակետից պիտի բացատրել նաև pn (անս. հոլ.) ձևի հնդեվրոպական ծագումը: Եթե անդամաճառ համապատասխան սլավերեն մոտ ձևերը են հարկավոր, ապա նա կմատնանշնի վրաց g (ց) օրինակով երկրորդ դեմքի դերանվանական մասնիկը, որ դրվում է բայի սկզբում թե նպակիի և թե հոդնակիի համար (g-madlob «շնորհակալ եմ քեզ, ձեզ» կամ սեմական -k (=-kh, abei-kum «քեզ հետ»), քամյան kh-, որը թևերս կար և ատարաներնում (հմմտ. ikukani և inukani «դուրս» և «ներս»:

Մն- և ձն- ձևերը հոդնակի մեք—դուք դերանուններին հատուկ Ա. Մելեն համարում է բուլղարան մոթ (asser abscurs): Ձն-բուռը առացվել է անշուշտ դն-սկզբնականից, ինչպես խոթերևնում ունենք zik «դուն» և tuk (հայց. արակ. նմրգ.):

Ա. Մելեն ուղում է մեք և ձեք սեռական հոլովաձևերի «ր» ձևի մեջ տեսնել երկու օրինակաների հակադրություն, ինչպես կա լատիներեն nostrum և vestrum, կամ գոթ. unsar և izwar ձևերի մեջ: Բայց այդ «ր» ձևը այդ իմաստը չունի իր դերանվան մեջ, որը առացվել է հնդեվ. *sewe-ro կամ *sewo-ro ձևերից, իսկ կան նաև որ, էր, որին, որտա, որտը և այլն: Ավելի ճիշտ կլիներ հայոց «ր» (անս. հոլ.) կապել խոթ. նման „l“ ձևի նման դերանվանական «հոլովաձևի» հետ: Դուցե մեք որ հարցական և հարաբերական դե-

բանական մեջ այդ «բ» մորֆեմական իրոք ցույց է տալիս «որը երկուսից», բայց պնդել չի կարելի:

Հայկական հոդնակի մեզ և ձեզ հոլովաձևերը ըստ Մեյեի ելել են *mens և *dzens, որ դառնալով *մես և *ձես և ազդվելով արական մեզ և ձեզ ձևերից, համընկել են այդ վերջիններիս: Բացառական մեզնից և ձեզնից ձևերը կազմվել են այդ արականից: Իսկ մենջ և ձենջ բացառականները ըստ իս առաջացել են ասիանիկ հոդի վրա և ինչպես խեթերենում ունենք šumel «ձեր» և apel «երանց» հին խեթերեն šumenz a(n) «ձեր» և apenza(n) «երանց» կամ թեև նաև šumenza «ձեզնից», apenze «երանցից», ինչպես թարգմանում էին առաջ, որպես բացառականի ձև), այդպես էլ խեթերենի մեջ մնացած այդ ասիանիկ ձևի նմանությամբ ունենք հայերենում մենջ և ձենջ:

Ցուցական, հարցական և ստորոշ դերանունների ձևերը: Ցուցական դերանուններըը կազմվում են u, դ, ն տարածությունը ցույց տվող արմատ մասնիկներից («հոդներից»), որոնցից s-ն ցույց է տալիս տարածությունը խոսողին մոտ, „d*-ն՝ խոսակցին մոտ, իսկ „n*-ն՝ ավելի հեռու: Առաջին մասնիկը (s) համեմատում են սլավ. sĭ-, լիտ. šis, սլր. si- գոթ. hi-, լատ. cis, citra, իռլուգ. semun «տրանց» (этому) և խեթ. kas «այս» ձևերի հետ: „d* էլեմենտը համեմատում են սանս. tā- և հուն. to- ձևերի հետ, իսկ n-ն՝ սլավ. onŭ (онъ). լիտ. aũs, գոթ. jains և մյուսների հետ: Դրանցից կազմվում են.

1. s, d. n վերջածիր հոդերը, որոնք որոշում են բառը, բառախումբը և նախադասությունը. օրինակ ճայըս նշանակում է «այս հայրը», «նա որպես հայր», «իմ հայրը»:

2. Իսկական ցուցականունները՝ այս, այդ, այն (հոլովումը՝ այս, այսր կամ այսորիկ, այսմ կամ այնմիկ, այսու կամ այսուիկ..., այսք կամ այսորիկ այց կամ այսոցիկ և այլն):

3. Հարաբերական («անաֆորիկ») դերանուններ—սա, դա, նա, որոնք ունեն սո-, դո-, նո- (so-, do-, no-) արմատանաձև բնները և ա (ɑ)< *-այ (*-aj) հավելումը վերջից (հոլովումը՝ սա, սորա, սմա, սմանե, սովա-ի, սորա, սոսա, սոցա և այլն):

4. Անձական—դերանունը, որը ցույց է տալիս նույնություն (identité, тождество), սոյն, դոյն, նոյն, որոնց մեջ հոլովվում են so-, do-, no- արմատանաձև բնները և կրկնվում է դրանց վերջում նույնություն ցույց տվող -իմ մասնիկը, որը կա և հունարենում (համեմատել հուն. οὗτος-ἱν «տ-յնս»):

5. Տեղի մակրայական դերանուններըը, ինչպես՝ աստ, այսր աստի, այդր, այտի, անդ, անդր-անտի (՞թանդ, դնալի ո՞ւր, որանդից հարցնելով), որոնց վրա կարող է ավելանալ -ին (-in) նույնաբիյուն ցույց ավող մասնիկը, աստէն, այսրէն և այլն։ Կա նաև աստուստ, անդուստ, ինչպես և ուստի բառերը։

6. Ունենք նաև՝ աւասիկ, աւադիկ և աւանիկ մակրայական դերանուններըը, որոնց դիմաց արտաստյան բարբառը ասլիս է՝ հրնսիկ, հրնտիկ և հրննիկ ձևերը։

Ցուցական դերանուններըը, ինչպես վերևում նշվեց, ունեն կարճ (այս, այտ, այտմ...) և երկար (այս, այսորիկ, այսմիկ...) ձևերը, որոնցից վերջիններըը դրվում են դոյականներից հետո (լերինս այսմիկ, բայց՝ այսմ լերին)։

Հարցական n (ով) և ո-ի (=ինչ) դերանուններըը իրար են կապակցում հնդևիր. *k^{w}o-(*k^{w}u) ձույց և *k^{w}i- ինչ» արմատների հետ, քանի որ մի այլ դնալ չկա, ուր հնդևի. սկզբնական *k^{w} բարձաձայնը հարևրենում ընկած լիներ։ Նույն *k^{w}o- արմատից են ցանկանում հանել (Revue des Etudes arméniennes, V, էջեր 183—4, VII, էջեր 1—3), ուր ձրդ (r) իրր արտացոլում է հնդևիր. * ro (*k^{w}o-ro-=որ), նման մեր, ձեր, ներ- (ներ-ք-ին) բառածևերին, որը շատ տարակուսելի է։

Անորոշ դերանուններից որ բառը գործ է ածվում բաղաձևական և պարմանական նախադասություններում, որի -ր (նույնպես -*իր կազմության մեջ, որ կա բարբառներում և գրաբարի չիր բառում) ունի հնդևիր. ծագում (=սանս. ca, լատ. que, հուն, τε)։ Այդպես ունենք -որ, որուր, ումնք ումնք-է, իսկ *իք դերանունից՝ *իր (չ-իր), իրիր- իմիր, իմնքէ-իրիր։ Որ դերանունի վոխարեն գործ է ածվում դրական նախադասություններում ոմն դերանունը, որի հոլովումն է՝ ոմն -ուրումն -ումնմն -ումնմնէ -ոմանր (-an հոլովմամբ), որից արդեն ոմանք -ոմանս, ոմանց -ոմանրք։ Այս ոմ- արմատը հավանաբար համեմատվում է գոթ. sama ևնույնն կամ իմաստով ասվելի մոտ գոթ. sums ոմնկը, ոմն» (համմտ. հուն. ὁμός („тот же"), οὐδ-αμός („никто")։

Մի շարք հարաբերական և առոցական դերանուններ հոլովվում են -ո (-o) հոլովմամբ, բայց որոշ չնդումով, ինչպես՝ որ, որոյ, որում՝ որմէ, որով, մեր-մերոյ, մերում, մերմէ, մերով և այլն, բայց մի թվականը ունենում է անսովորում մերոջ նման տեղաջ, կնոջ։— Ում (um) մասնիկը կար արդեն Աստվածաշնչում (ում հնումն և ի նորումս) որ հետո դառնում է ներգոյական հոլո-

վի նշան հունարենից թարգմանված որոշ դրվածքներում, նաև այժմ մեր արևելյան բարբառներում և գրական լեզվում:

ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Հնդեվրոպական բազմաթիվ և բազմատեսակ հնագույն բայաձևերը հնաոգայում պարզացած են, կազմելով քիչ թիվ շատ հավատարիմ և ամուր մի սիստեմ, յուրաքանչյուր առանձին լեզվում, որոնց թվում և հայոց լեզվի բայի մեջ, ինչպես վկայված է հինգերորդ դարի առաջին անգամ գրանցված նրա ձևի մեջ, թևակոտ հոլովումը այդ կուռ վերակազմությունը դեռ չէր առացել:

Ալսպես, օրինակ՝ մենք առանում ենք, որ հնում չատ-չատ անփոփոխված սկզբնական «թեմատները», որոնք անմիջական կցվում էին բայարմատին, հնաոգայում կրճատվելով հասնում են մինչև երկուսի՝ ներկայի և անցյալ կատարյալի (aորիստի): Հին հունարենը դեռ ունեցել է հինգ նման թեմա՝ ներկայի (μένω), կրկնաթեմայով ներկայի (μίμνω), ապառնու (μενῶ), aորիստի (ἔμεινα) անցյալի՝ perfectum-ի (μεμένηκα), որոնցից հնաոգայում մնացել են հակադիր երկուսը՝ ներկայի (μένω) և aորիստի (ἔμεινα) թեմանները: Լատիներենում դեռ հնագույն ժամանակ գտնում ենք միայն այդ երկու հակադիր թեմանները՝ manco «մնում եմ» և mansi «մնացի», ինչպես է և գրաբարում (մնամ և մնացի):

Ներկայի թեմայից (բնից) կազմվում են—1) սահմանական եղանակի ներկան (լքանեմ, λείπω), 2) անցյալ անկատար (լքանէի, ἔλειπον), 3) ապղելական հրամայական (մի լքաներ, μήλείπε), 4) aորիստական եղանակի ներկան (լքանիցեմ), 5) անորոշ դերբայը (լքանել): Անցյալ կատարյալի (aորիստի) բնից կազմվում են—1) սահմանականի անցյալ կատարյալը կամ aորիստը (լքի, ἔλιπον), 2) հրամայականը (լի՛ք), 3) aորիստականի, resp. սահմանականի ապառնին (լքից), 4) սովորական անցյալ դերբայը (լքեալ):

Այս երկու թեմաները ունեն կիրառական (aսպեկտային) տարբերություն. մեկը ներկայի թեման ցույց է տալիս իր ձևավորվածությամբ տևական բնույթի, որի ժամկետը չի նշված, չի վերջացած, իսկ aորիստի թեման սահմանավորված է իր կատարման մեջ, ընդգրկում է տևողության իր ճիշտ ժամկետը: Յուրաքանչյուր թեմա ասկզբն ունի տարբեր ձևավորվածություններ խոնարհման

մեջ, ապա է՝ տարբեր տեսակներ՝ e, i, a, u իռնաարհամիներ ըստ ներկայի թեմայի, ուր այդ ներկայի թեման իր այդ իռնաարհականությունները ունենում է կամ պարզ անմատնիկ բնույթ և կամ ունգային մատնիկի հավելացում: Նման տարբերակում նշվում է նաև տարիատի բնի (թեմայի) մեջ—արմատական թեմա և «ց»-ով («ցոլական») թեմայով տարիատ: Սրանց վրա ավելանում են դիմավոր ձևերը՝ եզակի և հոգնակի (երկակի թիվը հազվադեպում անհատատացած է):

ՆԵՐԿԱՑԻ ԲՆԻ (ԹԵՄԱՆԵՐԻ) ՏԵՍԱԿՆԵՐԸ
Ե ՆՈՒՆԱՐԱՐՈՒԹ

Անմատնիկ ներկայի բոնը, պարզ -եմ վերջավորությամբ, դալիս է կամ հին արմատներից, ուր այդ -e-m վերջավորության „e" ձևը շարունակությունն է իր նախկին (հնդեվր.) վիճակի և կամ նոր ծագում ունի, սովորաբար անուններից առաջացած -*eje ածանցի հավելմամբ: Հին արմատական թեմայից են միայն երկք բայ -բերեմ (=սանս. bhárāmi, հուն. φέρω, լատ. ferō, իռլ. berim և այլն), ածեմ (=սանս. ájāmi, հուն. ἄγω, լատ. agō և այլն), ճանեմ, որը ցանկանում են կապակցել սանս. sanōti «ձեռք է բերում» (ilgagne), բայց այդ առաջարանությունը միանգամայն սխալ է, քանի որ խեթերենում կա ḫan- արմատը նույն հնչմամբ և իմաստով, ինչ ունի հայերենը (խեթ. ḫāni «հանում է», Sturt, Hitt. Gl. 2, cd.'draw, dip', էջ 41): Այդ հայ բայերը տարիատը կազմում են առանց «ց» ձևի՝ բերի, ածի, հանի: Ենթադրվում է, որ դրանք հնագույն վիճակում ունեցել են ներկայում bere-, açe-, hane- իսկ մյուսների արմատի վրա -eje ավելացնելով, որ դառնում է e (*worg'-eje>գործեմ), թեպետ սա տեսական բնույթ է կրում և անտեսվում է անալոգիայի ձևաբանական ազդեցությունը:

Ինգային an մատնիկի ավելացմամբ նույնպես ունենք մի շարք հին „e" հոլովման ներկայի թեմա, որով կազմված բայերը տարիատում ունեն արմատական (ոչ ցոլական) ձև: Հնդեվրոպական մյուս նույնատիպ բայերը այդ ունգային վերջածանցի դիմաց ունենում են հաճախ n կամ -ne- միջածանցը (infix-ը): Համեմատել՝

լքամեմ (տարիատ՝ լքի), համմտ. սանս. riṇakti «թողնում է», լատ. linquō, առտ. liquī, հին պրուս.—linka «թողնում է».

ածամեմ (ածի), համմտ. սանս. anákti «օծում է». լատ. ungō (այստեղ ունգայինը պատկանում է արմատին, բայց հաստատվել է իբրև արմատի տարբ).

- բնկացնիմ (բնկի), համմտ. սանս. bhanàkti «բնկում է, կոտրում է», հին իռլանդ. com-boing (id.).

բուծացնիմ (բուծի), «անուշցում եմ», համմտ. սանս. bhuñkte «վայելում է» և թնդևս լատ. iongor «կատարում եմ» (նեպտ իմաստները տարբեր են)։

գոացնիմ (գոի. հպիտ. vgit-) համմտ. ավեստ. vinasti «գտնում է», սանս. vindati (տարբ. ávidat)։

դիզացնիմ (դիզի), համմտ. լատ. fingō, հուն. θιγγάνω (որ γ հնչյունը χ հնչյունին է փոխարինում ταῖχος «պատ» բառի մեջ).

լիզացնիմ (լիզի), համմտ. լատ. lingō «լիզում եմ», հուն. λιχνεύω (id.) բառի մեջ վերջածանցը բռնել է նուազական նեղածանցի (մեջածանց) տեղը։

անիծացնիմ (անիծի), համմտ. սանս. nindáti «արհամարհում է» և հունարեն ὄνειδος «նախատինք» (հայերենում «ժժ» առացվել է նախկին «տ» բաղաձայնից). ինչպես ունենք հպարտ և պարծիմ, կնգտ և կնճռ, ապտ և ապճ (ապճապիղծ), պիղծ և պղտոր, թնդևս արտ<*արծ<*անդր=հուն. ἀγρός (*արտ, поле» համմտ. և ագարակ, որպես ընդհանուր սեմիտական agar բառը, նախատիպը բոլոր հնդևր. բառերի)։

ճաշացնիմ (հաշի), համմտ. սանս. açnóti, թնդևս կա և սանսկրիտ. naçati և լատ. nanciscor («ձեռք եմ բերում»)։

*Արանց և այլոց ձևաբանական զուգորդութիւնով կազմվում են իմաստի շատ և շատ նման բայեր—ացնիմ թնմատով. այստեղ հարկաւոր է հատկապես՝ շեշտել երեք բայեր, որոնք մինչ այդ ձևը ունեն նաև «ց», ինչպես՝ ճաթցացնիմ, լուցացնիմ և ցուցացնիմ, որոնց մեջ «ց»-ն առացվել է հին -*ske-ից։ Համեմատել հարց-անեմ բայի հետ սանս. pṛcchámi, լատ. poscō, լուցացնիմ բայի դիմաց (հնդևր. *leuk-ske-), հարց լոյս (*leuk-), ցուցացնիմ, որի ցոյց ձևը առացվել է *skeu-ske- ձևից (համեմատել հին վերին գերմ. skouwan. այժմյան գերմ. schauen «հայելը» skau-արմատից), և հավանորեն այսպես է կազմվել նաև հարց ացնացնիմ բայը, որի առաջաբանութիւնը չի ճշտված։

Պատճառական բայերը ևս իրենց -ուցացնիմ (<-ո՛յց—անեմ) մասնիկով այս „e“ հնչումնան տակ են դնում, ունենալով -ատիմ ենթակին թնմանը։ Այդ պատճառական բայերը նեղգործական են, իսկ մյուսները՝ կամ նեղգործական են, որ մեծամասնութիւն են կազմում, կամ չեզոք, որ փոքրամասն են։ Վերջիններիս հաճախ տկում են խոնարհվիլ խոնարհման „i“ ձևով։

Այս խոնարհումը ունենում է երկու ֆունկցիա. կամ ծառայում է որպես կրավորական „e" խոնարհման բայերի համար, օրինակ, բերեմ «բերում եմ» և բերիմ «բերվում եմ», և կամ ունենում է չեզոք բայի ֆունկցիա և ավելի ուշակալ դեպքերում հատարակ նշանակությունն, նման լատիներեն verba deponentia *-ներին, ինչպես դատիմ «դատում եմ և դատվում եմ», խոսիմ «խոսում եմ և խոսվում եմ», համարիմ «համարում եմ և համարվում եմ» և այլն:*

Այս ի խոնարհումը ներկայի բոլոր կազմում է երկար ձևով առանց ընդային (-ան-) մասնիկի, այսինքն՝ մի «ի» խոնարհիչով, երկրորդ՝ -ան մասնիկով և «ի» խոնարհիչով (-ան-ի) և երրորդ՝ -չ կամ -նչ մասնիկով: Հավելված նույն խոնարհիչը:

*Առաջին խումբը (պարզ «ի» խոնարհիչով) ամենաշատն է և արխաուում ունենում է «ց» մորֆեման իր չեզոք-կրավորական -ալ, -ար, աւ, աք, -ալք, -ան վերջավորություններով: Առանց այդ «ց», այսինքն արմատական ձևով արխաուն ունի միայն ներկա բայը (արխաուն՝ նասալ), որ ևրկել է հնդեվր. *ni->zd->ni-st-=նիստա, նստ-իմ. հմմտ. սանս. ni -ṣ:dati և ավեստ. ni -šhi:i i «նստում էմ»:*

*Հատկապես նշելի են -an- մասնիկով հին կազմածները, որոնք սահմանափակ են. այդպիսի են -ագաճիմ (արխաուն՝ ագալ), հմմտ. լիտ. aunu «անասուն եմ հագնում». ծնագիմ (ծնալ), հմմտ. սանս. jānate «հղիանում է», հուն. γιγνομαι, լատ. gignō, nāscor և այլն. ուագիմ (ուալ), հմմտ. հին սլավ. выкнути (vuknǫti «սովորում է, հարմարվում էմ» (արմատն է *unk-). լիտ. j-ūnk-ti. մնագիմ (մնալ), հմմտ. սանս. m.iyáte, հին սլավ. мьру (mĭrǫ) „мру". փագիմ (փալ), հմմտ. լիտ. púolu «ընկնում եմ», հին բարձր գերմ. fallan, հուն. σφάλλω անկագիմ (անկալ), հմմտ. գոթ. sigqan:*

Նմանապես սահմանափակ են -չ կամ -նչ- ածանցներով օրինակները – բաքչիմ (թաքնալ), որի հետ հմմտ. հուն. πτώ̃, πτάν̃. πτω σκάζειν «նա քաշվել վախենալով» և թերևս լատ. tacēo, գոթ. thahan «լռել», թուչիմ (թռնալ), կառչիմ (կառնալ), հանգչիմ (հանգնալ), մառչիմ (մառնալ), փախչիմ (փախնալ), երկնչիմ (երկնալ), կորնչիմ (կորնալ), մարանչիմ (մարանալ): Այսպիսի կազմություններ են նաև ճանաչիմ (ծանանալ) և մեղանչիմ (մեղալ), բայց դնում են «ի» խոնարհման տակ: Արխաուի -նայ վերջավորությունը Ա. Մելիեն նկատել է տալիս, որ այդ վերջավորության i

(<-iaj) հնչյունը պիտի հատկացվի արմատին՝ թաքի (թաք-ի-ալ), մատի-(մատի-ալ) և այլն: Ենթադրվում է նաև որ՝ մասնիկը հատուկ առանձնահատկություն է հնդեվր. -sk մասնիկին և ցույց է տալիս սկզբնական բայակերպը (verba inchoativa): Վերջապես կա -չիմ || -նում վերջամասնիկների փոխանցումը, ինչպես՝ թաքչիմ և թաքում, փախչիմ-փախնում, խրտնում-խրտչիմ, դարբնում || դարբչիմ և այլն:

Ոմանք ուզում են մեր այս i խոնարհիչը կապակցել սլավոնական և լիտվական նման i խոնարհիչի հետ, ինչպես հին սլավ. bīd-i-tŭ „бают" (արմատն է). Թեպետ կա և զարգացյալ ja մասնիկը հնդհրանականում, ինչպես սանս. budh-yá-te «զարթնել է» և կամ այդ մեր „i" մորֆեմաին, օրինակ նաեվ (բայի մեջ ուզում են կապակցել լատ. „ē" ի (կամ-ēje-ի) հետ), sedeō (sedere) «նըստում եմ», Թեպետ Ա. Մեյեն ստիպված է խոստովանել, որ „Il convient par suit de ne rien affirmer précisément sur lorigine des verbes arméniens en i- -i" (Esq. էջ 108): Այս կապակցությամբ ևս կուզենայի շեշտել նախահնդեվրոպական տեղական լեզուների հնարավոր ազդեցությունը հայերենի վրա: Օրինակ՝ ուրարտական բնեռագիր արձանագրությունները ունեն անցյալ կատարյալի „i" և „a" բնեռով հիմքեր (բներ), որոնք արտահայտում են չեզոք (-կրավորական) սեռի իմաստ, ալապես՝ uluštai-bi «առաջնորդեց, ուղղությունը ցույց տվեց», aišti-bi «վազեց» (ձին) ...ušta-bi «արշավեց» (uštadi «արշավեցին»), šic-bi «երեսաց, նկավ», nuna-bi «նկավ» և այլն, որն ընդունվում է բոլոր ուրարտագիտների կողմից (-u-թեմատիկ, օրինակ karu-bi «նվաճեցին», ḫau-bi «գրավեցին», uštu-bi «նվիրեցին» և այլն ցույց է տալիս ներգործական իմաստ): „i" մորֆեմաի կրավորական—չեզոք ֆունկցիան կա նաև վրացերենում, օրինակ v-šale «փոում եմ, բացում եմ», բայց v-išale «փովում եմ, բացվում եմ», šoba «ծնունդ», v-šob «ծնում եմ», բայց šob-i-li «ծնվածը» (m-šob-eli «ծնողը») կամ vaçvaleba (v-açvale) «առանջում եմ», իսկ v-içvaleba (v-içvale) «առանջվում եմ», v-phen (v-phine) «փոում եմ», v-iphinebi (v-iphine) «փոում եմ», phenili «փոփոխած» և այլն:

չա (ա) ԱՌՆԱՐՁԱԿ

Այս խոնարհման տակ գնացող բայերը մեծ մասամբ չեզոք են, ցույց են տալիս կացական վիճակ կամ դրա դառնալը: Համե-

մասնել նման a խոնարհումը, որպես չնզոր, լատիներեն cubāre «պառկած լինել», micāre «փայլել» և այլն: Դրաբարում ունինք ծխել, բայց՝ ծխալ, ծուխ, բայց՝ ծուխալ, կոծկել «խփել իրենց», բայց՝ կոծկալ «խմկելով ողորկ» և այլն, ծոցած դնս այժմյան բարբառային բնաձայնական ծլվլալ, ծշծշալ, փսփսալ, գոռգոռալ (և գոռալ), ծուխալ և նման հարյուրավոր կրկնավոր և ոչ կրկնակ բայերը: Այս ա խոնարհման չնզոր բնույթի վրա ծնվել և վերնում նշված ստորոգական և մյուս ստեղծական (ասրանիկ) ենդունների խոնարհման չնզոր անորոշ պատկանող բայարմատը, ինչ այդ հատկանի է մասամբ և այն էլ առրնատ բնի ձևերում (uš-adi, šī-adi, nun-adi և այլն):

Ներկա բնի համար ոչ անդամային պարզ a ծնեմայով են կազմված հնանալ հարկական բայերը, որոնք հնդևրոպական ծագումով են: Այսանդ այդ a խոնարհիչը ենթադրվում է, որ ծագել է հնդևր. *-ā-je- ձևույթից: Ունենանք, օրինակ, որ ծամ «որձկում եմ», =հին. սլավ. rygajǫ „рыгаю", կեամ «ապրում եմ», հին. *gʷīj-ā-je -ձևերից բարդված (հուն. ζῶ- արմատը առաջացել է *gʷjē-ից, իսկ βιο-ն առաջացել է *gʷijō-ից), մնամ հավանորեն առացվել է (ըստ Մելեի) հին *men -ā -je ձևից, ինչպես են ձևավորվել լատ. cēlā-re (cēlō) «թաքցնել», հին սլավ. -mēta -ti метать (ռուս. мета́ю). իսկ այդ մնամ բայի ազդակիցները լատ. manē-re, հուն. (μεσ.) μέν-κα այլ կերպ են ձևավորված: Ինգալին ձևով ներկան, բացի -նամ մասնիկից բառնամ (<*բարձնամ-բարձի) և դառնամ (*դարձնամ-դարձալ) բայերի մեջ լինում է միշտ -ana- ձևով, որ հետագայում առանում է «դառնալ մի բանս մասնիկի իմաստ, ինչպես՝ քարանալ, մեծանալ, առատանալ և այլն: Հին կազմություններ են՝ առանամ (առացալ), որին ազդակից են լատ. (de-, prae-) stināre հատատանել, նշանանկել, ուրանամ (ուրացալ), համմ. հուն. ἀρνέομαι «մերժել ուրանալ», բանամ (բացի), լոզանամ =հուն. λούω, լուանամ =հուն. πλύνω և այլն: Կա և -նամ (-նացալ) ածանցը, ինչպես արբենամ, մերձենամ, յոգնամ և այլն, որոնք ստակավաքիով են և համեմատաբար ուշ կազմություն բայեր: -նամ մասնիկը առացվել է -*նանամ ձևից:

Դրաբարից ծագած «ա» խոնարհման բայերը, ինչպես օրինակ յուսամ (յուսացալ), իրենց «ա» խոնարհիչի մեջ ենթեա պահել են հնդևր. -ā -je բարդ ածանցը, ինչպես ունենանք սանս. pṛtanāyati «թշնամի է», pṛtanā «թշնամություն», հուն. τιμάω «գնահատում

համ (*տալիք գինու*), *սլավոն.* kotorajǫ *վերամբարձ համ*, kotora *վերին գոլորշանիք և այլն*

ու (*U*) ԽՈՆԱՐՀՈՒՄ

Առանց ընդգծելու ածանցի հնդեվրոպական համապատասխանությունն ունեն հայոց գլուխ (*առոգ. գլխի*), *հուն.* welý-sthē *պատուհան, դլորվելիք* (ξελύ-ω *գլորելը*), *լատ.* volvō, *գոթ.* walwjan, *հնաոսկ* (*հնկի*) *վհնաոսկ համ* = *լիտ.* pinù *վհրաուսկ համ*, *գոթ.* spinnan *տմանելը* (**spenwe-ից*), *հնգոտ* (*հնգի*) = *լիտ.* (pi ú (id). *գլուխ* (*գլխի*), *վճգուտ համ բայի ու* (*-u-*) *թեման չի անանվում այդ արմատի ազգակից մյուս հնդեվրոպական արմատաների մեջ* (*լիտ.* skelíù, *հին. իսլ.* skilja *վճգնել*, *խեթ.* (i)skal a *վճգնել*)։ *Ինգայլին մատնիչով* (*-նու-*) *ունենք մի քանի միայն հնդեվրոպական բայաձևերով ներկա, ինչպես առնուտ* (*առոր.* ἀρνυμαι (*առոր.* ἀρόμην), *զգենուտ* (*զգեցայ*) = *հուն.* βέννυμαι.... *իսկ լցնուտ* (*լցի, լրից*) *բայի -նու- ածանցի դիմաց ունենք առնա-* nā- (pṛnáti *լցնում է*)։ *Արդյոք հայոց ու պարզ խոնարհման այդ բայերի մեջ մասն նախդրածական լինելը չի՞ ազդվել ուրարտական բայերի* u *թեմայից* (*ar-u-bi, ḫa-u bi, ušt-u-bi և այլն*)։ *Ըստ Ն. Մառի գրաբարի քերականության* (СПЗ, 190⁷, *էջ 190*) *գրանք քսան և յոթ բայեր են – արձակում, արթնանում, հարթում, լուծվում, կապում, զերծում, թողում, լիանում և այլն։ Հնդեվրոպական լեզուներից միայն սանսկրիտաբանները և հունարենը ունեն -նա մասնիկը ներկա բնի կազմության համար, որը համարվում է հետագա շրջանի առաջացածք* (Esq , 112)։ *Մենք նման զուգադիպությունն հայերենի և ուրարտերենի բայաթեմանների ֆունկցիաների մեջ արդեն տեսանք։*

Բոլոր վերոհիշյալ e, i, a, u *ներկայի թեմաներից բացի կա ևս մեկը, որ վերջանում է* «ο»-*ով, դա գոմ գոլորշիացուն ունեմ, կամ բայն է, որի արտ բուն է գո-* (go-)։ *Այդ պակասավոր բայը առաջացել է նախնական* **wos-ից, որ նոր է անցյալ ժամանակով* (perfectum) *ձևակերպված, իբր* **vóse և ազգակից գոթերեն* was *եղա. էի», բայց հետո դարձել է ներկա, նման գիտեմ բայի, որ նույնպես նոր է անցյալ, նման առնա. véda, հուն.* ϝοῖδα, *գոթ.* wait *գիտեմ* (*առաջ «իմացա»*)։

ԱՈՐԻՍՏ ԲՆԵՐԸ

Ունենք երկու տեսակ բայարմատներ՝ արմատական և ցոյական (*«ցո» մորֆեմայով*)։ *Ամեն մեկն էլ խոնարհվում է երկու ձևերով՝* e *թեզուլթաձևով* (*ներգործածև*), *որի առաջին դեմքն է ի, իսկ ներ-*

Դրան ենթարկվում է ե (e) խոնարհման, և a թեքույթաձևով (medio-passivum չեզոքակրավորաձև), որի առաջին դեմքն է ալ, իսկ ներկան ենթարկվում է ի, ա, ու խոնարհման: Համեմատել՝ բերեմ—բերի, գործեմ—գործեցի, բերիմ—բերալ, գործիմ—գործեցալ, բարկանամ—բարկացալ, զգենում—զգեցալ և այլն:

Արմատական արտիստով են -անիմ -անի, -ու, -ում (այդ -նու-ից առաջ չպիտի լինի ձայնավոր) թեմանեքով վերջացող ներկաները, ինչպես և հանիմ, ածիմ, բերիմ և նատիմ բայերը: Համեմատել՝ անասանիմ—անալ, անասանիմ—անասալ, մնասանիմ—մնասալ, հնդում—հնդի (կրավ. հնդալ), ջնջնում—ջնջալ և այլն: Երդնում բայը ունենում է երդու-ալ, իսկ -նու ‖ -չի վերջացող ներկայի բեների բայերը ունենում են արտիստում -եալ վերջավորությամբ արմատական բեներ, որոնք իրր սկզբում ունեցել են այդ -եալ վերջավորության -ի- (>ե-) մասը, օրինակ զարթչիմ—զարթեալ, պակնում-պակնալ և այլն: Համեմատել նաև՝ յառնիմ—յարնալ, որի արմատն է (յ-) արի, որ մաքուր ձևով մնում է հրամայական արի (տվեր կաց»), նման յառիներին ori-or «յառնել» ազգակից բայարմատին (արի-=ori-):

Յոթական արտիստով են մյուս բայարքները. այն է, որը ներկան խոնարհվում է a խոնարհումով՝ ձեամ—ձեացի, յուսամ—յուսացալ, լուանամ—լուացի, մնծանամ—մնծացալ, -ոտ մասնիկով բայերը, որը դրան նախորդում կամ նախորդել է որևէ ձայնավոր, ինչպես՝ զգենում—զգեցալ, լինում—լեցալ, լնում (<*լինում)-լցի և այլն, e և i խոնարհման բայերը, որոնք չունեն ոնդային մասնիկ (-անն, -անի), ինչպես՝ գրեմ—գրեցի, բազմիմ—բազմեցալ և այլն, բացի ածեմ, բերեմ, հանեմ և նատիմ բայերից, որոնք ունեն արմատական արտիստ: e և i խոնարհման դեպքում արտիստի «ց» նշանը ավելացվում է ոչ թե այդ խոնարհանիշների վրա, այլ -եա (-ea-) մասնիկի նախորդումով, այսինքն գործեցի կամ գործեցալ ձևերը եղել են *գործ-եա-ց-ի կամ գործ-եա-ց-ալ, ուր այդ -եա մասը առացել է րաո Mariés-ի *-is-ā կոմպլեքսից, իսկ դրա -is- մասը պետք է տեսնել օրինակ, լատ. ēg-is-ti, ēg-is-tis, ēg-er-ā-s (ուր -er -ā <-*is-ā-) ձևերի is-ի մեջ: Տես Ա. Մեյեի Esquisse-ում (էջեր 116–117): Այդ -ea- մասնիկը մտնում է և -եա-լո- անցյալ դերբայի վերջավորության մեջ, ինչպես գործեալ, առեալ, բացեալ, զգեցեալ և այլն:

Իսկ ինչ վերաբերում է արտիստի «ց» ձևին, ապա ինչպես տեսանք, կան և ոչ այդ կերպ կազմված արտիստներ: Հայոց հա-

*ժամատական հնչյունատրանսթյունից մնց հայտնի է, որ հնդեվրոպական -sk-հնչյունակոմպլեքսը վերածվում է հայոց «ց» աֆրիկատի: Եվ այդ նկատի առնելով վերաստեղծում են *-ske ածանց (>հայոց-ց), որը հատկարնում հանդես է գալիս անցյալում (praeteritum-ում), ինչպես՝ φάσκον, φεύγεσκον, φύγεσκον, φιλέεσκον և այլն: Լատիներենը, հունարենը, սլավոներենը և մյուս հնդեվրոպական լեզուները գործ են ածել անցյալ կատարյալում *s ձևը, և կարծում էին, որ հայոց «ց»-ն համապատասխանում է այդ *s-ին, բայց բուռ հնչյունափոխական օրենքի հայերենում այդ հնդեվ. -*s- շրնչականը (ապիրատուը) պետք է ընկներ: Ի միջի այլոց «ց» < հնդեվ. *sk ծագումով է դրարարի միակ դնվերբատիվ պատճառական բայերի -ուց մասնիկը, առացված -ույց շեշտավոր ձևից (փախ-ուց-անեմ), առր. փախ-ուց-ի, 3-րդ դեմք՝ փախ-ույց), ուր «ց» մորֆեմական համապատասխան է հուն. σκω, լատ. scō: Նման հայոց «ց»=հնդեվ. *sk մնաց տեսանք հոլովման մնջ, ուր տես. -առր. -բաց. «ց» կապվում է -sk- (ռուսաց -ск-ան) ածանցի հետ:*

ԲԱՑԻ ԹԵՔՈՒՄԸ

*Քոնաբհման մնջ, ինչպես և հոլովման, հայերենը կորցրել է երկակի թիվը, չունի ներգործական և չեզոք (կրավորական) բայաձևերի համար առարկեր վերջավորություններ, ինչպես այդ անում են հնդիրանական և հունական լեզուներում: Բայի այս թեմաների մնջ, ինչպես և հոլովման ժամանակ, և հնչյունը առաջանում է *ej երկրարբառից, -ույ և -իյ- կոմպլեքսները վեր են ածվում պարզ -ու- և -ի- ձայնավորների: Ինգալին (n, m) հնչյուններից առաջ ե և ո ձայնավորները չեն դառնում ի և ու, ինչպես լինում է սովորաբար, այլ մնում են իրենց իսկական վիճակում, ինչպես ունենք -եմ, -են (գիտեմ, գիտեն) կամ -ոմ, -ոն (գոմ, գոն), բայց այս դեպքերում բայիմաստն է գերակշռում ձևական հանգամանքի վրա, ինչպես հաւք, թիւք և այլն չեն դառնում հօք, թյուք և այլն, իսկ օրինակ աւձ, աւր... կամ ամաւք, բանիւք... հընչվում են օձ, օր... կամ ամօք, բանիւք և այլն:*

Քնններնք առնմանական նեղերալի, հրամայական նեղանակի, առոքտազառատական եղանակի (նեղերալի և առրիստի), առնմանական առրիստի և անկատարի դիմավոր վերջավորությունները:

Եզակի առաջին դեմքում ունենք -մ (-m) *բերե-մ, բերի-մ, ադամ, ֆոդում, գո-մ: Իսկան* b մ *բայը համապատասխան է առնս.* ásmi, *հուն.* ἐιμι, *հին սլավ.* jesmĭ *և այլն: Նույն համապատասխանությունը (հայոց* -մ = *հնդեվ.* -m) *ունենք բերեմ = առնս.* bhárāmi, *խոլ.* berim, *սլավ. (սերբ.)* ɫerem *կամ* a *խոնարհմամբ՝ բառնամ = հուն.* φέρω: *Ընդգծում եմ, ընկճում եմ, ընդունում եմ, ընդգրկում եմ, ընդունում եմ, ընդգրկում եմ, ընդունում եմ, ընդգրկ

Եզակի երրորդ դեմքում ունենք -յ վերջավորութիւնը, որը ու (u) և ի (i) խոնարհիչներից հետո չի հնչվում, ընկնում է։ Այսպես՝ բերէ (<բերե-յ), ասա-յ, դուլ, բայց՝ բերի (<*բերի-յ) «բերվում է». թող-ու (<թողու-յ) «թողնում է»։ Այդ -յ մասնիկի առաջացել է հնդեվր. -ti ձևից, ինչպես ունենք սանս. bhá-rati. հին ռուս. beretĭ „береть“ և այլն։ Հոգնակի երրորդ դեմքում ունենք -ն. ինչպես՝ բերին, բերին, ասան, թողուն, դուն, որը ըստացվել է -նտի (-nti) նախկին ձևից, համեմատել bû=սանս. santi, հուն. *ἐντῑ<εἰσι. դոթ. sind.

Ուշագրավ է այդ մեր էական բայի եզակի երրորդ դեմքի h ձևը, որը բնավ չի համապատասխանում սանս. ásti, հուն. ἐστι, սլավ. есть, այլ անալոգիայով հետևել է բերի կազմութիւնը։

ՀՐԱՄԱՑԱԿԱՆԻ ՁԵՎԸՐԸ

Հայերենի հրամայականը կազմվում է երկու տեսակ. մեկը սարֆատի բնից է և կրում է կոնկրետ ու կատարյալ բնույթ, ինչպես՝ բեր=սանս bhára, հուն. φέρε, լի՛ր հուն. λίπε, ճա՛րց = սանս. pṛcchá. իսկ մյուսը կրում է արգելական բնույթ մի՛ մասնիկով (=սանս. má, հուն. μή), կազմվում է ներկայի բնից և ունի տևական չվերջացած նշանակութիւն, ինչպես մի բերեր, մի լքաներ, մի լնար և այլն, հոգնակիում մի բերէք, մի լքանէք, մի լնաք և այլն։ Եթե ուզ հոգնակիում մասնիկը առանձնացնենք, ապա բերէք, լքէք ձևերին կհամապատասխանեն հուն. φέρετε (=սանս. bhárata) և λίπετε.

Հրամայականի երկու բների առկայութիւնը ընդհանուր և կոնկրետ առումների համար տեսնում ենք և հուներենում և մանավանդ սլավոնական լեզուներում։ Համեմատել, օրինակ, русск. возьми «վերցրու», բայց արգելականը՝ не бери (չի կարելի ասել не возьми). понеси բայց не носи և այլն։ Հունարենը դրական հրամայականը միայն կազմում է արիստից (λίπε). այնինչ ներկայի բնից կարող են կազմվել թե դրականը և թե արգելականը (λεῖπε թողա, μὴλεῖπε մի թողա)։

Արգելական հրամայականի վերջին ձայն (մի՛ բերեր, մի՛ լնար...) հնչյունը Ա. Մեյեն համարում է մի առանձին մասնիկ, նման հուն. ρα կամ αρα, որ մասնիկին, որ բառից հետո է դրվում և ցույց է տալիս որոշ տրամաբանական անցում մեկից գնալի մյուսը, «իսկապես, հետևապես» (igitur) իմաստով։ Նշվում է նաև լիտ. ĭĕ

մասնիկի նման հնոց լեռնականներն eĭ-ka «գնա» (nogu-ka ուսանելնում) -ka մասնիկով։ Հետևապես բնիկը, ենթ և նմանները կազմված պիտի լինեն *bhere-re(e) *plenu-r(e) և նման ձևերով։ Ա. Մելիե այս մեկնաբանությունը համարում է պարզ և ջնջած մութ է համարում մյուս հրամայականները, որոնք վերջանում են -իր ձևով (անկ-իր, մնա-իր...), -ար-ուք (անկարուք, լուարուք...) կամ պարզ -ր ձևով, ինչպես՝ լուր «լսիր», աուր (հոգն. աուք), դիր (հոգն. դիք) և այլն։ Ըստ իս, այդ բոլորը մի ծագում ունեն և հավանորեն ոչ հնդեվրոպական են։ Ես նկատի ունեմ ուրարտական -ri (կամ -rie=-re) վերջավորությունը, որ կրում է turi (‖ turie=ture) «ջարդիր» ձևը կազմված tu- «ջարդել» արմատից, ինչպես այդ պարզ երևում է այսպես կոչված ռանիձքի ֆորմուլայից։ Այստեղ կարդում ենք –aluš tiulie ulitiuri «ով ասէ դնա ջարդիս» (որտեղ uli «գնաս» կապ ունի հայոց ուղի բառի հետ, կա և uladi «գնացի, մեկնեցի»)։ Սրա աստրական թարգմանությունն է alik ḫipi «գնա ջարդիս», իսկ tu-re «ջարդիր» ձևի tu- արմատը ունենք և tu-lie (=tu-le) «ջարդեց» աստրադատական՝ նեռկալի մեջ (aluše ini DUB. TE tulie «ով այս արձանագրությունը ջարդեց»)։

Հրամայական -իր վերջավորությունը, ինչպես և հոգնակի -արուք ձևը կապ ունեն աորիստի -եր -ար ձևերի հետ «էր» հիմնական և ընդհանուր հնչյունով, որ երևան է գալիս և արդիական հրամայականում։ Հրամայականներ—լուարուք, լուալը, կամ թագնալը, թագներուք (<թագներ-ուք) և նմանները նշանակում են նաև աորիստի երկրորդ դեմքերը հոգնակիում։ Այսպես է նաև աորիստի աստրադատական -ջիք II դ. հոգնակի վերջավորությունը, որը ցույց է տալիս նաև հրամայական, ինչպես՝ հալեջիք, կալջիք, առաջիք և այլն. որոնց -ջիք ձևի հրամայական երկրորդ դեմքի նիշն է «ջ» ավելացած հոգնակի «-քա-ուլ։ Այդ «ջ»-ն կա և նզակիում, թե նեռկալի և թե աորիստի աստրադատականներից կազմած հրամայականներում (ազանիշիք, ուտիջիք..., տնաջիր, հալեջիր և այլն) և ենթադրաբար ազգակցում է սանս. -dhi և հունարեն -θι հրամայականի II դ. նզակիի վերջավորության հետ, եթե ընդունենք որ այդ -dhi ձևը մի հաջորդ ձայնավորից առաջ դառնում է -dhy-, թեպետ ըստ Ա. Մելիե „Il est impossible de rien déterminer ici avec précision“ (Esquisse, էջ 121)։

Յոլական աորիստի բնից կազմած միջանկ հրամայականում (II դ. նզակի) պահվում է այդ «ջ»-ն (կաց, կնաց, լից...), իսկ

բազմաձանկ կազմություններում այդ «ց»-ն ընկնում է, ինչպես՝ գործնա (բայց հաղնակի գործնեք<*գործնա-ց-էք), ինա (=մընա, բունն է մնաց-), հասո (հոդն. հասուցէք, բունն է՝ *հասոյց-) և այլն։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐԸ

*Ստորադասական եղանակի էական բայի ներկան կրնի իցեմ, որը խոնարհվում է ինչպես սահմանականի ներկան (եմ, ես, է և այլն)։ Այս իցեմ, իցես և այլնի մեջ հիմնական կարևոր բունն է ից-, ուր «ց» ձևը արտացոլում է *-ske-և իցեմ կազմությունը համապատասխան է լատ. escit «կլինի, il sera»։ Որոշ մեկնաբանություն անդիք է տալիս հայոց այդ ստորադասական ներկայի սկզբնական «i» (i ձայնավորը, որ փոխարինում է e-ին (es- «լինել» արմատում)։ Ոմանք (Մելիե) ենթադրում են, որ էական բայի այդ i-ն կա նաև isk (իսկ) բառի մեջ, առացված հին *is-two- ձևից, համեմատաբար սլավ. истый, истина, истовый բառերի ist-ի հետ, հուն. ἴ-σθι «եղիր» հրամայականի i ձայնավորով is- ‖ es- ալառերնատիպ/ բներին հետ, որը հարկավ ենթադրական է։*

*Ստորադասականի ներկան e, i, a, u, o խոնարհումներում կազմվում է այդ էական բայի (իցեմ և այլն) հավելացմամբ բայերի բներին վրա և առանում ենք բերե-իցեմ>*բերելցեմ>բերիցեմ (բերիցես, բերիցէ և այլն), իսկ i խոնարհման ժամանակ հավելացվում է իցեմ>-լցեմ, ուր վերջի «ե» ձայնավորը խոնարհման ենթատիպ i ձայնավորին նմանանալուն է, ինչպես u (ու) խոնարհման դեպքում նման ենք տեսնում (լնու-լցեմ>*լնուցեմ>լնուցում)։ Նորմալ են՝ ազա-լցեմ (կրավ. ազալցեմ), գո-լցեմ>գուցեմ։*

Ստորադասականի արմատը նույն բնույթի կազմություն ունի, ենթակա մի երկու արմատիկ շեղումներուն։ Վերցնենք ներգործական բերեմ և ազամ բայերից այդ ստորադասական անցյալ կատարյալը՝ բերից, բերցես, բերցէ, բերցուք, բերջիք, բերցեն, նաև՝ ազացից, ազացես, ազացէ, ազացուք, ազացիք, ազացեն։ Կարծես թե սահմանական արմատին վրա (բերի, ազացի) ավելացնում ենք -ց, -ցես, -ցէ, -ցուք, -ջիք, -ցեն, բայց պատմականորեն ազացուցվում է, որ առաջին դեմքը առացվել է -ից (բեր-ից, ազաց-ից) վերջավորությունից, որը արտացոլում է հնդևր. -isco ձևը. և այդ, ինչպես և տաց «առամ» կազմությունները, ազացուցում են, որ հայ լեզուն ունեցել է բայի առաջին դեմքում նաև-o վերջավորու-

թյունը, ինչպես լատ. fero. հուն. φέρω: Երկու «ց» հնչյուններին հանդիպման ժամանակ (բացից—բացցես, բացցէ, բացցուք...), որի հիմքի «ց»-ն «ի» ձայնավորին անկման հետևանքով միասին է հնչյուն վերջավորության «ց»-ի հետ, ստում է այդ «ցց»-ն երկվանկ թյան դեպքում, իսկ բազմավանկության դեպքում դառնում է «ց» (ասացից—ասացցես—ասացէ—ասացուք և այլն): Հոդնակի երկրորդ դեմքի-ջիք վերջավորության մասին խոսվել է հրամայականը կազմելու հատվածում, իսկ առաջին դեմքի -ցուք վերջավորությունը լավ չի ճշտված: Կամ դա հանում են *-ցոմք ենթադրյալ վերականգնության, կամ այդ -ցուք մասնիկի մեջ «ս» ձայնավորը հանում են հին «օ»-ից, ինչպես ունենք հանանական առորագասականի մեջ (φέρωμεν): Ձևդր-կրավորականի առորագասական առորիստը նմանատառության (անալոգիայով) վերցնում է այլ տիպի սահմանական առորիստի առաջին դեմքը (բերալ, գրեցալ) և ավելացնում է -ց, -ցիս, -ցի, -ցուք, -ջիք, -ցին, զոդնվով առորիստի -ալ կամ -եալ վերջավորությունները նպակի երկրորդ դեմքից սկսած (բերցիս, բերցի..., գրեցայց գրեցիս, գրեցի...), բացառությամբ -եալ վերջացող առորիստից (չարեալ, յանցեալ, երկեալ, երկեալ, թագեալ...), ուր ունենում ենք՝ չարեաց -չարիցես -չարիցէ -չարիցուք, չարիջիք-չարիցին: Ինչպես տեսնում ենք բոլոր այս ձևերից, հոդնակի առաջին և երկրորդ ձևերը (-ցուք, -ջիք) ունեն թե ներգործական իմաստ և թե չեզոք -կրավորական:

Առորագասականի այս առորիստով թարգմանվում է (ավետարանում և այլն) թե հունական բնագրի սահմանական սպառնին և թե առորագասականի առորիստը (տե՛ս Esquisse, էջ 123):

ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ (ԱՌՐԻՍՏԻ) ՁԵՎԵՐԸ

*Եզակի առաջին դեմքի վերջավորությունն է -ի (-i), որի ծագումը անհայտ է: Երեք առորիստի բոլոր ունի ձայնավոր, ապա այդ «ի»-ն վեր է ածվում «յ» (յոտա) տառանան, որպես դիֆտոնգի երկրորդ տարրի: Այսպես են՝ բեր-ի, տես-ի, գործեց-ի, յց-ի..., բայց՝ բեր-ա՛յ, տեսա՛յ, գործեց-ա՛յ, երկ-եա՛յ, նդէ (<*նդէ) և այլն:*

Եզակի երկրորդ դեմքը ունի -ր (r)՝ բերե-ր, տեսե-ր, գործեցե-ր, նդե-ր, բերա-ր, տեսա-ր, գործեցար և այլն: Այստեղ այդ «ր»-ն նույն ծագումն ունի, ինչ մենք տեսանք հրամայականի մեջ, որը Ա. Մեյեն ուզում է հրամայականի ածդնության թացատրել (c'est sans doute la même particule qu'à l'impératif ou plutôt

c'est une forme influencée par l'impératif', Esq., 125). և իրև ֆև ասնա. bhárah և հոմկրական ջ̌ḗṛas ձևերի մեջ պահվել է բնիկ (<*bheres-r(e)) կազմութեան ֆևքման „e"-ն։ Մենք այդ հրամայականի և անցյալների «r» „(r)" վերջավորութիւնը համարում ենք ոչ հնդևրոպական, այլ ուրարտական, resp. ասիանիկ ծագումով։

Ըզակի երրորդ դեմքը ունենում է երկու տեսակ կազմութիւն, մեկը պարզ արմատը, որի միավանկութեան պայմաններում ավելացվում է և (e) ձայնակը (և-բեր, և-լիր, և-հարց, և-լաց...), ևրկն այդ արմատը ձայնավորով չի սկսվում (եկ, օծ, աճ...), իսկ մյուսը չեզոք բայերում՝ -ա-ւ (-a-w) վերջավորութիւնը։ Ա յատկեղ «a» ձայնավորը չեզոքութեան բնագիրն է, իսկ w վերջավորութիւնը, ըստ իս, գալիս է ուրարտական (resp. ասիանիկ) լեզվաշերտից։ ֆևպես և. Մենն դա համարում է արխաիկ հնդևրոպական մի ձև, որ երևան է գալիս առանձրիտների (վեդաների մեջ) perfectum-ում պահել է հնաք նաև լատիներենում և թոխարներենում և «անկասկած խնձիական որոշ ձևերի մեջ» (Esq., 124)։ Ա ճակատը augmentum կա բացի հայերենից նաև հունարենում և հնդիրանական լեզուներում և գրվում էր երեք դեմքերում ևս, թևպես կարող էր առանց իմաստի փոփոխութեան նաև չգրվել, իսկ հայերենը այդ աճակատը պահել է միայն երրորդ դեմքում, բացի մի քանի դեպքերից (եղև, ևկի, եառ), իսկ հնամիջնադարյան ձեռագրերում այդ աճակատը գրվելիս է եղել ըստ անալոգիայի, նաև «ա»-ով սկսվող արմատների երրորդ դեմքի վրա (օրինակ հած «բևրից» ած-ամ բայից)։

Ա որիստի առաջին դեմքը հոգնակիում ունի -ախ (-akh), օրինակ՝ բերաք, որը ֆև ներգործականի համար է և ֆև չեզոք-կրավորականի, և -ա- ձևի բացակայութիւնը դրա մեջ, նկատի ունենալով առնա. -ma, հուն. μεν ձևերը նույն աորիստի հոգնակի առաջին դեմքում, պետք է բացատրել անալոգիայով, ինչպես ունենք ապրագառականում բերցուք, նույն m ձևանիշի բացակայութիւնով։

Ա որիստի 2-րդ դ. հոգնակիում ունի այք ներգործականի համար (բերէք<*բերեայք), որ հնում դարձել է բերիք, և կրավորականի համար (բերաւք)։ Ներգործական բերէք ձևին համապատասխանում են առնա. bhárata, հուն. φέρετε։ Հայոց այդ աորիստի -ք հոգնակիու մասնիկը կա և ներկայում։ Այդ 2 դեմքի համար, բայց միայն չեզոք-կրավորականում ապառնիից և հրամայականի համար, ունենք -արուք վերջավորութիւնը, ինչպես ավետարանում (Ղուկ. XIII, 34)—քանի՞ցս անգամ կամեցայ... և ոչ կամեցարուք, իսկ հրամայականի առումով (անգ. XV, 10)—լուարուք և ի միտս առէք

Աորիստի 3 դեմքերի համար (հոդնակիում) կա -ն (-n) վերջավորությունը, ներգործական -ին (-in) և կրավորական -ան (-an), որոնց ալդ -ն (-n) բաղաձայնը ծագել է նախկին -nt կոմպլեքսից: Այս երկու ձևերի մանրամասնություններն չենք բացատրում:

Գրաբարի աորիստը իր իմաստով չի հետևում հունականից, ինչպես՝ լքի=հուն. ἔλιπον և այլն, որոնք հավասար արժեքի են:

Այդպես ասվածն, անկախ բայաձևից, մենք ընդհանրապես ունենում ենք աորիստի հետևյալ վերջավորությունները. եզակի 1-ին դեմքում -ի, երկրորդում՝ ր, երրորդում՝ մաքուր բունը կամ արմատը և -ւ (-w), հոգնակիում. -ի դ. ար, II դ. —լք և —արաք (կրավ.) III դ. -ն:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ (imperfectum)

Բոլոր հոլովումների դժոխ սահմանակաևի այս անցյալ անկատարը կազմվում է դրանց ներկաների բնին (էթեմատներին») ավելացնելով որոշ թեքություններ: Պետք նշել միայն, որ ե (e) և ի (i) խոնարհումների այդ անկատարը միանձն է, հար և նման էական (ժամանակ) բայի անցյալին (ես, էիր, էր<*ներ, եաք, էիք, էին): Այդպես են՝ բերեի, բերեիր, բերէր<*բերեյր և այլն. լայի, լայիր, լայր, լայաք, լայիք, լային. ընուի, ընուիր, ընոյր<*ընուր, ընուաք և այլն: «Ա» խոնարհման ժամանակ բնի և թեքությունների մեջ ավելանում է «յ», իսկ «ե» խոնարհակերտը, հետագալում (մեջին դարերից սկսած) դրվում է «է», այսինքն՝ էի, էիր, էր.... բերէի, բերէիր, բերէր և այլն, թեպետ եր, բերեր ձևերը հին են: Այդպես ավ մաքուր վերջավորություններն են՝ -ի, -իր, -յր, -աք, իք, -ին, որոնք մասամբ նման են սահմանական եղանակի աորիստի որոշ թեքություններին (համեմատել աորիստի թեքությունները՝ բերի, բեր-եր (երեր), բեր-աք, բեր-եք ‖ բեր-իք, բեր-ին, թեպետ կրավորականում կա՝ -յ, -ար, (-աւ), -աք, -այք. ան): Այս անկատարի վերջավորությունները (-ի, -իր, -յր, -աք, -իք. -ին) ոմանք ենթադրում են, որ նման աորիստականին՝ բերիցեմ, բերիցեն, և այլնի կազմության նույնպես կարող էին բարդության հետևանք լինել. ինչպես նմանը ունեն լատ. legē-bam. հին սլավ. несъ-ахъ (neše-achŭ), գոթ. nasi-da և այլն: Եվ, ուրեմն ենթադրվում են, որ -ի, -իր և մյուսները «լինել, быть» բայի անցյալի (prétérit) ձևերն են և մոռացած են նույնպես էական եմ բայի

մեջ, որպես վերջավորություններ: Սանսկրիտի åsa հոմեր. ἧα համապատասխանները -ի հայոց վերջավորության կամ -յր ձևի համապատասխանները ասեմ. âḥ և հուն. ἦς ձևերին (<*ēsi) շատ և մեխանիկական նմանեցումներ են, այլ էլ՝ հակառակ հայկական հնչյունաբանական օրենքներին, իսկ աորիստի նման վերջավորությունները չեն. նպատակահարմար համարել այդ բարդությունը: Երկրորդ դեմքի -իր (-ir) ձևը, որ կա և աորիստի -ր (-r) ձևի մեջ (բեր-եր || բեր-ար), ինչպես և հրամայականի մեջ (առ-ր, լու-ր...) և համաձայն է ուրարտերենի նույն ձևին (iu-ri «ջարդիր»), ինչպես և -յր (jr) երրորդ դեմքի նմանությունը փոյուգիականի *-tor-ին (փոյուգ. ab-beretor=հայոց բերէր<բերե-յր), հակառակ են խոսում մեր անցյալ անկատարի վերջավորությունների վերոհիշյալ մեխանիկական կցումներին: Գրաբարի -իր վերջավորությունը (տեսա նիւր, տանէիմ էր», երեւիր երևնում էր») առաջացել են հին -*etro ձևից, թեպետ գրաբարում այդ -իւր ձևը չի համապատասխանում դասական (հին):

Սահմանականի այս անցյալ անկատարը ցույց չի տալիս լատիներենի նման մի պրոցես, որ նախորդել է մի այլ դեպքի, այլ հունարենի և բնդհանրապես հնդեվրոպականի նման մի պրոցես, որը տեղի է անցյալում (համմ. ռուսաց „прошедшее время несовершенного вида»): Բայց այդ անկատարը չունի աորիստականի իր առանձին արտահայտությունը, ինչպես սահմանականի ներկայի համար (բերեմ. ասեմ) ունենք աորիստական ներկան կամ ապառնին (բերիցեմ, ասիցեմ) կամ աորիստի հանդեպ (բերի, ասացի...) ունենք աորիստականը (բերեալ, ասացեալ...): Սահմանականի անկատարի ձևը տալիս է նաև աորիստականի իմաստ, ինչպես—սա ինձ մարգարէ ոք էր՝ ասաց գիտէր (ավետ. ըստ Ղուկ. VII, 39):

ԲԱՅԻ ԱՆՓԱՆԱԿԱՆ ՁԵՎԸՐԸ

Բայի ներկայի բնից կազմվում է նախ անորոշ անունը (infinitivum. անորոշ դերբայը՝ անունը), որը վերջանում է -lo- (-լո-) թեքման մասնիկով՝ բերել, ասել, լինել և այլն, ունենալով թե ներգործական և թե չեզոք-կրավորական իմաստ:

Այդ անորոշից ածվում են երկու դերբայ-ածականներ, մեկը -ի (-i) վերջամասնիկով, ինչպես՝ սիրելի, առնելի, ըմպելի և այլն, որոնք մեծ մասամբ կրավորական իմաստ են ունենում, իսկ երբեմն՝ և ներգործական (սիրող, առող, ըմպող..., օրինակ՝ բարի

արարէք առնելոց ձերոց», համմա. նաև՝ ածելի, հոտելի, բանալի...), իսկ մյուսը, -ng (-ոց) վերջավորությամբ ապառնի խմասում (գալոց, մառնելոց և այլն), որոնցից ներգործական այդ ապառնի դերբայները կարող են ունենալ և կրավորական խմաստ, ինչպես՝ «որդի մարդոյ մառնելոց է» («մարդու որդին մառնվելու է») և «մի ոմն ի ձէնջ մառնելոց է զիս» («մեկը ձեզնից մառնելու է ինձ»)—տե՛ս ավետ. ըստ Հովհաննու (XIII, 21) և ըստ Ղուկ. (IX, 44):

Անցյալ դերբայը, մեծ մասամբ կազմված անցյալի բնից, ունի -bal վերջավորությունը (բերնալ, գրնալ, գնանալ, կարդացնալ...)՝ թե՛ ներգործական և թե՛ կրավորական բնույթով. օրինակ՝ առնալով գնաստաս նոցա առ (ἰὼν τὴν πίστιν αὐτῶν εἶπε), իսկ կրավորական իմաստով՝ այր ի հանդերձս փայփայելիս զարդարնալ: Այդ դերբայը նաև կազմում է բարդ ժամանակներ՝ միացած եմ, էի և իցեմ օժանդակ բայաձևերի հետ (առնալ եմ, առնալ էի, առնալ իցեմ): Ծագման առումով այդ -bal ձևը կապակցվում է անորոշի -l (-ի) վերջավորության հետ, հոլովվելով -n-(-ո-) հոլովմամբ, այսինքն՝ ունենալով -ln-(-lo-) բնդհանուր մասնիկը: Եվ այդ կողմից -lo- մասնիկը (առնանել, առն. տր. -ոց. առնանելոյ, գործ. առնանելով, առնալ՝ առնելոյ, առնելով) աղերսակցվում է սլավ. -lo-(-лъ) դերբայական մասնիկի հետ, ինչպես нес-лъ есмь «բերել եմ», որ իսկապես նշանակել է «բերող եմ» (je suis porteur): Եվ ինչպես հայոց «նորա բերնալ է» դարձվածքից կարելի է մակարերել այդ բերնալ ձևի նման անվանական իմաստը («նրա բերնելը նրա» il ya porter de lui), սատգվում է, որ անորոշը (infinitivum) և անցյալ դերբայը ունեն հավասարապես անվանական ձևավորում, բայց տարբեր կառուցվածքով, ինչպես կարծում է Mariés-ը (տես Revue des études arménienne, հատոր X, 1930, էջ 176): Այս հայկական և սլավոնական -*lo վերջածանցով կազմվող անվանական ձևերը միակ չեն, քանի որ հունարենում ևս կա στρῳ-λό-ς «շրջված», βίβη-λό-ς «ընթանալով», στγη-λό-ς «լուռ», αἰθαλος «մուր, մեծուք» (копоть) և այլն:

Ներկա (ենթակայական) դերբայը իր -ող վերջավորությամբ, որ „a" (i-ա) հոլովմանն ասկ է գնում Ա. Մեյեն տարբերում է -աւղ ածանց ունեցող նման բայանունից: Առաջինի -(o)-l մասնիկը կապակցում է հուն. μοιν-λ-ης «կատաղի» ածականի -l-մասնիկի հետ, որը կա և թոխարական լեզվում, որի բարբառներից մեկում այդ -l- դրվում է ներկայի վրա, իսկ մյուսում՝ անցյալի

(prétert) վրա: Իսկ -աւղ (ծնաւղ) մասնիկը, ինչպես հայտնի է, հանդում է հնդեվ. â-te ձևից (создатель, учитель), որ կա և խեթերենում (halugatallas «լրարեր» haluga «լուր բառից): Ըստ իս, վերոբերյալ կազմութիւնները, որոնք ունեն -l- մասնիկ, ինչպես և -ol- մասնիկով բայածականները կամ բայանուններ առաջարանում են ոչ համապիշ կերպով, բացառութիւամբ -աւղ մասնիկով ներկայի դերբայի, որ այդ վերջավորութիւնը տալիս է նաև նշանակութիւնը, ինչ որ և ող վերջածանցը, իսկ աւ և ո (=o) հաճախ են շփոթվում (համմտ. օճիր, ‖ ոճիր, օսոխ ‖ ոսոխ, օրևար ‖ որևար և այլն):

Վերջածանց -ան (-ūn) վերջածանցով բայածականները, ինչպես՝ գնալան, շարժուն, անասուն և այլն, Ա. Մեյեն հանում է հնդեվ. *-omno- ձևից, որ կա ավելատական -amna- լատին. -umnus (alamnus) «սան. питомец" ածանցում, որը սերված է առվորական -*mn ածանցից:

Սրա հետ, ըստ իս, անխզելի է նաև հայոց -ումն (-umn) վերջամասնիկի ծագումը, որը, ինչպես ասվել է, ավելի շուտ կապակցվում է խեթ. umar նմանաձայն բայածանցի հետ:

Բայց բայերը ունենում են նաև նախամասնիկ (praeverbium), որոնք առաջվել են ձևական՝ բառերից՝ նախդիրներից, ինչպես զ- (z-)՝ զսամանեմ, զգեստանեմ, զարմանամ..., ի- >j-(i->j)՝ յանցանեմ «հանցանք եմ գործում», յառնեմ (յարնայ. որի «վիր կաց»), առ (ar-)՝ առաւելում (համմտ. յաւելում-աւելի բառից). ընդ (and-)՝ ընդունիմ (ընկալայ). ըմբռնեմ (բռնեմ բայից) և այլն. բաս-(ast-) բաղասանեմ «մեղադրում եմ» (դատանեմ բայից), բառանձնեմ (անձն բառից): Կան նրկու նախամասնիկներ, որոնք առանձին նախդիր չեն եղել. դրանք են՝ -ամ կամ համ- (am- ‖ ham-), ինչպես՝ ամբառնամ «բարձրացնում եմ» (բառնամ բայից), համբերեմ (բերեմ բայից), համարձակիմ (արձակ ածականից) և հ(ի)- (h(i))՝ հայիմ (հայիմ բայից): Համեմատել նաև՝ նեցուկ և յենում-յեցայ, արարատյան բարբառում կա նի- (ni-) ձևական բառը՝ նի տալ «անհոգ տալ կուլ տալ», նի բերել «ցած բերել», նի լինել>նիլինել «հնձենել (ձին), բարձրանալ ծառը, սարը» (взойти), նի մանել «ներս մրտնել» և այլն: Հայոց նիստ բառը, կազմված է հնդեվ. ni-sed ձևից, բայց իմարկե այդ չի պիտակցվում, թեպետ այդ վկայում է հնդեվ. ni- նախածանցի մասին: Նորագտնի հայկական նի ձևական բառը (կապը)-համմտ. «ես ա տալիս, նի ա բերում... կա ոչ միայն

արարատյան բարբառում, այլև Ղարաբաղի, Ղազախի և այլ, այսինքն հյուսիսային բարբառներում:

Ինչպես նշում է Ա. Մեյեն, հայոց լեզվի այդ նախնական մասնիկները անհետացման ուղու վրա էին, իսկ այժմյան հայերենում պարարտի այդ մասնիկները, որոնք մի ժամանակ ձևական, առանձին բառեր են եղել, բոլորովին չկան: Միայն հունարան հայագիտների կողմից մտցված վեր- արտա-, արտամա-, շուր-, բաղ- և մի քանի այլ նախնական ածանցները շարունակեցին հարատևել և դրանցից մի քանիսը գոյություն ունեն հիմա էլ և մեծ նշանակություն են մեր այժմյան լեզվի առաջընթացի նրբությանն ու առատությանը համար:

Այդ խնդիրը «հնէաբանությունն» անտակետից էլ իր ժամանակ նկատել եմ նաև մի մասնիկ, որը հին ժամանակ եղել է նախդիր արական հոլովի խնդրառությամբ և նշանակել է «դուս, համար» և հնչվել է ar, կատարելով հետադասում բայական նախածանցի ֆունկցիա: Ծագումով և ֆունկցիայով (դերով) այդ ar-ը ևս կապակցում եմ հունական ἀνά, «դեպի վեր, ընդ, ընթացքով (вверх, по)», նման լատ. per մասնիկին: Այդ ana-ն կա նաև գոթերենում (=գերմ. an), «մոտ, վրա», սանս. ana (նույն իմաստով) և այլն, բայց որպես նախդիր կա նաև ակկադերենում (աստեղա-բարելական լեզվում), ուր այդ նախդիրը արականի համար է գրվում (ana Abimarda=Աբիմարդային): Եվ, երկրորդ, հայոց այդ ան մասնիկը (չշփոթել բացասական «ան»-մասնիկի հետ) ավելի շատ է ընացել մեր այժմյան բարբառներում, քան գրաբարում, երկու դեպքումն էլ նա հնացած էր և ընացել էր հայագիտությանն աննկատելի: Օրինակներ.

Անձնոց, անձնոցիկ «ձեռքի սրբիչ» (салфетка), որ առաջին նշանակել է գրաբարում «ձեռքերի համար»:

Անոսնեայ «թթագալորական դահի կամ աթոռի տակի պատվանդան», առացվել է ան-ոտին «ոտքի համար», որից և անոտանալ (գործ է ածվել Աստվածաշնչում):

Անոտք գրաբարում ըստ Առձևոն բառարանի նշանակել է «ոտքի կողմը, ոտքի ծայրից դուրս (թուրք. ալագ թարաֆա):

Անկողին գործ է ածվել և հնում (գրաբարում) և այժմ էլ կենդանի է մեր բարբառներում և գրական լեզվում, նշանակելով առաջի «կողքի վրա (գցելիք), постель», անցել է քրդերին kulin ձևով:

Անոսի «լայն փոկ կաշվից, որ ձիու պոչի տակից և գավա-

կի վրայից անցնելով կապվում է համեմատ երկու կոմպոնենտ» (տե՛ս Հ. Աճառյան. Դավ. բառ. 106), արարատյան բարբառում կոչվում է «առուկն» (<առուկն<առուտուս»):

Անբանի «բանակոթի վրա ներքնից հագցրած փոքրիկ տափակ այն փայտը, որին հենելով մի ոտքով փորում են հողը». գործ է ածվում մշեցոց մոտ և առաջին նշանակում է «բահի վրա (փայտ)»=թուրք. քյուչյակ, հին հայոց ասպարակ (տես Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 61):

Անբոլկել մշեցոց և վանեցոց մոտ նշանակում է «հնտանել, շպրտել, դուրս նետել», «արմունկով հրելով ցած գցել». արմատն է «թոբլկել», որ գործ է ածվում մի շարք բարբառներում «թռչնել, գցել» նշանակությամբ (Դավ. բառ., 376) և հատուկ լինելով յուրաքանչյուր հարավային մի շարք բարբառներին, ըստ ինքյան, միտքառությունն պիտի լինի արաբերեն թարգմա «թողնց» բայից:

Անթափել խարբերդցիների մոտ նշանակում է «թոնրի կողքին կպցրած լավաշի վալը ընկնելը», կազմված է «թափել» (=վալը ընկնել, падать), որը իր այդ չնորք իմաստով այժմ էլ գործածական է արարատյան բարբառում (ներգործական նշանակում է «թափել, бросать»). օրինակ Աշտարակում՝ հողը թափից վրին, դեղձերը թափել են ատկը և այլն:

Անճողել վանեցոց մոտ նշանակում է «ողողել, полоскать», որի դիմաց արարատյան բարբառը ունի ցօղել «կաթոտ, քանոտ ամանները ողողել»: Ալաշկերտում և Մուշում՝ անցօղ «ինոցին հարելուց հետո նրա մեջ լցրած ջուրը, որով ողողում են (Ամատ., էջ 40), համմ. մշեցոց և մուշեցների «ցօղվուցք, ցօղվանք» (=կաթոտ անոթներն ողողած ողողած ջուրը):

Նման օրինակներ շատ կան (տե՛ս իմ «Հնչարանական մի քանի ուշագրություններ հայերենում, Երևան, 1927, էջեր 4—8), բայց ինչպես տեսնում ենք այդ ան- նախդիրի և նախաբայ ածանցի գործածությունը դադարել էր դեռ գրաբարի ժամանակաշրջանից, համեմատաբար ավելի հաստատելով ժողովրդական բարբառներում:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Ունենք երկու տեսակ անկանոնություններ, մեկը, երբ ներկան և աորիստը պատկանում են նույն արմատին, իսկ մյուս տեսակը, երբ ներկան և աորիստը տարբեր արմատից են:

Առաջին տեսակից նշելի են—1) եղանիմ, աոր. եղէ (եղեր, եղեւ...) առորդ. եղէց, եղիցիս, եղիցի և այլն. 2) լինիմ, լինէի, լի-

հեղեմ... չունի ապրեսա (սահմ. եղ.) հրամ. լեր-լերուք, սապրեդ. լեցիս, լեցի, լեցուք, լեշիք, լեցին (չունի I դ.). դերբ. լեալ, 3) գոմ (գաս, գոյ, գոմք, գոյք, գոն), անց. անկ. գոյր և գոյին. սապր. հնդկ.-իրան. միայն գուցէ, 4) առնիմ «առնում եմ», ապրեսա՝ արարի, որը իր կրկնութեամբ նման է հուն. նոյնարմատ ἀραρεῖν «կարգի դնել», հրամ. արա-արարէք, սապր. արարից, արասցես, արասցէ և այլն, ար «առ»-ն առացվել է նմանապատճառութեամբ. 5) դնիմ, որի դիմաց կան սանս. dádhāmi, հուն. τίθημι, իսկ ապրեսաի եղ «դրեցի» =սանս. ádhāt. հրամ. դի՛ր (հոդն. դիք), սապրեդ. ապրեսա՝ եդից, դիցես և այլն, անց. դերբայը՝ եդեալ. 6) առամ, որը ունի երկու բներ՝ առ- և առու-, որոնցից առաջինը անթեմատ է հնդեվր. *də- ձևից, իսկ երկրորդը՝ *do-ից (tam<də-ie=սլավ. daią „даю“) ապրեսաը՝ եառ, եառը, եա, առաք. եառք, եառն, որ եա (et) =սանս. ádāt, սապր.՝ առից, առցես, առցէ և այլն, որ առց<*<*dßskō. որից և մյուս ձևերը և ոչ թե իցեմ, իցես և այլն բարդութեամբ, ինչպես այլ դեպքերում. 7) լսեմ. սապր. լսալ, հրամ. լար-լսարուք, անց. դերբայ՝ լսեալ, նեղկա բունը (*լսա-եմ) եղել է *slus-ēm, ինչպես սլավ. слухать и слышать, հնդեվրոպական k'lu- արմատից „s“ ածականով, որ հաճախ է նաև այլ հնդեվր. լսողականում (սլավ... հնդեվրոպական), իսկ ապրեսաի բունը (lu-) կորցրել է արմատի սկզբի „s“-ն (lu-<slu-). 8) հարիւրիմ. սապր. հարբ, որի նեղկան ունի «կ» (>g) ածականը, այսինքն <*ŗr-g, ապրակից լեռնա. peru, pērt. սանս. Parj-ânyah (սմպրոպի սապրված էր), հին սլավ. Перун (նոյն աստվածն է), լիտ. Perkūnas անուններ և հարուամ (սապր. հարբ) և զարկանեմ (սապր. զարկի) նոյնապրեսաա ձևերը: Տաճիմ բայի կատարյալը սապրեդ ածացված է համապրեսամ միանձնական հին tarn- արմատից անանձնով համապատասխան tan և tar- տեսակները նաև վրացերենում նոյն իմաստով:

Երկրորդ տեսակի անկանոն բայերը լինում են պակասավոր նրանով, որ նեղկայի և անցյալի (ապրեսաի) ձևերը կազմված են լինում տարբեր բայարմատներից: Իմ կարծիքով դրանք տարբեր ցեղային լեզուների ներդրումն են ընդհանուր էթնոլեզական լեզվում, ուր այդ համանիշները կամ ավելի շուտ նոյնանիշները օգտագործվում են տարբեր ժամանակներում (նեղկա և ապրեսաի) թեմատիկ կազմութիւններով համար: Հունարենում, ինչպես և. Մելեն է նշում, կարող են լինել միևնոյն անգամ երկու տարբեր բայարներ (resp. արմատներ) մի բայիմաստի համար, ինչպես օրինակ, «գը-

նայ» բայի համար կան առոքիական ἔρχομαι (ներկան), ἦλθι (ապառնին) և ἦλθον (սորիստ), կամ «առնանել» բայի համար՝ ὄμνω (ներկան), ὄμοματι (ապառնին) և ἔμοσα (սորիստ): Հարիւրնում նման դէպքեր լինում են միայն երկու սորիստ բայարմատների կցումով, որոնցից մէկը ծառայում է ներկային, իսկ երկրորդը՝ սորիստից առնծմող ձևերի համար:

Ուտել բայարմատը (առ. ut-) կազմում է ներկայի և նրանից ածուած բնութագնական ձևերը և ազգակից է առնս. ádmi, լատ. edō, հուն. ἔδομαι և մի քանիներին. «ոչ» ժխտական ձայնաւորը եղել է հնում *ō, որը կս և հանգական կրկնաւոր դրական ἔδωδή «կերակուր, անուագ» բառի մէջ: Եվ ինչպես առանկրիտներինը և հանգրանը սորիստում օգտագործում են մի այլ արմատ — առն. ágh «կերայ», հուն. ἄχος (նուիրը) -այդպես և հայերինը ունի կերայ, որ ազգակից է առնս. giráti «կուլ է տալիս», հին սլաւ. Žĕzetŭ „жрет", լատ. vorō «կլանում եմ» և այլն: Անորիստի 3-րդ դէմքի եկեր և հրամայական կեր ձևերը ներգործականի պարագիրմայով են հակառակ կերայ առաջին դէմքի կրաւորական կազմութեան, որից կազմուած ճիշտ կերպով սորիստական կերայց, բայց կերիցեա, կերիցէ և այլն:

Ըմպեմ «խմում եմ» իր ըմպ-əmp-(<ump ից) ձևով անմիջապես չի կապուում առնս. pibati, լատ. bibō հին իռլ. ibim «խմում եմ» բայերին հետ, իսկ սորիստում ունի այլ արմատ արբի, որը ազգակից է լատ. sorbeō, լիտ. srebiù. surbiù «ծծում եմ», հուն. ῥόφεω «կլանում եմ, ներս եմ ծծում» արմատներին հետ:

Գամ ունի ներկայի բնի համար gա-ga-, որը պարզացումն է հնդեվր. *wā-արմատի և այդ ձևով մոտ է նաև խեթերէնում (we-ll wa-c'omė, տես F. Sturtevant, II ed., 1936, Philadelphia, էջեր 174, 180): Իսկ նոյն ընդունելը նաև dh բազմաձայնի ավելացումը (առանկանը), որ շատ կասկածելի է, ապա կունենանք նաև լատ. vā'ō, հին անգլ. wadan, հին վերին գերմ. watan «դնալ» (ջրով): Իսկ հայերէնի անցեալի (սորիստի) բունը կազմուում է եկ-(ek-) ձևից (եկի, եկիր, եկն...), որը իր e ձայնականով (առոքմենտով) և արմատով ու ձևով նման է առնս. ágām, դորիական ἤγᾱν, առոքիական ἔβην: Գրաբարում այս e առոքմենտի ավելանալը առաջին դէմքում առաջացել է միանձնակերպութեան պատճառով, ինչպես՝ լսեա «լսելիք» և լսի «լսեցի»: Հայոց եկ-ի ձևի արմատն է հնդեվր. *gʷā-, որը պետք է անունել հրամայական եկա-յր ձևի մէջ: Իսկ երրորդ դէմքի բացառիկ եկն սորիստական այս ձևը պատկանում է իր արմատով (ə-kn) նոյն այդ gʷā-արմատին, որը առացել է անգալին հավելեալում

(*g^{w}en-, *g^{w}em-), ինչպես անում ենք, վերջավորյան (առնս.) ágan «ունեմ». գոթ. giman «գալ», լատ. venio «գալիս եմ» և այլ ներկայացուցիչների մեջ: Առորոշականի նկից, նկնացնս ևրն իր ընդհանրացած առգմնաոով և -ոց (<gg) ցոլական առրիսոի տնաոկով անշուշտ եղել է նմանաբանութեամբ (անալոգիայով):

Երթամ «գնում եմ» բայարանից ունենք երթալ, երթամ, երթայի, երթայցեմ, ինչպես նաև հրամ. երթ, առորոշ. երթայց (երթիցես...) և անց. դերբայ երթեալ: Իսկ առհամանական առրիսոը կազմվում է չոդ—արմատից (չոգալ, չոգար...), որը կազմված է հին čow-լաինացած առոիճանից (=*k^{w}yow-?), ունենալով նաև չու (ču) առորին առոիճանը, համեմատել -առնս. čyuti «հնազացում», čyávatē «հնազանում է» գաթառավեստայում šavaitē (id), հին պարսկ. aštyavam «մեկնեցի, գնացի», նոր պարս. šavam «գնում եմ, դառնում եմ», հուն. σεύω «հնազանդում եմ»: Հայոց երթ արմատը ազգակցում են հուն. ὀχέομαι: Նուլնիմատա բայի հետ, որտեղ ընդհանուր արմատն է համարվում er-, իսկ հայոց «թ» և հուն. χ բազաձայնները՝ ավելացումներ: Հայոց եր-թ-ա-մ կազմութեյունը իրր թե աբսացոլում է հնդևվ. *ser-the/o- ձևը (տես M. S. L., XXIII, 249—259): Ըստ իս, հայոց ert'-արմատը ավելի շուտ անգլական ոչ հնդևվրոպական արմատ է, որը առնբսակցվում է ակկադական retu «քայլել» բայի հետ:

Ուսիմ «վերցնում եմ, առնում» առրիսոում փոխարինվում է կալայ (հրամ. կալ) բայի հետ, որի ծագումը ըստ Ն. Մառի ոչ հնդևվրոպական է: կազմած kal «ձեռք» (<ունել) արմատի հետ (համմա. վրաց kxeli>xeli ձեռք»), որը կա նաև կարկառուլ «ձեռք մեկնել» kar-արմատաձևի մեջ:

Գոզ «առատ» կազմված է մի բայի անցյալ կատարյալի (առրիսոի) բնից, որից ունենք նաև առորոշականի՝ գոզցես, գոզցէ, գոզցուք, գոզջիք, գոզցեն և հրամայականի գոզջիր ձևերը, որպես ինացորդ առրիսոի ձևերից: Այս գոզ- «առնել» արմատը երևի չի ունեցել ներկայի բունը և նրանից ևերված ձևերը, կամ, գուցե, չի մնացել: Համենայն դեպս դիտված է, որ «առնել» նշանակութեյամբ բայերը ամենից շատ են միևնույն լեզվում իրենց տարբեր արմատներով, ինչպես, օրինակ, հունարեն λέγω, ἐρῶ, εἶπον: Հայոց gog- արմատը հնդևվրոպական ընդհանուր *weg^{w}h- արմատից է, որին պատկանում են նաև լատ. voveō «խոստում եմ», առնս. vāghát-«առոիթող, խնդրող», գաթա-ավեստ. aogəδa «առած» հնդիրանական *augh-առորատնատիպից (<anegh-), որանց պետք ավելացնել նաև խեթական vek- «հրավիրել, աղաչել» և հայոց ոգել, ա ո-ոգանել և փոխառյալ (իրանականից) ուխտ բառերը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԲԱՌԱՊԱՇԱՐ

Հայերենում կան որոշ բառահիմքեր, որոնց բառամիջյան ազևրոնը բացահայտ է, թեպետ նրբերին կապական իմաստը կամ հարաբերությունը դժվար է սահմանվում: Օրինակ ունենք սեռ-ում «անբունդ տալ», որին համապատասխանում են սեր (<հ> հոլովմամբ), սեռ, սերուեգ, սերուեն, որոնք ըստ Ա. Մեյեի չեն առեղծվել անմիջապես դասական հայերենում, այլ դրանից առաջ, կամ հնդեվրոպական լեզվական առաջին բաժանմանն շրջանում, կամ դրա և դասական դրսևոր հայերենի միջև ընկած մի որևէ մոմենտում: Արմատը ser- կապակցվում է լատ. creāre «առեղծել» բայի հետ: Այդ առնչակնոը կարելի է պաշտպանել նման կազմություններով և նման հնդեվրոպական ծագում ունեցող այլ իմաստային բառերով, ինչպես բիրեմ, բեր (<հ> հոլովմամբ) «բնբերլը», բեր (<ոռ հոլ.) «բերքը», բեռ „ιομα", բերրի «արդյավանդ»,-ւոր ածանցը («բերող, կրող») կամ ջեր «տարբություն», ջեռնում (ջեռալ), ջերմ, ջերմին և այլն:

Հնդեվրոպական բառարմատների քանակը հայերենում Ա. Մեյեին չի անցկացնում չորս հարյուրից, հակառակ Հ. Աճառյանի, որ հասցնում է 713 «մաքուր» արմատների, առանց «տարբառնական» ների», իսկ Հյուբշմանի մոտ կա մինչև 300 արմատ: Ճշմարտությունը անշուշտ երեք-չորս հարյուրների միջումն է, որի մասին մենք կխոսանք իր տեղում: Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» իր վերջին հատորով լուրջ է տեսել մինչև Ա. Մեյեի Esquisse-ն, մի տարով շատ (տես Esq. էջ 18), սակայն ֆրանսիացի նշանավոր լեզվաբանը Հ. Աճառյանի այդ 713 (կամ 900-ից

ավելի «տարատեսակներով») տարրած թիվը չի ընդունել նա առում է. «Հայերեն բառերի խմբակների (ինչպես վերևում անուանք) թիվը, որ կարելի է ծագումով հնդեվրոպական համարել, չի հասնում չորս հարյուրյակի (ne va pas á quatre centaines)»: Այդ բառերը իհարկե բոլոր հնդեվրոպական լեզուներում չեն գտնվում, այլ մեկ կամ մի քանի լեզուներում կամ լեզվախմբերում:

Այդ անուանկոծից կարելի է նշել օրինակ «աղ» (соль) և «տարար» բառերի ներկայացիչները հայերենում, բալթիկ-սլավոներենում, գերմաներենում, հունարենում, լատիներենում, բայց ոչ հնդիրանական լեզուներում: Միատ կողմից, այն տրամաները, որ կան ներկայումի հնդեվրոպերեն և արևմտյան լեզուներում, բացակայում են հունարենում և հայերենում, ինչպես sē- «ցանել» և «հատիկ» նշանակող տրամաները (լատ. grānum, գոթ. kaurn, հին սլավ. zrūno „зерно"): Երրորդ հայերեն տրամատը գտնվում է ապրակից մեկ կամ երկու լեզուներում: Օրինակ արեւ=առնա. raviḥ, երգ=առնա. árka- իճձ (леопард)=առնա. simhaḥ, հայոց այրիմ=սանսկր. ātar «կրակ», գլուխ=լիտ. galvá, սլավ. глава, մածաճիմ=հին սլավ. marati „мазать", ձուկն=հուն. ιχθύς, լիտ. žuvis:

Հատկանշական պիտի նշել բազմաթիվ և ստույգ կապակցությունները հունարենի և հայերենի միջև, որոնց մասին մասամբ խոսել է Հոլգեր Պեդերսենը: Հայտնի են բառերի հետևյալ առնչարարությունները միայն այդ երկու լեզուների միջև,— այծ=հուն. αἴξ, աղամ=հուն. ἀλέω (ալիւր=ἄλευρον, աղաւրի=ἀλέτριος), արդ «ալիմ»=հուն. ἄρτι, աղբիւր=հուն. φρέαρ, անուրջ=«երազանք»=հուն. ὄνειρον, աւր=հուն. ἦμαρ, «արար ր-արարց»=հուն. ἄραρε, ուրանամ=հուն. ἀρνέομαι, եփեմ=հուն. ἕφω, երեւիմ=հուն. πρέπω, դալար=հուն. θαλερός, կամուրջ=հուն. γέφῦρα, որոնց մեջ -*ūr-yā- ընդհանուր մասնիկը, բայց մ և հուն. φ արտասովոր հարաբերությամբ (կամուրջ բառը կա և Դաղստանի լեզուներում, ինչպես նշել է Ն. Մառը, իսկ նա կապակցում եմ kamar փորրատիական և խուռիտական բառի հետ), ծաղր=հուն. γέλως, ձիւն=հուն. χιών, սիկ «դատարկ»=հուն. κενός, κενεός, սիւն=հուն. κίων, սուտ=հուն. ψεῦδος, հերիւն (-բանի, -բունի) «հնդուն, շինո"=հուն. περόνη և այլն: Պետք է ընդգծել, սակայն, որ շատ առնչարարություններ էլ կասկածելի կամ միանգամայն սխալ են: Այդ կարգին են պատկանում հայոց ասր=հուն. πόκος, թեպետ խոստում նշելն են, բայց հնչյունարարներն կարող են ապրակցվել նաև ծագած լինեն «նախալեզվից», այնինչ խոթերենում կա asar-as «ասր» բառը,

որն անմիջապես աղբյուրն է հայերենի, համանապես երասխաձք «ետասուկը, բողբոջ»=հուն. πρωκτός; կասկածելի է, իսկ երիար բառի -ար մասը ածանց է, քանի որ կա երկայն, և չի կարելի երիու բառի բաղադրիչ հնչյունական փոփոխությամբ հիմանե վրա (*duo-ից) հանել հնդեվրոպական և կապել հուն. δ(ϝ)άρσι բառի հետ։ Հայոց գամբաճ (=գամբարաճ) «դերեզման» բառը կապակցում են հուն. τάφος «դերեզման», τάφρος «հոր» բառաձևերի հետ, որը առաջարկել է Liden-ը (Arm. Stud., 42—43), ընդունվել է Boisacq-ի կողմից, բայց առարկվել է Ա. Մեյեի կողմից (MSL, XVI, 218) և մանավանդ Ն. Մառի կողմից, որը գամբարան հասկանում է «ոսկորների տեղ, ոսկրարան», որպես փոխառություն սիրիական ţammā «ոսկոր» բառից։ Հնագույն բառերից, որոնց պարզ խոլ պայմանները բառասկզբում, ձայնավորից առաջ, գանազան հետագայում ձայնվել պարզ պայմանի, մեզ հայտնի է միայն դու դերանունը։

Հայերենը և հունարենը անհետանում են նախադիր («պրոթեզիկ») ձայնավոր ոչ միայն ր (r) ձայնորդից առաջ, որ նկատվում է ոչ հնդեվրոպական լեզուներում, այլև այլ բաղաձայններից առաջ։ Այսպես— ամուսի=հուն. ὄνομα, այր=հուն. ἀνήρ, առագ=հուն. ἀστήρ առամնի=հուն. ὀδών, իմ=հուն. ἐμέ, իմի=հուն. ἐνέα և այլն, իսկ պես արեմ առագ և հուն. ἀστήρ բառերին իրենց նախադիր a ձայնավորով պիտի ավելացնել նաև խեթ. astir-as (տես Sturtevant բառարանում, II հրատ., էջ 31)։

Կարելի է ընդգծել նաև հայոց կաճայ-ը և հուն. γυναι- նույնանիշ բառերի նման կազմությունը, ինչպես և հնդեվ.— *ohi գործիականի հոլովաձևի գործածումը միայն եզակիում թե հայերենում և թե հունարենում։ Համեմատել նաև մաւրու «խորթ մայր» և հուն. μητρυια նման hoprи(‖ joprej), «խորթ հայր» և ուրբու «խորթ որդի» իրենց վերջին -ու (համար, փոխարեն, տեղը) ձևույթով։ Երբեմն էլ հայերեն բառը քրիստոնեական գաղափարախոսության պատճառով ընդունել է հունարեն նույնանիշ բառի նոր իմաստը կամ առումը, ինչպես հայոց երեց «ավագ» բառը հետո նշանակել է նաև «քահանա» հունական πρεσβύτερος «ավագ» և «քահանա» իմաստների ազդեցությամբ։

Ա. Մեյեն, ընդգծելով, որ հին հնդեվրոպական բառերը հայոց բառապաշարի միայն մի փոքր մասն են կազմում (ne forment qu'une petite partie du vocabulaire arménien), շեշտում է նաև իրանական, հունական և սլավերենական փոխառյալ բառերի մասը հայերենում, ինչպես մասամբ և միջերկրյածովյան, սասերական

(օրինակ՝ կնիք բառը), կովկասյան և այլ ազդեցություններ։ Վերջինիս համար հատկապես նշում է ասպիսին կարևոր բառերի մասը, ինչպիսին են հարիւր թվականը և զոքանչ ազգակցական բառերը, որոնք կովկասյան ծագում ունեն (Ն. Մառը հարիւր բառը կապակցում էր սվաններեն äšir «հարյուր» բառի հետ)։

Վերջում (Esquisse, էջ 144) նա եզրափակում է նույն խոսքերով, ինչ արել է 1903 թ. այդ նույն գրքի առաջին հրատարակության մեջ։

«Հայերենը, թեպետ վկայված է հարյուրերկարատևորեն մի ցած թվարկության մեջ, պահում է սակայն հնդեվրոպական բնութագրական հատկանիշների մի թիվ՝ հոլովների պաշտոնը, *ո դասականական թեմաների քնքուշ օրինակ, որոնք ակներև արխաիզմ են»։

«Բայց, ընդհանրապես, հայերենի հնչյունական և ձևաբանական համակարգը խորապես տարբեր է նույնից հնդեվրոպականում, արտասանությունը ունի նոր անոք, քերականական ձևերը առաջ են բնթացել օրիգինալ ձևով, և այն մոմենտին, երբ հայերենը ֆիքսացիայի է ենթարկվել գրի միջոցով (V դար), վերակազմումը (réfection) այնքան է առաջ գնացել, որ անկանոնությունների մեծ մասը չքացել է և քերականությունը հասել է կանոնավորության մի բարձր աստիճանի»։

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԸ

Մենք իր տեղում արդեն ընդգծել ենք, որ հնդեվրոպական կոչված լեզուները ունեն իրենց խմբավորումներում մոտ ազգակցություն, երբեմն էլ այդ խմբերի միջև, բայց և որոշ օտարներում և միավորներում ցուցաբերում են շատ հետաքրքիր մերձեցում և արտահայտություն, որ այդքան հատուկ է օրինակ հայերենին։ Պետք է ընդգծել նաև, որ որոշ քննադատական մոտեցում է հայտնաբերվում նաև հնդեվրոպական «նախամայր» լեզվի (=«նախալեզվի») նկատմամբ իր սխեմատիկ միաձուլ ըմբռնմամբ, ինչպես նաև նախահայրենիքի և տեղադրության (դիսլոկացիայի) նկատմամբ, նման հետագա միջրացիաների հետևանքով եղած դրությամբ։ Այդպես թվացող եղրակացություն են գալիս և «նախալեզվի» արմատների արհեստական և չափազանցրած քանակի (2223) մասին։

Ժխտելով ցեղերի ազգակցությունը, նրանց խմբավորումների բաժան-բաժան լինելը և միգրացիան, նրանց հետագա նոր տեղաշարժերը այլևայլ և այլալեզու ցեղերի հետ, որպես հետևություն, մենք պետք է նշենք հատկապես, որ այդ առնչա-ցեղային բարդ հասարակական դիֆերենցիացիաների և ինտեգրացիաների ժամանակ են առնչվում նոր որակի լեզուներ, որ ազգակցությունը առնչվում է նաև հետագայում միացման և խաչավորման ընթացքում այդ ցեղային հասարակությունների մեջ և ոչ միայն նախամայր լեզվի բաժանման հետևանքով: Այստեղ է, որ պետք է գտնել ավյալ լեզուն կրողների հնագույն պատմությունը, էթնիկական ձևավորման հիմնական բովանդակությունը:

Մասնավորապես այդ պիտի ընդգծել հայ ժողովրդի և նրա զավակ՝ հայ լեզվի նկատմամբ, որ այդչափ բարդ են իրենց հայասատանի և Փոքր Ասիայի (Հայաստանի) պատմական կուլտուրական և էթնիկական պայմաններում: Հայերենի ձևակերպված պատմական կացությունը (V դարից) լեզվագիտության ընդունված չափանիշներր անտակասից մեզ թույլ է տալիս հորջորջել «Հնդեվրոպական»: Բայց ինչպես ցույց տվեց Ա. Մեյեի Esquisse-ի քննությունը, այստեղ շատ բան ոչ միայն թվացող (кажущийся) քննություն է կրում, որ երբեմն ընդգծում է և հնդեվրոպական, այլև նա կատեղծ նաև նախատարամատրված, որովհետև հայերենի հարաբերական դանդաղ (դրադարձում և բարբառներում) իր ուսումնասիրության մեջ դեռ շատ հետ է վերջացած լինելուց, իսկ շտապ և որոշ եզրակացությունները կարող են միայն սպասված համարել այդ ուսումնասիրությունը: Չժխտելով հայերենի բացահայտ և ուժեղ այն կոմպոնենտը, որ իրավամբ դարձել է հնդեվրոպական «մայր» լեզվի ցեղատիպական կառուցվածքից, որ այդքան ակներև է, մանավանդ patronomica-ի և համրանքի (թվականների) մեջ, թեպետ այստեղ ևս կան և այլատարրեր, մենք այս դիտում կրկրենք այրուբենական կարգով նախ այն հնդեվրոպական հայ բառարմատները, որոնք կան Հյուբշմանի Armenische Grammatik— գրքում, ինչպես նաև Մեյեի Esquisse-ում (նշված են վերևում): Հյուբշմանի մոտ հավաքված են 428 բառարմատներ (իրեն և ուրիշների կողմից մատնանշվածներ), սակայն հնդեվրոպական մոտ ուժեղ և խիստ քննադատության, համարելով հնդեվրոպական մոտ երեք հարյուրը: Մեյեն դրանց թիվը համարում է, հետագա հետազոտությունների հետևանքով (մինչև 1936) չորս հարյուրից պակաս: Իսկ Հր. Աճառյանը իր «Արմատական բառարանում» (յոթ

հատոր) և «Հայոց լեզվի պատմության» մեջ (Երևան, հատոր 1, էջեր 34—80) այդ արմատների թիվը հասցնում է 713-ի, որը իմ կարծիքով արհեստական է և չի համապատասխանում իրականությանը:

Ճշմարտությունը անշուշտ երկու-չորս հարյուրյակի միջն է, և պիտի ասեմ, որ Հյուբշմանի խիստ զգույշ և բազմանկատ մեթոդը այսօրվա բացակայում է, իսկ սուբյեկտիվ, ոչ պատմական և անցզնացիոն նկրտումները ամեն կերպ արհեստականորեն ավելացնել այդ թիվը (երկրորդական «ածանցյալ» արմատներով հասցրնելով մինչև իսկ 910 թվի) հնում է դիտական ճշմարտությունից: Մինչև իսկ Ա. Մեյեի մոտ նկատելի է որոշ թևքի մեխանիկական մոտեցում, որը հոգով ինչ արդարացնում, ի նկատի ունենալով, որ հայերենի լեքսիկայի ստուգաբանությունը մեզ երբեմն անսահմանից մեզ հայտնի չեն, իսկ դրանք բոլորը դարձնել փոխառյալ՝ կլիներ հակագիտական և անճիշտ: Փոխառությունները արդեն երևան են հանված բավ մեծ մասին: Հենց միայն նա կմնացածները, ինչքան մեծ կորցնելով մինչև այժմյան մեր եղած դիտելիքները և մեթոդական սխալներ մեջ խեթական նորահայտ լեզուն իր սեփական և փոխառյալ (որ նշվում է դրությամբ) բառերով, թողած դեռ Հայաստանի ցեղատիպական պատկանություն ստացության փաստը: Իսկ որքան լեզվական նման ակունքներ և կոմպոնենտներ կան, որ մատած են մեր լեզվի մեջ և մեզ անհայտ են: Միայն գրաբարից մեզ հայտնի են մոտ վեց հազար չուսուցրանված բառեր և արմատներ, թողած դեռ բարբառներին ոչ պակաս նման արմատները:

Պետք է այսօրվա հնդեվրոպական արմատները, որոնք Հյուբշմանը համարում էր քիչ թե շատ հավատալի, թիվով 298, թեպետ նա անտարանում է իր գրքում 428 առաջարկած «հնդեվրոպական» բառեր: Հետո առանձին կքննվին Հ. Աճառյանի մոտ բերված մաքսիմալ քանակի առաջարկությունները, որոնք մասամբ հայտնի են նրով և առաջ:

1. Ագաճիմ (ասր. ագայ) «հագնել», աս-ագ-աստ «վարագույր» = ավեստ. aoθra «ոտնաման», լիտ. av-iû «կոշիկ եմ կրում», սլավ. об-у-ть «կոշիկ հագնել» (об-у-вь «ոտնաման»), լատ. ind-u-o «հագնում եմ», ex-u-o «հագած եմ հանում եմ» և այլն: Bugge-ն միացնում է նաև աւդ. (ի, ո) «կոշիկ»: Հնդեվրոպական նախաձևն է *ov-

2. Ալի(ք) երկու նշանակութ[illegible]ամբ— 1) ալիք волна, որից ալեկոծել, ալեակ «փոքր ալիք», ալիասաստ... 2) ապիտակ մորուք, ապիտակ մազ, որից՝ ալեւոր: Սովորաբար այդ բառը անեզական է (ալուզ, ալեաց հոլովմամբ): Համեմատել հուն. poliós «ճերմակ» (weissgrau greis) թե մազերի և թե մարդկերին բաժնվող ծալքի մասին. hai poliai «ճերմակ մազեր»: Brugge-ի այս համեմատութ[illegible]ան ավելացնում են նաև սանս. palitá «ապիտակ ալիք» (ըստ Աճառյանի, Արմ. բառ. I, էջ 51), «ծերուկ» („greis, latersgrau" ըստ Hubschmann-ի, Arm. Gr., էջ 412), քրդերեն pēl «ճոճակ», պարսկ. պեհլևիի pīr «ծերուկ»: Հնդեւրոպական ձևը հունարենի և հայոց բառերի համար՝ *polio—:

3. Ածիմ (ածի) երևելը, բայց առանց ավելի ներքին[illegible]ան-թյամբ՝ փորագրել, շարժել, վերածել, պատել, լցնել— կաթնցնել (ջուրը), խրել (ապտակ, սուր), կտրել մազերը (ածելի „бритва"), բուացնել (ածք երիտուկ ճյուղ, ածու «մարդ»), նմանածել, ձու ածել (համմ. ռուս. нести «տանել» և «ձու ածել») և այլն, ինչպես և ածանցական ձևերով՝ ածանցիմ, յածեմ «թափառել, бродить", ածոդել «բռնել տանել» և այլն: Համեմատել՝ սանս. ājāmi, ավեստ. azāmi «տանում եմ, շարժում եմ», հուն. ἄγω «տանում եմ», լատ. agō և այլն: Գաւառականն է ապրյուր, որ ուրարտերենում ag-ubi նշանակում է «տարա (увал)», օրինակ՝ գերիներ (Biainddi «վան, դևպի վան), «տանկացրի» (я провел), օրինակ, շրանդք (pili):

4. Աչի (ական, ակամբ) «աչք, г..аз", հոդն. աչ-ք (աչաց, աչաւք)=սլավ. око, երկակի՝ oči, ռուս. око, очи, լիտ. okis, լատ. oculus. հուն. ὄμμα (—*ὀκ-μα) «աչք», հոմեր. ἄκα «երես, դեմք» հետագա ὤψ «աչք» և այլն: Հնդեւրոպականում եզակի ուղղականը եղել է *ǒki, սեռ. *oknós, ուղղ. երկակի *okī (ըստ Joh. Schmidt-ի): Հայոց աչ-ք=հնդեվ. երկ. *okī—սլավ. oči (համմ. հուն. ὄσσε=*okye—*okie): Հայոց աչի բառը մտնում է բազմաթիվ դարձվածքների մեջ, մեր ամենայն բարբառների նման, և ունի այլ լեզուների նման նաև փոխաբերական առումներ՝ աղբյուր (լատ. coput fon is), ճյուղի ակնառը (ռուս. почка), թանկագին քար, ծակ կամ փոս (ակն ուտելոյն, առատարբ), անիվ (բարբառներում) և այլն: Ինչպես հուն. ὀπή «բացվածք, ծակ», լիտ. ākas «բացվածք առուցքի մեջ», սլավոն. okno «լուսամուտ», կամ արաբ. a'in (հբրեական. ayin) «աչք» և ապրյուր և նմաններըս:

5. Ալ (ի հոլ.) «աղ, соль", ալի բայց անալի, որը գտնում է բարբառներում՝ անալի (շրջմամբ >անլի>աղի): Ունենք և աղի

«կծու» միտաբերարար (ագի ագր, ագի ագէա, ագի ագրմ), աղու «համով», աղաւր լատ. ագիկ (<ագա-հակ) նման արաբ. molih «ագի» և գերմանիկ. կա և աղա «ագ, ագի հանք» (ծով ագախց քաղաքի ագախց, հալիվ ագախց..., ագաք կողմայ, մեր ագուց կէան— անս վիմ., արձ. 1235 թվի, բաժ ագախց և այլն, անս Արմ. բառ. I, էջ 162), ինչպես նաև՝ ագաագախն, ագաագուտակ «ագի, լճի»: կա և հնչյունափոխված աղծ «ագ» միայն «աղծեալ» բարաձևի մեջ «ագած, ագը դրած»: Համեմատել՝ հուն. ἅλς, լատ. sal, սլավ. soli „соль", գոթ. salt (որից և saltan „salzen"). հին իռլանդ. salann, կիմր. halan, «ագ», հնդեվ. թևքրամը եղել է՝ ողղ. եզ-*sâld, անս. եզ. *salnês (լատ. Y. Schmidt-ի), հայց ագա alt «ագ»=գոթ. salt (գերմ. salz), լատ. sall— (sallo «ագի եմ դարձնում»), հնդեվ. *sald-ից: Տես Arm. Gr. 414, Արմ. բառ., 105–111, 152, 162):

6. Աղ-ամ «ագում եմ, мелю", «մանրում եմ», «որճում եմ», աղօրի «ջրաղացք», ագօն (>ագուն) «ագալիքը»—հուն. ἀλέω «ագում եմ», ἀλέτης «երկանդ», ἀλετών «ջրաղացք», ἄλευρον «ալյուր», պարսկ. ard «ալյուր», պահլ. ār-tan «ագալ»: Հայց այնր (անս. այնր) փոխառյալ չի հունարենն ἄλευρον բառից, այլ ունի արմատ այ (||-աղ-) տարբերակը նման «ագ» և «անագի» տարբերակներին, իսկ աղաւրի բառը լատ Hübschmann-ի առացվել է *alatrio-ից և համեմատ է հուն. ἀλέτριος, ունենալով -*awr (<-*atr) ածանցը ինչպես աբ-աւր (արօր) բառը=լատ. aratrum, հուն. ἄροτρον նույնանիշ բառերում (համմտ. նաև *-աւղ ածանցը ծնաւղ և նմաններում=խեթ. -atall., սլավ. -а-тель):

7. Աղբեւր, աղբիւր (անս. աղբեր) «ագրյուր, источник"=հուն. φρέαρ<*φρεϝαρ «ջրհոր»: Հայց ձևը առացվել է հնդեվ. bhrevr (անս. *bhrevros) նախաձևից, իսկ հունականը՝ *bhrēvr (անս. *bhrēntos) ձևից: Եւ>իւ երկձայնի փոփոխության և դրության համար ունենք նաև առուձ>առիւծ, հեւս>հիւս, բևեր>բիւր, եւղ>իւղ և այլն:

8. Աղուես (անս. աղուանս) «ագվես», лиса" =հուն. ἀλώπηξ (անս. ἀλώπηκος), սանս. lōpaçà- «շակալ, ագվես», պահլ. rōpās, պարսկ. rōbāh «ագվես» և այլն:

9. Ամ (ի-ա) «տարի»=սանս. sámā «ինչ տարի, տարվա ժամանակ, տարի», ավեստ. hama- «ամառ», հին իռլ. sam «ամառ», կիմր. ham և գալլ. háf «ամառ» և այլն:

10. Ամառն (անս. ամատան կամ ամաթան), ամարայինն, ամա-

բայնի. „летом" պատկանում է նույն հնդեվր. sam- ամառ, տարի» արմատին, որից ունենք և „r" ածանցով վերին հին գերմ. sumar, արժմյան sommer ամառ», ինչպես հարևանում կա և ձմեռն նման կազմություններ: Հնդեվր. ամառն (սնս. amarāna) և ավեստ. ham- (սնս. hamō) ամառնա», ինչպես՝ ձմեռն (սնս. ձմեռան) և ավեստ. zim (սնս. zimō) ձմեռ»:

11. Ամբողջ=ամբ-ողջ (ըստ Մ. Լեյեի), ուր ամբ-=հուն. ἀμφί երկու կողմից, լատ. ambi-(ambiegnus), amb- (ambire, ambages). հին իռլ. imb, imm-, imme-, հրպ. umbi, հին իռլ. umb, գերմ. um շրջապատ: Հայոց ամբ- (amb-) մասնիկը, որը թևերս կա և ըմբռատ բառի մեջ, ծագում է mbho>ambho վերնամաս էլ, օճա"=հուն. ἀμφώ, լատ. ambō. լիտ. abù, սլավ. oba („оба"), սանս. ubhá, թոխար. āmpi և այլն:

12. Ամեն, ամենայն (և հոլ.) իրենց amen-a- մասամբ=հուն. ἀμο- համախմբում, գոթ. sums, հին ս. գերմ. sum, հին իռլ. sumr ամառ, սանս. sama- համակը, ամեն մի», ավեստ. և հին պարս. ha-ma- բոլորազանչյուր, ամեն մի», բոլորը հնդեվր. *smmo-ից:

13. Ամիս (-ոյ, -ոց, -ևան)=սանս. mās— լուսին, ամիս», պարսկ. māh, հուն. μήν, լատ. mēnsis ամիս», գոթ. mēna „mond", սլավ. měseci, լիտվ. mis: Հայոց ամիս բառի «ա» ձայնավորը եթե հին է, ապա արմատը եղել է *a-mēns—:

14. Ամպ կամ ամբ (ո հոլ.)=սանս. nábhas ամպ», երկինք, մթնոլորտ, ámbhas կամ ambhu ջուր», հուն. νέφος, νεφέλη ամպ», լատ. nebula ամպ, մշուշ», հրպ. nebul, գերմ. Nebel, ամշուշ», սլավ. небо վերնամաս և այլն, որոնք առաջացել են nébh- արմատից, իսկ սրա կրճատ ձևից՝ nbhō կամ mbhó ունենք հայոց ամբ>ամպ (Arm. Gr., 417, Աբեղ. բառ. I, 234): Այդ հնդեվր. արմատից է նաև հայոց ամպրոպ «փոթորիկ», -ro- ածանցով, ինչպես նաև հուն. ὄμβρος ամանձրևա», լատ. imber ամանձրև, ամպ», սանս. abhrá- ամպ, փոթորիկ», ավեստ. awra ամպ», օսս. arw վերնամաս, պարսկ. abr ամպ», իռլ. imrim փոթորիկ» և այլն (Աբեղ. բառ. I, 236): Իսկ այդ ամպրոպ բառի վերջին -ոպ բաղադրյալը համապատասխանում է մասնիկ (ածանց): Այս ամպրոպ բառը (համմա. Մ. Աբեղեանցու ամպրոպային Աբամադդա) չի հիշել Arm. Gr.:

14 ա. Այլ (ո հոլ., տրակ. այլում) «ուրիշ, другой", =հուն. ἄλλος, կրետ. αἶλος, լատ. alius, գոթ. aljis, հին իռլ. aile, հնդեվր. *aljo- արմատական ձևից: Այլ— հայկական «փափուկ» ձևը ունի նաև այղ— տարբերակը, ինչպես՝ աղուաղել>աղաւաղել, որ համընկնում

է այնայլել կազմութիւնն հետ, ինչպես կան թոռլ—թոռոգ, փայլ—փայգ, նշոյլ—նշոյգ, յոյլ—յոյսլ, որը պիտակ է Հնութիւնները (Yndog, Forsch. 19, անս նաև Աբմ. բառ., I. 125 և 250):

15. Այծ (ի հոլ.) և այծի (այծիկ, այծեայ) «այծ», „коза", այծեաձի (i l.), այծենի «այծի մորթ» (համմ. коза-кожа), այծեայ «այծի մսից» և այլն: Համմ. հուն. αἴξ (անս. aiγós), «այծ», αἴγειος «այծյա, այծենի», սանս. ajā «այծ», ajā- «բուծ», ājina «մորթ», ավես. izaēna կամ īzaena- «մաշկյա, կաշեղէն», պահլ. azak «այծ», լիտ. ožys «բուծ», ožkà- «այծ»: Մխային հայերենը և հանարևնը ունին արմատը „j" կիսաձայնով: (-ոճ ածանցի համար այծի-ոճ>այծեոճ „газель" բառի մեջ ևս կիսաձայնի առաջ—ամանիք, եղեոճ<եղիոճ, երիկ—ոճ):

16. Այր «քուշ», այրուում (այր-եալ) «առչում եմ»=հուն. οἴδος «առաջք», οἰδέω «առչում եմ», οἴδημα «այրուածք», հրպ. eiz «պայծառ»:

17. Այր «տղամարդ» (ասն. արամբ)=ավեստ. arša «այր, արականն», հայց. aršīnəm, անս. aršnō, անս. հոդ. aršṇam, հուն. ἄρσην, ἄρρην (անս. ἄρρενος), լակ. εἰρήν, խոն. ἔρσην (ἐρσήν) «արականն, արական», սանս. ršabhā- «ցուլ» (Arm. Gr. 417): Հայոց առն=ավ. aršnō=հնդեվր. *ṛsnós. Բացակն և Մեյնն այր բառը կապակցում են հուն. ἀνήρ «առն»=ἀν(ὸ)ρος, որը Հնութիւնը չի ընդունում և այր (արր) ձևը այլ բնից է ծագած համարում:

18. Այր-եմ «այրում եմ», դայրանամ, դայրագին և այլն առաջելի են չպահված *այր «կրակ» արմատից, որը նոսր է *ater և համեմատում է հինդեվրոպերեն իրանական նոյնարմատ բառերի հետ՝ ավեստ. ātar- (ուղղ. հ. ātarš «կրակ») պահլ. ātur, պարս. ādar կամ ātaš. օսս. art' «այրվող կրակ, բոց» և այլն:

19. Այց (անհոլով) ոճերի մեջ «այցելութիւն, տքնութիւն, քննութիւն, խնամատարութիւն» հնդեվր. *ais-sk'h₁ ձևից: Համեմատուել՝ հրպ. eisca «հարցուփորձ» eiscōn «հարցնել, քննել, խուզարկել, անգ-սք āsce «քննութիւն», անգլ. ask «հարցնել», սլավ. iskati „искать", սանս. icchāti «փնտրում է, ցանկանում է», ավ. isaiti «փոխադրում է» և այլն (Arm. Gr., 418): Բնական Հնութիւնը հայց-ել բառը առանձին արմատից է համարում, սակայն Հ. Աճառյանը կցում է այս այց արմատին (Աբմ. բառ., I, 276):

20. Աւ- ժխտական նախամասնիկը հնդեվր. n̥- մասնիկն է, որ ունին սանս. ավեստ. և հին պարս. a- (բաղաձայնից առաջ), an- (ձայնաւորից առաջ), հունարենը ἀ-, ἀν-, լատիներենը in-:

գերմ. un-։ Համմտ. սանս. án-āgas- «անմեղ» áǰñāta=հուն. ἀγνώς «անծանոթ», á-nāman-=հուն. ἀν-ώνυμος «անանուն», լատ. inermis «չզինված», infans «անխոս>խուլ, երեխա», գոթ. unkunþs «անհայտ» և այլն։ Հայերենում կա, ինչպես ևս ցույց եմ տվել 1927 թ. («Հնէաբանական մի քանի նշանագրեր հայերենում»), նաև մի այլ ան- նախամասնիկ «մեր, համարյա իմաստով (անծնող, անուանական, անբարի, անսուի և այլն), որը համապատասխան է հուն. ἀνα, գերմ. an և այլն, թեպետ կա և անմիտներենում (անկապերենում), որն անշուշտ պատահական է։

21. -Անդ «հեմք» բառը, որ մտնում է դր-անդ կամ դր-անդի բարդության մեջ, ուր դր- կրճատվել է դար- (դառն, դրան) արմատից։ Ազգակից են սանս. ātā «դռան շրջանակը», ավեստ. aiθyā «դռան ցցերը կամ գերանները», լատ. antae «դռան երկու կողմի սյուները», հին իսլ. önd «նախասենյակ»։ Հայոց բառը մնացել է նաև բարբառներում, օրինակ Բուլանըխում, ուր դըրբնդի նշանակում է «դռան վերի շեմքը» (Արմ. բառ., I, 304)։

22. Անկ-ացիմ (անկ-ալ) «ընկնում եմ, падаю»=գոթ. siggan, հրգ. sinkan, գերմ. sinken, անգլ. sink «սուզվել, խորն իջնել», գոթ. sagqjan, հրգ. senchan «սուզել», լիտ. senkú, sèkti «ընկնել, ջրի խորն իջնել, ջուրը ցածրանալ»։ Հայոց ank կամ ang- արմատը զարգացել է հնդեվ. sṇg (sṇk) ձևից, թեպետ մյուս լեզուների օրինակները կարող են վկայել seng, senk-ʷ կամ sek-ʷ ձևերի մասին։ Հ. Աճառյանը- իր Արմ. բառ.-ում (I, 336—340) հայոց անկանիմ կամ անգանիմ այս արմատի (ank-, ang-) հետ կապում մի շարք բառակազմություններ, որոնք, ըստ իս, այլ արմատից պիտի լինեն, ինչպես՝ ցանկ «ճյուղերով և այլն հյուսված պատ» (ограда, изгородь), զանգանել «խոսնել, շաղվել» (месить), զանգված, «բազադրություն, խմոր ձուլդ, հալած, յանգչել կամ յանկչիլ «սիրով կապվել», անկանակ (անկի, անկ) «հյուսել», յանգուցորիլ «վերջանալ», անգանակ «վերջ», անգաւան «ծայր, գաղաթ», անդուրգ «վերջ, կատարելություն», անկ է «պատշաճ էր», ցանկ «միշտ» և այլն։

23. Անկիւց անկյուն, угол հնդեվ. ang- արմատից և -իւց ածանցով։ Համեմատել լատ. angulus «անկյուն, խորշ, ծայր», հին սլավ. ǫgŭlŭ=уголъ «անկյուն, խորշ»։ Հայերենում պատահում է նաև անգիւն գրությունը, քանի որ ն անգամանից հետո խուլ և ձայնեղ պայթականները փոխանակվում են թեպետ ոչինչ=հնդեվ. *penkʷe։

24. Աճառն *ննդ, կիրճ, նեղ անցք* (теснина), *կարուտ, փափագ*, աճպալի *կարոտալի, ցանկալի*, աճպանալ *կարոտանալով փափագել*, աճպել *կամ* աճպալ *փափագել* և այլն: Արմատն է *ang'hu-, որ տալիս են առնս. aṅhú- *ննդություն*, *ննդ*, ավեստ. ązō *ննդություն, սրտի անձուկ*, օս. ungag *ննդ*, հուն. ἄγχω *խեղդել, նեղել, վշտացնել*, լատ. ango *անհանգստանալ, խեղդել*, angor *սրտի անձուկ, սրտանեղություն*, angustus *ննդ*, գոթ. aggvus *ննդ*, հին սլավ. ąziti *անհանգստանալ* (узить), ązŭkŭ *ննդ*, узкий, գերմ. eng *ննդ*, Angst *սրտի անձուկ*, Enge *կիրճ* և այլն:

25. Անուն (*սեռ. անուան*)=առնս. nā́ma, ավեստ. nąma, հին պարս. nāma, հուն. ὄνομα, լատ. nōmen, գոթ. namō. սլավ. imę „имя" և այլն: Հնդեվրոպական ընդհանրությամբ, որ m հնչյունը կարող է վերածվել հաջորդնում v-ի, anun (*սեռ.* anvan) ձևը վեր է ածում *anuvan, իսկ սա էլ *anuman, որն արտացոլում է հնդեվր. *anōmn̥:

26. Անուրջ (*ածական հոլ.*) *երազանք*=հուն. ὄναρ, ὄνειρος, ὄνειρον (հոգն. ὀνείρατα) *առասպել, երազ*: Հայերենի նախաձևն է *anēr—իսկ ջ-ն ևոր է, ինչպես ունենք առերջ, գաղջ, ոդջ և այլ ածականներում:

27. Առ-ճե-մ (*արմ. ար-ար-ի*) *առնում եմ*=հուն. ἀραρίσκω (*արմ.* ἄραρον) *հարմարեցնում եմ, կցկցում եմ, արտադրատում եմ* (Arm. Gr., *420*): Ըստ Մելիե պիտի կցել ար- արմատին նաև ավեստ. ərə nāvi *արարում* (=արվից), aši (<*rti) *գործ* (*Արմ. քեր.*, I, *521*):

28. Առնում (*արմ. ան-ի*) *վերցնում եմ, առնում եմ*=հուն. ἀρνυμαι (*արմ.* ἠρόμεν) *առանձնում եմ, ձեռք եմ բերում*, добываю, получаю" (Arm. Gr., 420):

Ներքևին arnu-mar *բայի հետ կապակցելը (ըստ Մատիկյանի ՀՍ. 1919, 32, տես Արմ. քեր.*, I, *482—483*) *սխալ է, քանի որ այդ* arnu- *բայը նշանակում է «շարժել, բերել, թաղել»* ('move, bring, bury' *տես* Sturt. Hitt., Gr., 1936, *էջ 28*), *իսկ առնս.* ṛnomi *«առնում» չի բերվում Հյուբշմանի* Arm- Gr.-*ում:*

29. Առու *«առու, գետակ, շրի ճամբա, անցք, փոս, երակ»* գալացել է հնդեվր. *sruḷós *կամ* *srufis *ձևից* sru- *«հոսել» արմատից, ինչպես են առնս.* srávati *«հոսում է»*, sruti- *«հոսում»*, srótas- *«հոսանք, գիտ., կլք. երակ, բացվածք», հին պարսկ.* rauta *«գետ»*, հուն. ῥύτός *«հոսուն»*, ῥοῦς *«հոսում»*, գերմ. strom *«հնդեվր. հոսանք»*, սլավ. струя և այլն: Այս *sru- արմատի *srow- բարձր աստիճանից ունենք՝ առնq(ա)ել, առnq(ա)ել *«շրել* no-

ливатъ», որի այլ ասպիճանը կու նաև հանդ. ǫgFoȝ «հեղեղում», լիտ. stravà «հոսանք», սլաւ. о-стровъ «կղզի» և մյուսների մեջ: Հայոց ատոգ-ել (ոտոգ-ել) ասկայն է հարաբերում ատու ձևին, ինչպես չոգ-ալ (<*չով-ից) վերաբերում է չու ձևին: Համեմատել w ǁ g այսպիսի ասպնջականից կով և կոգի «կարապ», սրիւ և սրիգ, աւ-ոգ «առնեսանդան» և ազաճիմ «հոգնում եմ»: Հրաշմանը S. Bugge-ի այս առաջարկութիւնը անապահով (nicht sicher) է համարում, եթե չհաստատուի ատու բառի «հոսելու» սկզբնական դադարեցից առաջանալը: Վրաց ruvi «ջրանցք, առու» բառը քան Աճառյանի փոխառութիւն է հայերենից, ինչպես նման հին փոխառութիւն պիտի անանել phoni<հայոց ճուճի բառից, և հետևապես կարող է վիրել այդ հին խմաւոր:

30. Ասեղն «առանդ»=լատ. acus (նույնը), acuo «սրել», acies «ծայր, սայր» ācer «սուր», հանդ. ákiç «ծայր», ἄκρος, ἄκρον ծայր, առաջ. áçri— «սուր ծայր, անկյուն» լիտ. asztrùs հին սլաւ. ostrŭ „острый", լատ. ass «սուր» և այլն: Հայերենի նախնական ձևն է հնդեվ. *asḷn<*ak'lōn կամ *ak'lṇ:

31. Աստղ (տեղ. աստեղ) «աստղ, звезда»=հանդ. ἀστήρ (id.), ἄστρον «համաստեղութիւն», առաջ. star-, ամիսա. star-. լատ. stella, գոթ. stairnô, գերմ. stern և այլն, որոնց այժմ պիտի միացնել և խեթ. astiras: Հայերենը, հանդարենը և խեթերենը անանն նախդիր a ձայնավորը. մյուսների նախաստիպն է ǝstèr, տեղ. stros (Arm. Gr., 421):

32. Ասպ (տեղ. ասու, ասպով) «բարդ, գնդիա», ասուեայ, ասուի, ասուեղ «բրդի» իրենց asu- բնով ծագած են հնդեվ. *pᵒk'u-ից, համեմատել հանդարեն πάχος «կարտված բարդ», ասր. πεχο; «գնդմ», πήχυς «մապը առնարել, բարդ իսպիլ», լատ. pexus «բրդոտ» pecus (pecoris) «արջառ, պաճար, պահրեա», pecūnia «դրամ» հրդ. fahs «մաղ» fihu «արջառ», գոթ. faihu «ինչք, դրամ», գերմ. vieh «արջառ», լիտ. pekus «արջառ», peszù «մազերը պոկել», առաջ. paçu «ոչխար», ամիսա. pasu հոտ, արջառ, ոչխար, պարսկ. pašm «սար, բարդ» (Arm. Gr., 422, Արմ. բառ., I, 582—3):

33. Ատամն (-ման, -մունք) «առամ, зуб»=հանդ. ὀδούς, իոն. ὀδών, լատ. dens (տեղ. dent-is) առաջ. dān (instr. datā), dànta, ամիսա. dantan-, պարսկ. dandān, գոթ. tunþus, հդգ. zand, լիտ. dantis, կիմբր. dant «առամ»: Ըստ Հրաշմանի ատամն բառի -մն վերջամասը այնպիսի գուտ հոլովական ածանց է, ինչպես նույնը ունենք կողմն բառի մեջ հանդիպ կող բառի (Arm. Gr., 422):

34. Առեամ (առնցի) «առում եմ»=լատ. ōdi «առում եմ», ōdium «առնլութիւն», անգլոս. atol «առնելի, ոգեղ», հին իսլ. atall «չարագուշակ», հուն. ὀδύσσομαι կամ ὀδύσσομαι «վիրաւ բարկանալ», Ὀδυσσεύς հասուկ անունը («ցասնալ»): Arm. Gr., 422, Արմ. բառ. I, 595:

35. Արաւր (-ոյ) «արօր». ոչyr^a=հուն. ἄροτρον. լատ. arātrum. համմտ. լիտ. ārklas (-kla<-tlo), սլաւ. ralo, լեհ. radło (-dło<dhlo):

36. Արբանեակ «ծառա, ապաստաւոր, օգնական, հնազանդ»=սլաւ. rabŭ (robŭ) «ծառա». գոթ. arbaiþs «աշխատանք». գերմ. Arbeit «աշխատանք, նեղութիւն»: Հնդեվ. արմատն է *arbh կամ rabh (Arm. Gr. 423): Այստեղ համընկնում է քրդերէն raban «ապաստաւոր» բառը, որը գուցե հայերենից է փոխառած:

37. Արբեամ «ըմպել, խմել» (արբեցայ), ըմպեմ բայի առբիտաը կլինի արբի=հուն. ῥοφέω «շրուպի կերպով ուտել», լատ. sorbeo (id.) լիտ. srebiu կամ srobiù (id.)—բոլորի սկիզբն է հնդեվ. *sṛbh—(‖ *srobh-, *srebh-):

38. Արգել (անհոլով) «արգելք, խափանարար, խոչընդոտ, արգելան «բանտ, բանտարկութիւն», արգելում «արգելում եմ, չեմ թողնում, բանտարկում եմ»: Համմտ. հուն. ἀρκέω «վանել, հեռացնել, խափանել, դիմադրել», լատ. arceo «փակել, գոցել, կողպել, հեռու պահել, չթողնել որ մոտենա, արգելել» (Arm. Gr., 423): Արմատը համարում են arg-, որ տարածում են նաև areq-, aleq- ձևերի մեջ (լիտ. rakinti «փակել», գերմ. riegel «ճիպ, խափան, արգելք», լատ. arcanus «ծածուկ, փակ, գաղտնի», առնս. argala- «ճիպ», հուն. ἀλέξω «վանել, հեռացնել» և այլն),— տես Արմ. բառ., I, 645: Ըստ Հ. Աճառեանի մեր բարբառներում (Երևան, Նոր Բայազետ) կա բրգել բարդութիւնը, որ ցույց է տալիս արգել բառի arg-. խոսկան արմատը և -el ածանցի դրսևորումը, ինչպես տեսել բառի մեջ: Բայց ինձ թվում է, որ դա արհեստական է և ինձ հայտնի չէ արտաբառյան բարբառում բգ-արգ ձևը և կարծում Գ. Գաբշլանը ինքն է հորինել: Համանուրեն արգել արմատը հնդեվրոպական չէ և ճիշտ է Մառը փոխառութիւն համարում սաոերենից, ուր կա a'rqel «խանգարել, արգելել, նա պահել», ūrkāla «արգելք»:

39. Արդ «հիմա, ուրեմն, հետևաբար» և «նոր» բարդութիւններում, ինչպես՝ արդածին (=նորածին)=հուն. ἀρτιγενής նոր ամուսնացած= ἀρι-γαμος և այլն, այս արդ արմատից է նաև արդի, արդիւք, արդէն և ծագմամբ նույնն է հուն. ἄρτι «հիմա, այս

վայրկյանիս, մի քիչ առաջ» („eben, junqst"). համմտ. լիտ. arti «մոտս»:

40. Արդ (ու հոլ.) «ձև, կարգավորում», արդել «կոկել, շտկել», խորանարդ, զմբեթարդ, ծործորարդ (-հովտաձև, գոգավոր), զարդ (ու հոլ.), զարդարել, յարդարել և այլն=հուն. ἀρτύς «կարգավորություն», ἀρτύω, ἀρτύνω կարգավորել, պատրաստել, հորինել, լատ. ars (սեռ. art-is) «ձևերի կամ մարի ճարտարություն, արհեստ, ճարտարապետություն», artifex «վարպետ, բանվորների պետը», artus հոդ, մարմնի հոդված, անդամ», սանս. ṛtu «կարգ, կանոն», ṛti «ձև, եղանակ», գերմ. Art «ձև, եղանակ, տեսակ, կերպ»:

41. Արդար (ո հոլ.) ուղիղ, ճշմարիտ, հավատարիմ, առուշտ, իրավ (խոսք) ունենալով -ար մասնիկ (համմտ. զարդարեմ, յարդարեմ, մեծարեմ...) իր ard- ճշմարիտ արմատով=սանս. ṛtā-«սուրբ հրաման, իրավունք, ճշմարտություն», ṛtávan «սուրբ, արդար», ավեստ. aša (<arta -ից), ašavan-, հին պարսկ. arta (օրինակ Artaxšaθra- բառի մեջ). այն ինչ մյուսները այս արդար բառարմատը միացնում են նախորդի հետ (Արմ. բ. I, 651—655), միացնելով նաև արդակ (մակարդակ և այլն) «հարթ», արդիւն «արգասիք» (Արմ. բառ., I, նույն տեղը), որոնք ասկայն կարող են, թող իմ, այլ ծագում ունենալ:

42. Արեւ (ու հոլ.), արեւելք, արեմուտք, արեգ-ակն և այլն իրեն arev- և նոր արեգ- (<արեւ-) ձևով=սանս. ravi- «արև» (հավանական բառ է): Այս մեր արև բառը, ըստ իս, գալիս է ոչ թե «նախալեզվից», այլ մեր էրայից հազար տարի առաջ եղած մերձավոր Արևելքում (Միջագետքում, Միտաննիում) հնդկական ցեղերի լեզուներից, որոնք ազդել են խուռի, խեթ և մյուս լեզուների վրա: Հայատառերի դնչունները («բոշաններըն») մասամբ գուցե այդ ժամանակից են:

43. Արիւն (սեռ. արեան) «արյուն». кровь=սանս. ásṛk (սեռ. asnáḥ), հուն. ἔαρ (ϝαρ, εἴαρ), հին լատ. assir, asser, լատիշ. assins «արյուն» (Arm. Gr. 424), որոնց վրա այժմ ավելացվում է խեթ. eshar կամ escar (սեռ. eshanas), «արյուն, սպանություն»: Հայոց արիւն=ար- (<*asr)-իւն (համմտ. անկ-ի-ն, հեր-իւն...), հնդեվ. *esr(g)-ից ինչպես գար-ուն բառի gar-<*vesr- (Արմ. բառ., I, 683—4):

44. Արծաթ (ո հոլ.) «արծաթի մետաղը», серебро»=սանս. rajatá- «պիտակավուն, արծաթագույն, արծաթ», ավեստ. ərəzata-, լատ. argentum, գալլ. argento (Argento-ratum), հին իռլ. ar-

gat, հուն. ἀργύρος «արծաթ» (Arm. Gr., 42)։— բոլորը իրր ի հնդեվ. areg- «փայլել» արմատից, որից տարբեր մասնիկով ծագում է նաև նշված հանեարենը։ Հավանորեն նյութական կուլտուրայի զարգացման տեսակետից այդ *argat>*arzat արմատը լինի ոչ հնդեվրոպական, այլ միջերկրածովյան, ինչպես ամանք այդ կարծում են։ Կովկասյաններում կա ʻaraz կամ arz «արծաթ»։

45. Արծուի (ո հոլ.) և հնագույն արծիւ (ի կամ ո հոլ.) «արծիվ, орел»=սանս. rjipyá- (վերապիր է çyēná- «արծիվ» բառի), ավեստ. ərəzifya- մի լեռան անուն է և ərəzifyōparəna «արծվիվնասուր» բարդ բառի մեջ, հին պարսկ. ἀρζιφος, որը ըստ Հեսուքիոսի պարսկերեն բառ է, «արծիվ» թռչունի համար (Arm. Gr., 424—425)։ Ես կարծում եմ, որ հնդեվ. *rgipyo- վերականգնելը սխալ է, քանի որ բառերը կան միայն հնդիրանական լեզուներում, իսկ հայերենում (արծուի<*arçipia-), որից և վրաց փոխառյալ arcivi(id.), հնշտությամբ կարող էին վերցրած լինել իրաներիններից։ Այդ պատմական և աշխարհագրական նեղ սահմաններով պիտի բացատրել նաև չեչեն ärzu «արծիվ», լակերեն b-arzu(id.), ուր „b"-ն անվանական ածո (կենդանու) նիշն է։ Արխական այս rjipia- || arzipia- բացատրվում էր *arziptia- «արծախոթիվ», որը ևս կարող եմ պաշտպանել խեթ. pittarpalḫis «թևատուն» մի թռչնանվան ձևով, ինչպես անանք հայերենում նման մաշկաթև «չղջիկ, летучая мышь» մանգաղաթև «стриж» բառերի կազմությունը։

46. Արմուկն (-ան) «ձևոք արմատը»=սանս. irma- «բազուկ, նախաբազուկ», ավեստ. arəma «բազուկ», օսս. arm «բազուկ», լատ. armus «բազուկ, թիկունք», գոթ. arms=գերմ. Arm «ձևոք», պրուս. irmo «ձևոք», սլավ. ramo, ramę «ուս»։

47. Արջ (ո հոլ.) «արջ медведь»=սանս. rkša- ավեստ. aršа- օսս. ars, նոր պարսկ. xirs, հուն. ἄρκτος, լատ. ursus (Arm. Gr., 425)։ Ըստ իս, հին տղաանդից Արտվազդ անունը նշանակել է «Արջի սերունդ», այդպես էլ Վաղարշ և Վաղարշակ «Սերունդ արջի», նմանապես Արշ-ակ և Արշ-ամ անուններըր, որոնք նույն ծագումով են, իրենց ձևով մոտ են ավեստական arša- և օսերի ars ձևին (որից թերևս չերքեզների erš «արջ»)։ Համմա. նաև Aršdata անունը («Արջի ստած, Արջատուր»?) =Հայոց Աշտատ։

48. Արտասուք, հուն. արտաստու-ր (-ատ) «արցունք, слеза»=հվգ. trahan, գերմ. Träne (<*trahnu-<հնդեվ. *draknu-), գոթ. tagr հուն. δάκρυ, լատ. lacruna և այլն, հնդեվ. *dak'ru-ից (Arm. Gr., 425—426)։ Ա. Մելիե այս մեկնաբանությունը, որ նա ավել

է (Jndg. Forsch. V, 331). պաշտպանում է նաև Հյնպես իր Esquisse-ում (հրատ. 1936 թ., էջ 46), հնդեվրոպական նախաձևը ընդունելով *dra'ku-, համեմատելով հայոց artasu- բունը հուն. δάκρυ, հին վերին գերմ. trahan, միջ. գերմ. traher «արցունք» նեղկալացուցիչների հետ։ Հ. Աճառյանը, հետևելով Walde-ին, Boisacq-ին, Trautmann-ին և մյուսներին, բերում է նրանք հնդեվ. նախաձևը՝ *drakru (որից և հայոց ձևը), հետո՝ կրճատված *dak'ru- և վերջապես *ak'ru-, որից առաջանում են հնդիրանական (սանս. açrū, ավես. asrū, պարս. ars «արտասուք...) և բալթիկ ձևերը (լիտ. aszarà, լատ. asara)։ տես Ամբ. բառ., I, 768։ Ըստ իս, հայոց artasu-<*rtasu-<*trasu-<հնդեվ. *drak'u-, իսկ վերջին -r առնառնը (արտասուր<*արտասու-ր) հետո է դրվել, ինչպես ունենք ասր (<*ասու-ր), ծագր, մեղր... փոքր, քաղցր և մյուսների մեջ։

49. Ածանցիմ (ուծանցիմ), ասր. ուծ-ի, «օձում եմ, յուղ քսում» = սանս. añj- «օծել» (anák-ti «օձում է»), լատ. unguo, unguen «օծանելիք, յուղ», հին վերին գերմ. ancho «կարագ», պրուս. anktan և այլն։ Հայոց ուծ- awç- <հնդեվր. *ong^{w}-? (Arm. Gr., 426)։

50. Ծձ (ուձ. ի հոլովմամբ) «օձ, змея» = լատ. anguis «օձ» (anguil la „Aoi", „yroрь, ձկնօձ), հվգ. unc «իժ», լիտ. angis «իժ, օձ» ungurýs «ձկնօձ», սլավ. yroрь, հին իռլ. esc-ung «ձկընօձ»։ Հայոց ուձ (awdz) <հնդեվ. *ang^{w}h ? (Arm. Gr., 426)։

51. Ծր (ասր, անս. աստր) «օրց» = հուն. ὄμαρ (ὄμαρος), ὠμάρα, լոկրիդ. ἀμάρα, որոնք «օր» են նշանակում։ Ըստ Ա. Մեյեի հայոց awr-ը առացվել է հին *āmōr ձևից (Arm. Gr., 426)։

52. Բաճ (ու կամ ի հոլ.)- երկաթի բահ «застуn», ըստ Հյուբշմանի կազմվել է bher- բայարմատից (*bhrfrom?), ինչպես մաճ, հետև մարճ, կազմվել է mer «մեռնել» արմատից։ Նա ի նկատի ուներ սանս. bhṛī, ավեստ. brōiθra «կացին», նոր պարսկ. burīden «կտրել», bēl «բահ» և այլն, որ շեշտում է ինքը (Pers. St, 28, 34 և Bartholomae, Studien II, 27, 107, 130)։ Վրաց bari «բահ» (որից barva «կտրել») հիմք էր տալիս Հյուբշմանին վերականգնել հայոց հին *barh ձևը։ Տես Arm. Gr., 427, սակայն որոշ լեզվաբաններ (Walde, Boisacq, Kluge, Berneker և ուրիշներ), այդ հնդեվ. bher- արմատին տալով ընդարձակ նշանակություն «ծեծել, ծակել, ճեղքել, փորել», միացնում են նաև βρῖλαι «սափրիչ», հուն. φάρω «ճեղքել», φάρος «արտ, հերկ», φαρόω «հերկել», լատ. ferio «ծեծել, բախել, հարվածել» forare «ծակ ծակել»,

սլավ. брить, брич «ածելիք», борю «կռվում եմ», брань «կռիվ», ռուս. борона «ցաքան», броня «զրահ», брить «ածելիք», бритва «ածելիք», հին բ. պերս. bərōn «ածական», bora «զգիր» և այլն: Հ. Աճառյանը, բերելով այս հավելումները (Արմ. բ., I, 913—4), ցանկացել է այս հնդեվ. bher- արմատին կցել և հայոց բիր բառը („кол") և այստեղից բրել «փորել», որը իմ կարծիքով սխալ է, որովհետև հին *birh- հայերենում պիտի տար հետագայում *բրհ և ոչ թե բիր, ինչպես մարհ>մահ, զարհ (արհ)>զահ-անգամ, ահ, ճանապարհ>ճամփա(հ), zōūra>զոհ (զորհ-ից), hammiūria>ամնհի և այլն:

53. Բամ «խոսում եմ, ասում եմ» պակասավոր բայ է և կան նրկայի եզակի բամ, բաս, բայ և սակավագնալ հոգն բամք, բաճ և երամ. բա՛, որոնք գործ են ածվում միայն ասել բայի հարադրությամբ, ինչպես – Ասացի բամ ցրնցից գնաստ. Բնգէն իսկ ասացեր բաս լիրկէն յաշխարհէն ճնճաց համբ. Բնբոստ բայ ասէ յառաջնում մաանհին. Ասէն բան՝ ազատելով ազատին արարածք. Ոչ եթէ ասեմք բամք կուզդ ինչ իցեն. Ասէն բան կին մի... խօսէր և այլն (տես Arm. Gr. 427, Արմ. բառ., I, 885—887): Ասել բայի հարադրությունը սքողնել է բամ, բաս, բայ և այլնի գործածությունը, դարձնելով դրանց շաղկապի վիճակում, ինչպես լատիներեն quidem կամ մեր «թե», որ իսկական շաղկապների պես, որոնք երբեմն փոխանակվում են: Ba- արմատը, որ առաջին անգամ ճշտորոշեց Այգինյանը, հանվում է հնդեվ. *bhā-ից «խոսել» իմաստով, որը կա հունարենում՝ φημί «ասում եմ», ὠνή «ծախք», φάμα «ծանր, աստվածների հայտարարություն», առն. bhan, bhánati «խոսել», լատ. fāri «ասել, խոսել», fama «լուր, համբավ», fabula «խոսք, պատմ, առակ», սլավ. баять, баснь, լիտ. bóju, bóti «վախի մասին հարցնել» և այլն: Հ. Աճառյանը այս bhā- հնդեվ. ընդհանուր արմատի մեջ է գնում նաև հայոց բայ «խոսք, մարդկային բան, պարապ սուտ խոսք, բառ, բայ (verbum)», բան (ի հոլ.) «խոսք, բառ, պատգամ, հրաման, խորհուրդ», բառ (ի հոլ.) «բառ, լեզու, բարբառ, երգի եղանակ», բարբառ «հնչյուն, ձայն, խոսք, լեզու»: Բամբասել կազմվել է բամ «ասում եմ» և բաս «ասում եմ», ինչպես ժողովրդական բարբառներում ասում են ասե-կոսե, կասե-կուսե, ըսի-ըսավ և այլն (տես Արմ. բ., I, 891): Հյուբշմանը առանձնացնում էր բայ „глагол, verbum, zeitwort", համեմատելով հուն. φάσις «խոսք, հայտարարություն, տարածայնություն, վճիռ», φάτις (=բայ) «խոսք, լեզու, անուն, տարածայնություն»,

ծագնցնելով հնդեվ. *bhotis ածանցյալից, իսկ բաւ=հնդ. ϕονή «ձայն», անգլս. bēn «խնդիր և այլ». ba-s-nī „басня" (առակ): Նա չէր խոսում բառ, բարբառ (բարբառել) ձևերի նույն ծագում լինելու մասին և կարծում ենք իրավացի էր:

54. Բարձր (անս. բարձս) «բարձր», բերձ հնչյունափոխ ձևը տալիս են երկնարերձ, լեռնարերձ, ուղղարերձ, բարձրարերձ և այլն: Նույն արմատին է պատկանում բարձ- «բարձրացնել, поднять», որ տալիս են բառաւաք, ասր. բարձի, ամբառնամ (համբառնամ), ասր. ամբարձի (համբարձի), ուր «ձ» արմատական հնչյունը ներկայի բնաւմ -ն-ամ կցությից առաջ ընկնում է (համմ. դառնամ—դարձայ, ընթնանամ-ընթնայց-այ, որոնց արմատն է դարձ- և թնայց-):

Հայոց բարձա «բարձր»=հնդեվ. *bhrg'hú- բերձ=հնդեվ. *bhérg'hos (Arm. Gr. 428): Ինձ թվում է, որ բերձ հնչյունափոխը ոչ թե գալիս է հնդեվրոպական նախալեզվյան *bherg'h-ից, այլ հետագա հայկական առնդծագործությունն է a ‖ e ասլորական փոփոխումով, ինչպես՝ հաստատմնա, ուր «մնաստ»-ը անջատվում է նման բարձրարերձի բերձ մասից: Համմ. նաև խայտաբղետ: Հնդեվ. ձևերն են— սանս. bṛhánt- բարձր, մեծ, ավես. bərəzaṇt- «բարձր», օսս. bārzond, պարս. buland, հրգ. berg „Berg" և այլն:

55. Բեկ-ացնմ (առր. բեկ) «կոտրում եմ», բեկոր, «կոտոր», բեկ-տնմ «կոտրտել», բեկչի «կոտրիչ» (անընկճելի «չկոտրվող»)= հնդեվ. *bheg- կամ *bheng- արմատից, որից են սանս. bhañj- (bhanákti «կոտրում է»), bhaṅga- «բեկում, խորտակում, ալիք», հին իռլ. beingim «խորտակում եմ», com-laig «կոտրել, խորտակել», լիտ. bangà «ալիք», ռուս. бужать «քար կոտրել», գնչուական pangáva pagiom «բեկանել, կոտրել», իսկ r-ի ներմուծումով՝ լատ. frango (perf. frēgi) «կոտրում եմ», fragmentum «կոտոր», գոթ. brikan, հրգ. brechan, գերմ. brechen, անգլ. break «կոտրել» (Arm. Gr. 429, Ամր. բ., I, 1050—1052): Հայերենում նույնպես եղել է արմատի առաջին պալեֆականից նոր հնչյունի ներմուծում, այն է «ղ»-ի ներմուծում, ինչպես ակկադական կապուտ (ակկ. habtu) «ամար, կողոպուտ» բառից հետո նաև՝ կողոպտում (<*կղապտում), մնգրելական čobur «ընկույզ» բառը դարձել է Ղարաբաղի հայոց բարբառում ճղոպուր և այլն:

56. Բերան (ո հոլ.) «բերան, ротъ»—լիտ. burnà «բերան», իռլ. bern (հայց. beirn) «ճնշդվածք», *bernā ձևից կամ berna (հայց. bernaid) նույն նշանակությամբ (*bernāt- ձևից): Թևակա

Հյուբշմանը միայն բերում է նպատ այս կարծիքը (Arm. Gr., 429), իսկ Հ. Աճառյանը հավելում է Walde-ի Boisacq-ի և Trautmann-ի զարգացումը այլ օրինակներով իբրև «ծակ, անցք» հասնելով մի նախնական *bher- «ծակել, ճեղքել» բայարմատից (տես բաճ բառի բացատրության հետ), այնուամենայնիվ ինձ թվում է բերած բառի առադրանության չլուծված։

57. Բեր-եմ (աորս. բերի) «բերել, ածել, կրել—առնել, պատղ տալ», բեռն (-ին) «բեռ, ноша» -ա-ւոր «կրող» (թագաւոր «թագ կրող» (=սանս. bhárāmi «կրում եմ, ածում. barēmi «կրում եմ, բերում եմ», հուն. φέρω «կրում եմ», լատ. fero «կրում եմ, բերում եմ», գոթ. baira «կրում եմ», սլաւ. berą „собираю, читаю" (бремя «բեռ»), հին իռ. berim «կրում եմ» և այլն։ Հնդեվ. *bhérō։

Հայոց -աւոր (թագաւոր, մտաւոր, կրաւոր,...) ածանցի մեջ «ա» ձայնավորը հոդակապ է և կարող է չլինել, ինչպես գինւոր «գինք կրող» (zēn+wor) ինչպես մեր ժողովրդի է հաճախ գործածում մարդ-wor «կրող, ունեցող» այդ ածանցը՝ հնձվոր, ոգվոր, ամուրացկան», բանվոր, սելվոր, «այլ բանեցնող» և այլն, այդ -wor ածանցը գալիս է հնդեվ.—*bhor ձևից («կրող») և *bher- «բերել, կրել» արմատի փոխակերպումն է։ Համեմատել նաև գործիական w ձևի (գործով. բանիւ, ամառ...) ծագումը հնդեվ. bh-ից, որ նպակիում կա և հանդիպում (φ)։ Կան նաև այլ ածանցավոր կազմութիւններ — բերառ, բերիւր = բերրի, համբերել, բերք և այլն։ Հետաքրքիր է այժմյան ժողովրդական «երեխա բերել»= (ծնել), որին նման է գերմ. gebören քրդերեն kur brin։

58. Բոկ «բոբիկ, босой», որից բոկագնաց, բոկոտն, բոկոտիւն, բոկանի, բոկիկ (>արդի՝ բոբիկ) ար bo-k<bos-(k)= սլաւ. bosŭ «босой», լտ. bāsas «բոպիկ», հին գերմ. bar «մերկ» bar.-fuss «ոտաբոպիկ», անգլ. bare «մերկ» և այլն։ Համանման լսա Chr. Bartholomae-ի (Stud. II, 13) հայկական -k մասնիկը գրվել է հայոց bo- արմատի վրա, որը ծագել է հնդեվ. *bhosó- արմատից և ոչ թե հնդեվրոպական անմիջական *bhosko- ձևից (Arm. Gr. 430)։

59. Բուծ (ի-ա), «կաթնակեր գառնուկ կամ ուլիկ» =սանս. bukka «բուծ», bukkā «այծ», ավեստ. būza «ուլ». պահլ. būj, պարս. buz «այծ, ուլ», գերմ. Bock, հրպ. boc, հոլլ. bok, անգլ. buck «նոխազ, արու այծ» (Arm. Gr. 430, Արմ. բ., I, 1194—1195)։ Հնդեվ. նախաձևն է *bhug'o-։

60. Բուծ-անիմ (աոր. բուծի), բուծ-իմ «անուցանել, պահել, մեծացնել», որի բոյծ առանձին չգործածված արմատից ունենք նաև՝ բուծարան, մեղուբոյծ, պտղաբոյծ, անասնաբոյծ և այլն: Անմիջական ազգակիցը կա սանս. bhuj (bhuñuté, bhuñjátē) «վայելել, ուտել, օգտվել» bhōjayati «կերցնել, անուցանել», bhōga «ուտելիք, կերակուր, վայելումն, գործողություն», bhōjana «կերակուր, ուտելիք» և նման ածանցյալներ (Arm. Gr., 430): Բայց բացի հայկերեն և սանսկրիտերենի այս ընդհանուր *bhuġ- արմատից հավանորեն եկել է և *bhruġ- ալաերնատիվ ձևը „r" հնչյունի հավելացմամբ, ինչպես այդ անասնք bheg- և bhreg- «կոտրել» արմատի վերաբերմամբ: Այս bhrūġ- «ուտել, վայելել» փոխարմատը տալիս են լատ. fruor «վայելել, գործածել», ապառնի պտուղը քաղել, fructus «վայելումն, օգուտ, շահ, պտուղ», անգ.-սաք. brucan «վայելել», հ. սաքս. brūkan, գոթ. brūkjan «վայելել, գործածել», անգլ. brook «տանել, ժուժալ» (բստ Walde-ի, Kluge-ի, տես Աբր. բառ., I, 1152):

61. Գայլ (ո հոլ.) «գայլ, волк»=սանս. vr'ka- ավեստ. vəhrka-, նոր պարս. gurg, գոթ. vulf-s, սլավ. vlūkū=ռուս. волкъ, այլ. ul'k: Սրանց հետ է նաև հուն. λύκος, լատ. lupus «գայլ», որոնք <հնդեվր. *luk^wo- ձևից, այնինչ մյուսները հնդեվր. *olk^wo-ից, իսկ հայոց գայլ ձևը հանդիսում է կամ *vļyo- նախնականից (բստ Hübschmann-ի) և կամ *vailo-ից (բստ Fick-ի), համեմատելով իռլանդական fael «գայլ» մեծամասնությամբ ձևի հետ (Arm. Gr. 431): Հնդեվրոպական լեզուների «գայլ» բառի այդ երեք բոլորովին ածանցական ձևափոխումները ուզում են բացատրել այդ բառի թաբուային, որով պղուշանում էին արտասանել և հնչառությամբ փոխում կամ փոխարինում էին, ինչպես անասնք «այծ» բառի նկատմամբ (տես նաև Աբր. բառ., II, 51—52): Վրաց mgeli «գայլ» պիտի համարել հայկերենից փոխառություն:

62. Դանճ (ի հոլ.) «ծնծ, пособіе» փոխաբերաբար նաև՝ վիրավորված մասը մարմնի, բայի և այլն, ունենք նաև գանճել, գանճամել «ծնծ ուտել», գան հարիանել «ծնծել» և այլն: Համմտ. սանս. ghana «բիր, կոպալ» ghāta- «զարկ, հարվածած», hati-. hátha-(id), hatyá- «սպանություն», hánti, «խփում է, սպանում է»=ավեստ. jainti=պարս. zanad «խփում է», հուն. θείνω «խփում եմ, հարվածում եմ», φόνος «սպանություն», որտեղից՝ ἐ-πε-φν-ο-ν, հին իռլ. guin «վերք», ge- gen «սպանանց», հին իռլ. gudr, gunnr «կռիվ», լիտ. ginczia' «պայքար, կռիվ», սլավ. жну «հնձում եմ», гоню

«հալածում եմ» և այլն (Arm. Gr. 432, Աբեղ. բառ., II, 59—60)։ Հնդեվ. նախաձևն է *gʷhəni- կամ *gʷhṇi (>գան)։

Միայն պիտի համարել Հ. Աճառյանի կողմից այս արմատին կցելը հայոց չին «գաժագանդ» և գաժատական գանել «գրվիլ, գարշելի բաներ»։ Առաջինը կա և վրացական լեզուներում և հայերենից փոխառություն չէ։ Մեդրելերենում և ճանկերենում (լազերենում) ունենք ցիցու (կամ ցիցի) «ճիպոտ», «արցակ կապելու ճիպոտ», օճիներեն «местность с мелким лесом» (И. Кипшидзе, грам. минг. яз., էջ 389, Н. Марр. Грамм. чанс. яз., 228), որի հանդեպ համեմատել հայոց ոչ միայն չին «ծեծելու գաժագան, ձագկել, այլև ոջիլ «կապոց փայտից» (Առձ. բառ.), «ճյուղերի կապոց, արցակ» (Աբեղ. բ., V, 1216)։ Վերջինի «ա» նախաձանցը (օջին, զերվաժ՝ ոջին), որ կա օրինակ և ոճիր (օճիր) բառի մեջ, ցույց է տալիս մեդրելա-լազական ո- նախաձանցը, որը նշանակում է «մի բանի համար. для чего-л» և խոսում է հօդուտ ոջիլ բառի փոխառության։

63. Գառն (-ին, -ինք) «գառ, ոչխարի ձագ»=հուն. (առտիկ) ἀρήν «գառնուկ», լիթ. (գորտին), Ғարήν, հոմեր. *Ғρτν «ոչխար», πολύρρην «շատ ոչխարավոր», սանս. uraṇa «խոյ, գառ», պարս. barra «գառ» (<*varnak ձևից), պահլ. varak «խոյ» (Arm. Gr., 432)։ Հայոց գառն=հուն. Ғαρήν=հին պարս. *varnā հնդեվ. *vərén-ից։

64. Գարուն (գարնան) «գարուն, весна»=սլավոն. vaŕrl, պահլ. vahār, պարս. bāhar, հին պարս. vahara (θuravāhara-ի մեջ), հուն. ἔαρ, հոմեր. Ғέαρ<*Ғεσαρ, լիթ. vasará «ամառ», սլավ. vesna=ռուս. весна, սանս. vasantá- «գարուն», լատ. vēr, հին իռլ. vār «գարուն» (Arm. Gr., 432—433)։ Ենթադրվում է, որ հնդեվրոպական առաջին նախաձևն է եղել wesr (ųesr), կամ wēsr (ųesr), որից առաջացել է կրճատված vēr ձևը, իսկ սկզբնական weser ուղղական հոլովի հետ է անասական wesnes, որից առաջացել է весна սլավոնական ձևը։ Ենթադրվում է նաև, որ հայոց գարուն ձևը ազդված է աշուն բառից, ինչպես նման ձևաբանական հարմարեցում (բառային առնմանություն) կա օրինակ ձմեռն-ամառն, երկին-երկիր (հին *երկիր ձևից) և այլն, իսկ գարուն բառի արմատը եղել է gar, որը առացվել է vesar հնագույն ձևից (vesar>*գեհար>*գահար>*գար, տես Աբեղ. բառ., II, էջ 93), կամ ինչպես Հյուբշմանն է գծում, հայոց գար-<*gehar=*vesr=հուն. ἔαρ։

65. Գել-ում (աոր. գել-ի) «ոլորել, ճմլել, պրկել» (սիրտը, մարմինը), գելարան կամ գելոց, «պրկելու գործիք». Ա. Մեյեն (MSL, VIII, 163) համեմատում հուն. εἰλύω (=Fελυω) «պատնեշի», volvi, ελύσθη «պատարվեց, հյուծվեց», լատ. volvo «ոլորում եմ, պտտում եմ» ձևերը, որոնք ասլիս են velu և vlū- արմատներին։ Բայց Ա. Մեյեն արան ավելացրեց նաև հայոց գել—գլեմ, գլորիմ, գլան, ալբիներեն՝ gil<*vēl- «գլորել, катать» փոխոխակը (MSL, IX, 144), որոնք ընդունվեցին Հյուբշմանի կողմից (Arm. Gr. 433, 435)։ Համեմատել ռուս. valiti գցել գետնին, շուռ տալ (повалить), բոլղ. val «գլանակ»=ռուս. вал, սանս. valayati «պատեցնել, գրկել», գոթ. valvjan=գերմ. wälzen, լատ. volvo և այլն։ Հ. Աճառյանը իր կողմից ավելացնում է հայոց գալ-ար «ոլորք» (օձի և այլն), изгиб, извилина (գալարափող, գալարել...), գալ գարմանական բառը էտրուսցներեն հատուկ բանջարեղեն (ավելուկ, շրեղ, շնեղ) ձմեռը պահելու համար և գաղձն ի գեղձ, «բրդեղ, պատատուկ» (=գաղձ բույսը, որ փաթաթվելով չորացնում է մյուս գալար բույսերին) և հնեանապես ունենում են գել, գիլ, գալ, գաղձ (գեղձ) արմատաձևերը նման գեղ, գալար, գեղձ, գաղձ անասկներին («բույս», «խոտ» և այլն), որտեղ կան -ար և -ձ ածանցները (Արմ. բ., II, 113—114)։ Հայոց գեղձ բուսանունը (գեղձ պատանալ) պետք տարբերել հնեանալ նույնանոններից։

66. Գեղձ-ք «գեղձեր»=սլավ. žleza „glandula" ռուս. железа, և մյուս կողմից նույնպես բուս. Bugge-ի (KZ, XXXII, 5)։

67. Գեղձ (-ի) գեղձումն «բազմանք, առատիկ իղձ», ցանկություն, որ Բուգգեն (KZ, XXX, 6) զուգակցում է սլավ. želěti, želati, „желать" բայի հետ, հնդեվ. *g^{w}hel- արմատից (Arm. Gr. 435)։ Բայն է՝ գեղձամ (-ացայ) կամ գեղձիմ (եցայ) «բազմանքով վառվիլ»։

68. Գեղմն (գեղմանն) «բուրդ, ասր»=լատ. vellus (<*velnos-) «գեղմ. բուրդ, մուշտակ», lāna (<*vlana) «բուրդ», գոթ. vulla (=*vlnā) «բուրդ», հրգ. wolla, գերմ. welle, անգլս. vull, անգլ. wool, հոլլ. wol, լիտ. vilna «բրդի թել» (հգ. vilnos «բուրդ»), հպրուս. wilna «զգեստ», հին սլավ. vlūna, չեխ. vlna, ռուս. волна, հուն. λῶμα, դորիական λᾶνος «բուրդ», սանսկր. ûrṇa (<vlnā) բուրդ և այլն։ Բոլորի արմատը vel, vol, vl, իսկ հայոց գեղմն <gelman=հնդեվ. *velmn, նրանց դա չեզոք սեռի է (Arm. Gr., 434, Արմ. բ., II, 130)։

69. Գետ (ո) «գետ, река»=սանս. udán-, udaká «ջուր»,

հուն. ὕδωρ (ὕδατος) «ջուր», լատ. u-n-da «ալիք», գոթ. vatô, հվգ. wazzar „Wasser", լիտ. vandû, սլավ. voda «ջուր»? (Arm. Gr.,434)։ Հյուբշմանը գնում է այս առաջարկությունը հարցականի տակ, ի նկատի ունենալով, որ հայոց բառի իմաստը (գնա, река») տարօրինակ է մյուս նկարկլացուցիչների «ջուր» իմաստի հանդեպ, որ արմատի e ձայնավորը չի համապատասխանում սրիշ լեզուներով և վերջապես դրանք ունեն r կամ n վերջացող բներ (Arm. Gr., 434)։ Բայց հայտնի է դարձել նաև «գնա» իմաստով բոլորտ. vada բառը, քանի որ, դա հնարավոր իմաստարանությունն կարող է լինել, և երկրորդ, կան նաև e ձայնավորով կազմություններ, ինչպես հին ֆրիզերեն wēt, անգլս. waet, անգլ. wet բոլորն էլ «քայց» իմաստով, ինչպես և սլավ. vědro «ջրաման, դույլ» (սուս. ведро) և կասկածելի փռյուգիական ϝεδυ «ջուր» թե «օդ», ապա Շևֆաելովիչը, որին միանում է Հր. Աճառյանը, վերացրած են համարում Հյուբշմանի կասկածը գնա բառի առաջարանության հանդեպ (Արմ. բ., II, 136—137)։ Իմ կողմից կավելացնեի, որ խեթերենում նաև witen «ջուր» ունի և wetar, widar ձևերը (ինչպես և թեք հոլովներում weten, witen- ձևերը), որից հայերը՝ (հայաստիք) փոխ են առել verd «ջուր» Լատոմիրտ, Օլոմիրտ, Շաղվիրտ<*Շաղվիրդ (առաջին կամ գնահատի անուն է Օշականի մոտ), Թաղավիրդ... ինչպես և ուրդ հատարակ բառը «ջրի ճամբա պատանդը ջրելու, ջրի ավազան», որոնց մեջ անհնում ենք ջուր>առվակ>գնա իմաստաշրջումը (շաղ-վիրդ խեթերեն առաջին նշանակում է «մեծ ջուր» šalli- «մեծ» և wetar>werd «ջուր»)։ Այսպիսով՝ գնա բառը կապվում է փռյուգա-սլավոնական լեզուների հետ, վիրդ (և վարդ՝ նոր-վարդ, Թաղավարդ) և ուրդ բառը՝ խեթական լեզվի հետ (որպես փոխառություն) և «ջուր» բառը հավանորեն՝ սոխանիկ— փոքրասիական անզգական լեզուների հետ բոլորն էլ «ջուր» նշանակությամբ։

70. Գին (ո) «մի բանի արժեքը, цена», որից՝ գին հատանել (կամ գին արկանել) «արժեքը որոշել», գնել, գնաժոլ, գանձագին և այլն։ Համմ. սանս. vasna- «գին», vasnayāmi «առևտրվել», հուն. ὤνος «գին», ὠνή «գնումն» ὠνέομαι «գնում եմ», գոթերեն. ὠνῆ» «ծախել», լատ. vēno, vēnui «վաճառքի համար», vēnum darc, vendere «ծախել», համմ. պհլվ. vahāk=պարսկ. bahā «գին» (Arm. Gr. 434, Արմ. բ., II, 196)։ Հայոց գին=հնգեվ. vēs-no-m.

71. Գինի (գին—ոյ) գինի, вино=հուն. οἶνος (<Foινος), լատ. vīnum, ալբան. vēnə <*vainā)։ Հայոց գինի <*geni<նա-

համապ. *voinio-: *Ինպես հարևան վրացերենում ունենք* gvino *(մեգր.* gvini) «գինի», բայց ըստ Հյուբշմանի այդ չի նշանակում, որ հայերը այդ գինի բառը վրացերենից են փոխ առել (Arm. Gr. 434—435): *Ա. Մեյեի կարծիքով գինին միջերկրյա հին ժողովուրդներին է պատկանել և հնում անցել է սեմիտներին (հրեաներին, արաբներին, աքսուրներին) և հնդեվրոպացիներին (հուներին, հայերին, ալբաներին) և սրանց միջոցով՝ ևիրոպայի մյուս ժողովուրդներին (լատին, գերմաներ, կելտ, սլավ) Գերմաներեն է մտել լատիներեն միջոցով, և հնում անցել սլավոններին, իսկ հայերի միջոցով տարածվել դեպի Կովկաս (տես Աբեղ. բ., II, 201—202):

72. Գիշեր (n կամ l-ս հոլ.) «գիշեր, ночь, գիշերից» գիշերանց, Nachts գիշերային (նուէրը), գիշերապար, «արուսյակ» և այլն: Համմտ. հուն. ἑσπερος «երեկո», τὰ ἑσπερα «երեկոյան ժամանակ», լատ. vesper «երեկո», հին իռլ. fescor (<*vespero-ից), լիտ. vākaras, սլավ. večerŭ „вечер, երեկո»: Ինչպես Հյուբշմանն է նշում, այս բառերը անհնար է իրարից անջատել, ինչպես և հնչյունական օրենքներով մեկնել: Հայերենի i շնշուռակորուսյա (վերջընթերը) ձայնավորը, ինչպես ցայժմ պիտված է ևղել, գալիս է հնդեվ. oi կամ ei դիֆթոնգից, իսկ հայոց նման i=հնդեվ. ē չենթասված պիտի համարել (Arm. Gr., 435): Բնաշ օրինակների նախաձևերն են vespero- կամ veqero-, որին հարում է և հայոց գիշեր բառը հին *գիշեր ձևից, թեպետ կային լեզվաբաններ (Brugmann, Boisacq), որոնք գեմ էին հայոց բառի հնդեվրոպական ծագման (Աբեղ. բառ., II, 205—208):

73. Գիտ-եմ (արմ. գիտացի) «գիտեմ», արմատն է գէտ=ատնա. vêda, ավեստ. vaêδa, պոթա-ավեստ vaedā, հուն. οἶδα, գոթ. vait, սլավ. vĕmi (vědě) «գիտեմ». պրուս. waidimai «գիտենք» (Arm. Gr., 435):

74. Գոյ «գոյութիւն ունեմ», հնում կային նաև գոն, գոյր, գոլին, գուցէ, որոնց հիման վրա անալոգիայով առնծվում են նաև I և II դեմքերը: Այս գոյ երրորդ դեմքը գառնում է նաև գոյական (գոյ, գոյն, գոյու) «գոյացութիւն, գոյք (ինչք), հարստութիւն, առատած», ինչպես է „есть" գառնում է «էութիւն, առատած», կամ „стоит, пребывает" նշանակում է նաև «կայանը» (στάσις), բայ «առում է, խոսում է», գառնում է բայ „глагол" (ῥῆσις): Արմատն է գո- (go-), որը ծագել է նախկին vos- հնդեվ. ձևից և նշանակել է «բնակվել», հետո նաև «ապրել, կեցութիւն (գոյութիւն) ունենալ», Համմտ. սանս. vasāti «բնակվում է», va-

sati- «բնակատեղին, բունը», ավեստ. vaŋhaiti «բնակվում է», գոթ. visan «լինել, մնալ, ապրել», vas «էին», vists «էութիւն, բնութիւն», հվգ. wesan «լինել, գոյութիւն ունենալ» և այլն (Arm. Gr., 435—436, Աբմ. բ., II, 257—259)։ Հայոց գո- (go-) ձևը մնացել է ոչ թե հնդեվ. ves- ներկայի բնից (ve'sò), այլ անցյալի (perfectum) vos- (vóse) ձևից։

75. Գործ (ո հոլ.) «գործ, աշխատանք, պաշտոն, բանվածք, վարքը, որից գործել, գործած, գործի «գործիքը», գործարան, գործունակ «խանութ» և այլն։ Համմտ. հուն. ἔργον (<Fέργον) «գործ», ἐργάζομαι «աշխատում, կրանում» ὄργανον «գործիք, գպրոցարան», հգ. werk, verch «աշխատանք, գործ, գործատնութիւնը», գոթ. vaúrkjan «գործել, անել», ավեստ. vərəzyeiti «անում է, մշակում է, varəza «գործ», նոր պարս. barz, varz «գաշտային աշխատանք»։ Աբմատն է *verg- (Arm. Gr., 436), որի երկրորդ (o-ով) հնչյունափոխ արմատից է հայոց «գործ», ինչպես ունենք հուն. ὄργανον «գործիք», անգլ. work «գործ, գործել», և այլն (Աբմ. բ., II, 283—4)։

76. Գորա (ի կամ ո հոլ.) «գորա, лягушка»=լատ. warde, լիտ. vorlė «գորտ» (Arm. Gr., 437)։ Թևոիտ այս բառը և մնգրնլերննում գորդի ձևով է և կովկասյան մի այլ լեզվում kuarti ձևվով, այնուամենայնիվ դրանք դժվար թե փոխառյալ լինեն հայերենից, իսկ հայոց գորա բառի հնդեվրոպական լինելը, ըստ էս, խիստ կասկածելի է, քանի որ միայն երկու լեզուներում են (հայոց և բալթիկ) և հավանորեն բնաձայն են։

77. Գտանեմ (ապր. գտի, III դ. ե-գիտ). գտակ, գիւտ „находка", որն, ըստ էս, ներապատնած է գիտ- բալտական բնից w ստանձնի բառակազմական ներմուծութեամբ։ Գիտ- արմատը=սանս. vid «գտնել», ներկան vindáti, ապր. ávidat, passiv, vidyátē, ավեստ. vindaiti «գտնում է, ձևը է բերում», հին իռլ. finnaim «գտնում եմ, փնտրել եմ տալիս» (Arm. Gr., 437)։

78. Դ (դերանվ. վերջածանց)=սանս. tá-m, ավեստ. tə-m, հուն. τό-ν (հայց.) և այլն։ Նշանակութեան և ածանցման մասին տես ս դերանվանական վերջածանցի տակ։

79. Ել<դալ «մոր առաջին կաթը», դիեմ «ծիծ եմ ուտում», դիեցուցանեմ «ծիծ եմ տալիս, դիեցիկ» ծիծ ուտող, սանդի կուրծք ծծող=սանս. dhāyati «կաթ է ծծում», դերբ. dhītā- dhāyas- «դիեցում», dhēnú- «դիեցիկ» dhātrī- «գայլակ, մայրը», ավեստ. *daenu- «մատակ», պարսկ. dāya «գայլակ», հուն. θῆσασται «դիեկ»,

ծիլ՝ ամոր ատինքը, պտուկը», ծիծ «ժիժ տալ, դիլլ» fēmina «կին», filius «որդի», հվգ. taan «կաթ տալ», tila «կնոջ ատինքը», սլավ. doja „дою", dēte «երեխա», дитя, լատ. dēju «անուցում եմ կաթով», dēls «որդի» և այլն (Arm. Gr., 437)։

80. Դալար (ո հոլ.) «խոտ. կանաչութիւն, բանջար, մատղաշ թարմ=հուն. θαλερός «ժաղկող, փթթող, թարմ», θάλλω «ժաղկում վարթամանում եմ», θαλλός «ոստ, ճիւղ, ատդարթ» θάλος «ընձուղ»։ Հայոց դալար բառը ունի վերջում -ար վերջածանց, ինչպես կա արդ-ար բառի մէջ (Arm. Gr., 438)։

81. Դարբին (ի-ա հոլ.) «երկաթագործ», կա և դարբին պրղնձոյ, հոգնակի դարբնայք և այլն։ Հին իմաստն է «վարպետ, արհեստաւորց-ին վերջածանցով։ Համմ. լատ. faber «վարպետ, արհեստաւոր (երկաթագործ, պղնձագործ, հյուսն, քարտաշ և այլն) fabre «ճարտարարուեստ, վարպետութիւն», fabrica «արուեստ, արհեստ, գործարան, արհեստանոց», գոթ. ga-daban «հարմարութիւնել», ga-dōbs «պատշաճ, հարմար», լիտ. dabinù «զարդարում եմ», սլ. doba «հարմարութիւն» (удобный, добрый) և այլն (Arm. Gr., 438)։ Թևպետ նախնական պարզ արմատն է dhabh-, բայց հայոց և լատինական ձևերը վկայում են *dhabhro- նոր կազմութեան մասին։ Մանրամասնութիւնը A. Meillet-ինն է։

82. Դեղեիմ «դնս ու դնն եմ շարժվում, երերում»=սանս. dhū (նեղական dhūnoti) «երերալ, ինանանիմ՝ dōdhavīti, դերբ. dávidhvat- «շատ շատ երերալ, դնս ու դնն շարժվելը»։ Հայոց բառը կրկնավոր է դեւ-=հնդեվ. dhev- արմատից (Arm. Gr., 438)։ Մի քանի պիտնականներ այդ արմատին տալիս են նախնական իմաստ «շարժին շարժել» (ծխի և փոշու մասին), որից՝ այնկոմնել (бушевать), ինչպես հուն. θύω, հին սլավ. дуть, լիտ. dūja «փուշի» և այլն (Աբմ. բառ., II, 478)։

83. Դեռ «դնս, еще, пока»=լիտ. dár (նոյնը)։ Այս առուգաբանութիւնը առաջարկել է Ա. Մեյեն (MSL. IX. 150), ուր Arm. Gr. 438. բայց Ն. Մառը գ'երազատում էր հայոց դեռ բառը կապակցել վրաց dzer (ՉՅՐ «ջեր») մեռնելու հետ, որը իմ կարծիքով ավելի ճիշտ պետք է լինի, մանավանդ որ ձայնաւորով դրանք մոտ են և երկու կից ցեղամերձերի բառ են, եթէ ունենալով հին Հայաստանի անդադրութիւնը։

84. Դիպանիմ (դիպայ) «կուտակվում, հավաքվում եմ (ամբոխը, ամպը, ծուխը, ալիքը, մեղքերը), դեզ «շեղջը, կույտ», որից

դիզադէգ, փրփրադէգ, դիզանալ և այլն։ Հնդեվ. *dheig'h արմատից է, համմտ. սանս. dēhî- «թռուցիկ, սաստկանալ, ամբարտակ», ավեստ. dîz, daēzayeiti «դիզում բարձրացնում է», uzdaēza «դնել, պատ», pairidaēza «շրջապարիսպ», հին պարս. didā- «ամրոց», պարս. diz, dīz «բերդ, դղեակ», հուն. τεῖχος, τοῖχος «պարիսպ, պատ». օսկ. feihucs «պատեր, պարիսպներ» (հայց. հոլ.)։ Arm. Gr., 439։

85. Դնել «դնում եմ, кладу, ставлю» (աորս. եդի, եդիր, եդ, եդաք, եդիք, եդին, II ապառնի՝ եդից, դիցես, դիցէ, դիցուք, դիջիք, դիցեն, հրամ. դիր, դիք, անց. դնէր. եդեալ) =սանս. dádhāti «դնում է», աորս. ádhāt, ավեստ. daδāiti «դնում է, անում է, տանջում է», աորս. dāṭ, հին պարս. adadā «արեց», adā «տանջեց», հուն. τιθημι (θήσω, ἔθη-κ-α) «դնում եմ, անում», հրգ. tāt «գործ», tuon «առնել», սլավ. dějǫ, dežda, dĕti деть «դնել», լիտ. démi, dedù, dėti «դնել»։ Հայոց ed «դրեց»=*édhēt=սանս. ádhāt (Arm. Gr., 439)։

86. Դու «դու, ты»=հուն. դոր. τύ (աւտս. σύ, ուր σ-<tv-), լատ. tū, գոթ. þu, հրգ. du, dū, սլավ. ty=սանս. ты, լիտ. tù, պրուս. tou, tu, հին իռլ. tù, ավեստ. tûm, օս. du dį, հին պարս. tuvam, սանս. tuvám, tvám, հնդեվ. *tū և *tū ձևից։ Սկզբի t խումբը ձայնեղ է միայն հայոց du-ի, նման օս. du-ի, և հայոց դերանվանական դ (=*to) հոգի մեջ։ Arm. Gr. 440։

87. Դուռն (դրան, հոգն. դուրք—դրաց) «դուռ, դուրս, բարդութեան մեջ դր- դրսից, դրացի, դրանդ... կամ դռն- (դուռն-)՝ դռնապահ, դռնապան, դռնաբաց և այլն=հուն. θύρα «դուռ», լատ. foris, գոթ. daûr, հրգ. turi „Thür", լիտ. dùrys (հոգն.) «դուռ», dvāras «բակ», սլավ. dvĭrĭ (հոգն. dvĭri) dvorŭ «բակ», հին իռլ. dorus, ավեստ. dvar-əm (հայց.) պարս. dar, հին պարս. duvarayā «բակում», սանս. dvār, dur «դուռ»։ Հնդեվ. *dhvor-, *dhver-, *dhur-։ Հայոց ի դուրս «դուրս» (вон, вне, вы-) խմաստը դուռն բառի կապակցութեամբ կա և այլ լեզուներում, ինչպես հուն. θύραζε «դուրս» θύρηθι, θύρηζε «դրանը» լատ. forās «դուրս», foris «դրանը» նոր պարս. dar «դուրս, դրանը» (Arm. Gr., 440)։

88. Դուստր (-եր հոլ.) «դուստր, աղջիկ զավակը, дочь»=սանս. duhitár-, ավեստ. duγδar-, գաթաուլհատ. dugədar, նոր պարս. duxtar, duxt, հուն. θυγάτηρ, գոթ. daûhtar, Tochter, սլավ. dŭšti, «дщерь- дочь (дочерь)», լիտ. duktė։ Հնդեվ. հիմնական ձևն է *dhughotér-, երկրորդական՝ dhughtr-՝ =dhugdhr-, (ըստ Bartholomae-ի Indg. Forsch. VII 54)։ Arm. Gr., 440։

89. Դուրգն (-ան հոլ.) «բրուտի անիվը»=հուն. τροχός «անիվ, բրուտի անիվ, դուրգն», հին իռլանդ. droch «անիվ»: Նախնական ընդհանուր ձևն է համել *dhrogho- (կամ *dhrógho-), իսկ հայերենում դուրգ— շրջված է *դրուգ ձևից, վերջածանց (նախկին հայց. հոլովի) «ն»-ի հավելմամբ, ինչպես այդ հաճախ է լինում հայերենում (դուռ-ն, ակ-ն, ոտ-ն և այլն): Arm. Gr. 440:

90. Եկն «եկավ»=սանս. ágan «եկավ, գնաց» (III դ. առ. gam «գնալ», գալ» բայից)=հնդեվ. é-g^{w}em-t: Նույնարմատից են հուն. βαίνω «գնում եմ», լատ. venio «գալիս եմ», գոթ. qima «գալիս եմ», գերմ. komme և այլն (Arm. Gr. 441): Մյուս գեմքերը և սորիստից առաջացած ժամանակները և ձևերը առացյում են եկ- բնից՝ եկի, եկիր, եկաք, եկիք, եկին, ապառնին՝ եկից, եկնացնս... հրամ. եկ, եկայք, անց. գերբ. եկեալ. ներկ. գերբ. եկող: Կա և եկ- արագնա բարդության մեջ՝ նորեկ, գնեկ «նոր եկած», եկամուտ, նախկող, երթևեկ, չեկ «անընդհատություն» և այլն: Այդ եկ- ձևը մոռնում է գնկացանել, իրագեկ կազմություններին մեջ, ինչպես ներկա գամ բառը մոռած է գգամ բայի մեջ:

Հնդեվրոպական լեզուներում համապատասխան կար երկու արմատ, մեկը g^{w}em- «երթալ, գալ», ինչպես սանս. gamati, որից gatá- «գնացած», ágan «եկավ», gántu- «ճանապարհ», ավեստ. jamaiti «գնում է», լատ. venio «գալ», գոթ. qiman=գերմ. kommen և այլն: Մյուսը՝ g^{w}ā-. ինչպես սանս. ágām «գնացի» հուն. ἔρχ-=գորխակ, ἔβαν «գնացի», βῆναι «գալլ», լիթվ. gāju «գնացի» և այլն: Հայց եկ- բառը, ինչպես ցույց է տալիս եկայք «եկէք» հրամայականը իր նախկին -ka (-կա) բնով մոռնում է այդ հնդեվ. g^{w}ā- ձևին (Արմ. բ., II, 676—677): Իսկ ներկայի բնի գա-մ ga-m ga- արմատը, լատ. իս. պիտի կապակցել լիթվ. we ‖ wa- «գալ» արմատի հետ:

91. Եղբայր (անս. եղբաւր) «եղբայր, ծրատ» սանս. bhrātar-, ավեստ. brātar-, հին պարսկ. brātar-, նոր պարս. birādar, հուն. φρᾰτωρ կամ φρᾰ́τηρ «միրաորիայի մոռնակից», լատ. frāter, գոթ. brōþar, սլավ. bratrŭ և այլն: Հայց եղբայր=հնդեվ. *bhrấtor կամ *bhrấtēr, եղբաւր=հնդեվ. *bhrātrós:

92. Եղն (եղին) «էգ եղջերու»=սլավ. jeleni, լիտ. élnis «եղջերու, հրեռխատին եղջերու», կիմր. elain «եղնիկ», հուն. ἔλαφος (=elṇbhos) «եղջերու», ἐλλός «եղնիկ, եղնարիծ», հիռլ. elit «ոյլ»:

93. Եմ «եմ, կամ»=սանս. ásmi, ավեստ. ahmi, հուն. εἰμί,

լատ. sum, գոթ. im, լիտ. esmi, սլավ. jesmi, bu (—II դեմք)= համեմ. èosi: Հնդեվ. 1-ին դեմք=ésmi, II ési և éssi:

94. bu «ես» я"=սանս. ahám, ավեստ. azem, հին պարս. adam, հուն. ἀγώ, լատ. ego, գոթ. ik, սլավ. azŭ, լիտ. èsz, àsz, լիթ. es, պրուս. es, as: (Համմտ. նաև ուրարտ. ieše, խուռ. iša-ի):

95. bրաստաճ (ի-ա հոլ.) «լեռնալք, նատաստեղի, քանչք, լեռոյքի վրա վերքերը, կապված է *bրաստա— արմատից և -ան վերջածանցից: Հնդեվ. արմատն է pr̥kto-, որը կա հուն. πρακτός «հնատոյք, արբան» (Steiss, After) բառաձևով, քան Bugge, Btrg. 12—13) անս Arm. Gr. 443, Աբմ. բառ., II. 771): Հյուբշմանը այս առոգաբանությունը դնում է հարցականով:

96. bրգ («ոտ հոլ.) երգ. песня=սանս. arká- «երգ, նուագ, հիմն» ṛk (անս. ṛčás) «ոտանավոր, քնրքուածք» (քան Հյուբշմանի arká և ṛk նույն նշանակությամբ են. Arm. Gr. 443):

97. bրդճում (ասր. երդուալ, անց. դերբ. երդուեալ, հրամ. երդուիր) «երդվում համ, երդումն (-ան հոլ.), որոնց բանն է երդու- (erdu-) նախնի ertu- ձևից: Համմտ. օս. ard, art «երդումն, ուխտ», և թնրիս նաև հին սլավ. rotŭ, rota «ուխտ», rotitise «երդնում»: Հյուբշման (Arm. Gr. 443) և IF. Anz 10, 45. Աբմ. բառ., II, 781:

(Հայոց erdu և օս. ard անմասն փոխառություններ են, համմտ. ակկադ. irtu «երդումն»):

98. bրեկ, երեկոյ, երեկոր, երեկորեալ, ցերեկ և այլն «երեկոյ, вечер»=սանս. rājas- «մթություն, մութ, մշուշ, ծուխ, շողիւ, rajanī «գիշեր», գոթ. riqis «խաւար, մթություն», հին. rokkr «մթություն, վերջալուսին, հուն. ἔρεβος «սաստերկրյա աշխարհի գժոխքի խաւարը», ἐρεβεννός, ἐρεμνός «մութ, մթին, խաւարասիրն», Հյուբշ. Arm. Gr., 443, Աբմ. բառ., II, 785:

99. bրևիմ «երեկոյ, երեկ «Ջոհոլ մոլորակը. Saturnus», երևելի ևին=հուն. πρέπω «երեկոյ, աչքի ընկնել, թվալ, πρέπει: պատշաճ է», —πρεπής «երևելի»: Մեկնի այս առարկությունը ընդունելի է քան Հյուբշմանի, եթե հունարեն prep- արմատի „p" հնչյունները բխում են r-ից (ոչ kʷ-ից), մի բան, որ առոգված է:

100. bրեք («իւ հոլ.) երեք, три=սանս. tráyas, ավեստ. θrāyô, հուն. τρεῖς, լատ. trēs, գոթ. preis, սլավ. trĭje, լիտ. trỹs, հնդեվ. *tréyes:

101. bրեց (-ու, -ամբ, -ունք, -անց կամ հնաոճ երիցունիք, -ուննաց) «ավագ, մեծ, քահանա», որը համապատասխան է նա-

խաղալ preisk'hu- *ձևին։ Համեմատել հուն.* πρέσβος *«ծեր», πρεσβύτερος «ծերագույն, երիցագույն», կրետ.* πρεῖσγς, *լատ.* priscus *«հնավուրց, վաղեմի»։ Հնդեվրոպական ձևերն ակիզբն է* *preis-g^{w}u-, *pres-g^{w}u-, *իսկ լատինականինը՝* *preis -ko-։

102. Երկաճ *«ջրաղաց, ջրաղացի քար»=սանս.* grāvan *«սոճան հանելու քարը, քար», գոթ.* quairnus *«ջրաղացի քար», լիտ.* girnos *«երկնաքար», սլավ.* žrŭny=*ռուսաց* „жернов", *կիմր.* breuan *«ձեռքի աղորիք, երկանաքար»։ Հայոց* երկաճ=*հնդեվ,* g^{w}rā-ni-?։

103. Երկու *(տես. երկուց)=հնդեվ* *dwō, dwōu=*սանս.* dvā, qvāū, *հուն.* δόω, *լատ.* duo, *գոթ.* twai, *գերմ.* zwei, *սլավ.* dva, dūva *և այլն։ Բարդութիւններէն մնացեր՝ երկու (երկուասան երկոքին— երկոքեան), երկի- (երկեամ, երկերիւր, երկեակ), երկ- (երկրաչեմ, երկդիմի, երկմիտ...)։ Մնչեի կարծիքը, որ երկիւղ, երկնչիմ (երկեայ) նման կազմութիւն ունի, ինչպես գերմ.* Zweifel *«կասկած», Հյուբշմանը վիճաբանում է* (Arm. Gr., 445)։ *Նոյն արմատից է նաև* կր-կին *(ինչպես անունը՝ մեկ-կին, երեք-կին, չորեք-կին...)։ Հայերենում միայն այս* երկու *բառի մեջ է, որ երեք բառի* er- *մասի ազդեցութեամբ ձեռնկրզվել է երկու բառի սկիզբը (եր-կու), իսկ մյուս դեպքերի* rk=dv *համապատասխանութիւնը արհեստական է և հակապատմական, ինչպես՝ երկնչիմ, երկար (երկայն)։*

104. Ի (Ե) *«ի» շարիական=սանս.* ápi, *նաև, դեռևս, էլ կից, հին պարս.* apiy, *ավեստ.* aipi *հննդ, լատ. մոտը, միջոցին, հուն.* ἐπί *«վրա, արա վրա» (dazu)։ Հնդեվ.* *épi *(Arm. Gr., 445)։ Ամենացնում են նաև թոխարներեն* pi *«նաև» (Արմ. բառ., II, 865)։*

105. Եւթն *(Եւթան) «յոթ»=սանս.* sapta, sápta, *ավեստ.* hapta, *նոր պարս.* haft, *հուն.* ἑπτά, *լատ.* septem, *գոթ.* sibun, *սլավ.* sedmĭ, *լիտ.* septyni։ *Հնդեվ.* *septṃ։ *Նոր ձև է նաւթն (նօթն)։*

106. Եփեմ *«եփում եմ»=հուն.* ἕφω *«եփում եմ, խաշում եմ», ἑφθός «եփուած», գոտ. և արմատակից են* ὀπτάω *«խորովում եմ, տապակում», ὀπτός «խորոված, եփած»։ Առաջիններն նախարմատն է* *sephs- *(տես* Arm. Gr. 446 *և Արմ. բառ., II, 871)։ Իմ կարծիքով «պատահական նմանութիւն» չէ հայերենի* եփ- *արմատին սմանական նման ձևեր կցելը, ինչպես՝ պարս.* efā *«եփիլ», սանս.* epū, *երբ* āfā *«եփիլ», եգիպ.* āpa *«խորովում» և այլն (Արմ. բառ. II, 873), քանի որ նման ազգակցութիւն կա և այլ դեպքերում («ցամաք, չորանալ», «շերտ» և այլն)։*

107. Զգենում *(պարս. զգնցայ) «հագնում եմ», զգեստ (հուն.*

հոլ.)=սանս. vas «զգեստ հագնել, վրան մի ծածկոց գցել», vásira «հագուստ, զգեստ», ավեստ. vaŋh (3-րդ դեմք՝ vastē), հուն. ἕννυμι «հագնվում եմ», ἕσθος «զգեստ» ἑσθής «զգեստավորում», լատ. vestis «զգեստ, հագնվելը», գոթ. vasti «զգեստ», vasjan «հագնվել» և այլն: Հայոց զգենում (<զգես-նում) և զգեստ բառերի մեջ զ-ն նախածանց է:

108. Ջնջանիմ «փրկվում եմ, պրծնում եմ, ազատվում եմ», զնջում (զնջի) խլում եմ, պոկում եմ, զնջած «ազատ, ապահով», մեհենագնջած «մեհյան կողոպտող», մեղանագնջած «անգան կողոպտող» են=սանս. sṛj. sarj «արձակել, ազատել ձեռքից, բաց թողնել», ավեստ. harəz «արձակել, թողնել», նոր պարս. hištan «արձակել»: Հայոց «արձակ» և «ապահարզան» բառերը փոխառություններ են իրանականից (Arm. Gr. 446, Աբեղ. բ., II, 937): Աչառել արմատն է նրա (սկզբի զ» նախածանց է), բայց այս erç- արմատը կարող է հայկական անցած լինել և ուրարտականից, ուր erṣi (ertsi) dubi նշանակում է «ազատանքի, արձակնքի» (առաջի՝ ազատ արի, բաց թողի):

109. Ընդեր-ք (ընդերաց) «փորոտիք, աղիք», գրված է նաև ընտեր-ք և անեզական է: Համմա. հուն. ἔντερα «աղիք, փորոտիք», սանս. antra-, āntrá-, «փորոտիք», սլավ. jetro «լյարդ» (ռուսաց ятро), ątroba «утроба փորոտիք», օսկ. entrai և այլն: Հայոց ընդեր- ծագել է inder- <*ender-ից, ուր e>i ինչպես հինգ <*հենգ, հին <*հեն և այլն, իսկ «ընդեր» շերտի պատճառով դառնում է ընդեր— ազդվելով թևեվա (ըստ Հյուբշմանի) ընդ— նախդիրով կազմած բառերից: Հնդեվրոպական նախաձևն է *entero-:

110. Ընծայ (ել» հոլ.) «նվեր, ձոն», գրված նաև ընձայ, ըստ Botticher-ի (ZLMS. 1850, էջ 350), հնում նաև Լազարդի և Պատկանյանի, ազգակից է համարվում սանս. ṣhati կամ aḷiti «նետէր, պարգև» բառի հետ, որ բառարանից է մխայն հայտնի: Հյուբշմանը (Arm. Gr. 448), համեմատությունը հարցականի տակ է դնում: Ըստ իս, այդ առարկանությունը սխալ է: Իմ կարծիքով դիտված է, որ «ընկոյզ»-ը առացվել է nigoz-ից, ընդդել (ձմռվալին հրնշ») <ակկ. niggal-ից, և ազատվել է ընծայ<niça, որն իր վերջին «ա»-ով առացել է առրատական (սերբիական) ազդեցությունը: Ինչպես որ մաքուր արմատը (առանց- a) պիտի լինի niç-, որը համընկնում է, ինչպես հիշած դիտել է Ն. Ադոնց, վրացական niç-ի «ընծայ» (մեզրելական ձև է) բառարմատի հետ: Քեվեա niç- ‖ niç- արմատը գալիս է ուրարտա-խուռիտական ընտանիքից:

111. Թաթաւեմ «թաթախել, погружать» կրկնված է պարզ thaw-, որը գալիս է հնդեվ. tar- ձևից: Համմտ. հալավ. topiti «ընկղմել, թաթախել, մխրճել», ռուս. топить «ընկղմել, խեղդել», утопать «խեղդվել, ընկղմվել, մխրճվել»: Այս առուգաբանությունը ավելց Müller-ը (Armeniaca, VI 2), ընդունվեց Meillet-ի կողմից (MSL. 9. 154). Թևակոտ հյուրշմանը հարցականի տակ է դնում: Տե՛ս Arm. Gr., 448, Ագ., Արմ. բ., II, էջ *1081—82*:

112. Թանձր (*ուշ հոլ.*) «թաւ, հաստ, առատ»: Ազգակից են առնս. tañč (*նեպկ.* tanakti) «պնդել, ամրացնել, մակարդել, թանձրացնել», նոր պարս. tanǰidan «պնդել, ամրացնել», tang «նեղ», ավես. taxma- (<*tṇkmo-) «զորեղ, քաջ», լիտ. tánkus «թանձր», գոթ. ga-ƀaihan = գերմ. gedeihen «աճել» և այլն: Այս օրինակները ցույց են տալիս հնդեվ. *tṇkû-, որի հանդեպ սպասելի էր հայոց *թանգու, այնինչ հայոց «թանձու» ձևի համար սպասվելու էր հնդեվ. *tṇg'hû-:

113. Թառամիլ (‖ թոռոմիլ>թոռմիլ) կամ թարշամիլ (‖ թորշոմիլ>թոշոմիլ>թոշմիլ) «թառամելի=առնս. tršyati «ժպրավում է», ավեստ. taršna- «ժպրավի», հուն. τέρσομαι «չորանում եմ», լատ. torreo «չորացնում եմ». գոթ. ga-ƀairsan ga-ƀaûrsnam, «չորացնել», ƀaursus «չոր», «ցամաք», ƀaurstei «ժպրավի», հին իռլ. tart «ժպրավի» և այլն: Հայոց թարշամ ձևը առլիս է Թորշոմ նոր (բարբառագիտական) ձևը, որոնք կորցնում են «ր» ձայնորդը, դառնալով թառամ և թոռոմ: Համեմատել մոռանալ<*մորշանալ, առաքինի, <*արշաքինի, առն<*արշն: Հայոց Թարշ-ամ (‖ Թորշ-ոմ) բառաձևերը ունեն նոր -ամ ‖ -ոմ ածանցները (համմտ. ճառ-ոմ<*ճառ-ամ-<ճառ արմատից):

114. Ի հարցական դերանունը՝ գ-ի «ինչ» էր (սեռ.) իմ, (սահմ), իւ (ինչով), *իք (չ-իք), իրիք, իմիք, իմմիք, իւիք=հնդեվ. kʷi- «ոմն», ավեստ. či-š «ոմն», առնս. ki-m «ինչ, ինչոմն», հուն. τίς (չնորք τί), լատ. quis, quid և այլն: Թևակոտ հյուրշմանի համար անհավանական է թվում, թ նկատի ունենալով հնդեվրոպական բառասկզբի *kʷ պահպանվելը հայերենում (համմտ. չոր-ք=*kʷetvores), բայց էլի համաձայնվում է Մեյեի այս առուգաբանությանը, որ կարելի է օրինք ընդունել, որ բառասկզբի հնդեվ. kʷo- kʷu-, kʷi խմբակցություններում այդ kʷ- հայերենում ընկնում է:

115. Ով (*«ի» հոլ.*) «թուն առլոր օձ=առնս. áhi-, ավեստ. aži- «օձ», հուն. ἔχις, ἔχιδνα «իժ, гадюка», հնդեվ. *cgʷhi-: Համեմատում սպասելի էր *հգ (*eg) կամ *հչ (*eǰ). Թևակոտ *հժ (*ež)

ձևն էլ հնարավոր էր։ Գուցե հայոց իմ ձևը հնդեվր. *eg^{w}hi- (երկար ē-ով) ձևին է համապատասխանում։ Իրանական փոխառություն չի կարող լինել հակառակ Chr. Bartholomae-ին (St. II, 34), որովհետև հայերենում այդ դեպքում սպասելի էր *až (=ավեստ. aži-, ինչպես ունենք aži-dahaka=աժդահակ)։ Arm. Gr., 450։

116. Իցն կամ իցնդ (գուշ հոլ.) «ինձ» „барс, леопард" (գաղտն է)=սանս. sṭhā—տառլուծ։

117. Իցն (հոգն. իմունք, սեռ. իմանց) «իներ»=սանս. náva, ավեստ. nava, հուն. ἐννέα, լատ. novem, գոթ. niun, սլավ. deveti, լիտ. devynì և այլն։ Հնդեվր. *nevn̥ և *envn̥։

118. Իւր «լուր, слюна» «իր իւ— մասով համապատասխան է =ավեստ. hava- «անփափկան, իրեն հատուկ», հուն. ἑός, լատ. suus =sovos, օսկ. súvad? Սպասելի էր հնդեվր. *sevo-ի դիմաց հայերեն եւ (ev-)։

119. Լայն «լայն, широкий»=սանս. prthû- «լայն, ընդարձակ», práthatē «լայնություն», práthas- «լայնություն», ավեստ. fraθah- «լայնություն», հուն. πλατύς «լայն» πλάτος «լայնություն», լիտ. platùs «լայն», հին իռլ. lethan, կիմր. litan «լայն» և այլն։ Հայոց բառը հանում են հնդեվր. *plātno- ձևից, թեպետև կա կարծիք, որ լայն բառի արմատն է լ-, լա, իսկ -այն ածանց է ուն-այն, երկ-այն, ամեն-այն, համ-այն և այլ ածականների մեջ։ Arm. Gr. 451. Արմ. բ., III, *151—152*)։

120. Լաւ «լավ, лучший»=հուն. λωίων ավելի լավ, лучший <*λωFων կամ լիտ. lābas «լավ»?։

121. Լափել «լափել»=հուն. λάπτω «լափում եմ», λαφύσσω «ագահաբար ուտում եմ», լատ. lambo, հին վերին գերմ. laffan «լափել»։ Արմատը ընդունվում է läph (Bartholomae, BB. 10, 289) կամ lab (Brugmann, Kluge)։

122. Լեարդ (ե-ա) «լերդ, печень»=սանս. yākṛt (սեռ. yaknás), ավեստ. yākarə, նոր պարս. jigar, հուն. ἧπαρ, լատ. jecur, լիտ. jeknos (հոգն.) պրուս. lagno (=jagno?), գերմ. Leber, հին վերս. գերմ. lebara, հիսլ. lifr։ Ըստ Ych. Schmidt-ի (KZ 25, 23. Pluralbildung, էջ *199*) նախաձևն է *lyēk^{w}rt։

123. Լեզու «լե-ա հոլ.) «լեզուա»=լիտ. lẽžùvis, իռլ. ligur։ Առանձին ձևերը կարծես թե հնդեվր. ligh- «լիզել» արմատից են և մյուսների հետ աղգակից, թեպետև շատ հեռու, ինչպես սանս. jihvâ, լատ. linguu (հին ձևն է dingua). գոթ. tuggō և այլն։ Նախաձևն է *dn̥guā?

124. Lի (<ո> հոլ.) «լի, լիք»<*plēyo-=հուն. (համեր.) πλεῖος «լիք», լատ. ex-plē-nu-nt «լցնում են», հիռլ. linaim «լցնում եմ», սանս. prā «լցնել», հուն. πλήρης «լիք», πι-μ-πλη-μι «լցնում եմ», լատ. plēnus «լիք և այլն: Համմտ. լը-ցնում և լիր:

125. Lիզել (լէզ-) «լիզել»=սանս. rih, lih «լիզել», ավես. riz, նոր պարս. lištan (նևրկան՝ lēsam<*lēzam), հուն. λείχω, լատ. lingo, գոթ. bilaigōn, «belecken» սլավ. lizati, liža, լիտ. lēszti, lėžiù, հին իռլ. ligim: Նախաձևն է *ligh:

126. Lոգալ (լոգացալ) արմատն է լոգ=հուն. λούω, «համեր. λόω=λόϜω «լոգանում, լվացվում եմ», լատ. lavo (id.):

127. Lոյս (<ո>), լուսին (<ի> և <ո>), լուսն (հոգն. լուսունք), «այբի վրա սպիտակ փուռ, бельмо (=հուն. λευκός «լուսավոր, պայծառ, սպիտակ», լատ. lux «լույս», lūceo «լուսավորում եմ», lumen (<*leuksmen) «լույս» lūna (<*louesnā) «լուսին», Lucerna «ճրագ», հին իռլ. lōche «փայլակ», սլավ. луча «ճառագայթ», луч «փայլ», луна, лысый, սանս. ruč, rōčate «երևիլ, փայլիլ», rōka- «լուսավոր», ավես. raočah- «լույս, փայլ» և այլն: Հնդեվրոպ. արմատն է luk և luk', հայոց lois=louk'o-, լուսին=*louk'eno-, լույս=*luk'on:

Այլ հնդեվ. luk (‖ luk') «լույս», արմատը գտնվում է գրեթե բոլոր հնդեվրոպական լեզուներում և բարբառներում: Գործ է ածվում և նորագույս խնթերենում, ուր luk- նշանակում է «լուսանալ»:

128. Lու (<ո> հոլ.) «լու միջատը»=աֆղ. vraža (<իրան. *brusā), սլավ. блоха, լիտ. blusà, հիմնական նախաձևն է *bhiusā, իսկ հունարենում ունենք φόλλα =*bhsulja (գրաֆոխութիյամբ):

129. Lու «լանքը», լու առնեմ «լսել եմ առլիս», լու լինիմ «լսվում եմ», լու ի լու «լսելով, լսվելով», ճլու «հնազանդ», լուլսեմ բալի անցյալ բունը (լուալ, լուալը, լուեալ, լուր— լուարուք) լուացանիմ, լուական «լսելու բանն», լուր «անհկութիյուն, համբավ, հնազանդութիյուն, ձայն», լուռ «լուռ ևնացած» (ինչպես՝ լսող)=սանս. çru «լսել», çrutá «լսել», çrutá «լսած», çrùti- «լսկանք, լուր, անհկութիյուն», çruš «լսել», ավես. sru «լսել» (srūta- «լսած»), sruš «լսել», հուն. κλύω «լսում եմ», κλυτός «հռչակավոր», լատ. cluo, in-clutus, գոթ. hliuma «լսկանք, լսողութիյուն», հվգ. hlūt «բարձրաձայն», իռլ. clunim «լսում եմ», clu' «փառք», սլավ. sluti, slovą «հռչակվիլ», slyšati „слышать", слух, լիտ. klùsti, klausýti «լսում» և այլն:

Հայոց lu=*հնդեվ.* *k'luto- *կամ* k'luti-; *Հայոց լս-ն-ս* <*lus-e-m< *հնդեվ.* k'lusk'ô? (Barth., Stud. II. 41, 48): *Անցյալ կատարյալի բնից՝ լուայ, լուար..., լուայց, լուեալ, լուր— լուարուք, լուացանեմ մինչեւ դարերում (X—XII դ.) բաւ անալոգիայի դառնում են՝ լանցի, լսել (լսած), լսիր և այլն:*

130. Լուանալ *(առր. լուացի) «լվանում եմ», հրամ. լուա, անլուայ կամ անլուաց «չլվացված», լուալիք «բարդիքը»=հուն. πλύνω «լվանում եմ», πλυτός «լվացած», սանս. â-plu «լվացվել, լողանալ», լիտ.* pláuti «*ողողել*»?:

131. Լուծ *(«ոճ հոլ.) «լուծ,* ярмо*», որից լծեմ. համմտ. սանս.* yugá-m, *նոր պարսկ.* juγ, *հուն.* ζυγόν, *լատ.* jugum, *սլաւ.* igo «*ярмо*», *լիտ.* jùngass, *հնդեվ.* *yugó-m.

132. Լուսանուցիք *(հոգն.) «լուսան պազանքը»=հուն.* λύχξ *(սեռ.* λυχνός*), հվգ.* luhs. *գերմ.* Luchs, *լիտ.* lúszis, *պրուս.* luysis, *սլաւ.* rysi „рысь“, Fr. Müller, Armeniaca, VI, էջ 3: *Հայոց բառի հնդեվ. արմատն է* *louk'-, *հուն. բառինը՝* *lunk'-=luk'n- *հին գերմ.* luchs<luk's-, (Arm. Gr., 454): *Հր. Աճառյանը նշում է նաև հայ բարբառային ձևերը— Ղարաբաղի լյուսիմն (լիւսինը) և Ղազախի լիսամ, որոնք նշանակում են «կպզքիս» (Արմ. բառ. III, էջ 283): Լսա իս, սլաւոնդ ունենք նոյն -ամն ածանցը, ինչպես սթնամն բառի մեջ պարզ ապ ձևից:*

133. Լուցանիմ *«վառում եմ», լուցկի և բարդութիւններում (ճրագալուցց, լուցաւիայա «լուցկի, կրակալուցց» ևլն)=հնդեվ.* *louk'- *արմատից է, ինչպես* լոյս *բառը, միայն ավելացած* s *ածականը, ապահնքն՝* *louk's-, *ինչպես ունենք վնց =* *svek's *կամ հարց-(առնեմ) և հարս (<*prek'-) բառերի կազմութիւնը: Իմաստի առաջնակարից (լոյս և լուցանել «վառել») համեմատել ավեստ.* aiwirao-čayeiti=*նոր պարս.* afrôzad «*լուցկի է վառում*» luk- (=*ավեստ.* ruč-) «*լոյս*» *արմատից:*

134. Լքանիլ *(առր. լքի, լքեր, և-լիք...) «ձգել, թողնել», կրավ.* լքանիի, «թողնվել, անճարականալ», *որի* լիք- *արմատը=սանս.* rič- (riṇákti) «*թողնել, պարպել, արձակել, ոչնչանալ*», *ավեստ.* iriž- «*թողնել, լքել*», *նոր պարս.* gu-rêxtan «*դրկվել, խուսափիլ*», *հուն.* λείπω, λιμπάνω «*թողնել*», *լատ.* linguo «*թողնել, լքել*», *գոթ.* leihva=*գերմ.* leihe «*փոխ եմ առնում*», *լիտ.* lêkù, likti «*թողնել*», *հետ գցել, ձնալ* և *այլն: Հնդեվ.* *lik^{w}-, *հայոց* *լիլք=հուն.* ἔλιπε: [*Իգդիրում, Տաշտուրնում* լքվիլ *նշանակում է «շան հարձակվելը որսի վրա,* набрасываться», *որը լքանել,*

լքել «ձգել, թողնել» հին իմաստով բաղ է և ոչ լինիլ «լրբանալ» բայը. որից իրրև թե կան Ալաշկ. լքնել «հարձակիլ, վրան լքնել, վրան հարձակիլիլ», տես Ա.ճառ. Արմ. բառ., III, 237—238 Գ. Դափ.]։

135. Մաղր (Ծաղու) «ծաղր, ծիծաղ» ծաղրական, ծիծաղիմ. ծիծաղկոտ ևն, իրևն ծաղ- արմատով=հուն. γέλος, γελως «ծիծաղ, ծաղր», γελάω «ծիծաղիմ», γελαστός «ծիծաղելի»։ Հնդևրոպ. *g'l-(‖ gél- ‖ g'ol-). ծիծաղ <*ձէծաղ [համեմատել խեթ. me-mal «ալրուր», mal- «մաղել, ապալ» արմատից]։

136. Ճանաչել «ճանաչելիս», ծանուիթ. ծանուցանել ևլն, որի նախան ճան-աչ-ել <*ճանաչել (նորընթաց առնմանուիթյամբ)= սանս. jñā (jānā́ti) «ճանաչել, դիտել, ծանոթ լինել», jñātā- «ծանոթ», jñāti- «բնաւոր», ավեստ. zan- «ճանաչել, գիտենալ», հուն. γιγνώσκω- նպատ. γνώσκω «ճանաչիմ», γνωτός «ծանոթ, խնամի, ազգական, նորալոր», լատ. gnō-sco, nōsco «ճանաչել, գիտենալ, տեղորել», գոթ. kann «գիտեմ», kunnum «գիտեմք», kunnan «գիտենալ», գերմ. kennen, լիտ. žinaũ, žinóti «գիտեննալ», սլավ. знать, знаю և այլն։ Հնդևրոպ. *g'n- =ծան- (մյուս ձևերն են *g'enē-, g'enō, g'nē-, g'nō-)։

137. Միր «տո հոլ.) «ծնող, ծնրուկ»=սանս. jā'rant- «ծնող», օսս. zärond «ծնող», նոր պարսկ. zar «ծնրուկ», հուն. γερων (γεροντ-) «ծնող, ծնրունի»։

138. Միճ «ծնունդ, ծագումբ», ի ծնէ «մորից ծնած ժամանակից», ծնունդ (-նան, -ննէ, -նամբ, ծննդոց), ծննդական «յղի». ծնող, ծնանիմ, բազմածին, ընդոծին, միածին ևլն, որոնց ծիճ արմատը (հնդևրոպ. g'en.) =սանս. jan (jā'nati) «ծնանել, ծնվիլ», jātā' «ծնված», jánas- «ցեղ, սերունդ», janiman- «ծնունդ, ծագում, հնանորդք», ավեստ. zī-zan-āt «ծնվիմ», zāta- «ծնված», հուն. γί-γν-ο-μαι «լինում եմ, դոյանում, ծագում եմ», γένε-σι-ς «ծագումն», γενος «ցեղ, սերունդ», լատ. gi-gn-o «առնդծում եմ, ծնում եմ», genus «ծնունդ. սերունդ», գոթ. kuni «ցեղ», գերմ. kind «որդի» ևլն։

139. Մնաւտ «կզակի ամբողջ ոսկորը, челюсть», համեմ. հուն. γένυς «ծնոտ», γναθμός «ծնոտ, ատամ», γνάθος «ծնոտ», լատ. gena «ատամ», գոթ. kinnus «ծնոտ, ատամ», գերմ. kinn «ծնոտ», սանս. hánu-, hánū- «ծնոտ», նոր պարս. zanax, «բալուճի» zanūk, zanīk «ծնոտ» և այլն։ Հայոց ծնաւտ բառը ծագել է *հին- աւտ, ինչպես ծղաւտ ծիղ -աւտ ձևերից։

140. Ծունր (հոգն. ուղղ. ծունկ-ք, հայց. ծունկս, սեռ. ծնգ-ոց) «ծունկ»=հուն. γόνυ «ծունկ», γνύξ «ծնկի վրա», γονίϰ «ծնկաչուն», լատ. genu «ծունկ», գոթ. kniu, «ծունկ», սանս. jānu «ծունկ», ավեստ. žnū-m (հայց.) «ծունկ», պհլ. zānūk=նոր պարս. zānū (id.), խեթ. genu «ծունկներ»: Հայոց ծունգ նեթադրվում է g'onwi (կամ g'ōmwi) հնդևր. ձևից, որ ի չեզոք սեռի երկակի ուղղ. հայց. ձևն է (ըստ Մեյեի):

141. Ծուռ «ոչ ուղիղ, թյուր, կորց, ծռել, ծռուիթիւն, ծռմռուռ, ծնգածուռ, ծուռումուռ ևլն=հուն. γῦρός «կոլոր, կորացած», γῦρος շրջանակ, բոլորակ, ծեր. γυρόω «ծռել, կորացնել»: Նախնական *g'uro-ի Դրանցից դուրս, ասյլնքն՝ հայերենից և հունարենից բացի, այս բառը այլ նևրհայացուցիչ չունի: Սաուպարանութիյունը Մեյեինն է (MSL, VII, 165):

142. Կաղին, «կաղնի ծառի պտուղը՝ ընդուկ, ֆլընդրիա», արքայական կաղին, խոզակաղին, կաղնապտուղ, հնդևր. *g^{w}eleno-=հուն. βάλανος [դորիական՝ γάλανος], լատ. glans (սեռ. gland-is). սլավ. želądi „желудь", լիտ. gilė, պրուս. gile:

143. Կեալ «ապրիլ» (կեցի<*կեացի), կեանք (կենաց), կենցաղ, կենդանի..., հնդևր. *g^{w}yō-, g^{w}yē- արմատից, ինչպես ավեստ. jyōtum (հայց.), jyāiti «կեանք», հուն. ζῆ «ապրում է», ζή-σω «կապրիմ», ζή-σομαι (id): Հայց կա և *g^{w}eu- արմատաձևը, որից սանս. jīvati «ապրում է», jīva «կենդանի», jīvitá-jīvtu «կեանք», հուն. βίοτος, βιοτή կեանք, բարիք, կարողութիյուն, լատ. vīvo «ապրում եմ», vīvus «կենդանի», գոթ. kius «կենդանի». սլավ. живъ կենդանի, животъ «կեանք», լիտ. gývas «կենդանի» gyvatà «կեանք», հին իռլ. biu, béo «կենդանի» և այլն:

144. Կեղ («ոռ հոլ.) «խոց, ուռուցք, պալար», կեղել «ասանջել, նեղել»=լիտ. gélti ուժեղ ցավել, ցավ զգալ (ոսկորի, աստամի, ոսի և այլն), gelonis «պալարի թանձրացած թարախը». սլավ. žali „жаль", գերմ. Qual «ցավ, չարչարանք», հին վերին գերմ. quālan «ցավ զգալ»: Արմատն է g^{w}el (Meillet, MSL 8, 165): Հր. Աճառյանը ավելացնում է նաև կեղ-ևք-ել «չարաչար ասանջել, բզիկ-բզիկ անել, պատառոտել» (Արմ. բառ., III, 1124):

145. Կեր («ոռ հոլ.) «ուտելիք, կերակուր, կեր (անասնոց)», կեր-ի «կերած» (ունեմ բայի անց. կատ.),— կեր բարդութիյուններից երկրորդ կոմպոնենտ (արմատակեր, շատակեր...), կուր- անասունների ուտելիք, կերակուր («ոռ հոլ.), կերակրել և այլն=հուն. βι-βρώ-σκω «ուտել, լափել, ճարակել», βορά «կեր, ճարակ անասնոց»,

βορός «որկրամոլ», լատ. voro «կուլ տալ, լափել», vorus (օրինակ carnivorus «մսակեր»), հին բ. գերմ. quërdar «խայծ ձկան», լիտ. geriù, gérti «խմել», սլավ. zîrą, žrěti „жрать", grūio „горло". Հնդեվր. արմատն է *g^{w}er-։

146. Կին (անտ. կնոջ, գոթ. կնաւ, հոգն. ուղղ. կանայք, հայց. կանայս, ս.-տր., բաց. կանանց, գոթ. կանամք — կոչական՝ կանանի (-նաւ), կանացի և այլն=անտ. gnâ- «առաքինամարդ», jâni- «կին», jâni «օրինավոր ամուսինը», ավեստ. (գաթա) gənā-, ավեստ. γnā- «կին», նոր պարս. zan, գոթ. qēns, qinō «կին» (weib), հիսլ. kona, հուն. γυνή (անտ. γυναικός), «կին, ամուսին», քնուտ. βανά, պրուս. genna, genno «կին» (weib), սլավ. žena «կին» և այլն։ Հայոց կին=հնդեվր. *g^{w}en- կամ *g^{w}-en-, հայոց կան-= հնդեվր. *g^{w}n̥-։

147. Կլանիմ (ապր. III դ. ենթ.) «կուլ տալ», կլնում, բարդումներում -կուլ (ամենակուլ, լեռնակուլ, աշխարհակուլ), ընկլնում, ընկլուզ-անիմ և այլն, որոնց կուլ- արմատը=լատ. gula «կոկորդ» giūtio «կլանում եմ», գերմ. kehle «կոկորդ», հին իսլ. gelid «լափում է», սլավ.- glūtati «կուլ է տալիս», glūtŭ «կոկորդ»։ Հայոց կուլ-=հնդեվր. g^{w}ul-։

148. Կոզի (կոգուղ) «կարապ»=անտ. gavya- «կովից առացված, կովից առաջացած» (կաթ, պանիր, կարագ, մեզ, թրիք), ավեստ. gāvya- «կովից առացված» (=կաթ), gaoya- (id)։ Հայոց կոզի հնդեվր. *g^{w}ovio-։

149. Կով (ու հոլ.)=անտ. gārús «կով», ավեստ. gāuš «եզ, կով», նոր պարս. gāv «եզ», հուն. βοῦς (անտ. βοFος) «եզ, կով», լատ. bōs (անտ. bovis) «եզ, կով» հին գերմ. chuo, լեռատ. gûvs «կով», սլավ. govedŏ «եզ», հին իսլ. bō «կով»։

150. Կու (ում հոլ.) և ավելի հին կոյ (ոյ հոլ.) «անասունի աղբ», որից կոյաղնդիս «աղբի մեջ ապրող բզեզ», կոյանոց «աղբանոց», կոյաջուր և այլն=անտ. gūtha- «աղբ, կղկղանք», ավեստ. gūθa-, պարս. gūh, քրդ. gū, gau, սլավ. govīno „говно" և այլն։ Հայոց կոյ<հնդ. govyo (համմտ. սլավ. govīno) կամ gouto, իսկ կու<gūto. այնինչ հնդիրանական ձևերը ծագում են *gūtho- ձևից։

151. Կռունկ «կռունկի ֆռչոցը»=հուն. γέρανος, լատ. grūs, հին բ. գերմ. chr-an-ah, լիտ. gérvi, պրուս. gerwe, սլավ. žeravi „журавль. կորն. կիմր., բրետ. garan «կռունկ»։

152. Կրծեմ «առանձներով կոկել, փրցնել», կրծում, կաշառակուրծ, կրծելի «ագահ, կծծի»=սլավ. gryzą, grysti «կծել, խածնել»,

լիտ. yráu- žiu, gráužti «կրծել, ատամներով պոկել (ոսկորի վրայի մսաը)», gružinéti «կրծոտել», լատ. graûžu «կրծել», ռուս. грызть և այլն: Հայոց ձևը կուրծ, որը շրշված է հին *grug'-ից:

153. Հայր (սեռ. հաւր)=սանս. pitâ (սեռ. pitûr, արտկ. pitrê), ավեստ. pita, պարս. pitar, հուն. πατήρ (սեռ. πατρός), լատ. pater գոթ. fadar, հին խոտ. athir: Նույն արմատից է հաւրուս «յաւրոյ «խորթ հայր»: Հայոց հայր=հնդևր. *pətḗr, անուական հաւր= հնդևր. pətrós:

154. Հաճ («ոտ» հոլ.) կամ հաճի (-ւոյ), նվազ. հաճիկ=լատ. ānus «պատառ կին», անգղս. anā «տատա», հին բ. գերմ. ana «տատա», ano «պապա», գերմ. Ahn. Ahne «պատա», պրուս. ane «պատառ մայր», լիտ. anýta «խորթ մայր»: [Իմ կարծիքով հայոց han- անմիջապես իր սկզբնական «ձ»-ով մտանում է խնթական hanna- «տատա» բառին]:

155. Հասանիմ (արմ. հասի) «հասանել, ժամանել, հասունանալ, հաս («ի» հոլ.) տուրք, հարկ, հասու լինել, հասուն, հասակ (стан, возраст), հասոյթ ելք=սանս. (aç açnóti) «հասանել, ձևընհաս լինել, գտնել, ժամանել, փոխադարձին հասնել», ավեստ. aš- naoiti «հասնում է», սանս. aç, ավեստ. aš, որպես հնդևր. *ṇk', պիտի հայերենում փոխանցվեր *ans կամ *h-ans ձևով, որի ns հնչյուններդ գալով հնդևր. *nk'-ից կամ *ns հայերենում պիտի միայն s ձևով, այսինքն բառը պիտի լիներ *as կամ has, ինչպես նմանը ունենք ուս, մին և ամիս բառերում, ուր s-ից առաջ եղել է m ձայնորդ հնչյունը: Հր. Աճառյանը այս հաս- արմատին է կցում և հասկանալ, նա կհամեմատեի ռուսաց достигать «հասնել» և постигать «մտքով հասնել, հասկանալ» նույնարմատ բառերը:

156. Հաստ «ամուր, հաստատուն»=գերմ. fest «ամուր», հին սաքս. անգլ. fast, հին խոտ. fastz և այլն, որոնց նախկին ձևն է *fastu: Այդ արմատը գտնվում է հայերենում և գերմանական լեզուներում: Հայոց «հաստ»-ից է հաստատ ածանցյալ բառը:

157. Հարսն (հարսին, հարսունք) «հարս» նույնարմատ է հարց («ի» հոլ.) բառին, որոնք հնդևր. *pṛk- «հարցնել» արմատից են: Համմ. սանս. praçna- «հարցում, ծանոթություն հակառակություն», prč'čháti «հարցնում է», pṛčchā- «հարցում», ավեստ. frašna «հարցում», pərəsaiti «հարցնում է»=պարս. pursad, լատ. precor, proco, posco (<*porc-sco) «ուզել, աղաչել, խնդրել, պահանջել», գոթ. fraihnan «հարցնել» հին վ. գերմ. forsca «հարց,

նգիրթ, forscôn «հարցնել», գերմ. fragen, սլավ. prositi և այլն: Հայոց հարսն=հնդեվ *pṝkēn, հարց<հնդեվ. pṛk'-sk'- ածական ձևից, արմատական k'-ի անկումով, իսկ prek'- «խնդրել, հարցնել» մասնավորապես առանում է «ամուսնութիւն խնդրել» իմաստ (լատ. procus «աղջիկ հարցնող», լիտ. peršù, pìršti «հետը ամուսնանալու համար աղջիկ փնտրել» և այլն):

158. Հացի (հոգն. սեռ. հացեաց) «հացենի ծառը»=հբգ. asc, հին. ascr, լիտ. ūsis, գերմ. Esche, ռուս. ясень:

159. Հաւ (սուտ հոլ.) «թռչուն, հավ, աքաղաղ»=լատ. avis «թռչուն»:

160. Հաւ «պապ, նախնիք»=լատ. avus «պապ, նախնիք», avun- culus «քեռի», գոտ. avô «տատ», լիտ. avýnas «քեռի», պրուս. avis «քեռի», սլավ. ujĭ «քեռի»:

161. Հեղում «ջուր եմ թափում», հեղեղ (<հեղ-հեղ), ող-ողեմ «հեղեղում եմ, ջրով մաքրում եմ», հեղուկ, գեղում, գեղանիմ «թափվելու չափ լցվել»=լիտ. pilù, pìlti «թափել, լցնել», piltuwas «ջրի գուլպ», լատ. pilu, pilĕt «կաթկթել, ծորել շատ բարակ վազել», pile, pilens «կաթիլ», pali, pal'i «գետի գեղում», ռուս. водо-поль, поло-водье «գետի հորդում», по́лая «եզերքը նրա դուրս հորդած ջուր» (Arm. Gr., 466 Արմ. բ., IV, 242):

162. Հինում «հյուսում եմ», կա նաև հանում հին ձևը և մանավանդ հիմիս թե հին և թե ալժմյան (ժողովրդական) ձևը, որի, հնն- ‖ հին- արմատի հետ ազգակից են լիտ. pinù, pinti «հյուսել», լատ. pinu, pĭt «հյուսել», հին սլավ. pęti (pīnǫ) «լարել», pąto «կապոց», չեխ. pnouti «լարել», ռուս. за-понъ «գոգնոց», գոթ. spinnan «մանել, հյուսել», գերմ. spinnen, spannen և այլն: Առաքելեանը Müller-ը (Armeniaca, VI, էջ 4), Հր. Աճառյանը վերցնում է հայոց երեք արմատաձև հիմ, նկատի ունենալով բարբառային հէնք ձևը, և հիմ, հան ձևերը (Արմ. բ., IV, 292):

163. Հետ «անդով կամ ժամանակով հետս», *per- նախարմատով մտած է՝ սանս. pára- հետս, ի բացակ. յայնկոյս, յառաջ ժամանակավ, parás «հետս, հետացյալ», ասկսս. parō, հոմն. πέρᾱ «հետս (ըստ տեղի, ժամանակի, չափի), πέρᾱν «գետի այն կողմը», πέραιος «այն կողմը գտնվածը», գոտ. fairra «հետս», հբգ. fërro= գերմ. fern «հետս» և այլն:

164. Հետ (սուտ հոլ.) «տարբ հետք, գետս «հետևիլ», հետըգհետ «քայլ առ քայլ», հետևակ, հետի «տարով», նոյնհետայնէ «նոյն ժամին, իսկույն, որովհետև, հետամուտ, հետազօտել=սանս.

padá- քայլ, հետք, կնցած տեղը, ոտք», patti- «հետևակազնաց», ավեստ. paδəm «ոտքի հետք», պարս. pai «ոտքի հետք», բնլուճ. pad «ոտքի հետք», padā հետևիլ, հետը. վերջը, օսս. fād «հետք», հուն. πεζός «հոտս, հետի, հետևակ», լծոր. բնտ. πεδὰ հետևից, զրկնի, հետը, միասին, լատ. peda «ամորթու ոտքի հետք», pedes «հետևակ», լիտ. pedà «ոտնաչափ, ոտքի հետք», լատ. péz «հետս, հետևելը», pêda «հետք և այլն: Հայոց het=հնդեվ. *pedo- «ոտքի հետք», հայոց յետ «հետևից, դինեի խմաստով=լծոր. բնտ. πεδὰ և այլն, իսկ nu-ti (nu-p), որ ուղղականի ձևն է նաև արմատի (*pod-s) տեղ առանձին:

165. Հիիւն (-նան հոլ.) «ծանկելու գործիք, մախաթ, բիզ=հուն. πεῖρα «ծակել», πειρήτη «ծակելու գործիք, ճարմանդ, գնդասեղ և համաններքը», πειρόω «ծակել», սլավ. na-perją, na-periti, «ծակելը: Հնդեվ. արմատն է *per-:

166. Հիրու «անցյալ տարին=առաս. paruť, հուն. πέρυσι, դոր. πέρυτι, մրգ. vĕrt. հիոլ. inn uraid «անցյալ տարին, նոր պարս. pār «անցյալ տարին, օսս. farā, faron «անցյալ տարին, վախ pard «անցյալ տարին: Հայոց hիրու=հնդեվ. *peruti:

167. Հին («ո» հոլ.) «հին, վաղեմի, հնացած ժամանակ=առաս. sána- «հին» sanaká «հինավուրց, վաղեմի», ավեստ. hanō «հին, ծեր», hana «ծեր, կին», պշտ. hān, հուն. ἕνος «հին», լատ. sen-ex, հայց. senem «ծեր», գոթ. sin-eigs «երէց», sinista «երիցագույնը», լիտ. sēnas «հին», հին իռլ. sen «հին», կիմր. կորն. hēn, բրետ. hen:

168. Հինգ (չհոլովվող, հետագայում՝ հնդից) «հինգ», հնգատասան «տասնհինգ». հինգերորդ=առաս. pánca, ավեստ. panča, նոր պարս. panǰ, հուն. πέντε, լատ. quinque. գոթ. fimf, լիտ. penki, սլավ. pętĭ, հին իռլ. cóic, կիմր. pimp. ալբ. pesε «հինգ»: Հայոց հինգ=հնդեվ. *penk"e:

169. Հովիւ (ի-ա հոլ.) «հովիվ, ոչխար արածացնող=հնդեվ. *ovi-pā «ոչխար արածացնող»: Համմ. առաս. avi, հուն. οἰς, լատ. avis, սլավ. ovĭca „овца" և լատ. pāsco, սլավ. pasą, pasti, «արածել», հուն. πῶϋ «հօտ» և այլն: Ամանակրիտում կար avipālá- «ոչխարի հովիվ» և gōpá կամ gōpālá- «կովի հովիվ», ար հնդկերեն. pā- «պաշտպանել, պահել»: Fr. Müller-ի և S. Bugge-ի այս առաջարանաբերյունը առարկվում է Հյուբշմանի կողմից. ի նկատի ունենալով, որ այդ բառի երկու բաղկացուցիչ մասերից (ovi «ոչխար» և pā- «պահել») ոչ մի հետք չկա հայերենում (Arm.

Gr., 468)։ Հր. Ամառյանը մատնանշում է, սակայն, հետևյալ հինդ-Եվրոպական բառերի առկայությունը բարդությունների մեջ։ Ինչպես՝ ճուռն (=կրակ) ճնց» ածանցյալ բառի մեջ, *տի (=կաղ) բառը սամխի, կալոտի և այլն բառերի մեջ, *տի (=մեծ) տիկին, տէր, տիեզերք բառերում, *անդ (=շեմք) դր-անդ բառի մեջ և այլն (Աբմ. բառ., IV, 378—379)։

170. Հոտ (ո» հոլ.) ճոտ, запах», հոտ-ոտ-ել (կրկնավոր), հոտիլ զգարշահոտիլ»=հուն. ὀδμή, ὀδούή ճոտ, բույր, անուշահոտութիւնն, ծՀՀ ճոտ է տալիս», εὐ-ώδης ճանուշահոտ», լատ. oleo ճբուրում եմ», odor ճոտ բույր», լիտ. ůʼdžiu, ůʼšti ճոտոտել»։ Հայոց hoto- թեևս=հնդկ. *odos- (արմատն է *od- բուրել, հոտ արձակել)։

171. Հում ճչնփած, անեփ»=սանս. āmá-. հուն. ὠμός, հին իռլ. om նույն իմաստներով։ Հումիլ, հոտ, հում բառերում սկզբի ճհ»-ն հայերենում է զարգացել։

172. Հուն ճգետի միջով անցնելու մի ծանծաղ տեղ, бродъ»=սանս. pánthās (անո. pathás) ճճամբա», ավեստ. pantå, panta (անո. paθō) ճճամբա», հին պարս. paθim (հայց.) ճճամբա», օսս. fändag, fändäg ճճանապարհ, փողոց», հուն. πάτος ճշավիղ», լատ. pons (անո. pont-is) ճկամուրջ», սլավ. pǫti ճճանապարհ путь», պրուս. pintis ճճանապարհ»։ Իմաստի զարգացման առնահետից հմմտ. ավեստ. pərətu- ճկամուրջ» և pəšu- ճհուն», հուն. πόρος ճհուն, ճանապարհ, շավիղ» և այլն հին per- ճանցնել» արմատից։

173. Հուր (ո» հոլ. գործ. հ. նաև հուրբ) ճկրակ»=հուն. πῦρ (անո. πυρός), ումբր. pir ճկրակ», գերմ. Feuer, հբգ. fiur<ավելի հին fūir։ Այժմ պիտի ավելացնել նաև խեթ. paḫḫur (անո. paḫḫwenas, տրակ. paḫḫweni կամ paḫḫuni)։ Հնդեվրոպացիների ազգակցության հարց է դնում (թեպետ հարցական նշանով) այս հուր և հնոց ճվառարան» բառ հուն—արմատի միջև, քանի որ կա նաև այդ ձևը, ինչպես՝ գոթ. fon (անո. funins), հին իռլ. fune ճկրակ», պրուս. panno ճկրակ», որոնց վրա պիտի ավելացնել և խեթերեն pahwen- ‖ pahun- թեք հնդեվրոպերի ճո» վերջավորությամբ ձևը։ Այս ալոևրնացիան r ‖ n վերջածանցների մեջ կա շատ ուժեղ խեթերեն լեզվում և հայերենում (փոքր ‖ փոքուն—, մանր ‖ մանուն—, բարձր ‖ բարձուն— և այլն)։

174. Ցաղկ (ի-ա հոլ.) ճոստ, ճիպոտ, գավազան, ծեծ», ճցցված (մազեր)», ձաղկել ճծեծել»=լիտ. žalgà ճձող», լատ. žalga ճբարակ ու երկար ձող», գոթ. galga ճկախաղան, խաչ», հբգ. gal-

go *վախճանդան, խաչ, հորից ջուր քաշելու անիվ*: Fr. Müller, WZKM, 5, 68, Bugge, Btrg. p. 18: *Հայոց* ձաղկ<*հնդեվ.* *g'halg-, *գոթ.* galga<*հնդեվ.* *g'halgh-?:

175. Ձեռն *(ձեռին, ձեռամբ), հոգ.* ձեռք *(ձեռաց, ձեռօք), բարդութիւններում՝* ձեռնա- *և* ձեռա-. *կա նաև* ձեր-ր *(հին գործիական), ինչպես՝* ձերբակալ: *Համմտ. հուն.* χείρ *(հոգն. տրակ.* χερσι*)* *«ձեռք»* χέρ-νιψ *«ձեռքի համար լուացքաջուր», հուն. էոլ.* χήρ, *ալբ.* dorz *(=*g'hērā), «ձեռք»: *Հայոց* ձեռ-ր *կարող է=հնդեվ.* *g'hérse (Arm. Gr., 482): *Ուրիշները ավելացնելով լատ.* hīr *«ձեռքի ափ», սանս.* hárati *«առնում է, բռնում է»,* haraṇa *«բռնություն», թոխար.* tsar *«ձեռք» և այլն վերաբերում են* g'her- *և* g'hers- *արմատները «բռնել» իմաստով (Արմ. բ., IV, 486):*

176. Ձեռն *(«ոտ» հոլ.) «բրդոտ պոչ», շան, աղվեսի, առյուծի=ավես.* zaδah- *«ետույք, արյան», հուն.* χάζανος *«ետույք, ետոտ տեղից» (կցվում է հուն.* χέζω *«բնական պետքը հոգալ», սանս.* had, hadati *նույն իմաստով, ալբ.* ðjés *«աղբել»): Հնդեվ.* *g'hédos-*-ից:*

177. Ձի *(«ոտ» հոլ.)=սանս.* háya *«նժույգ», որ ծագում է հնդեվ.* g'heyos *կամ* g'həyos *ձևից: [Բայց հայ հին քնարականները ասելիս են որպես համանիշ և դիի ձևը, որը կարող է անցական (փոքրասիական) նախաձև լինել]:*

178. Ձիր *(«ի» հոլ.) «պարզև, նվեր, ընծա», որից ձրի «даром»=սանս.* χάρις *(տես.* χάριτος *«շնորհք, հաճույք, ուրախություն, բարեհաճություն, հարգանք, երախտագիտություն, վարձատրություն», լատ.* grātus *«ախորժելի»,* gratia *«շնորհք»,* gratis *«ձրի», գերմ.* gern *«հաճույքով, ախորժանքո և այլն. Նախաձևն է* *g'her-:*

179. Ձիւն *(ձեան), ձմեռն (ձմերան) «ձմեռ», ձմերային (նեղոպ.) ձմերայնոյ (տես.) ձմերայնով (գործ.), ձմերեմ «ձմեռում եմ»=սանս.* héman *«ձմռանը»,* hēmantá- *«ձմեռ»* himá-, *«ցուրտ, ձմեռ, ձյուն», ալբան. (ուղղ.)* zyâ *(հայց.* zyąm, *տես.* zimō), zima- *«ցրտություն, ձմեռ», zayana- «ձմեռ», հուն.* χιών *«ձյուն», χειμών «ձմեռ, սառնամանիք, անձրև, բուք փոթորիկ», լատ.* hiems *«փոթորիկ, անձրև, ձյուն», սլավ.* zime, *լիտ.* žēmà, *ալբ.* dimən *(<*deimen-) «ձմեռ»: Հայոց* ձիւն=*χιών, որը առաջիլ է հնդեվ.* *g'hiyōm, իսկ* ձմեռն*<*ձիմ-նեն նման ամ-առն և հուն.* χειμερινός *«ձմեռային»:*

180. Ձուկն *(-ան, -ունք) «ձուկ»=հուն.* ἰχθύς, *լիտ.* žuvis, *լատ.* zuvs, zuve, *հին պրուս.* suckis *(հայց. եզ.)* suckans *(հայց.*

հոդն.), որոնց հնդեվ. նախաձևը կլինի g'hyu. (ըստ. Yohansson-ի) կամ g'hzu- (ըստ Bartholomae-ի):

181. Մալեմ «մանրում եմ, տրորում եմ, մալիալ «կոտրած» լատ. molo «աղում եմ», գոթ. mala «աղում եմ», հուն. μύλη «ջրաղաց», սլավ. melja „мелю", լիտ. malù, հին իռլ. melim «աղում եմ» և այլն: (Հնաոչրգրական է ձայնավորի անասկնախից խնթ. mallanzi «աղում են»):

182. Մահ (ուս հոլ.) հին ձևով՝ մարհ=սանս. mrtyù-ավեստ. mərəθyu, «մահ», հին պարսկ. uvāmršiyu «ինքնասպանը», օսս. mālät «մահ»: Համմտ. գոթ. maùrðr «սպանություն»: (կարող է և փոխառություն լինել հին իրանևրևնից *marθra ձևից, որը կատ մարհ>մահ):

183. Մաղթել «աղոթել, մաղթել, պաղատանք», որը ենթադրում է *mḷth- ձևը, բայց ունենք *mḷdh-ի դեմս լիտ. maldýti «շարունակ աղաչել, թախանձել», maldà «աղոթք, աղաչանք», ռուս. молю, молить, սլավ. moljo, moliti, լեհ. modła «աղոթք», չեխ. modla «կուռք, սանամարտ»: (Սրանց պիտի ավելացնել խնթ. malt- կամ mald- «խնդրել, աղաչել», malti—maldi «աղաչում է», անորոշ անունը malduwar):

184. Մայր (սեռ. մաւր) «մայր=սանս. mātā (սեռ. mātur), ավեստ. māta, հին պարսկ. mādar. հուն. μήτηρ, դորիական μάτηρ, լատ. māter, հրդ. muoter, սլավ. mati և այլն: Հայոց մայր=հնդեվ. *mātér, մաւր (սեռ. հ.)=*mātrós, մաւրու «խորթ մայր»=*mātruyā=հուն. μητρυιά «խորթ մայր»:

185. Մանր (-ս հոլ. հոգն. մանրունք) «փոքրիկ, մանրա,=իռլ. menb «փոքրա, լիտ. menkas «սակավ, չնչին», սանս. manāk «մի քիչ, սակավ, մեկին»: Հայոց մանու=հնդեվ. *mənu-, նույն արմատից է հայոց մանուկ (-կան) «աղա. մանչ, կարիճ, զինվոր»:

186. Մարդ (սեռ հոլ. հոգն. մարդիկ, -կան) «մարդ»=սանս. márta- «մահկանացու մարդ», mártya (mártia-), ավեստ. marəta- «մարդ», պահլ. mart. հին պարսկ. mard, հուն. βροτός «մեռնող, մահկանացու, մարդ» (<*mrotos<*morto-) -բոլորը հնդեվ. *mṛto- «մահկանացու»:

187. Մարմին (սեռ հոլ.) «մարմին, մեռ» «հոգևորը, մարմնի բաց անդը, որը մահասվանդ ենթակա է մահացու հարվածի, մարդա ֆիզիկ անդը»: Ուրիշ հնդեվ. լեզուներում չկա այս բառը: Իմ կարծիքով հայոց բառը քիչ ձևաբանորեն վերցված է այն հնդկական լեզուներից, որոնք եղել են Միտաննի—Խուռի (Նոռ)

երկրներում, իսկ հետո տարածվել է մերձավոր հին արևելքում։

188. Մարտ *(հին հոլ.)*, մարտնչիմ *(տարբ. մարտ-նայ)* *կըռվեցի, պատերազմեցիս*, որի արմատը մարտ- հնդեվր. *mṛd նախաձևից է և չի համընկնում հուն. μάρ-μαι կռվում եմ» բային* (Arm. Gr. 473). *բայց կան* mṛd. (mṛdh-) *արմատի ձևերն ևս* d.dh.t *աճականներով, ինչպես սանս.* mardati *ջարդում է, փշրում է»*, mṛdha *ամարտ»*, գնչու mardan *«կռիվ»*, mardak *«կռվարար»*, *ավեստ.* marəd- *«ոչնչացնել», լատ.* Mars (Mart-is) *«Մարս կռվի աստվածը», հին իռլ.* marðа *հարվածել (տես Արմ. բառ., IV, էջ 933)։*

189. Մեծ *(էր-աց հոլ.)* *«մեծ»=սանս.* mahān, mehānt., máhi *«մեծ», ավեստ.* maz-, mazi, maza, mazant *«մեծ» հուն.* μέγας' μέ¡α, μεγάλη *«մեծ», խեթ.* mekki *«շատ», լատ.* magnus *«մեծ», գոթ.* mikils *և այլն։ Հայոց մեծ =հնդեվր.* *még'ə ‖ *még'a-։

190. Մեղ *(ի-ա)* *«մեղք, հանցանք», մեղանչեմ (տարբ. մեղայ), մեղանչական ելույթ=լիտ.* mēlas *«ամոթխտությունն», հուն.* μέλας *«գույր, անօգուտ, թշվառ», իռլ.* mell *«մեղք, հանցանք, սխալ»*, mellaim *«մեղադրում եմ», թերևս լատ.* malus *«չար, վատ»։*

191. Մեղկ *«փափուկ, փոփոխ, մեղմ, թուլլ, թուլամորթ»=հուն.* μαλακός *«փոփոխ, մեղմ»*, μαλθακός *«փոփոխ, քնքուշ, մեղկ», հին իռլ.* meldach *«կակուղ, փոփկիկ», գերմ.* mild, *գոթ.* mildiða *«քաղցրություն, հեզություն», լատ.* mollis (<*molduis) *«կակուղ, թուլլ», սլավ.* mladŭ „молодой", *սանս.* mrdú- *«կակուղ, հեզ, թուլլ»։ (Այժմ պիտի ավելացնել նաև խեթ.* miliskus *«թուլլ, մեղկ», E. Sturtewant, Suppl. to a Hitt Gl. 1939, էջ 31, „weak" «լաստ Հրոզնու, Վեյդների և Գյուտերբոքի)։*

192. Մեղր *(առն հոլ. սնս. մեղու)*, մեղու *(էր-աց հոլ.)* *«Մեղու», пчела»=հուն.* μέλι *(սնս.* μέλιτος), μέλισσα *«մեղու», լատ.* mel *(սնս.* mellis), *գոթ.* miliþ, *հին իռլ.* mil *«մեղր»։*

193. Մեռանիմ *(տարբ. մեռայ)* *«մեռնում եմ», անմահ=սանս.* mriyátē, *ավեստ.* miryeite, *նոր պարսկ.* mīrad *«մեռնում է», լատ.* morior *«մեռնում եմ», սլավ.* mrěti „умереть", *լիտ.* mirti: *(Ավելացնել նաև խեթ.* mérr-, merta *«մեռավ»*, merdu *«թող մեռնի»*, merranda *«մահացած»*, E. Sturt., Suppl. to Hitt. Gl. 102)։

194. Մերկ *«մոտ, մոտիկ, մերձավոր, մերձենամ (<«մերձիս-ից)=հուն.* μέχρι *«մինչև», ց նախնական* *meg'hri *ձևից (ըստ* Meillet-*ի,* Bugge-*ի,* Pedersen-*ի, և* Petersson-*ի), թեպետ Հյուբշ-*

մանը կասկածելի է համարում դրանց բովանդակության տարբերության պատճառով:

195. Մե-ք, մե-ր, մե-զ և այլն պատկանում են իրենց me-ով եզակի առաջին դեմքի դերանվան թեք (ոչ ուղիղ) ձևին, ինչպես են ասենս. և ավեստ. ma- (թաց. má-d, ma-t, տրակ. ma-hyam, ma-ibuā և այլն), հուն. μέ, լատ. me, գոթ. mi-k և այլն: Համմտ. նաև լիտ. mēs, սլավ. my „мы": Այդպես է դուք եզակի դու ձևից հոգնակերտ ք մասնիկի ավելացմամբ: (Իմ կարծիքով թևերևս կոնտամինացիա է եղել նաև ուրարտական -me «ինձ» դերանվանական կցության ազդեցության, օրինակ, խալդ. ինձ (Haldis-me) թագավորության ասից: Այդպես է նաև bu դերանունը իր ես-ով, նկատի ունենալով ուրարտ. iese և խետ. isa «նա» դերանունը):

196. Մեզ (ի-ա հոլ. գործ. նաև միջով) «միշտ, մատախուղ» =ասենս. mēghá-«ամպ, ավեստ. maeγa-, նոր պարս. mēγ «ամպ», օս. məγä, mīγ «միշտ, ամպ», հուն. ὀμίχλη=սլավ. mĭgla=լիտ. miglá «միշտ, մատախուղ»:

197. Մեզ—«շնո, ջրվեժ», միջամ=ասենս. mēha-«մեզ» mēhati «միջում է», ավեստ. maeza-, maesman- «մեզ», maezaiti= նոր պարս. mēzad «միջում է», օս. mēzun, mīzin «միջել» հուն. ὀμίχέω «միջում եմ», ὄμιχμα «մեզ», լատ. mingo, mējo, լիտ. mēžù, հիսլ. miga և այլն: Հայոց մեզ և մեզ Հյուրշմանը համարում է բուն հայկական, թեպետ դրանք կարող են գրվել և որպես իրանական փոխառություններ (Arm. Gr., 474):

198. Մեջ (ռռ հոլ.) «մեջքը=ասենս. madhya-«միջին» mádhyan «մեջքը», ավեստ. maiδye «մեջքը», maiδuąna=նոր պարսկ. miyān «մեջքը», հուն. μέσσος, μεσος «միջև», το μέσον «մեջքը», լատ. medius «միջին, միջև», medium «մեջքը», գոթ. midjis «միջև», սլավ. mežda «մեջքը», meždu «միջև», գալլ. medio-, հիսլ. medón «մեջքը»: Հայոց մեջ <*medyo- =հնդեվ. *médhyos:

199. Մի արգելական հրամայականի մասնիկը=ասենս., ավեստ., հին պարս. mā, հուն. μή: Հնդեվ. *mē:

200. Մի (ռռ հոլ. սեռ. միոջ, տրակ. միում) «մեկ»=հուն. εἷς, μία, ἕν, որոնք առացվել են *sem-s, *smia, *sem: Համեմատությամբ ընդունելի է, նկատի հայոց mi «մեկ» սկզբում իրական սեռի լինելը (=smia, հուն. μία) և ապագայում հետո մյուս սեռերի վրա և կամ նախկին *smio-ից գոյանալը (sem-ավելացրած io-վերջածանցը): Մի բառից է միայն, միմեանք, միտս:

201. Միս (առ հոլ.) *միսս=ասես.* mąsá-, *գոթ.* mimz, *սլավ.* męso, *պրուս.* mensā, *լիտ.* miš *միս*:

202. Միտ (*էի-աց հոլ.*) հաճախ հոգնակի՝ միտք (*մտաց*) *միտք*, мысль, думы*=հուն. μῆδος, հոգն. μήδεα *միտածմունք, միտք, պլաններ*, μήδομαι *հնարամտում եմ, հնարում եմ*, μέδομαι *խորհրդածում եմ, հոգ եմ առնում*, լատ. meditari *խորհել, կշռադատել*, modus *չափ, քանակ, կերպ, եղանակ*, գոթ. mitan *չափել*, miton *միտածել, դատել*, midiur *կարծում եմ*, անցյալ կատ. ro-midar *դատեցի, դատապարտեցի*:

203. Մնամ (*ապր. ներգի.*) *մնում եմ, սպասում եմ*=հուն. μένω *մնալ, կանգնել, սպասել*, μί-μνω *մնալ*, լատ. maneo *մնում եմ, սպասում եմ*, հին պարս. a-man-aya *սպասում էր* (*ինձ*), ավեստ. upa-maṇ-ayen *սպիտի սպասենք, նոր պարսկ.* mānam *մնում եմ* եմ. Արմատն է *men->մին-ալ>մնալ*:

204. Մոգի *հոգիք*=հուն. μοσχίον, որը նվազականն է μόσχος *տանաուտնի ձագ, երինջ* կամ *հորթ, հորթուկ* բառի: Հնդեվ. *mozg'ho- (բառ Bortholomae-ի):

205. Մռայնամ (*ապր. մռայցայ*) *մռռոանում եմ*=ասես. mrš(mršyatē) *մռռոանալ, անհիշաչար լինել, համբերությամբ տանել*, լիտ. miršzti *մռռոանալ*, Bugge, Btrgp. p. 23: Հնդեվ. *mors- արմատից:

206. Մուխ (*առ հոլ.*) *ծուխ*=հին իռլ. múch *ծուխ, մուգ*, smouch *ծուխ, շոգի, հուն.* σμῦχω *ջրել և անջրից կրակով նիխել կամ սրբել* (բառ Bugge-ի և Meillet-ի): Հետաքրքրական կասկածելի է համարում և հարցականով դնում է—հին իռլ. *mūkā-ից, միջ. smouch <*smúg-ից, հուն. σμῦχω<*smúgh-ից և հայց mux< *(s)múkho-ից ? Հր. Աճառյանը բնիկով մյուս օրինակները կնոտական և գերմանական լեզուներից, ավելացնում է նաև լիտ. smáug-ti *խեղդել* և թերևս ռուս. смуглый *թխպուխ, սևորակ*= ուկր. smuhlyi (*Աբմ. բ.*, IV, էջ 1140): Բայց լիտվական և հունական ձևերը իմաստով հետ են, իսկ ռուսականի և ուկրաինականի դիմաց կա ավելի լավ համապատասխանություն արդի հայերենի և բարբառների (օրինակ, արարատյան) մուգ *թխպագույն, смуглый» բառի մեջ: Բացի այդ, հնարավորություն կա անկախ կերպով առանալու լիքսիկական արմատանության ծուխ ձևից նոր մուխ բառը, ինչպես ունենք մնաս ինքնուրույն բառը հասս ձևից (*համմ.* նաև հառաջմնաս), ուսար *աղջա, բառը դուսար-ից (համմ.՝ ծնաս ուսանիս և դասերս բազումս), մշրել բայը փշրել ձևից, մուճ<մուռ>լուռ բառից նկն:

207. Մուկն (-ան հոլ.) «մուկ, մկան»=սանս. mūš մուկն, mūša., mūšaka, músika «մեծ մուկ» (крыса) «մուկ», նոր պարս. mūš «մուկ», օսս. mjst', հնդն. *mūs «մուկ, մկան», լատ. muš «մուկ» musculus «մկնիկ, մկան», հբգ. մբգ. mūs „maus" (=մուկ, մկան), սլավ. myši „мышь", myšica „мышца" և այլն:

208. Մուճ («ո» հոլ.) «մանր մժող խայթոդ»=հնդն. *mūsa «մանգաս», լատ. musca, լիտ. musė, պրուս. muso «մանգաս», սլավ. mucha „муха", սանս. мшица, мошка «մանգիկ, մուն», սլավ. mūšica «մոծակ» և այլն: Հնդևր. *musno-: [Բարբառներում մեծ մասամբ մուն=մանր ոջիլ և վրացերենում muni «քոր, բորոտություն, քոս», տես Աբմ. բ., IV, 1158—60]:

209. Մրջիմն (-ջման) կամ մրջիւն (-ջեան) «մրջյուն»=հնդն. մ़ुर्मुरु, मुर्मुर, լատ. formīca, սլավ. mravīji (<*morvīji) „муравей", հին. իսլ. maurr(<*marva-), ավեստ. maoiri (<*marvī կամ *margvī), նոր պարս. mōr, սանս. vamrá-, vamrī- «մրջյուն», valmīka- «մրջյունների կույտ» և այլն: Հնդևր. հիմնական ձևը *morvī? Հայոց բառի բունն է մուրջ-:

210. Մօրուք («ո-ա» հոլ.) սովորաբար հոգնակի մօրուեղ, մօրուանք... գրվում է նաև մորս, մորուք, մաւրուք (մաւրօք), բարբառներում՝ միրուք: Համմ. սանս. çmáçru-(*smaçru-) «մորուք», լիտ. smakrà, լատ. smakrs «ծնոտ, քիմք», հին իսլ. smech «ծնոտ», ալբ. mjekre «ծնոտ, կզակ, մորուք»: Հայոց մորուք ևթե ընդունվի նախնական ձևը, որ «ո» ձայնավորն է և ոչ թե «ա»=o, ապա բուս Bartholomae-ի moru (մորս-) բունը առաջացած պիտի լինի *smosru- ձևից համապատասխան հնդևրոպական smokru- կամ smokru- (Arm. Gr., 477), թեպետ բուս Pedersen-ի կարող է առացվիլ *smakru- ձևից սկզբի s-ի անկումով և k-ի վերածումով «ւ» (w) ձայնորդի, ընդունելով ուրևմն հայկական նախնական ձևը մաւրու- (Աբմ. բառ., IV, 1214—1216):

211. Ցառնիմ (առ. յորևայ, հրամ. արի, հոգ. արիր) «ելնել կենալ»=հնդն. ὄρνυμαι «ելնել են կենամ», առ. ṓrto «ելնել կացավ», սանս. ṛṇóti, առ. úd-ārta «ելնել կացավ», լատ. orior «ելնել եմ կենամ»:

212. Ցաւրայ (անս. յորայի), խորթ հայր =հնդն. πάτρως «հորեղբայր», լատ. patruus, հբգ. fatureo, սանս. pitroya «հորեղբայր»: Հայոց հաւրու (հօրու) հնուագս նոր կազմություն է ճայր բառից, ինչպես ունենք մաւրու (մօրու)՝ մայր բառից հին ձևը:

213. Ցիսուն «հիսուն»=սանս. pančāçát-, ավեստ. pančāsat-, հնդն. πεντήκοντα, լատ. quinquāginta, հնդևր. *penkʷēk'omt-=հայ.

*հինգխտուն կամ *լինգխտուն=*յնգտուն, վերականգնած (հինդ բառի ազդեցությամբ) ի ձայնավորով սառնում ենք՝ լինգտուն>*լինտուն>լիտուն:

214. Ն հոգը=սանս. ana-«այս», ավես. (գոթ.) ana, լիտ. anás, āns «այն», սլավ. onŭ «այն, նա»?

215. Նեարդ («իմ» հոլ., սանս. հոգն. նևրդից) «բարակ ջիլ, ջղեր, նևրա»=սանս. snâvan-, snāván- «հոդ, ջիլ, լարս», ավես. snāvarə «ջիլ», հուն. νευρά, νεῦρον <sneuro «նևարդ, չվան, կրունկ», νευρή «աղեղի լարս», լատ. nervus «նևարդ», հնդեվ. ձևն է *snēur̥t-, իսկ ըստ Bartholomae-ի հայոց նեարդ <հնդեվ. ձևն է *snēyr̥t (տես Arm. Gr. 478 և Ազգ. բ., V, 78):

216. Նետ («իմ» հոլ.) «նետ, стрела»=սանս. nadá- «եղեգ», պահլ. nad, nal, պիլտնի nad, նոր պարս. nal «եղեգ»:

217. Նիստ («ոտ» հոլ.) «նստատեղ, գետնափոր ձև, կայան, աշխատանիստ քաղաք», նստիլ «նստել, բազմել»=սանս. nīdá «զբաղար, կայան, թռչունի բույնը», լատ. nīdus, գերմ. Nest «թռչունի բույն, ավեստ. nišhiδaiti «նստում է», հին պարս. niy-a -sādayam «նստուցանեմ», պահլ. նոր պարսկ. nišastan «նստել», սանս. niśīdati «նստում է», սլավ. гнездо այն: Հայոց նիստ բառը առացվել է ni «դեպի ցած» +sed-«նստել» հնդեվ. ձևերից: Վերջին արմատն հետ համա. սանս. sad-(sīdati) «նստել», súdaḥ «կայան, տեղ», ավեստ. և հին պարսկ. had «նստել», հուն. ἕζομαι «նստում եմ», ἕδος «նստատեղ, կայարան», լատ. sedeo, հիրա. saidim, գերմ. sitzen, հալավ. sĕděti „сидеть“, saditi „посадить“, садъ, съдло և այլն: Նիստ բառի հնդեվ. նախաձևն է *nizdo- (տես Arm. Gr, 478, Ազգ. բ., V, 126—127):

218. Նոր («ոտ» հոլ.) «նորթ», новый=սանս. náva-, návya, ավեստ. nava-, հուն. νέος, νεαρός, լատ. novus, գոթ. niujis, լիտ. naūjas, սլավ. novŭ, հիռլ. nūe: Հայոց նոր բառը առացվել է ըստ Bortholomae-ի հնդեվ. *novros ձևից:

219. Նուռ («ոտ» հոլ.) «հարսքը—փեսի, ծնողների և հարազատների համար»=սանս. snuṣā-, հուն. νυός, լատ. nurus, հրգ. snura, snur, անգլս-սաք. snoru, նորգ. schnur. սլավ. snūcha „сноха“: Հնդեվ. *snusós:

220. Շուն «(«նա» հոլ. սանս. շան) «շուն. собака»=սանս. çvā (սանս. çūnas), ավեստ. spa (սանս. sūnō), հուն. κύων (սանս. κυνός), լատ. canis, գոթ. hunds, լիտ. szů (սանս. szuns), հին իռլ. cú (սանս. con): Հնդեվ. k'vón. k'uón, սանս. k'unós:

Ըստ Հյուբշմանի թեպետ Ֆ հնչյունը շուն բառի մեջ հանդիպ

հնդեվ. k'v- որոշ դժվարություններ է հարուցում, այնուամենայնիվ այդ առուգադրանությունը ճիշտ է: Ուրիշները այդ եվրոպական բառերին ցանկանում են կապակցել հայոց սկուճդ «շուն, շնիկ» բառը, ինչպես որ մատնանշվում է հայոց սկեռուճ=առնս. çvaçrû-:

221.. Ո, ով (սեռ. ոյր, տր. ոմ) որ ոմն (ուրումն, ումեմն), ոք (ուրուք, ումեք) ուր „где, куда"=հնդեվ. հարց. դերանուն *k^wo և k^wu-=առնս. և ավեստ. ka և ku-, հուն. πο- (πόθεν «որտեղից?», πόθι, ποῦ «որտեղ, որևէ տեղ»), լատ. quo-, լիտ. kás «ով», kuř «դեպի ուր, որտեղ», սլավ. kŭ-to «ով» և այլն: Հետևանքն հնդեվ. k^w հաջորդ o և u ձայնավորներից առաջ ընկնում են:

222. Ոգնի (-նւոյ, -նեաց) «ոգնի, եж»=հուն. ἐχῖνος, հվր. igil, սլավ. ježi „еж", լիտ. ežỹs «ոգնի»:

223. Ոդր («ոտ հոլ.), ոդրամ „оплакиваю"=հուն. ὀλοφύρομαι «ողբում եմ», ὀλοφυδνός «ողբագին»: Հյուրշմանը դնում է հարցականով: (Հր. Աճառյանը նշում է պատահական նմանություն երբ. abl, առար. ebl, արամ. abl «ազալ, ողբալ» բայարմատի և հայոց alb- արմատի մեջ, Արմ. բ., V, 480—481, որ կարող է պատահական չլինել):

224. Ոդջ («ոտ հոլ.) «բոլոր, ամբողջ, առողջ», որը կազմված է «ջ» մասնիկի ավելացմամբ, ինչպես անուրջ, առնրջ, գաղջ, շուրջ, վնրջ և այլն և of- արմատով, որ կա կելտականն և գերմանականն լեզուներում=հ. իռլ. uile «բոլոր, ամբողջ, բոլորովին», կորն. holl «ամբողջ», գոթ. alla-(<*alna), գերմ. all, հրգ. al, անգլ. all, հոլլ. al «բոլոր, ամբողջ»: Տե՛ս Arm. Gr. 481 և Jndogerm. Forsch. 19, էջ 476:

225. Ոռ «առուլք, նառնլատեղ» (մարդու, անասունի), մանավանդ հոգնակիում՝ ոռք առարկանների համար («առակ, հառակ»)=հուն. ὄρρος «ողնաշարի ծայրը, անասնոց գաւակ», խեթ. arra-, հրգ. ars (<*orsos), գերմ. arsch, անգլ. arse, հիռլ. ars, հիռլ. err «պոչ, վնրջ, ծայր» (<*ersos):

226. Ոսկր («-ր հոլ.) «ոսկոր»=հուն. ὀστέον, առնս. ásthi, ավեստ. ast-, լատ. os, սլր. ašt «ոսկոր»: Հայոց ոսկր=*osthkr (քան Meillet-ի):

227. Ոստ («ոտ հոլ.) «ծառի ճյուղ»=ὄζος «ոստ, ճյուղ», գոթ. asts „Ast": Հնդեվ. *ozdo-s, իսկ անգլոս. ôst, մ. հյուս. գերմ. ôst «ոստոգ» տալիս են *ôzdo-s:

228. Ոտն (սեռ. ոտին, բաց. յոտանէ, գոթ. ոտամբ, հոգն. ոտք, հայց. ոտս, սեռ. ոտից, գոթ. ոտիւք) «ոտ, нога»=առնս.

pād (ուղղ. pát, սեռ. padás), ալեսաս. pāð-, pāða-, նոր պարսկ. pāi, հուն. πούς (սեռ. ποδός), լատ. pēs (սեռ. pedis), գոթ. fōtus „Fuss“:

229. Որր (<ոտ» հոլ.) «որր, сирота» =հուն. ὀρφανός «որրացած», ὀρφο-բազադրութիւններուն մէջ, լատ. orbus «որրացած»: Հնդեվր. *orbho-s: Վրաց oboli «որրք»:

230. Որթ (<ուռ» հոլ.) «հորթ» (կովի կամ եղնիկի) հնդեվր. *porthu- ձևից ի դեմս հուն. πῶρτις, πόρταξ «հորթ, երինջ, փոքր տղա կամ աղջիկ», սանս. pṛthuka- «մանուկ, տղա, անասունի ձագ»: (Փոխարկուած որթ (<ոտ» հոլ.) նշանակում է «մաղդի տունկ, մասրց». ինչպես արտաքոյն բարբառում երիջ նշանակում է «էգ հորթ», բայց և «մաղդի որթի մատ, որ առանձին անկվում է», կամ հուն. μόσχος «հորթ, անասունի ձագ», բայց նաև «ընձյուղ, ծիլ. շառավիղ»: Նոյն «հորթ» կամ «որթ» արմատին ցեղակից են գնում որդի (-ւոյ ‖ -ևս հոլ.) հնդեվր. *portiyo-ձևից, ուր rt հաւելուածում դառնում է օրինքով rd. արմատն է per, por «ծնել, ձագ բերել», ինչպես ունի լատ. pario, peperi «ծնել, երկնել, տղա բերել», որը կամ հուն. πόρτις, սանս. pṛthuka-, լատ. partus «գաւակ, ծնունդ, ձագ», հուն. πόρις «հորթուկ, ձագուկ» ևլն (տես Աբմ. բ., V, 570, 560):

231. Ործալ, ործկալ, ործկտալ «սիրտը խառնել, փսխել» =հուն. ἐρεύγᾶμαι «փսխել, գկռալ», լատ. ructo (id.), ērūgo «ծոծկալ, գկռտալ», սլաւ. rugają „рыгаю“, լիտ. raugmi, raugiù, rùgiu «սիրտը խառնել», անգլոսաք. rocettan «գկռտալ» և այլն: Ործ<որուծ-: Հնդեվր. *rug-:

232. Որձ-բառարունը «ձուանք, testiculum» իմաստով հանելուկ բառերում-միորձի=հուն. μόνορχις (Lev. 21, 20) «միաձուռ, որձի-ք «ձուանք», ամորձի-ք «երկձուանի», ամորձատ «կտրատած», որձատ „каплун“ որձի «չկտրած», որձիք «արուներըը», որձ «արու» (կենդանի, բուլա, չոր, անքեր), որձակ (բարբառներում) «աքաղաղ»=սլաւատ. jərəzi «ձուանք», հուն. ὄρχις «ձու, ամորձիք», այր. herðe (id.), լիտ. eržilas «բուռակ»: Հայոց որձ-= հնդեվր. *org'h-:

233. Ութ. (սեռ. հոգն. ութից) «ութ»=սանս. aṣṭáu, aṣṭā սլաւատ. ašta, հուն. ὀκτώ, լատ. octō, հին իռլ. ocht, գոթ. ahtau, լիտ. asztūnī, սլաւ. osmĭ „восемь“: Հնդեվր. *ok'tō:

234. Ուռայլ «գաւառակ», ուր -այլ ածանց է, ինչպես երկ-այլ, ամնաւոր, համ-այլ և այլն: Արմատը ուռ- ծագած է *oin- կամ oun-(ún-) ձևերից: Համմա, սանս. ūnā-, սլաւատ. ūna-«պակասաւորը»,

հուն. ἐν-π-ός, «պրիպատ», լատ. vanus «ունայն, թափուր», գոթ. van-s «պրիպատ» և այլն:

235. Ուšկ (-ան, ունկան) «ականջ»=սլհատ. uši «ներկու ականջներըդ», հուն. οὖς, լատ. auris, գոթ. ausō, լիտ. ausis սլավ. ucho (հրկակի՝ uši), հիտ. au, ó «ականջ»: Հայոց ուն-ին (նման՝ մու-ին, արմու-ին, ձու-ին) առացվիլ է usn-(kn): Հնդեվ. արմատն է՝ aus-, us- կամ ōus-, ōs-:

236. Ուս. («ոտ» հայ.) «ուս, плечо»=սանս. ásа-, հուն. ὦμος լատ. umerus (<*omesos), գոթ. ams, amsa (միայն հոգն. հայց. amsans) «ուսս», հնդեվ. *ōmso-:

237. Ուսաճիմ (ուս-ալ) «սովորում եմ» =սանս. ûčyati «սխորժում է, վարժվում էր», սլավ. vyknąti «վարժվիլ, սովորել» (при-выкнуть), икй «ուսում» (на-ука), učiti «սովորեցնել». լիտ. júnkti «սովորիլ, վարժվիլ», գոթ. bi-ūhts «վարժ, սովոր»: Հնդեվ. *euk-:

238. Ուսար (-սակր, -սակրաց) «արու գայլակ, մանչ», սովորաբար դուսար բառի հարադրութիւնքով ու ձևափոխման ազդեցութիւնքով, բայց ծագումով հիւրընկալին թիւում էր անորոշ (Arm. Gr., 484): Իսկ Strassburger Festschrift, 1901, էջ 69, առաջարկից բառիս նախաձևը ընդունել sukter «որդի», որի-ga ածանցավոր ձևը պահել է անգլոսաքսոնական suhterga «հղբորորդի»: Արմատը դրսում է seug-(sug-) կամ seuk- (suk-) «ծծել, կաթ ծծել» լատ. sugo, հիտ. sūgim, անգլոս. sucan, գերմ. saugen ևլն կամ ավելի հավանաբար հնդեվ. seu-, su- «ծնել» ի դեմս սանս. sávati «ծնում էր», sū- «ծնող», սլհատ. hav-, hunāmi «ծնում եմ», հիտ. suth «ծնունդ, պտուղ», մանավանդ՝ սանս. sūnu-, սլհատ. hunu-, գոթ. sunus, գերմ. Sohn, անգլ. son, սլավ. ռուս. сын, լիտ. sū́nùs, հուն. υἱός «որդի» (Արմ. բ., V, 684—687): Ուսար բառը քանի որ մնծ մասամբ հարադրութիւնքով է գործ ածվում դուսար բառի հետ և հայերենում (գրաբարում) առկա է բառային տարբերութիւնը, ինչպես ես ցույց եմ տվել, պետք է համարել դուստ հայկական առհծագործութիւնն:

239. Ուտիմ (առ. կերայ) «ուտում եմ»=սանս. ádmi, հուն. ἔδω, լատ. edo, գոթ. itan, սլավ. jami „ем", լիտ. ēmi, ēdmi, ēdu և այլն: Հայոց ut-<ōd- (ըստ Bartholomae-ի) հնդեվրոպական արմատն է ēd-:

240. Ձոր „сухой"=հուն. ξηρός, ξερός «չորս», լատ. seresco «չորանում եմ»: Առացվիլ են *k^{w}soro-s (>չոր), *k^{w}sēro-s (հուն. ձևերը): (Կցվում է նաև չիր բառը):

241. Չոր-բ (չորից) «չորս»=սանս. čatváras, ավեստ. čaδwārō, հունգ. դոր. τέτορες, հոմեր. τεσσαρες, լատ. quattuar, գոթ. fidvōr, լիտ. keturi, սլավ. četyre, հին իռլ. cether և այլն: Հնդեվր. *k^{w}etvores:

242. Չու (<ի-ա» հոլ.) «երթի, ուղևորություն», որից չունեմ (չուեցի)=սանս. čyuti «երևան գալը, ելք, հնաոցում, անկում», čyávatē հնաոնում գնում է, ավեստ. šavaitē, šūta- «քշած, հնաոցրած», նոր պարս. šavam «գնում եմ, գաոնում եմ», քուրդ čun «գնալ», հուն. σεύω «շարժում եմ, մղում եմ, հալածում եմ» և այլն: Սույն չու ձևին կցվում է նաև չոգ-ալ (երթամ բայի առթիատը), ինչպես ωκυ և ωκεῖν: Չոգ-<հնդեվր. *k^{w}yov-, չու=սանս. cyuti=հնդ. *k^{w}yuti:

243. Չհանում (չնոալ) «առաքանալ, կրակ կորնել (սրտով), ալրնել (արևի), հավի թխանալը», չեր (<ո» հոլ.) «առաքություն, լավ նպատակ», չերանիմ «առաքացնում եմ, տենդ ունեմ, ալրվում եմ հիվանդությամբ, ցավով կամ մոլությամբ», դևրմ. (<ո» հոլ.) «առաք», առաքություն, չերմն (չերմանի) «տենդ»=սանս. ghṛṇá- «առաքություն, ալրնելը», ghṛṇi (նույնը), gharma- «խորշոկ, առաքություն, առաք նպատակ», ավեստ. garəma, նոր պարսկ. garm «առաք», հուն. θέρος «ամառ» θέρομαι «առաքանում եմ», θερμός «առաք, չերմ», գոթ. warmjan «առաքանալ», հիռլ. gorim «առաքանում եմ», սլավ. gorĕti гореть, греть, жар, горе, горький, горн և այլն: Հայոց ջեր=հուն. θέρος=հնդեվր. g^{w}heros-, հայոց ջերմ=հուն. θερμος<հնդեվր. g^{w}hormó-s ձայնավորի խնդրում փոխված հայոց ջեր=հուն. θέρος բառերի ազգակցությամբ:

244. Չիլ (<ի-ա» հոլ.) «չիղ», «թել», «նյարդ» (=հուն. νεῦρον). գրվում է նաև չիղ, չեղ=սլավ. žila „жила", պրուս. gislo «երակ», լիտ. gysla «երակ, չիղ, նյարդ», լատ. dzīsla, լատ. fīlum «թել», ալբ. deł «չիղ. երակ, նյարդ»: Հայոց և բալթոսլավ ձևերը վկայում են հնդեվր. *g^{w}hisla-ձևի մասին:

245. Ոսկր (ոսգան և ոսգամբ), սովորաբար հոդն. ոսգունք (ոսգանց, ոսգաց) «թթի ծակերը, քիթ»=հուն. ῥώγχος «խոզի դունչ, շատ մռութ, թառչունի կտուց»: Հուն. ῥ սկզբում vr կամ sr երկհնչյունն է մատնանշում և հայոց բառի ինքնուրույն դիպքում հալ և հուն բառերը տալիս են *srungh- նախաբարատը: Հուն և կելտական լեզուներում կա նաև *srenk- «խորթալ, փռնչել» բնաձայն արմատը— հուն ῥεγχω, հիռլ. srennim (<*srenk-nā-mi), srōn «քիթ», նոր բրետ. fron «քթի ծակերը», բայց այդ չի խանգարում մեր առաջարանությանը (Արմ. բ., V, 1287):

246. U դերանվանական ածանցը՝ հոդը=լիտ. szìs «այս» ալսվ. sĭ, հիւլ. cé, գոթ. hi (himma daga «այսօր») «այս», լատ. ci-s «այս կողմը», ci-ter, ci-trā, ալբ. si- «այս» (si-vjet „в этом году"), հուն. ἐκεῖ և այլն:

247. Uալ («իս հոլ.) «սուսխակ քարի մեծ հատոր», «մնասպի մեծ կտոր, գարգնի երկաթի կոճղը»=աստ. çilá «քար, ժայռ: Իմաստի զարգացման անալակնոից համա. հուն. ἄκμων «գարգնի սալը» (դնդանը) և աստ. âçman-«ժայռ, քար» և այլն: Թնդեան Հյուրշմանը կասկածելի է համարում Բուդդեի (kz. 32, 24) այս առաջարկը, բայց և ընդգծում է այդ երկուսի նախնական ձևը հարցականով-*kəlá-?

248. Uամի-ք (սամնաց) «լծի երկու ծակերից անցնող երկու փալտիկները, որոնք նզան վզի տակ կապով միանում էին, uամի-ի-ք «սամիի կապը»=աստ. çāmyā-«լծի հավուկը, փայտե անալը, լծացակը», համա. աստ. yugaçamyám «լուծը հավուկով միասին», ավեստ. simā-, simōiδrā- «լուծ» (yochbalken), նոր պարսկ. sīm «կապը, որը լծի երկու կողմերից կապվում է իրար: Uամի-ի-ք բառի ti-վերջ. կապիչ (հնդեվ. dē-, աստ. dā, di, հուն. δη, δε) տես առանձին: Աստ. çamyā-, հայ. sami, պարսկ. sīm առաջացել են հնդեվ. *kémiyā?

249. Uառն (-ին) «աստուած», առնամանիք (առնամանիք) «աստուած», առը նզանակ (օդ, հող), առնում կամ առչիմ (առնալ), առուցանեմ և այլն=հին իսլ. hjarn «վարժրացած ձյուն», լիտ. szarnà «հղկաժայռ», նոր ալսվ. srēn(<*sernū) «աստած ձյուն», l բազաձայնով r-ի տեղ ունենք լիտ. szāltas «աստը», szalna «հղկաժայռ», ալսվ. slana «հղկաժայռ» և անորոշ՝ աստ. çiçíra «գարնան սկիզբը, հոլ նզանակ՝ ցուրտ, աստն, ավեստ. sarəta-«ցուրտ», նոր պարսկ. sard «ցուրտ», sarmā (garmā «տաքութիւն» բառի ազդեցութեամբ) և այլն:

250. Uաստ («իս հոլ.) «հանգիստանութիւն, աստանիմ, աստիկ աստիչ և այլն=աստ. çásti- կամ çišti «պատիժ, աստա, պատհանութիւն, հրամանք», çāstár- «պատժող, հրամայող, աստող, իշխանավոր», çās (çiš) «պատոնել, հրամայել, պատժել. տիրել, կրթել, սովորեցնել», ավեստ. sāstor- «տիրող, բռնակալ»: Հայոց sasti-= աստ.çišti-=հնդեվ. *késti-:

251. Uար («ռ» հոլ.) «լեռան գլուխ, բարձունք», սարակ «բլրակ», սարանալ «բարձրանալ», սարալանգ «ժողի կողմը բարձրացած տեղ, հրվանդան», սարաւոլի «բարձր պալատ», «հեն-

դեղու բակում կրոնավորի կամ առաջնորդի շինք»=առնս. çiras- *«գլուխ», գագաթ, վերին կողմը», ավեստ.* sarah *«գլուխ», նոր պարսկ.* sar *«գլուխ», օս.* sär (id.), *հուն.* κάρα, κάρη, κάρηνον *«գլուխ», լատ.* cerelrum *«ուղեղ» և այլն: Հյուբշմանի կարծիքով հայոց բառը ինքնուրույն բառ է, իսկ* Meillet-*ի կարծիքով փոխառյալ է իրանեներից: Տե՛ս նաև Հր. Աճառյան, Արմ. բ., VI, էջ 118—122:*

252. Սիսեռն *(սիսեռան կամ սիսեռան) «սիսեռ,* ropox*»=լատ.* cicer, *պրուս.* keckers, *հուն.* κρίος-*սիսեռի մի անասուն է (<*κιϝρίός *կամ *κιϝρός), մակեդ.* κίγϝρδι: *Հայոց սիսեռն առացվել է *k'eik'er կամ *k'oik'er, լատ.* cécer*<*k'ik'er-:*

253. Սիրտ *(«ի» հոլ.) «սիրտ»=առնս.* hṛd-, hṛdaya-, hàrdi *«սիրտ», ավեստ. (դաթա-ավես.)* zərəd-, zarəδaya-, *նոր պարսկ.* dil, *հուն.* κραδίη, κῆρ, *լատ.* cor (cord-is), *գոթ.* hairtō, *լիտ.* szirdis, *սլավ.* srŭdĭce „сердце", *հին իռլ.* cride *«սիրտ» և այլն: Հայոց սիրտ=հնգեվր. *k'ērdi:*

254. Սիւն *(սեան) «սյուն»=հուն.* κίων: *Երիւան էլ հնգեվր. *k'īyōn, ինչպես ունենք* Անի*=հուն.* χιών, *հնգեվր. *g'hiyōm-ից:*

255. Սիկ *«դաստարկ, պարապ», մեջը փուչ, ընդոծոց, ամէն սպին, վախտ, ապազման», որից ոսկիլ «ընդունայ, ապազիլ» (ասմնկ. հոսկիլ, հոսնկալ). սկին=հուն.* κενεός, *առատին.* κενός *դատարկ, փուչ, ոչինչ առացված* κενερός, κενρος: *Միայն այդ երիւ լեզուներում:*

256. Սխալ *«պակասութիւն, սխալ, հանցավորութիւն, թիւով պակաս» (միով սխալ «մեկ պակաս», երիւ սխալ «երիւ պակաս,* minus *2»), սխալանք «հանցանք, թերացում, սխալ», սխալել կամ սխալիլ «վրիպել, գայթակղել, սխալ գործել», սխալել ի ծննդենէ «խիժել», սխալակիր «հարբել»=առնս.* skhal, skhalatē *«սխալվել, երեալ, դողդոջալ, թերանալ», անց. դերբ.* skhalita *«դողդոջուն, վարանոտ, սխալ, թերի, սակավիճի, պակասավոր», նաև* skhalana *«վարանում, սայթաքում, սխալանք», հուն.* σφάλλω *«գցած եմ դյուամ,* σφάλλομαι *«սայթաքում եմ, երերում եմ, ընկնում եմ, սխալվում եմ», նաև* σφάλμα- *«սխալանք, վրիպակ, թերութիւն, արկած, աղետ»: Արմատն է հնգեվր. *skhal-:*

257. Սկեսուր *(«ի-ա» հոլ.) «կնեսուր, կնոջ ամուսնու մայրը», որից սկեսրայր կամ սկեսրնայ «կնոջ ամուսնու հայրը»=առնս.* çvaçrà- *«սկեսուր». հուն.* ἑκυρά, *լատ.* socrus, *գոթ.* vaihrō, *հրգ.* swigar, *սլավ.* svekry „свекровь" *և այլն: Հնգեվր. բառն է *swek'-rú-:*

258. Սուն *«առատ», երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն,*

եւթանասուն, սքսուն և իննսուն բառերի մեջ=հուն. κοντα (τριᾶκοντα „30", τεττερᾰκοντα „40" *եւն), լատ.* -ginta (triginta „30" *և այլն), հին իռլ.* -cha, -ga, -ca (tricha „30" *և այլն), սանս.* -çat (trịçát-*եւն), ավեստ.* vrisat- „30" *և այլն:*

Հայոց sun=*հուն.* κοντα *հնդեվ.* *k'omtə, *k'ontə *կամ* *k'onte *ձևերից:*

259. Սուտ *(«ոչ հոլ., ոչ ճշմարիտ, կեղծ», որից* սուտիւն, սուել, սուտակ, «սուտախոս, սողոց» *և այլն=հուն.* ψεῦδος *սուտ, սուտախոսություն, խաբեություն,* ψενδής *«սուտ»,* ψεύδω, ψεύδομαι *«սուտում, խաբում եմ»* (Bugge, KZ. 32, 25)*: Հյուբշմանը կասկածում է, քանի որ այս օրինակները չկան հայոց բառապաշարի* u (s) *=հուն.* ψ (ps)*. Բայց համմա. հայոց* փոխառյալ սաղմոս*=*ψαλμός*: Հայոց և հունական ընդհանուր («նախալեզվային») ձևը կլինի* psudo-*:*

260. Սուրբ *(«ոչ հոլ.) «մաքուր, սուրբ», որքան մաքրում եմ հոգով և մարմնով», որբուքիւն և այլն=*çubhrá- *«փայլուն, պարզ, մաքուր»: Հնդեվ.* *k'ubh-ró-*:*

261. Սահման *(սացայլ) «ձևոք բերել, գնել», սացվածք ինչք, սացող «պատվիրող»=լատ.* *stanare, *որ գործածական է* praestinare *«գնել»,* dēstinare *«հաստատել, որոշել, նախատել գնում կատարել»=հնդեվ.* *stə-nā-mi *«հաստատում եմ, վեր եմ կենում»* -Bugge, KZ, 32, 26*: Հյուբշմանը, կասկածելով նախաձևի մեջ, առաջարկում է* *stn̥-nā-mi, *կապելով լատ.* -stināre *և նոր պարսկ.* sitā-dan *(ներկան՝ sitānam «վերցնում եմ») բայերի հետ, առնդծելով առանձին հնդեվրոպական* sten *արմատ (*Arm. Gr., *էջ 492)*: *Ինչպես նշված է Արմ. բ., IV, 421—422, Բրուգմանի մոտ (*Grundriss², II 303*) այդ բայի բունն է* stə-nā- *կամ* stn̥nā- *և մաքուր* sta- *«կենալ, կանգնել, հաստատել» արմատը (սանս.* tiṣṭhati, *ավեստ.* hištaiti *«կանգնել, ոտքի վրա լինալ», հուն.* ἵστημι *«գնանգնել», լատ.* stō *«կանգնել»,* sistō *«գնել, հաստատել» և այլն) կարող է ունենալ այդ* stā- *արմատի վրա ո ածական (ներկայում և ամբողջ բնում), ինչպես* ста-ть, ставить, стан-у *և այլն: Համմա. սանս.* sthāna-*«տեղ», հուն.* ἱστάνω *«գնանգնել, կանգնեցնել, անկել», լատ.* destinare *և այլն:*

262. Սանդի *(-դան, -դին, -դունք, -դանց) «բույսի ցողուն, ծիլ, հյուղ»=հուն.* στέλεχος *«ծառի բուն, կոճղ, ցողուն»,* στελεόν, *համմա.* στελεῖον *«գացնի կոթ»,* στελεά*=համմա.* στελετή *«գացինի անցքը, ուր մտնում է կոթը», անգլս.* stela*=գերմ.* stiel *«կոթ»?*

263. Սաեթջ «անպտուղ ամուլ, չբեր (անասուն)». գրված է և սաեթդ, սաեթջանամ կամ սաեթջիմ=հուն. στεῖρα «անպտուղ» (կով), սանս. starī- (ուղղ. starīš) «անպտուղ» (կով), գոթ. stairō «անպտուղ», նհգ. stärke «մսատու կով որ չի ծնել», լատ. sterilis «անպտուղ»:

264. Սահպ «հաճախ, շտապ», սահպեմ «սահպում եմ, заставляю, принуждаю»=լատ. stīpare «խիտ միացնել, ճնշել, սեղմելով լցնել» (Bugge, KZ. 32, 61), որի իմաստը շատ քիչ է համընկնում հայկականին, իսկ Մեյեի կողմից համեմատության դրվող հուն. στείρω «տաքի տակ կոխոտել (ճանապարհը), στῖφος «բանուկ ճանապարհ», στιβαρός «կոխոտված, սեղմ» և այլն, շատ հետ են իմաստով թե բառակազմի չհամընկնելը և ենթադրական «խտացնել» նախիմաստը:

265. Սաին (սանան, սաննէ, հոգն. սանանց) «կնոջ ծիծը», սան-դիաց, սան-դիալ, սան-դի «ծիծ ուտող, սան-ուտ «ծիծ տվող»=սանս. stana- «կնոջ սիինքը» stanam dhaye- «սանդեակ», ավեստ. išt̰āna-(<*pstāna-). նոր պարսկ. pistan (<*pəstāna-) «կնոջ սիինքը»: Բոլորի նախաձևն է pstēn-:

266. Սաուար (էր-աց հոլ.) «հաստ, թանձր»=սանս. stavah «հաստատություն, հաստություն», stū-, stvi- «աճուպար», stawra «ուժեղ, զորավոր», պահլ. stavar «թանձր, հաստ, ամուր», սանս. sthavará- «ամուր, թանձր, հաստատուն», sthūrá- «թանձր, լայն» և այլն, որոնց ազգակից են նաև հուն. σταυρός «ցից», լատ. re-staur-are «վերականգնել», գոթ. stiurjan «հաստատել» և այլն: Թևակտ հայոց սաուար բառը մատնանշում է հին *stūvṛó-, իսկ սպասելի էին հայոց *stur կամ *-tevar ձևերը փոխանակ stvar ձևի, այնուամենայնիվ Հյուբշմանը հայոց սաուար բառը դնում է բնիկ հնդեվրոպական բառերի շարքում (այդպես էլ Schrijnen-Mohrmann, Studien, 1, 1936, 1 և Schrijnen, Mél. Pedersen, 1937, 387 և Schrijnen, Handleiding, 1938, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40,

նողութեամբ: Իսկ սրուն-սրուան համար ունենք անուն-անուան, ձեղուն-ձեղուան, ցողուն-ցողուան և այլն:

268. Սփռեմ (=ևցի) տարածել, ցրվել», սփիւռ (սփիւռ) ցցրված, ցիրուցան», ի սփիւռս տարածութեան մնջ»=հուն. σπείρω ցանում եմ, ցրում եմ»? Հայոց սփիւռ ձևը կարող է սկզբնական *srer=նախաձևը պահանջել (Arm. Gr., 494): Այդ սփիւռ հին ձևից է առաջացել *փիւռ-, որից փռել տարածված բայը, ինչպես հուն. σπάλλω տատալել, վայր ձգել» և հայոց փուլ, փլանիմ և այլն: Իսկ սփիւռ գոյականը առացել է ւ (w) ձայնորդի ավելացում, ինչպես՝ գառանեմ, նգիտ և գիւտ, հնս-ում և հնւս, հիւր և այլն, որպիսի օրինաչափութեան մասին իմ կողմից գրված է:

269. վառ-եմ տաքանում եմ, топлю, жгу», համեմատում են սլավ. vrěti, պրուս. variti և լիտ. virti=ռուս. варить, որ չեն ընդունում նշանակութեան տարբերութեան տեսակետից Bugge (KZ. 32, 56) և Հյուբշման (Arm. Gr., 494): Իրարից անկախ հայոց վառել նախդրծական բայը չէր. Ա.ճառյանը և ես համեմատել ենք խեթ. war-երοրետ. վառվիլ չնորհ բայի հետ, որից ունենք պատճառական war-nu- „(ver) brennen" տվառուլ» ձևը: Հայոց ուռաճ տաշտանակ, հրատրոն, վառարան» հոդվածքում գոյականը (մեկ անգամ է գործածված) նույն var->ur-արմատից է: Համմտ. խեթ. urr-ir տվառվեցինն:

270. Ի վեր տգեպի վեր» ի վեր, քան տավելի վերն, վեր ի վերոյ տերեսանց, տարեւանցին», վեր ի վայր տառկնումբրա», ի վերուստ տվերեւից», վերին և այլն=սանս. upari, ավեստ. upairi, պարս. apar, նոր պարսկ. bar, հուն. ὑπερ, լատ. s-uper, գալլ. ver-, գոթ. uiar, գերմ. über տվեր, ի վերա» և այլն, հնդեվ*. up'ero-ից: Առաջ ցանկանում էին հայոց բառը կապակցել հնդեվ. *vers. արմատի հետ ի դեմս սանս. várš-man տբարձրութիւն, վերը, վերինը», váršīyas տբարձրագոյն, վերնագոյն», լիտ. virszùs տվերինը», սլավ. vrŭchŭ „верхина, верх" և այլն, բայց հնդեվ. rs տալիս է հայոց ես և ոչ եր» (իմ կարծիքով հայոց վեր արմատից առլված պիտի համարել վերջ գոյականը, թեպետ այդ էջ ճորմատիվը առնդում է հատկապես ածականներ, ինչպես՝ գաղջ, առերջ, ողջ և այլն):

271. վեց (վեցից) տվեց», վեցտասան տառասնուվեց», վաթսուն=սանս. šaṭ, տավեստ. xšvaš, նոր պարսկ. šaš, հուն. ἕξ, Fέξ (կրետ. θεξήκοντα „60"), լատ. sex, գոթ. saihs, սլավ. šesti, լիտ. szeszi և այլն: Հնդեվ. svek's, *vek's, *sek's: վեց<*vek's.

272. S- բազմաւոգական նախածանց, ինչպես օրինակ՝ ա-դէտ, ա-հաս, ա-կար և այլն=առնս. dus-, dur- (օրինակ՝ durvēda- «առնուս», durmanus- «հուսահատ, տխուր»), ալթատ. duš-, duž-(dušmanah- «վատամիտ»), հուն. δυσ-(δυσμενής «թշնամամիտ»), գոթ. tuz-(tuz-vērjan «երկրպագել բառում»), հին իռլ. du- (օրինակ՝ dophlu «առնիծատունակ»): Պարսկական հայ փոխառութիւններում դրա անդը կան dž-, tž-, tš-:

273. Տալ «տալիս եմ», առր. հաստ, հաստր, հա, տուաք, հաստք, հաստն, կրասլ. տուսլ և այլն, ապառնի՝ տաց, տացես ևլն, գերբ. տուհալ, հրատ. տուբ, տուք, տուրբ (տո հոլ.)=առնս. dádāmi=ալթատ. qaδąmi=հուն. δίδωμι «տալիս եմ», հուն. δῶρον «տուրք», հնիր, gar", լատ. do, սլատ. damī „даю" (անգր. дать), даръ, լիտ. dūmi, dū'du «տալիս եմ», արմատն է dō, də, d- տալ:

Հայոց ta=հնդեվր. də-, հայոց tu=հնդեվր. dō—, հայոց tur-k'=հուն. δῶρα, սլատ. dara=հնդեվր. *dōrā «նվիրատվութիւն», հայոց III դ. առր. et=առնս. ádāt', ալթատ. daţ=հնդեվր. *é-dō-t:

274. Տալդր (-եր հոլ.) «հնոջ ամուսնու եղբայրը, տեդր»=առնս. dēvár-, հուն. δᾶηρ, լատ. levir, հվգ. zeihhur, անգլոս. tācor, լիտ. dēueris, սլատ. děverĭ «տալդր»: Հնդեվր. *daivér- կամ *dəivér-:

275. Տալ «հնոջ ամուսնու քուէրը», որը գրած է ածվել մեկ անգամ XIII—XIV դարերում (երգնկացու քերականութեան մեջ) Լատ Bugge-ի (KZ. 32, 27) այդ բառը ազգակից է հուն. γαλόως, լատ. glōs, սլատ. zlŭva „золовка" բառերի հետ, ինձնով հնում *ծալ և հետագայում ազգվելով տալդր բառից (*ծալլ>*ծալ>տալ?):

276. Տասն (-ան) «տասը»=առնս. dáça, ալթատ. dasa, նոր պարսկ. dah, հուն. δέκα, լատ. decem, գոթ. taihun, հրգ. zēhan, սլատ. desetĭ, լիտ. dēszimtis, և այլն: Հնդեվր. *dék'm:

277. Տնանուհի (տնտի) «տնտնում եմ», տնտակ, տնտիլ (տնտլեան) ևլն=հուն. δέρκομαι «տեսնում եմ», ἔδρακον (անկ.), δέδορκα (pirf.) «տեսած նայեցի»=առնս. dadárça=ալթատ. dādarəsa «տեսնում եմ», հրոլ. derc «աչք» ad-kon-darc «նայեցի», գոթ. ga-tarhjan «նկատել» և այլն: Հնդեվր. dork'-derk', drk': Հայերենում ապատանլի էր *տերս-անեմ:

278. Տնդմ (տնդգի) «տեսում եմ, լուսե»=լատ. dū-r-o տնել, տոկալ dudum «վաղուցվանից», սլատ. dāvě «երբեմն», davinū „давно", հուն. δήν (<δρήν), δᾶρόν «երկար ժամանակ, վաղուց» և այլն:

279. Տիզ (ուղ հոլ.) տիզ, клещукъ=գերմ. zecke, մրգ. zēcke տիզաստոջիլ, անգլ. tike, tick տոչխարի տիզ, միոլ. dega տմի տեսակ բզեզ, որոնք ծագում են delg'h էխալթիլ արմատից (Arm. Gr., 497, Արմ. բ., VI, 896):

280. Տիւ (անս. տուրնջնան, ի տուրնջնին, ի տուէ-ջնրեկը) օրը=սանս. div, որ գանվում է divā օրում, divé-divé օրըստօրէ, divasa-օր, dyáus երկինք, օր, լատ. dies օր, հին իսլ. in-diu այսօր, կիմր. dyw օր:

281. Տուն (անս. տան) տուն, տանուտէր, տանիք երկուրը=սանս. dam- (հմմտ. dámpatiš տնէր, անս. dān հմմտ. pátir dán տիրը=հնդեվ. *pótiz dèmz տիրը տանը), dáma- տուն, պաֆա-ավեստ. demāna- (=dmāna-)= ավեստ. nmāna- բնակատեղի, տուն, dam- տուն, հոմեր-հուն. δῶ, δῶμα տուն, բնակարան, տուն, δομ- (անս. *δεν̯ς բարդ δεσπότης=հնդեվ. *dems-potis), լատ. domus, սլաւ. domŭ „дом":

Հնդեվ. (ուղղ. հ.)=*doms=dōs, ենորակագմ *dōm=հայոց tun, հնդեվ. անս. հոլ. *dems:

282. Ցախ (ուղ հոլ.) ճյուղ, հացի ծառը=սանս. çākhā- տուս, ճյուղ, նոր պարսկ. šāx տուս, ճյուղ, կառոշը, լիտ. szaká տուս, ճյուղ (նայնպես նղբերուի կառոշը): Հնդեվ. k'hākā- (ըստ Bartholomae, Stud. II, 41), իսկ ըստ Peterson-ի (Ar. u. Arm. Stud., 98) հայերենի նախաձևն է հնդեվ. *s'kə-kho:

283. Ցելում (ցելի) ճեղքել, պատառել=լիտ. skeliù, skéliti ճեղքել, պատռել, հին իսլանդ. skilja ճեղքել, բաժանել, գոթ. skilja մեսագրել (Bugge KZ, 32, 72):

Հայոց ցել- (cel-)=հնդեվ. sk'el, լիտ. skel-=հնդեվ. sk(h)el- (Barth., St. II, 51):

284. Ցիւն (ուղ հոլ.)—գիշատիչ մի թռչուն է (կնրճ)=հուն. ἰκτῖνος ագին, սանս. cyēná -ատրծիվ, բազե, ավեստ. saena և նոր պարսկ. sīmurγ <ավեստ. saenō+mərəγā-մի առասպելական թռչուն: Հայոց ցիւն=հուն. ἰ-κτῖνος=հնդեվ. *k'yīno-s (ըստ Bartholomae-ի, St. II, էջ 8—9):

285. Ցոնել տմարմինը ճեղքռանել, բզկտել, պատառոտանել, գանակացիտ զգանակով ճեղքռտոդ=սանս. chid- երկրնել, ճեղքել, պատռել, փշացնել, ավեստ. sid (hi-siδ-yā-t) ճեղքել, հուն. σχίζω ճեղքում, բաժանում եմ, լատ. scindo, scidi ճեղքել, բաժանել, պատռել, կտրատել, գոթ. skaidan, գերմ. scheiden բաժանել և այլն:

*Հնդեվ. արմատն է *k'hid-.*

286. Փոյր *(«ոտ հոլ.), փոքիամ (փոքիացայ)=հուն.* σπουδή *«խնամք, ջանք, փութ, եռանդ», σπεύδω «շտապել, փութալ», σπουδάζω «շտապում եմ, ժրաջան եմ», լատ.* studium *«ժրաջանութիւն»,* studeo *«ջանում եմ»: Հայերենում ապաւոլի էր *p'oit:*

287. Փուլ *«իյած անդ, դարափլակ, լուանի փուլը* (фаза луны)*», փլանիմ (փլայ), փլուցանիմ (փլուցանեմ)=լիտ.* pūlu, pūlti *«ընկնել, ցած ընկնել», գերմ.* fallen: Meillet-ն սրանց է միացնում և հուն. σφάλλω *«տապալել, վայր գցել»: Հայոց* փուլ<*հնդեվ.* *phōl-?

288. Փուր *(«ոտ հոլ.) «փչած շունչը, փուքից դուրս եկած օդը», փրալ, փքանալ «ուռել, ուռիլ» (հարաւութիւնից), փչել «շնչել մարդու, անասունի կամ քամուն փչիկ «միջատիամփուշտ», որպես բնաձայն* phu-*արմատ կապվում է անմիջապես հուն.* φῦσα *«փուքս», φύσκη «միջատիամփուշտ», φυσάω «փչում եմ», լիտ.* pūslē *«միջատիամփուշտ»,* pūsti *«փչել», ռուս.* пышать, пыхнуть *«փչել»,* опухоль *«ուռուցք» (համմ. աշխարհաբարների փուչիկ «ուռուցք, միջատիամփուշտ») և այլն: Փուր բառը փոխառուած չէ պարակներից* (puk)*, իսկ փչել բառի փուչ- արմատը Հիւրըշմանը հանում է հնդեվ. *Sphu-skhō (?) ձևից:*

289. Ր *անորոշութիւն ցույց տվող դիրանիշանական վերջածանցիկը (ո-ր, ի-ր, ուսանր...)=ասիս., սանսկ. -ča, հուն. -τε, լատ.* gne, *գոթ. -h=հնդեվ. *ḱ^{w}e:*

290. Քան *«քանի, քանիերորդ, քանդի=լատ.* quam *հնդեվ. *-k^{w}ām կամ *k^{w}ān), «ինչպես», quantus *«ինչքան», ? ինչպես է, որ բառասկզբի* k^{w} *հայերենում մնացել է ?:*

291. Քառ *«չորս» հնագույն ժամանակ միայն* քառասուն *«40» բառի մեջ, պահպանում է չոր-ր արմատին, ինչպես սանս.* turīya *«չորրորդ» պահպանում է* catvāras *«չորս», ասիսս.* ā-xtū-crīm *(հայց. հ.) «չորրիցս»* tūirya *«չորրորդ» պահպանում է* čaθwārō *«չորս», հուն.* τρα- (τράπεζα *բառի մեջ)՝* τέταρες, τεταρες, *լատ.* quartus *«չորրորդ» բառը՝ օաներն* petora-*ին, այսինքն հնդեվ.* k^{w}tur-, k^{w}tuṛ- *ձևերը հնդեվ.* k^{w}etuor-*ին:*

Հայոց քառ- <*tvṛ-=*(k^{w})tvṛ-: *Լատ Մելիե* (MS L. 7, 162) *հայոց այդ* քառ-<*kvṛ-=*k^{w}(t)vṛ:

292. Քնի *«մեկի կնոջ քույրը»=լիտ.* sváinė *«քննիա»,* svaĩnis, svaĩnius, *լատ.* swaīnis *«քնեական, աներորդի», հրգ.* geswīo *«աներձագ», սրգ.* geswie *«քննիա», ռուս.* свояк *«աներորդի»,* сво-

ячина «քնին», որոնք ծագած են հնդեվ. svo «յուր» դերանունից։ Հայոց քնին հնդեվ. *sve-nye- ձևից, թեպետ ավելի ապասելի էր քինի, իսկ ավելի ապասելի էր քննի ձևի հնչյունաբանորեն վերականգնել *քեանի<*svesanyo- (Arm. Gr. Աբմ. բ., VI, 1446)։

293. Պիրիմ (քերեցի) «քերել, քերծել, պլոկել, մարմինը (մորթը) քերթել, փորագրել, քանդակել, գրել, բանաստեղծել», որ ունի մարմաջ, քորել, քերական = հուն. χείρω «խուզել, կտրել», հրգ. scēran «խուզել, կտրել», Meillet-ի այս առուգաբանությունը (MSL. 8, 281) շատ կասկածելի էր համարում Հյուրշմանը (Arm. Gr., 503), որովհետև հուն. χείρω հանում է հնդեվ. kers- արմատից, որ պիտի տար հայոց *քեռ։ Բայց ինչպես դիտում է Հ. Աճառյանը (Աբմ. բ., VI, 1451), բոլոր նոր քննիչները kriper դնում են ker-արմատի տակ։ Կան նաև „t" աճականներով այդ sker- ‖ ker-արմատից կազմվածները, ինչպես սանս. kṛntati= ավեստ. kərəntati «կտրել», լատ. cortex «կեղև», ալբ. kéθ «ամրիկել», սանս. kṛti, ավեստ. kərəta, նոր պարսկ. kard «դանակ», հասքա. skarô «կտրատել» և այլն։

294. Քիրմն (-ան) «քրտինք»=սանս. svēda-, ավեստ. xᵛae-ða-, նոր պարսկ. xᵛai, հուն. ἱδρώς, լատ. sūdor, հրգ. sveiz, կիմբր. chwŷs, գերմ. Schweiss։ Հայոց քիրմն <*kʻirt-<*kʻitr-=հնդեվ. *svidro-, համմտ. հուն. ἱδρώς, լատ. swidri (հոգն.) «քրտինք»։

295. Քոյր (քեռ, քեռէ, քերբ, քորք, քնրց, քերբք) «քույր»=սանս. svàsar-, ավեստ. xᵛ aṅhar-, նոր պարսկ. xᵛāhar, լատ. soror, գոթ. svistar, սլավ. sestra „сестра" և այլն։ Հնդեվ. *svésor-, սղգ. հ. *svésōr=հայոց kʻoir, սեռ. հ. *svésrós=հայոց kʻeŕ։

296. Քուն (առ հոլ.) «քուն»=սանս. svápna-, ավեստ. xᵛafna-, պարսկ. xᵛāb, հուն. ὕπνος, լատ. somnus, հիսլ. svefn, սլավ. sūnŭ, լիտ. sāpnas և այլն։ Հնդեվ. *svepnos և *supnos։

297. Քաաղ (սեռ. քաանից) «քաանդ»=սանս. vīçati-, ավեստ. vīsaiti, նոր պարսկ. bīst, բէռոս. Fixατι, յոն. առասիկ. εἴκοσι, լատ. vīgintī. հիսլ. fiche։

Հնդեվ. *vīkʻṃti. *uīkʻṇti=հայոց *gisan>*gsan>kʻsan (քսան)։

Հյուրշմանի Arm. Gr.-ում բերված վերոհիշյալ մտա երկը հարյուր հնդեվրոպական արմատներին կցված է Բրուգմանի (Idr. II, 892 flg.) կողմից մատնանշվող քո «քո, ταοῦ» արմատը (pb-q', pk-ĝ, pb t) որ կա սանս. tvá-m «դուն», tvā́m «քեզ», tvá-t «քեզ-նից», ավեստ. θwąm, tava և այլն, հուն. σέ, σοί և այլն, հնդեվ.

*tve-, *tvo. բայց չկա մի ուրիշ նման դեպք, որ հայերենում բառասկզբի քո- ‖ քի-հնչյունափոխվելը բխեր հնդեվ. tvo- ‖ tve- ձևերից: Մենք գիտենք միայն, որ բառասկզբի sw-կամ k^w-ուսից են հայերենում ք-, իսկ tv- կամ պլոսիվ+ համապ. այդպիսի դեպք գոյություն չունի: Այդ պատճառով էլ Մեյեի, Աճառյանի և այլոց մոտ չի բնրվում վերոհիշյալ առուգաբանությունը: Բնական այդ pn-(ph-) բնիկ տեղական (ուրարտական) լինի և կապվի նաև սեմական լեզուների հետ (համմ. ակկադ. -ka. արամ. -ku, ինչպես abu-ka «քո հայրը», արաբ. aiel-kum «քեզ հետ» և այլն): Հայ դերանուններից միայն և ոչ հնդեվրոպականները (քո, քեզ, ձե-, իրենք, ինքն...):

Բայց իհարկե հնդեվրոպական արմատները հայերենում ավելի են, քան բերված երեք հարյուրը: Մենք այստեղ կմատնանշենք 4—5 հնդեվ. արմատներ, հետո մանրամասն կվերլուծենք Հ. Աճառյանի «Արմ. բառ»-ում բերվածները, որոնք մեծ մասամբ քննության չեն դիմանում և Մեյեին դրանց վերաբերմամբ կամ կասկածամտում կամ չի հիշատակում իր գրքում (հրատ. 1937 թ.), որ լույս է տեսել «Արմատական բառարան»-ից հետո[1]:

1. Արգանդ (<ի-աւ հոլ.) «արգանդ, մոր փորը, պտղախատնը» բառ Լիդենի (Arm. Stud, էջ 21) ծագում է հնդեվ. arq^w- արմատից, որին Հ. Աճառյանը ավելացնում է արգահատել «խղճալ, կարեկցել» (Արմ. բ., I, 640—641), բայց Մեյեին այդ ընդունում է կասկածով: Լիդենը հայոց այդ արմատը համեմատում է կիմր. arfied(<*arpet) «ծոց, գիրկ» և թերևս գոթ. arcuinn «կովի ծիծ» բառերի հետ: Ես համեմատել եմ արգաւանդ, զարգանալ բառերի հետ (ՅՅՕ 23, 353): Բայց մենք այժմ ունենք մի հաջող առուգաբանություն, որը իմ կարծիքով դերազանցելի է: Այդ հայտնի լեզվաբան Հոլգեր Պեդերսենի առուգաբանությունն է, տպված 1949 թ. լեհ. „Lingua Posnani ensis" ժողովում (Poznan, 1949, էջեր 1—2), որը անհայտ մնաց նախորդներին: Ըստ նրա հին սլավ. grъ-

---

[1] Ցաե. խմբ. Հեղինակը, ինչպես այդ երևում է այս տողերից, մտադիր է եղել վերլուծելու Հրաչյա Աճառյանի «Արմատական բառարան» հնդեվրոպական համարված այն բառերը, որոնք նա չէր ընդունում, սակայն վերանայման ժամը հնարավորություն չտվեց իրագործելու այդ: «Հայոց լեզվի պատմության» (հին շրջան), նրանց աշխատությունը ավարտվում է առանց այդ բաժնի: Մեր որոնումները նրա թողած արխիվում որևէ արդյունք չտվեցին և չգիտենք արդյոք նա երբևէ այդ մասը գրել էր թե ոչ:

di «կուրծք, ստինք» բառի բոլոր առաջարկված առեզաբանութիւնների մասին, ինչպես իսլ. bruinne «կուրծք» բառի հետ կամ հուն. στρῆνος «առատանալ, ոգի» և այլնի կապակցութեամբ, որոնք չունեն -d ալավականի կրնասպոնդննցիան, Հ. Գնդլերսլեբենը նշում է նաև լիտ. grandis «օգոստ>կլոր կարկանդակ», սանս. granthi- «հանգոյց», հուն. γρόθος «ազմած բուռնցք» և այլնի իմաստաբանական անհարիր լինելը այդ արմ. grądi «կուրծք» բառի հետ։ Որպես ունալ համապատասխանութիւն նա տալիս է հայոց արգանդ բառը. թե հնչյունական և թե իմաստական տեսակետից։ Հայոց g- բաղաձայնը= հնդեվ. gh ձայնեղ ասպիրատն է, ինչպես և -d-=հնդեվ. dh։ Հայտնի է նաև, որ նախորդ (հնդեվ.) gr չի կարող մնալ հայերենում, այլ դառնալու է rg, առանձնալով նախդիր e կամ a, ինչպես, օրինակ, արտասուք բառի հետ է եղել։ Իսկ իմաստական տեսակետից (կուրծք և արգանդ) նշում է ֆրանս. sein բառը, որ ունի այդ երկու իմաստն էլ (sein „грудь; чрево утроба; недра, лоно“) կամ կնքատական brü «փոր», որը ծագմամբ կապված է брюхо («փոր») և հին բ. դերմ. Brust «կուրծք» բառերի հետ և ածանցումով ապիլ է bruinne «կուրծք» բառը և այլն։ Այնպես որ հայոց արգանդ բառը արմատական բառ է և ոչ թե arg- արմատն է և -and վերջածանց, եղել է grand=հին սլավ. grądi (ռուս. грудь) բառին, թե՛ հնչյունաբանական տեսակետից և թե՛ իմաստաբանական։

2. Արտոյտ «երեղածագ թռչունը», գրված է նաև՝ արտուտ, արտիւտ, արտուտ. (տեղ.՝ չալիր դուշը)։ Իմ կարծիքով հնդեվ. բառ է, որ տալիս են լիտ. strãzdas. ռուս. дрозд (<tozd-ձևերը հնդեվ. ասպիրացիայով), հին իսլ. þrǫstr, լատ. turdus. որից հայոց նորաթուխ՝ տրդնիկ=ֆրանս. grive, թուրք. արտըճ դուշու, (Արմ. բ., VI, 957), նոր իսլ. truid։ Մենք բերելով այս օրինակները (իր Introduction-ում) չի տալիս նախնական ձևը։ Ինչպես տեսնում ենք, այդ նախկին ձևին մոտենում է trost-կամ trod—։ Հայերենը մոտ է լատ. turd-us և նոր իսլ. truid ձևերին և նախնական trod-ձևը դարձել է *rtod (rtut)>արտուտ, որը ինչպես երևում է հին և բարբառային հնչական ձևերից, ավելի հին է, քան արտոյտ ձևը (բարբառներում՝ Ախց., Տփ. արտուտ, Վն. արտուտիկ, Երև. առտուտ, Ալշ. արդուդ, Մշ. յարդուդիկ, Ակն. արդուդիկ)։ Հայերենում թեև ավանդի էր *արթուտ, իսկ նշանակության չնչին տարբերությունը արժեք չունի։

3. Մոր եմի տեսակ թունավոր միջատ», լատ. tarantula. մոքանար, «մորից խալթված». մուր եմի տեսակ վնասակար միջատ

(Ալիշան, Հին հավ., 155, առանց վկայության) մորմ, որը գործ է ածվել Վարդանա առակներում (էջ 332) և գործածվում է արդի բարբառներում (Ջուղա, Արարատ)։ Սրա բառարմատն է, ըստ իս, հնդեվ. mer- «մահանալ», որի ալաներնացիալի (mer-, mor-mr) միջին ձևից է։ Համեմատել այժմյան պարսկերենի նման ձայնափոխը mär «օձ»։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայերենում կան հնդեվ. mer- «մահանալ» արմատի երկք ձայնափոխությունները—մեռ-անիմ «մեռնում եմ» (mer-) մոր կամ ածանցավոր մոր-մ (mor-ձայնափոխը) և մարդ (mr-to-) գրի ձայնափոխը։ Աշտարակում կա նաև մրդ „mildium" խաղողի ճյութերի չորացումը, «չոռ» հիվանդությունը, որը նույն արմատից պիտի կարծել։ Ներկերենում այս արմատը երկու „r"-ով է գրվում merr- «մեռնել», merranda «մեռած» (բայց merdu «թթոզ մեռնի», merta «մեռավ», տես Sturt., Hitt. Gloss, II, էջ 102), նման. hurri-=խոռ, arra- խուռխռ. zarra (šarri) =ծառա և այլն։

Հնդեվ. mer-արմատից ցանկացել են հանել մոր-ր «մորթի, կաշի» բառը (Patrubány), («Հանդես ամս.», 1908, էջ 246) և նա (Տնդեկ. ինստ., II, 109), բայց պնդել դրա վրա դժվար է, այլ անալոգիաների բացակայության պատճառով։

4. Մուգ արարատյան և Ղարաբաղի բարբառներում նշանակում է «մթագույն» (մուգ կարմիր, մուգ կանաչ), ասվում է նարկած ձվի մասին (մուգ նարկած) և թեյի մասին (մուգ թեյ), ուսանողն крепкий чай. Թևպես Ամատունու բառարանում (Հայոց բառ ու բան, 491) գրված է «մուգ», որ իրոք այդպես է արտասանվում, բայց Հ. Աճառյանի «Գավառական բառարանում» (էջ 794) հին ձևով է տրված՝ մուգ, մուգաւուն, մուգիլ։ Այս մուգ արմատը իմ կարծիքով չի կարելի ծագմամբ անջատել սլավոնական с-мур-л-ый ձևից (կամ смур-лый), և հնդեվ. smugh- (կամ mugh-) հալերենում պիտի տար mug-։ Իմաստի տեսակետից մեծ տարբերություն չկա, բայց տարօրինակ է, որ հայոց միայն երկու բարբառում է ճնացել, այն էլ հյուսիսային։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

Նախաժուբյուն 11
Հայոց լեզվի ուսումնասիրության պատմությունը 22

ԻՄԱՍ

Գլուխ առաջին

Հայ ժողովրդի և լեզվի կազմավորումը 33

Գլուխ երկրորդ

Հայասայի լեզվի ազերբը հարևան խեթերենի և արևմտյան վրացերենի հետ 62

Գլուխ երրորդ

Հայասայի լեզվին, այլ կերպ՝ հայերենի ազերբը վրաց լեզվախմբի հետ 69
Լազո-մեգրելական և հայոց ընդհանուր բառամքերը 77
Ոչ փոխառյալ ընդհանուր հայ լազո-մեգրելական բառեր . . . 92

Գլուխ չորրորդ

Հայերենի ազերբը խուռի և ուրարտական լեզուների հետ 102
Խուռխաերենի (խուռերենի) չերբը հայերենում 104
Ուրարտա-հայկական լեզվազերբը 130

Գլուխ հինգերորդ

Ընդհանուր լեզվաառերեր խեթերենի և հայոց լեզվի մեջ 147
Հայ-խեթական ընդհանուր բառամքերը 148
Հայ-խեթական քերականական համընկնումները 207

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլուխ վեցերորդ

Հայ լեզվի հնդեվրոպական նատվածքը (բազկացուցիչները) 220
Ընդհանուր դիտողություններ 224
Հնչյունաբանություն 228

Գլուխ յոթերորդ

Քերականական կառուցվածքը 254
Թեքման հոլովական ձևերը 254
Դերանվանական հոլովական ձևեր 267
Բայական ձևերը 271

Գլուխ ութերորդ

Բառապաշար 295
Հայերենի հնդեվրոպական բառարմատները 298

ՆԵՐՔԱՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
7	10 ն.	Բյուռան	Բյուռն (էջ 223)
8	16 վ.	(էջ 275) Sprachge schichte	Sprach Geschichte
26	13 ն.	հնչյունագրության	հնչյունագրության
47	5 վ.	Մարքերտ	Մարքերտ
52	10 վ.	գրվել է	գրվել է
62	2 (առաջաբանի)	հնչյունքներն	հնչյունքներն
75	13 վ.	Wolde-Pakorny	Walde-Pokorny
220	1 ն.		

ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ ՔԱՓԱՆՑՅԱՆ

ГРИГОР АЙВАЗОВИЧ КАПАНЦЯН

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՆ ՇՐՋԱՆ)

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. ՇԱՂԿԱՄՄՑԱՆ
Կազմը նկարիչ՝ Գ. ԽՈՐԴԻԿՑԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶՔԵԿՑԱՆ
Վերատպող սրբագրիչները՝ Ս. Ա. ԳԵՎՈՐԳՑԱՆ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՑԱՆ

Վ/Ֆ 00417, պատվեր 146, հրատ. 1840, Խ։Խ 609, տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 15/VII 1960 թ., ստորագրված է տպագրության 22/III 1961 թ., տպագրական 22 75 մամուլ, հրատ. 18,12 մամուլ, Թուղթ 60×92¹/₁₆։ Գինը կազմով 1 ռ. 28 կ.

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0016687

ЦЕНА
АП
9401